Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84
7-68

1
ՕԿ
39732

Գրադարակութիւն ՄՈՒՐՃ ամսագրի

ԱԼՖՈՆՍ ԴՈԴԷ

ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ

ԵՒ

ՌԻՍԼԷՐ ԱԻԱԳ

ՎԷՊ

Թարգմանեց

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Գրաց Հրատ. Ընկերութեան | Типографія Грузинск. Изд. Т—ва.
1902

84
Դ-68

176 84 Դ-68

20 APR 2006
19 NOV 2010

Հրատարակություն ՄՈՒՐՃ ամսագրի

Ալֆոնս Դոդէ

ՓՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ

եւ

ՌԻՍԼԷՐ ԱՒԱԳ

Վէպ

Թարգմանեց

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ազգրանիկ անէր
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻՆ
18 նոյեմ. 1918 թ, ԹԻՖԼԻՍ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան || Типографія Грузинск. Изд. Т—ва.
1902

03 APR 2013

5891

Дозволено цензурою. Тифлисъ, 3 декабря 1902 года.

3582-84

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

I

Մի հարսանիք Վէֆուրի հիւրանոցում:

—Տիկին Շէբ։

—Ի՞նչ է, որդիս...

—Շատ գոհ եմ...

Քսանհորդ անգամը կը լինէր այդ օրը, որ Ռիսլէրն ասում էր, թէ շատ գոհ է, և միշտ միևնոյն խանդաղատ ու անդորր կերպարանքով, միևնոյն ծորուն, խոր ու խուլ ձայնով,—ձայն, որ ճնշւում է յուզմունքից և չէ համարձակւում շատ բարձր խօսել, որ մի զուցէ յանկարծ խզուի արցունքից։

Ի հարկէ, Ռիսլէրը աւելի լաւ կը համարէր գեղինը մնալ, ան լալ այդ բոպէին,—ով է տեսել, որ Նորաթեսան լայ հարսանիքի խնջոյքում։ Սակայն սիրտը շատ լիքն էր։ Երջանկութիւնը խեղդում էր նրան, սղմում էր կոկորդը, կապում էր լեզուն։ Այնքան էր կարողանում միայն, որ երբեմն-երբեմն մրընջում էր փոքր ինչ զողուն շրթունքներով «Շատ գոհ եմ... շատ գոհ»...

Եւ իրաւ հիմք ունէր նա գոհ լինելու։

Առաւօտից ի վեր խեղճ մարդը երազի մէջ էր կարծում լինել, այն հնաշխարհիկ երազներից մէկում, որոնցից մարդ վախենում է զարթնել յանկարծ՝ չլացած աչքերով. բայց սրա երազը անվերջանալի էր թւում իրան։ Առաւօտեան ժամի հինգին էր սկսուել այդ և երեկոյեան ժամի տասին, ուղիղ տասին Վէֆուրի մեծ ժամացոյցով, դեռ շարունակւում էր այդ...

Ի՞նչ բաներ էին անցել այդ օրը, և ինչպէս պարզ աչքի առաջն էին ամենաչնչին մանրամասները։

Նա տեսնում էր իրան՝ լուսաբացին, իր սենեակում, այդ ծեր-ամուրիի սենեակում, որ նա չափչփում էր անհամբերութեան ու հրճուանքի խառն զգացմունքով, միրուքն արդէն չփակած, ֆրակը հագած ու երկու զոյգ սպիտակ ձեռնոց զրպանումը պատրաստ... Յետոյ ահա մի շարք հանդիսային կառքեր և այն առաջին՝ սպիտակ ձիերով, սպիտակ երասաններով և դեղին դամակի աստառով կառքում նորահարսի զարդարանքը, որ սպիտակին է տալիս ամպի պէս... Այնուհետև մուտքը եկեղեցի՝ երկ-երկու և դարձեալ առջևում այդ սպիտակ ամպը՝ սաւառուն, թեթև ու շլացուցիչ... Ապա երգեհոնը, լուսաբարը, քահանայի քարոզը, մոմերի լոյսում փայլող զուքսերն ու դարնանային զգեստները... և բազմութեան խռնուելը խորանում, որի ընթացքում սպիտակ ամպիկը կորչում է, թաղւում, շրջապատւում, գրկից գրկ անցնում մինչև նորափեսան փոխէփոխ ձեռք է տալիս Փարիզի ամբոխի բարձր առևտրականութեան, որ եկել է այդտեղ պատուելու նրա հարսանիքը... Եւ երգեհոնի վերջին ուժգին բախումը, աւելի և հարսանիքը... Եւ երգեհոնի վերջին ուժգին բախումը, աւելի և հանդիսաւոր՝ ինորհիւ եկեղեցու լայնաբաց դռան, որ ամբողջ փողոցը մասնակից է դարձնում ընտանեկան ծէսին, և հնչիւններին անցքը դաւթով միաժամանակ թափօրի հետ, և թաղի բնակիչների բացականչութիւնները, և նրանց մէջ այն մեծ զոգնոցաւորի բարձրաձայն նկատողութիւնը՝ «վեսան գեղեցիկ չէ, բայց հարսը շատ սիրուն է...»։—Նորափեսայ պէսք է լինէր, որ խմանաք, թէ ինչպէս է այդ հպարտութեամբ լցնում մարդու սիրտը...

Յետոյ նախաճաշը գործարանի՝ պատատառներով ու ծաղկներով զարդարուած արհեստանոցում, գրօսանքը Բուլոնեան տառում, կատարուած ի հաճոյս զոքանչի, որ, իբր փեսամանր բուրժուազիային պատկանող կին, չէր հաւատալ, թէ ջիկը պատկուել է, եթէ չերթային պատելու լճի շուրջը և լելու ջրվէժը... Ապա վերադարձը անտառից ճաշին, այն նակ, երբ բպտերները վառում էին բուլվարում, ուր բոլորէին գալիս նայելու հարսանիքին, այդ իսկապէս ճոխ հարսքին, որ վարձկան ձիերը հասցրին մինչև Վէֆուրի սանդուկը։

Իր երազի այդ կէտումն էր նա։

Եւ այժմ, ուղնութիւնից ու երջանկութիւնից թմրած, Ռիսլէրը մտամոլոր նայում էր այդ ահագին, ութսուն սարքաւորանոցին, որ վերջանում էր պայտաձև ծայրերով և շրջապատում էր ժպտուն ու ծաղրաթ դէմքերով,—և թւում էր նրան, թէ բոլորի աչքերումն էլ արտափայլում է իր բախտաւորութիւնը։ Ճաշը վերջանալու վրայ էր։ Մասնաւոր խօսակցութիւնների ալիքները ծփում էին սեղանի շուրջը։ Երևում էին դէմքեր՝ դարձած դէպ իրար, ֆրակի սև թևքեր՝ ծաղկազամբիւղների յետևից, մի ծիծաղուն մանկական երես՝ թեքուած պաղպաղակի ափսէի վրայ և դէմքերի բարձրութեամբ շարուած դէսէրտը, որ հրճուանք, զոյներ ու շողքեր էր տարածում ամբողջ սիրոցի շուրջը։

Այո, այո, շատ գոհ էր Ռիսլէրը։

Բացի եղբօրից՝ Ֆրանցից, այդտեղ էին նրա բոլոր սիրելիները։ Նախ և առաջ նրա դէմ ու դէմ նստած Սիդոնին, երէկուայ փոքրիկ Սիդոնին, որ այսօր նրա կինն էր արդէն։ Ճաշին նստելիս նա հանել էր քօղը, դուրս էր եկել իր սպիտակ ամպի մէջից։ Այժմ նրա մետաքսէ միահարթ և սպիտակ հագուստից վերև երևում էր նրա սիրուն դէմքը, որի սպիտակութիւնը աւելի մեղմ էր և փայլատ, քան մետաքսինը, և նրբահիւս ծաղկէ պսակի տակ՝ մազերի պսակը, որ թռչելու պատրաստ փեսուրների կենսալից խլրտումներ ու ցոլքեր ունէր։ Բայց ամուսինները ճիշտ են նկատում այդպիսի բաներ։

Սիդոնիից ու Ֆրանցից յետոյ Ռիսլէրի ամենասիրելի մարդը աշխարհումն՝ տիկին Ժորժ Ֆրօմենն էր,—«տիկին Շորշը», Ռիսլէրի արտասանութեամբ,—նրա առևտրական ընկերակցի կինը, նրա առաջուայ պատրօնի ու կուռքի, հանգուցեալ Ֆրօմենի աղջիկը։ Նա նստացրել էր տիկնոջը իր կողքին և խօսում էր հետը ակներև քնքշութեամբ ու ակնածութեամբ։ Բոլորովին ջահել կին էր այդ, գրեթէ տարեկից Սիդոնիին, բայց աւելի կանոնաւոր, աւելի անդորր գեղեցկութեամբ։ Նա քիչ էր խօսում, խորթ զգալով իրան այդ խառնակ հասարակութեան մէջ, սակայն աշխատում էր լինել սիրալիր։

Ռիսլէրի միւս կողքին նստած էր նորահարսի մայրը՝ տիկին Շեբը, որ պլպլում, ֆրֆռում էր իր՝ վահանի պէս պսպղան կանաչ սատինէ զգեստում։ Առաւօտից ի վեր նրա բոլոր մտածմունքները նոյնքան փայլուն էին, որքան այդ խորհրդաւոր գոյնով զգեստը։ Բոլէ չէր անցում, որ նա չասէր ինքն իրան՝ «Աղջիկս պսակւում է Վիկտ-Օդրիէտ փողոցի Ֆրօմեն կրտսերի և Ռիսլէր աւագի հետ...»։—Նրա խելքով, միայն Ռիսլէր աւագը չէր, որ կնութեան էր առնում նրա աղջկան, այլ այդ ամբողջ հռչակաւոր առևտրական տունը։ Եւ ամեն անգամ, երբ տիկին Շեբը հաւաստում էր այդ փառաւոր դէպքը, աւելի ևս ձգւում էր, այնպէս որ վահանանման զգեստի մետաքսը ճրճռում էր վրան։

Ի՞նչ հակապատկեր այն դիրքին, որ բռնել էր մի քանի

աթոռ դէնը նստած պարոն Շէրը։ Ընտանիքում, ընդհանրապէս, միևնոյն պատճառներն առաջացնում են բոլորովին տարբեր հետևանքներ։ Այդ փոքրիկ մարդը, որ ունէր ուտօպիստի մեծ ճաշակ՝ ուռուցիկ ու դատարկ, ինչպէս պարտէզ զարդարող դուռները, նոյնքան զայրացած էր երևում, որքան ուրախ-ուրախ ցնծում էր իր կինը։ Սակայն՝ այդ ամենին փոփոխութիւն չէր քցում պարոն Շէրի մէջ, որովհետև նա զայրացած էր լինում ամբողջ տարին։ Այդ երեկոյ, սակայն, նրա դէմքը այնպէս թթուած ու թօշնած չէր, ինչպէս առհասարակ, և նա չունէր հագին իր լայն ու ծփուն վերարկուն, որի գրպանները միշտ ուռած էին լինում այլ և այլ ձէթերի, գինիների կամ քացախների նմուշներից, նայելով թէ այդ ապրանքներից որ մէկն էր նա դնում նրանց մէջ։ Նրա փրակը, հոյակապ ու նոր, կարող էր մրցել կնոջ կանաչ զգեստի հետ, բայց զժբախտաբար նրա մտածմունքներն էլ սև էին փրակի նման... Ինչու՞ նրան չէին նստացրել նորահարսի կողքին, ինչպէս պահանջում էր հարկը... Ինչու՞ էին բաղմեցրել նրա տեղը Ֆրօսօն կրտսերին... Եւ ծեր Գարդինուան, Ֆրօսօնների պապը, ինչ էր շինում նա Սիդօնիի կողքին... Այդպէս է, այդպէս։ Ամեն բան Ֆրօսօնների համար և ոչինչ Շէրերի համար... Եւ դեռ զարմանում են, որ մարդիկ յեղափոխութիւն են անում...

Բարեբախտաբար՝ այդ զայրացած փոքրիկ մարդու կողքին նստած էր իր բարեկամ Դրլօբէլը,—մի անդորձ հին դեբատան, որի առաջ նա թափում էր սրտի դառնութիւնը և որ լսում էր նրան իր՝ մեծաչուք օրերի վեհ ու անդորր դէմքով։ Շատ էլ մարդ, թատրոնապետների չարակամութեան շնորհիւ, տասնհինգ տարի հեռացած լինի բեմից, այնուամենայնիւ, պէտք եղած ժամանակ, նա կարող է գտնել դէպքերին պատշաճող բեմական դիրքեր։ Եւ իրաւ՝ այդ երեկոյ Դրլօբէլի գլուխը կատարելապէս հարսանիքային էր, կերպարանքը՝ կիսալուրջ, կիսաժպտուն, ներողամիտ դէպի փոքրիկ մարդիկ, միաժամանակ և անբնազբօսիկ և հանդիսաւոր։ Կ'ասես բեմի վրայ լինէր, մի որևէ առաջին դերձողութեան խնջոյքի ժամանակ, նստած ստուարաթղթէ կերակուրների շարքում, հանդիսատեսներով լի դահլիճի առաջ, և այդպէս դեր կատարող կերպարանք ունէր այդ տարօրինակ Դրլօբէլը նա աւելի այն պատճառով, որ, կարծելով թէ անշուշտ երեկոյթի ընթացքում կ'օգտուեն իր տաղանդից, սեղան նստելու բոպէից կրկնում էր մտքում իր ռէպերտուարի ամենասիրուն կտորները, որ տալիս էր նրա դէմքին մի տեսակ անորոշ, շինծու և մտամոլոր արտայայտութիւն, այն կեղծ ուշադիր կերպա-

բանքը, որ ունենում են առհասարակ բեմում դէպ ասունները, որոնք ձևանում են, թէ լսում են իրանց դէմն, բայց ամբողջ ժամանակը իրանց տալիք պատասխանները դալով սպասում են միայն մտածում։

Տարօրինակ բան,—նորահարսի դէմքի արտայայտութիւնը՝ էլ մի քիչ այդպէս էր։ Ինչ որ գաղտնի հոգս էր երևում այդ ջահել ու սիրուն երեսի վրայ, որ աշխոյժ էր ստացել երջանկութիւնից՝ առանց պայծառանալու, և ժամանակ առ ժամանակ մի թռուցիկ ժպիտ էր խաղում նրա բերանի անկիւնում,—կ'ասես թէ՝ խօսելիս լինէր ինքն իրան։

Նոյն թռուցիկ ժպիտովն էր պատասխանում նա իր աջակողմը նստած Գարդինուա պապի փոքր ինչ համարձակ կատակներին։

—Ա՛յ քեզ աղջիկ, ասում էր ծերունին ծիծաղելով... Երկու ամիս չը կայ, ինչ ասում էր, թէ կուսանոց է մտնելու... Էէ դիտենք այդ ջահել աղջիկների կուսանոցները... Այդ ինչ որ մեր գիւղացիք ասում են—կուսանոցի խցի մէջ՝ չորս ոտնամաճ տախտի տակ։

Եւ բոլոր սեղանակիցները սրտանց ծիծաղում էին, լսելով գռեհիկ կատակները այդ ծերունի գեղջուկի, որի կեանքում վիթխարի հարստութիւնը փոխարինում էր ամեն բան՝ և՛ սիրուն, և՛ կրթութիւն, և՛ բարութիւն, բայց ոչ խելք, որովհետև խելք ունէր այդ աղուէս ռամիկը, և նոյն իսկ աւելի, քան այդ բոլոր բուրժուաները միասին։ Այն սակաւաթիւ մարդկանցից, որոնք փոքր ի շատէ համակրութիւն էին ներշնչում նրան, Գարդինուային առանձնապէս դուր էր գալիս այդ փոքրիկ Շէրը, Սիդօնին, որին նա ճանաչում էր նրա երեխայ ժամանակից։ Սիդօնին էլ, որ, իբր դեռ նոր հարստացած, չէր կարող առանց ակնածութեան վերաբերուել դէպի հարստութիւնը, ակնայանի պատկառանքով և կզբէտութեամբ էր խօսում իր աջակողմեան հարևանի հետ։

Իր ձախակողմեան հարևանի, իր ամուսնու ընկերակից Ժորժ Ֆրօսօնի վերաբերմամբ, ընդհակառակը, շատ զուսպ էր ցոյց տալիս նա իրան։ Նրանց խօսակցութիւնը չէր անցնում սեղանակիցների մէջ պարտադիր քաղաքավարութիւնների սահմանից, և նոյն իսկ մի տեսակ չինծու անտարբերութիւն էր նկատւում նրանց մէջ։

Ցանկարծ բաղմականների մէջ սկսուեց այն թեթև իրարանցումը, որ ցոյց է տալիս, թէ շուտով վեր են կենալու,—մեռելոյ լռիկոց, աթոռների աղմուկ, խօսակցութիւնների վերջին բառերը, ծիծաղների ընդհատումը,—և այդ կիսալռութեան

աթոռ դէնը նստած պարոն Շէրը։ Ընտանիքում, ընդհանրապէս, միևնոյն պատճառներն առաջացնում են բոլորովին տարբեր հետևանքներ։ Այդ փոքրիկ մարդը, որ ունէր ուռօպիատի մեծ ճանաչող

մէջ տիկին Շէբը, որի լեզուն բացուել էր, ասում էր իր զաւակների ազգականներից մէկին, որ հիանում էր, թէ ինչպէս զուսպ ու հանգիստ է պահում իրան, այդ բոպէին պ. Գարդինուայի հետ թեանցուկ կանգնած, նորահարսը.

—Տեսնում էք այդ երեխային... Երբէք ոչ ոք չէ կարողացել իմանալ, թէ ինչ կայ դրա մտքումը։

Այդ ժամանակ ամենքը վեր կացան և գնացին մեծ դահլիճը։

Մինչ պարահանդէսին հրաւիրուածները խումբ-խումբ դալիս խառնուում էին ճաշի հիւրերի հետ, և նուագախումբը լարում էր գործիքները, իսկ վալս պարող մենակնոցաւոր (մոնոկլաւոր) երիտասարդները քրքրում էին անհամբեր օրիորդների ոսկեայ զգեստների առաջ, նորափեսան, որ սաստիկ քաշւում էր այդ ահագին բազմութիւնից, իր բարեկամ Պլանուսի հետ,—երեսուն տարիից ի վեր Ֆրօմօնների առևտրական տան գանձապահ Սիգիզմունդ Պլանուսի հետ,—պատրաստարուել էր այն փոքրիկ ծաղկաղարդ պատշգամբում, որ իր ծաղիկներով ու պատերի թղթի պատատուկաբոյսերի նկարներով մի տեսակ կանաչաղարդ նկարահիմք է կազմում Վէֆուրի ոսկեզօծ դահլիճների համար։ Գոնէ այնտեղ նրանք մենակ էին, կարող էին խօսել։

—Սիգիզմունդ, սիրելիս... շատ գոհ եմ...

Սիգիզմունդն էլ շատ գոհ էր, բայց Ռիսլէրը ժամանակ չէր տալիս նրան այդ ասելու։ Այժմ, երբ նա այլևս չէր վախենում, թէ կարող է լալ բազմութեան առաջ, սրտի ամբողջ ուրախութիւնը զեղուում էր անդուսդ։

—Մէկ մտածիր, սիրելիս... Ո՞րքան տարօրինակ բան է, որ նրա պէս մի ջահէլ աղջիկ ինձ հաւանեց։ Առանց այսօրուայ այն անելես կնոջ ասելուն էլ՝ ես վաղուց գիտէի, որ գեղեցիկ չեմ։ Այն էլ կայ, որ քառասուն երկու տարեկան եմ... Իսկ նա այնքան սիրուն է... Քանի-քանի ուրիշները կային, որոնց նա կարող էր ընտրել, աւելի ջահէլ, աւելի լաւ, էլ չեմ խօսում մեր խեղճ Ֆրանցի մասին, որ այնքան սիրում էր նրան... Բայց չէ, բոլորին թողեց ու իր ծեր Ռիսլէրին ջոկեց... Եւ ո՞րքան տարօրինակ կերպով եղաւ այդ... Շատ ժամանակ էր, տխուր էր երևում աչքիս, բոլորովին փոխուած։ Անպատճառ սիրահարուած կը լինի աղջիկը, ասում էի ինձ ու ինձ... Ես ու մայրը խելք խելքի էինք տալիս, ջարդում էինք գլուխներս, որ իմանանք, թէ ով կը լինի այդ... Եւ ահա մի առաւօտ տիկին Շէբը մտնում է անենակս ու ասում ինձ լալով.—«Քնդ է սիրում աղջիկս, իմ ազնիւ բարեկամ, քնդ...»։ Ինձ... հասկանում ես, ինձ... Հը՞, ո՞ւմ մտքովը կ'անցնէր այդպիսի բան։ Աստուած երկու ձեռով է տալիս ինձ այս տարի... Ֆրօմօնների տան առևտրական ընկերը դարձայ և Սիդոնիի ամուսինը... Օ՜...

Այդ բոպէին՝ վալս պարողների մի զոյգ պտոյտ գալով մոտաւ փոքրիկ դահլիճը։ Նորահարսն էր այդ՝ Ռիսլէրի ընկերակից Ժորժ Ֆրօմօնի հետ։ Երկուսն էլ ջահէլ, երկուսն էլ նրբաշնորհ, նրանք խօսում էին կիսաձայն, պարփակելով իրանց խօսքերը վալսի նեղ շրջանակներում։

—Սուտ էք ասում... պնդում էր Սիդոնին, մի քիչ դունատուած և դարձեալ թոուցիկ ժպիտը բերանին։

Ֆրօմօնը, աւելի դունատ, պատասխանում էր.

—Սուտ չեմ ասում։ Հօրեղբօրս կամքովն եղաւ ամուսնութիւնս։ Նա մնանելու վրայ էր... դուք գնացել էիք... Չը համաձայնուեցի չէ ասել...

Ռիսլէրը հեռուից հիանում էր նրանց վրայ.

—Որքան սիրուն է կինս, որքան լաւ են պարում...

Բայց պարողները, նրան նկատելով, բաժանուեցին իրարից և Սիդոնին աչխուժով մօտեցաւ նրան.

—Վա՛յ, այստեղ էք եղել։ Ի՞նչ էք անում այստեղ... Ձեզ ամէն տեղ փնտռում են։ Ինչո՞ւ այնտեղ չէք...

Այդպէս խօսում էր հեռը ու միևնոյն ժամանակ՝ անհամբեր կնոջ սիրուն շարժումով շիտակում էր նրա փողպատի հանդոյցը։ Ռիսլէրը հիացել մնացել էր ու աչքի պոչով ժպտում էր Սիդիզմունդին և այնքան երջանիկ տրամադրութեան մէջ էր, զգալով կնոջ փոքրիկ ձեռնոցապատ ձեռքի շփումը իր վզին, որ չէր կարող նկատել, որ այդ ձեռքը դողդողում էր իր բոլոր նուրբ մատներով։

—Տուէք ինձ ձեր թեը, ասաց նրան կինը, և նրանք մտան միասին դահլիճները։ Կնոջ երկարատուտ ոսկեայ զգեստը աւելի ևս նկատելի էր դարձնում մարդու՝ վատ ձեռքի և վատ նստող ֆրակի անշնորհքութիւնը. բայց ֆրակը փողպատ չէ, որ չիանուի,—ուզէր չուզէր, պէտք է հաշտուէր այդ պակասութեան հետ... Մինչ նրանք, անցնելիս, բարևում էին բոլոր հիւրերին, որոնք շտապում էին ժպտալ նրանց, Սիդոնիի սիրտը մի բոպէ լցուեց հպարտութեամբ և մնախառութիւնը յաղուրդ ստացաւ։ Դժբախտաբար՝ երկար չը տևեց այդ։ Դահլիճի մի անկիւնում նստած էր մի ջահէլ ու սիրուն կին, որին ոչ ոք չէր հրաւիրում պարելու և որ դիտում էր պարերը առաջին մայրութեան հրճուանքով փայլող անդորր հայեացքով։ Հէնց որ նրան նկատեց, Ռիսլէրը գնաց ուղիղ դէպի նա և սոխպեց Սիդոնիին նստել նրա կողքին։ Աւելորդ է ասել, որ տիկին «Շօրշն» էր այդ։ Էլ ուրիշ ո՞ւմ հետ կարող էր Ռիսլէրը խօսել այդպիսի գորովալից

պատկառանքով։ Էլ ուրիշ ում ձեռքի մէջ կարող էր նա դնել իր սիրունիկ Սիգոնի ձեռքը, ասելով. «Դուք կը սիրէք սրան, այնպէս չէ՞։ Այնքան բարի էք դուք... Սա այնքան կարօտ է ձեր խորհուրդներին, ձեր աշխարհաճանաչութեան...»։

—Բայց չէ՞ որ, իմ բարի Ռիսլէր, պատասխանում էր տիկին Ժորժը,—Սիգոնին ու ես հին բարեկամներ ենք... Եւ հազարաւոր պատճառ կայ, որ մենք այսուհետև էլ շարունակենք սիրել միմեանց...

Եւ նրա հայեացքը, անկեղծ ու անդորր, աշխատում էր հանդիպել իր հին բարեկամուհու հայեացքին, բայց ի զուր...

Ռիսլէրը, որ ամենևին չէր ճանաչում կանանց և սովոր էր երեխայի տեղ դնել Սիգոնին, շարունակեց նոյն եղանակով.

—Սրան օրինակ չենիր քեզ, փոքրիկս... Տիկին Շօբշի հատը չը կայ աշխարհումս... Տեղն ու տեղը հանդուցեալ հայրն է իր անմման սրտով... Իսկական Ֆրոմոն է...

Սիգոնին, աչքերը քաշ քցած, լուռ ծռում էր գլուխը, անհնարելի տարօրէն զգալով, որ անցնում էր նրա ամբողջ մարմնով մեռաքսէ հողաթափերի ծայրից սկսած մինչև ծաղկէ պսակի վերջին շիւղը։ Բայց Ռիսլէրը ոչինչ չէր տեսնում։ Սրտի յուզմունքը, պարերը, երաժշտութիւնը, այդ բոլոր ծաղիկները, այդ բոլոր ճրագները... Նա հարբած պէս էր, ցնորուած պէս։ Նա կարծում էր, թէ ամենքն էլ իր պէս շնչում են այն անմման երջանկութեան մթնոլորտում, որ շրջապատում էր իրան։ Նա չէր զգում, թէ ինչ մրցութիւններ և մանր ատելութիւններ են անցնում դահնում այդ բոլոր պճնազարդ ճակատներից բարձր։

Նա չէր տեսնում բուխարիին կոթնած Դրլօրէլին, որ արդէն յոգնել էր միշտ միևնոյն դիրքում մնալով, ձեռքը ժիլետի արանքում ու գլխարկը աղդրի վրայ պահած, մինչդեռ ժամեր էին անցնում և ոչ ոք չէր մտածում շահագործել նրա տաղանդները։ Նա չէր տեսնում պ. Շէրին, որ մռայլ կուչ էր երկել երկու դռան արանքին, ուելի քան երբևիցէ կատաղած՝ Ֆրոմոնների դէմ... Օ՜հ, այդ Ֆրոմոնները... Ինչ մեծ տեղ էին բռնում նրանք այս հարսանիքում... Նրանք ամենքը այստեղ էին իրանց կանանցով, իրանց երեխաներով, իրանց բարեկամներով ու իրանց բարեկամների բարեկամներով... Հէնց իմանաս նրանցից մէկի պսակը լինէր... Ով էր հարցնում Ռիսլէրների կամ Շէրերի մասին... Իրան նոյն իսկ չէին ներկայացրել հիւրերին, իրան, նորահարսի հօրը... Բայց այդ փոքրիկ մարդու կատաղութիւնը ուելի ևս ստատակացնողը, կրկնապատկողը՝ իր կնոջ վարմունքն էր, իր կնոջ, որ, կանաչ ու կարմրին տուող զգեստը հագին, մայրաբար ժպտում էր ամենքին։

Պէտք է ասած, որ այդտեղ էլ, ինչպէս գրեթէ բոլոր հարսանիքներում, երկու տարբեր հոսանքներ կային, որոնք չըփնում էին իրար՝ առանց խառնուելու։ Այդ հոսանքներից մէկը շուտով տեղի տուեց միւսին։ Պ. Շէրին այնքան զրգռող և հարսանիքի ազնուական դասը կազմող Ֆրոմոնները՝ առևտրական ատեանի նախագահը, հաւատարմատարների աւագը, Օրէնսդրական ատեանի *) պատգամաւոր յայտնի չօկօլատարդիւնաբերողը, ծեր միլիոնէր Գարպինուան—դրանք բոլորը քաշուեցին գնացին կէս գիշերից մի փոքր անցած։ Նրանց յետևից Ժորժ Ֆրոմոնն ու իր կինն էլ տուն գնացին կառքով։ Այնուհետև մնացին միայն Ռիսլէրն ու Շէրերը, իրանց ծանօթ ու բարեկամներով, և երեկոյթը, անմիջապէս փոխելով տեսքը, դարձաւ ուելի աղմկալի։

Հռչակաւոր Դրլօրէլը, տեսնելով, որ ոչ ոք ոչինչ չէ խնդրում իրանից, ձանձրացաւ ու վճռեց ինքն իրանից խնդրել մի բան և զօղանջող ձայնով սկսեց Ռիւյի-Բլասի մենախօսութիւնը՝ „Bon appétit, messieurs!..“ («Բաղցր ախորժակ, պարոններ...»), մինչդեռ հարսանիքաւորները խոնում էին սեղանի մօտ չօկոլատի ու փունջի բաժակների առաջ։ Խնայողաբար կարած կանացի զգեստները սկսեցին ազատ փռուել աթոռների վրայ, ուրախացած, որ վերջապէս իրանք էլ կարող են մի ազատութիւն գործել, և քրքրուան ջահել խանութպանները, սիրտ առած, սկսեցին քաղրիլ պարել այստեղ այնտեղ։ Նորահարսը վաղուց ուզում էր տուն գնալ։ Վերջապէս նա անյայտացաւ Ռիսլէրի և տիկին Շէրի հետ։ Ինչ վերաբերում է պ. Շէրին, որ այժմ ձեռք էր բերել իրան վայել ամբողջ կարևորութիւնը,—անկարելի էր նրան տուն տանել։ Վա՛, հօ չէ կարելի, որ ոչ մի հարսանիքատէր չը մնայ հարսանիքում։ Եւ պէտք է ասած, խեղճը իրան մոլթում էր հարսանիքաւորներին զբաղեցնելու համար։ Պէտք է տեսնէիք, ինչպէս էր կարմրատակել, բորբոքուել, կրակ կտրել, ինչ աղմկարար, գրեթէ խռովարար էր դարձել։ Ներքեից լսում էր, որ նա Վէֆուրի հիւրանոցապետի հետ քաղաքական հարցերի մասին էր խօսում և այնպիսի յանդուգն բաներ էր ասում **...

...Հարսանիքային կառքը, որի թմրած կառապանը մի քիչ թոյլ էր պահում սոլոտակ երառանները, ծանր-ծանր գնում էր ամայի փողոցներով դէպի Մարէի կողմը։

---

*) Նապոլէոն III-ի ժամանակ պատգամաւորների ժողովը կոչում էր Օրէնսդրական ատեան (Corps législatif)։ Ծ. Թ.

**) Վէպի նիթը վերաբերում է Նապոլէոն III-ի կայսրութեան ժամանակին։ Ծ. Թ.

Տիկին Շեբը անվերջ խօսում էր, թուելով այդ յիշատակելի օրուայ բոլոր աքանչելիքները, զմայլուած մանաւանդ ճաշից, որի ամենասովորական կերակուրները շայլութեան ամենաբարձր արտայայտութիւնն էին նրա աչքում։ Սիրօնին երգում էր կառքի ստուերում, իսկ Ռիսլէրը, նստած նրա դիմացը, եթէ այլ ևս չէր էլ ասում՝ «շատ դոհ եմ»..., մաքումը կրկնում էր այդ ի բոլոր սրտէ։ Մի անգամ նա ուզեց բռնել Սիրօնիի փոքրիկ սպիտակ ձեռքը, որ նա դէմ էր տուել բարձրացրած ապակուն, բայց ձեռքը իսկոյն յետ քաշուեց, և նա մնաց անշարժ իր տեղում, խորասուզուած անբարբառ երկրպագութեան մէջ։

Անցան շուկաները ու բանջարավաճառների սայլերով լի Ռամբիւտօ փողոցը, յետոյ, Ֆրան-Բուրժուա փողոցի ծայրում, ծուեցին Արչիվների անկիւնի մօտով ու մտան Բրաքի փողոցը։ Այնտեղ նրանք մի քիչ կանգ առան, և տիկին Շեբ իջաւ կառքից իրանց դռան առաջ, որ շատ նեղ էր տիկնոջ աքանչելի կանաչ մետաքսէ զգեստի համար, որ պատակուեց սրահանցքի մէջ խռովածայն խշխշոցով և բոլոր ծալքուածուքների մրմնջոցով... Մի քանի բոպէ անց՝ Վիեյլ-Օդրիէտ փողոցում կրունկի վրայ բացուեց ու ճանապարհ տուեց հանդիսային կառքին մի ահագին կուռ դարպաս, որի հին ապարանային վահանակը, կիսով չափ եղծուած տոհմանիշի տակ, կրում էր կապոյտ տառերով գրած «Որմաթոթեր» ցուցատախտակը։

Այս անգամ, նոքահարսը, անշարժ ու քնածի պէս, կարծես յանկարծ զարթնեց և, եթէ բակում ձգուող ահագին շէնքերի, արհեստանոցների ու պահեստների բոլոր ճրագները հանդցրած չը լինէին, Ռիսլէրը կարող էր տեսնել, թէ ինչպէս միանգամից մի յաղթական ժպիտ պայծառացրեց այդ հանելուկային սիրուն դէմքը։ Անիւների ձայնը մեղմացաւ մանր աւազի վրայ և կառքը շուտով կանգ առաւ մի երկյարկանի փոքրիկ ապարանքի մուտքի առաջ։ Այդտեղ էր ապրում ջահել Ֆրօմենների զոյգը, և Ռիսլէր աւագը իր կնոջ հետ ընակութիւն էր հաստատելու նրանց վերևում։ Բնակարանի սարք ու կարգը մնծավայել էր։ Այդտեղ հարուստ վաճառականութիւնը իր ոսկը հանում էր խաւար փողոցից ու յետ ընկած թաղից։ Մի ահագին գորգ սանդուխքի ներքևից տանում էր մինչև նրանց կացարանը, որի նախասենեակը զարդարուած էր ծաղիկներով, և ամեն կողմից երևում էին ապիտակափառ մարմարներ, շողշողուն հայելիներ և կոփուած պղնձեղէն։

Մինչդեռ Ռիսլէրը հրճուալից սրտով պտտում էր իր կացարանի բոլոր սենեակները, Սիրօնին մնացել էր մենակ իր սենեակում։ Առաջից կախուած փոքրիկ կապտագոյն լամպի լոյսով

նա նախ և առաջ մի հայեացք ձգեց հայելիի վրայ, որ ցոլացնում էր նրան ոտից մինչև գլուխ, և բոլոր այդ թարմ շայլութեան վրայ, որին այնքան անսովոր էր նա. յետոյ, փոխանակ պառկելու, նա բաց արեց պատուհանը և մնաց անշարժ, յենուած ճաղերի վրայ։

Գիշերը պայծառ էր ու տաք։ Նա պարզ տեսնում էր ամբողջ գործարանը, նրա անթիւ անվանդակափեղկ պատուհանները, նրա շղթուն ու բարձր ապակիները, նրա երկար ծխնելոյզը, որ կորչում էր երկնքի խորութեան մէջ, և աւելի մօտ՝ այդ փոքրիկ ճոխ պարտէզը, փարուած հինաւուրց ապարանքի հնամաշ պատին։ Ու չորս կողմը՝ տխրատես ու աղքատիկ տանիքներ և խաւար, խաւար փողոցներ... Ցանկարծ սարսուռ անցաւ նրա մարմնով։ Այնտեղ, այդ կարծես աղքատութեան ծանրութեան տակ իրար կուչ եկած, իրար կոթնած վերնատուններից մէկում, որ ամենամայլն էր ու ամենատձեր, երևում էր հինգերորդ յարկի մի լուսամուտ, լայն բացուած ու լի խաւարով։ Նա իսկոյն ճանաչեց այդ պատուհանը։ Իր ծնողների ընակարանի սրահի պատուհանն էր այդ։

Սրահի պատուհանը...

Ո՞րքան բաներ էր յիշեցնում նրան լոկ այդ անունը։ Ո՞րքան ժամեր, ո՞րքան օրեր է անցրել նա այնտեղ, նայելով գործարանի կողմը, կռացած այդ լուսամուտի անյենարան ու անվանդակ խոնաւ շուրթի վրայ։ Հէնց այդ բոպէին էլ նրան թուում էր, թէ տեսնում է այնտեղ, վերևում, փոքրիկ Շեբի սիրունիկ դէմքը, և նրա աչքի առաջ՝ այդ աղքատիկ պատուհանի շրջանակում անցնում էր իր ամբողջ մանկական կեանքը, իր տխուր ջահելութիւնը փարիզեցի աղջկայ։

II

Փոքրիկ Շեբի պատմութիւնը։—Երեք ընտանիք մի սրահի շուրջը։

Փարիզում, աղքատ ընտանիքների համար, որոնք չատ նեղուածք են զգում իրանց չափազանց փոքր ընակարաններում, ընդհանուր սրահը աւելորդ սենեակի տեղ է բռնում, մի տեսակ յաւելուած է կազմում կացարանին կից։ Այնտեղով է ներս թափանցում առաւը մի փոքր օդ դրսից, այնտեղ են կանայք զրոյց անում, երեխաները՝ խաղում։

Երբ փոքրիկ Շեբը չատ էր աղմուկ անում տանը, մայրը ասում էր նրան—«Է՛, գլուխս տարար... Գնա սրահում խաղ արա»։ Եւ երեխան իսկոյն վազում էր այնտեղ։

Այդ սրահը, որ գտնուում էր վերջին յարկումը մի հին տան, որի շինողները ամենևին չէին խնայել տեղը, կազմում էր մի տեսակ մեծ ու բարձրաոիք միջանցք, պաշտպանուած՝ սանդուխքի կողմից երկաթակուռ ճաղերով և լուսաւորուած մի լայն պատուհանով, որի մէջից երևում էին շրջակայ տանիքները, բակերը, ուրիշ պատուհաններ և հեռուում՝ Ֆրօմենտների գործարանի պարտէզը, որ կանաչին էր տալիս հնաչէն ու հսկայակերպ պաբիսների արանքին։

Շատ էլ ուրախ տեսք չունէր այդ բոլորը, բայց երևոյթին այդտեղ աւելի էր դուր գալիս, քան նեքսեում, որովհետև նրանց առտնին կեանքը չափազանց ախուր էր, մանաւանդ անձրև օրերը, երբ Ֆերդինանդը տանն էր մնում։

Ֆերդինանդ Շերը ծոյլ ու ծրագրաւոր բուրժուաներից մէկն էր, որոնցից այնքան շատ կայ Փարիզում, և նրա գլուխը միշտ լիքն էր նոր-նոր ծրագիրներով, որոնք դժբախտաբար երբէք չէին իրագործուում։ Նրա կինը, որին նա կարողացել էր շլացնել սկզբում, շատ չուտով նկատեց նրա ոչնչութիւնը և ի վերջոյ սովորեց միակերպ համբերութեամբ տանել նրա մշտական երազանքները հարստանալու մասին և այդ երազանքներին անմիջապէս հետևող ձախորդութիւնները։

Կնոջ օժիտ բերած և մարդու ձեռքով անհեթեթ ձեռնարկութիւնների վրայ վատնուած ութսուն հազար ֆրանկից մնում էր միայն մի փոքրիկ հաստոյթ, որ դեռ բարձր էր պահում նրանց իրանց հարևաններից, ինչպէս նաև տիկին Շերի՝ բոլոր փորձանքներից ազատած կաշմիրէ շալը, հարսանիքի ժամանակները և երկու շատ մանր, շատ համեստ ադամանդէ կոճակները, որ Սիրոնիի աղաչանքով մայրը երբեմն-երբեմն ցոյց էր տալիս նրան պահարանի աչքի խորքում, սպիտակ թաւիշով պատած մի հին տուփի մէջ, ուր գոհարավաճառի երեսուն տարի առաջ ոսկետառ դրոշմած անունը դրեթէ ջնջուել էր բոլորովին։ Միակ շռայլութեան առարկան էր դա այդ խղճուկ բնակարանում։

Երկար, շատ երկար ժամանակ պ. Շերը տեղ էր փնտռում՝ իր փոքրիկ հաստոյթը աւելացնելու համար։ Բայց այդ տեղը նա փնտռում էր միայն, ինչպէս ինքն անուանում էր, ռենտի ռեուտի մէջ, որովհետև նրա առողջութիւնը չէր դիմանում նրա տական պարապմունքի։

Կարծեմ, խեղճը, ճիշդ որ, ամուսնութեան սկզբի ժամանակները, երբ խոշոր առևտրի մէջ էր և յատուկ ձի ու փոքրիկ կառք ունէր վաճառական գործերի համար, մի օր սաստիկ վայր էր ընկել կառքից։ Այդ փորձանքը, որի մասին նա խօսում էր

տեղի անտեղի, արդարացնող պատրուակ էր նրա ծուլութեան համար։

Անկարելի բան էր, որ մարդ հինգ բոպէ մնար պ. Շերի հետ և նա չ'ասէր գաղտնախորհուրդ եղանակով.

«Ցայտնի է ձեզ Օրլէանի դուքսին պատահած փորձանքը...»

Ու յետոյ չ'աւելացնէր, թիթիկացնելով իր ճաղատ գանգը.

«Իմ գլխին էլ նոյն փորձանքն է եկել ջահել ժամանակս»։

Այդ հոչակաւոր անկումից յետոյ՝ ամենն տեսակ գլխակոր աշխատանքից նրա աչքերը մթնում էին, ուստի նա ճակատագրօրէն ստիպուած էր բաւականանալ ռենտի առեւտրով։ Այդպիսով նա հետզհետէ դարձել էր վաճառամիջնորդ գինու, գրքերի, թայլի *), ժամացոյցի և հազար ու մի ուրիշ բաների առևտրի մէջ։ Դժբախտաբար նա շուտ զզուում էր գործից, երբէք բաւարար չը գտնելով իր գիրքը՝ երբեմն յատուկ կառք ունեցած վաճառականի համար, և այդպէս քիչ-քիչ, սովորելով միշտ իրանից ստոր համարել ամենն մի պարապմունք, ծերացել էր ու դարձել մի անպէտք ու անգործ սրարած, զբաղուած միայն փողոց չափելով ու քամի կուլ տալով։

Շատ են յարձակուել արտիստների վրայ նրանց տարօրինակ վարմունքների, նրանց բնաւորութեան քմահաճոյքների և դէպի պատշաճականութիւնը տածած ատելութեան համար, որ նրանց մղում է դէպի կողմնակի շաւիղներ, բայց ով կարող է նկարագրել այն բոլոր ծիծաղելի երևակայանքները, այն բոլոր յիմար տարօրինակութիւնները, որոնց կարող է հասնել մի անգործ բուրժուա իր կեանքի դատարկութիւնը լցնելու համար։ Պ. Շերը որոշ օրէնքներ ունէր տնից դուրս գալու և զբօսանքների համար։ Սեպտեմբերեան բուլվարը չինելիս, սկզբից մինչև վերջը, նա օրը երկու անգամ գնում էր տեսնելու, թէ ինչպէս է, «առաջ է գնում գործը»։

Ոչ ոք նրանից լաւ չէր ճանաչում յայտնի խանութները և յատուկ վաճառատները, և յաճախ, երբ տիկին Շերի համբերութիւնը հատնում էր, տեսնելով իր ամուսնու տատուց գլուխը կպած պատուհանի ապակուն, մինչդեռ ինքը ժրաջան կարկատում էր տանու սպիտակեղէնը, նա գլխիցը կորցնում էր հոգեւորին, ուղարկելով նրան այն կողմերը... «Դու գիտես է այնտեղ, ինց են ասում, այն փողոցի անկիւնում, ուր այնպէս համով խմորեղէն են ծախում... Գնա մի քիչ առ ճաշի համար»։

Եւ մարդը գնում էր, չափչփում էր բուլվարը, թրև էր գալիս խանութների առաջ, սպասում էր հանրակառքին, օրուայ

*) Ցօմբալան, տրիգֆէլ։

կէսը դրանն էր անցկացնում հասը երկաթ սու *) արժող երկու խմորեղէնի համար, որ ի վերջոյ բերում էր տուն յաղթական կերպով, ճակատի քրտինքը սրբելով։

Պ. Շէրը պաշտում էր ամառը, կիրակիները, երկար զբոսանքները ոտով Կլամարի կամ Ռուսֆնվիլի փոշոտ ճանապարհով և տնօրեայ ամբոխի աղմուկը։ Նա այն մարդկանցից էր, որոնք օգոստոսի 15-ից մի ամբողջ շաբաթ առաջ գնում էին դիտելու ապագայ հրավառութեան պարարտութիւնները։ Եւ կինը չէր տրտնջում այդ բանից։ Գոնէ առ ժամանակ նրա հոգին ազատւում էր այդ անվերջ ախ ու վախ անող արարածից, որ ամբողջ օրերով պտոյտ-պտոյտ էր գալիս նրա աթոռի շուրջը հսկայական ձեռնարկութիւնների ծրագիրներով, առաջուց ձախորդութեան մատնուած կոմբինացիաներով, հին դարմանը քամուն տալով և զայրոյթը թափելով, թէ ինչու չէ կարողանում փող վաստակել։

Խեղճ կինը ինքն էլ փող չէր վաստակում, բայց նա այնքան լաւ խնայել գիտէր, նրա հիանալի անարարութիւնը այնքան լաւ կարողանում էր ամէն պակաս լրացնել, որ աղքատութիւնը, նրանց մեծ կարօտութեան դրացին, երբէք չէր կարողացել մտնել այդ երկաթ միչտ մաքուր սենեակներն ու փչացնել այդ խնամքով կարկատած չորեղէնները, այդ չապկած հին կահկարասիները։

Շէրերի դռան դէմ, որի պղնձէ բռնակը բուրժուական փայլում էր պահի մէջ, բացւում էին երկու ուրիշ, աւելի փոքր դռներ։

Դրանցից առաջինի վրայ, արհեստաւոր նկարիչների սովորութեան համեմատ՝ չորս մեխով ամրացրած մի այցետոմս կրում էր «Գործարանի գծագրիչ Ռիվէր» անունը։ Միւսից կպցրած էր մի փոքրիկ կաշեսախտակ հետեւեալ ոսկեատառ մակագրութեամբ.

ՏԻԿՆԱՑՔ ԴԸԼՕԲԷԼ

թռչուններ ու ճանճեր զարդարանքի համար

Դրլօբէլների դուռը բաց էր մնում յաճախ և ցոյց էր տալիս մի մեծ սալայատակ սենեակ, ուր երկու կին, մի մայր ու աղջիկ (գրեթէ մի մանուկ), մէկը միւսից դունատ, մէկը միւսից յոգնած, պարապում էին այն հազարաւոր փոքրիկ քմածին արհեստներից մէկով, որոնցից կազմւում է «l'Article de Paris *)» կոչուող բանը։

Այն ժամանակ մօդա էր զարդարել կանացի գլխարկները և պարահանդիսային զգեստները հարաւային Ամերիկայի այդ գեհարի գոյն ու ակունքների չողք ունեցող թռչնիկներով ու միջատներով։ Այդ արհեստն էին բանեցնում տիկին Դրլօբէլները։

Մի խոշորավաճառ առեւտրատուն, որ ստանում էր ապրանքը ուղղակի Անտիլեան կղզիներից, անընդհատ ուղարկում էր Դրլօբէլներին երկար ու թեթեւ արկղներ, որոնց մէջից, խուփերը պոկելիս, բարձրանում էր մի անախորժ հոտ ու մինդեղի փոշի, որի մէջ փայլում էին քորոցուած ճանճերի չեղջեր և իրար հետ տուած ու թեերը բարակ թղթի հանգոյցներով կապած թռչուններ։ Պէտք էր սարքել այդ բոլորը, այնպէս անել, որ ճանճերը դողդողան արոյրի թելերի վրայ, բզկտել կօլիբրիների փետուրները, փայլ տալ նրանց, կարկատել մետաքսի թելով կարմրագոյն թաթիկների կոտրուածքները, երկու պսպղան ուլունքներ դնել մարած աչքերի տեղ, տալ միջատին կամ թռչնիկին իրան յատուկ գողտրիկ ու կենդանի դիրքը։

Մայրը բանում էր աղջկայ ղեկավարութեամբ, որովհետև Դէդիրէն, դեռ բոլորովին ջահէլ, ունէր նուրբ ճաշակ ու յաւէրժահարսի հնարագիտութիւն, և ոչ ոք չէր կարող նրա նման՝ ուլունքէ աչքեր անցկացնել թռչունների փոքրիկ գլուխներին կամ բանալ նրանց ընդարմացած թեերը։

Մանկութիւնից ի վեր կաղ, չնորհիւ մի պատահարի, որ ամենեին չէր վնասել կանոնաւոր ու նուրբ դէմքի սիրունութեանը, Դէդիրէ Դրլօբէլը ծուլանում էր առհասարակ դուրս գալ տանից։ Նրա այդ ծուլութեան և գրեթէ հարկադիր անշարժութեան հետեւանքն էր անշուշտ նրա դէմքի մի տեսակ արիստոկրատական գոյնը և ձեռների առանձին սպիտակութիւնը։ Միչտ կօքէտաբար սանրուած, նա անցնում էր ամբողջ օրեր իր մեծ բազկաթոռի մէջ, մօդային պատկերներով ու գոյնզգոյն թռչնիկներով ծանրաբեռնուած սեղանի առաջ, գրտնելով իր արհեստի քմածին ու աշխարհիկ գողտրիկութեան մէջ մոռացութիւն իր վշտի և մի տեսակ վրիժառութեան միջոց իր չնորհաղուրկ կեանքի համար։

Թւում էր նրան, թէ բոլոր այդ փոքրիկ թեները թռիչք են առնելու իր անշարժ սեղանի վրայից, որպէս զի իսկական ճանապարհորդութիւններ կատարեն փարիզեան աշխարհում ու չոր-

*) Սուն հինգ սանտիմ է։ Սանտիմը ֆրանկի հարիւրերորդ մասն է։ Մի սուն ռուսաց փողով կ'անէ երկու կոպէկ։

*) Փարիզեան մանրունքներ։

3582 Ղ4

չողան ոճնախմբութիւնների մէջ, ջահերի լոյսում. և բաւական էր տեսնել միայն այն, թէ ինչպէս էր նա ցցում իր ճանճերն ու թռչնիկները, որպէս զի մարդ կարողանար գուշակել նրա մտքերի դարձուածքը։ Վհատութեան ու տխրութեան օրերում թռչնիկների երկարուկ կոուցները ձգւում էին առաջ, թեները լայն բացւում, կարծես կատաղի թափ ստանալու համար դէպի հեռու, շատ հեռու հինգերորդ յարկի ընակարաններից, երկաթէ վառարաններից, զրկանքներից, չքաւորութիւնից։ Ուրիշ օրեր, երբ նրա սիրտն ուրախ էր լինում, թռչնիկները կենսաղմայլ տեսք էին ունենում, կատարեալ խիզախ ու չարաճճի տեսքը մօդային քմայքի...

Երջանիկ թէ դժբախտ, Դէզիրէն աշխատում էր միշտ մի և նոյն եռանդով։ Լուսաբացից մինչև ուշ գիշեր նրա սեղանի վրայ լիքն էր լինում բանուածքը։ Արևի վերջին շողքերը մարելիս, երբ ամէն կողմից սկսւում էին հնչել շրջակայ գործարանների զանգերը, տիկին Դըլօրէլը վառում էր լամպը և, աւելի քան թեթև ընթրիքից յետոյ, մայր ու աղջիկ նորից նստում էին գործի։

Այդ երկու անխոնջ կանայք մի նպատակ, մի յարակայ գաղափար ունէին, որ թոյլ չէր տալիս նրանց զգալ հարկաղիր տքնութիւնների ծանրութիւնը։ Հռչակաւոր Դըլօրէլի դերասանական փառքն էր այդ։

Այն օրից ի վեր, երբ թողել էր գաւառական թատրոնները և եկել Փարիզ այնտեղի բեմերում խաղալու համար, Դըլօրէլը միշտ սպասում էր, որ մի բանիմաց թատրոնապետ,—հանճարեղ յայտնագործող իդէալական և նախախնամառաք թատրոնապետներից մէկը,—գայ գտնի նրան ու առաջարկի նրա ձիրքին վայել մի դեր։ Թերևս նրան յաջողէր գտնել, մանաւանդ սկզբներում, մի միջակ պաշտօն երրորդակարգ թատրոններից մէկում, բայց Դըլօրէլը չէր ուզում իր արժէքը իջեցնել։

Նա աւելի լաւ էր համարում սպասել, մաքառել, ինչպէս ինքն ասում էր... Եւ ահա թէ ինչպէս էր նա հասկանում այդ մաքառումը։

Առաւօտեան, իր սենեակում, յաճախ նոյն իսկ դեռ անկողնում, նա կրկնում էր իր հին ռէպէրտուարի դերերը, և մայր ու աղջիկ զողզողում էին, լսելով, թէ ինչպէս միջնորմի յետևում թնդում էին «Անտոնիի» և «Մանուկների բժշկի» նշանաւոր հատուածները, արտասանուած որոտալից ձայնով, որ խառնւում էր Փարիզի ահագին հաղարաբհեռա փեթակի աղմուկին։ Յետոյ, նախաճաշից վերջը, դերասանը ամբողջ օրով դուրս էր գալիս տանից և գնում կատարելու իր սովորական «պտոյտը»,

այսինքն փոքրիկ քայլերով զբօսնելու Շատօ-դ'Օի և Մաղելէնի մէջև, ատամիտրիկը բերնին, գլխարկը մի քիչ թեք դրած, միշտ ձեռնոցները հագին և սրած ու կոկած։

Հագնուածքի հարցը մեծ կարևորութիւն ունէր նրա աչքում։ Այդ նրա յաջողութեան ամենամեծ գրաւականներից մէկն էր, այն խայծն էր, որ հրապուրելու էր թատրոնապետին, այդ հռչակաւոր բանիմաց թատրոնապետին, որի մտքովն անգամ չէ կարող անցնել դերասան վարձել անշնորհք հագնուած թերմաչի մէկին։

Եւ ահա տիկնայք Դըլօրէլները ամէն կերպ հոգս էին տանում, որ ոչինչ չը պակասի նրան։ Երևակայեցէք, թէ որքան ճանճ ու թռչուն էր հարկաւոր, որպէս զի խեղճ կանայք կարողանային զուրկել այդ զուրկ մարդուն։ Դերասանը ինքը շատ բնական էր գտնում այդ։

Նրա կարծիքով, կնոջ ու աղջկայ գործ դրած ջանքերն ու քաշած զրկանքները ուղղակի իրան չէին վերաբերում, այլ այն խորհրդաւոր ու անյայտ հանճարին, որի մի տեսակ աւանդապահն էր համարում իրան։

Որոշեալ նմանութիւն կար Շէբերի ու Դըլօրէլների ընտանեկան դրութեան մէջ։ Միայն թէ Դըլօրէլների տանը այնքան տխուր չէր, որքան Շէբերի տանը։ Շէբերը զգում էին իրանց փակուած մանր հասոյթատէրերի միջև միակերպ և անհորիզոն կեանքի շրջանակում, մինչդեռ դերասանի ընտանիքում յոյսը և պատրանքը հրաշալի տեսարաններ էին բանում ամէն կողմից։

Շէբերը նմանում էին անանցիկում (impasse,тупикъ) ընակող մարդկանց։ Դըլօրէլները ապրում էին փոքրիկ ու կեղտոտ, անլոյս ու անօդ փողոցում, որի միջով չուտով պէտք է անց կ'ացնէին մի մեծ բուլվար։ Բացի այդ, տիկին Շէբը հաւատ չունէր այլ ևս իր մարդու վրայ, մինչդեռ նրա հարևանուհին, լոկ «դեղարուեստ» մոգական բառի շնորհիւ, երբէք չէր երկմտել իր ամուսնու նկատմամբ։

Եւ սակայն երկար տարիներից ի վեր պ. Դըլօրէլը բոլորովին անօգուտ վերմուտ էր խմում թատրոնական գործակալների հետ, օչինդր՝ վարձկան ծափահարների պարապլուխների հետ, բիատեր՝ վոդեվիլիստների, դրամատուրգների և թատրոնական հռչակաւոր մեքենապետի հետ։ Հրաւիրող չը կար ու չը կար։ Այնպէս որ, դեռ ոչ մի անգամ բեմ դուրս չեկած Փարիզում, խեղճ մարդը քիչ-քիչ անցել էր առաջին սիրահարների դերերից դօրեղ դրամատիկական դերերի, յետոյ ֆինանսիստների, յետոյ ամենի-

հայրերի, յետոյ պարզամիտների դերերի...

Այդտեղ նա դէմ էր առել։

Երկու-երկք անգամ ծանօթները միջոց էին տուել նրան իր ապրուստը վաստակելու, փորձելով տեղաւորել նրան իրրև տնօրէն ժողովարանում կամ սրճարանում, կամ իրրև վերակացու մեծ խանութներում, Phares de la Bastille-ում, Colosse de Rhodes-ում։ Դրա համար բաւական էր միայն ունենալ վայելուչ ձեւեր, իսկ ինչ պակասէր, պակասէր Դելլօբէլին, այդ չէր պակասի։ Եւ սակայն ամեն անգամ, երբ այդպիսի առաջարկութիւն էին անում, մեծ մարդը պատասխանում էր հերոսական մերժումով.

—Ես իրաւունք չունեմ հրաժարուել Թատրոնից... ասում էր նա։

Այդ անպքանդի բերնում, որ տարիներից ի վեր ոտք չէր դրել բեմի վրայ, սաստիկ ծիծաղելի էր այդ, բայց կարող էր ծիծաղի սիրտ մնալ, երբ մարդ տեսնում էր, թէ ինչպէս նրա կինն ու աղջիկը օր ու գիշեր կուլ էին տալիս մկնդեղի փոշին, երբ մարդ լսում էր, թէ ինչպէս նրանք եռանդուն կերպով կըրկնում էին, կատարելով ասեղները Թոշնիկների արոյրէ թելերի վրայ.

—Ո՛չ, ո՛չ։ Պ. Դելլօբէլը իրաւունք չունի հրաժարուել Թատրոնից։

Երջանիկ մարդ,—միշտ զիջողաբար ժպտուն կոկոն աչքերը և դրամներում թպաւորելու սովորութիւնը ընդ միշտ ստեղծել էին նրա համար՝ երես տուած ու հիացմունքով շրջապատուած աքքայամանուկի մի բացառիկ դիրք։ Երբ նա դուրս էր գալիս տանից, Ֆրան-Բուրժուա փողոցի խանութպանները, իրրև իսկական փարիզեցիներ, որոնք սիրում են ամեն ինչ, որ առընչութիւն ունի Թատրոնի հետ, գլուխ էին տալիս նրան յարգալից կերպով։ Այնքան լաւ էր հագնուած լինում նա միշտ։ Եւ բացի այդ, այնքան բարի էր, այնքան սիրալիր... Եւ արի տես, որ ամեն շաբաթ երեկոյ նա, Ռիւյի Բլասը, Անտօնին, Մարմարէ աղջիկների Ռաֆայելը, Սավանի հեռերի Անդրէն, դուրս էր գալիս տանից մօտիսուհու Թղթէ արկղը կոնատակին և տանում էր կնոջ ու աղջկայ աշխատանքը Սէն-Դենի փողոցի արհեստական ծաղիկների խանութը...

Բայց նոյն իսկ այդպիսի յանձնարարութիւն կատարելիս՝ այնքան ազնուական տեսք ունէր անպիտանը, այնքան բնական վեհութիւն, որ հաշիւը ստուգող գործակատարուհին սաստիկ քաշւում էր վճարել մի այդպիսի անաղարտ ջէնտլմէնի այն չնչին գումարը, որ հանձնելու էր նրան և որ սակայն նրա կնոջ ու աղջկայ ամբողջ շաբաթուայ չարչարանքների վարձն էր։

Ինչ խօսք, որ այդ երեկոները դերասանը ընթրիքին տուն չէր վերադառնում։ Տնեցիք առաջուց գիտէին այդ։ Նա միշտ հանդիպում էր բուլվարում հին ընկերներից մէկին, իր նման մի անաջողութեան զոհի,—այնքան անաջողութեան զոհեր կան այդ սրբազան արհեստում,—որին հրաւիրում էր ճաշարան, սրճարան... Ցեւոյ, ամենայն ճշտութեամբ,—և տնեցիք շատ չնորհակալ էին նրանից դրա համար,—նա տուն էր բերում մնացած փողը, երբեմն էլ հեռը մի փունջ կնոջը, մի փոքրիկ ընծայ Դէզիրէին, մի դատարկ, մի ոչինչ բան։ Ի՞նչ արած։ Թատրոնական սովորութիւններ են այդ։ Ի՞նչ արժի մէլոդրամներում մի բուռը ոսկի չպրտել պատուհանով.

«Է՛յ, հաստապլուխ, առ այս քսակն ու գնա սիրուհուդ ասա, որ սպասում եմ իրան»։

Եւ այդպիսով, չը նայելով իրանց մեծ արիութեանը և բանեցրած արհեստի բաւական չահաւէտութեանը, տիկին Դելլօբէլները յաճախ փողի նեղութիւն էին կրում, մանաւանդ փարիզեան մանրունքի առևտրի մեռած շրջաններում։

Բարեբախտաբար, հեռու չէր բարի Ռիսլէրը, որ միշտ պատրաստ էր օգնել իր բարեկամներին։

Գիլիօմ Ռիսլէրը, երրորդ սրահակից տնուորը, ապրում էր իր Ֆրանց եղբօր հետ, որ մօտ տասնհինգ տարով փոքր էր նրանից։ Այդ բարձրահասակ, չէկ, յաղթանդամ ու կարմրերես չվէյցարացիները գեղջուկ և առողջ դէմքեր էին մտցնում այդ մռայլ աշխատաւոր տան խեղդուկ մթնոլորտի մէջ։ Մեծ եղբայրը գծագրիչ էր Ֆրօմօնների գործարանում, իսկ փոքրը մեծի հաշուով պատրաստւում էր Շապտալի վարժարանում կենտրոնական դպրոցը մտնելու։

Երբ Գիլիօմը նոր էր եկել Փարիզ և չը գիտէր ինչպէս սարքէր իր փոքրիկ ընակարանը, տիկնայք Շէրերը և Դելլօբէլները օգնում էին նրան խորհուրդներ ու տեղեկութիւններ տալով և առհասարակ ցոյց էին տալիս ամեն տեսակ աջակցութիւն, որ անհրաժեշտ էր այդ միամիտ, ամաչկոտ ու մի քիչ ծանրաշարժ խելքի տէր տղային, որ սաստիկ քաշւում էր իր օտարական արտասանութեան ու կերպարանքի պատճառով։ Մի քիչ ժամանակուայ հարևանութիւնից ու փոխադարձ ծառայութիւններից յետոյ, Ռիսլէր եղբայրները այդ երկու ընտանիքների անդամները դարձան։

Տօն օրերին նրանք միշտ ճաշում էին այդ ընտանիքներից մէկում կամ միւսում, և մեծ ուրախութիւն էր այդ երկու պանդուխտների համար ընտանեկան կեանքի ու զորովի մի անկիւն գտնել այդ հարևանների տներում, որքան էլ համեստ ու

խղճուկ լինէր նրանց ապրուստը։ Իր արհեստում չատ վարպետ գծագրիչի ոճիկը թոյլ էր տալիս Գիլիօմին օգնել Դըլօրէյներին սան վարձի պայմանաժամերին և այցելել Շէրերին, իրը մեծ հօրեղբայր, միշտ ծաղրաբանուած սիւրպրիզներով ու ընծանեբով, այնպէս որ փոքրիկ Շէրը նրան տեսնելուն պէս՝ վազում էր մօտը, անտղում դրպանները, թռչում ծնկների վրայ։

Կիրակի օրերը նա բոլորին տանում էր թատրոն և դրեթէ ամեն երեկոյ պ. Շէրի ու Դըլօրէյի հետ գնում էր Բլօնդէլ փողոցում գտնուող մի գարեջրատուն, ուր հիւրասիրում էր նրանց գարեջրով ու աղած պրէտզելներով։ Գարեջուր ու պրէտզել,— այդ նրա թոյլ կողմն էր։

Նրա համար չը կար աւելի մեծ բախտաւորութիւն, քան գարեջրի գաւաթն առաջին նստել այդ երկու բարեկամների արանքին ու ականջ դնել նրանց զրոյցին, կուշտ-կուշտ ծիծաղով ու գլխի թօթուսմով միայն խառնուելով նրանց խօսակցութեան մէջ, որ առհասարակ բաղկացած էր լինում անվերջ արտունջներից հասարակութեան դէմ։

Շնորհիւ իր մանկական ամօթխածութեան և գերմանաբանութիւններին *) որոնցից ժամանակ չէր ունեցել աղատուել իր անընդհատ աշխատանքով լի կեանքում, նա չատ դժուարանում էր մտքերը արտայայտելիս։ Բայի դրանից, այդ երկու բարեկամները պատկառանք էին ազդում նրան։ Նրանք այն ահագին կեղբաղանցութիւնն ունէին նրա համեմատութեամբ, որ ունենում են առհասարակ ոչինչ չանող մարդիկ աշխատաւորների համեմատութեամբ, և պ. Շէրը, նուազ վեհանձն քան Դըլօրէյը, առանց քաշուելու զգալ էր տալիս այդ նրան։ Շատ բարձրից էր վերաբերւում նրան պ. Շէրը։ Նրա աչքում Ռիսլէրի պէս օրը տասս ժամ աշխատող մարդը անընդունակ էր այդքան աշխատանքից յետոյ մի խելքը գլխին կարծիք յայտնել։ Երբեմն գծագրիչը, բոլորովին ջարդուած տուն գալով գործարանից, պատրաստւում էր գիշերը լուսացնել մի որ և է վառ աշխատանքի վրայ։ Պէտք էր տեսնել այն ժամանակ պ. Շէրի վրդովմունքը։

—«Որ քաշուս մէկ ոսկի տային, այդպիսի արհեստով չէի պարապի», ասում էր նա վրդովելով և յետոյ աւելցնում, նայելով ուղիղ Ռիսլէրի երեսին՝ այցելու բժշկի ինքնուիրաբերական հայեացքով. «Ա՛յ, երբ որ կախուածահար կը լինէք...»

Դըլօրէյը այդքան վայրագ չէր, բայց աւելի ևս բարձրից էր վերաբերւում նրան.

*) Ռիսլէրը Շվեյցարիայի գերմանախօս մասից էր։ Ս. Թ.

«Le cèdre ne voit pas une rose à sa base *)»։

Դըլօրէյը չէր տեսնում Ռիսլէրին իր ոտների մօտ։

Երբ, պատահմամբ, այդ մեծ մարդը բարեհաճում էր նկատել նրա ներկայութիւնը, մի առանձին ձև ունէր, որով թեքւում էր դէպի նա ականջ դնելու համար և ժպտում նրա խօսքերին, ինչպէս ժպտում են երեխաների խօսած ժամանակ, կամ թէ զուարճանում էր շլացնելով նրան զանազան պատմութիւններով դերասանուհիների կեանքից և խրատ տալիս, թէ ինչպէս պէտք է իրան պահի, ում մօտից առնի հագուստեղէնը, չը կարողանալով հասկանալ, թէ ինչպէս այդքան փոզ վատակող մի մարդ միշտ հագնուած է լինում տարբերական դպրոցի մի հասարակ վերակացուի նման։ Բարի Ռիսլէրը, համոզուած իր նուաստութեան մէջ, աշխատում էր նրանց ներողամտութեանը արժանանալ անվերջ հաճոյակատարութեամբ, հազար ու մի մանր ծառայութիւններով, պարտաւոր լինելով ամեն կերպ սիրալիր վերաբերուել նրանց, որովհետև—չէ՞ որ—նա էր նրանց մշտական բարերարը։

Այդ երեք սրահակից տների մէջ փոքրիկ Շէրը միացման դիծ էր անց կացնում իր անվերջ երթևեկութեամբ։

Օրուայ ինչ ժամին էլ որ լինէր, նա սպասում էր Դըլօրէյների արհեստանոցը, զուարճանում էր նրանց աշխատանքով, մտիկ էր տալիս ճանճ ու թռչնիկներին և, արդէն աւելի կոքետ քան խաղասէր, եթէ մի ճանճ ճանապարհին կորցրած էր լինում իր թեւերից մէկը կամ մի կոլիբրի՝ իր աղուամազ վզնոցը, նա փորձում էր իսկոյն զարդ չինել իր համար այդ բեկորներից, խրել այդ վառ զոյնը իր նուրբ մազերի խոպոպիկների մէջ։ Դէզիրէն ու մայրը ծիծաղում էին, տեսնելով, թէ ինչպէս նա կոտրտուելով ու խոպտալով ձգւում է ոտների ծայրի վրայ՝ նսեմացած հայելուն հասնելու համար։ Յետոյ, ինքն իր ՝վրայ զմայլելուց կշտացած, երեխան բաց էր անում դուռը իր մատիկների ամբողջ ոյժով և, մազերը խառնուելու ահից, գլուխը ցից բռնած, ծանր-ծանր գնում էր ծեծելու Ռիսլէրների դուռը։

Ցերեկը այնտեղ ոչ ոք չէր լինում բացի դպրոցական Ֆրանցից, որ խելոք նստած պատրաստում էր դասերը, գլուխը քաշ իր գրքերի վրայ։ Բայց հէնց որ Սիդոնին մտնում էր, էլ մնաս բարով պարապմունք։ Պէտք էր ամեն բան թողնել ու ընդունել այդ կոլիբրիազարդ մազերով գեղեցկուհուն, որ, իրը մի իշխանուհի, այցելելու էր նրան Շապտալի դպրոցում, որպէս զի իր համար փնտռտու ուզէր նրան տեսչից։

*) Մայրի ծառը չէ նշմարում վարդը իր ստորոտում։

Շատ տարօրինակ էր, յիրաւի, տեսնել, թէ ինչպէս այդ շատ արագ հասակ առած ահագին տղան խաղում էր այդ ութ տարեկան երեխայի հետ, ինչպէս ինքն էլ փոքր երեխայ էր դառնում նրա քմահաճոյքներին բաւարարութիւն տալու համար, ինչպէս պաշտում էր նրան ու դիջում ամէն բանում, այնպէս որ երբ աւելի ուշ բոլորովին սիրահարուեց նրա վրայ, ոչ ոք չէր կարող ասել, թէ իսկապէս ինչ ժամանակ էր սկսուել այդ։

Ինչքան էլ գուրգուրում էին փոքրիկ Շէրին այդ երկու ընտանիքներում, այնուամենայնիւ գալիս էր միշտ մի բոպէ, երբ նա փախչում էր դէպի վերնագաւթի պատուհանը։ Այդտեղ էր նա դառնում իր ամենամեծ զուարճութիւնը, մի մշտաբաց հորիզոն, կարծես մի ապագայի տեսիլք, որ փոքրիկը դիտում էր հետաքրքրութեամբ, կռացած դէպի նա առանց երկիւղի, որովհետև երեխաները դէպի պատոյտ գալ չունեն։

Դէպի իրար թեքուած հերձաքարէ կտուրների արանքին՝ զորձարանի բարձր պատը, պարտէզի ոսկիների կատարները և ապակեպատ արհեստանոցները երևում էին նրա աչքին իբր մի աւետեաց երկիր, իբր իր երազների աշխարհը։

Այդ Ֆրօմենների տունը հարստութեան վերջին խօսքն էր նրա համար։

Այն տեղը, որ այդ տանը բռնում էր Մարէի ամբողջ այդ անկիւնում, որ որոշ ժամերին կողողուած էր լինում նրա ծխում և մինչև արհեստանոցների ժխորով, Ռիսլէրի յափշտակուած առասպելանման պատմութիւնները Ֆրօմենի կարողութեան, բարութեան ու ճարպիկութեան մասին, հետաքրքրութիւն էին զարթեցրել երեխայի մէջ, և, ինչ որ կարելի էր տեսնել ընդարաւթը, որի առաջ շարած էր պարտէզի կահկարասիքը, սպիտակ արոյրից շինած ու ոսկեզօծ լարերով թռչնավանդակը, որ փայլում էր արևում, լծուած կապոյտ կառքը բակումը,—երեխայի հիացման մշտական առարկաներն էին այդ բոլոր բաները։

Նա գիտէր այդ տան բոլոր սովորութիւնները,—զանգը տալու ժամը, բանուորների եկը, շաբաթ օրերի վարձավճարումը, որի շնորհիւ դանձապահի փոքրիկ լամպը վառ էր մնում այդ օրերը մինչև ուշ երեկոյ, և երկար ու ձիգ ժամերը կիրակիները կէսօրից յետոյ, արհեստանոցները փակ, վառարանը հանգած, չորս կողմը խորին լռութիւն, որի շնորհիւ նրա ականջին էին հասնում պարտէզում խաղացող ու վազվզող Կլէրի ու նրա հօրեղբօր որդու, Ժօրժի ձայները։ Մանրամասնութիւններն էլ Ռիսլէրից էր իմանում։

«Ցոյց տուր ինձ հիւրասենեակի պատուհանները, ասում էր նա նրան... իսկ Կլէրի սենեակը...»։

Ռիսլէրը, հիացած այդ արտասովոր համակրութիւնից դէպի իր սիրելի գործարանը, բացատրում էր վերևից երեխային շէնքերի դասաւորութիւնը, ցոյց էր տալիս նրան տպելու, ոսկեզօծելու, գոյն տալու արհեստանոցները, այն սենեակը, ուր ինքը զբաղուում էր գծագրութեամբ, շոգեշարժ մեքենաների սրահը, որտեղից բարձրանում էր վիթխարի ծխնելոյզը, որ իր եռանդուն ծխով սևացնում էր բոլոր շրջակայ պատերը և չէր կասկածում անչուշտ, թէ դրացի յարկերից մէկի տակ ծածկուած մի փոքրիկ կեանք խառնում է իր ամենանուիրական մտքերը նրա անխոնջ աշխատանքի ուժգին շնչառութեանը։

Մի օր վերջապէս Սիդոնին մուտք գործեց այդ հեռուից նշմարուած դրախտը։

Տիկին Ֆրօմենը, որի մօտ Ռիսլէրը յաճախ խօսում էր իր փոքրիկ հարևանուհու սիրունութեան ու խելօքութեան մասին, խնդրեց նրան բերել փոքրիկին այն պարահանդէսին, որ ինքը պատրաստում էր Ծննդեան տօների համար։ Սկզբում պ. Շէրը մերժեց շատ չոր կերպով։ Արդէն այն ժամանակն էլ այդ Ֆրօմենները, որոնց անունը միշտ Ռիսլէրի բերնումն էր, գրգռում ու ստորացնում էին նրան իրանց հարստութեամբ։ Բացի այդ, պարահանդէսը զգեստաւոր էր լինելու, իսկ պ. Շէրը—որ Ֆրօմենների պէս որմաթուղթ չէր ծախում—միջոցներ չունէր իր աղջկան թռչկոտանի հագուստ հագցնելու։ Բայց Ռիսլէրը շատ պնդեց, յայտնեց, որ իր վրայ է վերցնում ամէն բան ու ձեռայձեռ սկսեց գծագրել մի շվեյցարական զգեստի օրինակ։

Ցիշելիք երեկոյ էր այդ։

Տիկին Շէրի սենեակում, որ լիքն էր զանազան կտորներով, քորոցներով և առհասարակ հագուստեղէնի հաղար ու մի մանր մունր առարկաներով, զուրգում զարդարում էին Սիդոնին՝ Դէզիրէ Դրլօբէլի զեկավարութեամբ։ Պստլիկ Սիդոնին, որ աւելի մեծ էր երևում շվեյցարական հագուստի կարճ շրջազգեստով (իւբկա), ուղիղ ու անշարժ կանգնած էր հայելու առաջ, շողշողալով իր զարդարանքի մէջ։ Աքանչելի էր նա։ Սև-սև շերտերով կարմիր ասուեակէ (ֆլանէլ) շրջազգեստը, սպիտակ կրծկալը ու կրծկալի վրայից իրանքի (կօրսաժ) խաչկապ արած թաւիշէ ժապաւէնները, յարդէ գլխարկի տակից բաց թողած շագանակագոյն մազերի հրաշալի երկար հիւսերն ու առհասարակ շվեյցարուհու հագուստի փոքր ինչ գռեհիկ մանրամասները մի առանձին փայլ էին տալիս շնորհիւ այդ երեխայի խելոցի

կերպարանքին ու նազանի շնորհալիութեանը, որ շատ սաղ
էր այդ թատրոնական պաճուճանքի վառ գոյներին։

Բոլոր հարևանները հաւաքուել էին ու հիանում էին բ
բանաբաց։ Ուղարկեցին պ. Դելօրէլին կանչելու։ Մինչև նրա գա
կաղիկ օրիորդը չիտկում էր փոքրիկի շրջազգեստի ծալքերը
հողաթափների ժապաւէնները և վերջին ակնարկն էր գցում
արածի վրայ, առանց տեղը ձեռքից վայր դնելու, որովհետ
խեղճն էլ կենդանացել էր, յափշտակուած այդ յուզիչ հանդէսի
ուր ինքը չէր գնալու։ Մեծ մարդը եկաւ։ Նա կրկնել տուեց Սի
գոնին առաջուց սովորեցրած երկու-երեք գեղեցիկ ծնրադրոյնն
(ռէվերանս), ինչպէս և քայլելու, դիրք ընդունելու և ժպտալ
ձեր, այնպէս ժպտալու, որ կլորիկ բացուած բերանում ուղ
մի ճկուած դնելու տեղ մնայ։ Շատ ծիծաղելի էր տեսնել, թ
ինչպէս ճշտութեամբ կատարում էր այդ բոլորը փոքրիկը։

—Դերասանուհու արիւն կայ երակներումը... յափշտակուա
ասում էր հին գերասանը, չը կարողանալով հասկանալ, թէ ինչ
այդ ահագին էշ Ֆրանցը քիչ էր մնում լայ...

Այդ երջանիկ երեկոյից մի տարի անցած Սիգոնին ամ
նայն ճշտութեամբ կարող էր ասել՝ ինչ ծաղիկներով էին զա
զարուած Ֆրօմոնների նախասենեակները, ինչ գոյնի էին կ
կարասիները, ինչ պար էին նուագում նրա ներս մտնելու ր
ոլին,—այնքան խոր էր եղել նրա հաճոյքի տպաւորութիւն
Նա ոչինչ չը մոռացաւ, ոչ իր շուրջը պտոյտ-պտոյտ եկող զգեստ
ները, ոչ մանկական ծիծաղները, ոչ նրբատախտակ սօթլ
յատակի վրայ խոպոպացող փոքրիկ քայլերը։ Մի բոպէ, երբ
մեծ կարմրամետաքս բազմոցի պատնէշին նստած, իր առաջ
գանուող մատուցարանից վերցնում էր խմելու առաջին օշարակ
իր կեսնքի մէջ, նա յիշեց յանկարծ իրանց մութ սանդուխքը
օդաղուրկ փոքրիկ բնակարանը, և ընդ միջոցն ուսած հեռաւ
երկրի տպաւորութիւն զգաց։

Այն էլ պէտք է ասել, որ ամենքը հիանում էին և զմայլու
նրա վրայ և չորս կողմից փայփայում նրան։ Սիրունիկ կլ
Ֆրօմոնը, նօրմանդուհու ժանեակապատ զգեստով, ներկայացրի
նրան իր հարեղբօրորդի Ժօրժին, որ հիանալի հուսար էր դարձ
և ամեն քայլափոխում չուռ էր գալիս տեսնելու, թէ ինչ տպ
ւորութիւն է գործում իր գօտուց կախուած պայուսակը։

—Լսիր, Ժօրժ, սա իմ ընկերուհին է... Կիրակի օրը կը գ
մեզ հետ խաղալու... Մայրիկը թոյլ տուեց։

Եւ երջանիկ երեխայի միամիտ սրտաբացութեամբ նա
համբուրեց՝ փոքրիկ Շէրլին ի բոլոր սրտէ։

Սակայն պէտք էր տուն գնալ... Դեռ երկար ժամանակ

մութ փողոցում, ուր հալչում էր ձիւնը, ճրագները հանդցրած
սանդուխի վրայ ու նիրհած սենեակում, ուր սպասում էր նը-
բան մայրը, դահլիճների չողչողուն լոյսը փայլում էր Սիգոնիի
շլացած աչքերի առաջ։

—Հը՞, ինպէս էր, լաւ էր...լաւ ուրախացար, կամաց ձայ-
նով հարցնում էր նրանից տիկին Շէրը, մի առ մի արձակելով
նրա փայլուն զգեստի ճարմանդները։

Եւ Սիգոնին, յոգնութիւնից թմրած, առանց պատասխա-
նելու քնում էր կանգնած տեղը, սկսելով տեսնել մի գեղեցիկ
երազ, որ տևելու էր նրա ամբողջ ջահէլութեան ընթացքում և
որ այնքան արտասուք էր խլելու նրանից։

Կլէր Ֆրօմոնը կատարեց իր խօսքը։ Սիգոնին շուտ-շուտ
գնում էր խաղալու աւազած սիրուն պարտէզում և կարող էր
մօտիկից տեսնել կորտած փայտէ նուրբ պատուհանածածկերը և
ոսկեզօծ լարերով վանդակը։ Նա ծանօթացաւ ահագին գործա-
բանի բոլոր խորշերին ու անկիւններին և շատ կիրակիներ, կէ-
սօրից յետոյ տիրող խաղաղութեան մէջ, տափիկնալուկ էր խա-
ղում տպագրական սեղանների յետևին։ Տօն օրերին նրա համար
միշտ ասան էր դրած լինում մանկական սեղանի վրայ։

Ամենքը սիրում էին նրան, բայց ինքը երբէք առանձին սէր
չէր ցոյց տալիս ոչ ոքի վերաբերմամբ։ Քանի որ այդ փարթամու-
թեան մէջն էր լինում, նա իրան զորովալից էր զգում ու երջանիկ
և կարծես գեղեցկացած, բայց հէնց որ վերադառնում էր տուն
ու սկսում սրահի պատուհանի նեսմ ապակիների միջով նայել
գործարանին, ինչ որ կսկիծ էր զարթնում սրտում, ինչ որ անբ-
ացատրելի զայրոյթ։

Եւ սակայն՝ Կլէր Ֆրօմոնը բոլորովին ընկերաբար էր վե-
բաբերւում նրան։

Երբեմն Ֆրօմոնները իրանց երեսի կապոյտ կառքով նրան
տանում էին զբօսանքի Բուլօնեան անտառը կամ Տիւյլերի, և
կամ դիւզը, մի ամբողջ շաբաթ անց կացնելու Գարդինուա պա-
ալի գեղեակում, Սավինի-սիւր-Օրժում։ Ռիսլէրը շատ հպարտա-
նում էր իր փոքրիկի յաջողութեամբ և նրա տուած ընծաների
շնորհիւ փոքրիկը միշտ հագնուած էր լինում սիրուն ու շնորհ-
քով... Այդ՝ պատուի ինդիր էր տիկին Շէրի համար, իսկ սի-
րուն կաղիկն էլ այնտեղ պատրաստ էր ծառայեցնելու իր բա-
ռեկամուհու օգտին իր բնածին կոքէտութեան բոլոր անշահագործ
մնացած դանձերը։

Գալով պ. Շէրին, որ միշտ թշնամաբար էր վերաբերում
Ֆրօմոններին, նա ծուռ աչքով էր նայում այդ հետզհետէ սաստ-
կացող մտերմութեանը։ Դրա իսկական պատճառն այն էր, որ

իրան չէին հրաւիրում, բայց նա միշտ ուրիշ պատճառներ էր բերում և ասում էր կնոջը.

—Ձեռ տեսնում, ինչ է, որ աղջիկդ այնտեղից վերադառնալուց յետոյ տխուր է լինում ու ժամերով երազում է պատուհանի մօտ կանգնած։

Բայց խեղճ տիկին Շէրը, որ այնքան անբախտ էր ամուսնանալուց ի վեր, աննախատես էր դարձել դրա շնորհիւ։ Նա պնդում էր, թէ ապագայի ահից պէտք է աշխատել օգտուել ներկայից և ձեռքից բաց չը թողնել երջանկութեան վաղանցուկ բողէները, որովհետև մարդս յաճախ ուրիշ ոչ մի նեցուկ ու զիտիանք չէ ունենում իր կեանքում բացի երջանիկ մանկութեան քաղցր յիշատակից։

Այս մէկ անգամին այնպէս դուրս եկաւ, որ պ. Շէրի ասածն էր ճիշդ։

III

Փոքրիկ Շէրի պատմութիւնը։—Կեղծ մարգարիտներ։

Ընդհանուր խաղերի և մտերմութեան երկուսերեք տարիներից յետոյ, որոնց ընթացքում Սիդոնին իւրացրեց հարուստ երեխաների շռայլասիրութիւնը և շնորհալի ձևերը, բարեկամութիւնը յանկարծակի ընդհատուեց։

Ժորժ Ֆրոմոնը, որի խնամակալն էր հօրեղբայրը, վաղուց արդէն լիցէյ էր մտել։ Կլէրն էլ այնուհետև դադարեց դասախօսներից մէկում, տանելով հետը փոքրիկ Թարդուհու բաժինքի չափ մի կապոց, և ուղիղ այդ ժամանակ Շէրերի տանը հարց ծագեց աշակերտութեան ուղարկել Սիդոնին մի որ և է արհեստանոց։ Ընկերուհիները խոստացան միշտ սիրել իրար և տեսնուել ամիսը երկու անգամ, այն կիրակիները, երբ արձակուրդ են տալիս կուսանոցի աշակերտուհիներին։

Եւ իրաւ, փոքրիկ Շէրը մի քանի անգամ էլ վայր իջաւ խաղալու իր բարեկամների հետ, բայց որքան մեծանում էր նա, այնքան աւելի լաւ էր հասկանում իրանց բաժանող տարածութիւնը և իր հաղուստները սկսում էին թուալ նրան չատ հասարակ՝ տիկին Ֆրոմոնի դահլիճի համար։

Երբ նրանք միայն երեքով էին լինում, ոչ մէկը չէր քաշուում միւսից՝ շնորհիւ մանկական բարեկամութեան, որ հաւասար էր դարձնում նրանց. բայց գալիս էին հիւրեր, դասընկերուհիներ և, ի միջի այլոց, մի մեծ, միշտ չքեղ հագնուած աղջիկ, որին իր մօր ապախինը կիրակի օրերը բերում էր խաղալու փոքրիկ Ֆրոմոնների հետ։

Հէնց որ նա երևում էր սանդուխների վրայ դուրսուած ու

արհամարհոտ, Սիդոնին ցանկութիւն էր զգում խսկոյն տուն դընալ։ Այդ աղջիկը նրան վատ դրութեան մէջ էր դնում անչնորհք հարցումներով... Թէ որտեղ էր նա ապրում։ Ի՞նչ գործի էին նրա ծնողները։ Կառք ունէին արդեօք...

Լսելով նրանց խօսակցութիւնները կուսանոցի մասին, իրանց ընկերուհիների մասին, Սիդոնին զգում էր, որ նրանք առանձին աշխարհում են ապրում, հազար մղոն հեռու իր աշխարհից, և մահացու տխրութիւն էր պաշարում նրան, մանաւանդ երբ տուն վերադառնալուց յետոյ՝ մայրը ասում էր, թէ նա պէտք է աշակերտութեան մտնի մի Լը Միր աղգանունով օրիորդի մօտ, որ Դըլօբէնների ծանօթն էր և կեղծ մարգարիտների մեծ խանութ ունէր Ռուա-Դօրէ փողոցում։

Ռիսլէրը չատ պէտք էր կպել այն մտքին, որ փոքրիկը աշակերտութեան մտնի մի արհեստանոց։—«Թող նա մի արհեստ սովորի, ասում էր բարեսիրտ Ռիսլէրը... ես յանձն եմ առնում վերջը մի խանութ գտնել նրա համար»...

Հէնց այդ օրիորդ Լը Միրն էլ ասում էր, թէ մի քանի տարուց յետոյ քաշուելու է գործից։ Ցարմար դէպք էր այդ։

Մի առաւօտ, նոյեմբեր ամսի մի տխուր առաւօտ, հայրը տարաւ Սիդոնիին Ռուա-Դօրէ փողոցը, ուր նրանք բարձրացան իրանց տանիցն էլ հին, իրանց տանիցն էլ խաւար մի տան չորրորդ յարկը։

Ներքևում, սրահանցքի անկիւնում, կախ էին տուած բազմաթիւ ոսկետառ տախտակներ՝ Նեսեսերների գործարան, ոսկեպաս շղթաներ, երեխայական խաղալիքներ, ապակէ ճեսացոյց գործիքներ, փուչիկներ նուռահարների եւ հարսնամոյրերի համար, դաշտային ծաղիկների արհեստաձոց, և ամենավերևում մի փոքրիկ փոշոտած ցուցարան (վիտրին), որի մէջ մարգարտաշար դեղնած վզնոցներ և ապակէ ողկոյզներ ու բալեր շրջապատում էին Անժելինա Լը Միր յաւակնոտ անունը։

Սարսափելի տուն։

Այդտեղ չը կար նոյն իսկ Շէրերի ընդարձակ սրահը, այդ՝ հնութիւնից մռայլ սրահը, որին սակայն զուարթ տեսք էին տալիս իր պատուհանը և գործարանի գեղեցիկ տեսարանը... Նեղ սանդուխներ, նեղ դուռ, փոքրիկ, ցուրտ ու սալայատակ սենեակների մի շարք, և այդ սենեակներից վերջինում մի պառաւ աղջիկ, ճակատի մազերը խոզոզ դրած, սև ցանցաձև կիսաձեռնոցները ձեռքերին, Journal pour tous հանդէսի մի իւղոտած տետր կարդալիս և, ըստ երևոյթին, սաստիկ սրտնեղուած, որ կարդալու ժամանակ խանգարեցին իրան։

Օրիորդ Լը Միրը (կարճ ասած) ընդունեց պ. Շէրին ու

աղջկան առանց տեղիցը վեր կենալու և երկար ու բարակ խօսակց իր կորցրած դիրքի մասին, իր հօր մասին, որ Ռուէրգի մի հին ազնուական էր եղել,—էլ ասել չի լինի, թէ որքան հին ազնուականներ է արդէն արտադրել այդ Ռուէրգը,—և իրանց անհաւասարիմ կառավարչի մասին, որ թողել էր նրանց ամբողջ կարողութիւնը։ Նա խսկոյն մեծ համակրութիւն ազդեց պ. Շէբին, որի համար անդիմադրելի հրապոյր ունէին դասաղուրկները, և խեղճ մարդը հեռացաւ հիացած, խոստանալով Սիդոնիին գալ նրա յետեից երեկոյեան ժամի եօթին, ինչպէս պայմանաւորուել էին օրիորդի հետ։

Օրիորդ Լը Միրը աշակերտուհուն խսկոյն տարաւ արհեստանոցը, որ դեռ դատարկ էր, և նստեցրեց մի մեծ արկղի առաջ, որ լի էր մարգարիտներով, ասեղներով, հերիւններով ու նրանց հետ խառն չորս սուանոց վիպական գրքոյկներով։

Սիդոնին պէտք է ջոկէր մարգարիտները ու, թելի վրայ անցկացնելով, հաւասար երկարութեան վզնոցներ պատրաստէր, որ յետոյ պէտք է իրար կապէին՝ մանրավաճառներին ծախելու համար։ Ասենք, աղջկերքը որտեղ որ է գալու էին, նրանք ցոյց կը տային ճիշտ կերպով, թէ ինչ է անելու նա, որովհետև օրիորդ Լը Միրը (կարճ ասած) ոչ մի բանի չէր խառնուում և հսկում էր իր առևտրական գործին շատ հեռուից, իր մութ սենեակի խորքից, ուր նա անց էր կացնում կեանքը Ֆէլիէտօն—վէպեր կարդալով։

Ժամի ինների բանուորուհիներն եկան,—հինգ մեծ, գունատ ու թառամած աղջիկներ, ողորմելի հագուստով, բայց մաղերը լաւ սարքած, Փարիզի փողոցներով գլխաբաց մանելու եկող աղքատ բանուորուհիների յատակութեամբ։

Երկու-երեքը յօրանջում էին ու աչքերը արորում, ասելով, որ ոսի վրայ չեն կարողանում կանգնել քունները տանելուց։ Ո՞վ գիտէ, ինչպէս էին անցկացրել դրանք այդ գիշերը...

Վերջապէս նստեցին գործի՝ մի երկար սեղանի առաջ, ուր ամէն մէկը ունէր իր արկղը, իր գործիքները։ Մի քիչ առաջ սուգի զուգեղէնի պատուէր էին ստացել, պէտք էր չուապել։ Սիդոնին, որին գլխաւոր բանուորուհին անհուն գերազանցութեան արտայայտութեամբ ցոյց էր տուել անելիքը, սկսեց մանրամասնօրէն ջոկջոկել ահագին քանակութեամբ սև ուլունքներ, սև հաղարջի հատիկներ, սևաւոր հասկեր։

Միւսները, առանց փոքրիկի վրայ ուշք դարձնելու, բանում էին ու զրոյց անում իրանց մէջ։ Խօսում էին մի փառաւոր զսակի մասին, որ տեղի էր ունենալու նոյն օրը Սէն-Ժէռմէյնում։

—Զը գնանք տեսնելու, ասաց մէջներից մի հաստատիկը,

չիկակարմիր մազերով և Մալվինա անունով... Կէսօրին է լինելու... Ժամանակ կ'ունենանք գնալու և շուտով վերադառնալու։

Եւ յիրաւի, նախաճաշի ժամին բոլորը միասին թռչկոտելով իջան ներքև սանդուխներից։

Սիդոնին, որ, դպրոցական աշակերտուհիների նման, նախաճաշը բերել էր հետը մի զամբիւղի մէջ, լցուած սրտով նախաճաշեց սեղանի մի անկիւնում, առաջին անգամը իր կեանքում հաց ուտելով մենակ... Տէր Աստուած, որքան ողորմելի ու տխուր էր թուում նրան կեանքը և ինչ սարսափելի վրէժ էր հանելու նա յետոյ այդ տխրութիւնների համար...

Ժամի մէկին բանուորուհիները վերադարձան աղմկալից ու սաստիկ աչխուժացած։

«Տեսաք այն զգեստը սպիտակ գրօ-գրէնից... Իսկ քօղը անգլիական ժանեակից... Բախտ եմ ասել էէ»։

Ու արհեստանոցում նրանք վերսկսեցին այն նկատողութիւնները, որ ցած ձայնով արել էին եկեղեցում, ամբողջ ծէսի ընթացքում կոները դէմ տուած վանդակին։ Այդ փարթամ հարստանքի ու սիրուն զուգեների հարցը ամբողջ օրը տեւեց, և այդ չէր խանգարում նրանց աչխատանքին, այլ ընդհակառակը նպաստում էր։

Այդ փարիզեան մանր արհեստները, որոնք հագուստեղէնի ամենամանր պարագաներն են պատրաստում, հմուտ են դարձնում բանուորուհիներին մօդայի հարցերում և նրանց ուշք ու միտքը չարունակ կենտրոնացնում են չքեղութեան և զողտրիկութեան վրայ։ Օրիորդ Լը Միրի՝ չորրորդ յարկի փոքրիկ բընակարանում աչխատող այդ աղքատ աղջիկների համար գոյութիւն չունէին սեւացած պատերը ու նեղ փողոցը։ Նրանց միտքը չարունակ ուրիշ բանով էր զբաղուած, և նրանք անց էին կացնում իրանց կեանքը այսպիսի հարցեր տալով իրար.

—Ասա տեսնենք, Մալվինա, ինչ կ'անէիր, եթէ հարուստ լինէիր... Ես կ'ապրէի Champs—Élisées-ում...» Եւ այնտեղի կլոր հրապարակի ահագին ծառերը և դանդաղ ու կոքէտաբար պտոյտ տուող կառքերը անցնում էին նրանց երևակայութեան առաջ իբր մի բոպէական տեսիլք, քաղցր ու սփոփիչ։

Իր անկիւնում նստած, փոքրիկ Շէբը ականջ էր դնում, առանց ձայն հանելու, և, զգուշութեամբ շարելով ուլունքները, սև խաղողի ողկոյզներ էր պատրաստում, Դէգիրէի հարևանութեան չնորհիւ ձեռք բերած վաղաժամ ճարտարութեամբ ու ճաշակով։ Այնպէս որ երբ պ. Շէբը երեկոյեան եկաւ նրա յետեից, շատ մեծ գովասանքներ լսեց նրա մասին։

Այնուհետև, Սիդոնիի բոլոր օրերը նման էին միմեանց։

Միւս օրը սեի փոխանակ սպիտակ ուլունքներ էր շարում ու կեղծ բուստի կարմիր հատիկներ, որովհետև օրիորդ Լը Միրի մօտ կեղծ ու զիզի պիզի բաներ վրայ էին միայն բանում, և հէնց այդտեղ էր վարժուելու փոքրիկ Շէրը կենաքի արհեստի մէջ։

Մի ժամանակ, նոր աշակերտուհին, որ միւսներից ջահել էր ու աւելի լաւ կրթուած, կղզիացած դիրք ունէր նրանց շրջանում։ Յետոյ, մեծանալով, նա էլ մասնակից դարձաւ նրանց մտերմական շրջանին, նրանց գաղանիքներին, առանց սակայն երբէք ընկերանալու նրանց՝ զուարճութիւնների մէջ։ Նա շատ հպարտ էր, որպէսզի կէսօրին գնար նայելու հարսանիքներին, և միշտ սաստիկ արհամարհանքով էր լսում, երբ պատմում էին մի որ և է գիշերային պարահանդէսի մասին Waux—Hall-ում կամ Délices du Marais-ում, մի որ և է ընտիր ընթրիքի մասին Բօնվալէի մօտ կամ Quatre Sergents de la Rochelle-ում։

Մեր աչքը աւելի բարձր բանի վրայ էր, այնպէս չէ՞, փոքրիկ Շէր։

Բացի այդ, հայրը ամէն երեկոյ գալիս էր նրան տանելու։ Սակայն, նոր տարուայ մօտերքը նա ստիպուած էր լինում մի քանի գիշեր լուսացնել միւս բանուորուհիների հետ, վաղ պատուէրները վերջացնելու համար։ Մարդուս խեղճը գալիս էր, տեսնելով, թէ ինչպէս այդ գունաթափ փարիզուհիները դաղի լոյսով ջոկջոկում էին իրանց պէս դաճային ու հիւանդոտ սպիտակութիւն ունեցող մարգարիտներ։ Նոյն կեղծ փայլը, նոյն գիւրաբեկութիւնը, ինչ որ իրանց պատրաստած կեղծ զուգսեղէնի մէջ։ Խօսածները միմիայն գիմակահանդէսներից էր ու թատրոններից։

—Տեսել ես Ադէլ Պաժին Երեք Հրացանակիրներում... Իսկ Մէլէնգին։ Մարի Լօռանին... Ախ, Մարի Լօռան...

Դերասանների բաճկոններ ու մելօդրամների թագուհիների զգեստներ էին տեսնում նրանք իրանց մատների արանքով դարձող վէնոցների սպիտակ ցոլքի մէջ։

Սմառը գործը այնքան շատ չէր լինում։ Մեռած տարեմաչքերին, երբ ծածկած վանդակափեղկերի յետևից լսում էին փողոցային սալորավաճառների աղաղակները, բանուորուհիները ծանր քնում էին, գլուխները դրած սեղանին։ Կամ թէ Մալրից Journal pour tous հանդէսի մի գրքոյկ, բերում ու բարձրաձայն կարդում էր միւսների համար։

Բայց փոքրիկ Շէրը վէպեր չէր սիրում։ Նա իր գլխումը

մի այնպիսի վէպ ունէր, որի առաջ ոչինչ էին Journal pour tous-ի բոլոր վէպերը։

Գործարանը նրա մտքիցը երբէք դուրս չէր գալիս։ Առաւօտեան, երբ տանից դուրս էր գալիս հօր կուռն ընկած, նա միշտ մի հայեացք էր գցում այն կողմը։ Այդ ժամանակ գործարանը զարթնում էր, ծխնելոյզը ժայթքում էր վերև իր սև ծխի առաջին յորձանքը։ Անցնելիս, Սիրօնին լսում էր բանուորների աղաղակները, տպագրական գործիքների ուժգին ու խուլ հարուածները, մեքենաների հզօր ու չափածոյ շունչը, և աշխատանքի այդ բոլոր աղմուկները, խառնուելով նրա յիշողութեան մէջ տօնախմբութիւնների ու կապոյտ կառքերի հետ, հանդիստ չէին տալիս նրան ոչ մի վայրկեան։

Նրանց ձայնը աւելի բարձր էր հնչում նրա ականջին, քան հանրակառքերի դղրդոցը, փողոցային աղաղակներն ու առուների ջրվէժները, և նոյն իսկ արհեստանոցում, կեղծ մարգարիտներ ջոկջոկելիս, կամ երեկոյեան իրանց տանը, երբ ճաչից յետոյ գնում էր մի քիչ օդ ծծելու սրահի պատուհանից կամ գիշերը նայելու մարած ու ամայի գործարանին, այդ եռանդուն աղմուկը շարունակ հնչում էր նրա ականջներում, մի տեսակ մրշտական նուագակցութիւն կազմելով նրա մտածմունքներին։

—Փոքրիկի սիրտը նեղանում է, տիկին Շէր... Պէտք է մի քիչ ուրախացնել նրան... Այս կիրակի բոլորիդ տանում եմ գիւղը։

Այդ կիրակնօրեայ զբօսանքները, որ բարեսիրտ Ռիսլէրը սարքում էր Սիրօնիի սիրտը բաց անելու համար, ընդհակառակը աւելի ևս տխրութիւն էին բերում նրա վրայ։

Այդ օրերը պէտք էր վեր կենալ առաւօտեան ժամի չորսին, որովհետև չքաւորները գին են վճարում իրանց բոլոր զուարճութիւնների համար,—միշտ մի լաթի կտոր էին ունենում վերջին բոպէին արդուկելու կամ մի զարդեղէն կարելու, փորձելով նորացնել Սիրօնիի անմաշելի սպիտակաչերտ ու կարմրակապոյտ փոքրիկ զգեստը, որ տիկին Շէրը խղճմտօրէն երկարացնում էր իւրաքանչիւր տարի։

Գնում էին զբօսնելու բոլորը միասին, Շէրերը, Ռիսլէրները ու հռչակաւոր Դելօրէլը։ Միմիայն Դէգիրէն ու իր մայրը չէին ընկերանում նրանց։ Խեղճ հաշմանդամը, քաշուելով իր պակասութիւնից, չէր ուզում երբէք շարժուել իր բազկաթոռից, մայրը էլ մնում էր տանը նրան մենակ չը թողնելու համար։ Բացի այդ, ոչ մէկը ոչ միւսը այնքան վայելուչ հագուստ չունէին, որ կարողանային դուրսը երևալ իրանց մեծ մարդու կողքին, իսկ

եթէ իրանց ունեցածովը դուրս գային, կը փչացնէին նրա արտաքինի գործած ամբողջ ապաւորութիւնը։

Ճանապարհ ընկնելիս, Սիդոնին զուարթանում էր մի փոքր։ Փարիզը՝ յուլիսեան առաւօտի վարդագոյն մշուշում, երկաթուղու կայարանները՝ լի բացգոյն զգեստներով, վագոնների պատուհանների առաջ հեռադիտակ սիրուող դաշտերը, այնուհետև շարժումը բաց օդում,—Սէնայի ջուրը ծծած, անտառից զուարթութիւն ստացած և ծաղկազարդ մարգագետինների ու հասկ քցած ցորենի բուրմունքով լի մաքուր օդում,—այդ բոլորը նրան չմեցնում էր մի բոպէ։ Բայց տաղտկութիւնը չուտով սիրում էր նրան չնորհիւ այդ կիրակիների տափակ միանմանութեան։

Մի և նոյնն էր միշտ։

Կանգ էին առնում մի որ և է փոքրիկ պանդոկի առաջ, մի աղմկալից ու բազմամարդ գիւղական տօնահանդէսի կողքին, որովհետև անպատճառ հասարակութիւն էր պէտք Դըլօբէլին, որ մեն էր գալիս, օրօրուելով իր երաշանքներից, մոխրագոյն հագուստով, մոխրագոյն անապատներով, փոքրիկ գլխարկը թեք դրած, բացգոյն վերարկուն թեկն զցած, երևակայելով, թէ ընկեր ներկայացնում է Փարիզի չրջակայքի մի գիւղ ու ինքը խաղում է ամարանոց գնացած մի փարիզեցու դեր։

Ինչ վերաբերում է պ. Շէրին, որ պարծենում էր, թէ ինքը սիրում է բնութիւնը այնպէս, ինչպէս հանգուցեալ Ժան-Ժակը Ռուսսոն, նա բնութիւն ասելով հասկանում էր միայն ժողովրդական տօն՝ նշանառութեան խաղով, փայտէ ձիերով, ոտներին տոպրակ անցկացրած վազողների մրցութեամբ, փառաւոր փոչիով և անթիւ շուխիներով,—որ տիկին Շէրի համար էլ գիւղական կեանքի իդէալն էր ներկայացնում։

Բոլորովին ուրիշ էր Սիդոնիի իդէալը, և գիւղերի փողոցներում աղմկալից քաշտրուող այդ փարիզեան կիրակիները անսահման տիրութիւն էին պատճառում նրան։ Միակ զուարճութիւնը նրա համար այդ ժխորի մէջ այն էր, որ զգար, թէ նայում են իր վրայ։ Բաւական էր, որ գունեղիկի մէկը իր թեկուզ ամենայնմար հիացմունքը արտայայտէր նրա կողքին բարձրաձայն և միամտաբար, որպէսզի ամբողջ օրը ժպիտը չը գնար նրա երեսից, որովհետև նա այն տեսակ կանանցից էր, որոնք չեն արհամարհում ոչ մի գովասանք։

Երբեմն Շէրերին ու Դըլօբէլին տօնահանդէսում թողնելով, Ռիսլէրը գնում էր դաշտը իր եղբօր ու «փոքրիկի» հետ ծաղիկներ փնտրելու իր որմնաթղթերի նաչխի տիպարի համար։ Ֆրանցը իր երկայն ձեռքերով կռացնում էր սրափչի բարձր

ճիւղերը կամ սողոսկում էր մի որ և է ծառաստանի պարիսպն ի վեր քաշելու միւս կողմից երևացող մի թեթև սաղարթ։ Բայց ամենալաւ հունձը նրանք անում էին ջրերի ափին։

Այնտեղ կային այն երկայն ու կոր ցօղունների ճկուն բոյսերից, որոնք այնքան սիրուն ապաւորութիւն են գործում պատերի պատատուների վրայ,—երկար ու չիփ-չիտակ եղէգներ և պատատուկներ, որոց ծաղիկը, յանկարծ բացուելով քամածին նաչխերով, թւում է մի կենդանի էակ, մի մարդ, որ նայում է ձեզ սաղարթի սիրուն անորոշութեան մէջից։ Ռիսլէրը համախմբում էր իր փունջերը, դասաւորում էր նրանց գեղարուեստական սաղանդով, ներչնչուելով հէնց բոյսերի բնութեամբ և աչխատելով լաւ ըմբռնել նրանց կենդանի յատկութիւնները, որոնք անըմբռնելի են այլոց, երբ թէկուզ թառամութեան մի օր է անցել նրանց վրայից։

Յետոյ, երբ ծաղկաքաղը պրծնում էին, կոթերը ժապաւէնի տեղ կապում էին մի որ և է լայն խոտով և ահագին փունջը դնում էին ֆրանցի չալակին ու ճանապարհ ընկնում։ Միչտ ըզբաղուած իր արուեստով, Ռիսլէրը յետ գնալիս չարունակ նաչխերի նիւթեր ու խմբակցութիւններ էր փնտրում.

—Տես, փոքրիկս... եթէ այս մայիսածաղիկի չիզը իր ըստիտակ բոժոմներով դնենք այս մասրենիների երեսին... Հը՞, ինչ ես կարծում... սիրուն չէր լինի կանաչաւուն ջրի կամ գորչ բրդի գոյնով տեղի վրայ։

Բայց Սիդոնին ոչ մայիսածաղիկն էր սիրում, ոչ մասրավարդը։ Դաչտային ծաղիկները չքաւորների ծաղիկ էին թւում նրան, նոյն ճաչակի մի բան, ինչպէս իր կարմրակապոյտ ըզգեստը։

Նա յիչում էր, որ բոլորովին ուրիշ տեսակ ծաղիկներ էր տեսել պ. Գարդինուայի՝ Սավինի-սիւր-Օրժի դղեակում, ջերմոցներում, վանդակապատների վրայ և ամբողջ աւազած ու մեծ ծաղկասափորներով չրջապատուած բակի չորս կողմը։

Ահա նրա սիրած ծաղիկները, ահա թէ ինչպէս էր նա հասկանում գիւղական բնութիւնը։

Այդ Սավինի յիչատակները նրա միտքն էին գալիս ամեն քայլափոխում։ Երբ նրանք անցնում էին մի որ և է մեծ պարտէզի վանդակի առաջով, նա կանգ էր առնում, նայում էր ուղիղ ու հարթ ծառուղիին, որ անչուչտ տանում էր դէպի գաւիթը... Խոչոր ծառերի կանոնաւոր տաւերներով ծածկուած սիզամարգերը և ջրափեայ խաղաղ դարաստանները ուրիշ դարաստաններ և ուրիշ սիզամարգեր էին յիչեցնում նրան։ Ճոխութեան այդ տեսիլքները, յիչողութիւնների հետ միացած, ա-

ելի ևս մայլացնում էին նրա կիրակին։ Բայց ամենասրտա-
մաշը նրա համար վերադարձն էր։

Ինչ սարսափելի նեղուածք ու խեղդուածք է լինում այդ
երեկոները Փարիզի շրջակայքի փոքրիկ կայարաններում։ Ինչ
չինծու հրճուանքներ, ախմար ծիծաղներ, նուաղուն երգեր խըռ-
պոտ ձայնով, որի մէջ միայն ուռնալու ոյժ է մնացել... Հէնց այդ
ժամանակն էր, որ պ. Շէրը իր տարերքի մէջ էր զգում իրան։

Նա կարող էր սրան նրան հրհրել տոմսակ առնելիս, զայ-
բոյթը յայտնել գնացքի ուշանալու պատճառով, յարձակուել
կայարանապետի, երկաթուղու ընկերութեան, կառավարութեան
վրայ ու ասել Դելօբէլին այնպէս բարձրաձայն, որ հարևանները
անպատճառ լսեն.

—Հը՞... իսկ եթէ այսպիսի մի բան պատահէր Ամերիկայ-
ում...», որ, չնորհիւ հռչակաւոր դերասանի արտայայտիչ մի-
միկային ու այն դերազանց ձևին, որով նա պատասխանում էր՝
«Էլ ինչ ասել կ'ուզի», կարծել էր տալիս շրջապատողներին, որ
այդ պարոնները հաստատ գիտեն, թէ ինչ կը պատահէր Ամե-
րիկայում այդպիսի դէպքում։ Ինչ խօսք, որ ոչ մէկը, ոչ միւսը
ոչինչ չը գիտէին այդ բանի մասին, բայց այդ նրանց բարձ-
բացնում էր ամբոխի աչքում։

Ֆրանցի կողքին նստած, վնջի կէսը ծնկներին, Սիդոնին
կորած մոլորածի նման էր այդ աղմուկի մէջ, երկար սպասելով
երեկոյեան գնացքին։ Մի հատիկ լամպով լուսաւորուած կայա-
բանից նա տեսնում էր դրսում սուսերալից թաւուտները,
թափանցուած տեղ-տեղ ուծնահանդէսի լուսավառութեան վեր-
ջին շողքերից, մի խաւար գիւղական փողոց, դէպի կայարանը
եկող մարդիկ և ամայի ջրափում վառուող մի լապտեր։

Երբեմն-երբեմն ապակեպատ դռների այն կողմում, առանց
կանգ առնելու անցնում էր մի գնացք, բոցավառ ածխիկներ
ժայթքելով և գոլորշու հեղեղներ բաց թողնելով։ Այն ժամա-
նակ կայարանում ոստապովիչների և աղաղակների փոթորիկ
էր բարձրանում, որի վրայ սաւառնում էր զիլ սօպրանոն պ.
Շէրի, որ իր թռչնային ձայնով ճչում էր՝ «Զարդեցէք դռները»...
Մի բան, որ այդ փոքրիկ մարդը երբէք ինքը չէր անել, որով-
հետև լեղին պատում էր ժանդարմներից։ Մի բոպէ անցած
զգուած մաղերով, ենթում էին նստարանների վրայ։ Երևում էին
ճիշտուած զգեստներ, պատռուած իրեղէններ և բացօթիք
սպիտակ հագուստներ, փոշու մէջ կորած։

Ենչածները հէնց գլխաւորապէս փոշի էր։

Նա ներքև էր թափուում բոլոր հագուստներից, վեր էր

բարձրանում ամեն մի քայլից, մթնացնում էր լամպի լոյսը,
կուրացնում էր մարդուս աչքերը և ամպի պէս կանգնում ջար-
դուած մարդկանց գլխավերևում։ Երբ սպասողութեան ձիգ ժա-
մերից յետոյ վերջապէս նստում էին վագոնները, նրանք էլ թա-
թախուած էին լինում փոշու մէջ... Սիդոնին բանում էր պատու-
հանը և նայում դրսը խաւար դաշտերին, ստուերի անվերջ
գծին։ Յետոյ, քաղաքային ամբոխների մօտ, անթիւ ասա-
ղների պէս, երևան էին գալիս արտաքին բուլվարների առաջին
լապտերները։

Այդ բոպէից վերջանում էր այդ բոլոր խեղճ մարդկանց
հանգստութեան սարսափելի օրը։ Փարիզի տեսքը ամենքի միտ-
քին էր քցում միւս օրուայ անելիք աշխատանքը։ Ինչքան էլ
ախուր էր անցել կիրակին, այնուամենայնիւ Սիդոնին սկսում
էր ափսոսալ նրան։ Նա մտածում էր հարուստների մասին, ո-
րանց համար կեանքի ամեն մի օրը հանգստութեան օր է, և
անորոշ կերպով, ինչպէս երազի մէջ, պատկերանում էին նրա
աչքին այդ օրուայ ընթացքում թուղթիկ կերպով նշմարած
պարաէզների երկար ծառուղիները, լի աշխարհիս այդ բախ-
տաւորներով, որոնք դրօսնում են նուրբ աւազի վրայ, մինչ-
դեռ այնտեղ, ներքևում, վանդակապատի այն կողմը, ճանապար-
հի փոշու մէջ մեծ մեծ քայլերով անցնում է աղքատների կիրա-
կին, հազիւ ժամանակ ունենալով մի բոպէ կանգ առնել նայ-
ելու և նախանձելու համար։

Այդպէս անցաւ Սիդոնիի կեանքը տասներեքից մինչև
տասնեօթ տարեկան հասակը։

Տարիները յաջորդում էին միմեանց առանց ամենաչնչին
փոփոխութիւն բերելու իրանց հետ։ Տիկին Շէրի շալը մի քիչ
աւելի էր մաշուել, փոքրիկ կարմրակապոյտ զգեստը էլի մի
քանի անգամ նորոգութեան էր ենթարկուել, և ուրիշ ոչինչ։
Միայն թէ, Սիդոնիի մեծանալովը, Ֆրանցը, որ արդէն ջահել
տղամարդ էր դարձել, սկսել էր լուռ ու գորովալից հայեացք-
ներ քցել նրա վրայ ու սիրային ուշադրութիւններ ցոյց տալ,
ակնյայտնի ամենքի համար և աննկատ միմիայն օրիորդի կողմից։

Ասենք ոչ մի բան չէր հետաքրքրում այդ փոքրիկ Շէրին։

Արհեստանոցում նա կատարում էր իր անելիքը կանոնա-
ւոր կերպով ու լուռ, առանց ամենևին մտածելու ապագայի և
ապահով կեանքի մասին։ Ինչ որ տեսնում էր, այնպէս էր դուրս
գալիս՝ կարծես սպասողական դրութեան մէջ լիներ։

Ֆրանցը, ընդհակառակը, մի ժամանակից ի վեր աշխատում
էր առանձին եռանդով, իրանց ջահելների վերջում մի որոշ
նպատակ տեսնող մարդկանց յատկութեամբ, այնպէս որ

քանչորս տարեկան հասակում նա աւարտեց կենտրոնական դպրոցը ինժէնէրի աստիճանով, իբր երկրորդ աշակերտ։

Այդ օրը Ռեալէրը Շէրերի ընտանիքը տարաւ Gymnase թատրոնը, և ամբողջ երեկոն տիկին Շէրն ու նա գլխով ու աչքով հաղար ու մի նշաններ էին անում իրար, նստած ջահերի յետեւին։ Վերջն էլ, թատրոնից դուրս գալիս, տիկին Շէրը հանդիսաւոր կերպով դրեց Սիդոնիի կուրը Ֆրանցի կռան տակ, կարծես ասելով սիրահարին՝ «Այժմ, սիրոնիդ բաց ա՝ ինքդ... Ձեր գործն է այդ...»

Եւ խեղճ սիրահարը փորձեց սիրտը բանալ։

Ճանապարհը երկար է Gymnase-ից մինչև Մարէ։ Մի քանի քայլ արած, բուլվարների պայծառութիւնը նսեմանում է, մայթերը քանի գնում աւելի ու աւելի մթնում են, անցուդարձ անողների թիւը քչանում է։ Ֆրանցը սկզբում խօսք բաց արեց իրանց տեսած պիէսի մասին... Նա շատ սիրում էր այնպիսի պիէսներ, որոնց մէջ զգացմունք կայ։

—Իսկ դուք, Սիդոնի։

—Ախ, ես. դուք գիտէք Ֆրանց, որ ինձ համար մի և նոյնն է, միայն թէ լաւ զգեստներ լինեն։

Եւ յիրաւի թատրոնում ոչ մի ուրիշ բան չէր զբաղեցնում նրան։ Նա այն սանտիմէնտալ կանանցից չէր, Բօվարիի նման, որոնք ներկայացումից վերադառնում են սերտած ու պատրաստ սիրային դարձուածքներով և պատշաճականութեան իդէալով։ Ոչ։ Թատրոնը միմիայն զեղխութեան և դողրիկութեան մոլեգին սենչ էր զարթեցնում նրա մէջ. նա այնտեղից ոչինչ չէր դուրս բերում բացի մաղերի սանրուածքի տիպարներից և զգեստների ձեւերից... Դերասանուհիների նորաձեւ ու չափազանցեցրած հագուստները, նրանց քայլուածքը, նոյն իսկ նրանց չինծու աշխարհիկ արտասանութիւնը, որ նրա աչքում ամենաբարձր ազնուականութեան նշան էր, ոսկեզօծանքի և ճրագների գոհեկաճուչակ փայլը, փողփողուն յայտարարութիւնը դռան մօտ, շար ընկած կառքերը և այն ամբողջ, մի փոքր անառողջ, աղմուկը, որ տեղի է ունենում ժողովրդականութիւն ստացած պիէսի շուրջը,—ահա նրա սիրածը, նրան յափշտակողը։

Սիրահարը շարունակեց.

—Ի՞նչքան լաւ խաղացին սիրոյ տեսարանը։

Ու այդ «սիրոյ» խօսքը արտասանելիս նա խանդաղատօրէն թեքուեց դէպի Սիդոնիի փոքրիկ սիրուն գլուխը, որ փաթաթուած էր սպիտակ բրդէ գլխանոցի մէջ, որի կողքերից դուրս էին գրծել մաղերի խուճուճները։

Սիդոնին հառաչեց.

—Ախ, այո, սիրոյ տեսարանը... Շատ սիրուն ազամանդներ ունէր դերասանուհին։

Մի բոպէ լռութիւն տիրեց։ Խեղճ Ֆրանցը սաստիկ չարչարանքի մէջ էր. վնտրած խօսքերը միտքը չէին գալիս, յետոյ էլ վախն էր բռնում։ Սէրը բացատրելու համար սահմաններ էր դնում ինքն իրան։

—Երբ որ Սէն-Դընի քաղաքագուռը անցնենք... Երբ որ բուլվարից դուրս գանք։

Բայց այդ տեղերում Սիդոնին սկսում էր խօսել այն ասուլճան անտարբեր բաների մասին, որ սիրոյ բացատրութիւնը պառում մնում էր նրա շրթունքների վրայ, կամ թէ նրանց կանգնեցնում էր մի որ և է կառք և ծնողները այդ ժամանակ հասնում էին նրանց։

Վերջապէս, Մարէում, նա յանկարծ սիրտ արեց.

—Լսեցէք, Սիդոնի... Ես սիրում եմ ձեզ...

Այդ գիշեր Դելօբէլների տանը շատ ուշ պառկեցին քնելու։

Այդ ժրաջան կանայք սովորութիւն ունէին, որքան կարելի է, երկարացնել իրանց աշխատաւոր օրը և այնքան երկար էին նստում, որ նրանց լամպը ամենից ուշ հանգչողներիցն էր Բրաքի խաղաղ փողոցում։ Նրանք չէին պառկում քնելու մինչև որ գալիս էր իրանց մեծ մարդը, որի համար վառարանի մոխիրի մէջ տաք պահում էին մի թեթև, կազդուրիչ ընթրիք։

Այն ժամանակները, երբ նա դեռ խաղում էր, միաք ունէր այդ բանը,—դերասանները, որոնք առհասարակ ստիպուած են վաղ ճաշել և շատ թեթև կերպով, սաստիկ քաղցած են լինում թատրոնից դուրս գալիս և ընթրիք են անում տուն վերադառնալուց յետոյ։ Դելօբէլը վաղուց արդէն այլևս չէր խաղում, բայց իրաւունք չունենալով, ինչպէս ինքն ասում էր, հրաժարուել թատրոնից, նա պահպանում էր իր մանիան դերասանական հաղար ու մի սովորութիւններով, որոնց թուին էին պատկանում գիշերուայ ընթրիքը և այն, որ նա ամեն օր տուն էր վերադառնում միայն այն ժամանակ, երբ հանգցնում էին բուլվարների բոլոր թատրոնների վերջին ճրագները։ Քնել առանց ընթրիքի և սովորական ժամին, երբ ամենքը պառկում են քնելու, կը նշանակէր զինաթափ լինել, հրաժարուել մաքառումից։ Իսկ նա, հասկանում էք, չէր ուզում հրաժարուել...

Այն գիշերը, որի մասին խօսում ենք, դերասանը դեռ չէր վերադարձել, և մայր ու աղջիկ սպասում էին նրան, մի կողմից աշխատելով, մի կողմից էլ սաստիկ տաք-տաք զրոյց անելով, չը նայած, որ շատ ուշ էր։ Ամբողջ երեկոն մի գլուխ Ֆը-

բանցի մասին էին խօսել, նրա աշխատանքի մասին, նրա առաջ բացուող ապագայի մասին։

—Հիմա նրան մնում է միայն մի լաւ, սիրուն կնիկ գտնել։

Դէգիրէն էլ այդ կարծիքին էր։ Ֆրանցի բախտաւորութեանը միայն այդ էր պակասում,—մի լաւ, սիրուն կնիկ, արի, եռանդուն, աշխատանքի սովոր և անձնուէր։ Եւ եթէ Դէգիրէն այդքան հաստատ կերպով էր խօսում այդ հարցի մասին, այդ նրանից էր, որ նա շատ մօտիկից էր ճանաչում այն հարստացուին, որ այնքան համապատասխան էր Ֆրանց Ռիսլէրին... Այդ հարստացուն մի տարով էր միայն փոքր Ֆրանցից, ուղիղ այնքանով, որքան պէտք էր, որպէս զի նա ջահել լինէր իր ամուսնուց և մի և նոյն ժամանակ մօր տեղը բռնէր նրա համար։

...Գեղեցիկ էր...

Իսկապէս ոչ, բայց աւելի սիրուն էր, քան գէշ, չը նայելով իր պակասաւորութեանը, որովհետև կաղ էր խեղճ աղջիկը... Եւ յետոյ, խելք, ուրախ ու սիրառատ։ Ոչ ոք բացի Դէգիրէից չը գիտէր, թէ ինչ ատիճան այդ աղջիկը սիրում էր Ֆրանցին և ինչպէս տարիներից ի վեր օր ու գիշեր միայն նրա վրայ էր մտածում։ Ֆրանցը ինքը չէր նկատում այդ բանը և կարծես Աստուծուց աչքեր էր ստացել միայն Սիդոնիի պէս լակոտին տեսնելու համար։ Բայց ոչինչ։ Լռակեաց սէրը շատ պերճախօս է. շատ մեծ ոյժ է թաղուած լինում զսպուած զգացմունքների մէջ... Ի՞նչ կարելի է իմանալ։ Գուցէ մի օրից մի օր...

Եւ խեղճ կաղիկը, կռացած իր աշխատանքի վրայ, վերացաւ ցնորքների աշխարհը, ակռելով այն մեծ ճանապարհորդութիւններից մէկը, որ նա այնքան յաճախ կատարում էր նստած իր հաշմանդամի բազկաթոռում ու ոտները դէմ տուած անշարժ աթոռակին,—այն հնաշխարհիկ ճանապարհորդութիւններից մէկը, որոնցից նա վերադառնում էր միշտ երջանիկ ու ժպտուն, կոթնած Ֆրանցի թևին սիրելի կնոջ յատուկ վստահութեամբ։ Նրա մատները հետևում էին նրա սրտի իզձերին և այն թրուշնիկը, որ այդ բոպէին ձեռքին բռնած՝ շիակում էր ճմլուած վիտուրները, նոյնպէս ճանապարհորդի կերպարանք ունէր, նոյնպէս կարծէք թռչելու էր հեռու, հեռու, ուրախ ու թեթև, ինչպէս նա։

Դուռը յանկարծ բացուեց։

—Հօ չեմ խանդարում ձեզ, ասաց մի ցնծալից ձայն։

Մայրը, որ մի քիչ նղղել էր, գլուխը թափով բարձրացրեց։

—Ախ, պարոն Ֆրանցն է... Մտէք, մտէք, պարոն Ֆրանց...

Ինչպէս տեսնում էք, հայրիկին ենք սպասում... Այդ տնաւոր գերասանները շատ ուշ են տուն վերադառնում... Նստեցէք... ընթրիք կ'անէք հետը...

—Չէ, շնորհակալ եմ, պատասխանեց Ֆրանցը, որի շրթունքները դեռ գունատ էին մի քանի բոպէ առաջ կրած յուզմունքից,—շնորհակալ եմ, ես չեմ մնալու... Տեսայ, որ լոյս կայ ձեզ մօտ և մտայ միայն ձեզ ասելու... ձեզ յայտնելու մի մեծ նորութիւն, որ ձեզ շատ կ'ուրախացնի, որովհետև գիտեմ, որ ինձ սիրում էք...

—Ի՞նչ նորութիւն, Տէր Աստուած։

—Ամուսնութեան խոստում պ. Ֆրանց Ռիսլէրի և օրիորդ Սիդոնիի մէջ...

—Տեսար, ես որ ասում էի, թէ պ. Ֆրանցին միայն մի լաւ, սիրուն կնիկ է պակաս, բացականչեց տիկին Դելլօրէլը տեղիցը վեր թռչելով ու նրա վզովը փաթաթուելով։

Դէգիրէի բերանը չը զօրեց մի խօսք անգամ ասել։ Նա աւելի ևս կռացաւ իր աշխատանքի վրայ, և որովհետև Ֆրանցը ոչինչ չէր նշմարում բացի իր երջանկութիւնից, իսկ տիկին Դելլօրէլն էլ աչքը անկել էր պատի ժամացոյցին, որպէս զի տեսնէր, թէ արդեօք շո՞ւտ է գալու իր մեծ մարդը, ոչ ոք չը նկատեց կաղիկ օրիորդի յուզմունքն ու գունատութիւնը, ոչ էլ այն, թէ ինչպէս ջղաձգաբար դողդողում էր նրա ձեռքի թռչնիկը՝ անշարժ մի գիրքի մէջ և գլուխը քաշ քցած, մահացու վէրք ստացածի պէս։

IV

Փոքրիկ Շեբի պատմութիւնը։—Սավինիի լուսատցիկները։

«Սավինի-սիւր-Օրժ»

«Երէկ մենք ճաշի էինք նստած քո տեսած մեծ սեղանատանը, դռները լայն բաց արած ծաղկափթիթ պատշգամբների կողմը։ Սիրտս մի քիչ տխուր էր։ Հայրիկի տրամադրութիւնը վատ էր ամբողջ առաւօտ, և մայրիկը չէր համարձակում մի խօսք ասել, վախենալով հայրիկի խոժոռած յօնքերից, որոնք միշտ օրէնք են եղել նրա համար։ Մտածեցի, թէ ախտոս որ մենք-մենակ եմ ամառուայ գեղեցիկ եղանակին, այս սիրուն երկրում, և թէ որքան բախտաւոր կը լինէի այժմ, երբ, կուսանոցից դուրս գալով, պէտք է տարուայ ամբողջ եղանակներ անց կացնեմ գիւղում, եթէ առաջուայ պէս մօտս ունենայի մէկին, որ վազվզէր հետս անտառում և մեր ծառուղիներում։

«Ժորժը գալիս է երբեմն-երբեմն, բայց միշտ շատ ուշ ճաշի ժամանակ, հետևեալ օրն էլ, ես դեռ չը զարթնած, վերադառնում է հօրս հետ։ Բացի այդ, լուրջ մարդ է դարձել այժմ մեր պարոն Ժորժը։ Աշխատում է գործարանում, և գործերի հոգսը յանախ նրա ճակատին էլ է կնճիռներ բերում։

«... Միաք անելով այդտեղն էի հասել, երբ յանկարծ սիրելի հայրիկը դառնում է իմ կողմը.

—«Ո՞ւր մնաց քո Սիդոնին. ես շատ ուրախ կը լինէի, եթէ նա դար, մի քիչ մեզ մօտ մնար։

«Կարող ես երևակայել, թէ ինչքան բախտաւոր զգացի ինձ։ Ո՞րքան ուրախութիւն կը լինի նորից հանդիպել իրար և վերանորոգել մեր բարեկամութիւնը, որի ընդհատման մէջ աւելի կեանքի հանգամանքներն են մեղաւոր, քան մենք ինքներս։ Ո՞րքան բան կայ իրար պատմելու։ Դու էիր միայն մեր մէջ կարողանում ցրուել այս մեր սարսափելի պապի կնճիռները, և անշուշտ դու հեռդ ուրախութիւն կը բերես այստեղ, ուրախութիւն, որին, հաւատա ինձ, մեծ կարիք ունենք մենք։

«Եթէ իմանայիր, որքան տխրի է այս հրաշալի Սավինին։ Առաւօտները երբեմն կօրէտութիւն է գալիս վրա։ Հագնւում եմ, կոկւում եմ, և սիրուն հագուստով ու խուճուճ դրած մազերով սկսում եմ զբօսնել բոլոր ծառուղիներով. մէկ էլ յանկարծ նկատում եմ, որ թափած ջանքս եղել է միմիայն կարապների, բադերի, իմ շանս՝ Կիսի և մէկ էլ մարդագետնում արածող կովերի համար։ Որոնք նոյն իսկ շուռ էլ չեն գալիս իմ անցնելու ժամանակ։ Այդ որ զգում եմ, ջիգրս գալիս է, իսկոյն յետ եմ դառնում, քաթանէ շոր եմ հագնում, սկսում եմ զբաղուել ազարակում, մառանում, մի քիչ այստեղ, մի քիչ այնտեղ։ Եւ, խնչը, սկսում եմ կարծել, թէ ձանձրութեան չնորհիւ աւելի լաւ մարդ եմ դարձել և որ ինձնից հիանալի տնարար կին դուրս կը գայ...

«Բարեբախտաբար, շուտով սկսուելու է որսի շրջանը և ես յոյս ունեմ մի քիչ զուարճանալ այդ ժամանակ։ Ամենից առաջ։ Ժորժն ու հայրիկը, որոնք երկուսն էլ թունդ որսորդներ են, կը սկսեն աւելի յանախ գալ այստեղ։ Յետոյ, դու էլ այստեղ կը լինես... Որովհետև դու իսկոյն և եթ կը պատասխանես, որ կը դաս, այնպէս չէ։ Պ. Ռիսլէրն ասում էր վերջերս, թէ դու հիւանդ էիր։ Սավինի օդը շատ լաւ կ'ազդի վրադ։

«Այստեղ ամենքը սպասում են քեզ։ Իսկ ես հօ քիչ է մընում մեռնեմ անհամբերութիւնից։

«Կլէր»

Գրելուց յետոյ, Կլէր Ֆրօմենը դրեց մեծ յարդէ գլխարկը, որովհետև այդ օդտոսի առաջին օրերը տաք էին ու պայծառ, և ինքը տարաւ նեղքն՝ քցելու փոքրիկ արկղը, որի միջից սուրհանդակը, ամեն առաւօտ անցնելիս, վերցնում էր դղեակի նամակները։

Ծառաստանի ծայրումն էր այդ, ճանապարհի մի անկիւնում։ Նա կանգ առաւ մի բոպէ նայելու ճանապարհի ծառերին և շրջակայ թմրած ու արևալից մարդագետիններին։ Ահա այնտեղ հնձուորները կրում էին վերջին խուրձերը։ Մի քիչ հեռու վար էին անում։ Բայց լուռ աշխատանքի այդ մելամաղձութիւնը դոյութիւն չունէր Կլէրի համար, որ ցնծում էր իր բարեկամուհուն տեսնելու յոյսից։

Ոչ մի շունչ չը բարձրացաւ հորիզոնի բարձր բլուրներից, ոչ մի ձայն չը հնչեց ծառերի կատարներից, որ զգուշացներ նրան մի նախազգացումով ու չը թողներ ուղտրկի այդ ճակատագրական նամակը։ Եւ նա, իսկոյն տուն վերադառնալով, դրաղուեց պատրաստել տալով Սիդոնիի համար մի սիրուն սենեակ իր սենեակի կողքին։

Նամակը ճչտութեամբ գնաց իր ճանապարհով։ Դղեակի՝ քաղցուենիներով ու այծտերևներով շրջապատուած կանաչ դոնակից նա ճանապարհ ընկաւ դէպի Փարիզ և նոյն երեկոյ հասաւ Բրաք վոլոցի տան հինգերորդ յարկը՝ Սավինիի դրոշմը վրան և տոգորուած գիւղական բուրմունքով։

Ի՞նչ նշանաւոր դէպք եղաւ այդ։ Նամակը երեք անգամ կարդացուեց և մինչև Սիդոնիի ճանապարհ ընկնելը, մի ամբողջ շաբաթ, մնաց բուխարիի վրայ տիկին Շեբի մասունքների, գնդաւոր ժամացոյցի և empire դաւաթների կողքին։ Սիդոնիի համար դա մի տեսակ չնաչխարհիկ վէպ էր, լի պատնէշներով ու խոստումներով, որ նա կարդում էր առանց բաց անելու, հէնց միայն նայելով սպիտակ ծրարին, որի վրայ դուրս պրծած երևում էին Կլէր Ֆրօմենի անուան ու ազգանուան փակագիր սկզբնատառերը։

Էլ ի՞նչ խօսք կարող էր լինել այժմ պատկուելու մասին։ Էական հարցը այն էր, թէ ինչ շոր պէտք է հագնէր նա դղեակը գնալիս։ Պէտք էր զրաղուել դրանով, ձևել, յարմարացնել, չափել հագուստը, փորձել մազերի սարքը... Խեղճ Ֆրանց։ Որքան տիրեցնում էին նրա սիրտը այդ պատրաստութիւնները։ Սիդոնիի Սավինի գնալը, որին նա ազարդիւն կերպով փորձեց հակառակուել, պէտք է էլի յետաձգէր նրանց պատկը, որ—խեղճը չը գիտէր ինչու—Սիդոնին ամեն օր ձգձգում էր մի քիչ։ Ինքը չէր կարողանալու գնալ նրան տեսնելու, իսկ նա Սավինիում

պէտք է շրջապատուած լինէր տօնախմբութիւններով ու զուարճութիւններով և ով կարող էր ասել, թէ որքան ժամանակ կը մնար այնտեղ...

Միշտ սիկին Դելօբէլների մօտ էր գալիս յուսահատ սիրահարը բանալու իր սրտի վիշտը, առանց երբէք նկատելու, թէ ինչպէս նրա ներս մտնելուն պէս Դէզիրէն աշխուժով վեր էր կենում, նրան իր կողքին տեղ տալու համար աշխատանքի սեղանի մօտ, և ինչպէս յետոյ նստում էր, կարմրատակած երեսով և փայլուն աչքերով։

Մի քանի օրից ի վեր մայր ու աղջիկ այլևս մօդային ճաճեեր ու բուշնիկներ չէին պատրաստում։ Նրանք խուծապում էին վարդագոյն փուչփուչներ Սիդոնիի զգեստի համար, և դեռ երբէք կաղիկ օրիորդը կար չէր արել այդքան սիրով։

Չէ՞ որ Դելօբէլի աղջիկն էր Դէզիրէն։

Իր հօրից նա ժառանգել էր պատրանքներին հեշտութեամբ անձնատուր լինելու և մինչև վերջը ու ինչ էլ լինի յուսալու յատկութիւնը։

Մինչ Ֆրանցը պատմում էր նրան իր սիրոյ մորմոքները, Դէզիրէն մտածում էր ինքն իրան, թէ երբ Սիդոնին գնայ, նա այդպէս ամեն օր կը դայ, թէկուզ հէնց բացակայ սիրելիի մասին խօսելու համար, թէ նա միշտ իր կողքին կը լինի, թէ նրանք միասին կը սպասեն գիշերները «հայրիկին» և թէ, դուցէ, մի երեկոյ, իրան նայելիս, նա կը նկատի, թէ ինչ տարբերութիւն կայ այն կնոջ մէջ, որ մէկին սիրում է, և այն կնոջ մէջ, որ թոյլ է տալիս, որ մէկը իրան սիրի։

Եւ այն միտքը, թէ ամեն մի մկդաված կտոր մօտեցնում էր այդ անհամբեր սպասուող ուղևորութիւնը, արտասովոր հանգ էր տալիս նրա տանջին, և խեղճ Ֆրանցը սարսափում էր, տեսնելով, թէ ինչպէս փուչփուչներն ու փոթուփութները նկատելի արագութեամբ կուտակւում էին Դէզիրէի շուրջը, փոքրիկ ալիքների նման։

Երբ վարդագոյն զգեստը կարեցին պրծան, օրիորդ Շէրը ճանապարհ ընկաւ դէպի Սավինի։

Պ. Գարդինուայի դղեակը չինուած էր Օրժի հովիտում, այդ փոքրիկ գետի ափին, որ այնքան քմահաճօրէն գեղեցիկ է իր ջրաղացներով, իր կղզիներով, իր ջրարգելներով և ծառաստանի ընդարձակ սիզամարգերով, որոնք գալիս ձգւում են նրա ափերի ամբողջ երկարութեամբ։

Տունը,—մի հին տուն Լուի XV-ի ոճով, չէնքերը ցածիկ ու միայն տանիքները շատ բարձր,—սաստիկ մելամաղձիկ տպաւորութիւն էր գործում և մի առանձին արիստոկրատական

հնութեան տեսք ունէր,—լայն պատշգամբներ, ժանգոտած երկաթի վանդակներ, անձրևից մաշուած հին ծաղկասափորներ, որոնց գորշ քարի վրայ սաստիկ աչքի էին ընկնում գոյնզգոյն ծաղիկները։ Որքան մարդուս աչքը կտրում էր, երևում էին թեք ու հնամաշ պարիսպներ, որոնք մի թեթև զառիվայրով իջնում էին մինչև գետափը։ Դղեակը ցոյց էր տալիս նրանցից բարձր իր հերձաքարէ մեծ տանիքները, ագարակը՝ իր կարմիր կղմինտրները և հրաշալի ծառաստանը՝ իր լօրիները, հացիները, կաղամախները և շագանակենիները, որոնք, խառնուելով իրար, կազմում էին մի ստուերախիտ շերտ, կարուած տեղ-տեղ ծառուղիների կամարներով։

Բայց այդ հին կալուածքի գրաւչելիքը իսկապէս ջուրն էր, ջուրը, որ կենդանութիւն էր մտցնում նրա խաղաղութեան մէջ և հանդիսաւորութիւն էր տալիս նրա տեսարաններին։ Սավինիում, բացի գետակից, կային աղբիւրներ, շատրուաններ ու լճակներ, որոնց մէջ արևը մայր էր մտնում իր ամբողջ փառահեղութեամբ, և այդ բոլորը շատ սազում էր այդ՝ ջրափի քարի նման մի քիչ մաշուած, կանաչած ու մամռոտած հինաւուրց տանը։

Դժբախտաբար, Սավինիում, ինչպէս առհասարակ այն հրաշալի ամարային ապարանքների մեծամասնութեան մէջ, որոնց տիրացել են Փարիզի առևտրի և սպեկուլացիայի նորելուկները, դղեակի տերերը ամենևին սազ չէին գալիս դղեակին։

Իր դղեակը առնելու օրից, ծեր Գարդինուան նրանով էր միայն զբաղուած, որ քանդում էր այն բոլորը, ինչ որ պատահմամբ իր ձեռքն էր ընկել այդպէս գեղեցիկ,—ծառերը կոտրում էր «տեսարան բանալու համար», անթիւ այլանդակ պատնէշներ էր շինում աւազակների դէմ, ամբողջ հոդսը քցած մի հիանալի բանջարանոցի վրայ, որ, մեծ քանակութեամբ պտուղներ ու կանաչեղէն տալով, նրա աչքում կալուածքի միւս բոլոր մասերից աւելի նմանութիւն ունէր հողային սեփականութեան, իսկական գիւղացու սեփականութեան։

Ինչ վերաբերում է ընդարձակ դահլիճներին, որոնց նկարազարդ պանօները ժժդունանում էին աշնանային մշուշներից, կամ հարնամասներով լցուած լճակներին և խճաչէն քարանձաւներին ու կամուրջներին, նա ձեռք չէր տալիս նրանց, որովհետև նրանք շարժում էին այցելուների զարմանքը և, բացի դրանից, այդ բոլորից էր բաղկանում այն ամբողջութիւնը, որ այնքան շոյում էր այդ նախկին արջառավաճառի մտաւորութիւնը և որ կոչւում էր—դղեակ։

Այդէն ծեր լինելով ու չը կարողանալով ոչ որսորդու-

թեամբ պարապել, ոչ ձկնորսութեամբ, նա անց էր կացնում ժամանակը հսկելով այդ ահագին կալուածքի ամենաչնչին մանրամասնութիւնների վրայ։ Հաւերին առած կու

աչքերով, իր առողջ դատողութեամբ, և նրանով, որ չէր նմանում իր հլու և կամազուրկ մօրը։

—Սա էլ իր հօր նման հպարտ ու օտարոտի է լինելու, ասում էր Գարդինուան վատ տրամադրութեան միջոցին։

Որքան աւելի էր դուր գալիս նրան փոքրիկ Շէրը, որ ժամանակ առ ժամանակ գալիս էր խաղալու Սավինի ծառուղիներում։ Նրա մէջ նա գտնէ զգում էր իր բնաւորութեան նման մի գեղեցիկ բնաւորութիւն, փառասիրութեան և նախանձի սաղմով, որ արդէն այն ժամանակն էլ արտայայտւում էր բերանի անկիւնի առանձնատեսակ թեթև ժպիտով։ Բացի դրանից, այդ աղջիկը միամիտ զարմանք ու հիացմունք էր յայտնում միշտ նրա հարստութիւնից, որոնք չոյում էին այդ նորելուկի ինքնասիրութիւնը, և երբեմն երբեմն, երբ ծերուկը ընկնում էր հետը, փոքրիկը պատասխանելու համար գտնում էր Փարիզի երեխաներին յատուկ ծիծաղաշարժ խօսքեր և արուարձաններում գործածուող դարձուածքներ, որոնց առանձին համ էր տալիս նրա սիրունիկ բարակ ու գունատ դնչիկը, որ, միաժամանակ և գեղեցկական էր և զողտրիկ։ Հասկանալի է, որ ծերուկը չէր մոռանալ նրան։

Մանաւանդ այս անգամ, երբ երկար բացակայութիւնից յետոյ, Սիզոնին եկաւ Սավինի իր փարթամ մազերով, իր սիրուն իրանով, իր կայտառ ու շարժուն դէմքով և այդ բոլորը չքեղացրած՝ խանութի գործակատարուհու փոքր ինչ չինծու շնորհալութեամբ,—նա մեծ յաջողութիւն ունեցաւ այնտեղ։ Ծեր Գարդինուան, սաստիկ զարմացած, որ մեծ աղջիկ էր տեսնում իր սպասած երեխայի տեղ, աւելի ևս սիրուն գտաւ նրան և մանաւանդ շատ աւելի լաւ հագնուած, քան կլէրը։

Ճիշտն ասած, երբ երկաթուղուց յետոյ Գարդինուայի մեծ կառքը նստած՝ օրիորդ Շէրը գալիս էր դղեակ, բաւական լաւ կերպարանք ունէր, միայն թէ նրան պակասում էր այն, որ նրա բարեկամուհու գեղեցկութիւնն ու հրապոյրն էր կազմում, բնականութիւնը, վեհութիւնը, արհամարհանքը դէպի չինծու գիրքերը և մանաւանդ հոգու անդորրութիւնը։ Սիզոնիի սիրունութիւնը մի քիչ նման էր իր շորերին, որոնք էժանագին թեթև կտորներ էին, բայց ձևուած օրուայ ճաշակով, եթէ կ'ուզէք փալասի կտորտանք, բայց այնպիսի փալասի, որին մօդա կոչուող անհեթեթ ու զողտրիկ յաւէրժահարան է տուել ձևը, զարդը և շնորհը։ Այդ տեսակ շորերի համար Փարիզն ունի յատուկ սիրունիկ դէմքեր, որոնց շատ հեշտ է սազացնել մի հագուստ, սանրուածքի մի ձև, հէնց այն պատճառով, որ նրանք տիպ չունեն, և օրիորդ Շէրը այդ սիրունիկ դէմքերից մէկն էր։

Ինչ հրճուանք զգաց նա, երբ կառքը մտաւ Թաւշանման սէզով ծածկուած և դարաւոր կնձնիներով եզերուած շաւիղը, որի ծայրում սպասում էր Նրան Սավինին, վանդակի դուռը լայն բացած։ Այդ օրից սկսուեց նրա համար այն գիւթական կեանքը, որ նա երազում էր այնքան ժամանակ։ Ճոխութիւնը հանդէս էր գալիս նրա առաջ իր բոլոր ձևերով, սկսած դահլիճների հոյակապութիւնից, սենեակների ահագին բարձրութիւնից և ջերմոցի ու ախոռատան փարթամութիւններից, մինչև ամենաչնչին մանրամասնութիւնները, ինչպէս օրինակ, սրփոռոցը ծածկող ծաղկազամբիւղները, ծառաների խօսելու սառը եղանակը և տիկին Ֆրօմոնի տխուր ու տաղտկաձայն «կառքը լծեցէք»-ը, որոնց մէջ կարծէք խտացած էր ճոխութիւնը, այն անուշահոտութիւնների նման, որոնց մի կաթիլը բաւական է բուրմունք տարածելու ամբողջ սենեակի մէջ...

Եւ որքան լաւ էր զգում նա իրան հարուստներին յատուկ այդ նրբութիւնների մէջ։ Ինչ ասոիճան սազում էր նրան այդ կեանքը։ Նրան թւում էր, թէ ինքը երբէք չէ էլ ապրել ուրիշ պայմաններում։

Ցանկարծ, այդ հոգեզմայլ վիճակում, Ֆրանցից մի նամակ եկաւ, որ յիշեցրեց նրան իրականութիւնը, իր ապագան՝ ուսիկով ծառայողի կնոջ դիրքում և այն գծուծ բնակարանները, որոնցից մէկը նա պէտք է անպատճառ վարձէր մի օր ամենաբարձր յարկում մի որ և է խղճուկ տան, որի օդը, թշուառութեամբ տոգորուած ծանր օդը, նրան թւում էր, թէ ծծում է արդէն։

Հրաժարուել ամուսնանալուց։

Այդ ի հարկէ նա կարող էր անել, որովհետև ոչ մի գրաւական չէր տուել բացի խօսքից։ Բայց այդ փեսացուն ձեռքիցը որ գնար, ով գիտէ, յետոյ այնպէս չէր լինի, որ ինքը նրան ափսոսէր։

Այդ՝ փառասիրութիւնից գժուած գլխում ամենատարօրինակ մտքեր էին ժաժ գալիս։ Երբեմն, երբ Գարդինուա պալիկը, որ նրա պատուին այլևս չէր հագնում իր որսորդական հին բաճկոնները և բրդէ ժիլէտները, կատակ էր անում հետը ու կամաւորակաճառում նրան, որպէս զի մի որ և է անհամեստ պատասխան դուրս քաշի բերնից, նա խոր խոր նայում էր ծերուկի աչքերի մէջ առանց պատասխանելու և սառը կերպով յառած աչքերով։ Ախ, եթէ գտնէ տասը տարով ջահել լինէր այդ ծերուկը... Բայց տիկին Գարդինուա դառնալու միտքը երկար չը զբաղեցրեց նրան։ Մի նոր անձնաւորութիւն հանդէս եկաւ նրա շուրջը, մի նոր յոյս ծագեց նրա սրտում։

Սիդոնիի գալուց յետոյ Ժորժ Ֆրոմոնը, որին առաջ միմիայն կիրակի օրերն էին տեսնում Սալլինիում, սովորութիւն էր արել ճաշելու գալ գրեթէ ամեն օր։

Մի բարձրահասակ երիտասարդ էր նա, քնքշակազմ, գունատ և հնարհալի։ Հօրից ու մօրից որբ և հօրեղբօր ձեռքի տակ մեծացած, նա հօրեղբօր ժառանգն էր լինելու առատի մէջ և հատնեականօրէն նաև Կլէրի ամուսինը։ Այդ արդէն պատրաստ ապագային շատ սառն էր վերաբերուում նա։ Նախ և առաջ, առատը տաղակայնում էր նրան։ Ինչ վերաբերում է Կլէրին, նրանց մէջ, գոնէ Ժորժի կողմից, ոչինչ չը կար բացի միասին դաստիարակուելուց առաջ եկած պարզասիրտ մտերմութիւնից և սովորական դարձած սրտակցութիւնից։

Իսկ Սիդոնիի ներկայութեամբ նա, ընդհակառակը, հէնց սկզբի րոպէից քաշւում ու ամաչում էր և մի և նոյն ժամանակ ցանկանում էր տպաւորութիւն գործել և առհասարակ բոլորովին փոխուած էր զգում իրան։ Այդ աղջիկը ունէր իսկ և իսկ այն կեղծ և փոքր ինչ անվայել կանանց յատուկ սիրունութիւնը, որ պէտք է անպատճառ դուր գար այդ ֆատին, և շատ չանցած Սիդոնին նկատեց, որ ինքը տպաւորութիւն է գործում նրա վրայ։

Երբ երկու ընկերուհիները զբօսնում էին ծառաստանի խորքում, միշտ Սիդոնին էր յիշում Ֆարիզի գնալու ժամը։ Նրանք երկուսով գնում էին վանդակապատի մօտ սպասելու եկողներին, և Ժորժը իր առաջին հայեացքը միշտ ուղղում էր Սիդոնիին, որ իր ընկերուհուց մի քիչ յետ էր կանգնած լինում, բայց աչքի խիստ գիրքով ու կերպարանքով։ Այդ խաղը նրանց մէջ տեղ բաւական ժամանակ։ Սիրոյ մասին խօսք չէր լինում մէջները, բայց իրար ասած բոլոր խօսքերը, իրար ուղղած բոլոր ժպիտները լի էին սիրոյ խոստովանութեամբ և ծածկախօսութեամբ։

Մի ամպամած ու ցօթ ամարային երեկոյ Կլէրն ու Սիդոնին, ճաշից վեր կենալուն պէս, գնացին զբօսնելու նշդարիների երկար ծառուղիում։ Մի քիչ յետոյ նրանց միացաւ և Ժորժը։ Երեքն էլ խօսում էին անտարբեր կերպով, ճանապարհելով խճաքարերը ծոյլաքայլ ոտների տակին, երբ յանկարծ տիկին Ֆրոմոնը կանչեց Կլէրին դղեակը։ Ժորժը և Սիդոնին մնացին մենակ և շարունակեցին դէպի առաջ իրանց զբօսանքը, առաջնորդուելով աւագի աղօտ ապիտակութեամբ, առանց խօսելու և առանց մօտենալու միմեանց։

Նշդարիների շարքը շարժւում էր գալ քամուց։ Լճակի յուզուած ջուրը ծեծում էր ալիքներովը փոքրիկ կամուրջի կամարները, և ակացիաներն ու լորիները, որոնց պոկուած տերևները պտոյտ պտոյտ էին գալիս քամու յորձանքում, բուրմունք էին սփռում էլեքտրականացած օդում... Նրանք զգում էին իրանց մրրկի սարսռալից ու թափանցող մթնոլորտում։ Նրանց շաղուած աչքերի խորքում բոցավառւում էին երկարաձիգ փայլակներ, նման այն փայլակներին, որոնք այդ բոլէին լուսաւորում էին հորիզոնի եզերքը...

—Ահ, ինչ հիանալի լուսատանիկներ են... ասաց Սիդոնին, որին նեղում էր այդ լուութիւնը՝ թափանցուած դանդաղ խորհրդաւոր ձայներով։

Սիդամարգի եզերքում կանաչ ու թրթռուն կայծեր լուսաւորում էին խոտերի շիւղերը։ Սիդոնին կռացաւ վերցնելու նրանցից մէկը իր ձեռնոցի վրայ։ Ժորժը եկաւ չոքեց նրա կողքին, և նրանք, գլուխները քաշ քցած մինչև խոտը ու քսուելով միմեանց մազ մազի և երես երեսի, մի բոպէ նայեցին իրար լուսատանիկների տարածած լոյսով։ Որքան տարօրինակ և հրաշալի թուաց Սիդոնին Ժորժին այդ կանաչ ցոլքի մէջ, որ, բարձրանալով մինչև նրա կռացած դէմքը, լուսաւոր մշուշ էր կազմում նրա դանդաղ մազերի նրբաթել ցանցում... Ժորժը, որ կուռը քցել էր նրա մէջքովը, յանկարծ զգաց, որ նա անձնատուր է լինում, և սղմեց նրան իր կրծքին երկար ու մոլեգին։

—Այդ ինչ էք տնտղում, հարցրեց Կլէրը, կանգնած ստուերում նրանց յետևին։

Այլայլուած, կոկորդը սեղմուած, Ժորժը այնպէս սաստիկ դողում էր, որ չը կարողացաւ պատասխան տալ։ Սիդոնին, ընդհակառակը, վեր կացաւ տեղից ամենամեծ հանգստութեամբ և ասաց, ուղղելով շրջազգեստը.

—Լուսատանիկներ են... Տես, որքան կան այս երեկոյ... Եւ ինչպէս պոպզում են։

Նրա աչքերն էլ պոպզում էին օտարոտի փայլով։

—Մրրիկ է լինելու անշուշտ... մրմնջաց Ժորժը, դեռ դողդողալով ոտից մինչև գլուխ։

Եւ իրաւ, մրրիկը մօտենում էր։ Երբեմն երբեմն տերևների և փոշու անդին յորձանքներ սլանում էին ծառուղու մի ծայրից միւսը։ Նրանք էլի մի քիչ անցան և յետոյ յետ դարձան դահլիճը։ Աղջիկները վերցրեցին իրանց ձեռագործը, իսկ Ժորժը փոքրիկ կարչալ մի լրագիր, մինչ տիկին Ֆրոմոնը պլպլացնում էր իր մատանիները ու պ. Գարդինուսն փնտայի հետ բիլիարդ էր խաղում կողքի սենեակում։

Ինչ երկար թուաց Սիդոնիին այդ երեկոն, երբ նա մի

ցանկութիւն ունէր միայն,—մենակ մնալ ու ազատ անձնատուր լինել իր մտքերին։

Բայց ինչ ցնծութիւն, ինչ ծրագիրներ, երբ նա, վերջապէս միայնակ իր փոքր սենեակի խաղաղութեան մէջ, հանդցրեց ճրագը, որ խրտնեցնում է երազները, չափազանց պայծառ լուսաւորելով իրականութիւնը։ Ժորժը սիրում էր նրան, Ժորժ Ֆրոմմենը, գործարանի ժառանգը... Նրանք կը պսակուեն, նա հարուստ կին կը լինի... Որովհետև այդ փոքրիկ ծախու հոգու մէջ սիրոյ առաջին համբոյրը կարողացել էր զարթեցնել միմիայն մենաւոր ու չոայլասէր մտքեր։

Հաստատ համոզուելու համար, թէ Ժորժը անկեղծ սիրահարուած է, նա աշխատում էր մտաբերել իրանց սիրային տեսարանի ամենափոքր մանրամասնութիւնները,—Ժորժի աչքերի արտայայտութիւնը, գրկախառնութեան սաստկութիւնը, և լուսատնիկների մշուշաձև լոյսի մէջ բերան առ բերան թոթոված երդումները, որ բոպէի հանդիսաւորութիւնը ընդ միշտ դրոշմել էր նրա սրտում։

Ա՜խ, Սավինի լուսատնիկներ։

Ամբողջ գիշերը նրանք աստղերի նման կայծին էին տալիս նրա փակ աչքերի առաջ։ Ծառաստանը լիքն էր նրանցով, մինչև իր ամենամռայլ շաւիղների խորքը։ Լապտերների նման նրանք շարք էին ընկել սիգամարգերի շուրջը, ծառերի վրայ մացառների թաւուտների մէջ... Ծառուղիների նուրբ աւազը լճակների ալիքները փողփողում էին կանաչ կայծերով և այդ բոլոր խոշորացուցային շոգքերը կարծէք մի լուսավառութիւն էին կազմում, որով պճնուել էր Սավինին ի պատիւ Սիդոնիի ասելով նրա նշանդրէքը Ժորժի հետ...

Միւս առաւօտ, վեր կենալիս, նա արդէն գլխումը պատրաստ ունէր իր ծրագիրը։ Ժորժը սիրում էր իրան. այդ անկասկած էր։ Սակայն միտք ունէր նա արդեօք պսակուելու իր հետ... Այդ շատ կասկածելի էր թւում այդ խորամանկ աղջկան։ Բայց այդ չէր վախեցնում նրան։ Նա իր մէջ զգում էր այնքան ոյժ, որ կարողանար յաղթել այդ հոգով երեխային, որ միանգամայն և թոյլ էր բնաւորութեամբ և կրքոտ։ Պէտք էր միայն գիմադրել նրան, և այդպէս էլ արեց Սիդոնին։

Մի քանի օր շարունակ նա սառն էր, անուշադիր, դիտմամբ կոյր և զուրկ յիշողութիւնից։ Ժորժը ուզում էր խօսել հետը, կրկնել երանելի բոպէն, բայց Սիդոնին խուսափում էր նրանից, միշտ մէկին ու մէկին գնում իր և նրա արանքը։ Այդ ժամանակ նա նամակ գրեց։

Ժորժը ինքն էր տանում նամակները դնելու մի ժայռի

առուի մէջ, «Ուրուական» կոչուող վէտ աղբիւրի մօտ, որ գլխում էր ծառաստանի խորքում յարդէ ծածկի հովանու տակ։ Ժորժին հիանալի էր գտնում այդ։ Երեկոյեան պէտք էր սուտակել, մի որ և է պատրուակ հնարել մենամենակ գնալու աղբիւրը։ Ծառուղիները ծածկող ստուերը, դաժան դիշերուայ զարմանքը, արագ քայլուածքը և յուզմունքը քաղցր բաբախեցնում էին նրա սիրտը։ Խառնուում նա գտնում էր նամակը ցօղապատ ցրտահար աղբիւրի սաստիկ սառնութիւնից և լուսնի լուսով ոչքան սպիտակ, որ նա շուտով թաղցնում էր, վախենալով թէ արդէն տեսնել ու բռնել ձեռքին։

Ցեռոյ, մենակ մնալով, ինչ հրճուանքով էր նա բանում այդ նամակը, ջոկում նրա գիւթական տառերը և սիրային նամակագրութիւնները, որոնց խօսքերը թռչկոտում էին, շրջապատուած կապոյտ ու դեղին շլացուցիչ շրջանակներով, կարծես պայծառ արեւում կարդալիս լինէր նամակը։

«Ես սիրում եմ ձեզ... Սիրեցէք ինձ...» գրում էր Ժորժը հազար ու մի ձեւով։

Սկզբում նա չէր պատասխանում այդ նամակներին, բայց երբ զգաց, որ Ժորժը, յուսահատուած իր սառնութիւնից, արդէն թունդ սիրահարուել է և ոտով գլխով իրանն է, յայտնեց հարկան կերպով.

—Ես կարող եմ սիրել միայն իմ ամուսնուն։

Օ՜հ, արդէն կատարեալ կին էր այդ փոքրիկ Շէբը...

V

Ինչպէս վերջացաւ փոքրիկ Շէբի պատմութիւնը։

Եկաւ սեպտեմբեր ամիսը։

Որսորդութիւնը խմբեց դղեակում մի բազմամարդ ընկերութիւն, աղմկալից ու դուեհիկ։ Սկսուեցին երկար ու ձիգ աշխատանքներ, որոնցից այդ հարուստ բուրժուաները ժուարութեամբ էին վեր կենում, դանդաղ, յոգնած և թմրած, ինչպէս գեղջուկներ։ Տնեցիք գնում էին որսորդների առաջը շնանային մթնշաղերից ցրտացած ճանապարհներով։ Մշուշ էր արձրանում հնձուած արտերից, և մինչև խրտնած թռչունները վախուորած ճիչերով գետնահան թռչկոտում էին ակօսների մէջով, գիշերը կարծես դուրս էր գալիս շրջակայ անտառներից, որոնց մռայլ գմբեթաձևները մեծանում էին, ձգուելով աշխի երեսով։

Վառում էին կառքի լապտերները և, տաք տաք փաթա-

թուելով վերամկների մէջ, արագ վերադառնում էին տուն, գ
քամին՝ երեսներին։ Շքեղ լուսաւորուած դահլիճը լցուում
աղմուկով ու ծիծաղով։

Կլէր Ֆրոմոնը, նեղուելով շրջապատողների կոպտութի
նից, չէր խօսում ամենևին։ Սիդոնին հանդէս էր գալիս
ամբողջ փայլով։ Զբօսանքը աչխոյժ էր տալիս նրա գունդ
դէմքին և վարիդեան աչքերին։ Նա գիտէր լաւ ծիծաղել, հ
կանում էր թերևս մի քիչ աւելի, քան պէտք է, և այնա
գտնուող տղամարդկանց համար թւում էր միակ կինը ներ
եղողների մէջ։ Նրա յաջողութիւնը վերջնականապէս գժուացրի
Ժորժին, բայց որքան նա առաջ էր գնում իր սիրահարութեան
մէջ, այնքան զուսպ էր ցոյց տալիս իրան Սիդոնին։ Այդ տ
նելով, Ժորժը վճռեց, որ նա իր կինը կը լինի, և ինքն իր
ռաջ երդուեց այդ բանում այն չափազանցրած հաստատակ
մութեամբ, որ յատուկ է թոյլ բնաւորութիւններին, որ
կարծես աչխատում են առաջուց տապալել այն խոչընդոտները
որոնց առաջ, լաւ գիտեն, որ յետոյ տեղի են տալու մի օր...

Փոքրիկ Շէրի համար այդ ամենաաքանչելի բոպէն էր
կեանքում։ Նոյն իսկ մի կողմ թողած փառասիրական նպատա
ները, նրա կոքէտ ու ծածկամիտ բնաւորութիւնը մի տարօ
նակ հրապոյր էր գտնում այդ սիրային դաւի մէջ, որ իր
խորհրդաւոր կերպով վարում էին տօնախմբութիւնների և ի
բախմանքների մէջ։

Շրջապատողներից ոչ ոք ոչ մի կասկած չէր տանում
Կլէրը ջահելութեան այն անարատ ու աքանչելի շրջանումն
գտնուում, երբ անփորձ միտքը կոյր հաւատով է վերաբերուում
բոլոր ծանօթներին, միանգամայն անդէտ դաւաճանութիւնների
և խաբէութիւնից։ Պ. Ֆրոմոնի ուշ ու միտքը իր առևտրի
էր։ Նրա կինն էլ քաւ ու քրտինք կորած սրբում էր իր զ
սեղէնը։ Վախ կարող էր ազդել միայն ծեր Գարդինուան
սրատես մանր աչքերով, բայց Սիդոնին զուարճացնում էր նրա
և եթէ նոյն իսկ նա մի բան էլ իմանար, անկարելի է, որ արդ
հանդիսանար նրա ապաստանին։

Սիդոնին ցնծութեան մէջ էր, երբ մի յանկարծական,
նակնկալ աղէտ եկաւ չքացնելու նրա յոյսերը։

Մի կիրակի առաւօտ որսից վերադառնալիս պ. Ֆրոմոն
բերեցին մահացու վիրաւորուած։ Երէսներին կալմէջ արած
մանակ այծեամին ուղղուած գնդակը զիպել էր նրա գլխ
քունքի մօտից։ Դղեակը տակն ու վրայ եղաւ։

Բոլոր որսորդները, և նրանց թւում նաև անչնորհք
ծանօթը, չտալով ճանապարհ ընկան դէպի Փարիզ։ Կլէրը,

ինչ էր մնում ցնդէր վիճակը, մնաց այն սենեակը, ուր հոգ
լարքի մէջ տանջւում էր հայրը, ու փակուեց այնտեղ, և Ռիսլերը,
որին իսկոյն էին տուել աղէտի մասին, չուտով եկաւ Սիդոնին
տանելու։

Գնալու նախընթաց երեկոն Սիդոնին վերջին անգամ տե
սակցութիւն ունեցաւ Ֆրանցի հետ «Ուրուականի» մօտ, հրա
ժեշտի տեսակցութիւն, ծանր ու գաղտագողի և միանգամայն
հանդիսաւոր՝ շնորհիւ մահուան մերձակայութեան։ Սակայն եր
դուեցին սիրել միմեանց յաւիտեան և պայմանաւորուեցին նա
մակագրութեան տեղի մասին։ Ու յետոյ բաժանուեցին։

Տխուր վերադարձ։

Նա գնում էր վերսկսելու իր սովորական կեանքը, ուղեկ
ցուած Ռիսլերի յուսահատութեամբ, Ռիսլերի, որի համար սի
բելի պատրօնի մահը մի անփոխարինելի կորուստ էր։ Իսկ տուն
հասնելով, նա ստիպուած էր ամենաչնչին մանրամասնութիւն
ներով պատմել, թէ ինչպէս էր անց կացրել այնտեղ ժամանակը,
խօսել գղեակում ապրողների մասին, նրանց մօտ եկող հիւրերի
մասին, տօնախմբութիւնների, ճաշկերոյթների և վերջին աղէտի
մասին։ Ի՜նչ տանջանք այդ աղջկայ համար, որ, անձնատուր
միշտ մի և նոյն մտքին, այնքան կարիք ունէր լռութեան և միայ
նակութեան։ Բայց դրանից սարսափելին էլ կար։

Հէնց առաջին օրից Ֆրանցը եկաւ նստեց իր հին տեղը,
և նրա հայեացքները, որոնք փնտրում էին Սիդոնիին, նրա խօս
քերը, որոնք ուղղուած էին միմիայն Սիդոնիին, անտանելի պա
հանջկոտ էին թւում նրան։

Զը նայելով իր ծայրայեղ ամաչկոտութեան ու անվստա
հութեան, խնդճ երիտասարդը կարծում էր, թէ ինքը իրը ըն
դունուած և անհամբեր սիրահար, իրաւունքներ ունի իր սիրե
լիի վերաբերմամբ և փոքրիկ Շէրը ստիպուած էր դուրս գալ իր
երազական աշխարհից պատասխան տալու համար այդ պարտա
տիրոջը և որքան կարելի է յետաձգել վճարի օրը։

Սակայն հասաւ մի օր, երբ այլևս անհնար էր չարունա
կել անորոշ դրութիւնը։

Նա խոստացել էր պսակուել Ֆրանցի հետ, երբ նա որոշ
դիրք ձեռք բերէր, և ահա այժմ նրան առաջարկում էին ինժէ
նէրի տեղ հարաւում, Գրան-Կոմբի մետալադործական գործա
նում։ Այդ բաւական էր համեստ ապրուստի համար։

Այլևս ոչ մի հնարք չը կար պսակը յետաձգելու։

Պէտք էր կատարել խոստումը կամ գտնել մի որ և է
պատրուակ։ Բայց ինչ պատրուակ...

Այդ վերահաս վտանգի ժամանակ նա յիշեց Դէգիրէին։

Թէև կաղիկ օրիորդը երբէք չէր յայտնել նրան իր սրտի գաղ-
նիքը, այնուամենայնիւ նա գիտէր, որ Դէզիրէն սիրահարուա-
է Ֆրանցի վրայ։ Վաղուց ի վեր նա դուշակել էր այդ իր՝ կ
քէտ աղջկայ աչքերով, որոնք, իբր պարզ ու փողփողուն հայ
լիներ, ցոլացնում էին ուրիշների բոլոր մտածմունքները առա
ոչինչ թոյլ տալու տեսնել նրա մտածմունքներից։ Թերևս մին
անդամ այն միտքը, թէ մի ուրիշ կին սիրում է իր նշանածի
սկզբում աւելի տանելի էր դարձրել նրա համար Ֆրանցի սէ
և ինչպէս արձաններ են դնում շիրիմներում նրանց տխրութի
նը նուազեցնելու համար, այնպէս էլ Դէզիրէի մանրիկ ու գ
նատ կերպարանքը այդ սև ապագայի չէմքում, նուազեցնում
էր այդ ապագայի մռայլութիւնը։

Իսկ այժմ այդ բանը շատ յարմար ու պատուաւոր ա
տրուակ էր նրա համար՝ տուած խօսքիցը յետ կանգնելու։

—Չէ, գիտես, մայրիկ, ասաց նա մի օր տիկին Շէբլին,
երբէք չեմ համաձայնիլ Դէզիրէի նման բարեկամուհու անբա
տութեան պատճառ լինել։ Խիզճս յետոյ սաստիկ կը տանջի
Խեղճ Դէզիրէ, մթթէ չես նկատել ինչ խղճալի տեսք ունի
վերադարձից յետոյ, ինչպէս աղաչական հայեացքով է նայում
ինձ... Չէ, ես չեմ կարող նրան այդպիսի վիշտ պատճառել,
չեմ կարող խլել նրա ձեռքից Ֆրանցին։

Տիկին Շէբը հիանում էր իր աղջկայ վեհսրտութիւնից, բա
այդ զոհաբերութիւնը չափազանցրած էր դտնում, և առա
կութիւններ էր անում.

—Տես, լաւ մտածիր, զաւակս, մենք հարուստ մարդ
չենք... Ֆրանցի նման փեսայու ամեն օր չես ճարի։

—Աւելի վատ. ամենևին չեմ պակուի... կտրականապ
յայտնեց Սիգոնին և, աջող գտնելով այդ պատրուակը, եռա
դուն կերպով կպաւ նրանից։ Ոչինչ չը կարողացաւ փոխել տ
նրան իր որոշումը,—ոչ Ֆրանցի արտասուքները, որին յուս
հատեցնում էր այդ մերժումը, որի անորոշ պատճառները նո
իսկ չէին ուզում բացատրել նրան, ոչ էլ Ռիսլերի թախանձանք
ները, որին տիկին Շէբը, իբր ամենաթունդ գաղտնիք, չընդ
էր իր աղջկայ դրդումները և որ, չը նայելով ոչ մի բանի, չ
կարողանում չը հիանալ այդպիսի զոհաբերութիւնից.

—Չէ, մի մեղադրիլ Սիգոնին... Նա աղջիկ չէ, այլ հրե
տակ *)... ասում էր նա իր եղբօրը, աշխատելով հանդստացն
նրան։

*) C'est un anche—Ռիսլերի՝ գերմանախօս շվեյցարացու արտ
սանութեամբ։

Ս. Թ.

—Այո, այո, կատարեալ հրեշտակ, հոգոց քաշելով հաստա-
տում էր տիկին Շէբը, այնպէս որ խեղճ դաւաճանուած սիրա-
հարը նոյն իսկ իրաւունք չունէր տրտունջ յայտնելու։ Յուսա-
հատուած, նա վճռեց հեռանալ Փարիզից, և այնքան սաստիկ էր
այժմ նրա փախչելու ցանկութիւնը, որ նա, Գրան-Կօմբը շատ մօտ
համարելով, խնդրեց և ստացաւ Սուէցի ջրանցքի *) աշխատանք-
ների վրայ վերահսկողի պաշտօն Իսմայիլիայում։ Նա գնաց ա-
ռանց մի բան իմանալու կամ առանց մի բան իմանալ ուզելու
Դէզիրէի սիրոյ մասին, և սակայն, երբ գնալուց առաջ եկաւ
հրաժեշտ տալու, խեղճ կաղիկը բարձրացրեց դէպի նա իր ա-
մաչկոտ սիրուն աչքերը, ուր շատ պարզ գրուած էր.

«Ես սիրում եմ ձեզ, եթէ նա ձեզ չէ սիրում...»

Բայց Ֆրանց Ռիսլերը չը գիտէր կարդալ այդ աչքերի
գիրը։

Բարեբախտաբար, տանջուելու սովոր հոգիները անսպառ
համբերութիւն են ունենում։ Իր սիրելիի ճանապարհ ընկնելուց
յետոյ, խեղճ կաղիկը նորից սկսեց իր ժիր աշխատանքը, պատիր
յոյսերով ապրելու այն ընդունակութեամբ, որ ժառանգել էր
հօրից և որ նրա մէջ աւելի նուրբ կերպով էր արտայայտուում
չնորհիւ նրա կանայի բնաւորութեան.

—Ես կը սպասեմ Ֆրանցին։

Եւ այնուհետև նա սկսեց լայն-լայն բանալ իր թռչնիկների
թեները, կարծես թէ նրանք բոլորը մէկ մէկի յետևից թռչում
էին Եգիպտոսի Իսմայիլիա քաղաքը... Իսկ այդ շատ հեռու էր։

Մարսէլից, նախ քան նաւը նստելը, Ֆրանց Ռիսլերը մի
վերջին նամակ էլ գրեց Սիգոնին, միանգամայն և ծիծաղաշարժ
և սրտայոյզ, որի մէջ, խառնելով ամենատեխնիկական մանրա-
մասնութիւնները ամենասրտաճմլիկ մնաս բարևներին, թռչուտ
ինժէնէրը յայտնում էր, որ ինքը, խորտակուած սրտով, ճանա-
պարհ է ընկնում «հազար հինգ հարիւր ձիու ոյժ ունեցող ապ-
բանքատար և մարդատար Սահիբ նաւով», կարծես թէ յոյս ու-
նէր, թէ չոգենաւի ձիաոյժերի այդ ահագին քանակութիւնը
անպատճառ տպաւորութիւն կը գործի ապերախտ օրիորդի վրայ
և յաւիտենական խղճահարութիւն կ'աղդի նրան։ Բայց Սիգոնիի
գլուխը բոլորովին ուրիշ բաներով էր զբաղուած։

Նրան սկսում էր անհանդստացնել Ժորժի լռութիւնը։ Սա-
վինիից հեռանալուց յետոյ նա միայն մի նամակ էր ստացել և
այնուհետև ոչինչ։ Իր գրած բոլոր նամակները մնում էին ան-

*) Սուէցի պարանոցի ջրանցքի բացումը տեղի ունեցաւ 1869 թուին։

Ս. Թ.

պատասխան։ Ճիշտ է, ինչպէս Ռիսլէրն իրան ասել էր Ժօրժը չատ զբաղուած էր և հօրեղբօր մահուվը նրան էլ մնացել գործարանի ղեկավարութիւնը, որ նրա այժերից բարդ պատասխանատուութիւն էր դրել նրա վրայ... Բայց ինչպէս կարելի է ոչ մի խօսք չը գրել։

Սրահի պատուհանից, ուր նա նորից սկսել էր իր ուսումնասիրութիւնը, որովհետև այնպէս էր սարքել, որ այլ ոչ չէր գնում օրիորդ Լը Մերի մօտ, փոքրիկ Շէրը աշխատում էր տեսնել իր սիրականին, դիտում էր նրա երթևեկութիւնը բակից բակ, չէնքից չէնք, և երեկոյեան, Սալվինի գնացքի ժամին, նայում էր, թէ ինչպէս նա կառք է նստում երկաթուղու կայարանը երթալու, որպէս զի այնտեղից գնա իր հօրեղբօր այրին և աղջկայ մօտ, որոնք սուգի առաջին ամիսները անց էին կացնում գիւղում, պապի դղեակում։

Այդ բոլորը յուզում, սարսափեցնում էր նրան, և այն, որ գործարանը այդքան մօտ էր, աւելի ևս զգալի էր դարձնում նրա համար Ժօրժի խուսափումը։ Աշխարհքի բաներ են։ Բաւական էր մի քիչ բարձրաձայն տալ նրա անունը, որպէս զի նա չուռ գար Սիդոնիի կողմը։ Մի հատիկ պատ էր միայն նրանց բաժանողը։ Եւ սակայն այդ բոլորին նրանք չատ հեռու էին իրարից։

Ցիշում էք, փոքրիկ Շէր, այն ձմերային տխուր երեկոները բարի Ռիսլէրը արտասուոր կերպարանքով մտաւ ձեր ծնողների մօտ ու ասաց. «Նշանաւոր նոր լուրեր»։

Նշանաւոր նոր լուրեր, արդարև։

Ժօրժ Ֆրօմոնը հէնց նոր յայտնել էր նրան, թէ, իր հօրեղբօր՝ մահուան մահճում յայտնած ցանկութեան համաձայն (ինքը ամուսնանալու էր Կլերի հետ *), և թէ, ոչ մի կերպ չի կարողանալով մենակ ղեկավարել գործարանը, ինքը վճռել է նրան ընկերակից դարձնել իրան, առևտրական տան անունը դարձնելով «Ֆրօմոն կրտսեր և Ռիսլէր աւագ»։

Ի՞նչպէս արեցիք, փոքրիկ Շէր, որ կարողացաք պահպանել ձեր սառնասրտութիւնը՝ խմանալով, որ գործարանը դուրս է պրծել ձեր ձեռքից և որ մի ուրիշ կին է բռնել ձեր տեղը։ Սե՜ երեկոյ... Տիկին Շէրը կարկատանով էր զբաղուած սեղանի մօտ, իսկ պ. Շէրը, որ երկար ժամանակ անձրևի տակ էր մնացել չորացնում էր չորերը կրակի առաջ։ Օ՜հ, ողորմելի միջավայր։

*) Կաթոլիկների մէջ չհաս չէ համարում ամուսնութիւնը հօրեղբօր աղջկայ հետ։

Ե. Թ.

լի տխրութեամբ և տաղտկութեամբ։ Լամպը վատ էր լոյս տալիս։ Շտապով պատրաստած ճաշից՝ չքաւորների խոհանոցի հոտ էր կանգնած սենեակում։ Մի կողմից էլ այդ՝ ուրախութիւնից դուրս կորցրած Ռիսլէրն էր տաք տաք խօսում, ծրագիրներ կազմում։

Այդ բոլոր բանները ճմլում էին ձեր սիրտը և դաւաճանութիւնը աւելի ևս սարսափելի էին դարձնում ձեր համար, համեմատութեան դնելով ձեր պարզուած ձեռքից փախչող հարստութիւնը և այդ զզուելի գծծութիւնը, որի մէջ դուք դատապարտուած էիք ապրելու...

Սիդոնին ծանր ու երկար հիւանդութիւն քաշեց դրա չնորհիւ։

Անկողնում, լսելով վարագոյրների յետևում ցնցուող ապակիների ձայնը, թշուառ աղջիկը կարծում էր միշտ, թէ ներքևում փողոցով անցնում են Ժօրժի հարսանիքի կառքերը, և ենթարկւում էր լուռ և անբացատրելի ջղային տագնապների. կարծես աենդի մէջ լինէր սրտի զայրոյթից, որ հալ ու մաշ էր անում նրան։

Վերջապէս, ժամանակը, ջահելութիւնը և մօր ու մանաւանդ Դէզիրէի, որ այժմ արդէն գիտէր թէ ինչ զոհ էր բերել Սիդոնին իր համար, խնամքները յաղթեցին հիւանդութեանը։ Բայց չուռ երկար ժամանակ նա սաստիկ թուլութիւն էր զգում և սարսափելի տխրութիւն ու լալու պահանջ, որ նրան ցնցում էր ջղաձգաբար։

Երբեմն խօսք էր քցում ճանապարհորդելու, Փարիզից հեռանալու մասին։ Երբեմն էլ ասում էր, թէ կուսանոց է ուզում մտնել։ Նրան չրջապատողները տանջւում էին վչտից, աշխատում էին գտնել պատճառը այդ տարօրինակ վիճակի, որ աւելի երկիւղալի էր քան հիւանդութիւնը, երբ յանկարծ նա խոստովանեց մօրը իր տխրութեան գաղտնիքը։

Նա սիրում էր աւագ Ռիսլէրին... Նա չէր համարձակուել երբէք յայտնել այդ բանը, բայց նրան էր նա միշտ սիրելիս եղել և ոչ թէ Ֆրանցին։

Այդ նորութիւնը ապշեցրեց բոլորին և ամենից աւելի Ռիսլէրին. բայց փոքրիկ Շէրը այնքան սիրուն էր, այնքան քաղցր աչքերով էր նայում նրան, որ խեղճ մարդը իսկոյն, իշացածի պէս, սիրահարուեց նրա վրայ։ Այն էլ կարելի է, որ նա, առանց գիտակցելու, վաղուց ի վեր կրում էր այդ սէրը իր սրտում։

Ահա թէ ինչն էր պատճառը, որ իր պսակի երեկոն՝ ջահել տիկին Ռիսլէրը, ոտից գլուխ սպիտակ՝ իր հարսանիքային զգեստում, յաղթական ժպիտով նայում էր դիմացի սրահի պատու-

հանին, որի նեղ շրջանակում պարփակուած էին տասը տարի իր կեանքից։ Այդ զոռող ժպիտը, որի մէջ արտայայտուում էր նաև խորին կարեկցութիւն և փոքր ինչ արհամարհանք, որպիսին մի նոր հարստացած մարդ կարող է ունենալ դէպի իր կեանքի սկզբնական շրջանի գծծութիւնը, ուղղուած էր անշուշտ այն խեղճ ու թուլակազմ երեխային, որին, թւում էր նրան, թէ նա տեսնում է, այնտեղ, վերևում, իր դէմուդէմը, անցեալի և դիշերուայ խորքում, և որին, կարծես, նա ասելիս լինէր, ցոյց տալով գործարանը.

—Ի՞նչ կ'ասես հիմա, փոքրիկ Շէբ... Տեսնում ես, ես արդէն այստեղ եմ...

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

I

Կնոջս ընդունելութեան օրը։

Կէսօր է։ Մառէ թաղը նախաճաշում է։

Եկեղեցիների զանգահարութեան ծանր ղողանջին խառնուում է,—բակերից բարձրանալով,—գործարանների զանգակների բարակ զնգզնգոցը։ Այդ զանգահարութիւններից իւրաքանչիւրը ունի իր տարբեր բնաւորութիւնը։ Ո՛րը տխուր է, որը ուրախ, որը ժիր է, որը թմրած։ Կան հարուստ, բախտաւոր զանգեր, որոնք հնչում են հարիւրաւոր բանուորների համար. կան աղքատ, երկչոտ զանգեր, որոնք կարծէք թաղնուում են ուրիշների յետևում ու աչխատում կուչ գալ, փոքրանալ, կ'ասես վախենալիս լինեն, որ մանկութիւնը կը լսի նրանց ձայնը։ Վերջապէս կան և խաբեբայ, անզգամ զանգեր, որոնք հընչում են դրսեի համար, փողոցի համար, որպէս զի հաւատացնեն ամենքին, թէ իրանց առևտրական տունը նշանաւոր տուն է և բազմաթիւ մարդիկ են բանում այնտեղ։

Փառք Աստուծու, Ֆրոմենների գործարանի զանգը դրանցից չէ։ Մի կարգին, հին ու մի քիչ ճաքած զանգ է այդ, որ արդէն քառասուն տարի ծանօթ է Մառէյում և որ երբէք անգործ չէ մնացել բացի կիրակիներից և խռովութիւնների օրերից։

Նրա ձայնը հնչելուն պէս բանուորների մի ահագին բազմութիւն անցնում է հինաւուրց ապարանքի դարպասի մէջով և անհետանում շրջակայ գինետուններում։ Աշակերտ բանուորները նստոտում են մայթերի եզերքներին որմնադիրների հետ միասին։ Խաղալու համար մի կէս ժամ յետ քցելու համար նրանք նախաճաշում են հինգ բոպէում, գնելով զանազան ուտելեղէնները, որ փողոցային վաճառողները Փարիզում մատն են ածում

անտունների և աղքատների համար, — չագանակ, ընկոյզ, խնձոր,—և նրանց կողքին որմնադիրները կատր-կատր են անում ալիւրից ու գաճից բոլորովին սպիտակած մեծ-մեծ բոքոններ։ Կանայք վառ-վառ վազում են զանազան կողմեր։ Նրանք բոլորն էլ անտեսութեան վերաբերեալ գործեր ունեն, կամ թէ մի երեխայ կամ մի ծերացած աղգական, որին պէտք է խնամել տանը կամ ապաստարանում։ Արհեստանոցների խեղդող օդիցը շնչասպառ, կոպերն՝ ուռած, մաղերը՝ խունացած թաւշաթղթի հազաբեր մանր փոշուց, նրանք, զամբիւղները կռներին, շտապում են այդ դուրս խուժած ամբոխով լի փողոցի միջով, ուր դժուարութեամբ են շրջագայում հանրակառքերը։

Նստած դարպասի կողքի քարի վրայ, որ երբեմն իրր ոտատեղ էր ծառայում ձի հեծնողների համար, Ռիսլէրը ժըպտալով նայում է բանուորների երթին։ Նրան մեծ երջանկութիւն է պատճառում միշտ սրտաբաց յարգանքը այդ ժրաջան մարդկանց, որոնց նա ճանաչել էր այդտեղ, երբ ինքն էլ նրանց նման աննշան և նուաստ էր։ Նրա սիրտը ջերմութիւն է զգում, երբ նա լսում է այդ «բարև, պարոն Ռիսլէր»-ը, արտասանուած այդքան տարբեր-տարբեր, բայց անխարդախ դորովալից ձայներով։ Երեխաները աներկիւղ մօտենում են նրան, կէս բանուոր, կէս արուեստաղէտ դծագրիչները, երկար-երկար միրուքներով, անցնելիս ձեռք են տալիս նրան և խօսում են հետը «դու»-ով։ Թերևս այդ բոլորի մէջ պէտք եղածից մի քիչ աւելի ընտանեկանութիւն կայ, որովհետև այդ մարդը դեռ չէ ըմբռնել իր նոր դիրքի վեհութիւնն ու հեղինակաւորութիւնը, և ես գիտեմ մէկին, որ շատ նուաստացուցիչ է համարում այդ ազատ արձակ վերաբերմունքը։ Բայց այդ «մէկը» չէ կարող նրան տեսնել այս բոլորին և պատրօնը օգուտ է քաղում դրանից և ուժգին կերպով գրկում ծեր հաշուապահ Սիդիզմունդին, որ ամենքից վերջն է դուրս գալիս, ձգուած, կարմրած, դէմքը ճխտած մի ահագին շապկօձիքի մէջ և—ինչ եղանակ էլ լինի—գլխաբաց, որովհետև վախում է կաթուածահար լինի։

Ռիսլէրն ու նա հայրենակիցներ են։ Նրանք վերաբերւում են միմեանց խորին յարգանքով, որ սկսուել է այն հեռաւոր ժամանակներում, երբ նրանք երկուսն էլ նոր էին մտել դորձարանը և միասին նախաճաշում էին փողոցի անկիւնի փոքրիկ կաթնատանը, ուր Սիդիզմունդ Պլանուսը մէն-մենակ է մնում այժմ ու մի տեսակ կերակուր է ընտրում հերթական ճաշի պատիցը կախած ցանկի մէջ...

Բայց ահա կրտսեր Ֆրօմնի կառքը մտնում է դարպասը։ Նա առաւօտից ի վեր շրջագայում է, և այժմ երկու ընկերակիցները, դիմելով դէպի իրանց բնակած գողտրիկ տունը, որ գտնւում է պարտէզի խորքում, մտերմաբար խօսում են իրանց գործերի մասին։

—Ես գնացել էի Պոչասօնների մօտ, ասում է կրտսեր Ֆրօմնը։ Նրանք ինձ ցոյց տուին նոր տիպարներ, որոնք շատ սիրուն են... Պէտք է ուշադրութիւն դարձնել։ Լուրջ մրցորդներ են նրանք։

Բայց Ռիսլէրը չէ անհանգստանում։ Նա զօրեղ է զգում իրան, յոյս դնելով իր տաղանդի, իր փորձառութեան վրայ, և բացի այդ... սակայն այդ թող գաղտնի մնայ... նա արդէն մի զարմանալի գիւտ անելու վրայ է,—մի կատարելագործուած տպագրիչ գործիք, մի այնպիսի բան... էհ, վերջը ինքները կը տեսնեն։ Այդպէս խօսելով, նրանք մտնում են պարտէզը, որ սfուայրի նման են պահում, գնդաձև խուզած ակացիաներով, որոնք գրեթէ նոյնքան հին են, որքան և ինքը տպարանը, և հրաշալի բաղեղներով, որոնք ծածկում են սեացած բարձր պարիսպները։

Կրտսեր Ֆրօմնի կողքին Ռիսլէր աւագը՝ իր պատրօնին հաչիւ ներկայացնող գործակատարի տպաւորութիւն է գործում։ Ամեն քայլափոխում նա կանգ է առնում խօսելու համար, որովհետև նրա շարժուածքները ծանր են, մտածողութիւնը դանդաղ և խօսքերը դժուարութեամբ են գալիս միտքը։ Ահ, եթէ նա կարողանար տեսնել այնտեղ, վերևում, երկրորդ յարկի պատուհանը։ յետևում, այն փոքրիկ վարդագոյն դէմքը, որ ուշի ուշով դիտում է այդ բոլորը...

Տիկին Ռիսլէրը սպասում է իր ամուսնուն նախաճաշի և համբերութիւնից դուրս է գալիս, տեսնելով նրա դանդաղութիւնը։ Ձեռքով նրան նշան է անում՝ «Դէ՛ չուտ արա է»։ Բայց Ռիսլէրը չէ նկատում այդ։ Նրա ուշը ու միտքը ժօրժի ու Կլէրի փոքրիկ աղջկայ հետ է, որ ծծմօր գրկին հրճւում է արևի առաջ իր ժանեակների մէջից։ Որքան սիրուն է նա։—Իսկ և իսկ ձեր պատկերն է, տիկին Շօրշ։

—Ձեզ այդպէս է թւում, բարի Ռիսլէր. սակայն ամենքն ասում են, թէ նա հօրն է քցել։

—Այո, մի քիչ... բայց այնուամենայնիւ...

Եւ բոլորը միասին, հայրը, մայրը, Ռիսլէրը, ծծմայրը, լուրջ կերպով նմանութիւններ են փնտռում մարդկային այդ փոքրիկ ուրուագծի մէջ, որ նայում է նրանց իր շաղուած և արտաքին կեանքից ու արևի լոյսից շլացած աչքերով։ Իր կիսաբաց պատուհանից Սիդոնին կռանում է տեսնելու, թէ ինչ

են անում նրանք այնտեղ և ինչու իր ամուսինը չէ բարձրա-
նում վերև։

Այդ բոպէին Ռիսլէրը, իր գիրկը վերցրած պատլիկին,—
սպիտակ կտորների և բացգոյն ժապաւէնների այդ սիրուն բե-
ռը,—ծեր պապիկի գգուանքներով ու ծամածռութիւններով
աշխատում է ծիծաղեցնել ու ծլուծլուացնել նրան։ Ո՞րքան ծեր
կերպարանք ունի խեղճը։ Ո՞րքան անշնորհք ու ծիծաղելի են այդ
ահագին մարմինը, որ նա աշխատում է կուչ ածել, փոքրացնել
երեխայի առաջ, ու այդ կոշտ-կոպիտ ձայնը, որ նա խլացնում
է քաղցրացնելու համար։

Վերևում նրա կինը ոտը խփում է գետնին ու մրթմրթում
ատամների արանքով.

—Ցիմար...

Վերջապէս, սպասելուց ձանձրացած, նա ուղարկում է ա-
սելու պարոնին, որ նախաճաշը բերել են արդէն. բայց խաղը
այնքան տաքացել է, որ պարոնը չէ իմանում, թէ ինչպէս թող-
նի հեռանայ, ինչպէս ընդհատի այդ հրճուանքի բուռն արտայայ-
տութիւնները և թռչնաձայն ծլուծլուացները։ Վերջ ի վերջոյ նա
մի կերպ յետ է տալիս երեխային իր ծծմորը և փախչում դէպի
սանդուխները, ծիծաղելով ի բոլոր սրտէ։ Նա դեռ ծիծաղում է
սեղանատունը մտնելիս, բայց կնոջ հայեացքը սառը ջուր է ա-
ծում գլխին։

Սիդոնին նստած է սեղանի մօտ, կերակուրը դրած ջերմա-
պահի վրայ (réchaud)։ Նա զոհի դիրք է ընդունել, ը՞ներում էր,
որ վճռել է վատ տրամադրութեան մէջ մնալ։

—Վերջապէս եկաք... փառք Աստուծու։

Ռիսլէրը նստում է, փոքր ինչ ամօթահար։

—Մի նեղանար, փոքրիկս։ Այդ երեխան այնքան...

—Ես ձեզ արդէն ինդրել եմ, որ «դու»-ով չը խօսէք ինձ
հետ։ Մեր մէջ այդ չը պէտք է լինի։

—Բայց չէ՞ որ մենք մենակ ենք այժմ։

—Է՜հ, դուք երբէք չէք կարողանալու յարմարուել մեր
նոր դիրքին... Եւ ինչ է դուրս գալիս։ Ոչ ոք այստեղ յարգան-
քով չէ վերաբերւում դէպի ինձ։ Աչիլ քեռին, այդ ծեր գոնա-
պանը, հազիւ հաղ է գլուխ տալիս, երբ ես անց եմ կենում
նրա սենեակի առաջով... Ի հարկէ, ճիշտ է, որ ես Ֆրօսմոն չեմ
և սեփական կառք չունեմ...

—Է՜հ, փոքրիկս, դու... այսինքն... դուք լաւ գիտէք, որ
դու... որ դուք կարող էք միշտ լծել տալ տիկին Շօրշի կառքը։
Նա միշտ մեր տրամադրութեան տակ է դնում իր կառքը։

—Քանի անգամ պէտք է ասեմ, որ ես չեմ ուզում ոչընչով պարտաւորուած լինել այդ կնոջը։

—Ա՜խ, Սիդոնի...

—Հա, հա, գիտեմ, գիտեմ, այդ արդէն յայտնի է... տիկին Ֆրօսմոնը երկնքից իջած Աստուած է։ Ոչ ոք իրաւունք չունի նրան դիպչելու։ Եւ ես պարտական եմ խոնարհ կերպով տանել այն բանը, որ ես ոչինչ եմ այս տանը. պէտք է թողնեմ, որ ինձ ստորացնեն, ոտնատակ տան։

—Է՜հ, էհ, փոքրիկս...

Խեղճ Ռիսլէրը աշխատում է առարկել, մէկ երկու խօսք ասել յարգարացումն իր սիրելի տիկին Շօրշի։ Բայց նա ճարպիկ չէ։ Ցօնքը դրստելու տեղ աչքը հանում է, և Սիդոնին ձեռաց կրակ է կտրում։

—Ես ձեզ ասում եմ, որ, չը նայելով իր անդորր կերպարանքին, այդ կինը դոռոզ է ու չարասիրտ... Նախ և առաջ, նա ինձ ատում է. այդ ես լաւ գիտեմ... Քանի որ ես դեռ առաջուան փոքրիկ ու աղքատ Սիդոնին էի, որին նա չարտում էր իր կոտրտած խաղալիքները ու հին հագուստները, բանը լաւ էր գնում. բայց այժմ, որ ես էլ նրան հաւասար գործարանատիրուհի եմ,—այդ նրան զայրացնում է ու նուաստացնում... Այդ աղջիկ-պարոնը ինձ խորհուրդներ է տալիս բարձրից, արածներս քննադատում է... Չուր եմ աղախին վարձել... Ի հարկէ։ Չէ՞ որ ես սովոր եմ ինքս ինձ աղախնութիւն անել... Նա ամեն տեսակ ասիթ է փնտռում ինձ վիրաւորելու համար։ Երբ չորեքշաբթի օրերը գնում եմ նրա մօտ, պէտք է լսել, թէ ինչ եղանակով է բոլորի առաջ հարցնում, թէ ինչպէս է տիկին Շէրը... Է՜հ, շատ լաւ, այո, ես Շէրը եմ, իսկ նա Ֆրօսմոն է։ Մէկ մէկի արժէնք կարծեմ։ Իմ պապս գեղագործ էր։ Իսկ նրանն ինչ է։ Վաշխառութեամբ հարստացած մի գիւղացի... Օ՜հ, ես նրան կ'ասեմ այդ բանը այս օրերս, եթէ քիթը շատ բարձրացնի. այն էլ կ'ասեմ, որ նրանց աղջիկը, թէև իրանք այդ չեն նկատում, նմանում է այդ ծեր Գարդինուա պապին. իսկ նա, Աստուած էլ գիտի, որ սիրուն չէ։

—Օ՜հ, ասում է Ռիսլէրը, որ խօսք չէ գտնում պատասխանելու համար։

—Ի հարկէ. ես ձեզ խորհուրդ եմ տալիս զմայլելու նրանց երեխայի վրայ։ Միշտ հօ հիւանդ է։ Ամբողջ գիշերը կատուի պէս մլաւում է։ Չէ թողնում, որ քնեմ... Ցերեկ էլ, ամբողջ օրը գլուխս տանում են մօր դաշնամուրն ու անվերջ կլկլոցները... տրա լա լա լա... Գոնէ մի ուրախ երաժշտութիւն էլ է լինէր։

Ռիսլէրը հնարը գտել է։ Ոչ մի ձայն չէ հանում, իսկ մի քիչ անցած, երբ տեսնում է, որ կինը սկսել է մեղմանալ, բոլորովին հանգստացնում է նրան հաճոյախօսութիւններով։

—Ո՞րքան սիրուն է նա այսօր։ Երևի այցելութիւններ պէտք է անել նախաճաշից յետոյ...

«Դու»-ով խօսելու վտանգից խուսափելու համար, նա անորոշ ու անդէմ դարձուածքներ է գործ ածում։

—Չէ, ես այցելութիւններ չեմ անելու այսօր, պատասխանում է Սիգօնին մի տեսակ հպարտութեամբ։ Ես, ընդհակառակը, ընդունում եմ այցելութիւններ։ Իմ ընդունելութեան օրն է այսօր...

Եւ տեսնելով ամուսնու զարմացած ու շփոթուած կերպարանքը, վրայ է բերում.

—Այո՛, այո՛, իմ ընդունելութեան օրն է... Տիկին Ֆրօմօնն ունի իր օրը. կարծում եմ, ես էլ կարող եմ ունենալ իմը։

—Ի հարկէ, ի հարկէ, ասում է խեղճ Ռիսլէրը, որ նայում է շուրջը փոքր ինչ անհանգստութեամբ... Աւ՛յդ է ուրեմն պատճառը, որ այսօր այնքան ծաղիկ կայ ամէն տեղ, վերնագաւթում, դահլիճում։

—Այո՛, այս առաւօտ աղախինը իջաւ պարտէզը... Գուցէ լաւ չեմ արել։ Հա՛, դուք չէք ասում այդ բանը, բայց ես հաւատացած եմ, որ դուք կարծում էք, որ լաւ չեմ արել... Տէր Աստուած։ Ես կարծում էի, թէ պարտէզի ծաղիկները նոյնքան մեղ են պատկանում, որքան և նրանց։

—Անշո՛ւշտ... բայց և այնպէս դու... դուք... գուցէ աւելի լաւ լիներ...

—Թոյլատրութիւն խնդրել... Հա՛... էլի ստորանալ, այն էլ մի քանի անպէտք ոսկեծաղիկների ու երկու-երեք շիւղ կանաչի համար։ Վերջապէս, ես հօ դողունի չեմ քաշել տուել այդ ծաղիկները, և երբ տիկին Ֆրօմօնը այժմ գայ վերև...

—Մեթէ գալու է։ Ա՛խ, որքան սիրալիր է նա։

Սիգօնին ծուլ ելաւ տեղից, զայրացած.

—Ի՞նչպէս թէ «որքան սիրալիր է նա»... Այդ էր պակաս, որ դեռ չը գայ էլ։ Հապա ես ինչո՞ւ եմ ամէն չորեքշաբթի գընում ձանձրանալու նրա մի ամբողջ խումբ քրքրուան ու ծամծուղ հիւրերի հետ։

Նա լռութեան է տալիս այն բանը, որ տիկին Ֆրօմօնի այդ չորեքշաբթիները մեծ ծառայութիւններ են մատուցել իրան, չէ ասում, որ նրանք մօդային շաբաթաթերթի տեղ են բռնում նրա համար, այն փոքրիկ, խառն բովանդակութեամբ հանդէսներից մէկի տեղը, որոնց մէջ տպուած է լինում, թէ ինչպէս պէտք է

սենեակ մտնել, դուրս գալ, բարևել, ինչպէս պէտք է ծաղիկները զետեղել ծաղկարանում ու սիգարները ծխարանում, դեռ չը հաշուած նկարները, շնորհալի հագուստեղէնի տիպարները և լաւ դերձակուհիների անունները։ Սիգօնին չէ ասում նաև, թէ կէս մի այդ բարեկամուհիներին, որոնց մասին այժմ այդքան արհամարհանքով է խօսում, բոլորին էլ ինքը աղաչել է, որ գան իրան մօտ, և թէ հէնց նրանք են ընտրել նրա ընդունելութեան համար ուրբաթ օրը։

Կը գան արդեօք նրանք։ Արդեօք տիկին Ֆրօմօն կրտսերը իրա կ'անի վերադարձել տիկին Ռիսլէր աւագին, չը դալով նրա առաջին ընդունելութեան օրը։ Այդ հարցը այնքան անհանգստացնում է նրան, որ նա տենդի մէջ է զգում իրան...

—Շուտ արէք, շուտ, ամէն բոպէ ասում է Սիգօնին Ռիսլէրին... Ո՞րքան ծանր էք նախաճաշում, Տէր Աստուած։

Ճիշտ որ Ռիսլէրը սիրում է դանդաղ ուտել և ծխել չիբուխը հացի վրայ, կում-կում ծծելով սուրճը։ Այսօր նա ստիպուած է հրաժարուել իր այդ սիրելի սովորութիւններից, ծուխ չանելու համար չիբուխը չը հանել պատեանից և վերջին պատառն ուտելուն պէս՝ գնալ ձեռաց հագնուել, որովհետև կինը պնդում է, որ կէս օրից յետոյ նա դայ վերև ողջունելու իրան այցելող տիկիններին։

Պէտք էր տեսնել, թէ որքան զարմացան գործարանում, տեսնելով, որ Ռիսլէր աւագը այդ մի օրը իջնում է ներքև սև սիւրտուկով ու հանդիսաւոր փողպատով։

—Վա՛յ, հարսանիք ես գնում, ձայն է տալիս նրան դանձապահ Սիգիզմունդը իր վանդակապատի յետևից։

Եւ Ռիսլէրը պատասխանում է ոչ առանց մի փոքր հպարտութեան.

—Կնոջս ընդունելութեան օրն է այսօր։

Քիչ անցած, ամէնքն էլ իմանում են, որ Սիգօնիի ընդունելութեան օրն է այդ օր, և Աշիլլ քեռին չատ էլ գոհ չէ մնում, տեսնելով, որ կարել են պարտէզի մուտքի մօտ եղած ձմերային դասինների ճիւղերից մի քանիսը։

Ռիսլէրը իր արհեստանոցում, տախտակի առաջ նստած, գծագրում է բարձր պատուհանների պայծառ լոյսով։ Նա հանել է վրայից իր գեղեցիկ սիւրտուկը, որ նեղութիւն է տալիս նրան, և վեր է քաշել չսպկի բոլորովին թարմ թևքերը. բայց այն միտքը, որ իր կինը հիւրերի է սպասում, զբաղեցնում ու անհանգստացնում է նրան, և նա ժամանակ առ ժամանակ հագնուում ու չիտկուում է վերև գնալու համար։

—Մարդ չի՞ եկել,—հարցնում է նա վախվխելով։

—Չէ, ոչ ոք չի եկել, պարոն։

Շքեղ կարմիր դահլիճում,—որովհետև նրանք կարմիր դ
մասկով պատած մի դահլիճ ունեն, որի պատուհանների արան
քին դրուած է մի կօնսօլ և բացդոն ծաղիկներով գորգի մէջ
տեղը՝ մի սիրուն սեղան,—Սիդօնին բաղմել է հիւրեր ընդունող
տիկնոջ դիրքով, շրջապատուած շրջանաձև շարուած բազկա
թոռներով ու աթոռներով։ Այստեղ այնտեղ երևում են գրքի
գրական հանդէսներ, մի փոքրիկ զամբիւղ ձեռագործի համա
հիւսուած մետաքսէ վինջուղներով, մի փունջ մանիշակ բիւրեղ
բաժակում և կանաչ բոյսեր ծաղկարաններում։ Այդ բոլորը դ
սաւորուած է ճիշտ այնպէս, ինչպէս մի յարկ ներքև Ցիրօմոն
ների մօտ, միայն թէ ճաշակը,—այդ աննշմարելի դիծը, որ բա
ժանում է գեղեցկականը աղնիւից,—դեռ չէ հասել նրբութեան
Կարծես թէ մէկը մի գեղեցիկ ժանրային պատկեր է, իսկ միւսը
նրա միջակ պատճէնը։ Տանտիրուհին ինքն էլ այնպիսի չոր
հագել, որ շատ նոր է, այնպէս որ նա աւելի հիւրի տպաւորու
թիւն է գործում քան իր տանը հիւր ընդունողի։ Ռիսլէրին որ
հարցնես, ամեն ինչ հիանալի է ու ոչ մի պակաս տեղ չունի։ Նա
պատրաստուում է այդ ասել դահլիճը մտնելիս, բայց կնոջ զայ
բագին հայեացքի առաջ խեղճ մարդը կանգ է առնում վար
վելով։

—Տեսնում էք, արդէն ժամի չորսն է, ասում է նա նրան
բարկացկոտ շարժումով ցոյց տալով պատի ժամացոյցը... Ոչ ոք
չի գալու... Բայց ամենից աւելի բարկութիւնս բերում է կլ
բը... Նա տանն է... ես հաստատ գիտեմ... ես լսում եմ, որ
այնտեղ է...

Ցիրաւի, կէսօրից սկսած, Սիդօնին ականջ է դնում ներ
քևի յարկից լսուող բոլոր ձայներին, երեխայի ճչոցին, փակուող
դռան ճռռոցին։ Ռիսլէրն ուզում է գնալ արհեստանոցը, փախ
չել նախաճաշի խօսակցութիւնից, որ վերսկսւում է, բայց այդ
պէս հեշտ չէ կարող պրծնել կնոջ ձեռքից։ Քանի որ ամենքի
բարձրթող են արել իրան, թող գոնէ ամուսինը ընկերութիւն
անէ իրան, և խեղճ ամուսինը մնում է վերևում, անշարժ, տե
ղումը մեխուած, այն մարդկանց նման, որոնք չեն համարձակ
ւում իրար գալ փոթորիկի ժամանակ, վախենալով իրանց կողմ
մը քաշել կայծակը։ Սիդօնին յուզուում է, գնում գալիս է դահ
լիճում, փսխում է այս կամ այն աթոռի տեղը, նորից տեղն է
դնում, անցողակի նայում է ինքն իրան հայելու մէջ, զանգ
տալիս է, կանչում է աղախնին, ուղարկում Աշիլ քեռու մօտ
որպէս զի իմանայ, հօ մարդ չի հարցրել իրան։ Այնքան չամ

մարդ է այդ Աշիլ քեռին, որ գուցէ հարցնող լինելիս ասում է,
թէ նա դուրս է եկել տանից։

Բայց չէ, գռնապանը դեռ ոչ ոքի չի տեսել։

Լռութիւն ու լքումն։ Սիդօնին կանգնել է ձախակողմի
պատուհանում. Ռիսլէրը՝ աջակողմի։ Այնտեղից նրանք տես
նում են փոքրիկ պարտէզը, ուր սկսում է արդէն մութն ընկ
նել, և սև ծուխը, որ բարձր ծխնելոյզը դուրս է թողնում դէպի
դեղձիկ երկինքը։ Սիդիզմունդի պատուհանը լուսաւորուում է ա
ռաջինը ներքևի յարկում. գանձապահը ինքն է սարքում իր
լամպը մանրակրկիտ խնամքով, և նրա երկար ստուերը մաս է
գալիս բոցի առաջ ու երկուտակ է լինում վանդակապատի
մօտ։ Սիդօնիի բարկութիւնը մի բոպէ փարատուում է այդ ծա
նօթ մանրամասնութիւնները տեսնելիս։

Ցանկարծ մի փոքրիկ կառք մտնում է պարտէզը և գալիս
կանգնում է դռան առաջ։ Վերջապէս մի եկող եղաւ։ Մետաքսի,
ծաղիկների, սև սաթէ ուլունքների, երիզների ու մուշտակեղէնի
այդ մրրիկը արագ-արագ մտնում է նեքսեն. Սիդօնին ճանա
չում է այդ կնոջը. նա Ցիրօմոնների դահլիճի ամենագողտրիկ
աճախողներից մէկն է, մի հարուստ բրօնզավաճառի ամուսին։
Ո՛րքան պարծանք է ընդունել այդպիսի մի հիւր։ Շտապ-շտապ
տանտէրերը բռնում են իրանց տեղերն ու դիրքերը,—մարդը
նստում է բուխարիի մօտ, կինն էլ բազմում բազկաթոռի մէջ
ու սկսում անհոգաբար թերթել ինչ-որ մի ամսագիր։ Զուր
աշխատանք։ Գեղեցկուհի հիւրը Սիդօնիի մօտ չէր եկել. նա
մտաւ ներքևի յարկը...

Օ՜, եթէ տիկին Ժորժը կարողանար լսել, թէ ինչ է ասում
իր դրացուհին նրա ու իր բարեկամուհիների մասին...

Այդ բոպէին դուռը բացւում է և զեկուցանում են.

—Օրիորդ Պլանուս։

Գանձապահի քոյրն է այդ, մի նուաստ, քաղցրաբարոյ ու
խեղճ պառաւ աղջիկ, որ պարտականութիւն է համարել այցե
լել այդ օրը իր եղբօր պատրօնի կնոջը և մնացել է ասլշած,
տեսնելով թէ ինչպէս սիրալիր կերպով են ընդունում իրան։
Շրջապատում են նրան, գլխովը պտոյտ են գալիս։ «Ո՛րքան
սիրալիր է ձեր կողմից... Մօտեցէք, խնդրեմ, կրակին»։ Ինչ ու
շադրութեամբ, ինչ հետաքրքրութեամբ են լսում նրա ամենա
չնչին խօսքերը։ Բարեհոգի Ռիսլէրը այնպէս սրտանց է ժպտում,
կարծես շնորհակալութիւն է յայտնում։ Նոյն իսկ Սիդօնին
ամեն կերպ գգւում է նրան, ուրախանալով, որ կարող է իր
փառքի մէջ երևալ իր մի ժամանակուայ հաւասարին և որ ներ-

քնում տիկին Ֆրոմոնը կը լսի, որ իր մօտ մարդիկ են եկել։ Ուստի որքան կարելի է շատ աղմուկ է հանում, դրդռացնելով բաղկաթոռները, յետ ու առաջ քաշելով սեղանը, և երբ պառաւ օրիորդը գնում է, շլացած, զմայլած ու շփոթուած, Սիդոնին ճանապարհ է քցում նրան մինչև անդուխները, խշխշացնելով շրջազգեստի ծալազարդերը, և բարձրաձայն դառնում է նրա յետեւից, կռանալով վանդակի վրայով, թէ ինքը տանն է լինում միշտ ուրբաթ օրերը... Լսում էք, ուրբաթ օրերը...

Արդէն դիշեր է այժմ։ Դահլիճի երկու ահագին լամպեր վառել են։ Կողքի սենեակում լուում է աղմուկ. աղախինը ճաշ քցում է։ Վերջացաւ։ Տիկին Ֆրոմոն կրտսերը չի դայ։

Սիդոնին կապտել է բարկութիւնից.

—Տեսնում էք այդ քրքրուանին, որ չի կարողանում բանալ տասնութ աստիճան վերև... Տիկինը մեզ անշուշտ չունչին արարածներ է համարում իր համեմատութեամբ... Օ՜, շատ լաւ, ես վրէժս կը հանեմ...

Եւ որքան աւելի է դուրս գեղում նա իր զայրոյթը այդպիսի անարդար խօսքերով, այնքան աւելի նրա ձայնը գունեղանում է, արուարձանային ելևէջներ է ստանում և բառերի արտասանութիւնը դառնում է ռամկական, պարզ ցոյց տալով, որ խօսողը առաջ աշակերտուհի է եղել օրիորդ Լը Միրի արհեստանոցում։

Ռիսլէրը դժբախտութիւն է ունենում մի խօսք ասելու։

—Ո՞վ գիտի։ Գուցէ երեխան հիւանդ է եղել։

Սիդոնին կատաղած շուռ է գալիս դէպի նա, կարծես ուզելով կծել նրան։

—Գլուխս մի տանէք, խնդրեմ, այդ երեխայով։ Իսկապէս դուք էք մեղաւոր, որ այսպիսի բան է գալիս իմ գլխին... Դուք չէք կարողանում այնպէս անել, որ ինձ յարգանքով վերաբերուեն։

Եւ նրա սենեակի դուռը շրխկալով փակւում է, դողդողացնելով լամպերի գունդերը և դարակներում դարսած բոլոր զարդարանքները, ու Ռիսլէրը մնում է մենակ, անշարժ դահլիճի մէջտեղում, յուսահատ դէմքով նայելով իր սիփ-սպիտակ շապկաթիքներին ու փայլակած լայն կօշիկներին և մեքենայօրէն սրմռալով.

—Կնոջս ընդունելութեան օրը։

II

Իսկական մարգարիտ եւ կեղծ մարգարիտ

«Ի՞նչ է պատահել հետը... Ի՞նչ եմ արել նրան», հարցնում էր յաճախ ինքն իրան Կլէր Ֆրոմոնը, մտածելով Սիդոնիի մասին։

Նա ոչինչ չը գիտէր այն բանի մասին, որ երբեմն տեղի էր ունեցել Սավինիում իր բարեկամուհու և Ժորժի մէջ։ Նրա պէս չիտակ բնաւորութիւն ու անդորր հոգի ունեցողը չէր կարող դուշակել, թէ ինչ նախանձոտ ու ստոր փառասիրութիւն էր աճել նրա կողքին տասնհինգ տարուց ի վեր։ Բայց և այնպէս, այդ սիրուն դէմքի հանելուկային հայեացքը, որ սառը սառը ժպտում էր նրա երեսին, շփոթեցնում էր նրան, թէև նա չէր հասկանում թէ ինչու։ Մանրակրկիտ քաղաքավարութեանը, որ շատ տարօրինակ էր Սիդոնիի պէս մանկութեան ընկերուհու կողմից, յաջորդում էր յանկարծ վատ քօղարկուած զայրոյթ, ձայնի չոր ու կծու արտայայտութիւն, որի առաջ Կլէրը մնում էր շուարած, ինչպէս մի հանելուկի առաջ։ Երբեմն այդ անհանգստութեանը միանում էր նաև մի տարօրինակ նախազգացումը, որի մի անորոշ վկայութիւն, թէ մեծ դժբախտութիւն է գալու նրա գլխին. որովհետև կանայք բոլորն էլ մի քիչ գերբնաւոր են (voyante, ясновидящая), և նրանցից ամենապարզասիրտների մէջ անգամ չարիքի խորին անդիտութիւնը լուսաւորւում է երբեմն-երբեմն զարմանալի պայծառութիւն ունեցող յանկարծական տեսիլքներով։

Մի-մի անգամ փոքր ինչ երկար խօսակցութիւնից յետոյ, այն անակնկալ հանդիպումների ժամանակ, երբ յանկարծակիի բռնուած դէմքերը թոյլ են տալիս պարզ տեսնելու իրանց իսկական մտածմունքները, տիկին Ֆրոմոնը լուրջ կերպով միտք էր անում այդ տարօրինակ, փոքրիկ Սիդոնիի մասին, բայց եռուն ու ստիպողական կեանքը, պատելով նրան մաերմական յարաբերութիւնների ու հոգսերի մթնոլորտով, ժամանակ չէր տալիս նրան կանգ առնելու դրա նման մանր հարցերի վրայ։

Իսկապէս կանայք ունեն միշտ մի հասակ, երբ նրանց կեանքի ճանապարհը այնպիսի յանկարծական պտուտանքներ է անում, որ բոլոր հորիզոնները փոխւում են, բոլոր տեսակէտները յեղաշրջւում են։

Ջահէլ աղջիկ ժամանակը նա սաստիկ կը վշտանար անշուշտ, եթէ այդպէս մաս առ մաս դրկուէր Սիդոնիի բարեկա-

մութիւնից, որ կարծես մի չար ձեռք պատռում տանում էր կը-
տոր-կտոր։ Բայց նա զրկուել էր հօրից, որ նրա ջահել ժամա-
նակուայ ամենագլխաւոր, նոյն իսկ միակ սիրոյ առարկան էր,
այնուհետև ամուսնացել էր։ Ցեռոյ էլ ծնուել էր երեխան,
որի քաղցր պահանջներին բաւարարութիւն պէտք էր տալ ա-
մեն րոպէ։ Բացի այդ, նրա մօտն էր կենում գրեթէ բոլորովին
երեխայացած մայրը, որ աւելի ևս ապուշ էր կորել իր ամուս-
նու աղէտալի մահի շնորհիւ։ Այդքան զբաղուած կեանքի մէջ
Սիդոնիի քմահաճոյքները շատ քիչ տեղ էին բռնում, և Կլէր
Ֆրօմոնը գրեթէ չը զարմացաւ, երբ նա ամուսնացաւ Ռիսլէրի
հետ։ Անկասկած Ռիսլէրը շատ մեծ էր նրա համար, բայց որ-
իրաւ սիրում էին։

Ինչ վերաբերում է ցաւ զգալուն, որ փոքրիկ Շէրը հա-
սել էր այդպիսի բարձր դիրքի ու գրեթէ իր հաւասարը դարձել,
—նրա բնաւորութիւնը այնքան վեհ էր, որ անընդունակ էր այդ
տեսակ փոքրոգութեան։ Նա ի բոլոր սրտէ կը ցանկանար,
ընդհակառակը, բախտաւոր ու յարգուած տեսնել այդ ջահել
կնոջը, որ կենում էր նրա կողքին, ապրում էր, այսպէս ասած,
նրա կեանքով և եղել էր նրա մանկութեան ընկերուհին։ Նա
փորձեց ամենայն քաղցրութեամբ սովորեցնել նրան աշխար-
հիկ նիստ ու կացը, մարդամէջ դուրս բերել նրան, ինչպէս
անում են լաւ օժտուած դաւառացուհիների հետ, որոնց շատ
քիչ բան է պակասում պանչելի կին դառնալու համար։

Երկու ջահել ու սիրուն կանայք հեշտութեամբ խորհուրդ
չեն ընդունում իրարից։ Երբ տիկին Ֆրօմոնը մի մեծ ճաշկե-
րոյթի օր տիկին Ռիսլէրին տարաւ իր սենեակը ու ուղիղ երե-
սին ժպտալով ասաց, որպէսզի չը նեղանայ. «Շատ զուգսեղէն
կայ վրադ, հոգիս... Համ էլ՝ օձիքը բարձր զգեստ հագնելիս ծա-
ղիկ չեն խրում մազերին...». Սիդոնին կարմրեց, շնորհակալու-
թիւն յայտնեց, բայց սրտի խորքումը մի աւելորդ քէն էլ ար-
ձանագրեց նրա դէմ։

Կլէրի շրջանում բաւական սառն ընդունեցին նրան։

Սէն-Ժէռմէնի արուարձանը *) իր յաւակնութիւններն
ունի, ի հարկէ, բայց կարծում էք՝ Մառէն չունի։

Խոշոր արդիւնագործողների ու հարուստ գործարանատե-
րերի այդ կին ու աղջիկները գիտէին փոքրիկ Շէրի պատմու-
թիւնը, և վերջապէս հէնց նրա բարեելու և իրան պահելու ձևը
բաւական էր, որ նրանք հասկանային նրա ով լինելը։

*) Փարիզի Սէն-Ժէռմէն արուարձանում ապրում է ազնուական դասը։

Ս. Թ.

Սիդոնին շատ էր աշխատում կոկուել, բայց ի զուր,—նա
էլի մնում էր խանութում ծառայած օրիորդ։ Նրա փոքր ինչ
բռնազբօսիկ և երբեմն չափազանց խնարհ սիրալիրութիւնը
վատ տպաւորութիւն էր գործում, գործակատարների խօսելու
կերպ եղանակի նման, իսկ նրա արհամարհոտ դիրքերը յիշե-
ցնում էին նորութիւնների խանութների գլխաւոր գործակատա-
րուհիներին, որոնք,—ոգնուած սև մետաքսէ զգեստով, որ երե-
կոյեան տուն գնալիս հանում թողնում են խանութի հանդեր-
ձարանում,—իրանց խոպոպ դրած մազերի բարձրութիւնից վեհ
կերպով նայում են այն մանր ժուռ մարդկանց վրայ, որոնք
թոյլ են տալիս իրանց սակարկութիւն անել։

Նա զգում էր, որ իրան զննում ու քննադատում են, և
ատիպուած էր վախվխելով սպառազինուել պատերազմ մղելու
համար։ Այն անունները, որ արտասանում էին մօտը, այն զը-
արձութիւնները, տօնախմբութիւնները, դրքերը, որոնց մասին
խօսում էին հեռ, բոլորն էլ անծանօթ էին նրան։ Կլէրը ամեն
կերպ աշխատում էր տալ նրան հարկաւոր տեղեկութիւնները և
միշտ օգնութեան պարզուած բարեկամական ձեռքով պահում
էր նրան իր դիրքին վայել աստիճանի վրայ։ Բայց տիկիններից
մասերը գտնում էին, որ Սիդոնին սիրուն է։ Այդ բաւական
էր, որպէս զի նրանք դժգոհ լինէին այն բանից, որ նա մտել
էր նրանց շրջանը։ Ոմանք էլ, գոռոզ իրանց ամուսինների դիր-
քով ու իրանց հարստութեամբ, ամեն կերպ աշխատում էին
ստորացնել այդ փոքրիկ նորելուկին ամբարտաւան լռակեցու-
թեամբ և գիջողական քաղաքավարութեամբ։

Սիդոնին նրանց բոլորին ամփոփում էր մի խօսքի մէջ,—
Կլէրի բարեկամուհիները, այսինքն իր անձնական թշնամիները...
Բայց նա լուրջ կերպով քէն էր զգում միմիայն իրան, Կլէրի
դէմ։

Երկու ընկերակիցները, Ռիսլէրն ու Ժօրժը, կասկած ան-
գամ չէին տանում իրանց կանանց մէջ անցած-դարձածի մասին։

Ռիսլէր աւագը, շարունակ ուշ ու միտքը տուած իր տպագրիչ
մեքենայի գիւտին, երբեմն մինչև կէս գիշեր մնում էր նստած
իր գծագրութեան սեղանի առաջ։ Ֆրօմոն կրտսերը ամբողջ օրը
դրսեն էր լինում, նախաճաշում էր ժողովարանում և գրեթէ
երբէք ոտք չէր դնում գործարանը։ Նա յարգելի պատճառ-
ներ ունէր այդ բանի համար։

Սիդոնիի մոտիկութիւնը վրդովմունք էր քցում նրա սիրտը։
Այն քմահաճ, կլրտոտ զգացմունքը, որ նա տածում էր եր-
բեմն դէպի այդ կինը, այն սէրը, որ նա զոհեց իր հօրեղբօր
վերջին կամքը կատարելու համար, շատ յաճախ էր գալիս նրա

միտքը, սաստիկ ափսոսանք ազդելով, որ բանն անկարելի է ուղղել, և նա, թոյլ զգալով իրան, փախուստ էր տալիս։ Թուլամորթ, կրաւորական բնաւորութեան տէր մարդ էր նա, այնքան խելօք, որ կարող էր ճանաչել ինքն իրան, բայց և այնքան թոյլ, որ անկարող էր կառավարել ինքն իրան։ Ռիսլէրի հարսանիքի երեկոյեան, ինքն էլ դեռ հաղիւ մի քանի ամսուայ պսակուած, նա նորից զգաց Սիդոնիի վերաբերմամբ Սավինիի փոթորկալից երեկոների բոլոր յուզմունքը։ Այն օրից ի վեր նա, առանց ինքն իրան պարզ հաշիւ տալու, խուսափում էր Սիդոնիին տեսնելուց ու հետը խօսելուց։ Դժբախտաբար, նրանք մի և նոյն տանն էին ապրում և տիկինները օրը տան անգամ այցելութիւններ էին անում միմեանց, այնպէս որ միշտ տեղի էին ունենում պատահական հանդիպումներ, և ահա դրա չնորհիւ առաջ եկաւ այն տարօրինակ երևոյթը, որ այդ մարդը, կամենալով ազնիւ ամուսին մնալ իր կնոջ վերաբերմամբ, բոլորովին կտրուել էր տանից և զուարճութիւններ էր փնտռում դրսում։

Այդ չէր զարմացնում Կլէրին։ Հանգուցեալ հայրը սովորեցրել էր նրան այն բանին, որ առևտրական մարդու տեղը դրսն է լինում միշտ, և ժօրժի բացակայութեան ժամանակ նա, բոլորովին նուիրուած իր ամուսնական ու մայրական պարտականութիւններին, տնողական գործեր ու ամեն տեսակ աշխատանքներ էր հնարում ինքն իր համար, երեխային տանում էր զբօսնելու, երկար ու ձիգ հանդիստ էր առնում հետը արև տեղերում, յետոյ էլ վերադառնում տուն՝ հիացած իր աղջկայ յառաջադիմութիւնից, համակուած մանր երեխաների բացօդեայ հրճուանքներով ու ծիծաղներով և պահած իր լուրջ աչքերի խորքում այդ փոքրիկների պայծառութիւնից։

Սիդոնին էլ շատ էր դուրս գալիս տանից։ Ցաճախ, գիշերուայ դէմ, ժօրժի կառքը, դարպասով անցնելիս, ստիպում էր շտապով մի կողմ քաշուել չքեղազգեստ տիկին Ռիսլէրին, որ վերադառնում էր տուն գրեթէ ամբողջ Փարիզը ոտնատակ տալուց յետոյ։ Բուլվարը, խանութներում ցուցադրուած իրերը և գնելիքները, —որ նա շատ ծանր ու բարակ էր ջոկում, կարծէք գնելու նոր զուարճութիւնը ոլորան կարելի է լաւ ճաշակելու համար,—շատ երկար էին պահում նրան դրսում։ Նրանք բարնում էին միմեանց սանդուխների պատուանքում, սառն հայեացք փոխանակելով իրար հետ, և ժօրժը շտապով մտնում էր իր ընակարանը, իբրև մի ապաստարան, ու աշխատում, գգուանքներ թափելով երեխայի վրայ, ծածկել վիրովմունքը, որ յանկարծ տիրել էր սրտին։

Սիդոնին, ընդհակառակը, կարծէք այլ ևս ոչինչ չէր յի-

շում ու միմիայն արհամարհանք էր զգում այդ մեղկ ու հեզ ընաւորութեան վերաբերմամբ։ Բացի այդ, ուրիշ շատ հոգսեր ունէր նա։

Նրանց կարմիր դահլիճի երկու պատուհանների արանքում Ռիսլէրը վերջերքը մի դաշնամուր էր դնել տուել։

Երկար տատանմունքներից յետոյ, Սիդոնին վճռել էր երգեցողութիւն սովորել, մտածելով, որ մի քիչ ուշ է դաշնամուրի դասեր առնելու համար, և շաբաթը երկու անգամ մի սիրուն սենտիմենտալ շիկահեր կին, տիկին Դօրսօն, դալիս էր երգեցողութեան դասեր տալու նրան կէսօրից մինչև ժամի մէկը։ Եւ չրջակայ բակերի լռութեան մէջ նրա սենեակի բաց պատուհաններից լսւում էին նրա երկար ու ձիգ և տան անդամ կրկնուող ա... ա... ա...-ները ու օ... օ... օ...-ները, գիշերօթիկ դպրոցի կերպարանք տալով գործարանին։

Եւ յիրաւի իսկական աշակերտուհի էր այդ վարժութիւններ անողը,—մի անփորձ ու երերուն մատաղ հոգի, լի դաղանի խղձերով և կարօտ ամեն ինչ նոր սովորելու և ճանաչելու, որպէս զի կատարեալ կին դառնար։ Վատն այն էր միայն, որ նրա փառասիրութիւնը շատ վայրիվերոյ էր։

—Կլէր Ֆրօմենը դաշնամուր է ածում. ես էլ երգել կը սովորեմ... Նրան գողտրիկ ու նրբաճաշակ կին են համարում. ես էլ ուզում եմ, որ նոյն բանն ասեն իմ մասին։

Առանց մի բոպէ լուրջ միտք ունենալու որ և է բան սովորել, նա անց էր կացնում իր կեանքը խանութ-խանութ, վաճառանոցէ-վաճառանոց վազելով. «Ի՞նչ են հագնելու այս ձմեռ»։ Նրան հրապուրում էին ցոյց դրուած չքեղ բաները, այն ամենը, ինչ որ զարկում է անց ու դարձ անողների աչքին։

Այն կեղծ մարդարիտներից, որ նա այնքան երկար ժամանակ բանեցրել էր իր ձեռքում, ինչ-որ մի բան մնացել էր նրա մատների ծայրին,—մի քիչ նրանց չինծու սատափից, նրանց փուչ գիւրաբեկութիւնից, նրանց երեսհան փայլից։ Նա ինքն էլ իսկապէս մի կեղծ մարդարիտ էր,—կլոր, փայլուն ու լաւ սաղացրած,—որից ամբողջը կարող էր խաբուել. իսկ Կլէր Ֆրօմենը իսկական մարդարիտ էր՝ ճոխ ու ժիանդամայն համեստ շողքով, և երբ մարդ նրանց տեսնում էր միասին, տարբերութիւնը իսկոյն աչքի էր ընկնում։ Մարդ դուշակում էր, որ մէկը միշտ մարդարիտ է եղել, բոլորովին մանր մարդարիտ՝ մնանկութեան օրերում ու այնուհետև ամած, մնծանալով գողտրիկութեան ու չնորհալիութեան տարրերով, որոնք հազուագիւտ ու անգին ընաւորութիւն են դարձրել նրան։ Միւսը, ընդհակառակը, դուրս էր եկել փարիզ կոչուող հսկայական կեղծ

գոհարագործի արհեստանոցից, գոհարագործի, որ հազար ու մի մանրուքներ ունի, բոլորն էլ հիանալի, բոլորն էլ փայլուն, բայց քիչ գիմացկուն, վատ սազայրած ու վատ իրար կցած,—մի խօսքով նա իսկական արդիւնք էր այն արհեստի, որ երբեմն բանեցրել էր և ինքը։

Սիդոնին ամենից շատ նախանձում էր Կլէրին նրա երեխայի, այդ չքեղազարդ մի մատ արարածի համար, որ ժապաւէնների մէջ թաղուած էր օրօրոցի վարագոյրներից սկսած մինչ։ ծծմօր գլխանոցը։ Նա չէր մտածում համբերութեամբ ու անձնուրացութեամբ լի քաղցր պարտականութիւնների, անքուն գիշերների երկար օրօրների և հրճուալից զարթումների մասին։ Ո՛չ, երեխայի մէջ նա տեսնում էր միայն զբօսանքը... Ո՞րքան սիրուն բան է, երբ փողոցների յորձանքում անցնում է մի ջահել մայր, որին հետևում է սաւառուն ժապաւէնների ու երկար փետուրների այդ պաճուճանքը։

Իսկ ինքը տանից դուրս գալիս կարող էր ընկեր ունենալ միմիայն իր ծնողներին կամ ամուսնուն։ Նա գերադասում էր միայնակ դուրս գալ։ Ո՞րքան ծիծաղելի կերպով էր արտայայտում Ռիպերը իր սէրը,—խաղում էր կնոջ հետ, ինչպէս երեխաները խաղում են տիկնիկի հետ, կճմռում էր թշերն ու կըզակը, պատյա-պատյա էր գալիս չորս կողմը՝ «հմ, հմ» գոռալով, և կամ թէ իր խոշոր քաղցրացած աչքերով նայում էր նրան սիրող ու երախտագէտ շան նման։ Սիդոնին ամօթահար էր լինում այդ ցիմարավարի սէրից, որ նրան դարձնում էր մի տեսակ խաղալիք, յախճապակէ մի դարակազարդ։ Ինչ վերաբերում էր ծնողներին, նրանցից նա քաշւում էր այն մարդկանց առաջ, որոնց հետ ուզում էր տեսնուել, և այդ պատճառով հարսնիքից յետոյ իսկոյն նա գրեթէ բոլորովին դադարեց նրանցից, մի փոքրիկ տուն վարձելով նրանց համար Մօնմարթրում։ Այդ միանգամից կտրեց գ. Շեբի յաճախակի արշաւանքները իր երկարափէշ սիւրտուկով և անվերջ այցելութիւնները տիկին Շեբի, որ սկսելով նորից բարօր կեանք վարել, դարձել էր աւելի պէս շատախօս ու անգործ։

Սիդոնին շատ կ'ուզէր մի և նոյն կերպով հեռացնել իրանից նաև Դելօրէյներին, որոնց գրացութիւնը նեղում էր նրան։ Բայց Մաւէն կենարօնական տեղ էր ծեր գերասանի համար, որովհետև մօտիկ էր բուլվարների թատրոններից. բայց այդ, Դեգլիբէն, նստական կեանք վարող բոլոր մարդկանց նման, շատ էր վարժուել իր ծանօթ հորիզոնին, և նրանց տխուր բակը, որ ձմեռները մթնում էր ժամի չորսից ի վեր, թւում էր նրան իբր մի բարեկամ, մի ծանօթ դէմք, որ երբեմն, լուսաւորուելով

արեւից, կարծես ժպտում էր նրա հասցէին։ Սիդոնին, չը կարողանալով գլխից հեռացնել նրանց, վճռել էր այլ ևս չը տեսնուել հեռաները։

Վերջ ի վերջոյ, նրա կեանքը շատ տխուր կ'ընթանար ու միայնակ, եթէ չը լինէին այն զուարճութիւնները, որ նա ըստանում էր չնորհիւ Կլէր Ֆրօմանի։ Եւ նա ամեն անգամ բարկութիւնից փրփրում էր, մտածելով.

—Մթթէ ամեն բան նրանից եմ ստանալու միշտ։

Եւ երբ, ճաշի վրայ, ներքևի յարկից օթեակի մի համար էին ուղարկում նրան կամ երեկոյթի հրաւէր, նա հաղնուելիս հրճւում էր, որ կարող է իրան ցոյց տալ, բայց մի և նոյն ժամանակ միայն այն էր մտածում, թէ ինչպէս գեղանովը տայ իր տխրամի

նակազարդ հովհարի համար։ Հասարակական զուարճատեղերի տափակութիւնը և պատառների կարմրութիւնն ու ոսկեզօծանքը իսկական ճոխութիւն էր թւում նրան։ Այդ միջավայրում նա փթթազարդ վայլում էր իբրև մի թղթաչէն սիրուն ծաղիկ հիւսկէն ծաղկարանի մէջ։

Մի երեկոյ, Պալէ-Ռոյալում, մի ժողովրդականութիւն վայելող թատերական գրուածքի ներկայացման ժամանակ, Սիդոնիի շարժումները, հագուստը, ծիծաղելու և նայելու ձևը մեծ ուշադրութիւն գրաւեցին հանդիսատես կանանց կողմից,—այդ նկարիչների վրձինին արժանացած, խոշորացուցային դլխարկներով ու ահագին հովհարներով, հռչակաւոր տիկինների կողմից, որոնց դեղդրած գլուխները զգեստի իրանքի բացուածքի մէջից դուրս էին ցցւում բէնիւարի օթեակների ստուերից իբրև հաղիւ հաղ կենդանացած պատկերներ։ Դահլիճի բոլոր դիտակները, զեկավարուելով մագնիսական հոսանքից, որ այնքան զօրեղ է ջահի լոյսով, քիչ-քիչ ուղղուեցին դէպի նրա նստած օթեակը։ Կէրը վերջ ի վերջ դադարեց սկսեց վատ զգալ իրան այդ բանից և կամացուկ փոխեց տեղը իր ամուսնու հետ, որ դժբախտաբար այդ երեկոյ նրանց հետ էր։

Ժորժը, երիտասարդ ու գողարիկ, նստած Սիդոնիի կողքին, այնպիսի տպաւորութիւն էր գործում, կարծես նրա բնական զուգակիցը լինէր, մինչդեռ նրանց յետևին Ռիսլէրը, վիշտ վերին աստիճանի մեղմ ու նսեմ, բոլորովին իր տեղումն էր թւում Կէր Ֆրօմենի կողքին, որ իր փոքր ինչ մթագոյն հագուստի մէջ կարծես ծպտուած լինէր, ինչպէս մի ազնիւ կին Օպէրայի պարահանդէսում։

Դուրս գալիս՝ երկու ընկերակիցներից խրոքանչիւրը կուռը տուեց իր հարեանուհուն։ Օթեակների դռնապան կանչեց մէկը ասաց Սիդոնիին, խօսելով Ժորժի մասին,—«Ձեր ամուսինը...», և Սիդոնիի դէմքը խսկոյն պայծառացաւ ուրախութիւնից։

Ձեր ամուսինը։

Այդ հասարակ խօսքը բաւական էր նրան տակնուվրայ անելու և սրտի խորքումը մի ամբողջ կոյտ վատ խորհուրդներ իրար տալու համար։ Մինչ նրանք անցնում էին միջանցքներով ու ֆոյէով, նա նայում էր Ռիսլէրին ու տիկին «Շորշին», որոնք գնում էին առջևից։ Կէրի գողարիկութիւնը՝ ոչնչացած, զգեստկացած էր թւում նրան Ռիսլէրի բիրտ քայլուածքի ֆնարհիւ։ Նա ասում էր ինքն իրան՝ «Ո՛րքան տգեղացնում է երևի դա ինձ, երբ մինչ ժամ ենք գալիս միասին»... Եւ նրա սիրտը սկսում էր թնդալ, երբ նա մտածում էր, թէ ինչ սիրուն, երջանիկ ու

հիացմունք ազդող զոյգ կը կազմէին ինքն ու Ժորժ Ֆրօմենը, որի կուռը դողդողում էր այդ բոլէին իր կռան տակ։

Եւ երբ կապոյտ կառքը մօտեցաւ թատրոնի դռանը Ֆրոմենները տանելու համար, առաջին անգամը նա սկսեց մտածել, թէ իսկապէս այդ կինը խլել էր իր տեղը և թէ ինքը կատարեալ իրաւունք ունի աշխատել նորից ձեռք բերել այդ տեղը։

III

Բլօնդել փողոցի զարեջրատունը։

Ամուսնանալուց յետոյ Ռիսլէրը ձեռք էր քաշել զարեջրատունից։ Սիդոնին ուրախ կը լինէր, եթէ նա երեկոները տանից դուրս գար, գնար մի որ է ընտիր ժողովարան, ժամանակ անցներ հարուստ ու լաւ հագնուած մարդկանց շրջանում. բայց այն միտքը, թէ իր ամուսինը կարող էր վերադառնալ չիբուխների ծխով լի զարեջրատունը, հին ժամանակուայ բարեկամների, Սիդոնիի մունդի, Դելօբելի ու իր հօր մօտ, ստորացնում էր Սիդոնիին ու անբախտացնում։ Եւ Ռիսլէրը այլ ևս չը գնաց այնտեղ, թէև հեշտ բան չէր այդ նրա համար։ Նրա համար գրեթէ հայրենիքի յիշատակ էր այդ՝ հին Փարիզի մի յետ ընկած անկիւնում գտնուող զարեջրատունը։ Կառքերի սակաւութիւնը, ներքին յարկի բնակարանները՝ բարձր ու վանդակապատ լուսամուտներով, գեղագործական ապրանքների ու գեղանկութիւնների թարմ հոտը՝ այդ փոքրիկ Բլօնդել փողոցին մի հեռաւոր նմանութիւն էին տալիս Բաղէլի կամ Ցիւրիխի որոշ փողոցների հետ։ Այդ զարեջրատունը պատկանում էր մի չվէյցարացու և լիքն էր լինում չվէյցարացիներով։ Դուռը բացուելիս, չիբուխների ծխի մշուշի և հիւսիսային բարբառների ծանր մթնոլորտի միջով երևում էր մի ցածիկ ու ընդարձակ սենեակ առաստաղի գերաններից կախուած խողապուխներով, շարէշար զարեջրատակառներով, մի թզուկի բարձրութեամբ շաղ տուած փայտի թեփով և հաւանաբար չուեսեղանի վրայ մեծ-մեծ ապցանամաններում դարսած շամպանիանման վարդագոյն գետնախնձորներով ու զամբիւղների մէջ լցրած նոր թխած աղի բrեtցելներով։

Քսան տարի շարունակ Ռիսլէրն ունէր այդտեղ իր երկար չիբուխը, որի վրայ գրուած էր իր անունը և որ պահուում էր մշտական յաճախորդների չիբուխակալում, և իր սովորական սեղանը, որի շուրջը նստում էին մի քանի համանուն ու բարեկամ հայրենակիցներ, որոնք, առանց հանկանալու, բայց հիացմունքով

քով, լսում էին Շէրի և Դելօրէլի անվերջ վիճաբանութիւնները։ Երբ Ռիպլերը դադարեց գաբելջրատուն դնալուց, այդ վերջին երկուսն էլ ոտները կորեցին այնտեղից, մի քանի յարգելի պատճառներով։ Նախ և առաջ, պ. Շէրը շատ հեռու էր կենում այժմ։ Իր զաւակների մեծահոգութեան շնորհիւ նա, վերջապէս, իրականացրել էր իր ամբողջ կեանքի երազը։

—Երբ որ հարստանամ, ասում էր միշտ այդ փոքրիկ մարդը Մառէյի տխուր բնակարանում, սեփական տուն կ'ունենամ Փարիզի մօտակայքում, գրեթէ գիւղում, մի փոքրիկ պարտէզով, որ ինքս իմ ձեռքով կը փորեմ ու կը ջրեմ։ Այդ իմ առողջութեանը աւելի օգուտ կը բերի, քան մայրաքաղաքի յուզմունքները։

Եւ ահա նա ունէր այժմ իր սեփական տունը, բայց, կարող էր հաւատալ խօսքիս, որ նա ուրախ չէր զգում իրան այնտեղ։

Մօնմաժուն էր այդ, Փարիզի շրջապատային երկաթուղու գծի վրայ. «փոքրիկ շալէ, պարտէզով», ասում էր ստուարաթղթէ քարտէրի ցուցանակագիրը, որի մեծութիւնը մօտաւորապէս ճիշտ գաղափար կարող էր տալ կալուածքի ծաւալի մասին։ Որմաթղթերը նոր էին և գեղջկային, ներկերը բոլորովին թարմ, իսկ վայրի խաղողից հիւսուած տաղաւարի կողքին դրուած պարտէզ ջրելու տակառը ջրի աւազանի դեր էր խաղում։ Աւելորդը այդ բոլոր առաւելութիւններին և այն, որ միմիայն մի ցանկապատ էր բաժանում այդ դրախտը մի ուրիշ բոլորովին նոյնանման «պարտէզով շալէից», ուր ապրում էին գանձապետ Սիգիզմունդ Պլանուսն ու իր քոյրը։ Տիկին Շէրի հարսը այդ մի թանկագին հարեւանութիւն էր։ Երբ խեղճը ճանձրանում էր, վերցնում էր մի կոյտ ձեռագործ ու կարկատաններ և գնում օրիորդ Պլանուսի տաղաւարը, ուր շլացնում էր այդ պատուաբեր օրիորդին, պատմութիւններ անելով իր փառաւոր անցեալի մասին։ Դժբախտաբար նրա ամուսինը, պ. Շէրը չէր կարողանում զուարճութիւն գտնել այդպիսի բաներով։

Դեռ սկզբում ոչինչ. ամեն ըսն լաւ էր գնում։ Ամառուայ թունդ ժամանակն էր, և պ. Շէրը, միշտ սիւրտուկը հանած, նոր տունը կարդի էր բերում։ Ամենափոքրիկ մեթը, որ պէտք էր վնում խփել, առեթ էր տալիս դատարկ դատողութիւնների ու անվերջ վիճաբանութիւնների։ Նոյնն էր և պարտէզի վերաբերեալ, մշտաղալար սիզամարգերով և թաւուտներով հովանաւորուած ոլորապտոյտ ծառուղիներով։ Բայց այդ անպիտան թաւուտները շատ դանդաղ էին աճում։

—Է՜հ, ուզում եմ մրգատու պարտէզ չինել, ասում էր անհամբեր Շէրը։

Եւ ահա նա երազում է ունենալ եղերքներին կանաչեղէն ցանած լոբու մարգեր և պատերի կողքին անկած գեղձենիներ, ու ամբողջ առաւօտները փորում է պարտէզը, մտաղրաղ կերպով կիտելով յօնքերը և կնոջ առաջ ճակատը ցուցամոլաբար սրբելով, որպէսզի նրան ասել տայ.

—Դէ մի քիչ հանգստացիր, այ մարդ... սպանելու հօ չեմ քեզ։

Վերջ ի վերջոյ, պարտէզը խառը պարտէզ եղաւ—կէսը ծաղիկ, կէսը պտուղներ, մասամբ ծառատան, մասամբ բանջարանոց, և պ. Շէրը, ամեն անգամ Փարիզ գնալիս, անպատճառ զարդարում էր կուրծքը՝ խրելով կոճակի մէջքի մէջ իր ծաղկանոցից քաղած մի վարդ։

Քանի որ լաւ եղանակներ էր դեռ անում, մարդ ու կնիկ հա հիանում էին ամրոցների յետևում մայր մտնող արեւի վերջալոյսից, ցերեկների երկարութիւնից, գիւղական հրաշալի օդից։ Երբեմն-երբեմն երեկոները, բայց պատուհանների մօտ. նստած, նրանք երգում էին երգեցիկ, և Ֆէրդինանդը, դիտելով չրջապատային երկաթուղու լապտերների հետ միաժամանակ փայլել սկսող աստղերը, քնարերգական տրամադրութեան մէջ էր ընկնում... Բայց ինչ տխրութիւն պատեց նրանց, երբ սկսուեցին անձրևները և նրանք այլ ևս չէին կարողանում մնից դուրս գալ։ Տիկին Շէրը, իբր իսկական փարիզուհի, սկսեց ափսոսանքով յիշել Մառէյի փոքրիկ փողոցները ու իր գնալ-գալը Բրանմոնտոս շուկան և թաղի վաճառատունները։

Լուսամուտը նրա դիտանոցն էր և կարուձի տեղը, և նա ապակու միջով դիտում էր չարունակ իրանց փոքրիկ պարտէզը,—ուր սերմ ընկած պատատուկներն ու ծաղկաթաղ հնդկակոտիմները ցանկապատից պոկ եկած յետ էին քաշուել յոգնած տեսքով,—երկաթուղու մշտաղալար հողաթմբերի երկար և ուղիղ գիծը և մի քիչ հեռուում, Փարիզի հանրակառքերի կայարանը, որոնց բոլոր կայարանները հրապուրիչ տառերով գրուած էին ջնարակուած պատերի վրայ։ Ամեն անգամ, երբ այդ հանրակառքերից մէկը տեղիցը չարժուում էր ճանապարհ ընկնելու համար, նա աչքը ման էր ածում յետևից,—ինչպէս Կայէնտում կամ Նուամէայում գտնուող մի ծառայող դիտում է Ցրանսիա վերադարձող շոգենաւը,—երևակայութեամբ գնում էր հետը ու գիտէր թէ որ կէտում նա կանգ կ'առնի և որ կէտում նա ծանրծանր պտոյտ կը տայ՝ անիւներով քերելով խանութների պատուհանները...

Իսկ պ. Շէրը զարհուրելի էր դարձել, փակուած մնալով տանը։ Նա այլ ևս չէր կարողանում աշխատել պարտէզում։ Կիրակի օրերը ամրութիւնների պատնէշը ամայի էր բոլորովին. այլ ևս հնարաւորութիւն չը կար զբօսնելու խոտի վրայ նախաճաշող բանուոր ընտանիքների մէջ և գնալու մի խմբից միւսը, իրը դրացի, ասղագործ հողաթափներով և մօտակայքի հարուստ կալուածատէրի հեղինակաւորութեամբ։ Այդ բանի պակասն էր առանձնապէս զգում այդ մարդը, որ մեռած էր նրա համար, որ իրանով զբաղուեն։ Այնուհետև անգործ մնալով և չունենալով մէկը, որի առաջ պարծենար, և որ լսէր նրա ծրագիրները, նրա պատմութիւնները և Օղէանի գուբսին պատահած արկածը,— այդպիսի մի արկած էլ, գիտէք, իրան էր պատահել երիտասարդ հասակում,—դժբախտ Ֆէրդինանդը սկսեց յանդիմանութիւններ թափել իր կնոջ գլխին։

—Աղջիկդ մեզ քշել է Փարիզից... Աղջիկդ սմաչում է մեզնից...

Էլ ուրիշ խօսք չէր լսւում. հէնց հա «աղջիկդ... աղջիկդ... ու աղջիկդ...»։ Որովհետև, լի զայրոյթով Սիդոնիի դէմ, նա հրաժարուում էր նրանից, կնոջ վրայ միայն գցելով այդ հրէշաւոր և փչացած զաւակի պատասխանատուութիւնը։ Եւ խեղճ կնիկը կատարեալ սիսիփանք էր զգում, երբ ամուսինը նստում էր կայարանի հանրակառքերից մէկը, որպէս զի գնար դտնէր Դըլօբէլին, որ միշտ պարապ ժամանակ ունէր հեռը ման գալու, և սիրտը հովացնէր, պատմելով բոլոր կսկիծները իր փեսայի ու աղջկայ դէմ։

Հռչակաւոր Դըլօբէլն էլ չարացած էր Ռիսլէրի դէմ, և նրա մասին խօսելիս սիրում էր ասել, թէ նա «ընկերամոտ մարդ է»։

Մեծ մարդը յոյս ունէր նոր ընտանիքի անբաժան մասը կազմել, դառնալ այդ ընտանիքում ազնահանդէսների կազմակերպիչ, ճաշակի դատաւոր։ Իսկ, ընդհակառակը, Սիդոնին սկսել էր նրան շատ տան ընդունել և Ռիսլէրը մինչև անգամ այլ ևս դարձրաձայն չէր յայտնում իր արտունչը, և ամեն անգամ Ռիսլէրին պատահելիս, չափազանց սիրալիր ու շողոքորթ կերպով էր վարում հեռը, որովհետև շատով կարօտութիւն էր ունենալու նրանից։

Ցանկանալով խելացի թատրոնապետի ապասելուց ու տեսնելով, որ ոչ ոք չէ առաջարկում իրան՝ տարիների ընթացքում ակնկալած դերը, Դըլօբէլը վճռել էր մի թատրոն գնել ու անձամբ շահագործել։ Փողի կողմից նա յոյս ունէր Ռիսլէրի վրայ։

Հէնց այդ ժամանակները Տամպլ բուլվարում մի փոքրիկ թատրոն էր ծախւում թատրոնապետի անանկութեան պատճառով։ Դըլօբէլը խօսեց այդ բանի մասին Ռիսլէրի հետ սկզբում շատ անորոշ կերպով, ենթադրական ձևով.—«Շահաւէտ բան կարող է լինել»։ Ռիսլէրը լսում էր իր սովորական պաղարիւնութեամբ, ասելով «ճիշտ որ, այդ շատ լաւ բան կը լինէր ձեզ համար»... Իսկ յետոյ, երբ Դըլօբէլը բացուեց ու ուղղակի ասաց, նա, չը համարձակելով «չէ» ասել, պաշտպանուում էր՝ «կը մտածեմ... յետոյ կը տեսնենք... չէ՞ չեմ ասում...» և այլն այդպիսի անորոշ բառերով. բայց ի վերջոյ արտասանեց այս չարաբաստիկ խօսքերը՝ «պէտք է տեսնել նախահաշիւը»։

Մի ամբողջ շաբաթ դերասանը գլուխ էր ջարդում, ծրագիրներ կազմում, թուանշաններ շարում իրար կողքի, նստած կնոջ ու աղջկայ արանքին, որոնք զմայլած դիտում էին նրան և հարբում այդ նոր երազից։ Տնուորներն ասում էին՝ «պ. Դըլօբէլը թատրոն է առնում»։ Բուլվարում, դերասանների յաճախած սրճարաններում, էլ ուրիշ խօսակցութեան նիւթ չը կար։ Դըլօբէլը չէր թագցնում, որ ինքը փողատէրի տեղ է արել և այդ բաւական էր, որ նրան շրջապատէին մի խումբ անպաշտօն դերասաններ, հին ընկերակիցներ, որոնք դալիս էին ու ընտանեբար խփելով ուսին յիշեցնում նրան։ «Գիտես, բարեկամ...»։ Նա խոստանում էր դեր տալ, նախատաշում էր սրճարանում, այնտեղ նամակներ էր գրում, մատների ծայրով ողջունում էր ներս մտնողներին, այս ու այն անկիւնում տաք-տաք խօսում էր զամանողներին հետ, և արդէն երկու թերմաչ հեղինակներ նազան մարդկանց հետ, և արդէն երկու թերմաչ հեղինակներ կարդացել էին նրա մօտ մի դրամա եօթ տեսարանով, որ նրա ներկայացումների բացման համար այնպէս յարմար էր, «ինչպէս մի ձեռնոց ձեռի համար»։ Նա ասում էր՝ «իմ թատրոնը» և նրան նամակ ուղարկելիս հասցէն գրում էին «Պարոն թատրոնապետ Դըլօբէլին»։

Ծրագիրն ու նախահաշիւը պատրաստելուց յետոյ՝ նա գնաց գործարանը Ռիսլէրին տեսնելու։ Ռիսլէրը, այդ բոպէին շատ զբաղուած լինելով, ժամանակ եղաւ պատահելու Բլօնդէլի փողոցում, և նոյն երեկոյ Դըլօբէլը, առաջինը գալով դարձրաւն, տեղ բռնեց իրանց հին սեղանի մօտ և, մի ման

զանի վրայ և կարդում էր զանազան շարժումներ անելով ձեռքերով, գլխով ու շրթունքներով։

Հրաշալի, աննման գործ էր։ Արդէն նա երևակայում էր իրան՝ իբ սեփական թատրոնում ներկայացնելիս,—որովհետև այդ ամենաէական կէտն էր,—յատկապէս իբ համար յօրինուած դերեր, իբ ձիրքին արժանի դերեր, որոնց մէջ նա ահագին տպաւորութիւն է գործելու...

Ցանկարծ դուռը բացուեց և չիբուխների ծխի մէջ երևաց պ. Շեբը, որ նոյնքան զարմացած ու դժգոհ մնաց Դելլօբէլին տեսնելով, որքան և Դելլօբէլը՝ նրան տեսնելով։ Նա առաւօտեան դրել էր փեսային, որ հետը շատ լուրջ խօսելիք ունի և կը սպասի նրան գարեջրատանը։ Պատուի հարց էր այդ, որ պէտք է վճռէին միայն տղամարդիկ, իրար մէջ խօսելով։ Այդ պատուի հարցը իսկապէս նրա մէջ էր կայանում, որ պ. Շեբը թողել էր Մօնռուժի փոքրիկ տունը և ամենաթունդ առևտրական թաղում, Մայլ փողոցում վարձել մի վաճառատուն իբ վրայի միջնայարկով... Մի վաճառատուն... Այո, վաճառատուն... Ու յետոյ սկսել էր մի քիչ վախ զգալ իբ արած համարձակ քայլից, անհանգստանալով, թէ ինչպէս կը վերաբերուի այդ բանին իբ աղջիկը, մանաւանդ որ վաճառատունը շատ աւելի թանգ արժէր, քան Մօնռուժի տունը և դեռ մեծ նորոգութիւններ պէտք էր անել մէջը՝ հէնց տեղափոխուելիս։ Վաղուց ի վեր ճանաչելով իբ փեսայի բարութիւնը, պ. Շեբը վճռել էր նախ վրայ քցել այդ ընտանեկան յեղափոխութեան պատասխանատուութիւնը։ Եւ ահա Ռիսլէրի տեղ Դելլօբէլին էր նա տեսնում։

Նրանք յօնքերի տակից խեթ-խեթ նայեցին իրար, միևնոյն լակամանի կողքին պատահած երկու չար նման։ Նրանցից իւրաքանչիւրը հասկացաւ իսկոյն, թէ ինչի էր սպասում միւսը, և նրանք չը փորձեցին խաբս տալ իրար։

—Փեսան այստեղ չէ, հարցրեց պ. Շեբը, աչքի պոչով նայելով սեղանի վրայ փռած թղթերին և ստորագծելով «փեսան» խօսքը, լաւ ցոյց տալու համար, որ Ռիսլէրը իրան մարդն էր և ոչ թէ մի ուրիշին։

—Ես սպասում եմ նրան, պատասխանեց Դելլօբէլը, հատելով թղթերը։

Շրթունքները իրար հաստ տուած, նա աւելացրեց վեհ, խորհրդաւոր և, ըստ սովորականին, թատրոնական կերպով.

—Շատ կարևոր բան ունեմ հետը։

—Ես էլ նմանապէս... հատատաց պ. Շեբը, որի ճակատը

գլխի վրայ մնացած երեք հատ մազերը ցցուեցին խոզուկի փշերի նման։

Եւ այդ ասելով, նա եկաւ նստեց Դելլօբէլի կողքի բազմոցի վրայ ու նրա պէս պահանջեց մի ման գարեջուր ու երկու բաժակ, ու յետոյ, ձեռքերը գրպանը խրած, մէջքը պատին դէմ տուած ու պինդ տեղումը նստած, սկսեց սպասել։ Այդ երկու իրար կողքի դրուած և միևնոյն բացակայ անձի համար պահանջուած դատարկ բաժակները կարծես կռուի էին կանչում միմեանց։

Ռիսլէրն էլ չը կար ու չը կար։

Մեր երկու լուռ ու մունջ գարեջուր խմողները արդէն սկսում էին համբերութիւնները կորցնել, անհանգիստ շարժւում էին նստած տեղներումը և նրանցից իւրաքանչիւրը սպասում էր, թէ միւսը կը ձանձրանայ վերջապէս ու կ'երթայ։

Ի վերջոյ, նրանք չը կարողացան զսպել իրանց դժգոհութիւնը և, բնականաբար, կուժն ու կուլան կոտրուեց խեղճ Ռիսլէրի գլխին։

—Ի՞նչ անբաղաքավարութիւն է. կարելի՞ է միթէ այդպան երկար սպասեցնել իմ հասակի մի մարդու, սկսեց պ. Շեբը, որ միմիայն այսպիսի դէպքերում էր առաջ բերում իր մեծ տարիքը։

Պ. Դելլօբէլը վրայ բերեց.

—Կարծեմ, ճիշտ որ, ձեռ է առել մեզ։

—Անշուշտ ճաշին հիւրեր է ունեցել պարոնը, աւելացրեց պ. Շեբը։

—Եւ ինչ հիւրեր... արհամարհոտ եղանակով բացականչեց հոչակաւոր Դելլօբէլը, որի մէջ սկսել էին զարթնել կսկծալի յիշողութիւններ։

—Բանը նրանումն է... շարունակեց պ. Շեբը։

Նրանք մօտեցան իրար ու սկսեցին խօսել։ Երկուսն էլ ոչ ունէին Ռիսլէրի ու Սիդոնիի դէմ։ Սրտները բաց արեցին։ Այդ Ռիսլէրը, չը նայելով իր միամիտ մանկական կերպարանքին, իսկապէս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի հատոր, մի նորելուկ։ Նրանք ծիծաղում էին նրա արտասանութեան, նրա չնչաք ու չնորհքի վրայ, և անում էին նրա սովորական տարօրինակ ձեռքերը։ Յետոյ, նրանք խօսք բաց արին նրա ընտանեկան կեանքի մասին և, ձայները ցածացնելով, սկսեցին գաղանիքներ յայտնել իրար ու մտերմաբար ծիծաղել, նորից բարեկամ դարձած։

Պ. Շեբը շատ հեռու էր գնում.—Թող զդոյշ կենայ. այնքան յիմար գտնուեց, որ թողեց որ ծնողներս հեռանան մեր քան յիմար գտնուեց, որ թողեց որ ծնողներս հեռանան մեր գաւակից. եթէ գլխին մի բան դարս լինի, մեզ մեղադրելու

ամենեին տեղիք չունի։ Եթէ մի աղջիկ աչքի առաջ չունի այ
ես իր ծնողների բարի օրինակը, հասկանում էք...

—Անշուշտ... անշուշտ... ասում էր Դելօրէլը. մանաւանդ
որ Սիդոնին շատ կարէն է դարձել... Ասենք, ինչ պէտք է լի
նի որ։ Ռիսլէրը կը կրի միայն իր արժանի պատիժը։ Մինչ
նրա հասակն ունեցող մարդը պէտք է... Սը՞ս եկաւ։

Ռիսլէրը մի բոպէ առաջ մտել էր դարեջրատունը և մո
տենում էր խօսակիցներին, աջ ու ձախ սղմելով ծանօթների
ձեռքը։

Սկզբում մի քանի բոպէ երեք բարեկամները վատ զգացին
իրանց։ Ռիսլէրը ներողութիւն խնդրեց, ինչպէս որ կարող էր։
Տանն էր ուշացել, Սիդոնին հիւրեր ունէր,—Դելօրէլը սեղանի
տակին հրեց պ. Շէբի ոտը,—և այդ բաները ասելիս խեղճ
մարդը շուարած մտածում էր, թէ դատարկ բաժակներից որ
մէկի առաջը պէտք է նստի ինքը։

Դելօրէլը մեծահոգի գտնուեց։

—Դուք խօսելիք ունէք, պարոններ, խօսեցէք առանց քա
շուելու։

Եւ քթի տակին ասաց, աչքով սնելով Ռիսլէրին.

—Թղթերը բերել եմ։

—Թղթերը... բացականչեց Ռիսլէրը շուարած։

—Նախահաշիւը... շշնջաց դերասանը։

Այնուհետև, ցոյց տալով, թէ ինքը ամենեին չէ ուզում
լսել նրանց խօսակցութիւնը, նա քաշուեց մի անկիւն ու սկսեց
կարդալ իր թղթերը, գլուխը կոթնած ձեռներին ու ձեռները
դրած ականջներին։

Նրա կողքին, միւս երկուսը խօսում էին, սկզբում ցած
ձայնով, յետոյ աւելի բարձր, որովհետև պ. Շէբի դիլ ու ծղրտան
ձայնը չէր կարող երկար ժամանակ չափաւորուել...—Ինքը հո
այն հասակում չէր, որ կենդանի թաղուէր յետ ընկած անկիւ
նում... Նա ձանձրութիւնից կը մեռնէր Մօնռուժում... Մայլ ու
Սանտիէ փողոցները, առևտրական թաղերի աղմուկն ու կեն
դանութիւնը, ահա թէ ինչ էր պէտք նրան։

—Այո, բայց վաճառականը... ինչի համար էր... վախվխե
լով համարձակուեց նկատել Ռիսլէրը։

—Ինչի համար է վաճառականը... Ինչի համար է վաճա
ռականը, կրկնում էր պ. Շէբը, զատկական ձուի պէս կարմ
բելով և բարձրացնելով ձայնը, որքան ուժումը կար... Որովհե
տև ես վաճառական եմ, պարոն Ռիսլէր։ Վաճառական և վաճա
ռականի որդի... Օ՜հ, գիտեմ ինչ էք ասելու։ Թէ առևտուր
չունեմ, չէ... Բայց ով է մեղաւորը... Եթէ այն մարդիկ, որոնք

ինձ, ինչպէս մի զառամեալ ծերունու, փակել էին Մօնռուժում,
Բիսէարի անկիւնացի մօտերքում, դրա փոխարէն խելք արած
լինէին դրամագլուխ տալու ինձ մի որ և է առևտրական ձեռ
նարկութեան համար...—Այդտեղ Ռիսլէրին յաջողեց լռեցնել
և նրան այնուհետև լսում էին միայն կցկտուր խօսքեր՝ «...աւե
լի յարմար վաճառատուն... բարձր առաստաղով... օդը շատ է...
ապագայի ծրագիրներ... հոկայական գործ... կը խօսեմ, երբ որ
ժամանակը գայ... շատերը կը զարմանան»։ Դելօրէլը լսելով հան
դերձ այդ հատ ու կտոր խօսքերը, հետզհետէ աւելի ու աւելի էր
խորասուզուում իր թղթերի ընթերցման մէջ ու եռանդուն կեր
պով մէջքը դէմ անում նրանց, լսել չուզող մարդու պէս։
Ռիսլէրը, շուարած, երբեմն-երբեմն մի կուռ գարեջուր էր
խմում մի բան ասած լինելու համար։ Ի վերջոյ, երբ պ.
Շէբը հանդատացաւ և ոչ առանց պատճառի, փեսան ժպտալով
դարձաւ դէպի հուշկապուտ Դելօրէլը, որ հանդիպեց նրան իր
սաստ ու խիստ հայեացքով, որ կարծես ասելիս լինէր՝ «Իսկ
ես...»։

—Ա՜խ, Տէր Աստուած... ճիշտ որ... մտածեց խեղճ
մարդը։

Եւ իսկոյն փոխելով աթոռն ու բաժակը, նա եկաւ նստեց
դերասանի առաջը. բայց պ. Շէբը չը գիտէր այնպէս պահել
իրան, ինչպէս Դելօրէլը։ Փոխանակ համեստօրէն հեռու քա
շուելու, նա մօտեցրեց իր բաժակը ու միացաւ նրանց խմբին,
այնպէս որ մեծ մարդը, որ չէր ուզում նրա ներկայութեամբ
խօսել, երկրորդ անգամ հանդիսաւոր կերպով դրպանը դրեց
Թղթերը, ասելով Ռիսլէրին.

—Յետոյ կը տեսնենք։

Շատ յետոյ, իսկապէս, որովհետև պ. Շէբը այսպէս էր
դատել.

«Փեսաս շատ բարեհոգի է... Եթէ այս լօթու հետ թաղ
նեմ, ով գիտէ օրքան փող դուրս կը քաշի նրանից»։

Եւ նա մնում էր, որ հսկի։ Դերասանը կատարել էր։
Գործը ուրիշ օրուայ յետաձգեցին։ Անհնար էր։ Ռիսլէրը հէնց
նոր ասաց նրանց, որ միւս օրը ինքը մի ամսով գնալու էր
Սավինի։

—Մի ամսով Սավինի... բացականչեց պ. Շէբը, յուսա
հատուած, տեսնելով որ փեսան դուրս է պրծնում ձեռքից...
Իսկ գործերը։

—Է՜հ, ես ամեն օր ժօրժի հետ կը գամ փարիզ... պ.
Գարդինուայի բաներն է, ուզում էր տեսնել փոքրիկ Սիդոնին։

Պ. Շէբը թափ տուեց գլուխը։ Նրա կարծիքով, այդ չատ

անխոհեմ բան էր։ Գործը միշտ գործ է։ Մարդ պէտք է միշտ գործի վրայ լինի, միշտ աչքը վրան պահի։ Ով գիտէ, ինչ կարող է պատահել. գործարան է, կարող է գիշերը յանկարծ կրակ ընկնել։ Եւ նա կրկնում էր խրատական եղանակով «Տիրոջ աչքը, սիրելիս, ուրիշ բան է». մինչդեռ նրա կողքին նստած դերասանը, որի բանին նոյնպէս չէր դալիս Ռիսլէրի գնալը, չում էր իր խոշոր աչքերը ու տալիս նրանց միանդամայն և սուր և հեղինակաւոր արտայայտութիւն, իսկ և իսկ այնպիսի արտայայտութիւն, որ պէտք է ունենայ տիրոջ աչքը։

Վերջապէս, կէս գիշերին մօտ, Մօնռուժի վերջին հանրակապը տարաւ բռնակալ աներոջը և Դելօբէլը հնարաւորութիւն ստացաւ խօսելու։

—Նախ և առաջ ծրագիրը, ասաց նա, չուզենալով իսկոյն և եթ խօսք բանալ թուանշանների մասին, և պէնանէն գնելով քթին, նա սկսեց ճոռոմաբանօրէն և, ինչպէս միշտ, բեմի վրայ զրալով իրան՝ «երբ մարդ սառը կերպով քննութեան է առնում զառամութեան այն ասպէճանը, որին հասել է Ֆրանսիայում դրամատիկական արուեստը, երբ մարդ չափում է այն տարածութիւնը, որ բաժանում է Մոլիէռի Թատրոնը...»։ Եւ այդպէս գնում էր մի քանի երես։ Ռիսլէրը լսում էր, ծծելով չիբուխը և չը համարձակուելով շարժ դալ, որովհետև Դելօբէլը կարդալիս ամեն րոպէ նայում էր նրան պէնանէի վրայից, տեսնելու համար, թէ ինչ տպաւորութիւն են գործում նրա վրայ իր խօսքերը։ Դժբախտաբար, երբ դեռ ծրագրի մէջտեղումն էին, սրճարանը փակեցին. ճրագները հանդցնում էին, պէտք էր գնալ... Իսկ նախահաշիւը... Պայմանաւորուեցին, որ այդ թուղթը կը կարդան գնալիս, ճանապարհին։ Ամեն լապտերի մօտ կանգ էին առնում։ Դերասանը առաջ էր բերում իր թուանշանները... Այսքան դահլիճի համար, այսքան լուսաւորութեան համար, այսքան իրրև տուրք յօդուտ աղքատների, այսքան դերասաններին... Այդ դերասաններին վերաբերեալ հարցի վրայ նա պնդում էր։

—Գործի լաւութիւնը նրանումն է, ասում էր նա, որ մենք ոչինչ չենք վճարելու առաջին դերակատարին... Մեր առաջին դերակատարը Բիբին կը լինի... (Իր մասին խօսելիս, Դելօբէլը սիրում էր Բիբի անուանել ինքն իրան...) Առաջին դերակատարներին առհասարակ քսան հազար ֆրանկ են տալիս... ստիպուած չը լինելով այդ փողը վճարել, կարող էք այնպէս համարել, թէ դրպաններդ էք գնում այդ քսան հազար ֆրանկը։ Ճիշտ չեմ ասում, հը՞։

Ռիսլէրը պատասխան չէր տալիս։ Նրա դէմքը բռնաղբօսիկ

էր և աչքերը շաղուած էին, ինչպէս լինում են մաքով ուրիշ տեղ գտնուող մարդու դէմքն ու աչքերը։ Նախահաշուի ընթերցումը վերջացնելուց յետոյ, սարսափով տեսնելով, որ մօտենում է Վիէյլ-Օդրիէտ փողոցի պուտուտանքը, Դելօբէլը չիփ-չիտակ դրեց հարցը։ Ուզում էր արդեօք նա թէ ոչ ձեռնարկել այդ գործը։

—Ո՛չ... չեմ ուզում, ասաց Ռիսլէրը, ոգեորուած մի հերոսական քաջութեամբ, որ նեարչնչում էր նրան գլխաւորապէս գորական քաջութեամբ, որ ներշնչում էր նրան գլխաւորապէս գործարանի մօտիկութիւնը և այն միտքը, թէ նա վտանգի էր ենթարկում իր ընտանիքի բախտը։ Դելօբէլը չմեց։ Նա կարծում էր, թէ բանը սարքուել է արդէն, և այժմ, չափազանց յուզուած թարկելու, թէ բանը սարքուել է արդէն, և այժմ, չափազանց յուզուած էր

Դելիրէլը, որ այդպիսի նախապաշարմունքներ չունէր մանանկանալու վերաբերմամբ։

Նա ամէն ինչ փորձեց, մէջ բերեց գեղարուեստի նուիրական շահերը, այնտեղ հասաւ նոյն իսկ, որ սկսեց խօսել սիրուհիկ դերասանուհիների մասին, որոնց հեշտագրգիռ հայեացքները... Ռիսլէրը քահ քահ ծիծաղեց.

—Է՜հ, ինչ կատակներ էք անում... ինչեր էք ասում... Մոռանում էք, որ երկուսս էլ պսակուած մարդիկ ենք, և, ի դէպ, այժմ շատ ուշ է, այնպէս որ մեր կանայք մեզ անպատճառ սպասելիս կը լինեն... Չէք նեղանալ, այնպէս չէ... Ես չեմ մերժում, դուք հո հասկանում էք... Հա, տարեվերջի հաշուից յետոյ եկէք ինձ մօտ։ Նորից կը խօսենք... Այ, Աշիլ քեռին հանգցնում է գազը... Ես գնացի։ Մնաք բարև։

Գիշերուայ ժամի մէկից անց էր, երբ դերասանը վերադարձաւ տուն։

Կինն ու աղջիկը սպասում էին նրան, ինչպէս առհասարակ, աշխատանքը ձեռներին, բայց անսովոր կերպով կենդանացած ու տենդոտ դրութեան մէջ։ Այն մեծ մկրատը, որով սիրում էին տարօրինակ կերպով, և Դեղիրէի բարակ մատները, պաճուճանքները պատրաստելիս, այնքան արագ-արագ էին շարժւում, որ եթէ նայող լինէր, աչքերը կը շաղուէին։ Կօտաւաջ սեղանի վրայ, կարծես նոյնպէս սովորական օրերից աւելի ճոխ դոյներ ունէին և ինչ-որ մի առանձին փայլ։ Բանը նրանումն է, որ Ցոյս կոչուող գեղեցկուհի այցելուն այդ երեկոյ եկել էր այդտեղ։ Նա նեղութիւն էր կրել մութ սանդուխները բոլոր բարձրանալ հինգերորդ յարկը և, բանալով այդ փոքրիկ բնակարանի դուռը, լուսաճաճանչ մի հայեացք ձգել նրա ներսը։ Ինչքան էլ մարդ հիասթափութիւններ տեսած լինի կեանքում, չի կարող չը շլանալ այդ մոդական շողքերից։

—Ա՜խ, եթէ հայրիկին յաջողէր... ասում էր ժամանակ առ ժամանակ տիկին Դելիրէլը, կարծես ուղելով ամփոփի կերպով արտայայտել այն հազար ու մի երջանիկ երազները, որոնց անձնատուր էր լինում նրա միտքը։

—Կը յաջողի, մայրիկ, հաւատացած եղիր։ պ. Ռիսլէրը այնքան բարի է։ Ես երաշխաւոր եմ նրա կողմից։ Սիդոնին էլ շատ սիրում է մեզ, թէև ամուսնանալուց յետոյ կարծես մի քիչ մոռացութեան է տալիս իր բարեկամներին։ Բայց դէ պէտք է ուշադրութեան առնել նաև մեր դրութիւնների տարբերու-

թիւնը... Ես որ, յամենայն դէպս, երբէք չեմ կարող մոռանալ ինձ համար արածը։

Եւ յիշեցրեց, թէ ինչ էր արել Սիդոնին իր համար, խեղճ կաղիկը սկսեց աւելի ևս տենդոտ կերպով աշխատել։ Նրա ելէքտրականացած մատները սկսեցին շարժուել կրկնակի արագութեամբ։ Կարծես նա վազում էր ինչ-որ մի խուսափող, անկալելի բանի յետևից, ինչպէս օրինակ, բախտի յետևից կամ այնպիսի մարդու սիրոյ յետևից, որ ձեզ չէ սիրում։

«Նա ինչ է արել քեզ համար», պէտք է հարցնէր մայրը, բայց աղջկայ ասածները այդ բոպէին ամենևին չէին հետաքրքրում նրան. նա մտածում էր միմիայն իր մեծ մարդու մասին։

—Հը՞, երևակայում ես, աղջիկս... Ա՜խ, եթէ հայրիկը սեփական թատրոն ունենայ, եթէ նորից սկսի խաղալ առաջուան պէս։ Դու չես կարող յիշել, շատ փոքր էիր այն ժամանակ։ Օհ, զարմանալի յաջողութիւն ունէր, անվերջ դուրս էին կանչում։ Մի երեկոյ, Ալանսօնում, թատրոնի յաճախորդները ոսկէ պսակ տուեցին նրան... Օհ, որքան փայլուն էր նա այն ժամանակ, որքան ուրախ ու երջանիկ։ Ով որ այժմ տեսնում է խեղճ մարդուն, չէ ճանաչում նրան, այնքան փոխուել է նա անբախտ կեանքի շնորհիւ... Բայց ես հաւատացած եմ, որ բաւական է մի փոքր յաջողութիւն, որպէս զի նա նորից նոյն երիտասարդ և ուրախ մարդը լինի... Բացի այդ այնպիսի փողեր են աշխատում թատրոնապետները։ Նանտում թատրոնապետը սեփական կառք ունէր։ Երևակայում ես մեզ սեփական կառքում... Չէ, ասա, երևակայում ես.. Քեզ հէնց այդպիսի բան է հարկաւոր։ Դու կարողանաս դուրս գալ տանից, մի քիչ կարուել այդ բաղկը կարողանաս դուրս գալ տանից, մի քիչ կարուել այդ բաղկը կարողանաս դուրս գալ տանից, և դու ջրի ու կաթոռից։ Հայրիկը մեզ ամաչանոց կը տանի, և դու ջրի ու ծառի կարօտդ կ'առնես։

—Ա՜խ, ջուր, ծառ... դողդողալով շշնջաց դուստրը ճգնակեացը։

Այդ բոպէին ներքևի մեծ դուռը բացուեց ու պինդ խփուեց և գաւթում լսուեց պ. Դելիրէլի կանոնաւոր քայլուածքի ձայնը։ Սենեակում մի բոպէ անձկութիւն տիրեց. մայր ու աղջիկ նրբ։ Սենեակում մի բոպէ անձկութիւն տիրեց. մայր ու աղջիկ ձայները կտրած ու չունչները բռնած չէին համարձակւում նոյնիսկ նայել իրար երեսի, և մօր մեծ մկրատը այնպէս էր դողդողում, որ արոյրի թելը բոլորովին ծուռ ու մուռ էր կտրատուած։

Անկասկած, սարսափելի էր խեղճ դերասանի ստացած հարուածը։ Ի դերև ելած երազներ, ստորացուցիչ մերժումն, ընդ կերների ծաղրը, սրճարանի հաշիւը իր թատրոնապետութեան ամբողջ ընթացքում պարտքով կերած նախաճաշերի համար,—

հաշիւ, որ պէտք էր իսկոյն վճարել,—այդ բոլորը պատկերացաւ նրա առաջ հինգ յարկանի տան սանդուխների մթութեան և խաղաղութեան մէջ։ Սրտին որ դանակ խփէիր՝ արիւն չէր կաթիլ... Եւ սակայն, այնքան ջՕրեղ էր նրա մէջ դերասանական բնաւորութիւնը, որ, չը նայելով իր վշտի խորին անկեղծութեան, նա հարկաւոր համարեց ողբերգական և պատշաճական դիմակ հագնել։

Մտնելուն պէս, նա կանգ առաւ, օրհասական հայեացքով նայեց արհեստանոցին, բանուածքով ծանրաբեռնուած սեղանին, իր փոքրիկ ընթրիքին, որ պատրաստ սպասում էր նրան մի անկիւնում, և իր երկու անձկալից հարազատներին, որոնք սեւեռել էին նրա վրայ իրանց փայլուն աչքերը։ Դերասանը մի բոպէ մնաց անխօս,—իսկ դուք գիտէք, թէ որքան երկար է թւում թատրոնում դերասանի մի բոպէ տեղ լռութիւնը,—յետոյ երեք քայլ արեց, վայր ընկաւ սեղանի մօտ դրուած մի ցած աթոռի վրայ ու ասաց սուլելու ձայնով.

—Օ՞ֆ, նզովք կայ իմ գլխին *)։

Եւ այդ ասելով, նա բռունցքով այնպիսի սարսափելի հարուած իջեցրեց սեղանին, որ մօդային թռչնիկներն ու ճանճերը շաղ անցան սենեակի չորս անկիւնը։ Կինը, վախուորած, վեր կացաւ տեղից ու երկչոտ կերպով մօտեցաւ նրան, մինչ Դէդիրէն կիսով չափ բարձրացաւ իր բազկաթոռի մէջ, անձկութիւնից ջղաձգաբար ծամածռուած դէմքով։

Աթոռի մէջ ճկուած, կռները ուժասպառ կախ քցած, գլուխը կրծքին քաշ արած, դերասանը խօսում էր ինքն իր հետ կցկտուր, ընդհատուող մի մենախօսութիւն էր այդ, լի դրամատիկական հառաչանքներով ու հեկեկանքներով և նզովքներով անգութ ու եսամոլ բուրժուաների դէմ, որոնք հում-հում ուտում են արուեստագէտներին ու ծծում նրանց արիւնը։

Յետոյ նա սկսեց պատմել իր ամբողջ դերասանական կեանքը, սկզբի ժամանակներում ունեցած յաղթանակները, Ալանսօնի հանդիսատեսների տուած ոսկէ պսակը, իր ամուսնանալը այդ «սուրբ կնոջ» հետ,—և այդ վերջին խօսքն ասելիս, նա մատով ցոյց տուեց խեղճ կնոջը, որ լացակրկնած և դողդոջուն շրթունքներով կանգնած էր նրա կողքին ու պառաւի նման գլուխը տարուբերում էր նրա ամեն մի խօսքին։

Յիրաւի, հռչակաւոր Դրլօբէլին չը ճանաչողներն էլ այդ

*) Ah! je suis damné.—Ֆրիրուլէի խօսքերը Վիկտոր Հիւգոյի „Le Roi s'amuse"-ից, որից է վերցրած Ռիգոլետտո օպէրայի նիւթը։

Ե. Թ.

երկար մենախօսութիւնը լսելուց յետոյ կարող էին պատմել նրա ամբողջ կենսագրութիւնը մանրամասնօրէն։ Նա նկարագրում էր իր Փարիզ դալը, իրան պատահած ձախորդութիւնները, իր կրած զրկանքները... Սակայն, աւաղ, իսկապէս ինքը չէր բը, իր կրած զրկանքները։ Այդ հասկանալու համար բաւական էր եղել զրկանքներ քաշողը։ Այդ հասկանալու համար բաւական էր տեսնել նրա լայն ու փաթթած դէմքը այդ երկու խեղճ կանանց լղար ու փոս ընկած դէմքերի կողքին։ Բայց դերասանը այդքան խորը չէր գնում, և շարունակելով հարբել իր դէկլամացիայի խօսքերով.

—Օ՞խ, բացականչեց նա,—այնքան մաքառելուց յետոյ... Տասը, տասնըհինգ տարի է, ինչ մաքառում եմ, նեցուկ ունենալով այս անձնուէր էակներին, ապրելով նրանց աշխատած հացով։

—Հայրիկ ջան, հայրիկ, լռի՞ր... աղաչում էր Դէդիրէն, ձեռները իրար կցած։

—Այո՛, այո՛, ապրելով նրանց աշխատած հացով... և ես չեմ ամաչում այդ բանից։ Որովհետև սրբազան գեղարուեստի համար է, որ ես ընդունում եմ այդ անձնուէր ծառայութիւնները... Բայց էլ այստեղս է հասել։ Զաւիը արդէն անցել է։ Ես հրաժարւում եմ...

—Ա՛խ, այդ ի՞նչ ես ասում, սիրելիս, բացականչեց տիկին Դրլօբէլը, նետուելով դէպի նա։

—Ո՛չ, թող տուր ինձ... Այլ ես այժիցս վեր է։ Իմ մէջ ըստանեցին արուեստագէտին։ Ամեն բան պրծած է... Ես հրաժարւում եմ թատրոնից։

Այն ժամանակ, եթէ տեսնէիք, թէ ինչպէս մայր ու աղջիկ, փաթաթուելով նրա վզովը, սկսեցին խնդրել, որ շարունակի մաքառումը, և ապացուցանել, որ նա իրաւունք չունի հրաժարուել թատրոնից, լացներդ չէիք կարող պահել։ Դրլօբէլը դիմադրում էր սակայն։

Ի վերջոյ նա անձնատուր եղաւ և խօսք տուեց մի ժամանակ էլ դիմանալ, քանի որ այդպէս էին ցանկանում նրանք, բայց դժուար է ասել, թէ որքան աղաչանք ու պաղատանք, որքան գգուանքներ պէտք եղան, մինչև որ նրանց յաջողեց այդ բանը։

Մի քառորդ ժամ անցած, մեծ մարդը, որ քաղցել էր իր ասած երկար մենախօսութիւնից և արդէն սփոփուել՝ յուսահատութիւնը զգեցուց յետոյ, սեղանի կողքին նստած կարդին ասում էր, և այդ բոլոր բանից վիմիայն մի թեթև խորժակով ընթրում էր, և այդ բոլոր բանից վիմիայն մի թեթև յոգնածութիւն էր մնացել մէջը, այնպէս, ինչպէս յոգնած է Վինում մի դերասան, մի շատ երկար ու շատ դրամատիկական դեր խաղալուց անմիջապէս յետոյ։

Այդ դէպքերում դերասանը, որ յուզել է բոլոր հանդիսատեսներին և ինքը իսկական արտասուքներ թափել բեմում, թատրոնից դուրս գալուց յետոյ անմիջապէս մոռանում է այդ բոլորը։ Նա թողնում է իր յուզմունքը իր դերասանական օթեակում իր հագուստների ու կեղծ մազերի հետ, մինչդեռ աւելի միամիտ, աւելի սաստիկ կերպով տպաւորուած հանդիսատեսները վերադառնում են տուն կարմրատակած աչքերով ու ճմլուած սրտով և երկար ժամանակ չեն կարողանում քնել ղղերի չափազանց զրգռումից։

Խեղճ Դէզիրէն ու տիկին Դելօբէլը շատ քիչ քնեցին այդ գիշեր։

IV

Սավինիում։

Մեծ դժբախտութիւն էր այն բանը, որ այդ երկու ընտանիքները մի ամիս միասին մնացին Սավինիում։

Երկու տարի անցնելուց յետոյ Ժօրժն ու Սիդոնին նորից հանդիպեցին միմեանց այդ հինաւուրց, հեռաւոր մի շատ մինոյնը մնացող կալուածքում, ուր խճաքարերը, լճակները և ծառերը, անշարժ ու յարատև, կարծէք ծաղր լինէին այն ամենի վերաբերմամբ, ինչ անցողական է ու փոփոխական։ Շատ աւելի հաստատուն ու աղնիւ բնաւորութիւններ էին պէտք, որպէս զի չարաբաստիկ չը լիներ այդ հանդիպումը։

Ինչ վերաբերում է Կլէրին, երբեք Սավինին այդքան պեղեցիկ չէր թարգացել իրան, երբեք նա այդքան երջանիկ չէր զգացել նրան։ Ի՞նչ հրճուանք էր զբօսեցնել երեխային այն սիզամարգերում, ուր ինքն էլ քայլել էր փոքրիկ ժամանակը, իրը ջահել մայր նստել ծառերի ստուերում այն նոյն նստարանների վրայ, ուր երբեմն նստած դիտում էր իր երեխայական խաղերը իր մայրը, կամ Ժօրժի հետ թեանցուկ գնալ տեսնելու այն բոլոր ամենամանր խորշերը, ուր իրանք մի ժամանակ խաղ էին արել միասին։ Նա զգում էր մի տեսակ անդորր բաւարարութիւն, զգում էր այն լիուլի երջանկութիւնը, որ մեղմ բնաւորութիւնները վայելում են լռութեան մէջ, և ամբողջ օրը զբօսնում էր ծառուղիներում տանու լայն հագուստով և դանդաղ քայլուածքով, ոտը երեխայի ոտի հետ փոխելով և շարունակ կանգ առնելով նրա ցիչերի ու պահանջների չնորհիւ։

Շատ քիչ էր պատահում, որ Սիդոնին էլ ժամանակներ այդ

մայրական զբօսանքներին։ Նա ասում էր, թէ երեխաների աղմուկը իրան յոգնեցնում է և այդ բանում համերաշխ էր ծեր Գարդինուայի հետ, որ ամեն պատրուակից օգտւում էր իր թոռին անախորժութիւն պատճառելու համար։ Իր նպատակին լաւ հասած լինելու համար ծերուկը զրաղւում էր միմիայն Սիդոնիով և աւելի ևս սիրալիր ուշադրութեամբ էր վերաբերւում նրան, քան վերջին անգամ։ Բոլոր կառքերը, որ երկու տարուց ի վեր փակած էին պահում դրսի սրահում և ամեն շաբաթ սրբում էին, որովհետև սարդերը ոստայն էին հիւսում նրանց մետաքսէ բարձերի վրայ,—նա դրեց Սիդոնիի տրամադրութեան տակ։ Օրը երեք անգամ կառքերը լծում էին և վանդակապատ դարպասը շարունակ բաց ու խուփ էր լինում։ Ամբողջ տունը իր սարք ու կարգով, իր նիստ ու կացով համակերպուեց այդ աշխարհիկ ընթացքին։ Պարտիզպանը սկսեց աւելի լաւ ինամք տանել ծաղիկներին, որովհետև տիկին Ռիսլէրը ամենագեղեցիկներն էր ընտրում ճաշի ժամանակ իր մազերի մէջ խրելու համար, և բացի այդ հիւրեր էին գալիս այժմ։ Նախընթրիքներ ու զբօսանքներ էին կազմակերպում, ուր տանտիկնութիւնը տիկին Ֆրօմոն կրտսերն էր անում, բայց ուր Սիդոնին իր վառվռուն բնաւորութեամբ փայլում էր անմրցակից։ Բացի այդ, Կլէրը յաճախ ասպարէզը ամբողջ նրան էր թողնում։ Երեխան ունէր քնի ու զբօսանքի ժամեր, որ Կլէրը երբէք չէր նուիրում իր անձնական զուարճութիւններին։ Այդ միջոցներին նա անհրաժեշտ տարբար գնում էր երեխայի մօտ և նոյն իսկ երեկոները նա շատ անգամ չէր կարողանում Սիդոնիի հետ գնալ Պարիզից վերադարձող Ժօրժին ու Ռիսլէրին ընդառաջ։

—Կը ներես ինձ, ասում էր նա Սիդոնիին, բարձրանալով իր սենեակը։

Տիկին Ռիսլէրի ցնծութեանը չափ չը կար։ Գողտրիկ ու անգործ՝ նա սպանում էր ընդառաջ, առանց նշմարելու կառքի արագ ընթացքը և առանց մտածելու որ և է բանի մասին։

Նրան թմրութիւնից հանում էր միայն զով քամին, փչելով նրա երեսին քաղքի տակից։ Անորոշ կերպով, կիսախուփ աչքերով նա նշմարում էր այն ժամանակ մի պանդոկ ճանապարհի պատուանքում կամ թէ անուահետքերի կողքի խոտի վրայով գնացող վատ հագնուած երեխաներ։ Այդ յիշեցնում էր նրան այն զբօսանքները, որ ինքը մի ժամանակ Ռիսլէրի և իր ծնողների հետ կատարում էր կիրակի օրերը, և այդ յիշելիս նա մի թեթև զով էր զգում, որ ստիպում էր նրան չիտակուել իր փափուկ ու նոր հագուստի մէջ և աւելի հաստատ նստել օրորոցի մէջ։

բուող կառքի մէջ, ուր նրա միտքը նորից թմրում էր՝ երջանիկ ու ապահով։

Կայարանում ուրիշ կառքեր էլ էին լինում։ Շատ էին ուշադրութիւն դարձնում նրա վրայ։ Երկու երեք անգամ նա լսել էր, թէ ինչպէս փսփսում էին նրա կողքին՝ «Տիկին Ֆրոմոն կրտսերն է...», և յիրաւի մարդ շատ հեշտութեամբ կարող էր սխալուել, տեսնելով նրանց կայարանից վերադառնալիս, երբ Սիդոնին ու Ժորժը կողք կողքի բազմած կառքի խորքումը խոսում ու ծիծաղում էին իրար հետ, իսկ Ռիսլէրը նրանց դիմացը նստարանի վրայ ժպտում էր մեղմօրէն, լայն ձեռքերը տափակ դրած ծնկների վրայ և մի քիչ քաշուելով այն բանից, որ ինքը այդպիսի գեղեցիկ կառք է նստել։ Այն բանը, որ իրան տիկին Ֆրոմոնի տեղն են դնում, սաստիկ հպարտացնում էր Սիդոնիին, և նա օրէցօր աւելի ու աւելի էր ընտելանում այդ մտքին։ Տունդալուց յետոյ Ֆրոմոններն ու Ռիսլէրները զատւում էին մինչև ճաշի ժամանակը, բայց Ժորժ Ֆրոմոնը շատ երիտասարդ էր, որպէս զի կարողանար համակուել իր ընտանեկան երջանկութեամբ, և նայելով իր կնոջը, որ հանգիստ նստած էր լինում քնած երեխայի կողքին, նա շարունակ մտածում էր փայլուն Սիդոնիի մասին, որի ձայնը ցնծալից գեղգեղանքներով թնդում էր պարտէզի նշդարիների տակ։

Մինչդեռ իր դղեակը կերպարանափոխուում էր մի ջահել կնոջ քմահաճոյքով, ծեր Գարդինուան շարունակում էր ապրել տաղտկացող, անդործ ու զառամեալ հարուստի սահմանափակ կեանքով։ Ամենալաւ բանը, որ նա գտել էր իր ձանձրոյթը փարատելու համար, լրտեսութիւնն էր։ Ծառաների դուրս ու տուն անելը, այն բաները, ինչ որ խօսում էին իր մասին խոհանոցում, կանաչեղէնով ու պտուղներով լի կողովը, որ ամեն առաւօտ բերում էին բանջարանոցից մառանը, առիթ էին տալիս անընդհատ հետախուզութիւնների։ Նրա համար չը կար աւելի մեծ զուարճութիւն, քան մէկին բռնել յանցանքի մէջ։ Այդ զբաղեցնում էր նրան, բարձրացնում էր նրա նշանակութիւնը ի հայի ժամանակ նա երկար ու բարակ պատմում էր լուռ հիւրերին կատարուած յանցանքը, այն խորամանկ հնարքները, որ ինքը գործ էր դրել յանցաւորին բռնելու համար, յանցաւորի կերպարանքը, սարսափը, աղաչանքները։

Այդ մշտական հսկողութեան համար ծերուկը մի քարէ նստարան էր ընտրել, որ պնդացրած էր աւազի մէջ մի ահագին պալչնիայի յետեւում։ Ամբողջ օրերով նա նստում էր այնտեղ առանց կարդալու, առանց նոյն իսկ մտածելու, աչքերը սրած նայելով, թէ ով է դուրս ու տուն անում։ Գիշերուայ համար նա ուրիշ բան էր հնարել։ Ծաղկաղարդ սանդուխների գլխին գտնուող գաւիթի յատակում նա մի ծակ էր շինել տուել ուղիղ իր սենեակի տակին, որ գնում էր մի յարկ վերև։ Այդ տեղով մի կատարելագործուած լսողական խողովակ հասցնում էր նրա ականջին ներքի յարկի բոլոր շշուկները և նոյն իսկ ելեկտրական պատշգամբում մաքուր օդ ծծող սպասաւորների խօսակցութիւնները։

Դժբախտաբար, գործիքը, շատ նուրբ լինելով, չափազանցեցնում էր, երկարացնում ու իրար խառնում բոլոր հնչիւնները, և երբ պ. Գարդինուան ականջը դնում էր խողովակին, կարողանում էր լսել միմիայն պատի ժամացոյցի մշտական ու կանոնաւոր տրկտրկոցը, ներքևում վանդակի մէջ թառած թութակի ճիչը, կամ մի կորցրած հատիկ փնտռող հաւի կչկչոցը։ Իսկ մարդկային ձայները հասնում էին նրա ականջին միայն իբր մի անորոշ բոբռոց կամ ամբոխի մռունչ, որի մէջ անկարելի էր որոշել որ և է խօսք։ Այդ էր եղել նրա ամբողջ օգուտը այդ հրաշալի գործիքից, որ նա թաղցնում էր իր անկողնի առաստի ծալքի մէջ։

Մի գիշեր ծերուկը նոր էր աչքերը փակել, որ յանկարծ վեր թռաւ տեղից ինչ որ դռան ճռռոցից։ Այդպէս ուշ՝ այդ բաւական արտասովոր բան էր։ Ամբողջ տունը քնած էր։ Լսւում էր միայն, թէ ինչպէս պահապան շները քայլում էին աւազի վրայ կամ կանգ էին առնում մի ծառի տակ, որի կատարին բուի բուոց էր հնչում։ Շատ լաւ առիթ էր լսողական գործիքից օգտուելու համար։ Խողովակը մօտեցնելով ականջին, պ. Գարդինուան համոզուեց, որ չէր սխալուել։ Աղմուկը շարունակւում էր։ Մի դուռ զուեց, որ չէր սխալուել։ Աղմուկը շարունակւում էր։ Մի դուռ զուեց, բայց արեցին, յետոյ մի ուրիշը։ Պատշգամբի նիգը յետ քաշեցին՝ բայց արեցին, յետոյ մի ուրիշը։ Պատշգամբի նիգը յետ քաշեցին՝ ճիգ գործ դնելով։ Բայց ոչ Պիրամը, ոչ Թիսբէն, ոչ նոյն իսկ Սեահուելի Նիւֆաունդլէնդեան շունը, Կիսսը, իրար չէկան։ Տեսնելի նիւֆաունդլէնդեան շունը, Կիսսը, իրար չէկան։ Ծերուկը կամաց տեղից վեր կացաւ տեսնելու համար, թէ ովքեր են այդ տարօրինակ գողերը, որոնք, ներս մտնելու փոխարէն, դուրս էին գալիս, և ահա թէ ինչ նկատեց նա իր պատուհանի վանդակափեղկի արանքից։

Բարակ ու բարձրահասակ մի պարոն, ժորժի չէնք ու ինորհքով, թեանցուկ գնում էր ժանեակէ գլխանոցով մի կնոջ հետ։ Նրանք առաջ դադար առան պ. Գարդինուայի լրտեսական Նստարանի վրայ, ծաղկափթիթ պալչնիայի տակին։

Հրաշալի, ձիւնափայլ գիշեր էր։ Ծառերի կատարները շշաւիելով՝ լուսինը շողշողուն փաթիլներ էր կաղմում խիտ տերևներից։ Լուսնի ճառագայթների տակ սպիտակին տուող դարաբի մէջ

բուող կառքի մէջ, ուր նրա միտքը նորից թմրում էր՝ երջանիկ ու ապահով։

Կայարանում ուրիշ կառքեր էլ էին լինում։ Շատ էին ուշադրութիւն դարձնում նրա վրայ։ Երկու երեք անգամ նա լսել էր, թէ ինչպէս փսփսում էին նրա կողքին՝ «Տիկին Ֆրօմօն կրտսերն է...», և յիրաւի մարդ շատ հեշտութեամբ կարող էր սխալուել, տեսնելով նրանց կայարանից վերադառնալիս, երբ Սիգօնին ու Ժօրժը կողք կողքի բազմած կառքի խորքումը խօսում ու ծիծաղում էին իրար հետ, իսկ Ռիսլէրը նրանց դիմացը նստարանի վրայ ժպտում էր մեղմօրէն, լայն ձեռքերը տափակ դրած ծնկների վրայ և մի քիչ քաշուելով այն բանից, որ ինքը Ֆրօմօնի տեղն են գնում, սաստիկ հպարտացնում էր Սիգօնիին, և նա օրէցօր աւելի ու աւելի էր ընտելանում այդ մտքին։ Տուն դալուց յետոյ Ֆրօմօններն ու Ռիսլէրները զատւում էին մինչև ճաշի ժամանակը, բայց Ժօրժ Ֆրօմօնը շատ երիտասարդ էր, որպէս զի կարողանար համակուել իր ընտանեկան երջանկութեամբ, և նայելով իր կնոջը, որ հանդիսատ նստած էր լինում Սիգօնիի մասին, որի ձայնը ցնծալից գեղգեղանքներով թնդում էր պարտէզի նշդարիների տակ։

Մինչդեռ իր դղեակը կերպարանափոխւում էր մի ջահել կնոջ քմահաճոյքով, ծեր Գարդինուան շարունակում էր ապրել տաղտկացող, անգործ ու զառամեալ հարուստի սահմանափակ կեանքով։ Ամենալաւ բանը, որ նա գտել էր իր ձանձրոյթը փարատելու համար, լրտեսութիւնն էր։ Ծառաների դուրս ու տուն անելը, այն բաները, ինչ որ խօսում էին իր մասին խոհանոցում, կանայանոցում ու պատուհաններով լի կողմը, որ ամէն առաւօտ բերում էին բանջարանոցից մառանը, առիթ էին տալիս անընդհատ հետախուզութիւնների։ Նրա համար չը կար աւելի զբաղեցնում էր նրան, բարձրացնում էր նրա նշանակութիւնը և հացի ժամանակ նա երկար ու բարակ պատմում էր լուռ հիւրերին կատարուած յանցանքը, այն խորամանկ հնարքները, որ ինքը գործ էր դրել յանցաւորին բռնելու համար, յանցաւորի կերպարանքը, սարսափը, աղաչանքները։

Այդ մշտական հսկողութեան համար ծերուկը մի քարէ նստարան էր ընտրել, որ պնդացրած էր աւազի մէջ մի ահագին պաւլոնիայի յետևում։ Ամբողջ օրերով նա նստում էր այնտեղ առանց կարդալու, առանց նոյն իսկ մտածելու, աչքերը սրած նայելով, թէ ով է դուրս ու տուն անում։ Գիշերուայ համար նա ուրիշ բան էր հնարել։ Ծաղկազարդ սանդուխների գլխին գտնուող գաւիթի յատակում նա մի ծակ էր չինել տուել ուղիղ իր սենեակի տակին, որ գտնւում էր մի յարկ վերև։ Այդ տեղով մի կատարելագործուած լսողական խողովակ հասցնում էր նրա ականջին ներքի յարկի բոլոր շշուկները և նոյն իսկ ելեկտրական պատշգամբում մաքուր օդ ծծող սպասաւորների խօսակցութիւնները։

Դժբախտաբար, գործիքը, շատ նուրբ լինելով, չափազանցեցնում էր, երկարացնում ու իրար խառնում բոլոր հնչիւնները, և երբ պ. Գարդինուան ականջը դնում էր խողովակին, կարողանում էր լսել միմիայն պատի ժամացոյցի մշտական ու կանոնաւոր տրկտրկոցը, ներքևում վանդակի մէջ թառած թութակի ճիչը, կամ մի կորցրած հատիկ փնտռող հաւի կչկչոցը։ Իսկ մարդկային ձայները հասնում էին նրա ականջին միայն իբր մի անորոշ բոբռոց կամ ամբոխի մռունչ, որի մէջ անկարելի էր որոշել որ և է խօսք։ Այդ էր եղել նրա ամբողջ օգուտը այդ հրաշալի գործիքից, որ նա թագցնում էր իր անկողնի առաստի ծալքի մէջ։

Մի գիշեր ծերուկը նոր էր աչքերը փակել, որ յանկարծ վեր թռաւ տեղիցը ինչ որ դռան ճռռոցից։ Այդպէս ուշ՝ այդ բաւական արտասովոր բան էր։ Ամբողջ տունը քնած էր։ Լսւում էր միայն, թէ ինչպէս պահապան շները քայլում էին աւազի վրայ կամ կանգ էին առնում մի ծառի տակ, որի կատարին բուի բուոց էր հնչում։ Շատ լաւ առիթ էր լսողական գործիքից օգտուելու համար։ Խողովակը մօտեցնելով ականջին, պ. Գարդինուան համոզուեց, որ չէր սխալուել։ Աղմուկը շարունակւում էր։ Մի դուռ բաց արեցին, յետոյ մի ուրիշը։ Պատշգամբի նիպը յետ քաշեցին՝ ճիգ գործ դնելով։ Բայց ոչ Պիրամը, ոչ Թիսբէն, ոչ նոյն իսկ Ծեհանելի նիւֆաունդլէնդեան շունը, կիսաբ, իրար չեկան։ Ծերուկը կամաց տեղիցը վեր կացաւ տեսնելու համար, թէ ովքեր են այդ տարօրինակ գողերը, որոնք, ներս մտնելու փոխարէն, դուրս էին գալիս, և ահա թէ ինչ նկատեց նա իր պատուհանի վանդակափեղկի արանքից։

Բարակ ու բարձրահասակ մի պարոն, Ժօրժի չէնք ու ընդհրոյով, թեանցուկ գնում էր ժանեակէ գլխանոցով մի կնոջ հետ։ Նրանք առաջ գադար առան պ. Գարդինուայի լրտեսական նստարանի վրայ, ծաղկափթիթ պաւլոնիայի տակին։

Հրաշալի, ձիւնափայլ գիշեր էր։ Ծառերի կատարները շոշափելով՝ լուսինը շողշողուն փաթիլներ էր կազմում խիտ տերևների մէջ։ Լուսնի ճառագայթների տակ սպիտակին տուող դարբի մէջ։ Լուսնի ճառագայթների տակ սպիտակին տուող դարբի մէջ։ Լուսնի ճառագայթների տակ սպիտակին տուող դարբի տափերը, ուր գանդրամորթ նիւֆաունդլէնդեան շները գնում

գալիս էին՝ դարանելով գիշերային թիթեռներ, և լայնածաւալ լճակների խորունկ միապաղաղ ջրերը՝ շողում էին անձայն ու անդորր ցոլքով, կարծես արտաքայլելով մի մեծ արծաթէ հայելի մէջ։ Սիզամարգերի ափերին տեղ-տեղ փայլփլում էին լուսատարածնիկներ։

Զբօսնող զոյգը մի փոքր ժամանակ լուռ նստած մնաց պաւլօնիայի ստուերի տակ, խորասուզուած այն թանձր խաւարի մէջ, որ լուսնկայ գիշերները տիրում է շուաք տեղերում։ Ցեստոյ, յանկարծ նրանք երևացին լուսնի շողքերի մէջ և, հեշտասիրաբար իրար փարուած, դանդաղ անցկացան գաւիթով ու անհետացան նշդարիների ծառուղիում։

—Ես հաւատացած էի, ինքն իրան ասաց ծեր Գարդինու

սեփական կառք ունենալը. սակայն, վերջ ի վերջոյ նա տեղի տուեց Ժորժի պնդումներին, մտածելով ինքն իր մէջ.

—Այ թէ կ'ուրախանայ Սիդոնին։

Ի՞նչ կարող էր կարծել խեղճ մարդը, թէ արդէն մի ամիս առաջ Սիդոնին ինքն էր ընտրել Բինդէրի մօտ այն կառքը, որ Ժորժ Ֆրոմենը ուզում էր ընծայել նրան և որ իբր թէ ընդհանուր ծախսերի մէջ էին գցելու, որպէս զի չը խրտնեցնէին Ռիսլէրին։

Կարծես իր ամբողջ կեանքում այդպէս խաբուած լինելու համար էր ստեղծուած այդ բարեհոգի Ռիսլէրը։ Բաւական չէին նրա բնածին ազնուութիւնը և նրա յստակ բնաւորութեան հիմքը կազմող դիւրահաւատութիւնը, որով նա վերաբերւում էր բոլոր մարդկանց և ամեն բանի, վերջերքն էլ մի ուրիշ պատճառ էր աւելացել, որի չնորհիւ նրան հեշտ էր խաբել,—այդ այն հոգսերն էին, որ պատճառում էին նրան նրա ջանքերը Ռիսլիեան տպագրիչ մեքենան գտնելու համար, որ յեղափոխութիւն էր մտցնելու որմաթղթերի արդիւնագործութեան մէջ և, նրա կարծիքով, իր բաժին վճարն էր լինելու առևտրական տան հիմնադրամի մէջ։ Երբ նա թողնում էր իր. նախածրագիրները և դուրս գալիս առաջին յարկում գտնուող արհեստանոցից, բունակ մտամիտի կերպարանք էր ունենում, ինչպէս առհասարակ այն մարդիկ, որոնց կեանքը և զբաղմունքները զատ-զատ ճանապարհներով են ընթանում։ Ուստի կարելի է երևակայել, թէ ինչ երջանկութիւն էր նրա համար, որ այժմ արհեստանոցից վերադառնալիս տունը հանդարտ էր գտնում, կնոջը՝ լաւ տրամադրութեան մէջ և միշտ զուգուած ու ժպտերես։ Առանց ինքն իրան բացատրելու այդ փոփոխութեան պատճառը, նա նկատում էր, որ «փոքրիկը» մի ժամանակից ի վեր էլ առաջուանը չէր իր վերաբերմամբ։ Այժմ Սիդոնին թոյլ էր տալիս նրան հետեւել իր հին սովորութիւններին, չիբուխ ծխել հայրի վրայ քաղցրեղէն ուտելիս, մի քիչ քնել ճաշերից յետոյ և տեսակցել պ. Շեբի ու Դելօբէլի հետ գարեջրատունը։ Տան սարք ու կարգն էլ կերպարանափոխութեան էր ենթարկուել, սիրունացել էր։ Օրէցօր շռայլութիւնը տեղի էր տալիս կօնֆօրտին։ Ծաղկաշատ ծաղկաթանների ու ալ կարմիր հիւրասենեակի հեշտ ու թեթև կահաւորութիւնից Սիդոնին այժմ անցել էր մօդայի նրբութիւններին և սկսել էր արդէն գրաւուել հինաւուրց կահկարասիքով և հաղուագիւտ ֆայանսեղէնով։ Նրա սենեակի պատուանները մեղմ կապտագոյն մետաքսից էին և երիզուած էին ինչպէս մի գոհարեղէնի արկղիկ ներսից։ Հին դաշնամուրի տեղ դրած էր մի հռչակաւոր վարպետի շինած դաշնամուր և արդէն ոչ թէ շաբաթը երկու անգամ, այլ ամեն օր էր գալիս նրա երգեցողութեան վարժուհին, տիկին Դօրսօնը, ձեռքին բերելով գլանաձև փաթաթած մի որ և է ռօմանս։

Շատ տարօրինակ տիպ էր այդ ամերիկական ծագում ունեցող կինը, որի՝ լիմոնի միջուկի նման չէկ մազերը չաղ էին անցած խիզախ ճակատի և պողպատագոյն աչքերի վերևում։ Որովհետև ամուսինը չէր թողնում, որ թատրոն մտնի, նա էլ երգեցողութեան դասեր էր տալիս և երգում էր մի քանի բուրժուական դահլիճներում։ Միշտ ապրելով դաշնամուրի և երգեցողութեան համար յօրինուած մելոդիաների չինծու մթնոլորտում, նա իր համար սովորական էր դարձրել մի տեսակ սանտիմենտալ դիւրագրգռութիւն։

Նա ինքը մարմնացած ռօմանս էր։ Նրա բերանում «սէր և կիրք» խօսքերը կարծես քանչորս վանկից բաղկացած լինէին, այնքան արտայայտիչ եղանակով էր նա արտասանում այդ բառերը։ Օ՜, արտայայտիչ եղանակ։ Հէնց այդ էր, որ տիկին Դօրսօնը ամեն բանից վեր էր դասում և որ ապարդիւն կերպով աշխատում էր հաղորդել իր աշակերտուհուն։

Այն ժամանակ ամենքը գրաւում էին «Ay Chiquita» ռօմանսով, որ ամբողջ Փարիզը կկլկլացնում էր մի քանի սեզօն շարունակ։ Սիդոնին ամենայն աշխատասիրութեամբ ուսումնասիրում էր այդ ռօմանսը և ամբողջ առաւօտները լսում էր, ինչպէս նա երգում էր.

On dit que tu te maries,
Tu sais que j'en puis mourir...
(Ասում են, ուզում ես պսակուել,
Գիտես, որ կարող եմ դարդից մեռնել...)

— Mouriiiir! (մեռնեեեեել), ընդհատում էր արտայայտիկ տիկին Դօրսօնը, սիրահալ դիրքով հակուելով դաշնամուրի վրայ, և, ճիշտ որ, պայծառ աչքերը այնպէս էր բարձրացնում դէպի առաստաղը և դլուխը այնպէս յուսահատօրէն դէպի յետ նետում, որ կարծես թէ իսկապէս մեռնում էր։ Սիդոնին, ինչ անում էր, չէր կարողանում յաջողացնել այդ բանը։ Նրա սատանայ աչքերը և կենսալից շրթունքները այդպիսի էօլեան տաւիղի *) սանտիմենտալութիւնների համար չէին ստեղծուած։ Նրան աւելի տիմենտալութիւնների համար չէին ստեղծուած։ Նրան աւելի տիմենտալութիւնների համար չէին ստեղծուած։ Նրան աւելի լարմամբ կը դային Օֆֆենբախի կամ Էռվէյի օպերէտների եղանակները։

*) Տաւիղ (սանթուր), որի լարերը այնպէս են լարուած, որ ներդաշնակ հնչիւններ են հանում, երբ կախուած տեղը քամին զարկում է նրանց։ Էօլ—հին յոյների դիցաբանութեան մէջ քամու աստուածն էր։

Ե. Թ.

նակները, իրանց անակնկալ նօտաներով, որոնց արտայայտելիք կարելի է լրացնել ձեռքի, գլխի կամ մէջքի շարժումներով, բայ նա չէր համարձակուում խոստովանել այդ՝ իր սիրահալ ուսուցչու հուն։ Սակայն պէտք է ասել, որ, թէև օրիորդ Լը Մերի արհեստ տանողում շատ էին երգել տուել նրան, նրա ձայնը դեռ մատաղաշ էր և բաւական սիրուն։

Շատ քիչ ծանօթութիւններ ունենալով, նա վերջ ի վեր ջոյ մտերմացաւ իր երգեցողութեան ուսուցչուհու հետ։ Նա պահում էր նրան նախաճաշին, իրանց նոր կառքով զբօսնելու էլ տանում, նրա հետ էր գնում զգեստեղէն ու զուգեղէն առնելու։ Տիկին Դօրսօնի սանտիմենտալ և կարեկից բնաւորութիւնը տրամադրում էր գաղտնասացութեան։ Նրա մշտական արտունչները իր բախտից կարծես ուզում էին հոյնպիսի արտունչներ դուրս քաշել նաև ուրիշների բերանից։ Եւ Սիդոնին պատմեց նրան Ժորժի և իր սիրոյ մասին, մեղմացնելով իր մեղքը իր ծնողների անդթութեամբ, ասելով, իբր թէ նրանք բռնի կերպով ամուսնացրել էին իրան իրանից շատ աւելի տարիքով մարդու հետ, նրա հարստութեան պատճառով։ Դօրսօնը իսկոյն և եթ պատրաստակամութիւն ցոյց տուեց օգնելու նրան ու Ժորժին։ Իր ծառայութիւնները ծախելու ընդունակ չէր այդ փոքրիկ տիրիկուհին, բայց նա մի տեսակ սէր էր տածում դէպի սիրահարութիւնը, մեծ հաճոյք էր զգում սիրային ոսմանններից։ Դժբախտ լինելով իր ընտանեկան կեանքում, որովհետև ամուսնացել էր մի տասնաբոյժի հետ, որ նրան ծեծում էր յաճախ, նա այնպիսի կարծիք էր կազմել, թէ բոլոր կնատէր տղամարդիկ մի մի հրէշներ են, և մանաւանդ զարհուրելի բռնակալ էր թուում նրան խեղճ Ռիսլէրը, որին, նրա համոզմունքով, Սիդոնին կատարեալ իրաւունք ունէր տանջելու և դատապարտելու։

Եռանդուն և վերին աստիճանի օգտակար արբանեակ էր նա։ Շաբաթը երկու, երեք անգամ օթեակի տոմսակ էր բերում գնալու օպերա կամ իտալական խմբի ներկայացումներին և կամ այն փոքրիկ յաջողակ թատրոններից մէկը, որոնք մի սէզոնի ընթացքում պրաւում են ամբողջ Փարիզը։ Ռիսլէրը կարծում էր, թէ տիկին Դօրսօնը ինչքան տոմսակ ուզէր՝ կարող էր ճարել երգեցիկ թատրոններում և ուրեմն նա էր հրաւիրողը։ Թշուառականը չէր իմանում, որ մօդային պիէսների այդ առաջնակ ներկայացումների օթեակներից ամենաէժանը յաճախ առասը, տասնհինգ լուիդոր *) էր նստում իր առևտրակցին։ Ճիշտ որ շատ հեշտ էր խաբել այդպիսի մի ամուսնու։ Նրա անսպառ

*) Լուիդոր=20 ֆրանկ=7 ռ. 50 կ.։

դիւրահաւատութիւնը հալած իւղի տեղ էր ընդունում բոլոր սուտերը, բացի այդ էլ՝ խեղճը ամենևին չէր ճանաչում այն չրջանի շինծու կեանքը, ուր իր կինը արդէն սկսել էր աչքի ընկնել։ Նա ոչ մի տեղ չէր գնում կնոջ հետ։ Ամուսնութեան սկզբի ժամանակները մի քանի անգամ նա գնացել էր հետը թատրոն, բայց այնտեղ խայտառակ կերպով քնել էր, չափազանց պարզ լինելով հանդիսատեսներով զբաղուելու համար և չափազանց դանդաղոգի լինելով ներկայացմամբ հետաքրքրուելու համար։ Ուստի և անհունապէս շնորհակալ էր տիկին Դօրսօնից, որ նա փոխարինում էր իրան Սիդոնիի կողքին։ Եւ որքան պատրաստակամութեամբ էր այդ անում տիկին Դօրսօնը։

Երեկոյեան, երբ Սիդոնին դուրս էր գնում տանից, միշտ չքեղ պճնուած, Ռիսլէրը զմայլուած դիտում էր նրան, չիմանալով, թէ որքան արժէն այդ հագուստները, ոչ էլ մանաւանդ այն, թէ ով է եղել այդ արժէքը վճարողը, ու ապատ որ և է կասկածից, նա հանդիստ սպասում էր նրան, բուխարու մօտ նստած գծագրութեամբ պարապելով և դոհ սրտով ինքն իրան ասելով «Ի՜նչ ուրախ ժամանակ է անցկացնում երևի Սիդոնիս»։

Մի յարկ ներքև, Ֆրոմոնների մօտ, նոյն կատակերգութիւնն էր տեղի ունենում, բայց դերերը փոխած։ Այդտեղ կինն էր բուխարու մօտ նստած սպասում։ Ամեն երեկոյ, Սիդոնիի գնալուց կէս ժամ յետոյ, մեծ դարպասը նորից բացւում էր ճանապարհ տալու համար Ֆրոմոնների կառքին, որով պ. Ֆրոմոնը գնում էր իր ժողովարանը։ Ի՞նչ արած։ Առևտուրը իր պահանջներն ունի։ Խոշոր գործերը ժողովարանումն են սարքւում, թղթախաղի սեղանի շուրջը, և ով չի ուզում իր առևտրական տան նշանակութիւնը վայր դցել, պէտք է անպատճառ գնայ այնտեղ։ Կլերը միամտաբար հաւատում էր այդ հէքեաթներին։ Ամուսնու գնալուց յետո նա մի բոպէ տխրութիւն էր զգում։ Որքան ուրախ կը լինէր նա, եթէ Ժորժը տանը մնար կամ թէև թեւի տուած միասին դուրս դային զբօսնելու, զուարճանալու։ Բայց հէնց որ աչքը ընկնում էր երեխայի վրայ, որ ճլվլում էր Բայց հէնց որ աչքը ընկնում էր երեխայի վրայ, որ ճլվլում էր կրակի առաջ և ոտները խաղացնում չորերը հանելիս, սիրտը իսկոյն հանգստանում էր։ Վերջապէս առևտրականների բերանում պատրաստական շահերի կշիռ ունեցող «գործեր» բառը միշտ պատրաստ էր նրան համոզելու համար, որ պէտք է հպատակուել անհրաժեշտութեան։

Ժորժն ու Սիդոնին հանդիպում էին իրար թատրոնում։ Եւ այդտեղ ամենից առաջ յագուրդ էր տալիս նրանց այդտեղ ամենից առաջ յագուրդ էր տալիս նրանց մենութիւնը։ Շատ էին դիտում նրանց։ Սիդոնին այժմ յիմնատիսութիւնը։ Շատ էին դիտում նրանց։ Սիդոնին այժմ յիմնատիսութիւնը։ Բաւական գեղեցիկ էր և նրա սիրուն կերպարանքը, որ կատարեալ

տպաւորութիւն գործելու համար պէտք է անպատճառ զարդ-
ուած լիներ բոլոր տարօրինակ մօդային պճնանքներով, այ-
ստիճան ներդաշնակւում էր այդ պճնանքներին, որ կարծ-
յատկապէս նրա համար հնարուած լինէին նրանք։ Մի քիչ ան-
ցած նրանք գնում էին և օթեակում մնում էր մենակ տիկին Դօր-
սօնը։ Ամբնիւ Գաբրիէլում, Champs—Elysées-ի կլոր հրապարա-
կի վրայ, նրանք վարձել էին մի փոքրիկ բնակարան,—ինչպէս
երազում էին օրիորդ լը Միրի արհեստանոցի աղջիկները,—բաղ-
կացած երկու շքեղ և հանդիսաւոր սենեակներից, ուր հարուստ թա-
ղերի յուութիւնը, որ խանգարում են միմիայն հաղուստէպ կա-
քերը, աքանչելի մթնոլորտ էր կազմում նրանց սիրոյ համար։ Ֆի-
քիչ, վարժուելով իր յանցանքին, Սիդոնին սկսեց յանգուգն և ա-
տարոտի բաներ անել։ Իր աշխատաւոր օրերից նա պահել էր մնա-
քումը հռչակաւոր ճաշարանների և պարերեկոյթների անունները
և այժմ հետաքրքրւում էր գնալ այդ տեղերը, ինչպէս նաև մեծ
զուարճութիւն էր զգում, երբ նրա առաջ կրունկի վրա բաց-
էին անում գոնները զգեստեղէնի մեծ արհեստանոցները, որոնց
մասին իր ամբողջ կեանքում նա գաղափար ունէր միմիայն
ցուցանակներից։ Որովհետև նա ամենից առաջ այդ սիրոյ մէջ
ուզում էր գտնել մի միջոց իր պատանեկութեան ատորացում-
ների ու նեղութիւնների տեղը հանելու։ Ոչ մի բան, օրինակ,
նրան այնքան զուարճութիւն չէր պատճառում Բուլօնեան ան-
տառում կատարած զիշերային զբօսանքից կամ թատրոնից վե-
րադառնալիս, երբան մի ընթրիք Անգլիական սրճարանում, շըր-
ջապատուած անբարոյական զեղխութեան աղմուկով։ Այդ մշտա-
կան շրջագայութիւններից նա տուն էր բերում խօսելու և ի-
րան պահելու նոր ձևեր, անվայել տաղեր և հագուստի ձևեր,
որոնք այդ հին առևտրական տան բուրժուա մթնոլորտի մէջ
մտցնում էին այդ ժամանակուայ փարիզեան կոկօտների խակա-
կան և օտարոտի դիմաստուերը։

Գործարանում արդէն սկսել էին կասկածներ տանել։ Հա-
տարակ կանայք, նոյն իսկ ամենից աղքատները, երևելի քննա-
դատներ են, երբ հարցը գալիս է հագուստին... Երբ տիկին Ռիս-
լէրը ժամի երկքին մօտ դուրս էր գալիս տանից, յիսուն զոյգ
պայծառ ու նախանձոտ աչքեր, դարան մտած արհեստանոցի
պատուհաններում, դիտում էին նրան անցնելիս, թափանցելով
նրա յանցաւոր խղճի խորքը, նրա սև թաւիշէ դօլմանի և շող-
շողուն սև սաթերով զարդարուած իրանոցքի միջով։

Նա չէր նկատում, որ իր խենթ գլխի բոլոր գաղանիքները
թրվռում էին նրա շուրջը, ինչպէս այն ժապաւէնները, որոնք
սաւառնում էին նրա բաց ծործորակի վրայ, և տասը կոճակաւոր

բրօնզագոյն նուրբ կօշիկները ման գալիս զանազան պատմու-
թիւններ էին անում, նկարագրելով նրանց կատարած տեսակ
տեսակ գաղտնի շրջագայութիւնները, այն գորգազարդ սան-
դուխները, որոնցով նրանք անցնում էին գիշերները ընթրիքի
գնալու համար, և այն տաք մուշտակները, որոնց մէջ նրանք
փաթաթւում էին, երբ կառքը պտոյտ էր գործում լճի շուրջը՝
լապտերների շողքով ընդմիջուած ստուերի մէջ։

Բանուորուհիները քրքջում էին ու քչփչում՝ «Մէկ նայեցէք
այս նարմանազուկին... Տեսէք, թէ ինչ տեսակ է հագնւում տա-
նից դուրս գալու համար... Ինչ ասել կուզի, որ եկեղեցի գնալու
համար չէ, որ այդպէս զուգուել է... Ո՞վ կը հաւատայ, որ ե-
րեկը տարի էլ չը կայ, որ ամեն առաւօտ արհեստանոց էր գնում
վատերպրուտը հագին և երկու սուլի խորոված չագանակ լցրած
գրպանները՝ ձեռքերը տաք պահելու համար... Հիմի մոիկ արէք,
թէ ինչպէս է բաղմել սեփական կառքի մէջ...»։ Եւ մագնէդիա-
խառն կայծքարի փոչու և ամառ ձմեռ հրաչէկ վառանների փոնչո-
ցի մէջ աշխատող խեղճ աղջիկներից շատերը մտածում էին
բախտի այն խաղերի մասին, որոնց շնորհիւ այդպիսի յանկարծա-
կան փոփոխութիւններ են մտնում մի կնոջ կեանքի մէջ, և
սկսում էին երազել մի անորոշ շնաշխարհիկ ապագայի մասին,
որ թերևս նրանց ևս սպասում էր, առանց իրանց իմանալուն։

Ամենքն էլ այն կարծիքին էին, որ Սիդոնին դաւաճանում է
Ռիսլէրին։ Տպագրական արհեստանոցում բանող երկու բանուոր-
ներ, Folies Dramatiques-ի երկու մշտական յաճախորդներ, ա-
սում էին, թէ իրանք մի քանի անգամ տեսել էին տիկին Ռիս-
լէրին այդ թատրոնում մի պարոնի հետ, որ թագնւում էր օ-
թեակի խորքում։ Աչիլ քեռին էլ զարմանալի բաներ էր պատ-
մում... Որ Սիդոնին սիրական ունէր, նոյն իսկ մի քանի սի-
րականներ, այդ անկասկած էր ամենքի համար։ Միայն թէ դեռ
ոչ ոքի մտքով չէր անցնում, թէ այդ սիրականը կարող է Ժօրժ
Ֆրօմօնը լինել։

Սակայն Սիդոնին ամենևին խոհեմութիւն չէր պահպանում
նրա հետ ունեցած յարաբերութիւնների մէջ։ Ընդհակառակը,
կարծես նա մի տեսակ ցուցամոլութիւն էր մտցնում այդ բանի
մէջ. և գուցէ հէնց այդ էր նրանց փրկողը։ Քանի-քանի անգամ
էր պատահել, որ նա յանդգնաբար կանգնեցրել էր Ժօրժին
պատուհանի վրայ՝ երեկոյեան ժամադրութեան մասին պայմա-
նաւորուելու համար։ Քանի-քանի անգամ էր պատահել, որ նա
դող էր ազդել Ժօրժին, երես առ երես խօսելով նրա հետ բո-
լորի աչքի առաջ։ Ապշութեան առաջին բոպէից յետոյ Ժօրժը
նոյն իսկ շնորհակալ սրտով էր վերաբերւում նրան այդ յան-

դուքն վարմունքի համար, որ վերագրում էր նրա սիրոյ սասա-
կութեանը։ Սակայն նա սխալում էր։

Սիդոնիի ուղածը իսկապէս, թէև ինքն էլ այդ լաւ չէր
գիտակցում, այն էր, որ Կլէրը նրանց նկատէր, որ նա իր պա-
տուհանի վարագոյրի արանքից նայէր նրանց վրայ և նրա սըր-
տում մի կասկած ծագէր իրանց յարաբերութիւնների մասին։
Իր ախոյեանի սրտի անհանգստութիւնն էր միայն պակաս, որ-
պէս զի Սիդոնին լիովին երջանիկ զգար իրան։ Բայց նրա աշ-
խատանքը զուր էր. Կլէր Ֆրոմոնը ոչինչ չէր նկատում և Ռիս-
լէրի սրտի նման նրա սիրտն էլ անդորր էր ու անվրդով։

Միմիայն ծերունի գանձապահ Սիդիզմունդն էր արդարև
անհանգիստ։ Սակայն նրա մտահոգութեան առարկան էլ Սի-
դոնին չէր, երբ, գրիչը ականջի յետեւը խրած, նա մի բոպէ
կանգ էր առնում իր հաշիւների ժամանակ և իր վանդակապա-
տի միջով աչքերը յառում փոքրիկ պարտէզի թրջած գետնին։
Նա մտածում էր միայն իր պատրոնի, պ. Շորշի մասին, որ այժմ
շատ փող էր վերցնում դրամարկղից իր ընթացիկ ծախսերի հա-
մար և խառնաշփոթութիւն էր քցում նրա բոլոր հաշուեգրքերի
մէջ։ Ամեն անգամ մի նոր պատրուակ էր գտնում Ժորժը։ Նա
ասում էր դրամարկղի պատրհանին անհոդ կերպարանքով։

«Մի քիչ փող կը գտնուի մտանեիր, սիրելի Պլանուս... Ե-
բէկ երեկոյ դարձեալ ինձ քսպլեցին թղթախաղում. չեմ ու-
զում այդպիսի մի չնչին գումարի համար բանկը ուղարկել...»

Սիդիզմունդ Պլանուսը, կարծես ախոսալով, բանում էր
դրամարկղը Ժորժի ուղած գումարը տալու համար և սարսափով
մտաբերում էր այն օրը, երբ Ժորժը, որ այն ժամանակ դեռ
քան տարեկան էր միայն, եկաւ խոստովանուելու իր հօրեղբօ-
րը, որ պարտքով մի քանի հազար ֆրանկ էր տարուել թղթա-
խաղում։ Այդ բաւական էր, որպէս զի ծերունի գանձապահը
առելութիւն զգար դէպի Ժողովարանը և արհամարհանք դէպի
նրա բոլոր անդամները։ Եւ երբ մի օր այդ անդամներից մէկը,
մի հարուստ վաճառական, եկել էր գործարան, նա ասաց նրան
բիրտ միամտութեամբ.

—Թող չհանեմը գնայ ձեր Շատօ-դ'Օյի ժողովարանը...
Պ. Ժորժը այս երկու ամսուայ մէջ երեսուն հազար ֆրանկից
աւելի փող է տարուել ձեզնում։

Վաճառականը սկսեց ծիծաղել.

—Սխալ էք, սխալ, քեռի Պլանուս... ամենաքիչը երեք ա-
միս կը լինի, որ ձեր պատրոնի երեսն էլ չենք տեսել մեր ժո-
ղովարանում։

Գանձապահը լռեց, բայց նրա մէջ ծագեց մի սարսափելի
միտք, որ ամբողջ օրը հանդիստ չէր տալիս նրան։

Եթէ Ժորժը ժողովարան չէր գնում, հապա որտեղ էր լի-
նում նա երեկոները, որտեղ էր ծախսում այդքան փող։

Անկասկած էր, որ ինչ որ կին կար խառը այդ բանում։

Հէնց որ այդ կասկածը զարթնեց նրա մէջ, նրա սիրտը
դող ընկաւ իր դրամարկղի համար։ Այդ Բէրն կանտոնից եկած
ծեր արջը, որ ամուրի էր մնացել իր ամբողջ կեանքում, սար-
սափելի ահ էր զգում կանանցից ընդհանրապէս և փարիզուհի-
ներից մասնաւորապէս։ Առաջ ու առաջ, խիղճը հանգստացնե-
լու համար, նա իր պարտականութիւնը համարեց նախազգու-
շացնել Ռիսլէրին։ Սկզբում անորոշ կերպով խօսեց.

—Շատ փող է ծախսում պ. Շորշը, ասաց նա մի օր Ռիս-
լէրին։

Ռիսլէրի վրայ այդ ոչ մի ազդեցութիւն չարեց։

—Իսնձ ինչ, սիրելի Սիդիզմունդ։ Իր փողն է։

Եւ այդ նրա անկեղծ համոզմունքն էր։ Նրա աչքում Ֆրո-
մոն կրտսերը առևտրատան բացարձակ տէրն էր։ Ինչի նման
կը լինէր, եթէ ինքը, Ֆրոմոնների նախկին գծագրիչը, թոյլ
տար իրան նկատողութիւններ անելու նրան։ Գանձապահը այլ
ևս սիրտ չէր անում խօսել այդ հարցի մասին, մինչև որ մի օր
մի չալավաճառ մեծ առևտրական տնից վեց հազար ֆրանկի մի
հաշիւ բերեցին նրան մի քաշմիրի շալի համար։

Նա գնաց Ժորժի գրասենեակը։

—Պէտք է վճարել, պարոն։

Ժորժ Ֆրոմոնը մի քիչ այլայլուեց։ Սիդոնին մոռացել էր
նախազգուշացնել նրան այդ նոր առքի մասին. նա այլ ևս չէր
քաշւում Ժորժից։

«Վճարեցէք, վճարեցէք, քեռի Պլանուս...», ասաց նա մի
քիչ շփոթուելով և յետոյ աւելացրեց՝ «Ֆրոմոն կրտսերի հաշուի
մէջ մտցրէք այդ... ինձ խնդրել էին կատարել այդ յանձնարա-
րութիւնը...»։

Այդ երեկոյ գանձապահ Սիդիզմունդը, իր փոքրիկ լամպը
վառելիս, տեսաւ, որ Ռիսլէրն անցնում է պարտէզով, և, լու-
սամուտը թխթխկացնելով, կանչեց նրան իր մօտ։

—Պատճառը մի կին է, ասաց նա նրան ցած ձայնով...
Այժմ ես ապացոյց ունեմ...

Երբ խեղճ մարդը արտասանում էր այդ «կին» սարսափե-
ալի խօսքը, նրա ձայնը դողդողում էր երկիւղից, կորչելով գոր-
ծարանի ժխորի մէջ։ Շրջապատող աշխատանքի աղմուկը այդ
բոպէին չարագուշակ էր թւում թշուառ գանձապահին։ Նրան

թեում էր, թէ այդ բոլոր շարժուն մեքենաները, փաթիլ-փաթիլ գոլորշի ժայթքող ահագին ծխնելոյզը, հաղար ու մի տեսակ աղմկալից աշխատանքով զբաղուած բանուորները, այդ բոլորը զարդում էին, ճգնում էին և յոգնում միմիայն մի թաւշապատ ու գոհարազարդ խորհրդաւոր կանացի էակի համար։

Ռիսլէրը ծիծաղեց նրա վրայ, հաւատ չընծայելով նրա կատակներին։ Նա վաղուց ի վեր գիտէր իր հայրենակցի հիւանդութիւնը—կնոջ կորստաբեր ազդեցութիւն տեսնել ամեն բանի մէջ։ Բայց և այնպէս Պլանուսի խօսքերը երբեմն-երբեմն նրա միտքն էին գալիս, մանաւանդ երեկոները, այն միայնակութեան բոպէներին, երբ Սիրօնին տիկին Դօրսօնի հետ թատրոն էր գնում, նախապէս ահագին աղմուկ բարձրացնելով զուգուելուց զարդարուելու ժամանակ և յետոյ բոլորովին ամայացած թողնելով բնակարանը, հէնց որ նրա զգեստի երկար տուրը անցնում էր չէմքի այն կողմը։ Մոմերը վառում էին հայելիների առաջ և զգեստեղէնի մանր մունր պարագաները, ցիր ու ցան թափուած այստեղ ու այնտեղ, պատմութիւններ էին անում օտարոտի քմահաճոյքների և չափազանց մեծ ծախսերի մասին։ Ռիսլէրը ոչինչ չէր տեսնում այդ բոլոր բաներից. միմիայն, երբ նա լսում էր Ժորժի կառքի դռոցը բակում, մի տեսակ սրանեղութիւն և սառնութիւն էր զգում, մոռանալով, որ ներքևի յարկում տիկին Ֆրօմոնը երեկոները մէն-մենակ է մնում։ Խեղճ կին։ Իսկ եթէ յանկարծ ճիշտ լինէր Պլանուսի ասածը... Եթէ դուրս գար, որ Ժորժը մի ուրիշ ընտանիք ունի քաղաքում... Օ՛, սոսկալի բան կը լինէր այդ։

Այն ժամանակ, փոխանակ նստելու աշխատելու, նա, կամացուկ իջնելով ներքև, հարցնում էր, արդեօք կարելի էր տեսնել տիկնոջը, և իր պարտականութիւնն էր համարում ժամանակ անցկացնել նրա հետ։

Երեխան արդէն քնած էր լինում, բայց նրա փոքրիկ զբաղխանոցն ու կապոյտ մաշիկները ընկած էին լինում կրակարանի առջև զանազան խաղալիքների հետ։ Կէրը կարդում էր կամ աշխատում, իսկ մայրը, կողքին լուռ նստած, շարունակ եռանդուն կերպով պատում ու սրբում էր զանազան բաներ, չնչասպառ փչելով իր ժամացոյցի տուփի վրայ և տաս անգամ միևնոյն բանը ջղային շարժումով դնելով միևնոյն տեղը, սկսուող մոլութեան յատուկ յամառութեամբ։ Խեղճ Ռիսլէրն էլ մի երեսելի ուրախ խօսակից չէր, բայց այդ չէր խանգարում տիկին Կլէրին սրտանգին կերպով ընդունելու նրան։ Նա գիտէր, թէ ինչեր էին խօսում Սիրօնիի մասին գործարանում, և թէպէտ նա իր լսածի կէսին էր միայն հաւատում, այնուամենայնիւ նրա սիրտը ճմլում էր, երբ տեսնում էր այդ խեղճ մարդուն, որին այնքան յաճախ մենակ էր թողնում իր կինը։ Այդ փոխադարձ կարեկցութիւնն էր կազմում նրանց յարաբերութիւնների հիմքը և չափից վեր սրտաշարժ տեսարան էին ներկայացնում այդ երկու բարձիթողի արուած էակները, որոնք փոխադարձաբար խղճում էին միմեանց և աշխատում էին սփոփել իրար։

Նստելով հիւրասենեակի մէջ տեղը դրուած այդ պայծառ լուսաւորուած փոքրիկ սեղանի մօտ, Ռիսլէրը փոքր առ փոքր սկսում էր համակուել ընտանեկան մթնոլորտի ջերմութեամբ, շրջապատող իրերի ներդաշնակութեամբ։ Նա տեսնում էր այնտեղ այն կահկարասիքը, որ ճանաչում էր քսան տարուց ի վեր, տեսնում էր իր նախկին պատրօնի պատկերը,—և իր սիրելի տիկին «Շօրշը», որ նրա կողքին կռացած ինչ-որ մանրակար էր անում, նրան աւելի ևս ջահել և սիրասուն էր թուում այդ հինաւուրց յիշատակների մէջ։ Երբեմն-երբեմն տիկինը վեր էր կենում գնում ամն տալու կողքի սենեակում քնած երեխային, որի թեթև շնչառութիւնը լսւում էր լռութեան բոպէներում։ Առանց ինքն իրան հաշիւ տալու այդ բանում, Ռիսլէրը իրան աւելի լաւ, աւելի ջերմ էր զգում այդտեղ, քան իր բնակարանում, որովհետև լինում էին օրեր, երբ իր սիրուն կացարանը, որի դուռը ամեն ժամ բաց ու խուսի էր լինում շտապ-շտապ դուրս գնացող ու տուն եկող Սիրօնիի համար, նրա վրայ այնպիսի տպաւորութիւն էր գործում, ինչպէս մի ծածկաւոր, բայց անդուռ ու անպատուհան շուկայ, մատնուած աշխարհիս չորս ծայրի քամիներին։ Նրա կացարանը բանակի տեղ էր, այստեղ՝ բնակութեան։ Մի հոգատար ձեռք կարդ ու շնորհք էր մտցնում այս կացարանի բոլոր մասերում։ Շրջանաձև շարուած աթոռները կարծես ցած ձայնով զրոյց էին անում իրար հետ, կրակը աքանչելի կերպով ճաճատում էր վառուելիս և Կլէրի աղջկայ փոքրիկ գլխանոցը իր կապոյտ ժապաւէնների բոլոր հանգոյցներում պահպանած էր լինում երեխայական քաղցր ժպիտների ու սնամեղ հայեացքների նշոյլներ։

Եւ այն ժամանակ, մինչ Կլէրը մտածում էր, որ այդպիսի մի հիանալի մարդ արժանի էր մի աւելի լաւ կին ունենալու, Ռիսլէրը, տեսնելով իր կողմը դարձած այդ մեղմ ու դեղեցիկ դէմքը, այդ ներողամիտ ու խելացի աչքերը, հարցնում էր մտքում, թէ որ փուչ-փչանալու կնոջ համար էր Ժորժ Ֆրօմոնը մենակ թողնում այս պաշտելի էակին։

—

VI

Հաշուեկշիռը

Ծեր Պլանուսը բնակւում էր Մօնռուժում մի տան մէջ, գտնւում էր այն տան կողքին, ուր մի ժամանակ ապրում էր Շեբերը։ Այդ տունն էլ բաղկացած էր երկք պատուհանաւոր գեռնայարկի վրայ չինուած մի հատ վերնայարկից և նոյնպէս ունէր ցանցաձև ցանկապատով մի փոքրիկ պարտէզ, եղերուած գալար ծօսախներով։ Ծերուկ գանձապահը կենում էր այդ տեղ իր քրոջ հետ։ Առաւօտեան նա գնում էր քաղաք առաջի հանրակառքով, ճաշին վերադառնում էր տուն և կիրակիներն մնում էր տանը ու զբաղւում իր ծաղիկներով ու հաւերով։ Պառաւած քոյրը կառավարում էր տունը, եփում-թափում էր կար ու կարկատան էր անում։ Դժուար էր գտնել աւելի բարի տաւոր զոյգ։

Երկուսն էլ անպսակ, նրանք կապուած էին իրար հետ միատեսակ ատելութեամբ ղէպի ամուսնութիւնը։ Քոյրը դարձնում էր բոլոր տղամարդիկներից, եղբայրը կասկածով էր վերաբերւում դէպի բոլոր կանայք։ Բայց և այնպէս նրանք պաշտում էին միմեանց, մէկը միւսին բացառութիւն համարելով իր սեռի ընդհանուր փչութեան մէջ։

Եղբօր մասին խօսելիս քոյրը միշտ ասում էր՝ «իմ եղբայր պարոն Պլանուսը», եղբայրն էլ նոյն հանդիսաւոր եղանակով ասում էր նախադասութեան սկզբին կամ վերջին կպցնում էր՝ «իմ քոյր օրիորդ Պլանուսը»։ Այդ երկու ամաչկոտ ու միամիտ էակների աչքում Փարիզը,—որ նրանք չէին ճանաչում, չը նայած որ ամեն օր անց էին կենում մէջովը,—մի որջ էր երկու սեռի հրէշների, որոնք ամեն ջանք թափում էին, որպէս զի որքան կարելի է շատ չարիք հասցնեն իրար, և երբ նրանց ականջին հասնում էր մի լուր ընտանեկան որ և է դրամայի մասին, մի պառաւական բամբասանք, նրանք, իրանց հայեացքների տարբերութեան հաճաձայն, տարբեր անձանց էին մեղաւոր համարում։

—Մեղքը մարդունն է, ասում էր «իմ քոյր օրիորդ Պլանուսը»։

—Մեղքը կնոջն է, առարկում էր «իմ եղբայր պարոն Պլանուսը»։

—Օ՜, տղամարդիկ...

—Օ՜, կինարմատներ...

Եւ այդ էր նրանց վէճերի մշտական նիւթը պարապութեան

այն հաղուագէպ ժամերին, երբ ծեր Սիգիզմունդը հանգստանում էր աշխատանքով լի և իր հաշուեդրքերի նման կանոնաւոր դասաւորուած օրուայ ընթացքում։ Մի ժամանակից ի վեր քոյր ու եղբայր սկսել էին առանձնապէս տաք վիճել։ Գործարանում անցած դարձածը սաստիկ զբաղեցնում էր նրանց։ Քոյրը խղճում էր տիկին Ֆրօմօնին և վերին աստիճանի անարդ էր գտնում նրա ամուսնու վարմունքը. ինչ վերաբերում է Սիգիզմունդին, նա բաւականաչափ կծու խօսք չէր գտնում բնորոշելու համար այն անյայտ անպիտան կնոջը, որ վեց հազար ֆրանկանոց չալերի հաշիւ էր ուղարկում իրան՝ դրամարկղից վճարելու։ Նրա համար գլխաւոր հարցը նրանումն էր, որ վտանգւում էր այդ հին առևտրական տան փառքն ու պատիւը, ուր ինքը ծառայում էր երիտասարդութիւնից ի վեր։

—Ի՞նչ է լինելու մեր դրութիւնը... ասում էր նա շարունակ... Օ՜, կինարմատներ...

Մի օր օրիորդ Պլանուսը բուխարու առաջ նստած դուլպա էր գործում, սպասելով իր եղբօրը։

Կէս ժամ կը լինէր արդէն, որ հացը քցած էր, և պառաւ օրիորդը սկսում էր անհանգստանալ այդպիսի չը տեսնուած ուշացումից, երբ Սիգիզմունդը ներս մտաւ, այլայլուած կերպարանքով և առանց մի խօսք ասելու, որ նրա կողմից բոլորովին անսովոր բան էր։

Նա սպասեց, մինչև որ դուռը լաւ փակուեց, ու յետոյ, նայելով քրոջ անհանդիստ ու հարցական դէմքին, ասաց ցած ձայնով.

—Նոր լուր ունեմ։ Այժմ ես գիտեմ, թէ ով է այն կինը, որ մեր տունն աւերում է։

Եւ, փոքրիկ սեղանատան համար կահ-կարասիքին աչք ածելուց յետոյ, աւելի ևս ցած ձայնով արտասանեց մի այնպիսի տարօրինակ ու անսպասելի անուն, որ օրիորդ Պլանուսը երկու անգամ կրկնել տուեց նրան։

—Կարելի բան է միթէ։

—Կասկած չը կայ։

Եւ, չը նայելով իր անկեղծ վշտին, Սիգիզմունդը գրեթէ յաղթական կերպարանք ունէր։

Պառաւ օրիորդը չէր կարողանում հաւատալ լսածին... Այնքան բարեկիրթ, այնքան քաղաքավարի մի տիկին, որ այն աստիճան սրտագին ընդունելութիւն էր ցոյց տուել իրան... Մթթէ կարելի էր ենթադրել այդպիսի բան նրա կողմից։

—Ապացոյցներ ունեմ... ասաց Սիգիզմունդը։

Ու պատմեց, թէ ինչպէս Աշիլ քեռին մի օր, երեկոյեան

VI

Հաշուեկշիռը

Ծեր Պլանուսը բնակւում էր Մօնռուժում մի տան մէջ, որ գտնւում էր այն տան կողքին, ուր մի ժամանակ ապրում էին Շէբերը։ Այդ տունն էլ բաղկացած էր երեք պատուհանանոց դեռնայարկի վրայ չինուած մի հատ վերնայարկից և նոյնպէս ունէր ցանցաձև ցանկապատով մի փոքրիկ պարտէզ, եղերուած գալար ծօսախներով։ Ծերուկ գանձապահը կենում էր այդ տեղ իր քրոջ հետ։ Առաւօտեան նա գնում էր քաղաք առաջին հանրակառքով, ճաշին վերադառնում էր տուն և կիրակիներն մնում էր տանը ու զբաղւում իր ծաղիկներով ու հաւերով։ Պառաւած քոյրը կառավարում էր տունը, եփում-թափում էր կար ու կարկատան էր անում։ Դժուար էր գտնել աւելի բարի տաւոր զոյգ։

Երկուսն էլ անպսակ, նրանք կապուած էին իրար հետ միատեսակ առելութեամբ դէպի ամուսնութիւնը։ Քոյրը դարշում էր բոլոր տղամարդիկներից, եղբայրը կասկածով էր վերաբերւում դէպի բոլոր կանայք։ Բայց և այնպէս նրանք պաշտում էին միմեանց, մէկը միւսին բացառութիւն համարելով իր սեռի ընդհանուր փչութեան մէջ։

Եղբօր մասին խօսելիս քոյրը միշտ ասում էր՝ «իմ եղբայր պարոն Պլանուսը», եղբայրն էլ նոյն հանդիսաւոր եղանակով ասում էր նախադասութեան սկզբին կամ վերջին կպցնում էր՝ «իմ քոյր օրիորդ Պլանուսը»։ Այդ երկու ամաչկոտ ու միամիտ էակների աչքում Փարիզը,—որ նրանք չէին ճանաչում, չը նայած որ ամեն օր անց էին կենում միջովը,—մի որջ էր երկու սեռի հրէշների, որոնք ամեն ջանք թափում էին, որպէս զի որքան կարելի է շատ չարիք հասցնեն իրար, և երբ նրանց ականջին հասնում էր մի լուր ընտանեկան որ և է դրամայի մասին, մի պառաւական բամբասանք, նրանք, իրանց հայեացքների տարբերութեան համաձայն, տարբեր անձանց էին մեղաւոր համարում։

—Մեղքը մարդունն է, ասում էր «իմ քոյր օրիորդ Պլանուսը»։

—Մեղքը կնոջն է, առարկում էր «իմ եղբայր պարոն Պլանուսը»։

—Օ՜, տղամարդիկ...

—Օ՜, կինարմատներ...

Եւ այդ էր նրանց վէճերի մշտական նիւթը պարապութեան

այն հաղուագէպ ժամերին, երբ ծեր Սիգիզմունդը հանգստանում էր աշխատանքով լի և իր հաշուեգրքերի նման կանոնաւոր դասաւորուած օրուայ ընթացքում։ Մի ժամանակից ի վեր քոյր ու եղբայր սկսել էին առանձնապէս տաք վիճել։ Գործարանում անցած դարձածը սաստիկ զբաղեցնում էր նրանց։ Քոյրը խղճում էր տիկին Ֆրօմենին և վերին աստիճանի անարդ էր գտնում նրա ամուսնու վարմունքը. ինչ վերաբերում է Սիգիզմունդին, նա բաւականաչափ կծու խօսք չէր գտնում բնորոշելու համար այն անյայտ անպիտան կնոջը, որ վեց հազար ֆրանկանոց չարի հաշիւ էր ուղարկում իրան՝ դրամարկղից վճարելու։ Նրա համար գլխաւոր հարցը նրանումն էր, որ վտանգւում էր այդ հին առեւտրական տան փառքն ու պատիւը, ուր ինքը ծառայում էր երիտասարդութիւնից ի վեր։

—Ի՞նչ է լինելու մեր դրութիւնը... ասում էր նա չարունակ... Օ՜, կինարմատներ...

Մի օր օրիորդ Պլանուսը բուխարու առաջ նստած գուլպա էր գործում, սպասելով իր եղբօրը։

Կէս ժամ կը լինէր արդէն, որ հացը քցած էր, և պառաւ օրիորդը սկսում էր անհանգստանալ այդպիսի չը տեսնուած ուշացումից, երբ Սիգիզմունդը ներս մտաւ, այլայլուած կերպարանքով և առանց մի խօսք ասելու, որ նրա կողմից բոլորովին անսովոր բան էր։

Նա սպասեց, մինչև որ դուռը լաւ փակուեց, ու յետոյ, նայելով քրոջ անհանգիստ ու հարցական դէմքին, ասաց ցած ձայնով.

—Նոր լուր ունեմ։ Այժմ ես գիտեմ, թէ ով է այն կինը, որ մեր տունն աւերում է։

Եւ, փոքրիկ սեղանատան համար կահ-կարասիքին աչք ածելուց յետոյ, աւելի ևս ցած ձայնով արտասանեց մի այնպիսի տարօրինակ ու անսպասելի անուն, որ օրիորդ Պլանուսը երկու անգամ կրկնել տուեց նրան։

—Կարելի՞ բան է միթէ։

—Կասկած չը կայ։

Եւ, չը նայելով իր անկեղծ վշտին, Սիգիզմունդը դրեթէ յաղթական կերպարանք ունէր։

Պառաւ օրիորդը չէր կարողանում հաւատալ լսածին... Այնքան բարեկիրթ, այնքան քաղաքավարի մի տիկին, որ այն աստիճան սրտագին ընդունելութիւն էր ցոյց տուել իրան... Մթէ կարելի էր ենթադրել այդպիսի բան նրա կողմից։

—Ապացոյցներ ունեմ... ասաց Սիգիզմունդը։

Ու պատմեց, թէ ինչպէս Աշիլ քեռին մի օր, երեկոյեան

ժամի տան ու մէկին, պատահել էր Ժորժին ու Սիդոնիին այ
վայրկեանին, երբ Նրանք մտնում էին Մոնմարտր թաղի փոք
րիկ հիւրանոցներից մէկը։ Իսկ քեռի Աշիլին վաղուց էին ճա
նաչում. նա սուտ ասող մարդ չէր։ Բացի այդ, ուրիշներն ի
Նրանց տեսել էին այդպիսի տեղերում։ Գործարանում այլ ի
խօսակցութեան ուրիշ առարկայ չունէին։ Միայն Ռիսլէրն էր
որ ոչնչի մասին կասկած չէր տանում։

—Եթէ այդպէս է, ձեր պարտականութիւնն է նախազգու
շացնել Նրան, յայտարարեց օրիորդ Պլանուսը։

Գանձապահը մտահոգ կերպարանք ստացաւ։

—Շատ փափուկ խնդիր է... Նախ և առաջ, ո՞վ գիտի, կը
հաւատա՞յ արդեօք ասածիս։ Այն աստիճան կուրացած կոյրեր
կան, որ... Եւ վերջապէս, երկու առևտրական ընկերների մէջ
խցկուելով, ես կարող եմ շատ հեշտ զրկուել պաշտօնից... Օ՜
կանայք... կանայք... Եւ սակայն ոչքան բախտաւոր կարող էր
լինել Ռիսլէրը։ Երբ եղբօր հետ բերել տուեցի Շվեյցարիայից
մի սու չը կար գրպանումը, իսկ այսօր Փարիզի ամենաառաջին
առևտրական տան տէրերից մէկն է... Կարծում էիք, հանդիսա
կը նստի... Ի՞նչպէս չէ... Պէտք է որ պարոնս ամուսնանայ...
Կարծես թէ մարդ կը մեռնի, եթէ չամուսնանայ... Եւ այն էլ
ամուսնանում է մի փարիզուհու հետ, այն աջ ու ձախ չաղ
տուող կանանցից մէկի հետ, որոնք սնաքանդութիւն են մի ազ
նիւ առևտրական տան համար, մինչդեռ նա ձեռքի տակ ունէր
մի արի աղջիկ, գրեթէ հասակակից իրան, մի հայրենակից, աշ
խատանքի սովոր և ամուր կազմուածքով...

«Իմ քոյր օրիորդ Պլանուսը», որի կազմուածքին էր վե
րաբերում այդ ակնարկը, հիանալի տպաւորութիւն ունէր բացականչե
լու, «Օ՜, տղամարդիկ... տղամարդիկ»..., բայց լուռ մնաց։ Շատ
փափուկ հարց էր այդ, և ո՞վ գիտի, դուցէ արդարև, եթէ Ռիս
լէրը այն ժամանակ ուղած լինէր, միակ տղամարդը կը լինէր...

Ծեր Սիդոնիանը շարունակեց.

—Եւ տեսէք թէ ինչ դրութեան ենք հասել... Երկաթուղի
ի վեր, որմաթղթերի առաջին գործարանը Փարիզում կախուած
է այդ չնչին սրարածի փէչերից։ Պէտք է տեսնել, թէ ինչպէս են
հալւում փողերը։ Ամբողջ օրը բան ու գործս այն է որ գրա
մարկղը բաց եմ անում պ. Ժորժի պահանջած գումարները տա
լու համար։ Միշտ ինձ է գիմում, որովհետև եթէ իր բանկիրից
վերցնէր, շատ աչքի կ'ընկնէր, միշտ դրամարկղում փողը շա
րունակ գալիս գնում, աւելանում, պակասում է... Բայց հա
շուեկշիռը գլխներիս կանգնած է... Ի՞նչ եմ ասել, հիանալի բան
կը լինեն դրանց հաշիւները տարուայ վերջին... Ամենաարտասուե

լին այն է, որ Ռիսլէր աւագը խօսք անգամ չի ուզում լսել։ Քա
նի քանի անգամ նախազգուշացրել եմ իրան. «Զգոյշ կաց, պա
րոն Ժորժը խենթութիւններ է անում այդ կնոջ համար...» կամ
հեռանում է ուսերը թափ տալով կամ թէ ասում է, թէ այդ ի
րան բանը չէ, որովհետև գործարանի տէրը Ֆրոմոն կրտսերն է...
Խա՜չը, քիչ է մնում մարդ կարծի... քիչ է մնում մարդ կարծի...»

Գանձապահը չը վերջացրեց նախադասութիւնը, բայց Նրա
լռութեան տակ շատ թագուն մտքեր էին զգացւում։

Պառաւ օրիորդի սիրտը այրւում էր կսկծից, բայց, ինչպէս
առհասարակ անում է կանանց մեծամասնութիւնը այդպիսի
դէպքերում, փոխանակ չարիքին մի դարման փնտռելու, նա
մոլորւում էր հաղար ու մի յեսանկատ ափսոսանքների, ենթա
դրութիւնների և ախ ու վախերի մէջ... Ափսո՜ս, որ աւելի շուտ
չէին իմացել այդ, երբ Շէրերը դեռ նրանց հարևաններն էին։
Տիկին Շէրը շատ պատուական կին էր։ Կարելի էր համոզել
Նրան, որ հակէր Սիդոնիին, հետը լուրջ կերպով խօսէր։

—Ճիշտ որ, լաւ միտք է այդ, ընդհատեց Նրա խօսքը Սի
դիմունդը... Լաւ կը լինի գնաք Մայլ փողոցը Նրա ծնողներին
նախազգուշացնելու։ Սկզբում մտքովս անցաւ նամակ գրել
Ֆրանցին... Նա մեծ ազդեցութիւն ունէր եղբօր վրայ և կան
բաներ, որ միայն նա կարող է ասել Նրան... Բայց Ֆրանցը
շատ հեռու է... Եւ բացի այդ, սարսափելի բան կը լինէր, եթէ
անհրաժեշտ լինէր դիմել այդ միջոցին... Խեղճ Ռիսլէր, սիրտս
ամուսամենայնիւ ցաւում է նրա համար... Չէ, էլի լաւն այն է,
որ իմաց տանք տիկին Շէրին... Դուք յանձն կ'առնէք այդ բա
նը, քոյրիկ...

Վատնդաւոր յանձնարարութիւն էր։ Օրիորդ Պլանուսը մի
քանի առարկութիւններ արեց, բայց նա սովոր չէր երբէք հա
կառակել իր եղբօր կամքին, իսկ այն միտքը, որ նա կարող էր
օգտակար լինել իրանց հինաւուրց բարեկամ Ռիսլէրին, վերջ
նականապէս կակղեցրեց նրան։

Իր փեսայի բարեհոգութեան չնորհիւ, պ. Շէրին յաջողել
էր իրագործել իր նոր քմահաճ ծրագիրը։ Երկաթ ամիս էր ար
դէն, որ նա բնակւում էր իր հռչակաւոր վաճառանոցում, Մայլ
փողոցում, և ամբողջ թաղը մնացել էր զարմացած, տեսնելով
այդ խանութը, որի մէջ ապրանք չը կար, բայց որի փեղկերը
բացւում էին առաւօտեան և փակւում գիշերը, ինչպէս առհա
սարակ խոշորավաճառ խանութներում։ Զորս կողմը դարակներ
էր սարքել, նոր հաշուասեղան էր շինել տուել և մի դաղտնա
փակ դրամարկղ ու մի մեծ կշեռք։ Մի խօսքով, պ. Շէրը ունէր

առևտրի համար անհրաժեշտ բոլոր տարրերը, առանց դեռ որոշակի իմանալու, թէ ինչ առևտուր է ընտրելու։

Նա մտածում էր այդ բանի մասին ամբողջ օրը, անվերջ յետ ու առաջ չափչփելով խանութը, որի մէջ թափթփուած էին ենջարանի մի քանի խոշոր կահ-կարասիներ, որոնք չէին տեղաւորուել խանութի յետեի սենեակում։ Նա մտածում էր այդ հարցի մասին նաև իր դռան չէմքի վրայ, երբ, դրիչը ականջի յետեը խրած, մեծ ախորժանքով խորասուզուում էր փարիզեան առևտրի ժխորի մէջ։ Վաճառատունների գործակալները գնում գալիս էին նմուշների տետրակները կռնատակերին, իրար յետեւից անցնում էին ապրանքներ տեղավորող սայլերը, հանրակառքեր, բեռնակիր մշակներ ու ձեռնասայլակներ, հարեւան դռների առաջ վայր էին բերում ու բաց անում ապրանքների բեռները և ճոթեղէնների ու հիւսազարդերի ծրարները քաշ էին տրում առուի ցեխում նախ քան մտնելը ներքնայարկ նկուղները, այդ գանձերով լի մութ հորերը, ուր ծլում է առևտրական տների հարստութիւնը,—և պ. Շեբը այդ բոլորը դիտում էր և հիանում, զմայլում։

Նա զուարճութիւն էր գտնում իր համար գուշակել, թէ ինչ կայ հակերի մէջ, և առաջինն էր հասնում իրարանցումի տեղը, երբ մի որ և է բեռ ընկնում էր անցորդներից մէկի ոտքին կամ որ և է բեռնասայլի տակ ու անհամբեր ձիերը երկրցնելով, խափանում էին անց ու դարձը։ Բացի այդ, իրը անյաճախորդ մանրավաճառ, նա հազար ու մի ուրիշ միջոցներ ունէր ժամանակը ուրախ անցկացնելու համար,—տեղատարափ անձրև, զանազան պատահարներ, գողութիւններ, կռիւներ...

Երեկոյեան դէմ պ. Շեբը, ուրիշների աչխատանքից չչմած, խլացած ու յոգնած, մեկնում էր իր բազկաթոռի մէջ ու, ճակատի քրտինքը սրբելով, ասում կնոջը.

—Այ այսպինի կեանք է հարկաւոր ինձ... գործունեայ կեանք։

Տիկին Շեբը մեղմ ժպտում էր, առանց ոչինչ պատասխանելու։ Վարժուած իր ամուսնու բոլոր քմահաճոյքներին, նա կարողացածին պէս սարքուել էր խանութի յետեի սենեակում,—որ նայում էր մի մութ բակի,—մխիթարւում էր յիշելով իր ծնողների նախկին բարօրութիւնն ու աղջկայ հարստութիւնը և, միշտ մաքուր հագնուած, արդէն կարողացել էր շահել հայթայթիչների և հարեւանների յարգանքը։

Խեղճի ուզածն էլ միայն այնքանն էր, որ իրան չը խառնեն բանուորների կանանց հետ, որոնցից շատերը իրանից պակաս

աղքատ էին, և որ ինքը կարողանար, չը նայելով բոլոր անբարեբաստ պայմաններին, պահպանել իր փոքրիկ բուրժուական դիրքը։ Այդ նրա մշտական հոգսն էր, և նրա կայուն սենեակը, գիրքը։ Այդ նրա մշտական հոգսն էր, և նրա կայուն սենեակը, ուր ժամի երեքին գիշերուայ նման մութն էր լինում, փայլում էր իր կարգ ու սարքով և մաքրութեամբ։ Ցերեկը մահճակալը ծալուում, բազմոց էր դառնում, մի հին շալ քցուում էր սեղանի վրայ իբրև ծածկոց, հողմարդելքով ծածկուած բուխարին սանեղէնի պահարանի տեղ էր ծառայում և ոտնաչեռուցիկի մեծութիւն ունեցող մի կրակարանի վրայ կամաց-կամաց եփուում էին կերակուրները։ Հանգստութիւնն էր միակ բաղձանքը այդ խեղճ կնոջ, որի գլխից ցաւն անպակաս էր չնորհիւ իր անհանգիստ ամուսնու։

Հէնց սկզբի օրերից պ. Շեբը մի ոտնաչափ տառերով գրել էր տուել իր խանութի ճակատի թարմ ներկի վրայ.

Կոմմիսիոներութիւն-Արտահանութիւն

Ինչի կոմմիսիոներութիւն, ինչի արտահանութիւն,—այդ չէր ասուած։ Նրա հարեւանները շղարշ, մահուդ կամ կտաւ էին ծախում, իսկ նա տրամադիր էր ծախել ամեն ինչ, առանց հատատ իմանալու, թէ իսկապէս ինչ էր ծախելու։ Ինչքան դատողութիւններ էր ստիպուած լսել խեղճ կինը այդ հարցի մասին երեկոյեան պարապութեան ժամերին։

—Կտաւեղէնից ոչինչ չեմ հասկանում, բայց մահուդեղէնի համար կարող եմ երաշխաւորել։ Սակայն եթէ մահուդի գործակատար հարկաւոր կը լինի ինձ, որովհետև, մի շրջիկ գործակատար հարկաւոր կը լինի ինձ, որովհետև լաւ տեսակները Սէդանից ու Էլբեոֆից են բերում։ Նկարելն չթերի մասին չեմ խօսում. այդ ամառուայ բան է։ Շղարշ ծախելն էլ անկարելի է, որովհետև սէզոնն անցնելու վրայ է։

Սովորաբար նա վերջ էր տալիս իր անվճռականութեանը, ասելով.

—Առաւօտուայ մտածածը խելօք կը լինի... գնանք քնելու։

Եւ նա գնում էր քնելու ի մեծ մխիթարութիւն իր կնոջ։

Երեք, չորս ամիս այդպէս ապրելուց յետոյ, պ. Շեբը սկսեց ձանձրանալ։ Քիչ-քիչ վերսկսուեցին գլխացաւերը, աչքերի շաղուելը։ Դուրս էր գալիս, որ քաղաքի այդ մասը աղմկալից էր ու անառողջ։ Գործերն էլ լաւ չէին գնում։ Ոչինչ չէր աջողուում, ոչ մահուդեղէնը, ոչ ճոթեղէնը։

Այդ նոր ճգնաժամի միջոցին էր, որ «իմ քոյր օրիորդ Պլանուսը» նրանց այցելութեան եկաւ Սիդոնիի հարցի առիթով։

Պառաւ օրիորդը ճանապարհին ինքն իրան ասում էր. «Պէտք է զգուշութեամբ խօսել...»։ Բայց, ինչպէս բոլոր ամաչ-

առևտրի համար անհրաժեշտ բոլոր տարրերը, առանց դեռ որոշակի իմանալու, թէ ինչ առևտուր է ընտրելու։

Նա մտածում էր այդ բանի մասին ամբողջ օրը, անվերջ յետ ու առաջ չափչփելով խանութը, որի մէջ թափթփուած էին ենջարանի մի քանի խոշոր կահ-կարասիներ, որոնք չէին տեղաւորուել խանութի յետեւի սենեակում։ Նա մտածում էր այդ հարցի մասին նաև իր դռան շէմքի վրայ, երբ, դրիչը ականջի յետեւը խրած, մեծ ախորժանքով խորասուզուում էր փարիզեան առևտրի ժխորի մէջ։ Վաճառատունների գործակալները գնում դալիս էին նմուշների տետրակները կռնատակերին, իրար յետեւից անցնում էին ապրանքներ տեղավորող սայլերը, հսկայ կառքեր, բեռնակիր մշակներ ու ձեռնասայլակներ, հարեան դռների առաջ վայր էին բերում ու բաց անում ապրանքների բեռները և ճոթեղէնների ու հիւսազարդերի ծրարները քաշ էին տալիս առուի ցեխում նախ քան մտնելը ներքնայարկ նկուղները, այդ գանձերով լի մութ հորերը, ուր ծլում է առևտրական տների հարստութիւնը,—և պ. Շէրը այդ բոլորը դիտում էր և հիանում, զմայլում։

Նա զուարճութիւն էր չինել իր համար գուշակել, թէ ինչ կայ հակերի մէջ, և առաջինն էր հասնում իրարանցումի տեղը, երբ մի որ և է բեռ ընկնում էր անցորդներից մէկի ոտքին կամ որ և է բեռնասայլի տաք ու անհամբեր ձիերը երկարուկ կառքը ծռում էին և, փողոցի երկայնութեամբ կանգնեցնելով, խափանում էին անց ու դարձը։ Բացի այդ, իրր անյաժամանակը ուրախ անցկացնելու համար,—տեղատարափ անձրև, զանազան պատահարներ, գողութիւններ, կռիւներ...

Երեկոյեան դէմ պ. Շէրը, ուրիշների աշխատանքից չչմած, խլացած ու յոգնած, մեկնում էր իր բազկաթոռի մէջ ու, ճակատի քրտինքը սրբելով, ասում կնոջը.

—Այ այսպիսի կեանք է հարկաւոր ինձ... գործունեայ կեանք։

Տիկին Շէրը մեղմ ժպտում էր, առանց ոչինչ պատասխանելու։ Վարժուած իր ամուսնու բոլոր քմահաճոյքներին, նա կարողացածին պէս սարքուել էր խանութի յետեւի սենեակում,—որ նայում էր մի մութ բակի,—մխիթարւում էր յիշելով իր ծնողների նախկին բարօրութիւնն ու աղջկայ հարստութիւնը և, միշտ մաքուր հագնուած, արդէն կարողացել էր չահել հայ-թայթիչների և հարևանների յարգանքը։

Խեղճի ուղածն էլ միայն այնքանն էր, որ իրան չը խառնեն բանուորների կռնանց հետ, որոնցից շատերը իրանից պակաս

աղքատ էին, և որ ինքը կարողանար, չը նայելով բոլոր անընդհատ պայմաններին, պահպանել իր փոքրիկ բուրժուական դիրքը։ Այդ նրա մշտական հոգսն էր, և նրա կացած սենեակը, ուր ժամի երկքին գիշերուայ նման մութն էր լինում, փայլում էր իր կարգ ու սարքով և մաքրութեամբ։ Ցերեկը մահճակալը ծալուում, բազմոց էր դառնում, մի հին շալ քցուում էր սեղանի վրայ իբրև ծածկոց, հողմարգելքով ծածկուած բուխարին ամանեղէնի պահարանի տեղ էր ծառայում և ոտնաչեռուցիկի մեծութիւն ունեցող մի կրակարանի վրայ կամաց-կամաց եփուում էին կերակուրները։ Հանգստութիւնն էր միակ բաղձանքը այդ խեղճ կնոջ, որի գլխից ցաւն անպակաս էր չնորհիւ իր անհանգիստ ամուսնու։

Հէնց սկզբի օրերից պ. Շէրը մի ոտնաչափ տառերով գրել էր տուել իր խանութի ճակատի թարմ ներկի վրայ.

Կոմմիսիոներութիւն-Արտահանութիւն,—այդ

Ինչի կոմմիսիոներութիւն, ինչի արտահանութիւն,—այդ չէր ասուած։ Նրա հարևանները շղարշ, մահուդ կամ կտաւ էին ծախում, իսկ նա տրամադիր էր ծախել ամեն ինչ, առանց հաստատ իմանալու, թէ իսկապէս ինչ էր ծախելու։ Ի՞նչքան դատողութիւններ էր ստիպուած լսել խեղճ կինը այդ հարցի մասին երեկոյեան պարապութեան ժամերին։

—Կտաւեղէնից ոչինչ չեմ հասկանում, բայց մահուդեղէնի համար կարող եմ երաշխաւորել։ Սակայն եթէ մահուդի գործակատար հարկաւոր կը լինի ինձ, որովհետև, մի շրջիկ գործակատար հարկաւոր կը լինի ինձ, որովհետև լաւ տեսակները Սէդանից ու Էլբեոֆից են բերում։ Նկարչէն չթերի մասին չեմ խօսում. այդ ամառուայ բան է։ Շղարշերի մասին չեմ խօսում. այդ ամառուայ բան է։ Ծախելն էլ անկարելի է, որովհետև սեղանն անցնելու վրայ է։

Սովորաբար նա վերջ էր տալիս իր անվճռականութեանը, ասելով.

—Առաւօտուայ մտածածը խելք կը լինի... գնանք քնելու։

Եւ նա գնում էր քնելու ի մեծ մխիթարութիւն իր կնոջ։

Երեք, չորս ամիս այդպէս ապրելուց յետոյ, պ. Շէրը սկսեց ձանձրանալ։ Քիչ-քիչ վերսկսուեցին գլխացաւերը, աչքերի շաղուելը։ Դուրս էր գալիս, որ քաղաքի այդ մասը ազմկալից էր ու անառողջ։ Գործերն էլ լաւ չէին գնում։ Ոչինչ չէր աջողուում, ոչ մահուդեղէնը, ոչ ճոթեղէնը։

Այդ նոր ճգնաժամի միջոցին էր, որ «իմ քոյր օրիորդ Պլանուսը» նրանց այցելութեան եկաւ Սիդոնիի հարցի առիթով։

Պառաւ օրիորդը ճանապարհին ինքն իրան ասում էր. «Պէտք է զգուշութեամբ խօսել...»։ Բայց, ինչպէս բոլոր ամաչ-

իր բոլոր երկիւղները ամփոփում էր երկաթ խօսքի մէջ, որոնք միշտ նրա բերանն էին գալիս, քրոջ հետ խօսելիս։

—Chai bas gonfiance!... *) ասում էր նա գերմանախօս չվէյցարացու աղաւաղ ոճով և արտասանութեամբ։

Միշտ մտատանջուելով դրամարկղի համար, գիշերները նա երբեմն երազում տեսնում էր, թէ արկղը խախուտացել էր ամեն կողմից և բաց էր մնում, չը նայելով բանալիով կարգին փակուած լինելուն, կամ թէ սաստիկ քամի էր բարձրանում և ցիրուցան անում բոլոր թղթերը, տոմսերը, չէքերը ու արժէթղթերը և ինքը վազվզում էր նրանց յետևից գործարանի մի ծայրից միւսը, ուժասպառ աշխատելով հաւաքել գետնից։

Ցերեկը, իր վանդակապատի յետևում, նրան թւում էր, թէ մի փոքրիկ սպիտակ մուկ մտել է արկղը ու չարունակ կրծում ու փչացնում է ամեն ինչ, հետզհետէ դիրանալով ու սիրունանալով աղէտի ասատկացման չափով։

Ուստի, երբ կէսօրից յետոյ Սիդոնին երևում էր պատշգամբում, կօկոտի նման զուգուած զարդարուած, ծեր Սիգիզմունդը դողդողում էր կատաղութիւնից։ Նրան թւում էր, թէ իր առջևով անցնում է դէպի դուռն մօտ ոպասող կառքը ինքը մնաքանդութիւնը, բախտաւոր կօքէտ կնոջ հանգիստ կերպարանքով։

Տիկին Ռիսլէրը չը գիտէր, որ այնտեղ, այդ գեղանայարկի պատուհանի յետևին, գտնւում է մի թշնամի, որ ամեն րոպէ դաբանամուտ դիտում է նրա ամենաչնչին արարքները, նրա կեանքի ամենաանշան մանրամասնութիւնները, դաշնամուրի վարժուհու գնալ գալը, առաւօտները եկող նշանաւոր դերձակուհուն, տուն բերուող բոլոր կարտօնները և «Լուվր» մագազինի գորգանգ է առնում բոժոժների զնգզնգոցով, ինչպէս հուժկու ձիերով լծուած մի հանրակառք, որ Ֆրօմօնների առևտրական տունը արագ-արագ տանում էր դէպի մանակութիւն։

Սիգիզմունդը համարում էր ծրարները, աչքով կշռում էր նրանց և բաց պատուհանների միջով հետաքրքրութեամբ թափանցում էր Ռիսլէրների բնակարանի ներսը։ Նրա աչքից ոչինչ չէր խուսափում, ոչ գորգերը, որ թափ էին տալիս մեծ աղմուկով, ոչ ծաղկաթանները, որ դուրս էին դնում արևի առաջ, լի հիւանդոտ, ջերմոցային, թանկագին ու հազուագիւտ ծաղիկներով, և ոչ շլացուցիչ պատատները։

Նա իսկոյն նկատում էր նոր տնուած բաները, որոնցից

*) Je n'ai pas confiance—վստահ չեմ։

իւրաքանչիւրը համապատասխանում էր իրանից պահանջուած մի որոշ խոշոր գումարի։

Բայց ամենից շատ նա ուսումնասիրում էր Ռիսլէրի երեսահարքը։

Նրա կարծիքով, իր բարեկամը, այդ լաւագոյն մարդը աշխարհում, կնոջ աղդեցութեան չնորհիւ սկսել էր դառնալ մի անամօթ սրիկայ։ Նրա համար ոչ մի կասկած չը կար այդ բանում։ Ռիսլէրը անշուշտ գիտէր, որ իր պատիւը խայտառակւում է, և հաշտուել էր այդ բանի հետ։ Նա լռութիւն էր պահպանում, որովհետև վճար էր ստանում դրա համար։

Անկասկած, Սիգիզմունդի կողմից մի տեսակ հրէշային բան էր այդ ենթադրութիւնը։ Բայց չը պէտք է մոռանալ, որ անբիծ բնաւորութիւններին, որոնք երբէք ճանաչած չը լինելով անառակութիւնը՝ նոր են սկսում ճանաչել, յատուկ է իսկոյն և եթ երևակայութեամբ գնալ չափազանց հեռու, եղածից էլ դէնը։ Մի անգամ Սիդոնիի ու Ժօրժի դաւաճանութեան մէջ համոզուելուց յետոյ՝ էլ այնուհետև նա շատ անհաւանական չէր համարում Ռիսլէրի ստորութիւնը։ Եւ, վերջապէս, էլ ուրիշ ինչպէս կարելի էր բացատրել Ռիսլէրի անհոգութիւնը իր առևտրակցի ծախսերի վերաբերմամբ։

Իր գծուծ և բուռնական աղնութեամբ ծերունի Սիգիզմունդը անկարող էր հասկանալ Ռիսլէրի սրտի փափկանկատութիւնը։ Բայի այդ, ահագին տարբերութիւն կար նրա պէս վաճառականի սուր խելք և հաշուապահի մեթոդիկական սովորութիւններ ունեցողի և Ռիսլէրի նման մտքամոլոր, քչուած կէս-գեղարուեստագէտի, կէս-հնարչի միջև։ Նա իր չափովն էր չափում այդ բոլորը, անընդունակ լինելով հասկանալու, թէ ինչ տեսակ վիճակի մէջ է լինում հնարելացաւով բռնուած, մենադաղափարով դրաւուած մի մարդ։ Լուսնոտների նման են այդ մարդիկ։ Նրանք նայում են, բայց չեն տեսնում, որովհետև նրանց հայեացքը ուղղուած է դէպի իրանց ներսը։

Սիգիզմունդի կարծիքով, Ռիսլէրը լաւ տեսնում էր ամեն ինչ։

Այդ մտածմունքը ահագին դժբախտութիւն էր պատճառում ծեր դանձապահին։ Սկզբում նա ուշի ուշով նայում էր Ռիսլէրի երեսին ամեն անգամ, երբ նա մտնում էր իր սենեակը, յետոյ, երբ յուսահատուեց, տեսնելով իր բարեկամի անդգայ անտարբերութիւնը, որ նրան նախատածութեամբ ու դիտմամբ հագած դիմակ էր թւում, նա սկսեց երեսը շուռ տալ նրանից և կամ թղթերն էր քրքրում, որպէս զի չը հանդիպէր նրա կեղծ հայեացքներին, կամ, եթէ պէտք էր լինում հետը խօսելու, աչքը

յառուում էր պարտէզի ծառուղիներին կամ վանդակապատի ցանցին։ Ասածներն էլ այնպէս անորոշ և ձախ ու ծուռ էին լինում, ինչպէս և հայեացքները։ Դժուար էր իմանալ, թէ ում էին ուղղուած լինում նրանք։

Էլ չը կային առաջուան մոերմական ժպիտները, էլ ծերուկը առաջուան պէս Ռիսլէրի միտքը չէր քցում հին յիշողութիւնները, թերթելով գործարանի հաշուեգրքերը։

«Ահա քո մտած տարին... ոսկիդ առաջին աւելացումը... Մթագոյ է։ Այդ օրը ճաշեցինք Դուլի ճաշարանում... երեկոյեան էլ գնացինք կոյրերի սրճարանը... Հը՞, յիշում ես։ Լաւ քէֆ էր, չէ՞»։

Վերջ է վերջոյ Ռիսլէրը նկատեց իր բարեկամի ու իր մէջ սկսուած տարօրինակ սառնութիւնը և կնոջը յայտնեց այդ բանը։

Սիդոնին էլ մի ժամանակից է վեր զգում էր այդ հակակրութիւնը իր շուրջը պտոյտ գալիս։ Երբեմն, բակոմն անցնելիս, նա իրան մի տեսակ վատ էր զգում իր վրայ ուղղուած չարակամ հայեացքներից, որոնք ատիպում էին նրան ջղայնաբար։ Հուր գալ դէպի ծերունի գանձապահի պատուհանը։ Ուստի երկու բարեկամների մէջ տեղի ունեցած այդ գժտութիւնը ահ քցեց նրա սիրտը և նա իսկոյն միջոցներ ձեռք առաւ նախազգուշացնելու իր ամուսնուն Պլանուսի չարախօսութիւններից։

—Մթթէ չէք տեսնում, որ նա նախանձում է ձեզ, ձեր դիրքին... Քիչ է մնում տրաքուի, տեսնելով, որ իր նախկին հաւասար ծառայակիցը այժմ էր իշխանաւորն է դարձել... Բայց մթթէ արժէ ուշք դարձնել այդպիսի բաների... Գիտէք, որ... այստեղ ամենքն էլ չարակամութեամբ են վերաբերուում ինձ։

Բարեհոգի Ռիսլէրը չուեց իր խոշոր աչքերը.—«Ի՞նչպէս, քեզ»։

—Ի հարկէ, ակնյայտնի երևում է, որ այստեղ ամենքն էլ ինձ ատում են։ Տրաքուում են, տեսնելով, որ փոքրիկ Շէրը դարձել է տիկին Ռիսլէր աւագ... Աստծուն է միայն յայտնի, թէ ինչպիսի խայտառակ բաներ են տարածում իմ մասին... Եւ կարող եմ ձեզ հաւատացնել, որ ձեր գանձապահը շատ կարճ չէ պահում լեզուն... Օ՜ֆ, ատատիկ օձ մարդ է։

Սիդոնին իր նպատակին հասաւ։ Ռիսլէրը վրդովուեց և չափազանց հպարտ լինելով, որպէս զի դանդատուէր, սկսեց ինքն էլ սառնութեամբ պատասխանել իր նախկին բարեկամի սառնութեանը։ Այդ ամենիւ մարդիկ, մի անվստահութեամբ մէկը դէպի միւսը, այլևս չէին կարողանում հանդիպել իրար առանց վերին աստիճանի անախորժ զգացմունքի, այնպէս որ մի ժամանակից յետոյ Ռիսլէր աւագը ոտքը բոլորովին կտրեց գանձապահի սենեակից։ Այդ, ասենք, հեշտ էր նրա համար այն պատճառով, որ բոլոր փողային հարցերը Ֆրոմոն կրտսերը վերցրել էր իր վրայ։ Ամեն ամսի երեսունին Ռիսլէրի ամսականը ուղարկում էին նրա բնակարանը։ Այդ աւելի ևս հեշտացնում էր Ֆօրժի ու Սիդոնիի բանը և հնարաւորութիւն էր տալիս նրանց հազար ու մի խայտառակութիւններ կատարել տմենայն ապահովութեամբ։

Սիդոնին զբաղուած էր այդ ժամանակ լրացնելով իր չքեղ կեանքի ծրագիրը։ Սեփական ամարանոց էր պակասում նրան։ Իսկապէս ասած, նրան ատելի էին ծառերը, դաշտերը և մարդու աչք ու բերան փոշիով լցնող ճանապարհները։

—Աշխարհումս դրանից աւելի տխուր բան չը կայ, ասում էր նա յաճախ։

Բայց կլէր Ֆրոմոնը ամառը անց էր կացնում Սավինիում։ Հէնց որ օրերը տաքանում էին, ներքևի յարկում սկսում էին պայուսակները կապել, վարագոյրները վայր բերել, և տնտիպուխութեան մի ահագին կառք, որի մէջ ճօճւում էր երեխայի կապտագոյն օրօրոցը, ճանապարհ էր ընկնում դէպի պապի դղեակը։ Ցեղոյ մի առաւօտ մայրը, տատը, երեխան ու ծծմայրը, փաթաթուած սպիտակ ճոթերի և թեթև շղարշների մէջ, երկնի կառքով սլանում էին դէպի արևառ սիզամարգերը և նշդարենիների մեղմ ստուերը։

Այդ միջոցին Փարիզը տգեղացած, ամայացած էր լինում։ և թէպէտ Սիդոնին սիրում էր Փարիզը նոյն իսկ այդ ամարային եղանակին, երբ նա տաքանում է հնոցի պէս, այնուամենայնիւ նրան ծանր էր մտածել, որ այդ ժամանակ բոլոր հարուստ ու գողտրիկ փարիզուհիները զբօսնում են ծովափերում իրանց բացգոյն հովանոցների ստուերում և իրանց ճանապարհորդութիւնը մի տեսակ պատրուակ են դարձնում հազար ու մի նոր ու մտացածին բաների և տարօրինակ ու համարձակ մօդաների համար, որոնք կանանց հնարաւորութիւն են տալիս ցոյց տալու, որ իրանք գեղեցիկ ազգը ունեն և սեփական, ոչ կեղծ երկար ու գանգուր շագանակագոյն մազեր։

Ծովային լողարաններ։ Այդ անկարելի էր։ Ռիսլէրը չէր կարող բացակայել։

Ամարանոց առնել։ Դեռ միջոցներ չունէին։

Սիրականը պատրաստ էր ի հարկէ ամենամեծ ուրախութեամբ կատարել Սիդոնիի այդ նոր քմահաճոյքը, բայց ամարաթեամբ կատարել Սիդոնիի այդ նոր քմահաճոյքը, բայց ամարանոցը չէ կարելի թագցնել մի ապարանջանի, մի քաշմիրի չալի նման։ Պէտք էր այնպէս անել, որ ամուսինը ընդունէր այդ ընտանեկան։

ծան։ Հեշտ բան չէր այդ, սակայն Ռիսլէրի հետ կարելի էր փորձել։

Հողը պատրաստելու համար Սիդօնին անընդհատ խօսում էր, թէ վատ չէր լինի մի փոքրիկ, ոչ շատ թանկ ամարանոց ունենալ Փարիզի մօտերքը։ Ռիսլէրը լսում էր ժպիտով։ Նա արդէն տանջւում էր սեփականատիրութեան պահանջով, որ սկըսւում և զարգանում է մարդու մէջ հարստութեան հետ միասին, և նրա երևակայութեան մէջ պատկերանում էին բարձրահասակ խոտեր և գեղեցիկ պտուղներով լի այգիներ, սակայն, խոհեմ լինելով, նա ասում էր.

—Կը տեսնենք... կը տեսնենք... Սպասենք տարեվերջին։

Տարեվերջին, այսինքն հաշուեկշռին։

Հաշուեկշռո։

Մոգական խօսք է այդ։ Ամբողջ տարին մարդիկ գլխապատառ առաջ են ընթանում գործերի մրրիկի մէջ։ Փողը ներս է մտնում, դուրս է գալիս, ձեռքէ ձեռք է անցնում, նոր փող է ներս բերւում, շաղ է անցնում, և առևտրական տան հարստութիւնը, իբրև մի փայլուն ու անկասելի յարաշարժ օձ, երկարանում է, կարճանում, մեծանում, փոքրանում, այնպէս որ անկարելի է դաղափար կազմել նրա վիճակի մասին նախ քան հանգստի բոպէն։ Միայն հաշուեկշռի միջոցին կարելի է իմանալ գործերի դրութիւնը և այն թէ արդեօք այդ տարին, որ յաջողակ էր թուում, յաջողակ է իսկապէս։

Ընդհանրապէս, հաշուեկշիռը պատրաստւում է դեկտեմբերի վերջերքին, Ծննդեան տօնի *) կամ Նոր տարուայ օրից մի քիչ առաջ։ Այդ ժամանակ գործարանի ծառայողները շատ ուշ են վերջացնում պարապմունքները, որովհետև հաշուեկշիռը աւելորդ աշխատանք է պահանջում։ Ամբողջ առևտրական տունը ոտքի վրայ է լինում։ Լամպերը, որոնք դրասենեակներում վառուած են մնում նրանց փակուելուց երկար ժամանակ անցած, կարծես նոյնպէս մասնակցում են տօնային տրամադրութեանը, որով համակուած է լինում տարուայ այդ վերջին շաբաթը, երբ այնքան պատուհաններ լուսաւորւում են ընտանեկան երեկոյթների միջոցին։ Մինչև ամենաանշան ծառայողը, ամենքը հետաքրքրւում են հաշուեկշռի հետևանքներով։ Նոր տարուայ պարգևատրութիւնները և ոռճկի աւելացումը կախուած են լինելու այդ երանելի թուանշանից։ Այնպէս որ այն միջոցին, երբ քննւում են հարուստ գործարանի ահագին շահերը, հինգերորդ

*) Եւրոպական երկիրներում Քրիստոսի ծնունդը տօնում են դեկտեմբերի 25-ին։

յարկերում կամ քաղաքի շրջակայքում գտնուող մեր բնակարաններում՝ ծառայողների կանայք, երեխաները, ծեր ծնողները իրար հետ խօսում են հաշուեկշռի մասին, որի հետևանքը զգալ կը տայ իրան կամ տնտեսած փողերի կրկնապատկութեամբ կամ թէ որ և է առքով, որ երկար ժամանակ յետաձգւում էր և այժմ վերջապէս հնարաւոր է դառնում պարզ՝ատրութեան շնորհիւ։

Ֆրօմօն կրտսերի և Ռիսլէր աւագի գործարանում այդ ժամանակ Սիդիզմունդ Պլանուսը կատարեալ աստուած է ամենքի համար և նրա փոքրիկ վանդակապատը՝ սրբութիւն սրբոց, ուր պտնում են բոլոր գործակատարները։ Նիրհած գործարանի լռութեան մէջ չխշխալով դառնում են ահագին հաշուեդրքերի ծանր էջերը. բարձրաձայն արտասանւում են զանազան անուններ և ապիթ են տալիս քրքրելու ուրիշ դրքեր։ Գրիչները ճռռում են։ Ծերունի գանձապահը, շրջապատուած իր օգնականներով, բազմապրաղ և ահարկու կերպարանք է ստացել։ Ժամանակ առ ժամանակ Ֆրօմօն կրտսերը, կառքը նստելուց առաջ, մտնում է ներս, սկզբը բերնին, ձեռնոցները հագին, բոլորովին պատրաստ։ Նա կամաց-կամաց, ոտների ծայրի վրայ, գալիս է և, կռանալով վանդակապատի վրայով, հարցնում.

—Հը°... աջող է գնում։

Սիդիզմունդը մրմնթում է և երիտասարդ գործարանատէրը հեռանում է, չը համարձակուելով այլ ևս հարց տալ։ Գանձապահի դէմքից նա իսկոյն դուշակում է, որ բարի համբաւ չի ասելու։

Արդարև, յեղափոխութեան տարիներից ի վեր, երբէք Ֆրօմօնների առևտրական տանը չէր տեսնուած այդպիսի ողորմելի դիկ իրար կոտորում էին գործարանի բակերում, երբէք հաշուեկշիռ։ Մուտքը և ելքը հաւասար էին գալիս։ Ընդհանուր ծախսերը կլանել էին բոլոր եկամուտները, և դեռ Ֆրօմօն կրտսերը մեծ գումարներ էր պարտք մնում դրամարկղին։ Պէտք էր տեսնել ծեր Պլանուսի վիճակը կերպարանքը, երբ դեկտեմբերի 31-ին նա բարձրանում էր վերև ներկայացնելու Ժօրժին իր հաշիւները։

Ժօրժը շատ ուրախ լսեց հաշիւների հետևանքը։ Բան չը կայ, ասպագայում գործը աւելի յաջողակ կ՝երթայ։ Եւ գանձապահի տրամադրութիւնը տեղը բերելու համար, արտակարգ պարգևատրութիւն տուեց նրան, հազար ֆրանկ, մինչդեռ առաջ հինգ հարիւր ֆրանկ էր տալիս հօրեղբայրը։ Բոլորին էլ բաժին հասաւ այդ մեծահոգութիւնից, և ընդհանուր գոհունակութեան մէջ չուտով մոռացուեց տարեկան ողորմելի հաշուեկշիռը։ Ինչ վերաբերում է Ռիսլէրին, Ժօրժը իր վրայ վերցրեց նրան

գործերի դրութեան հետ ծանօթացնելու պարտականութիւնը։

Մտնելով իր առևտրակցի փոքրիկ առանձնասենեակը, ուր, ինչպէս առհասարակ արհեստանոցներում, պատուհանը վերևից էր և լոյսը ուղղահայեաց ընկնում էր հնարիչի ծրագիրների վրայ, Ֆրօմոն կրտսերը մի բոպէ տատանու

, ամօթ և խղճահարութիւն զգաց այն բանից, ինչ որ անելու էր։

Ռիսլէրը, դռան ձայնը լսելով, երեսը չուռ տուեց և ուրախուրախ բացականչեց.

—Շորշ, Շորշ, սիրելի բարեկամս... Համարեա դատած վերջացած է մեր տպագրիչը... Մի քանի մանր մունր բաներ են մնացել... Բայց այդ ոչինչ. այժմ ես վստահ եմ յաջողութեան վրայ... կը տեսնէք... կը տեսնէք... Էլ այժմ որքան ուզում են, թող մրցեն մեզ հետ Պրոշասօնները... Ռիսլէրեան տպագրիչով մենք կը յաղթենք բոլոր մրցորդներին...

—Կեցցէք, ընկերս, պատասխանեց Ֆրօմոն կրտսերը... Այդ ապագայի բան է. իսկ ներկայի մասին չէք էլ մտածում։ Հապա մեր հաշուեկշիռը...

—Ճիշտ էէ։ Մոքիցս բոլորովին ընկել էր... Շատ էլ փայլուն չի, չէ։

Նա ասում էր այդ, նայելով փոքր ինչ յուզուած ու չփոթուած ժօրժի երեսին։

Ժօրժը պատասխանեց.

—Ոչ, ոչ, շատ փայլուն է, ընդհակառակը։ Մենք տեղիք ունենք գոհ լինելու, մանաւանդ առաջին տարուայ համար։ Իւրաքանչիւրս քառասուն հազար ֆրանկ շահ ենք ստացել։ Եւ որովհետև մտածեցի, թէ գուցէ փողի կարիք ունենաք ձեր կնոջ համար կաղանդչէք առնելու...

Չը համարձակելով նայել այդ աղնիւ մարդու երեսին, որին նա խաբում էր այդպէս, Ֆրօմոն կրտսերը մի կապոց չէքեր ու արժէթոմսեր դրեց սեղանի վրայ։

Ռիսլէր աւագը յուզուեց մի բոպէ։ Այդքան փող միմիայն իրան։ Նա իսկոյն մտածեց Ֆրօմոնների մեծահոգութեան մասին, որոնք իրան մարդ էին չինել, և յետոյ փոքրիկ Սիդոնիի մասին և նրա այն ցանկութեան մասին, որ նա այնքան յաճախ յայտնում էր և որ ինքը այժմ կարող էր կատարել։

Արտասուքն աչքերին և բարի ժպիտը շրթունքներին նա մեկնեց երկու ձեռքը իր ընկերակցին.

—Ո՜րքան գոհ եմ ես... Ո՜րքան գոհ եմ ես...

Այդ նրա սովորական խօսքն էր հանդիսաւոր դէպքերում։ Յետոյ ցոյց տալով իր առաջը դրուած կապոցը ու թեթև կերպով թերթելով արժէթոմսերը, որոնք այնքան հեշտութեամբ թեև են առնում-ու թռչում մարդու ձեռքից.

—Գիտէք ինչ բան է այս, ասաց նա ժօրժին յաղթական դէմքով... Սիդոնիի ամարանոցն է այս։

Ա՛յ թէ այ։

VII

Մ Ի Ն Ա Մ Ա Կ

Ֆրանսիական Ընկերութեան ինժէներ պ. Ֆրանց Ռիսլէրին։ Իսմայիլիա (Եգիպտոս)

Ֆրանց, որդեակս, ծերունի Սիդիզմունդն է քեզ նամակ գրողը։ Եթէ աւելի լաւ կարողանայի արտայայտել մտքերս թղթի վրայ, շատ երկար բաներ պէտք է պատմէի քեզ։ Բայց այս անիծած ֆրանսերէնը շատ դժուար լեզու է և թուանշանների աչխարհից դուրս ոչինչ չարժի Սիդիզմունդ Պլանուսը։ Ուստի, իսկոյն ևեթ կ'ասեմ քեզ, թէ ինչումն է բանը։

Եղբօրդ տանը շատ վատ բաներ են անց կենում։ Կինը նրան դաւաճանում է նրա ընկերակցի հետ։ Նա ծիծաղելի է դարձրել իր մարդուն, և, եթէ այսպէս շարունակուի, այնտեղ կը հասցնի, որ կը սկսեն սրիկայ համարել նրան... Լսիր, իմ փոքրիկ Ֆրանց, պէտք է իսկոյն ևեթ վեր կենաս դաս։ Միայն դու կարող ես խօսել Ռիսլէրի հետ ու աչքերը բանալ այդ Սիդոնիի վերաբերմամբ։ Մեզնից ոչ ոքի նա չի հաւատալ։ Շուտով արձակուրդ խնդրիր ու եկ։

Գիտեմ, որ հաց վաստակելու, ապագայ յաջողացնելու վրայ ես այդտեղ. բայց աղնիւ մարդս ամեն բանից վեր պէտք է դասի իր ծնողներից ժառանգած անուան պատիւը։ Ուրեմն լաւ իմացիր, որ եթէ իսկոյն ևեթ չը գաս, շուտով այնպիսի բոպէ կը հասնի, երբ Ռիսլէր անունը այն աստիճան խայտառակուած կը լինի, որ դու այլ ես չես համարձակիլ կրել նրան։

Սիգիզմունդ Պլանուս,
գանձապահ։

զբաղուած մարդիկ էին, կային երկու փոքրիկ քոյրեր, մի մոխրագոյն վերարկուով պարոն, մի երեխայ, որին տանում էին դպրոց ու յետ բերում և մի փայտէ ոտով ծերունի պաշտօնեայ, որի քայլերը ողբաղին հնչում էին մայթի վրայ։

Այդ վերջինին հաղիւ հաղ էին նշմարում,—նա անցնում էր մութին ընկնելուց յետոյ. նրա անցնելը աւելի նրա ոտնաձայնից էր իմացւում, և այդ ոտնաձայնը ամեն անգամ հնչում էր փոքրիկ կաղիկի ականջին իբրև մի ուժգին արձագանք իր ամենատխուր մտքերի։

Այդ բոլոր փողոցային բարեկամները, առանց իրանց իմանալուն, զբաղեցնում էին այդ երկու կանանց։ Անձրև գալիս նրանք ասում էին. «Խեղճերը թրջուելու են... Տեսնես երեխան տուն կը հասնի՞ մինչև անձրև գալը»։ Եւ եղանակները փոխուելիս, երբ մարտի արևը փողփողեցնում էր ջրողող մայթերը, կամ դեկտեմբերի ձիւնը ծածկում էր նոյն մայթերը իր սպիտակ փաթիլներով ու սև նիշերով, այդ երկու ճգնակեացները, տեսնելով մի նոր հագուստ իրանց փողոցային բարեկամների հագին, մտածում էին՝ «Ամառն եկել է» կամ «Ձմեռը սկսուել է»...

Մայիսեան օր էր, այն պայծառ ու մեղմ երեկոներից մէկը, երբ տների ներքին կեանքը բաց պատուհանների միջով սփռուում է դէպի դուրս։ Դէղիրէն ու մայրը, պատուհանի կողքին նստած, զօռ էին տալիս իրանց մատներին ու ասեղներին, օգտուելով իրիկնադէմի վերջին շողքից, նախ քան լամպը վառելը։ Լսւում էին շրջակայ բակերում խաղացող երեխաների աղաղակներ, դաշնամուրների խուլ հնչիւններ և փողոցով իր կիսադատարկ սայլակը քաշող այս կամ այն շրջիկ մանրավաճառի ձայնը։ Գարունք էր զգացւում օդի մէջ, որ համակուած էր սմբուլի և եղրևանիի մեղմ բուրմունքով։

Տիկին Դըլօբէյը ձեռքի գործը նոր վայր էր դրել և, պատուհանը փակելուց առաջ, արմունկները վանդակին յենած, ականջ էր դնում այն ժիորին, որ այդ մեծ քաղաքի աշխատաւոր բնակիչները բարձրացնում էին, ուրախ-ուրախ շրջադայելով փողոցներում իրանց աշխատանքը վերջացնելուց յետոյ։ Այդ պէս նայելով, առանց երեսը շուռ տալու նա խօսում էր աղջկայ հետ։

—Ահա պ. Սիգիզմունդը դուրս եկաւ գործարանից։ Ո՞ւրան շուտ է դուրս գալիս այսօր... Օրերի երկարանալուցն է դուցէ, բայց ինձ թւում է, թէ ժամի եօթն էլ չը կայ դեռ։ Այդ ինձ թւում է, թէ ժամի եօթն էլ չը կայ դեռ։ Այդ ուշ հետ է ծեր դանձապահը... Վա՛... Կարծես... Հա՛, հա՛... Կարծես պ. Ֆրանցը լինի... Բայց այդ անկարելի բան է... Պ. Ֆրանցեաս պ. Ֆրանցը լինի... Բայց այդ անկարելի բան է... Պ. Ֆրանցեաս

ցը որտեղ է հա հիմա. հավ էլ նա միրուք չունէր... Ինչ էլ լինի, շատ նման է նրան... Մտիկ տուր, հոգիս։

Բայց Դէզիրէն չի վեր կենում բազկաթոռից. նա նոյն իսկ չի շարժւում ամենևին։ Աչքերը ժոլորուն, ասեղը օդի մէջ, անշարժացած իր աշխատաւոր դեղեցիկ դիրքում, նա վերացել է երաշների կապուտակ աշխարհը, այդ զբանչելի երկիրը, ուր կարելի է ազատ համարձակ գնալ, առանց ուշք դարձնելու որ և է տկարութեան վրայ։ Այդ Ֆրանց անունը, որ նրա մայրը, մի պատահական նմանութիւն նկատելով, մեքենայօրէն արտասանեց, նրա համար պարունակում է իր մէջ անցեալի հազար ու մի պատրանքներ և ջերմ յոյսեր, վաղանցուկ, ինչպէս այն կարմրութիւնը, որ պատում էր նրա այտերը, երբ Ֆրանցը երեկոները տուն վերադառնալիս, մի բոպէով մտնում էր նրանց մօտ նրա հետ խօսելու։ Ո՞ւրբան հեռու է այժմ այդ բոլորը։ Ո՞վ կը հաւատայ, որ մի ժամանակ Ֆրանցը ապրում էր նրանց կողքի փոքրիկ սենեակում և յաճախ լսում էր նրա ոտնաձայնը սանդուխներով բարձրանալիս կամ սեղանի գրգռոցը, որ նա հրելով մօտեցնում էր պատուհանին, գծագրութեամբ պարապելու համար։ Ի՞նչ տխուր և միևնոյն ժամանակ քաղցր զգացմունքով էր ականջ դնում նա, երբ Ֆրանցը, նստած նրա ոտների մօտ ցածիկ աթոռի վրայ, խօսում էր Սիգօնիի մասին, մինչդեռ նա յարդարում էր իր ճանճիկներն ու թռչնիկները։

Առանց աշխատանքը դադարեցնելու, նա քաջալերում էր Ֆրանցին, մխիթարում էր նրան, որովհետև Սիգօնին շատ ու շատ փոքրիկ վշտեր էր պատճառել խեղճին, նախ քան վերջին հարուածը հասցնելը։ Ֆրանցի ձայնի հնչիւնը, երբ նա խօսում էր Սիգօնիի մասին, և աչքերի փայլը, երբ մտածում էր նրա մասին, որքան էլ այդ տարօրինակ թուի, հիացնում էին Դէզիրէյին, այնպէս որ երբ Ֆրանցը յուսահատուած հեռացաւ Փարիզից, նա թողեց իր յետևին աւելի սաստիկ մի սէր, քան այն, որ ինքը տանում էր իր սրտում,—մի սէր, որ փոքրիկ կաղիկի միշտ միանման սենեակի և նստակեաց ու անշարժ կեանքի շնորհիւ մնալու էր անփոփոխ իր ամբողջ դառնութեամբ, մինչդեռ նրա սէրը հետզհետէ օգն էր ցնդելու և գոլորշիանալու մեծ ճանապարհների բաց երկնքի տակ։

... Մութն ընկնում է բոլորովին։ Այդ քաղցր երեկոյի խաւարի հետ խեղճ աղջկան պատում է մի անհուն տխրութիւն։ Անցեալի երջանիկ ցոլքը հետզհետէ չքանում է նրա համար, ինչպէս վերջալոյսի այդ շերտը պատուհանի նեղ բացուածքում, ուր մայրը մնացել է կոթնած։

Ցանկարծ դուռը բացւում է... Դժուար է որոշել, թէ ով

է կանգնած չէմքին... Ո՞վ կարող է լինել։ Տիկին Դելօբէլների մօտ հիւրեր երբէք չեն գալիս։ Մայրը, երեսը չուռ է տալիս և, կարծելով սկզբում թէ խանութից եկել են շաբաթուան աշխատանքը տանելու, ասում է.

—Իմ ամուսինը հէնց նոր գնաց ձեր մօտ, պարոն... Այստեղ ոչինչ չի մնացել։ Պ. Դելօբէլը բոլորը տարաւ։

Բայց պարոնը առաջանում է, առանց ոչինչ պատասխանելու, և քանի մօտենում է պատուհանին՝ կեցցարանքը սկսում է աւելի որոշ երևալ։ Մի բարձրահասակ, յաղթանդամ երիտասարդ է այդ, արևաո դէմքով և խիտ ու չէկ միրուքով։ Զօրեղ ձայնով ու փոքր ինչ կոպիտ արտասանութեամբ նա ասում է.

—Վա՛, մայրիկ, մի՞թէ չէք ճանաչում ինձ։

—Ես ձեզ իսկոյն ճանաչեցի, պարոն Ֆրանց, ասում է Դէզիրէն բոլորովին հանդիստ ձեով և սառն ու գրական տոնով։

—Տէր իմ Աստուած, պարոն Ֆրանցն է, բացականչում է տիկին Դելօբէլը և ձեռաց վազում է լամպը վառում ու պատուհանը փակում։

—Ուրեմն դո՞ւք էք, սիրելի Ֆրանց... Ինչ հանդիստ ձայնով է ասում սա... «ես ձեզ իսկոյն ճանաչեցի»... Աղջիկ հօ չի, սառցի կտոր է... Միշտ էլ այդպէս կը մնայ։

Ճիշտ որ սառցի կտոր։ Երեսը բոլորովին սպրտնել է և Ֆրանցի ձեռքի մէջ ձեռքը բոլորովին սպիտակ է ու սառը։

Ֆրանցը գտնում է, որ նա սիրունացել է, աւելի ևս ներբացել։

Նա գտնում է, որ Ֆրանցը հիանալի է, ինչպէս միշտ, միայն թէ նրա աչքերի խորքում այժմ երևում է յոգնածութեան ու տխրութեան արտայայտութիւն, որի շնորհիւ նա աւելի տղամարդի տպաւորութիւն է գործում, քան փարիզից գնալիս։

Յոգնածութիւնը՝ Սիգիզմունդի սարսափելի նամակի ազդեցութեան տակ կատարած չտապողական ճանապարհորդութեան հետևանքն էր։ Խթանուած այդ խայտառակութիւն բառից, նա իսկոյն և եթ, առանց արձակուրդի սպասելու, ճանապարհ էր ընկել, վտանգելով իր պաշտօնն ու ամբողջ ապագան, և Չոգենաւից ուղղակի երկաթուղի նստելով չունչն առել էր Փարիզում։ Կարող էր մի՞թէ չը յոգնել, մանաւանդ որ բոպէները հաչւում էր, թէ երբ պէտք է տեղ հասնի, և անհամբերութեամբ տասը անգամ անցնում էր գնալիք ճանապարհը, մտատանջուելով անվերջ կասկածների, երկիւղների ու վարանումների մէջ։

Տխրութիւնը աւելի վաղուցուայ բան էր։ Նա սկսուել էր այն օրից, երբ նրա սրտի սիրելին մերժել էր նրա կինը դառ-

նայ, որպէս զի, վեց ամիս անցած, ամուսնանար նրա եղբօր հետ. երկու ասբասիելի հարուած՝ մէկը միւսի յետեւից և երկրորդը աւելի ևս դառն, քան առաջինը։ Պէտք է ասել, սակայն, որ ամուսնանալուց առաջ մեծ եղբայրը նրանից նամակով թոյլատուութիւն էր խնդրել այդ երջանկութիւնը վայելելու համար և այդ խնդիրը արտայայտել էր այնպիսի սրտաշարժ ու քնքոյշ խօսքերով, որ հասցրած հարուածի սաստկութիւնը մի փոքր թեթևացել էր դրա շնորհիւ. այնուհետև պանդխտութիւնը, աշխատանքի շատութիւնը և երկար ճանապարհորդութիւնները փարատել էին այդ վիշտը, թողնելով նրա սրտում միայն մի ընդհանուր մելամաղձիկ տրամադրութիւն, եթէ հին սիրոյ մնացորդը չը համարենք այն ատելութիւնը և զայրոյթը, որ նա այժմ զգում է իր եղբօր պատիւը արատաւորող կնոջ դէմ։

Բայց ոչ. Ֆրանց Ռիսլերի ուղածը միայն այն է, որ Ռիսլերների պատուի վրէժը հանի։ Նա եկել է ոչ իբրև սիրահար, այլ իբրև դատաւոր, և թող Սիգոնին զգոյշ պահի իրան։

Վագոնից իջնելուն պէս դատաւորը ուղղակի գնացել էր գործարան, յուսալով, թէ, յանկարծակի ու անակնկալ կերպով լոյս ընկնելով, միանգամից կ'իմանայ, թէ ինչ է անցնում դառնում այնտեղ։

Դժբախտաբար, այդ ժամանակ ոչ ոք չը կար գործարանում։

Պարտէզի խորքում գտնուող փոքրիկ ապարանքի պատուհանների փեղկերը փակուած էին երկու շաբաթից ի վեր։

Ֆեռի Աշիլը յայտնեց նրան, որ տիկինները ապրում էին իրանց ամարանոցներում, ամուսիններն էլ երեկոները գնում էին նրանց մօտ։

Ֆրօմոն կրտսերը գործարանից շատ վաղ էր հեռացել, իսկ Ռիսլեր աւագը հէնց նոր էր գնացել։

Ֆրանցը վճռեց խօսել ծերունի Սիգիզմունդի հետ։ Բայց շաբաթ օր էր, բանուորավարձ տալու երեկոյ էր, ուստի նա պէտք է սպասէր, մինչև որ քիչ-քիչ հատնէր բանուորների երկար շարանը, որ սկսում էր Աշիլ քեռու սենեակի մօտից ու վերջանում գանձապահի ցանցապատի առաջ։

Մանկութիւնից ի վեր Ֆարիզի բանուորների նման ապրած լինելով, Ֆրանցը, չը նայած իր անհամբերութեանը և սաստիկ տխրութեանը, այնուամենայնիւ հաճոյք էր զգում, գտնուելով այդ կենդանութեան մէջ, այդ վերին աստիճանի ինքնուրոյն բարքերի մէջ։ Բոլոր թէ աղնիւ և թէ անառակ դէմքերի վրայ պարզ երևում էր աշխատանքի շաբաթը վերջացրած լինելու գոհունակութիւնը։ Մարդ զգում էր, որ կիրակին դրանց համար

սկսում էր շաբաթ երեկոյեան, ժամի եօթին, գանձապահի փոքրիկ լամպի առաջ։

Պէտք է առևտրական մարդկանց շրջանում ապրած լինել լաւ հասկանալու համար այդ միօրեայ հանգստեան ամբողջ քաղցրութիւնը և հանդիսաւորութիւնը։ Վատառողջ աշխատանքներից չղթայուած այդ խեղճ մարդկանցից շատերը սպասում են այդ երանելի կիրակի օրուան, որպէս զի կարողանան մի փոքր մաքուր օդ շնչել, որ այնքան անհրաժեշտ է նրանց առողջութեան, նրանց կեանքի համար։ Եւ պէտք է տեսնել, թէ ինչ զուարթութիւն է տիրում, ինչ զօրեղ պահանջ է արտայայտւում աղմկալից ուրախութեան։ Թւում է, թէ ամբողջ շաբաթուայ աշխատանքի ճնշումը օդն է ցնդում մեքենաների շոգիի հետ, որ սուլելով և ծխալով դուրս է թռչում ու ցրւում առուակների վրայով։

Բոլոր բանուորները հեռանում են ցանցապատի մօտից, հաշուելով իրանց սև ձեռների մէջ փայլող փողերը։ Ո՞րքան հիացմունքներ, փնտրտոցներ, տրտունջներ, բայց թողած ժամեր, կանխիկ վերցրած գումարներ։ Եւ այդ ձայների ու խոշոր դրամների զնդզնդոցի մէջից լսւում էր հանդարտ ու անողոք ձայնը Սիգիզմունդի, որ անսրտութեան էր հասնում, պաշտպանելով իր պատրօնների շահերը։

Ֆրանցին յայտնի էին վճարման օրերի բոլոր դրամները, ձայների կեղծ և անկեղծ ելևէջները։ Նա գիտէր, որ մէկը փող էր պահանջում իր ընտանիքի համար, հացավաճառին, գեղավաճառին հասնելիքը և երեխաների ուսման վարձը վճարելու համար, իսկ մի ուրիշը, որպէս զի տանէր գինետուն կամ մի աւելի ևս վատ տեղ։ Նա գիտէր նոյնպէս, թէ այդ տխուր ու ճնշուած կանացի ստուերները, որոնք գնում գալիս էին գործարանի դարպասի առաջ, երկար հայեացքներ գցելով բակերի խորքը, բոլորն էլ սպասում էին իրանց հարազատներին,—որը հօրը, որը ամուսնուն,—որպէս զի իսկոյն և եթէ տանէին նրանց իրանց բնակարանը յանդիմանական և հաւողիչ խօսքերով։

Օ՜հ, բոբիկ երեխաներ, հին շալերի մէջ փաթաթած ծծկեր մանուկներ և ադտոտ կանայք, որոնց արտասուալից դէմքերը նոյնքան սպիտակ են, որքան և նրանց գլխանոցները...

Օ՜հ, դարանամուտ անառակութիւն, որ պտոյտ է գալիս գանձապահի արկղի շուրջը, անբարոյականութեան որջեր, որոնց ճրագները փայլում են մութ փողոցների խորքում, և գինետներ ճրագները փայլում են մութ փողոցների խորքում, և գինետներ աղօտ լուսամուտներով, ուր իրանց չինծու գոյներով շարէշար դարսուած են ալկոհոլի հազար ու մի թոյները։

Ֆրանցին յայտնի էին այդ բոլոր թշուառութիւնները.

բայց երբէք նրանք այնքան մռայլ, այնքան դառն չէին թուացել նրան, որքան այդ երեկոյ։

Վարձավճարը վերջացել էր։ Սիդիզմունդը դուրս եկաւ իր գրասենեակից։

Երկու բարեկամները ճանաչեցին միմեանց ու գրկախառնուեցին, և քսան չորս ժամով դադար առած ու իր բոլոր դատարկ չէնքերով համբացած գործարանի լռութեան մէջ՝ գանձապահը բաւատրեց Ֆրանցին գործերի դրութիւնը։ Նա պատմեց նրան Սիդոնիի բռնած ընթացքը, խելագար ծախսերը, ընտանեկան պատուի ընդ միշտ արատաւորումը։ Ռիսլերն ու կինը վերջերը մի ամարանոց էին առել Անիէրում, որ առաջ մի դերասանուհու տուն էր եղել, և սարքուել էին /այնտեղ հոյակապ կերպով։ Ձիեր ու կառքեր էին պահում, և առհասարակ չքեղ ու շռայլ կեանք էին վարում։ Ծերունի Սիդիզմունդին ամենից շատ անհանգստացնողը այն էր, որ Ֆրօսոն կրտսերը իրան աւելի զգոյշ էր պահում։ Մի ժամանակից ի վեր նա այլ ևս փող չէր վերցնում գանձարանից, և սակայն Սիդոնին ծախսում էր աւելի, քան երբ և իցէ։

—Chai bas gonfianze!... բացականչեց խեղճ գանձապահը թափ տալով գլուխը... chai bas gonfianze...

Ցեռոյ ցածացնելով ձայնը, շարունակեց.

—Բայց քո եղբայրը, սիրելի Ֆրանց, քո եղբայրը... Ի՞նչպէս բացատրել նրա բռնած դիրքը։ Նրա հոգը չէ ամենևին. աչքերը երկինք քցած, ձեռները գրպանը դրած, մտն է գալիս իր համար, ուշք ու միտքը այդ երեւելի հնարելիք մեքենային տուած, որ դժբախտաբար շատ ուշ է գլուխ գալիս... Կ'ուզես՝ ուզիր չես... Եղբայրդ կամ սրիկայ է կամ տխմար։

Այդպէս խօսելով նրանք զբօսնում էին փոքրիկ պարտէզում, երբեմն կանգ էին առնում, յետոյ նորից սկսում քայլել։ Ֆրանցին թւում էր, թէ ինքը քնած է և վատ երազ է տեսնում։ Շտապ ճանապարհորդութիւնը, տեղի և կլիմայի յանկարծական փոփոխութիւնը, Սիդիզմունդի խօսքերի անընդհատ տարափը, այն նոր դպրեվանքը, որ պէտք էր կազմել Ռիսլերի ու Սիդոնիի մասին,—այն Սիդոնիի մասին, որին նա երբեմն այնքան սիրում էր,—այդ բոլորը միացած շշմեցնում, խելացնորութեան էին հասցնում նրան։

Ուշ էր։ Գիշերը մօտենում էր։ Սիդիզմունդն առաջարկեց նրան գնալ իր հետ Մօնրուժ և դիշերել այնտեղ իր մօտ. նա մերժեց, պատճառ բերելով յոգնածութիւնը, և մենակ մնալով Մառէյում օրուայ այդ անորոշ ու տխուր ժամին, երբ արեւի լոյսը չքանում է և դաշի լոյսը դեռ չէ վառուած, նա մեքենայաբար գնաց Բրաք փողոցի կողմը, դէպի իր հին բնակարանը։

Սրահի դռանը յայտարարութիւն կար կախուած՝ վարձու սենեակ տղամարդու համար։

Հէնց այն սենեակն էր այդ, ուր նա այնքան տարիներ ապրել էր իր եղբօր հետ։ Ամեն ինչ իր տեղումն էր. ահա աչխարհագրական քարտէզը՝ կպցրած պատին չորս քորոցով, ահա վերնագաւթի պատուհանը, ահա և տիկին Դելօբէլների փոքրիկ ցուցատոմսը՝ մօդային բուչուններ ու ճանճեր։

Այդ տիկինների դուռը կիսաբաց էր. բաւական էր մի քիչ հրել ներս մտնելու համար։

Անկասկած, ամբողջ Փարիզում այդ աշխատաւոր և անփոփոխ ընտանեկան յարկը ամենայաւ տեղն էր, ուր նա կարող էր գտնել ապահով ապաստան և հանգստացնել իր խռովուած հոգին։ Իր ուղեկորոյս կեանքի ներկայ ալէծփութեան մէջ մի տեսակ խաղաղ ու խորայատակ նաւահանգիստ էր այդ, արևալից ու անդորր ծովափով, ուր կանայք բանում են, սպասելով իրանց ամուսիններին ու հայրերին, մինչդեռ դրսում մռնչում է հողմը, ալէկոծելով ծովը։ Բայց աւելի ևս նրան դրաւում էր դէպի այդ բնակարանը, թէև նա պարզ չէր գիտակցում այդ, անխաբ համակրութիւնների փոխադարձութիւնը և գորովալից զգացմունքի այն հրաշագործ յատկութիւնը, որ մեր սրտին թանկագին է դարձնում դէպի մեզ տածուող սէրը։ Նոյն իսկ այն դէպքում, երբ մենք ինքներս չենք սիրում մեզ սիրողին։

Ո՞րքան սիրում էր նրան այդ սառցակտոր քաղցրիկ Դէզիրէն։ Ո՞րչափ փայլում էին Դէզիրէյի աչքերը, նոյն իսկ ամենաանտարբեր բաների մասին խօսելիս։ Ինչպէս ֆոսֆորոտած իրերը հաւասարապէս փայլում են բոլորը, այնպէս էլ նրա արտասանած ամենաանչնչան խօսքերից սիրուն երեսը զուարթանում ու պայծառանում էր։ Ի՞նչ քաղցր հանգիստ էր այդ Ֆրանցի համար Սիդիզմունդի կոպիտ խօսակցութիւնից յետոյ։

Նրանք երկուսով ոգևորուած խօսում էին այդպէս, մինչ տիկին Դելօբէլը գցում էր ճաշը *)։

—Մեզ հետ կը ճաշէք, այնպէս չէ, պարոն Ֆրանց։ Հայրիկը տանը չէ. ինչ որ պատրաստել էինք, տարաւ խանութը, բայց երևի ճաշին կը վերադառնայ։

Երևի ճաշին կը վերադառնայ։

Խեղճ կինը մի տեսակ հպարտութեամբ էր ասում այդ։

Արդարև, իր թատրոնապետութեան անաջողութիւնից յետ-

*) Արևմտեան Եւրոպայում շատ ուշ են ճաշում առհասարակ։ Ս. Թ.

տոյ, հռչակաւոր Դելօրէլը այլ ևս դրսեւում հաց չէր ուտում, նոյն իսկ այն երեկոները, երբ խանութից տանում էր իր կնոջ ու աղջկայ բանուածքների վճարը։ Խեղճ թատրոնապետը այնքան ճաշ ու ընթրիք էր կերել ճաշարանում ապառիկ, որ այլ ևս չէր համարձակում ոտք դնել այնտեղ։ Դրա փոխարէն, նա ամեն շաբաթ երեկոյ անպատճառ տուն էր բերում հեռը երկու կամ երեք քաղցած ու անսպասելի հիւրեր իր «հին ընկերներից», անաջողութեան զոհ դարձած դերասաններից։ Այդ երեկոյ էլ նա բեմական կերպով մուտք գործեց իր բնակարանը Մէջի Թատրոնի ֆինանսիստն էր, իսկ միւսը՝ Անժէրի Թատրոնի կոմիկը։

Բամպի լոյսի առաջ կուչ-կուչ եկած, խորշոմած ու ածիլած երեսով կոմիկը՝ նման էր ծերունադէմ աղայի։ Ֆինանսիստը, որի վրայ չէր երևում սպիտակեղէնի որ և է նշոյլ, կատարեալ կոշիկներ ունէր հագին։ Դելօրէլը, դռնով ներս մտնելուն պէս, ուղեց հանդիսաւոր կերպով ներկայացնել նրանց, բայց խօսքը բերնումը կիսատ մնաց, որովհետև խսկոյն նկատեց Ցրանց Ռիսլէրին։

—Ցրանց... սիրելի Ցրանց... գոչեց ծերունի դերասանը մելոդրամատիկական ձայնով, ջղաձգաբար թափ տալով ձեռները օդի մէջ, և երկարատև ու ճոռոմաձև զրկախառնութիւնից յետոյ ներկայացրեց հիւրերին միմեանց։

—Պ. Ռօբրիկար, Մէջի Թատրոնից։

—Պ. Շանդրզօն, Անժէրի Թատրոնից։

—Ցրանց Ռիսլէր, ինժէներ։

Դելօրէլի բերնում շատ տուռգ էր գուրս գալիս այդ ինժէներ բառը։

Դէպիրէն մի սիրուն ծամածռութիւն արեց, տեսնելով իր հօր ընկերներին։ Ո՞ւրքան լաւ կը լինէր, որ առանստանում լինէին այդպիսի մի օր։ Բայց մեծ մարդու հոգը չէր այդ։ Նա զբաղուած էր իր գրպանները դատարկելով։ Նախ և առաջ նա գուրս հանեց մի հիանալի կարկանդակ. «տիկինների համար եմ առել», ասաց նա, մոռանալով, որ իր բերնի ջուրը գնում էր այդպիսի կարկանդակների համար։ Յետոյ երևան եկաւ մի խեցգետին. այնուհետև՝ Արլի երշիկ, շաքարակալած շագանակներ և բալ, որ նոր էր շուկայ հանուել։

Մինչ ֆինանսիստը յատիշտակուած աշխատում էր բարձրացնել իր անհերևոյթ շապկի օձիքը, իսկ կոմիկը «գնո՛ւք, գնո՛ւք» էր անում այնպիսի մի շարժումով, որ տաս տարուց ի վեր

մոռացուած էր Փարիզում, Դէպիրէն սարսափով այն էր մտածում, թէ ինչ ահագին ծակ էր բանալու այդ յանկարծապատրաստ ճաշկերոյթը իրանց շաբաթական ողորմելի եկամուտների մէջ, իսկ մայրը շուարած իրար գլխով էր տալիս իրանց ամանների պահարանը, որպէս զի բաւականաչափ ամաններ գտնէր այդ հիւրերի համար։

Ճաշը շատ ուրախ անցաւ։ Երկու դերասանները ագահաբար խժռում էին, ի մեծ զուարճութիւն Դելօրէլի, որ նրանց հետ մտաբերում էր հին յիշողութիւններ իրանց դերասանական կեանքից։ Դժուար է երևակայել աւելի ողորմելի բաներ։ Կուլիսների կոտրտած նեցուկներ, հանգած կանթեղներ, բորբոսնած բեմական պարագաներ, որոնք փչուր-փչուր են լինում ձեռք տալիս։

Նրանք իրար հետ այնպէս էին խօսում, կարծէք ամենամտերիմ բարեկամներ լինէին, դու էին ասում միմեանց և իրանց տափակ ոճով յիշեցնում էին միմեանց իրանց անթիւ յաջողութիւնները, որովհետև, իրանց ասելով, նրանց երեքին էլ ամբողջ քաղաքներ ծափահարել էին յափշտակութեամբ, անթիւ պսակներ էին տուել ու յաղթական կերպով մեն ածել փողոցներով։

Այդպէս խօսելով, նրանք չարունակում էին ուտել, այնպէս, ինչպէս ուտում են դերասանները,—դէմքերը երեք քառորդ մասով դէպի հանդիսատեսները դարձրած, ստուարաթղթէ կերակուրների շուրջը նստած բեմական հիւրերի կեղծ շտապողութեամբ, խօսքերը ընդմիջելով կերակրի պատառներով, աչխատելով տպաւորութիւն գործել բաժակը վայր դնելիս ու աթոռը սեղանին մօտեցնելիս կամ իրանց հետաքրքրութիւնը, հիացմունքը, ուրախութիւնը, սարսափն ու զարմանքը արտայայտել գանակի ու պատառաքաղի ճարտար գործածութեամբ։ Տիկին Դելօրէլը ականջ էր դնում նրանց՝ ժպիտն երեսին։

Երեսուն տարուց ի վեր դերասանի կին լինելով, նա չէր կարող փոքր ինչ վարժուած չը լինել այդ տարօրինակ ձևերին։

Բայց սեղանի մի փոքրիկ անկիւնը զատուած էր մնում մի մնացեալ սեղանակիցներից, կարծես բաժանուած լինելով մի տեսակ ամպով, որի միջով չէին կարողանում անցնել տխմար խօսքերը, կոպիտ ծիծաղները և պարծենկոտ ինքնագովութիւնները։ Ցրանցն ու Դէպիրէն խօսում էին իրար հետ կիսաձայն, առանց որ և է բան լսելու իրանց շուրջը նստուածներից։ Նրանց քաղցր խօսակցութեան միակ նիւթը դէպքեր էին իրանց մանկութիւնից, ծիծաղաշարժ պատմութիւններ՝ հարևանութեան կեանքից և առհասարակ մի ամբողջ անորոշ անցեալ, որի

արժէքը կայանում էր միայն նրանում, որ ընդհանուր յիշողութիւններ էր զարթեցնում նրանց մէջ և միատեսակ կայծեր էր փայլեցնում նրանց աչքերում։

Ցանկարծ ամպը պատռուեց և Դելօրէլի ահռելի ձայնը ընդհատեց նրանց խօսակցութիւնը.

—Դեռ չեմ տեսել եղբօրդ,—հարցրեց նա Ֆրանցին, որպէս զի այնպէս չը թուէր, թէ ամենին ուշադրութիւն չէ դարձնում նրա վրայ,—կնոջն էլ չեմ տեսել... Օ՜հ, կը տեսնես թէ ինչ աղջիկպարոն է դարձել։ Հաղուստներ եմ ասում, մեր տղայ, որ բերանդ չռած կը մնայ։ Էլ ինչ ասեմ։ Անիէրում մի ամարանոց ունեն, որ կատարեալ դղեակ է։ Շէբերն էլ այն կողմերումն են ապրում... Է՜հ, մենք ուր, նրանք ուր։ Հարստացել են, հին ծանօթներին մարդատեղ չեն դնում... Էլ ոչ բարի լոյս ենք լսում նրանցից, ոչ էլ մէկ օրից մէկ օր դռներս են բաց անում, տեսնեն մեռած ենք թէ կանք դեռ ևս... Դու գիտես, որ իմ հոգը չի ամենին, բայց այս կանանց համար շատ վիրաւորական է այդ...

—Օհ, հայրիկ,—աչխուժով ասաց Դէզիրէն,—դուք գիտէք, որ մենք այնքան սիրում ենք Սիգօնիին, որ չենք կարող նեղանալ նրանից։

Դերասանը բռունցքով կատաղի հարուած իջեցրեց սեղանի վրայ։

—Ու շատ զուր էք անում... պէտք է անպատճառ նեղանալ այն մարդկանցից, որոնք ամեն ջանք գործ են դնում մեզ վիրաւորելու, ստորացնելու համար։

Նա դեռ սրտումը պահում էր Թատրոնի համար խնդրած գումարի մերժման ոխը։ Ասենք, նա չէր էլ ծածկում այդ։

—Եթէ իմանայիր, ասում էր նա Ֆրանցին, եթէ իմանայիր, թէ ինչպէս են շաղ տալիս փողերը... Մարդու ափսոսը գալիս է... Եւ բոլոր ծախսածների մէջ չը կայ մի բան, որ հիմնաւոր լինի ու խելացի... Բայց երբ ես մի փոքրիկ գումար խնդրեցի եղբօրիցդ, որով իմ ապագան բոլորովին ապահովուած կը լինէր և որից ինքն էլ մեծ շահ կը ստանար, նա բացէ ի բաց մերժեց... Ի հարկէ, ինչպէս կարող էր չը մերժել, երբ կինը այնքան պահանջող է։ Նա ձի է նստում, կառքով գնում է ձիարշաւների և մարդու քթիցը բռնած պտտեցնում է նրան, բոլորովին այնպէս, ինչպէս իր զամբիւղաձև կառքը Անիէրի գետափում... Խօսքը մեր մէջ, չեմ կարծում, որ իրան շատ էլ բախտաւոր զգալիս լինի մեր Ռիսլէրը... Ինչ խաղ ասես խաղում է կինը խեղճի գլխին...

Ex-դերասանը վերջացրեց խօսքը աչքով անելով կո-

միկին ու Ֆինանսիստին, և մի բոպէաչափ նրանց մէջ տեղի ունեցաւ մնջկատակ ակնարկների փոխանակութիւն,—դէմքի պայմանական շարժումներ, ծամածռութիւններ, զանազան «հէ, հէ»-ներ, «հը՜մ, հը՜մ»-ներ և ուրիշ այդպիսի բացականչութիւններ։

Ֆրանցը շշմել էր։ Առանց նրա աչխատելուն, ամեն կողմից գալիս էին փաստեր ապացուցանելու սարսափելի ճչմարտութիւնը։ Սիգիզմունդը ուրիշ ոճով էր խօսում, Դելօրէլը՝ ուրիշ, իրանց բնաւորութիւնների տարբերութեան համեմատ։ Բայց հետեւանքը նոյնն էր դուրս գալիս։

Բարերախտաբար, ճաշը վերջացաւ։ Դերասանները, երեքն էլ, վեր կացան ու գնացին Բլոնդէլ փողոցի գարեջրատունը։ Ֆրանցը մենակ մնաց տիկինների հետ։

Տեսնելով նրան իր կողքին, քաղցր ու կաթոգին, Դէզիրէն յանկարծ լցուեց բուռն երախտագիտութեամբ դէպի Սիգօնին։ Նա ասաց ինքն իրան, որ, ինչ էլ լինի, Սիգօնիի մեծահոգութեանն է պարտական ինքը այդ երջանկութեան նշոյլի համար, և այդ միտքը սիրտ տուեց նրան պաչտպանելու իր հինաւուրց բարեկամին.

—Գիտէք, պարոն Ֆրանց, շատ էլ չը հաւատաք այն բոլորին, ինչ որ հայրս ասաց ձեր հարսի մասին։ Հայրիկը միշտ սովորութիւն ունի մի քիչ չափազանցացնելու։ Ես հաստատ գիտեմ, որ Սիգօնին անբնդունակ է այնպէս վատ լինել, ինչպէս նրան մեղադրում են։ Ես հաւատացած եմ, որ նրա սիրտը չի փոխուել, որ նա շարունակում է սիրել իր հին բարեկամներին, թէպէտ և մի քիչ անտես է անում նրանց... Ի՞նչ արած, կեանքն է այդպէս. մարդկանց ակամայ բաժանում է իրարից։ Այնպէս չէ, պարոն Ֆրանց։

Օ՜հ, որքան սիրուն էր թուում նա Ֆրանցին այդպէս խօսելիս։ Երբէք Ֆրանցը այդ աստիճան չէր նկատել նրա դիմագծերի նրբութիւնը ու կաչիի արիստոկրատական գոյնը, և երեկոյեան, հեռանալով նրանց սենեակից՝ խանդաղատուած այն ոգևորութեամբ, որով Դէզիրէն պաչտպանում էր Սիգօնիին, և այն բոլոր աքանչելի կանայի պատճառաբանութիւններով, որոնցով նա բացատրում էր իր բարեկամուհու լռութիւնն ու անուշադրութիւնը,—նա մտածում էր, եսական ու միամիտ հաճոյքի զգացմունքով, թէ այդ մանկամարդ աղջիկը սիրելիս է եղել իրան ու դուցէ սիրում է դեռ ևս, պահպանելով սրտումը նրա համար մի ջերմ ու ապահով անկիւն, ուր մարդ ապաստանում է միշտ, երբ վէրք է ստանում կեանքից։

Ամբողջ գիշերը իր հին սենեակում քնի մէջ օրօրուելով

ճանապարհորդական շարժումից և ալէկոծ ծովի ու սաստիկ քամու աղմուկից, որ մնում է մարդու ականջներում երկարատև նաւարկութիւնից յետոյ, Ֆրանցը երազի մէջ տեսնում էր պատանեկական ժամանակը, փոքրիկ Շէքին, Դէզիրէ Դելօբէլին, իրանց խաղերը, իրանց աշխատանքները և կենտրոնական Դպրոցը, որի ահագին ու մռայլ շէնքերը նիրհում էին այժմ մոտակայքում, Մառէյի խաւար փողոցներում։

Յետոյ, երբ արևը դուրս եկաւ և լոյսը, անվարագոյր պատուհանների միջով ներս թափանցելով, սկսեց տանջել նրա աչքերը ու յիշեցնել պարտականութեան զգացմունքը և ցերեկը անելիք գործերը, նա դարձեալ ընկաւ երազի մէջ և նրան թւում էր, թէ կենտրոնական Դպրոցը գնալու ժամանակն է և եղբայրը, գործարանը իջնելուց առաջ, բաց է արել դուռը ու ձայն է տալիս իրան.

—Վեր կաց, ծոյլ տղայ, վեր կաց...

Այդ քաղցր ու կաթողին ձայնը, որ չափազանց կենդանի ու իրական կերպով էր հնչում երազի համար, ստիպեց նրան բոլորովին բանալ աչքերը։

Ռիսլէրը կանգնած էր նրա անկողնի կողքին և խանդաղատանքի աքանչելի ժպիտով սպասում էր, որ նա զարթնի, և—ապացոյց, որ այդ յիրաւի Ռիսլէրն էր—եղբօր տեսութեան ուրախութիւնը արտայայտելու համար, նա ուրիշ խօսք չէր գտնում ասելու, բացի իր սովորական բացականչութիւնից.

—Շատ գոհ եմ... շատ գոհ։

Թէև կիրակի էր այդ օրը, բայց Ռիսլէրը, իր սովորութեամբ, եկել էր գործարան, որպէս զի, օգուտ քաղելով այնտեղ տիրող լռութիւնից ու խաղաղութիւնից, աշխատէր իր տպագրիչի վրայ։ Գալուն պէս՝ Սէրիլ քեռին ասել էր նրան, որ եղբայրը իջել է իրանց հին բնակարանում, և նա վաղէվաղ եկել էր այնտեղ, ուրախացած, զարմացած և փոքր ինչ ցաւելով, որ առաջուց իրան իմաց չէին տուել և մանաւանդ այն բանից, որ Ֆրանցը ըստիպել էր իրան վերադարձի առաջին երեկոն միասին անց կացնելու զուարճութիւնից։ Այդ ցաւը նա անդադար արտայայտում էր իր կցկտուր նախադասութիւնների սկզբում և վերջում և նրա սաստիկները մնում էին միշտ կիսատ, ընդհատուելով հաղար ու մի հարցերով և դրովի ու հրճուանքի բուռն արտայայտութիւններով։ Ֆրանցը իրան արդարացնելու համար առաջ բերեց իր յոգնածութիւնը և այն զուարճութիւնը, որ ղգաց նորից գտնուելով իրանց հին սենեակում։

—Լա՛ւ, լա՛ւ,—ասում էր Ռիսլէրը,—բայց այժմ այլ ես բաց չեմ թողնի քեզ... իսկոյն և եթ պէտք է դաս գնանք Անիէր...

Ես այսօր արձակուրդ եմ տալիս ինձ... Ինքդ ասա, կարող եմ միթէ աշխատել քո գալուց յետոյ... Այ թէ կը զարմանայ... կ'ուրախանայ փոքրիկս... Ես ու նա շարունակ յիշում էինք քեզ... Ո՞րքան ուրախ եմ, ո՞րքան ուրախ...

Եւ խեղճ մարդը ուրախութիւնից ցնծում էր և, չը նայելով իր սովորական լռակեցութեանը, շատախօս դարձած, հիանում էր իր Ֆրանցի վրայ, գտնում էր, որ նա մեծացել է։ Եւ սակայն կենտրոնական Դպրոցի աշակերտը արդէն հիանալի հասակ ունէր գնալուց առաջ, միայն թէ այժմ նրա դիմագծերը աւելի առնական էին դարձել, թիկունքը լայնացել էր և առհասարակ շատ մեծ տարբերութիւն կար սեմինարիստի շէնք ու չնորհք ուսնեցող նախկին ջահէլ տղայի մէջ, որ երկու տարի առաջ ուղևորուեց դէպի Իսմայիլիա, և այս գեղեցկադէմ, դարչնագոյն, լուրջ ու մեղմ պարթև տղամարդու մէջ։

Մինչ Ռիսլէրը այդպէս զմայլում էր նրա վրայ, Ֆրանցն էլ, իր կողմից, ուշի ուշով դիտում էր իր եղբօրը և, էլի առաջուան պէս միամիտ, գորովալից ու երբեմն մտքամոլոր գտնելով նրան, ասում էր ինքն իրան.

—Ոչ, այդ անկարելի է... Նա նոյն ազնիւ մարդն է, ինչ որ առաջ էր։

Եւ մտաբերելով մինոյն ժամանակ, թէ ինչ բաներ էին համարձակում ենթադրել այդ ազնիւ մարդու մասին, նա իր ամբողջ բարկութիւնը ուղղում էր այդ կեղծաւոր ու անառակ կնոջ դէմ, որ այնքան յանդուգն ու անպատիժ կերպով էր դաւաճանում իր ամուսնուն, որ նրան իր մեղսակիցն էր կարծել տալիս։ Օ՜, ինչ սարսափելի բացատրութիւն է ունենալու ինքը այդ կնոջ հետ. որքան խիստ է խօսելու հետը։

—Ես արգելում եմ ձեզ, տիկին, լսում էք, ես ձեզ արգելում եմ արատաւորել իմ եղբօր պատիւը։

Նա շարունակ մտածում էր այդ բանի մասին, նայելով, թէ ինչպէս արագ-արագ պտտում էին նրա աչքի առաջով Սէնժէրմէնի երկաթուղու երկարութեամբ ձգուած ճուղ ծառերը։ Ռիսլէրը, նրա դէմ ու դէմը նստած, խօսում էր անվերջ։ Նա պատմում էր գործարանի մասին, իրանց գործերի մասին։ Ինքն ու ընկերակիցը ամեն մէկը քառասուն հաղար ֆրանկ չահ էին ստացել վերջին տարին. բայց այդ ոչինչ էր այն չահի առաջ, որ նրանք կը ստանան, երբ սկսի բանել նրա տպագրիչը։ «Պտտուող տպագրիչ, սիրելի Ֆրանց, պտտուող ու տասներկու անկիւնաւոր տպագրիչ, որ անուի մի պտոյտով կը տայ տասից մինչև տասնըհինգ գոյն ունեցող նաչխ, կարմիր՝ վարդագոյն տեղի վրայ, մուգ կանաչ՝ բաց կանաչի վրայ, առանց իրար հետ

չիոթելու, առանց իրար հետ ձուլելու, այնպէս որ ոչ մի գիծ չի վնասի իր կողքի գծին և ոչ մի երանգ չի ջնջի կամ ծծի միւս երանգները... Հասկանում ես, սիրելիս... Մի մեքենայ, որ արուեստագէտ է լինելու, ինչպէս մի մարդ... Այդ ամբողջ յեղափոխութիւն է գցելու որմաթղթերի արդիւնագործութեան մէջ»։

—Բայց,—հարցնում էր Ֆրանցը, մի քիչ անհանգիստ սըրտով,—արդէն հնարել ես քո տպագրիչը, թէ նոր ես գտնելու։

—Գտել եմ... վաղուց եմ գտել... Վաղը ես քեզ ցոյց կը տամ իմ բոլոր նախագիծները։ Այդ մեքենայի համար աշխատելիս, ես նոյն իսկ հնարել եմ մի ինքնաշարժիկ կախիչ, որ թղթերը ցամաքանոցի ձողերից կախ տալու համար... Եկող շաբաթ ես տեղափոխուելու եմ մեր գործարանի վերնատունը և այնտեղ դաղտուկ, իմ աչքի առաջ, պատրաստել եմ տալու իմ հնարած մեքենայի առաջին օրինակը։ Այնպէս պէտք է անել, որ երեք ամսուայ ընթացքում արտօնաթղթերը ստացուեն և տպագրիչը սկսի բանել... Կը տեսնես, սիրելի Ֆրանց, թէ ինչպէս կը հարստանանք բոլորս... Աւելորդ է քեզ ասել, թէ որքան ուրախ կը լինեմ, եթէ կարողանամ այդպիսով փոքր ինչ երախտահատոյց լինել Ֆրոմմենների համար, որ նը՞բանք արել են ինձ... Գոհութիւն Աստուծուն,—բարիք բարիքի յետեւից թափւում է գլխիս...

Ու սկսեց թուել իր կեանքի բոլոր բարեյաջողութիւնները։ Սիգմնի պէս համակրելի էակ չէր կարող գտնուել աշխարհումմի հիանալի կին էր այդ, որ մեծ պատիւ էր բերում նրան։ Սքանչելի տուն ու տեղ ունէին։ Շատ լաւ հասարակութիւն էր լինում նրանց մօտ։ Սիգմնին կատարեալ սոխակի պէս էր երգում տիկին Դոբսոնի արտայայտիչ մեթոդի շնորհիւ։ Այդ տիկին Դոբսոնն էլ հիանալի կին էր... Մի բան միայն տանջում էր խեղճ Ռիսլերին,—իր և Սիգիզմունդի մէջ պատահած անհասկանալի դժտութիւնը։ Ֆրանցը գուցէ կարողանար օգնել նրան այդ գաղտնիքը լուսաբանել։

—Օ՜, անպատճառ, ես կ՚օգնեմ քեզ, եղբայր,—պատասխանեց Ֆրանցը ատամներն իրար սեղմած, և բարկութիւնից արիւնը խփեց ճակատը, մտածելով, որ մարդիկ կարող էին կասկածով վերաբերուել այդ մարդուն, որի անմեղ աղնութիւնը այդքան ակնյայտնի կերպով ինքնաբերաբար և միամտօրէն արտայայտուում էր նրա առաջ։ Բարերախտաբար ինքն այդտեղ էր և ամէն ինչ կարդի էր բերելու, իբր դատաւոր։

Մինչ այդ՝ նրանք արդէն մօտեցել էին Անիէրի տանը։ Ֆրանցը դեռ հեռուից ուշք էր դարձրել այդ տան վրայ շնորհիւ

նրա օտարոտի սանդուխին, որ բարձրանում էր աշտարակաձև, փայլփլելով իր նոր ու կապտագոյն թիթեղաթերերով։ Նրան թուում էր, թէ այդ տունը շինուած է յատկապէս Սիգմնի համար, իբրև մի իսկական վանդակ այդ քմայաձև ու աչք ծակող փետուրներով զարդարուած թռչունի համար։

Երկյարկանի չալէ էր այդ, որի հայելակերպ ապակիները ու վարդագոյն վարագոյրները նշմարւում էին դուռ երկթուղու մէջից, փայլին տալով կանաչաւէտ մարգագետնի խորքում, ուր կախուած էր անգլիական մետալից շինուած մի անագէն գունդ։

Տան մօտովը հոսում էր Սէնան, որ դեռ բոլորովին փարիզեան տեսք ունէր, կաշկանդուած՝ շղթաներով, խճողուած՝ լողարանների ու մեծ-մեծ նաւերով և նաւամատոյցին կապուած փոքրիկ ու թեթեւ մակոյկներով, որոնք վեր-վեր էին թռչում թարմ ներմենաչնչին ալիքներից, ցոյց տալով իրանց բոլորովին թարմ ներկուած ու ածուխի փոշով ծածկուած յատակները, ուղղանիի պատուհանների երեսում էին ջրափի ճաշարանները, որոնք լուռ ու հանգիստ էին լինում շաբաթուայ ընթացքում, իսկ կիրակիները ծայրէծայր լցուում էին խայտաբղէտ ու աղմկալից ամբոխով, որի հրճուանքները խառնուում էին թիերի ծանր ճղփիւնների և, բարձրանալով երկու եղերքներից, ի մի էին ձուլուում դետի վերեւում՝ շչուկների, աղաղակների, կոչերի, ծիծաղների ու երգերի այն հոսանքի մէջ, որ տօն օրերին անընդհատ ելեկներով ընթանում է Սէնայի երեսով տասը մղոն տարածութեան վրայ։

Լի օրերը այդտեղ կարելի էր տեսնել բացօձիք, անդորր ու դատարկաշրջիկ բաղմութիւն, կոչտ յարդէ լայն, սրածայր գլխարկներով ու ըրդէ բաճկոններով աղամարդիկ և արածող կովեր երաղող հայեացքով՝ զառիվայրի վրայ պարապ նստոտած կանայք։ Բոլոր շրջիկ մանրավաճառները, երգեհոն ածողները, տաւիղահարները, թափառական խեղկատակները՝ կանգ էին առնում այդտեղ, ինչպէս արուարձանում։ Գետափը լիքն էր դրանցով և եղերքների պատուհանները միշտ բացուում էին դրանց մօտենալիս ու նրանց մէջ երեսում էին անհոգ կոճակուած սպիտակ բաճկոններ, խճճուած մազեր ու պարապուած թեան չիբուխներ, որոնց տէրերը կարօտով սպասում էին այդ թափառաշրջիկ դուեկութիւններին, իբրև դրացի փարիզի քաղցր յիշողութիւնների։

Տիւր ու տգեղ էր այդ բոլորը։

Դեռածիլ խոտը արդէն դեղնել էր ոտի տակ տրորուելով, փոշին մրի պէս սև էր, և սակայն ամէն հինգշաբթի կոկօտների բարձր շրջանը անցնում էր այդ տեղով, գնում Կազինո, անա-

գին աղմուկ հանելով վարձու կառքերի դիւրաբեկ անիւնեկով։ Այդ բոլորը սաստիկ դուր էր գալիս Սիդոնիին, որ փարիզուհի էր մինչև ուղ ու ծուծը. բացի դրանից, երեխայ ժամանակը փոքրիկ Շէրը շատ բան էր լսել Անիէրի մասին հռչակաւոր Դելօբէլից, որ շատ ուրիշ դերասանների նման ցանկութիւն էր տածում ունենալ այդ տեղերում մի տուն, մի փոքրիկ գիւղական անկիւն, ուր կարելի լինէր գիշերները, ժամի տասներկու և կէսին, վերադառնալ թատրոնից։

Փոքրիկ Շէրի բոլոր երազները այժմ իրագործում էր Սիդոնի Ռիսլէրը...

Երկու եղբայրները մօտեցան գետափի կողմի դարպասին, որ սովորաբար կողպած չէր լինում։ Նրանք ներս մտան, անցնելով դեռ մատաղաշ թաւուտների արանքով։ Տեղ-տեղ երևում էին զանազան փոքրիկ շէնքեր,—բիլիարդի սենեակը, պարտիզպանի տունակը, ապակիապատ ջերմոցը,—որոնք միշեցնում էին՝ երեխաներին իբր խաղալիք տրուող շվեյցարական շալէների այլ և այլ մասերը, իսկ ամբողջը—թեթև, հաղիւ հաղ կպած հողի ամենաչնչին հնչից—նմանում էր կոկոտի կամ բօրսայական խաղերով զբաղուած դրամատէրի վիլլայի։

Ֆրանցը դիտում էր իր շուրջը՝ փոքր ինչ շլացած։ Պարտէզի խորքում, ծաղկազարդ անօթներով շրջապատուած պատշգամբի վերևում, երևում էին դահլիճի բարձր պատուհանները՝ բաց վանդակափեղկերով։ Դռան մօտ շարուած էին ծալովի աթոռներ, մի ամերիկական ճօճաթոռ և մի փոքրիկ սեղան, որի վրայ դեռ մնում էր սուրճի սարքը։ Ներսից լսւում էին դաշնամուրի ուժգին բաղխումներ և ձայների խուլ շչունջ։

—Ա՛յ թէ կը զարմանայ Սիդոնին, ասում էր բարեհոգի Ռիսլէրը, յուշիկ քայլելով աւազի վրայով,—նա ինձ սպասում է միայն երեկոյեան... Այժմ երաժշտութեամբ է զբաղուած տիկին Դօրսօնի հետ։

Եւ յանկարծակի բանալով դուռը, դեռ ներս չը մտած, շէմքից գոռաց իր բարեհոգի թաւ ձայնով.

—Իմացիր, թէ ում եմ բերել հետս։

Տիկին Դօրսօնը, որ մենակ նստած էր դաշնամուրի առաջ, վեր թռաւ տեղումը, և ընդարձակ դահլիճի խորքում, արևադարձային բոյսերի յետևում, որոնք բարձրանում էին մի սիրուն սեղանի վրայ, կարծես շարունակելով նրա նուրբ ու գողտրիկ գծերը, շտապով ոտքի կանգնեցին Ժօրժն ու Սիդոնին։

—Օ՜խ, վախացրեցիք ինձ... ասաց վերջինը, վազելով դէպի Ռիսլէրը։

Գորգի վրայ ֆրֆռաց նա փոթփոթաղարդ սպիտակ մնայլին հագուստը, ոջի միջով անց կացրած կապոյտ ժապաւէնները միշեցնում էին երկնքի կապոյտ կտորներ ամպերի արանքին, և արդէն չփոթութիւնից ազատուած, բաց ճակատով, սիրալիր դէմքով և իր մշտական թեթև ժպիտով, նա մօտեցաւ ու համբուրուեց իր ամուսնու հետ և մեկնեց ճակատը Ֆրանցին, ասելով.

—Բարև, եղբայր Ֆրանց։

Ռիսլէրը թողեց նրանց մենակ ու ինքը մօտեցաւ Ֆրօմոն կրտսերին, սաստիկ զարմանալով, որ նրան գտնում է իր տանը։

—Ի՞նչպէս, դուք այստեղ էք, Շօրշ... Ես կարծում էի, թէ Սավինի էք գնացել...

—Այո՛, բայց երևակայեցէք... Ես եկայ... կարծում էի, թէ կիրակի օրերը մնում էք Անիէրում... Ուզում էի ձեզ հետ խօսել մի գործի մասին...

Եւ իսկոյն սկսեց, խօսքերն իրար խառնելով, պատմել նրան ինչ-որ մի կարևոր ապսպրանքի մասին։ Սիդոնին անյայտացաւ՝ Ֆրանցի հետ մի քանի աննշան խօսքեր փոխանակելուց յետոյ։ Տիկին Դօրսօնը շարունակում էր իր մեղմիկ տրէմոլօները, այնպէս, ինչպէս նուագում են թատրոնում կրիտիկական դրութիւնների ժամանակ։

Եւ յիրաւի, դրութիւնը բաւական լարուած էր։ Միայն Ռիսլէրի լաւ տրամադրութիւնն էր, որ չէր թողնում, որ ամենքը սաստիկ նեղուած զգան իրանց։ Նա ներողութիւն էր խնդրում Ֆրօմոնից, որ տանը չէր գտնուել, և ուզում էր իսկոյն ցոյց տալ իր տունը Ֆրանցին։ Դահլիճից գնացին ախոռատունը, ախոռատնից՝ մառանները, կառասրահները, ջերմոցը։ Ամեն ինչ նոր էր, փայլուն, շողշողուն և չափազանց փոքր ու անյարմար։

—Բայց,—ասում էր Ռիսլէրը փոքր ինչ հպարտութեամբ,—չատ փող է նստել այս բոլորը։

Նա ուզում էր, որ Ֆրանցը զմայլի, տեսնելով Սիդոնիի գնած տան ամենաչնչին մանրամասնութիւնները, ցոյց էր տալիս նրան բոլոր յարկերը լերուած ջուրն ու գաղը, կատարելագործուած զանգերը, պարտէզի կահ-կարասիները, անգլիական բիլիարդը, ջրաբուժանոցը, և այդ բոլորը անում էր բուռն երախտագիտութեան ցոյցերով Ֆրօմոն կրտսերի հասցէին, որ նրան դարձնելով իր առևտրական ընկերակիցը, ուղղակի մի գանձ վերցրել ու դրել էր նրա բռի մէջ։

Ամեն անգամ, երբ Ռիսլէրը այդպէս արտայայտում էր իր երախտագիտութիւնը, Ֆրօմոնը ամօթահար ու անհանգիստ կուչ էր գալիս, զգալով Ֆրանցի օտարոտի հայեացքը։

Նախաճաշը թմրած անցաւ։

Խօսողը գրեթէ միայն տիկին Դօբսօնն էր, որ երջանիկ էր զգում իրան, խորասուզուած սիրային ինտրիգայի մէջ։ Շատ լաւ իմանալով կամ, աւելի ճիշտ ասած, կարծելով, թէ շատ լաւ իմանում էր իր բաեկամուհու դաղտնիքը, նա հասկանում էր Ֆրանցի խուլ ցասումը,—այդ կատաղութիւնը նախկին սիրահարի, որ տեսնում էր իր տեղը գրաւուած ուրիշից,—հասկանում էր նաև ախոյեանի երևան դալուց վրդովուած ժօրժի անհանգստութիւնը, քաջալերում էր մէկին մի հայեացքով, մխիթարում էր միւսին մի ժպիտով, հիանում էր Սիդոնիի անդորրութեան վրայ և ամենայն արհամարհանքով էր վերաբերւում դարշելի Ռիսլէրին, այդ կոպիտ ու վայրագ բռնակալին։ Նա ամեն ջանք գործ էր դնում մանաւանդ թոյլ չը տալու համար, որ սեղանի շուրջը լռութիւն տիրի,—անտանելի լռութիւն, որ այնքան ծիծաղելի ու ճնշող կերպով ընդհատւում է ամաննկրին դիպչող պատառաքաղների ձայնով։

Նախաճաշը վերջանալուն պէս Ֆրոմոն կրտսերը յայտնեց, որ ինքը վրեադառնում է Սավինի։ Ռիսլէր աւագը չը համարձակեց նրան պահել, մտածելով, որ իր սիրելի տիկին Շօրշը բոլորովին մենակ կը մնայ այդ կիրակին. և սիրեկանը, առանց կարողանալու մի խօսք ասել իր սիրուհուն, կիզող արևի տակ գնաց դէպի երկաթուղու կայարանը Ռիսլէրի ուղեկցութեամբ, որ ոչ մի կերպ չէր ուզում մենակ թողնել նրան մինչև գնացքը նստելը։

Տիկին Դօբսօնը մի բոպէ նստեց Ֆրանցի ու Սիդոնիի հետ մի փոքրիկ տաղաւարում, որ զարդարուած էր խաղողի պատատուկաձև ոստերի վարդագոյն բողբոջներով. բայց յետոյ, զգալով, որ ինքը խանգարում է նրանց, նա վերադարձաւ դահլիճը և, ինչպէս մի քիչ առաջ, երբ ժօրժը այնտեղ էր, սկսեց նուագել ու երգել մեղմ ու արտայտիչ կերպով։ Լուռ պարտէզի մէջ, այդ խուլ երաժշտութիւնը, դուրս սփռուելով ճիւղերի արանքով, յիշեցնում էր թռչունի մնչիւն մրրիկից առաջ։

Վերջապէս նրանք մենակ մնացին։

Տաղաւարի ցանցապատի տակ, որ դեռ լերկ էր և զուրկ տաղարթից, մայիսեան արևը շատ էր կիզիչ։ Սիդոնին ձեռքով հովանի էր անում աչքերին, նայելով դեռատիպ անցուդարձ անողներին։ Ֆրանցը նոյնպէս նայում էր դուրսը, բայց դէպի ուրիշ կողմ, և երկուսն էլ այնպէս էին ցոյց տալիս, թէ ոչ մի կախում չունեն միմեանցից, սակայն յանկարծ երկուսն էլ միևնոյն բոպէին շուռ եկան դէպի իրար միատեսակ շարժումով և միատեսակ մտածմունքով։

—Խօսելիք ունեմ ձեզ հետ, ասաց Ֆրանցը խակ և խակ այն բոպէին, երբ Սիդոնին ուզում էր բանալ բերանը։

—Ես էլ խօսելիք ունեմ,—պատասխանեց Սիդոնին լուրջ եղանակով,—բայց գնանք այն կողմը... այնտեղ աւելի յարմար կը լինի։

Եւ նրանք մտան մի փոքրիկ պավիլիոն, որ շինուած էր պարտէզի խորքում։

II

Բացատրութիւն։

Իսկապէս ժամանակն էր, որ դար դատաւորը։

Սիդօնին, գլուխը կորցրած, պտոյտ էր գալիս փարիզեան յորձանքի մէջ։ Հէնց իր թեթեւութեան շնորհիւ նա դեռ ևս կարողանում էր մնալ ջրի երեսին. բայց նրա անչափ ծախսերը, ցուցամոլ շռայլութիւնը, հետզհետէ աւելի ու աւելի մեծ չափով արհամարհանքով վերաբերուելը վայելչութեան ամենատարրական պահանջներին,—այդ բոլորը ցոյց էր տալիս, որ նա շուտով գնալու էր ջրի տակը, քաշ տալով իր հետ իր ամուսնու պատիւը և գուցէ նաև՝ իր խենթութիւններից քայքայուած խոշոր առևտրական տան հարստութիւնն ու անունը։

Այն միջավայրը, որի մէջ ապրում էր նա այժմ, աւելի ևս շտապեցնում էր նրա կորուստը։ Փարիզում, մանր վաճառականների թաղերում, որոնք բոլորովին նման են չարակամ ու բամբասէր գաւառներին, նա ստիպուած էր մի քիչ զգոյշ պահել իրան, բայց Անիէրում, իր ամարանոցում, որ շրջապատուած էր դերասանների շալէներով, կասկածելի ընտանիքներով և արձակուրդ վայելող գործակատարներով, նա այլ ևս չէր քաշւում ոչնչից։ Նրա շուրջը այդտեղ սիրում էր անառակութեան մթնոլորտ, որ նա շնչում էր առանց տհաճութեան, որովհետև իսկ և իսկ նրա ճաշակովն էր այդ։ Երեկոները, նստած իր փոքրիկ պարտեզում, նա զուարճանում էր պարահանդիսային երաժշտութիւն լսելով։

Ամրճանակի մի հարուած, որ թնդաց մի գիշեր դրացի տան մէջ ու սկսեց ամբողջ շրջակայքը զբաղեցնել մի տարակուսելի սիրահարական դէպքով, առիթ դարձաւ նրա համար երազելու

նոյնպիսի արկածների մասին։ Նա ինքն էլ կ'ուզէր ունենալ այդպիսի «պատմութիւններ»։ Բոլորովին կորցնելով չափը թէ խօսակցութեան և թէ վարմունքի մէջ, նա կամ, Տրուվիլի ու Հուլոնի դէպի*) գողտրիկ տիկիններին նմանելով, կարճ ներքնազգեստ հագած ու երկար փայտը ձեռքին գնում էր զբօսնելու Անիէրի գեղատափում, կամ թէ մնում էր տանը, առաւօտեան զգեստով, իր հարևանուհիների նման բոլորովին անգործ ու հազիւհազ ուշք դարձնելով տան վրայ, ուր ծառաները աննկատելի կերպով կողոպտում էին նրան, ինչպէս մի կոկոտի։ Եւ այդ կինը, որին ամենն առաւօտ տեսնում էին ձի հեծած զբօսնելիս, ամբողջ ժամերով նստած զրոյց էր անում իր աղախնի հետ իրանց շրջապատող տարօրինակ ընտանիքների մասին։

Փոքր առ փոքր նա հասաւ իր առաջուան դիրքին և նոյն իսկ աւելի ստոր աստիճանի։ Հարստութեան ու դիրքի տէր բուրժուազիայից, որի կարգն էր անցել իր ամուսնութեան շնորհիւ, նա սահեցաւ-արագ գահավիժւում էր դէպի պահովի կնոջ աստիճանը։ Շարունակ ճանապարհորդելով նոյն վագոններում՝ օտարոտի զգեստներ հագած և մազերը շան պէս աչքներին քաշած կամ Բրաբանտեան Ժէնէվիէվայի**) նման մէջքներին շաղ տուած՝ անվայել կանանց հետ, նա վերջ ի վերջոյ սկսեց նմանել նրանց։ Երկու ամիս նա մազերը չէկ ներկած էր ման գալիս, ի մեծ զարմանս Ռիսլէրի, որ ապշած էր մնացել, թէ ինչու են յանկարծ փոխել իր տիկնիկը։ Ինչ վերաբերում է Ժորժին, բոլոր այդ արտաքոց վարմունքները նրան հաճոյք էին պատճառում և նրանց տիկնիկը։ Ժորժն էր շնորհիւ Սիդօնին տասը կնոջ համ էր տալիս նրան։ Ժորժն էր նրա իսկական ամուսինը, տան իսկական տէրը։

Սիդօնիին զուարճացնելու համար, նա հասարակութեան համար, նա հասարակութեան համար մի տեսակ բան էր ստեղծել նրա շուրջը, որ բաղկացած էր իր ամուսրի ընկերներից, մի քանի քէֆ սիրող առևտրականներից և որի մէջ գրեթէ երբէք չէր լինում ոչ մի կին։ Կանայք ինչ պէտք էին. նրանք շատ սուր աչքեր են ունենում։ Նայք ինչ պէտք էին. նրանք բարեկամուհին էր։

Տիկին Դօրսօնը նրանց միակ բարեկամուհին էր։

Նրանք կազմակերպում էին մեծ ճաշկերոյթներ, զբօսանքներ գետի վրայ, հրավառութիւն։ Օրէցօր խեղճ Ռիսլէրի գրութիւնը աւելի ու աւելի ծիծաղելի և անվայել էր դառնում։ Ե-

*) Սովային լողարաններ։ Ս. Թ.

**) Հին առասպելի հերոսուհի, որ, կասկածուելով ամուսնական անհաւատարմութեան մէջ, մահուան էր դատապարտուել և, ծառայի ձեռքով փրկուելով, մի քանի տարի ապրել էր քարայրում, ուտելու համար՝ անվնաս մարմինը ծածկելու համար՝ անվնասելով միայն վայրի արմատներ, իսկ մարմինը ծածկելու համար՝ նրա մազերը։ Ս. Թ.

բեկոնները յոգնած ու վատ հագնուած տուն վերադառնալիս՝ նա պէտք է իսկոյն գնար իր սենեակը հագուստը փոխելու։

—Ճաշին հիւրեր ունենք,—ասում էր նրան կինը,—շտապեցէք։

Եւ նա վերջինն էր նստում ճաշի, շուրջանակի ձեռք տալով բոլոր հիւրերին, Ֆրօսմն կրտսերի բարեկամներին, որոնց անունները հաղիւ գիտէր ինքը։ Տարօրինակ բան. գործարանի գործերի մասին էլ յաճախ խօսակցութիւն էր լինում այդ ճաշերի ժամանակ, ուր Ժօրժը ընդունում էր իր ժողովարանի ծանօթներին, վատահ լինելով այն բանի վրայ, որ ինքն էր ծախսերը անողը։

«Գործի նախաճաշեր ու ճաշեր»։ Ռիսլէրի համար այդ խօսքերը ամեն ինչ բացատրում էին,—և՛ իր առևտրակցի մըտական ներկայութիւնը, և՛ հիւրերի ընտրութիւնը, և՛ հրաշալի զգեստները Սիդոնիի, որ զուգում էր ու կօքէտութիւններ անում առևտրական տան շահերի համար։ Ֆրօսմն կրտսերին յուսահատեցնում էր իր սիրուհու այդ կօքէտութիւնը։ Օրուայ ամեն ժամերին, անհանգիստ ու կասկածոտ, գալիս էր նա, ուզելով յանկարծակի բռնել և վախենալով երկար մենակ թողնել այդ ծածկամիտ ու փչացած արարածին։

—Ո՞րտեղ է լինում մարդդ... հեգնական ձևով հարցնում էր Գարդինուա պապը իր թոռից... Ինչո՞ւ այսքան ուշ-ուշ է գալիս այստեղ։

Կլերը արդարացնում էր ամուսնուն, բայց այդ յարատև բացակայութիւնը սկսում էր անհանգստացնել նրան։ Այժմ նա գալիս էր՝ ամեն օր հայի ժամանակ ստանալով փոքրիկ տոմսեր ու հեռագիրներ, թէ՝ «Այս երեկոյ ինձ չը սպասես, սիրելիս։ Ես կարող եմ գալ Սավինի միայն վաղը կամ միւս օրը գիշերուայ գնացքով»։

Տխուր-տխուր ճաշում էր խեղճը ամուսնու դատարկ տեղի առաջը նստած և զգում էր, որ մարդը սառում է իրանից, թէև չը գիտէր, որ նա դաւաճանում է իրան։ Ո՞ւրքան մաքամաղոր էր լինում ամուսինը, երբ մի որ և է ընտանեկան տօնի կամ մի ուրիշ պատճառով ակամայից մնում էր տանը։ Ինչպէս ըռութիւն էր պահում նա՝ իրան զբաղեցնող հարցերի մասին։ Սիդոնիի հետ միայն հեռուից հեռու յարաբերութիւն ունենալով, Կլերը ամենեին չէր խմանում, թէ ինչեր են տեղի ունենում Անիէրում, բայց երբ Ժօրժը շտապ-շտապ և ժպտերես մնալով, տանջւում էր հեռանում էր Սավինիից, նա, միայնակ մնալով, տանջւում էր խուլ կասկածներից և, ինչպէս առհասարակ այն մարդիկ, որոնք մի մեծ դժբախտութիւն են սպասում, յանկարծ անհուն

դատարկութիւն էր զգում սրտումը, որի մէջ կարծես տեղ էր պատրաստւում մի մեծ աղէտի համար։

Կլէրի ամուսինն էլ նոյնքան անբախտ էր, որքան և ինքը, Կլերը։ Անսիրտ Սիդոնին կարծէք զուարճութիւն էր զգում նրան տանջելով։ Նա ամենքին թոյլ էր տալիս, որ սիրաշահեն իրան։ Վերջերքս ամեն օր գալիս էր նրա մօտ, հետը յուզիչ զուէտներ երգելու, ինչ-որ մի իտալական տենօր Տուլուզից *), պ. Կաղաբօն, Կաղաբօնի մականուանուած, որ ծանօթացել էր նրա հետ տիկին Դօրսօնի միջոցով։ Ժօրժը, նախանձից տանջուելով, կէսօրից յետոյ թռչում էր Անիէր, երեսի վրայ էր թողնում ամեն ինչ և արդէն սկսում էր գտնել, թէ Ռիսլէրը լաւ չի հսկում իր կնոջ վրայ։ Նա ուզում էր, որ Ռիսլէրը կոյր լինի միմիայն իր վերաբերմամբ։

Օ՜, եթէ ինքը լինէր նրա ամուսինը, ինչպէս պինդ հուպ տուած կը պահէր նրան։ Բայց նա ոչ մի իրաւունք չունէր Սիդոնիի վրայ և Սիդոնին առանց այլեայլութեան ասում էր այդ բանը նրա երեսին։ Բացի այդ, շնորհիւ տրամաբանութեան անդիմադրելի ոյժին, որ երևան է գալիս յաճախ նոյն իսկ ամենայիմար զուարճանքներում, նա երբեմն-երբեմն ինքն իրան ասում էր, որ ինքը, իբրև ուրիշին խաբող, թերևս արժանի է նոյնպէս խաբուած լինելու։ Այսպէս թէ այնպէս՝ տխուր կեանք էր նրա կեանքը։ Ամբողջ ժամանակը նա զբաղուած էր գոհարների կամ թանկագին կտորների մի խանութից միւսը վազելով և գլուխ ջարդելով, թէ ինչ ընծայ տայ նրան, ինչ սիրբոլրիզ գտնի նրա համար։ Օ՜, շատ լաւ էր ճանաչում նա Սիդոնիին։ Նա գիտէր, որ այդ կնոջը կարելի է զուարճացնել գոհարներով, բայց չի կարելի երկար ժամանակով դրաւած պահել, և որ այն օրը, երբ նա սկսի ձանձրանալ...

Բայց Սիդոնին դեռ չէր ձանձրանում։ Նրա վարած կեանքը բոլորովին իր սրտի ուզածովն էր և նա վայելում էր այն ամբողջ բախտաւորութիւնը, որին կարող էր երբեմն հասնել։ Այն սիրոյ մէջ, որ նա տածում էր դէպի Ժօրժը, չը կար ոչինչ ոչ հրաբորբոք, ոչ ռոմանտիկական։ Ժօրժը նրա համար ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի երկրորդ ամուսին, աւելի երիտասարդ և մանաւանդ աւելի հարուստ, քան առաջինը։ Իրանց հնութիւնը լիովին բուրժուականացնելու համար՝ նա իր ծնողներին էլ բերել էր տուել Անիէր և, բնակեցնելով նրանց քաղաքի ծայրում, մնափառ ու կամաւորապէս կոյր հօրից և զորովալից ու դեռ չլացած մօրից ստեղծել էր իր համար մի պատուա-

*) Քաղաք Ֆրանսիայում։ Ս. Բ.

ւոր չրջավայր, որին նա այնքան աւելի կարիք էր զգում, որ-
քան աւելի խրւում էր անառակութեան մէջ։

Ամեն ինչ չափուած ու ձեւուած էր այդ փչացած դէմքում,
որ կշռադատում էր անառակութիւնը ամենասառը կերպով, և
թւում էր, թէ նրա կեանքը շարունակուելու է միշտ այդպէս
անդորր, երբ յանկարծ լոյս ընկաւ Ֆրանց Ռիսլէրը։

Նրան տեսնելուն պէս Սիդոնին հասկացաւ, որ իր անդոր-
րութիւնը վտանգուած է և որ իր ու նրա մէջ տեղի է ունե-
նալու մի շատ կարևոր բան։

Նոյն րոպէին և եթ նա կազմեց իր ծրագիրը։ Այժմ պէտք
էր միայն իրագործել այդ ծրագիրը։

—

Նրանց մտած տաղաւարը մի կլոր ու ընդարձակ սենեակ
էր չորս պատուհանով, որոնցից տարբեր-տարբեր տեսարաններ
էին երևում, և կահաւորուած էր ամարային միջօրէական հան-
դստեան համար, օրուայ շոգ ժամերի համար, երբ մարդ ա-
պաստան է փնտռում արևից և պարտէզի միջատների բզզոցից։
Ամբողջ պատի երկայնութեամբ ձգուած էր մի լայն ու շատ ցա-
ծիկ բազմոց։ Սենեակի մէջտեղում դրուած էր մի փոքրիկ ու
նոյնպէս շատ ցածիկ չինական սեղան, ծանրաբեռնուած աշխար-
հիկ գրական հանդէսների ջոկջոկատուած համարներով։

Պատուհանները թարմ էին և չթեղենի նաշխները—կապտա-
գոյն եղէգների մէջ թռչկոտող թռչուններ—յիրաւի նմանում էին
ամարային երազի, մի թեթև պատկերի, որ սաւառնում է փակ-
ուող աչքերի առաջ։ Ծածկած վարագոյրները, յատակին փռած
խսիրը և Վիրգինիայի յասմիկը, որ դրսից հիւսւում էր ամբողջ
վանդակապատին, շատ զով էին պահում տաղաւարը, որ զովու-
թիւն էր ստանում նաև կողքովը հոսող գետից, որ ծփում էր
անդադար և իր մանր ալիքներով զարկւում ափերին։

Ներս մտնելուն պէս Սիդոնին նստեց, ոտով մի կողմ հրե-
լով սպիտակ չրջազգեստի երկար տուտը, որ ձեռն չերաի նման
փռուեց բազմոցի ներքևում, և այդպէս նստած սպասում էր,
աչքերը՝ պայծառ, բերանը՝ ժպտուն և փոքրիկ գլուխը, որին
աւելի ևս քմահաճոյ ու չարաճճի տեսք էր տալիս կողքի հան-
դոյցը, մի փոքր խոնարհած։

Ֆրանցը, սաստիկ գունատուած, մնացել էր կանգնած ու
նայում էր շուրջը։ Յետոյ, մի քիչ անցած, նա սկսեց խօսել.

—Կեցցէք, տիկին, ասաց նա, ապրելու ձեր գիտէք։

Ու խսկոյն և եթ, կարծես վախենալով, թէ այդպէս հեռուից
սկսուած խօսակցութիւնը շուտով չի հասնի այն կէտին, որ ի-
րան պէտք էր, նա շարունակեց բիրտ կերպով.

—Ո՞ւմն էք պարտական այս ամբողջ ձոխութեան համար...
Ձեր ամուսնուն, թէ՞ ձեր սիրականին...

Սիդոնին, առանց տեղիցը շարժուելու և նոյն իսկ առանց
աչքերը վեր բարձրացնելու, պատասխանեց.

—Երկուսին էլ։

Ֆրանցը մի քիչ շփոթուեց այդ համարձակութիւնից։

—Ուրեմն դուք խոստովանում էք, որ այդ պարոնը ձեր
սիրականն է։

—Հապա ինչ զահրումար պէտք է անեմ։

Ֆրանցը մի րոպէ լուռ նայեց նրան։ Նա էլ էր գունատուել,
չը նայելով իր հանդստութեանը, և մշտական թեթև ժպիտը չէր
խաղում այլ ևս բերանի անկիւնում։

Ֆրանցը ընդհատեց լռութիւնը։

—Լաւ լսէք, Սիդոնի։ Եղբօրս անունը, այն անունը, որ
նա տուել է իր կնոջը, իմ անունս էլ է։ Քանի որ Ռիսլէրը այն-
քան անամիտ է, այնքան կուրացած, որ թոյլ է տալիս ձեզ խայ-
տառակել այդ անունը, ինձ է մնում պաշտպանել մեր անուան
պատիւը ձեր պատճառած խայտառակութիւնից... Ուստի խնդ-
րում եմ ձեզ յայտնել պ. Ֆրօմենին, որ իսկոյն և եթ մի ուրիշ
սիրուհի գտնի ու այսուհետև նրա վրայ վատնի իր փողերը...
Ապա թէ ոչ...

—Ապա թէ ոչ, հարցրեց Սիդոնին, որ նրա խօսած միջո-
ցին շարունակ խաղում էր իր մատանիների հետ։

—Ապա թէ ոչ ես կը յայտնեմ եղբօրս, թէ ինչ բաներ են
տեղի ունենում իր տանը, և դուք կ'ասէք այն ժամանակ, տես-
նելով Ռիսլէրին նոյնքան վայրագ և նոյնքան ահռելի, որքան
հեղ է նա սովորաբար։ Իմ ասածները դուցէ նրան սպանեն,
բայց կարող էք վստահ լինել, որ նա չի մեռնի մինչև որ ձեզ
չը սպանի։

Սիդոնին ուսերը վեր քաշեց։

—Լաւ, սպանում է, թող սպանի... Ի՞նչս պէտք է պակսի։

Այնպիսի զառն ու աշխարհից կտրուած ձայնով ասաց նա
այդ բանը, որ Ֆրանցը յակամայից փոքր ինչ կարեկցութիւն
զգաց դէպի այդ գեղեցիկ, ջահել ու երջանիկ էակը, որ մեռնե-
լու մասին խօսում էր այդպիսի անտարբերութեամբ։

—Ուրեմն շատ շատ էք սիրում նրան, ասաց նա արդէն
փոքր ինչ մեղմացած ձայնով... Ուրեմն շատ շատ էք սիրում այդ
Ֆրօմենին, որ դերադասում էք մեռնել, քան հրաժարուել նրանից։

Սիդոնին ուղղուեց տեղումը արագ շարժումով։

—Ո՞վ, ես, ես եմ սիրում այդ ցանցառին, այդ փալասի
կտորին, այդ տղամարդու շոր հագած ողորմելի կնամարդին...

Ինչեր էք ասում... Դա եղած թէ ուրիշը՝ ինձ համար միևնոյն է. դա պատահեց, դրա հետ կապուեցի...

—Բայց ինչու։

—Որովհետև պէտք էր այդպէս անել, որովհետև ես ցնորուած էի պէս էի, որովհետև սրտումս բուն էր դրել և դեռ մնում է այնտեղ մի յանցաւոր սէր, որ ուզում եմ դուրս կորզել, ինչով էլ լինի այդ։

Նա վեր էր կացել տեղից և խօսում էր Ֆրանցի հետ աչքերը գցած նրա աչքերին, բերանը մօտեցրած բերանին և սարսռալով իր ամբողջ էութեամբ։

Ցանցաւոր սէր... Ո՞վ պէտք է լինէր նրա սիրածը։

Ֆրանցը վախենում էր հարց տալ նրան։

Առանց դեռ ոչինչ կասկածելու, նա հասկանում էր սակայն, որ իր վրայ խոնարհուած այդ հայեացքը, այդ շունչը՝ ինչ որ զարհուրելի դաղանիք էին բանալու իր առաջ։

Բայց նա եկել էր դատաւորի պաշտօն կատարելու և պարտական էր ամեն ինչ իմանալ։

—Ո՞վ է այդ մարդը... հարցրեց նա։

Սիդոնին պատասխանեց խուլ ձայնով.

—Ինքներդ շատ լաւ գիտէք, որ դուք էք այդ։

Եւ այդ ասողը նրա եղբօր կինն էր։

Երկու տարուց ի վեր նա իր քրոջ տեղն էր համարում նրան և երբէք ուրիշ կերպ չէր մտածում նրա մասին։ Նրա աչքում, իր եղբօր կինը այլ ես ոչ մի բանով չէր նմանում իր նախկին հարսնացուին, և իր կողմից մի ծանր յանցանք կը լինէր մի ամենաչնչին դիմագծով անգամ նմանեցնել այդ կնոջը այն օրիորդին, որին մի ժամանակ ինքը այնքան յաճախ կրկնել էր՝ «ես ձեզ սիրում եմ» խօսքերը։

Իսկ այժմ այդ կինը իր բերնով խոստովանում էր, որ ինքը սիրում է նրան։

Խեղճ դատաւորը մնացել էր ապշած, շշմած ու ոչ մի խօսք չէր գտնում նրան պատասխանելու համար...

Իսկ նա, կանգնած նրա դիմացը, սպասում էր...

Այն տենդոտ ու արևալից գարնանային օրերից մէկն էր, որոնց մի առանձին մեղկութիւն ու մելամաղձութիւն է հաղորդում անցած անձրևների գոլորշին։ Օդը դաղջ էր և լի նորափթիթ ծաղիկների անուշահոտութեամբ, որոնք այդ առաջին տաք օրը այնպիսի սաստիկ բուրմունք էին արձակում, ինչպէս ձեռնամուշակի մէջ դրած մանիշակները։ Այն սենեակը, ուր նրանք գտնուում էին, իր բարձր ու բաց պատուհաններով ներս էր շնչում այդ արբեցուցիչ բուրմունքները։ Դրսից լսւում էին կիրակնօրեայ երգեհոնների նուագները, գետի վրայ հնչող հեռաւոր ձայները և աւելի մօտ՝ տիկին Դօրսօնի սիրահալ ձայնը, որ հեծեծում էր.

On dit que tu te maries,
Tu sais que j'en puis mouri i i i i r!...

—Այո, Ֆրանց, դուք էք եղել միշտ իմ սրտի սիրածը, ասում էր Սիդոնին։ Ոչ մի բան չը կարողացաւ ջնջել իմ սրտումս կամ թուլացնել այդ սէրը, որից ես հրաժարուեցի այն ժամանակ, որովհետև ջահել աղջիկները չեն նայ, որովհետև ջահել աղջիկ էի, իսկ ջահել աղջիկները չեն հասկանում, թէ ինչ են անում։ Երբ որ իմացայ, որ ձեզ վրայ սիրահարուած է ընութիւնից զրկուած ու անբախտ Դէզիրէն, սիրտս լցուեց մեծահոգութեամբ և ես վճռեցի երջանիկ դարձնել նրան՝ զոհելով իմ երջանկութիւնը ու իսկոյն և եթ յետ մղեցի ձեզ, որպէս զի գնայիք նրա մօտ։ Ա՜խ, սակայն երբ դուք արդէն հեռացաք, ես հասկացայ, որ այդ զոհաբերութիւնը իմ ոյժերից վեր էր։ Խեղճ Դէզիրէ։ Ո՜րքան անիծել եմ նրան սրտիս խորքումը։ Կարող էք հաւատալ, այն ժամանակից ես խուսափում էի նրան հանդիպելուց։ Զզուանքս ծանր էր ինձ համար նրան տեսնել։

—Բայց եթէ դուք ինձ սիրում էիք, հարցրեց Ֆրանցը սաստիկ ցած ձայնով,—եթէ դուք ինձ սիրում էիք, ինչու պակուեցիք իմ եղբօրս հետ։

Սիդոնին չը շփոթուեց։

—Ռիսլերի հետ պսակուելով ես մօտենում էի ձեզ։ Ես ասում էի ինքս ինձ. «Ես չը կարողացայ նրա կինը լինել։ Ի՜նչ արած, նրա քոյրը կը դառնամ։ Գոնէ, այդպիսով ինձ թոյլ կը տրուի այսուհետև էլ սիրել նրան, և մենք չենք անցնիլ մեր ամբողջ կեանքը օտար մնալով միմեանցից»։ Աւաղ, քանի տարեկան օրիորդի միամիտ երազներ էին այդ, որոնց ունայնութիւնը շատ շուտով ապացուցեց ինձ կեանքը... Ես չը կարողացայ, Ֆրանց, սիրել ձեզ իբրև քոյր. ես չը կարողացայ նոյնպէս և մոռանալ ձեզ. ամուսնութիւնս արդելք եղաւ այդ բանին։ Եթէ մի ուրիշը լինէր իմ ամուսինը, դուցէ յաջողէր ինձ այդ, բայց Ռիսլերի կինն էի ես և սարսափելի դրութիւն էր իմ դրութիւնը։ Նա շարունակ խօսում էր ձեր մասին, ձեր յաջողութիւնների մասին, ձեր ապագայի մասին... Ֆրանցը այս էր ասում։ Ֆրանցը այսպէս էր անում... Խեղճը անչափ սիրում է ձեզ։ Եւ բացի այդ, որ ամենազարհուրելին էր ինձ համար, ձեր եղբայրը նման է ձեզ։ Ձեր քայլուածքի, դիմագծերի, մանաւանդ ձեր ձայնի մէջ մի տեսակ տոհմական ընդհանուր բան կայ, այնպէս որ նրա դգուանքների ժամանակ

—Գնում եմ... Ուշ է։

—Ի՞նչպէս թէ գնում ես. այստեղ չՔս քնելու մի թէ։ Սեղակդ պատրաստ է։

—Բոլորովին պատրաստ,—աւելացրեց Սիդոնին մի առանձին տեսակ հայեացքով։

Ֆրանցը սաստիկ հակառակեց։ Նրա ներկայութիւնը անհրաժեշտ էր Պարիզում, որովհետև Ընկերութիւնը շատ կարևոր յանձնարարութիւններ էր տուել նրան։ Դեռ փորձում էին նրան համոզել չը թողնել, որ գնայ, երբ նա արդէն նստած էր, անցնում էր լիալուսնի շողերով ողողուած պարտէզով և աղմկայոյզ Անիէրով վազելվազ դիմում դէպի երկաթուղու կայարանը։

Երբ նա հեռացաւ ու Ռիսլերը գնաց իր սենեակը, Սիդոնին ու ալիկին Դօքսոնը մի քիչ մնացին կանգնած դահլիճի պատուհանների մօտ։ Հարևան կաղինօյի երաժշտութիւնը հասնում էր նրանց ականջին մակույկավարների «օհէյ»-ների և պարերի աղմուկի հետ, նման թմբուկի չափածոյ ու խլաձայն շարժումներին։

—Այ քեզ քէֆ խանգարող... ասում էր ալիկին Դօքսոնը։

—Օ՜, ես նրա եղջիւրը կոտրեցի. բայց պէտք է զգոյշ լինեմ... Այժմ Թունդ հակողութեան տակ կը լինեմ։ Սաստիկ նայ խանձոտն է... Գրելու եմ Կաղաբօնիին, որ մի փոքր ժամանակ չը գայ այստեղ. իսկ դու վաղը առաւօտ ասա Ժօրժին, թող գնայ մի երկու շաբաթ անց կացնի Սալինիում։

III

Խեղճ փոքրիկ օրիորդ Զիլի

Օ՜հ, որքան երջանիկ էր Դէզիրէն։

Ֆրանցը, ինչպէս այն հին երանելի ժամանակներում, ամեն երեկոյ գալիս էր նստում նրա ոտների մօտ ցածիկ աթոռի վրայ, բայց այժմ այլ ևս չէր խօսում Սիդոնիի մասին։

Առաւօտեան, հէնց որ նա նստում էր աշխատելու, դուռը կամաց բացւում էր. «Բարի լոյս, օրիորդ Զիլի»։ Ֆրանցը այժմ միշտ այդպէս նրա փոքրացուցիչ անունով էր կանչում նրան և պէտք է տեսնէիք, թէ ինչպէս քաղցր էր ասում նա. «Բարի լոյս, օրիորդ Զիլի»։

Երեկոյեան նրանք միասին ապասում էին «հայրիկին» և մինչ Դէզիրէն աշխատում էր, Ֆրանցը դող էր ադդում նրան իր ճանապարհորդական պատմութիւններով։

—Ի՞նչ է պատահել քեզ, աղջի։ Բոլորովին փոխուել ես,

ասում էր նրան տիկին Դրլօբէլը, որ զարմանում էր, տեսնելով նրան այդպէս ուրախ և մանաւանդ այդպէս աշխոյժ։

Եւ յիրաւի, փոխանակ առաջուան պէս շարունակ թաղուած մնալու իր բաղկաթոռում ջահէլ տատիկի ինքնուրացութեամբ, փոքրիկ կաղիկը ամեն րոպէ վեր էր կենում տեղից, մօտենում էր պատուհանին այնպիսի թափով, կարծես թեր բուսած լինէին մէջքին, վարժւում էր շիտակ, շիփ-շիտակ կանգնել, կամաց ձայնով հարցնելով մօրից.

—Ման որ չեմ գալիս, հօ չի՞ երևում։

Նրա կաքէտութիւնը, որ մինչև այդ ժամանակ կենտրոնանում էր միմիայն մազերի յարդարման մէջ, տարածւում էր այժմ նրա ամբողջ անձի վրայ, ինչպէս նրա գանգուր և նուրբ երկար մազերը՝ արձակուած ժամանակ։ Օ՜, սաստիկ, սաստիկ կաքէտ էր դարձել նա այժմ, և ամենքը շատ լաւ նկատում էին այդ։ Նոյն իսկ մոդային թռչնիկներն ու ճանճերը մի առանձին տեսք էին ստացել այժմ։

Օ՜, անչուշտ երջանիկ էր այժմ Դէզիրէ Դրլօբէլը։ Մի քանի օրից ի վեր պ. Ֆրանցը խօսում էր բոլորով միասին քաղաքից դուրս զբօսանք կատարելու մասին, և որովհետև հայրիկը, որ միշտ այնքան բարի էր ու մեծահոգի, համաձայն էր, որ մայր ու աղջիկ մի օր արձակուրդ վայելեն, նրանք չորսով զբօսանքի գնացին մի կիրակի առաւօտ։

Չէք կարող երևակայել, թէ ինչ հրաշալի եղանակ էր անում այդ օրը։ Երբ առաւօտը վաղ, ժամի վեցին, Դէզիրէն, պատուհանը բանալով, վաղորդեան մշուշի միջով տեսաւ արդէն տաքացած ու լուսաշող արեգակը ու մոռածեց ծառերի, դաշտերի ու ճանապարհների և առհասարակ ամբողջ հրաշալի բնութեան մասին, որ նա չէր տեսել այնքան ժամանակից ի վեր և որ այժմ տեսնելու էր Ֆրանցի հետ թեանցուկ արած, աչքերը լցուցին արտասուքով։ Եւ այդպէս երկար ժամանակ կանգնած նա զմայլում էր, լսելով զանգակների ձայնը ու փողոցների սալայատակից բարձրացող աղմուկը և դիտելով կիրակնօրեայ կենդանութիւնը, աղքատների այդ տօնը, որ փայլեցնում է նոյն իսկ ածխավաճառ երեխաների այտերը, և առհասարակ այդ բացառիկ առաւօտուայ ամբողջ արշալոյսը։

Նախընթաց երեկոյեան Ֆրանցը ընծայել էր նրան մի հովանոց, մի փոքրիկ հովանոց փղոսկրէ կոթով. դրանով Դէզիրէն վանոց, մի փոքրիկ հովանոց փղոսկրէ կոթով. դրանով Դէզիրէն լրացրեց իր վերին աստիճանի խնամքով յարդարուած, բայց և վերին աստիճանի պարզ արդուզարդը, ինչպէս վայել էր մի խեղճ կաղիկի, որ ուզում է չը նկատուել մանր գալիս։ Բայց այս անգամ խեղճ կաղիկը ուղղակի գեղանի էր։

Ուղիղ ինը ժամին Ֆրանցը եկաւ ամբողջ օրով վարձուած կառքով ու բարձրացաւ վերև իր հիւրերին կանչելու։ Օրիորդ Զիլին, ճաղաշարին յենուելով, մէն-մենակ իջաւ ներքև, առանց ամենեին տատանուելու։ Մայրը իջնում էր նրա յետևից, աջը վրան պահելով, իսկ հռչակաւոր դերասանը, վերարկուն թևին գցած, առաջ վազեց երիտասարդ Ռիսլերի հետ՝ կառքի դռնակը բանալու։

Օ՜հ, հրաշալի զբօսանք, աքանչելի վայրեր, աքանչելի դեռ աքանչելի ծառեր...

Դէզիրէից մի հարցնէք, թէ ուր էին գնացել. նա երբէք չիմացաւ այդ։ Նա կ'ասի ձեզ միայն այն, որ արևը աւելի փայլուն էր այնտեղ, քան որ և է ուրիշ տեղում, թռչունները աւելի զուարթ, անտառները աւելի ստուերաշատ, և սուտ չասի։

Երեխայ ժամանակը նա մի քանի անգամ այդպէս երկար զբօսանքներ էր կատարել քաղաքից դուրս, բայց օգում։ Բայց յետոյ յարատև աշխատանքը, չքաւորութիւնը և հաշմանդամներին այնքան ախորժելի նստական կեանքը նրան, այսպէս ասած, մոխել էին Պարիզի այն հինաւուրց թաղում, ուր նա ապրում էր և ուր սովորել էր բաւականանալ այն մշտանման հորիզոնով, որ կազմում էին բարձր տանիքները, երկաթէ վանդակներով պատուհանները և գործարանների ծխնելոյզները, որոնց նոր կարմիր աղիւսները խիստ գծագրւում էին պատմական ապարանքների սև պատերի երեսին։ Վազուց ի վեր նա չէր տեսնում ուրիշ ծաղիկներ, բացի իր պատուհանի պատատուկներից, և ուրիշ ծառեր, բացի Ֆրօմօնների գործարանի ակացիաներից, որոնք հեռուից ընդունմարւում էին ծխի մէջ։

Ուստի հեշտ է երևակայել, թէ ինչ հրճուանքով լցուեց նրա սիրտը, երբ նրանք բոլորովին դուրս եկան քաղաքից։ Սրտի բերկրութեամբ և աշխոյժ ստացած երիտասարդութեամբ թեւաւորուած, նա հիանում էր ամեն բանի վրայ և ծափ էր տալիս ու ծլնծլում թռչունների նման, և նրա միամիտ հետաքրքրութեան բուռն մզումները աջողում էին նրա քայլուածքի անհասատութիւնը։ Կարելի էր հաստատ ասել, որ կազութիւնը չատ էլ աչքի չէր ընկնում։ Բացի այդ, Ֆրանցը կողքին պատրաստ էր նրան նեցուկ լինելու ու ձեռքը բռնելու փոսերը անցնելիս և միշտ այնպէս կամակատար, այնպիսի քաղցր հայեացքով։ Այդ հրաշալի օրը ամբողջապէս անցաւ ինչպէս մի երազ։ Ճիւղերի միջով չոգիանման նշմարուող կապուտակ երկինքը, ծառերի տակի պատսպարուած ու խորհրդաւոր հորիզոնները, ուր ծաղիկները աւելի ուղիղ ու բարձր են բուսնում և ոսկեգոյն մամուռները արևի շողքեր են թուում կաղնիների բունի վրայ, բացատների անսպասելի լոյսը, ամեն ինչ, նոյն իսկ ի բաց չառած բացօթեայ երկարատև զբօսանքի յոգնածութիւնը, հրճուեցնում և զմայլեցնում էր Դէզիրէին։

Իրիկնադէմին, երբ անտառի ծայրից մթնշաղի միջով աստիճանաբար դաշտում դէպի աջ ու ձախ ձգուող սպիտակ ճանապարհները, արծաթէ ժապաւէնի նման գետը և հեռուում, երկու բլուրների արանքին, գորշ տանիքների, սլաքների ու գմբէթների մի մշուշապատ զանգուած, որ, ինչպէս ասում էին, Պարիզն էր, նա մի հայեացքով դրոշմեց իր յիշողութեան անկիւններից մէջ կում այդ ամբողջ ծաղկափթթած տեսարանը, այդ բնութիւնը, որ համակուած էր սիրոյ և յունիսեան արևի բուրմունքով, կարծես թէ այլ ես երբէք, երբէք նա տեսնելու չէր այդ բնութիւնը։

Այդ հիանալի զբօսանքից բերած փունջը ամբողջ մի շաբաթ բուրմունք էր տարածում սիրուն կաղնիի սենեակում։ Սմբուլի, մանիշակի և արևի հետ խառն այդտեղ կային հազար ու մի փոքրիկ անանուն ծաղիկներ, նուաստների բաժինը կազմող ծաղիկներ, որոնց սերմերը քամին բերում է ամեն տեղ ու քիչ-քիչ ցանում ճանապարհների ափերին։

Քանի-քանի անգամ այդ շաբաթուայ ընթացքում Դէզիրէն երևակայութեամբ կրկնեց այդ զբօսանքը, դիտելով այդ քնքոյշ ծաղկապսակների բաց կապոյտ ու ալ կարմիր զոյները և հազար ու մի նուրբ երանգները, որ ծաղիկները հնարել են գունադէտ նկարիչներից չատ առաջ։ Մանիշակները յիշեցնում էին նրան իրանց քաղելու տեղը, այն մամռապատ փոքրիկ թումբը, ուր նա ու Ֆրանցը, մատներն երբար խառնելով, տերևների տակ փնտրում էին այդ ծաղիկները։ Այդ մեծ ջրածաղիկները նա քաղել էր մի փոսի ափին, որ դեռ բոլորովին թաց էր ձմեռուայ անձրևներից, և նրանց հասնելու համար նա պինդ յենուել էր Ֆրանցի թևին։ Այդ բոլորը նա յիշում էր աշխատելու ժամանակ, մինչդեռ բաց պատուհանովը ներթափանցող արևը շողշողեցնում էր կօլիբրինների փետուրները։ Գարունը, երիտասարդութիւնը, երդերն ու բուրմունքները կերպարանափոխել էին հինգերորդ յարկում գտնուող այդ տխուր արհեստանոցը, և Դէզիրէն, հոտ քաշելով իր մատերի փունջից, լուրջ կերպով ասում էր մօրը.

—Նկատել ես, մայրիկ, ինչ լաւ հոտ ունեն այս տարի ծաղիկները...

Ֆրանցն էլ սկսում էր ենթարկուել սիրոյ հմայքին։ Փոքր առ փոքր օրիորդ Զիլին տիրապետում էր նրա սրտին և դուրս

էր վանում այնտեղից Սիդոնիի յիշատակն անգամ։ Ճիշտ է, որ խեղճ դատաւորը ամեն ճիգ գործ էր դնում դրա համար։ Օրուայ բոլոր ժամերին նա Դէզիրէի կողքին էր լինում և փարում էր նրան, ինչպէս մի երեխայ։ Դեռ ոչ մի անգամ սիրտ չէր արել գնալ Անիէր։ Շատ էր վախենում Սիդոնիից։

—Ինչու՞ ամենեին մեր կողմերը չես գալիս... Սիդոնին քեզ հարցնում է,—ասում էր երբեմն-երբեմն Ռիսլէրը, երբ եղբայրը մտնում էր նրան տեսնելու գործարանում։

Բայց Ֆրանցը վճռին հաստատ էր մնում և միշտ մի որևէ գործ պատրուակ էր բերում, շարունակ իր այցելութիւնը միւս օրուայ յետաձգելու համար։ Այդ դժուար չէր Ռիսլէրի հետ, որ աւելի քան երբևիցէ զբաղուած էր իր տպագրիչով, որ արդէն սկսել էին շինել։

Սակայն անգամ, որ Ֆրանցը ներքև էր գալիս եղբօր մօտից, ծերունի Սիդիզմունդը ճանապարհը պահում էր և միասին մի քանի քայլ գնում էր նրա հետ, փայլկտաւէ ահագին թենոցները հագին և գրչակոթն ու գրչահատը ձեռքին։ Նա միշտ տեղեակ էր պահում Ֆրանցին գործարանի գործերից։ Մի ժամանակից ի վեր գործերը կարծես դէպի լաւն էին գնում։ Պ. Ժորժը կանոնաւոր կերպով գալիս էր իր գրասենեակը և ամեն երեկոյ վերադառնում էր Սավինի քնելու։ Այլ ևս նրա անունից հաշիւներ չէին բերում դանձարանը։ Տիկինն էլ, հէնց իմանաս, իրան հանգիստ էր պահում Անիէրում։

Գանձապահը ցնծում էր։

—Տեսնում ես, որդիս, որքան լաւ արեցի, որ քեզ գրեցի... Հէնց միայն գալդ բաւական եղաւ ամեն ինչ կարգի կանոնի տակ գցելու համար... Սակայն, այնուամենայնիւ, աւելցնում էր նա ըստ իր սովորութեան, այնուամենայնիւ... վստահութիւն չունեմ (chai bas gonfianze)...

—Մի վախեցէք, պարոն Սիդիզմունդ, ես այստեղ եմ, ասում էր դատաւորը։

—Հօ չուտով չՔս գնալու, չՔ, սիրելի Ֆրանց։

—Զէ, չէ... Դեռ մի մեծ գործ կայ, որ գնալուց առաջ պէտք է վերջացնեմ։

—Որ այդպէս է, աւելի լաւ։

Ֆրանցի մեծ գործը՝ Դէզիրէ Դելօրէլի հետ պսակուելն էր։ Նա ոչ ոքի, նոյն իսկ իրան՝ Դէզիրէին դեռ ոչ մի խօսք չէր ասել այդ բանի մասին, բայց օրիորդ Զիզին անշուշտ մի քիչ գլխի էր ընկնում, որովհետև օրէցօր զուարթանում ու սիրունանում էր, կարծես նախատեսնում էր, որ շուտով գալու է

այնպիսի մի բոպէ, երբ ինքը կարիք է ունենալու իր ամբողջ ուրախութեանը և ամբողջ գեղեցկութեանը։

Մի կիրակի, կէսօրից յետոյ, նա ու Ֆրանցը մենակ էին մնացել արհեստանոցում։ Տիկին Դելօրէլը մի քիչ առաջ տանից դուրս էր եկել, սաստիկ հպարտանալով, որ կարող էր մի անգամ դրսևում երևալ իր մեծ մարդու հետ թևանցուկ, և թողնելով իրանց բարեկամ Ֆրանցին՝ իր աղջկանը ընկերութիւն անելու։ Ֆրանցը այդ օրը շատ լաւ էր հագնուած, ոտից մինչև գլուխ տօնական տեսք ունէր և դէմքի տարօրինակ արտայայտութիւն, միանգամայն ամաչկոտ և՝ վճռական, խանդաղատ և՝ հանդիսաւոր, ու միմիայն այն ձեր, որով փոքրիկ ցածիկ աթոռը եկաւ տեղաւորուեց մեծ բազկաթոռի կողքին, բաւական էր, որ մեծ բազկաթոռը հասկանար, որ ինչ-որ շատ կարևոր գաղտնիք են հաղորդելու իրան, գաղտնիք, որի ինչ լինելը մի քիչ գուշակում էր նա։ Խօսակցութիւնը սկսուեց անտարբեր խօսքերով, որոնք ամեն բոպէ ընդհատուում էին երկար ու ձիգ լռութիւններով, այնպէս, ինչպէս ճանապարհին ամեն մի կայարանում կանգ են առնում, որպէս զի այժ հաւաքեն ճանապարհորդութեան վերջի համար։

—Լաւ եղանակ է անում այսօր։

—Հա, հիանալի եղանակ է։

—Մեր փունջը մինչև այժմ էլ հրաշալի հոտ ունի։

—Հա, շատ հրաշալի...

Եւ նոյն իսկ այդպիսի հասարակ խօսքեր արտասանելիս նրանց ձայները յուզուած էին այն բանից, ինչ որ ասուելու էր իսկոյն։

Վերջապէս, փոքրիկ ցածիկ աթոռը մի քիչ էլ մօտեցաւ մեծ բազկաթոռին, և աչք աչքի մէջ ու թեերով իրար փաթաթուած՝ այդ երկու մանկանման էակները շշնջացին միմեանց անունները։

—Դէզիրէ։

—Ֆրանց։

Այդ բոպէին մէկը դուռը ծեծեց։

Հարուածը շատ թեթև էր ու զգոյշ։ երևում էր, որ դուռը խփողը մի նրբաձեռնոց ձեռք է, որ վախենում է կեղտոտուել։ Ամենաթեթև հպումից։

—Մտէք... ասաց Դէզիրէն փոքր ինչ սրտնեղութեամբ, և իսկոյն ներս մտաւ Սիդոնին՝ սիրուն, կոքէտ ու բարի։ Նա եկել էր տեսնելու իր սիրունիկ Զիզիին, մի բոպէով մտել էր նրան համբուրելու համար։ Ո՞րքան ժամանակ է, որ ուզում էր գալ, բայց չէր յաջողւում։

Ըստ երևոյթին, Ֆրանցի ներկայութիւնը նրան սաստիկ զարմացրեց, և բոլորովին անձնատուր եղած իր բարեկամուհու հետ խօսելու հրճուանքին, նա հազիւ թէ մի հայեացք գցեց իր տեգրի վրայ։ Հազար ու մի քաղցր խօսքերից, գգուանքներից ու անցեալի յիշողութիւններից յետոյ նա ցանկութիւն յայտնեց տեսնելու սրահի պատուհանը և Ռիսլէրների բնակարանը։ Նրան հետաքրքրում էր կենդանացնել այդպէս յիշողութեան մէջ իր ամբողջ ջահէլութիւնը։

—Ցիշում էք, Ֆրանց, թէ ինչպէս Կոլիբրի իշխանուհին մտնում էր ձեր սենեակը, գլուխը չիփ-չիտակ բռնած՝ փետուրներից չինած թագի տակ։

Ֆրանցը պատասխան չը տուեց, որովհետև չափազանց յուզուած էր։ Նրա սիրտը վկայում էր, որ իր համար, միմիայն իր համար էր եկել այդ կինը, որ նա ուզել էր տեսնել իրան։ Թոյլ չը տալ, որ ինքը ուրիշին պատկանի, և խեղճը սարսափով նկատում էր, որ նա կարող է այդ անել առանց մեծ ճիգի։ Նրա ներս մտնելուն պէս, իր սիրտը արդէն նորից նրանն էր։

Դէզիրէն ոչինչ կասկած չէր տանում։ Այնքան անկեղծ ու մտերմական կերպարանք ունէր Սիդոնին։ Եւ բացի այդ, չէ՞ որ նա ու Ֆրանցը քոյր ու եղբայր էին այժմ։ Ի՞նչ սիրահարութիւն կարող էր լինել այժմ նրանց մէջ։

Եւ սակայն խեղճ կաղիկը անորոշ կերպով նախազգաց իր գլխին գալիք դժբախտութիւնը, երբ Սիդոնին, չէմքին հասնելով ու ոտը գրեթէ դուրս դրած, անհոգաբար շուռ եկաւ ու ասաց իր տեգրին.

—Ի դէպ, Ֆրանց, Ռիսլէրը խնդրեց, որ այսօր քեզ տանեմ մեր մօտ ճաշի... Կառքը ներքևում սպասում է... Գործերան գնալիս նրան էլ հետներս կ'առնենք։

Ու յետոյ աւելացրեց ամենաքանչելի ժպիտով.

—Կը թողնես որ դայ, չէ՞, Զիրէ։ Հանգիստ եղիր, էլ յետ կը տանք քեզ։

Եւ Ֆրանցը այնքան ապերախտ դտնուեց, որ թողեց ու գնաց։

Նա գնաց առանց տատանուելու, առանց դէթ մի անգամ յետ նայելու, տարուելով իր կրքից, ինչպէս մի ալէկոծ ծովի յորձանքից, և ոչ այդ օրը, ոչ էլ հետևեալ օրերը և առհասարակ երբէք այնուհետև օրիորդ Զիրիի մեծ բազկաթոռը չը կարողացաւ իմանալ, թէ ինչ էր այն հետաքրքրական բանը, որ փոքր աթոռը ուզում էր իրան ասել։

Կայարանում

«Այո՛, սիրում եմ քեզ, սիրում... աւելի քան երբ և իցէ և ընդմիշտ... Ի՞նչ միտք ունի մաքառելը և դիմադրելը։ Մեր ոճիրը մեղմից զօրեղ է... Եւ վերջապէս, յանցանք է արդեօք այն, որ մենք իրար սիրում ենք... Մենք վիճակուած էինք միմեանց։ Միթէ իրաւունք չունենք միանալ, չը նայելով, որ կեանքը անջատել է մեզ։ Ուրեմն եկ։ Վճռուած է. գնում ենք... Վաղը երեկոյ, Լիօնի գծի կայարանից, ժամի տասի գնացքով... Տոմսակները կ'առնեմ ու կը սպասեմ քեզ...

«Ֆրանց»

Ամբողջ մի ամիս Սիդոնին սպասում էր այդ նամակին, ամբողջ մի ամիս նա գործ էր դնում իր բոլոր գգուանքներն ու խորամանկութիւնները, որպէս զի ստիպէր տեգրին դրաւոր կերպով արտայայտել իր բուռն սէրը։ Նա չատ էր չարչարուել այդ նպատակին հասնելու համար։ Հեշտ բան չէր յանցաւորութեան հասցնել Ֆրանցի սրտի պէս մի ազնիւ ու երիտասարդ սիրտ, և այդ տարօրինակ մաքառման մէջ, ուր՝ իսկապէս սիրողը կռուում էր իր սեփական շահերի դէմ, Սիդոնին յաճախ ուժասպառ էր զգում իրան և գրեթէ վհատուած։ Երբեմն, երբ նա արդէն կարծում էր, թէ Ֆրանցը բոլորովին ընկճուել է, յանկարծ նրա երիտասարդական չիտակ բնաւորութիւնը վրդովւում էր և քիչ էր մնում, որ նա փախչէր այդ կնոջից, նորից ազատուէր նրա ձեռքից։

Ի՞նչ ցնծութիւն պէտք է զգար ուրեմն, երբ մի առաւօտ

բերին նրան այդ նամակը։ Տիկին Դօրսօնն էլ մօտն էր այդ ժամանակ։ Նա հէնց նոր էր եկել, մի բեռը դանդաղաներ բերելով ժօրժից, որ սրտնեղուում էր, իր սիրուհուց հեռու ապրելով և սկսում էր անհանգստանալ չնորհիւ այդ տեղրի, որ աւելի յաճախ էր լինում նրա հետ և աւելի խանդոտ էր ու պահանջող, քան լինում են նոյն իսկ ամուսինները։

—Օ՜հ, խեղճիկը, խեղճիկը,—ասում էր սանտիմէնտալ ամերիկուհին,—եթէ տեսնէիր, թէ որքան տանջւում է նա։

Եւ թափահարելով խոպոպները, նա բաց արեց փաթաթած նօտաները ու մէջիցը հանեց «խեղճիկի» նամակները, որ ամենայն հոգատարութեամբ պահում էր իր ռօմանսների թերթերի մէջ, երջանիկ զգալով իրան, որ խառն էր այդ սիրային պատմութեան մէջ և որ կարող էր յաւիտենակուել այդ՝ ինտրիգայով ու խորհրդաւորութեամբ լի մթնոլորտում, որ քնքշութիւն էր տալիս նրա սառն աչքերին և չոր ու ցամաք չէկ գոնին։

Ամենատարօրինակն այն էր, որ ամենայն պատրաստակամութեամբ յանձն առնելով սիրային նամակներ տանող-բերողի դերը, այդ սիրուն ու ջահել ամերիկուհին ինքը անձամբ երբէք ոչ դրել էր, ոչ էլ ստացել մի սիրային նամակ։

Շարունակ գնալ-գալով փարիզից Անիէր և Անիէրից Փարիզ, միշտ մի սիրային նամակ թեւի տակին, այդ տարօրինակ թղթատար աղաւնին հաւատարիմ էր մնում իր աղաւնատանը և մնչում էր միայն մաքուր կրգումից։

Երբ Սիդոնին ցոյց տուեց Ցիրանցի նամակը, տիկին Դօրսօնը հարցրեց.

—Ի՞նչ ես գրելու։

—Արդէն գրել եմ։ Դրական պատասխան տուի։

—Ի՞նչպէս, վեր կը կենաս, կ'երթաս այդ գժի հետ։

Սիդոնին սկսեց ծիծաղել։

—Ա՜յդ էր պակաս։ Դրական պատասխան տուի, որ գնայ սպասի ինձ կայարանում։ Պրծաւ, գնաց։ Թող մի քառորդ ժամ տանջուի իմ պատճառով։ Դեռ այդ քիչ է նրան։ Մի ամբողջ ամիս հոգիս բերանս բերեց։ Ամբողջ կեանքս փոխել էի այդ պարոնի պատճառով։ Ստիպուած էի վերջ տալ ընդունելութիւններիս, դուռս փակել բարեկամներիս առաջ, այն ամենքի առաջ, որոնք ջահէլ են ու սիրելի, սկսած ժօրժից և վերջացրած քնքնով։ Որովհետև դիտես, սիրելիս, դու էլ դուր չէիր գալիս նրան և, եթէ նրանով լինէր, քեզ էլ կը հեռացնէր ուրիշների նման։

Սակայն Սիդոնին չասաց նրան այն, որ ամենից շատ էր գրգռել իրան Ցիրանցի դէմ, այլ՝ այն, որ նա վախ էր ազ-

դել իրան, սաստիկ վախ, սպառնալով, որ ամեն բան կը յայտնի ամուսնուն։ Այդ բոպէից սկսած նա շատ վատ էր զգում իրան և նրան թւում էր, թէ իր կեանքը, իր քաղցր, իր այնքան փայփայած կեանքը լուրջ կերպով վտանգի է ենթարկուած։ Ռիսլէրի նման սաստիկ չէկ ու սառնատեսիլ մարդիկ սարսափելի բարկութիւններ են ունենում, որոնց հետևանքները անկարելի է նախատեսել, նման այն անդոյն ու անհամ պայթուցիկ փոշիներին, որ վախենում են գործ ածել, որովհետև յայտնի չէ նրանց ոյժը։ Եւ այն միտքը, թէ մի օրից մի օր Ցիրանցը կը յայտներ ամուսնուն նրա վարք ու բարքը, սարսափեցնում էր նրան։

Նրա յիշողութեան մէջ զարթնում էին պատկերներ իր առաջուան կեանքից, այն օրերից, երբ նա ապրում էր խտարնակ թաղում,—պառակտուած ընտանիքներ, ամուսնական վրիժառութիւններ, չնութեան խայտառակութիւնը չաղախուած արեան մէջ։ Մահուան տեսիլքները հանգիստ չէին տալիս նրան։ Եւ մահը, յաւիտենական հանգիստը, անհուն խաղաղութիւնը, ի հարկէ, չէր կարող չը սարսափեցնել այդ՝ զուարճութիւնների պապակող և աղմուկի ու շարժման մոլի փոքրիկ արարածին։

Այդ երանելի նամակը չքացնում էր այդ բոլոր ահերը։ Այսուհետև անկարելի էր, որ Ցիրանցը, իմանալով, որ նրա ձեռքին այդպիսի զէնք կայ, մատնէր նրան, նոյն իսկ, եթէ կատաղութիւնից փրփրէր, զուր տեղը սպասելով նրան կայարանում։ Վերջապէս, եթէ մատնէր էլ, նա ցոյց կը տար նրա նամակը և նրա բոլոր մեղադրանքները այսուհետև բացարձակ զրպարտութիւն կը թուային Ռիսլէրին։ Օ՜հ, պարոն դատաւոր, դուք մեր ճանկումն էք այժմ։

Ցանկարծ կատաղի ուրախութիւն եկաւ նրա վրայ։

—Նորից յարութիւն եմ առնում... կենդանանում եմ... ասաց նա տիկին Դօրսօնին։

Եւ թռաւ գնաց պարտէզը, սկսեց վազվզել ծառուղիներում, ահագին փունջեր կազմից դահլիճի համար, լուսամուտների երկու փեղկերն էլ բաց արեց արևի առաջ, պատուէր տուեց խոհարարուհուն, կառապանին, պարտիզպանին։ Պէտք էր տուն ու տեղը զարդարել, որովհետև ժօրժը նորից գալու էր, իսկ առաջուան կեանքը վերսկսելու համար նա մեծ ճաշկերոյթ էր տալու շաբաթուայ վերջին։ Տեսնելով, թէ ինչպէս նա, ձեռք ու ոտք ընկած, աշխատում է շարժում ու կեանք վերահաստատել իր շուրջը, մարդ, յիրաւի, կարող էր կարծել, թէ նա մի ամբողջ ամիս գործով բացակայ է եղել և այժմ նոր վերադարձել է ձանձրացուցիչ ու յոգնեցուցիչ ճանապարհորդութիւնից։

Միւս օրը, երեկոյեան, Սիդոնին, Ռիսլերն ու տիկին Դոբսոնը՝ երեքն էլ դահլիճումն էին։ Ռիսլերը մեքենագիտութեան վերաբերեալ ինչ որ հասա գիրք էր թերթում, իսկ տիկին Դոբսոնը նուագակցում էր Սիդոնիին, որ երգում էր։ Ցանկարծ, երբ ժամի տասը խփեց, Սիդոնին ոտանոսի կէսումը կանգառաւ ու սկսեց սաստիկ քրքջալ։

Ռիսլերը շտապ շարժումով քիթը բարձրացրեց։

—Ինչի՞ վրայ ես ծիծաղում։

—Ոչինչ... միտքս մի բան ընկաւ... պատասխանեց Սիդոնին, աչքի թեթև թարթումով պատի ժամացոյցը ցոյց տալով տիկին Դոբսոնին։

Պայմանաւորուած ժամն էր այդ, և նա մտածում էր, թէ ինչպէս է այժմ տանջւում իր սիրահարը, կայարանում սպասելով նրան։

Այն բոպէից, երբ թղթատարը վերադարձաւ, բերելով Սիդոնիի տենդօրէն սպասուած համաձայնութիւնը, Ֆրանցի յուզուած հոգին սաստիկ հանգստացաւ, ինչպէս թէ մի ծգուած քառուսը կրքի և պարտականութեան մէջ։ Բոպէապէս նա թեթևացած զգաց իրան. կարծես թէ այլ ևս խղճմտանք չը կար նրա մէջ։ Ամենայն հանգստութեամբ սկսեց ճանապարհի պատրաստութիւնները տեսնել, պայուսակները դասաւորեց, կոդպեց, պարտիզից, երբ վարձած կառքը գալու էր իրեղէնները տանելու, նա արդէն բոլորովին պատրաստ նստած էր սենեակի մէջին մի արկղի վրայ և դիտում էր իր առջևի քարտէզը, որ մեխուած էր պատին, իբրև մի նշանակ իր թափառական կեանքի, աչքը մանն ածելով ճանապարհների ուղիղ գծով և ովկիանոսը պատկերացնող ալիքանման խաղերով։

Ոչ մի անգամ նրա մտքովը չանցաւ, որ գաւթի միւս կողմում կայ մի արարած, որ լալիս ու հառաչում է նրա պատճառով։ Ոչ մի անգամ նա չը մտածեց իր եղբօր յուսահատութեան մասին, այն սոսկալի դրամայի մասին, որ ինքն ու Սիդոնին թողնելու էին իրանց յետևում։ Նա շատ հեռու էր այդ բոլոր բաներից. նա արդէն երևակայութեամբ ճանապարհ էր ընկել և հանդիպել էր կայարանի առաջ Սիդոնիի հետ, որ ճանապարհորդի ու փախստականի մուգ-գոյն շորեր ունէր հագին, արդէն կապուտակ ծովի ափն էր հասել, ուր նրանք դադար էին առնելու առժամանակ իրանց հետքերը կորցնելու համար, և, այդպէս շարունակելով, նա վերջապէս հասել էր նրա հետ մի անյայտ երկիր, ուր ոչ ոք չէր կարող պահանջել ու խլել նրանից

իր ձեռքից։ Երբեմն էլ նա երևակայում էր, թէ վագոնում նըստած սլանում են խաւարի և ամայի դաշտի մէջով։ Նա տեսնում էր մի սիրունիկ ու գունատ գլուխ կոթնած իր գլխի կողքին բարձերի վրայ, վարդափթիթ շրթունքներ իր շրթունքների մօտ և մի զոյգ խորունկ աչքեր, որոնք նայում են իրան լամպի մեղմ լոյսով, անիւների ու շոգու օրօրի մէջ։

Եւ այժմ՝ սուլիր ու մռնչա, մեքենայ։ Ցնցիր գետինը, կարմրացրու երկինքը, ծուխ ու բոց ժայթքիր վերև։ Սուզուիր տունելների մէջ, անցիր լեռներ ու գետեր, թռիչք գործիր, բոցավառուիր, պայթիր, բայց տար մեզ քո հետ, հեռացրու մեզ մարդաբնակ աշխարհից, նրա օրէնքներից, նրա մտերմութիւններից, կեանքից և նոյն իսկ մեղնից...

—

Որոշուած գնացքի տոմսարկղի բացուելուց երկու ժամ առաջ՝ Ֆրանցը արդէն Լիոնի գծի կայարանումն էր, այդ տխուր կայարանում, որ գտնւում է Փարիզի հեռաւոր մասում և այնպիսի տպաւորութիւն է գործում, կարծես պրօվինցիայի սկզբնաւորութեան կէտը լինի։ Նա նստեց ամենամութ անկիւնում և մնաց այնտեղ անշարժ, չմածի պէս։ Այդ ժամանակ նրա ուղեղը նոյնքան աղմկայոյզ էր, որքան և կայարանը։ Նրան պաշարել էին հազար ու մի կցկտուր մտքեր, անորոշ յիշողութիւններ, տարօրինակ զուգադրութիւններ։ Մի բոպէում նա այնքան հեռանում էր երևակայութեամբ իրականութիւնից, որ երկու երկաթ անդամ հարց տուեց ինքն իրան, թէ ինչու էր եկել այդտեղ և ում էր սպասում։ Բայց Սիդոնիի մտապատկերը դուրս էր ժայթքում այդ կցկտուր մտքերի մէջից և լուսաւորում էր նրանց պայծառ լոյսով։

Նա շուտով գալու էր։

Եւ թէև պայմանագրած ժամը դեռ շատ հեռու էր, բայց և այնպէս Ֆրանցը մեքենաբար նայում էր այդ չտապող ու իրար կանչող մարդկանց, տեսնելու՝ հօ Սիդոնիի գողտրիկ սիլուէտը յանկարծ դուրս չի գալիս բազմութեան մէջից, ամեն քայլում ճանապարհ բանալով իր առաջ իր գեղեցկութեան ճաճանչներով։

Մի քանի գնացքներ գնացին, մի քանիսն եկան, մի քանի անգամ հնչեցին սուլիչները, որոնց ձայնը՝ ծածկի կամարների տակ մորմաքի էր նման, և միանգամից կայարանը դատարկուեց ու դարձաւ ամայի, ինչպէս եկեղեցիները լի օրերին։ Մօտենում էր՝ նրանց գնացքի ժամը։ Նրանից առաջ այլ ևս ուրիշ գնացք չը կար։ Ֆրանցը վեր կացաւ տեղից։

Այժմ այդ այլ ևս երաղ չէր, ցնորք չէր, կորած՝ ժամա-

նակի ընդարձակ ու անորոշ սահմանների մէջ։ Մի քառորդ ժամից, ամենաշատը կէս ժամից յետոյ նա գալու էր։

Եւ ահա Ֆրանցի համար սկսուեց սպասողութեան սոսկալի տանջանքը, այդ՝ ամբողջ էութեան առկախ վիճակը, մարմնի և հոգու տարօրինակ դրութիւնը, երբ սիրտը չէ բարախում, երբ շնչառութիւնը հեռում է մտքի նման, երբ շարժումները ու խօսքերը մնում են անաւարտ, երբ՝ ամէն ինչ սպասողութեան մէջ է։ Բանասաստեղծները հաղարաւոր անգամ նկարագրել են այդ տանջալից անձկութիւնը սիրահարի, որ ականջը սրած լսում է ամայի փողոցով անցնող կառքի դղրդոցը կամ սանդուխով բարձրացող գաղտագողի քայլերի ձայնը։

Բայց շատ աւելի ծանր է սպասել սիրուհուն կայարանում, ուղևորների սպասարանում։ Աղօտ լամպերը, որոնք չողք չեն գցում փոշոտ յատակի վրայ, ահագին պատուհանները, քայլերի և դռների անընդհատ աղմուկը, որ դադար չի տալիս անհամբերներին, բարձր ու լերկ պատերը, նրանց զարդարող գիտ ականջներին, բարձր ու լերկ պատերը, նրանց զարդարող յայտարարութիւնները՝ «Զբօսանքի գնացք դէպի Մօնակո, մի անտարբերութեան և անկայունութեան մթնոլորտը, այդ բոլորը կարծես յատկապէս յարմարեցրած է մարդուս սիրտը ճմլելու և թախիծը սաստկացնելու համար։

Ֆրանցը գնում-գալիս էր, աչքը սրած նայելով եկող կառքերին։ Նրանք կանգ էին առնում երկար քարէ աստիճանների առաջ։ Նրանց դռնակները աղմկալից բաց ու խուլ էին լինում, գիտ կամ ցաւատանջ, երջանիկ կամ աղիողորմ դէմքեր, բայց գոյն քօղերի մէջ սղմուած փետրաւոր գլխարկներ, բարձրահասակ գլխանոցներ ու քնած երեխաներ, որոնց, ձեռներիցը բռնած, քայ էին տալիս իրանց հետ մեծերը։ Ամէն մի նոր կերպարանք երևալիս Ֆրանցը դողդողում էր։ Նրան թւում էր, թէ Սիգօնին է այդ, որ, երեսը քօղով ծածկած, ներս է մտնում վարանելով ու փոքր ինչ չփոթուած։ Ա՜խ, ինչպէս կը թռչէր նա նրա մօտ՝ սիրտ տալու, պաշտպանելու համար։

Քանի լցւում էր կայարանը, այնքան դժուարանում էր Ֆրանցի գործը։ Կառքերի տուրը այլ ևս չէր կարում։ Նա ստիպուած էր վազել մի դռնից միւսը։ Այն ժամանակ նա դուրս եկաւ կայարանից, վճռելով, որ աւելի լաւ է դրսից դիտել, և չը կարողանալով այլ ևս տանել սպասարանի ծանր ու ճնշիչ օդը, որ սկսում էր խեղդել նրան։

Սեպտեմբերի վերջն էր և եղանակը՝ խոնաւ։ Թեթև մշուշ էր կանգնած օդում, և մօտեցող կառքերի լապտերները աղօտ

ու անփայլ էին երևում խճած զառիվայրի ներքևում։ Ներանցից իւրաքանչիւրը կարծես ասում էր գալիս՝ «ես եմ... ես ինքս...» Բայց մէջիցը իջնողը երբէք Սիգօնին չէր լինում, և կառքը, որին մի քիչ առաջ Ֆրանցը այնպէս էր սպասում, կարծես թէ նա պարտաւնակելիս լինէր աւելի քան իր կեանքը, վերադառնում էր Փարիզ ամենասովորական կերպով, թեթև ու դատարկ։

Ճանապարհուելու ժամը մօտենում էր։ Նա նայեց պատի ժամացոյցին։ Մնում էր ոչ աւելի, քան քառորդ ժամ։ Այդ սարսափելի թուաց նրան. բայց նրան կանչում էր նոյն բոպէին բացուած տոմսարկղի զանգը։ Նա վազեց այնտեղ ու տեղ բռնեց սպասողների երկար շարքի մէջ։

—Երկու առաջին կարգի տոմսակ մինչև Մարսէյլ,—պահանջեց նա։ Նրան թւում էր, թէ իր յոյսերի իրագործման սկիզբն է այդ արդէն։

Նա վերադարձաւ իր դիտողական կէտը ծանրոցներով բարձած ձեռնասայլակների և իրար հրհրող ուշացած ճանապարհորդների միջով։ Կառապանները գոռում էին նրան «զգոյշ»։ Բայց նա, խլացած ու ակնապիշ, մնում էր կանգնած կառքերի ճանապարհի վրայ և քիչ էր մնում ձիերի տակն ընկնի։ Աւելի քան հինգ բոպէ նա սպասեց այդպէս։ Գրեթէ անկարելի էր այժմ, որ Սիգօնին հասնէր գնացքին։ Մարդիկ շտապ-շտապ մանում էին ներքին դահլիճները։ Ծանրոցները տանում էին լցնելու վագոնները և սպիտակ սաւանի մէջ փաթաթած ահագին կապոցները, պղնձէ մեխաւոր արկղները, շրջիկ գործակատարների կախուած դղրոցները և ամէն ձեի ու ամէն մեծութեան զամբիւղներ անհետանում էին միևնոյն դռնով, թափահարուելով, ցնցուելով և միևնոյն շտապողութեամբ։

Վերջապէս նա եկաւ...

Այո, նա է, նա, սեաղգեստ, բարակ, նրբակազմ, մի աւելի փոքրահասակ կնոջ ուղեկցութեամբ, որ անշուշտ տիկին Դօքսօնն է։ Բայց երկրորդ անգամ նայելով՝ նա հասկացաւ, որ սխալուել է։ Մի ջահել կին էր այդ՝ նման Սիգօնիին, նրա պէս գողտրիկ ու փարիզատիպ, նրա պէս երջանիկ դէմքով։ Մի երիտասարդ պարոն մօտեցաւ նրան։ Հարսանիքային ճանապարհորդութիւն էր. երևի, այդ. նորահարսի մայրն էլ հեռներն էր. եկել էր անշուշտ ճանապարհ դնելու, վագօնում տեղաւորելու նրանց։ Նրանք անցան Ֆրանցի առաջով, ծրարուած՝ երջանկութեան այն հոսանքի մէջ, որ մղում, տանում էր նրանց։ Կատաղութիւն և նախանձ զգաց նա, տեսնելով, թէ ինչպէս նրանք ներս մտան դռնով, անցնելով բազմութեան միջով՝ սղմուած իրար, յենուած միմեանց վրայ։

Նրան թուում էր, թէ նրանք կողոպտել են իրան, թէ նրանք գնում են բռնելու այն տեղը գնացքում, որ իրան ու Սիդոնին էր պատկանում...

Բայց ահա սկսուեց ուղևորման իրարանցումը։ Զանգակը հնչում է վերջին անգամ, շոգին աղմկում է խուլ հևքով, որին խառնուում են ուշացած ուղևորների ոտնաձայնը, դռների շառաչը և ծանր հանրակառքերի դղրդոցը։ Իսկ Սիդոնին չը կայ ու չը կայ։ Սակայն Ցրանցը սպասում է դեռ ևս։ Այդ միջոցին մէկը ձեռքը դնում է նրա ուսին։

Տէր Աստուած։

Նա շուռ է գալիս։ Առջևը ցցուում է պ. Գարդինուայի ահագին գլուխը՝ ականջնոցաւոր գլխարկով։

—Ձեմ սխալուել, պ. Ռիսլէրն է։ Մարսէյլի ճեպընթացով էք գնում դուք։ Ես մօտիկ տեղ եմ գնում։

Նա բացատրեց Ցրանցին, որ ինքը ուշացել էր Օրլէանի գնացքին և այժմ ուղում է Լիոնի գծով գնալ Սավինի։ յետոյ նա սկսեց խօսել Ռիսլէր աւագի մասին, գործարանի մասին։

—Ինչպէս երևում է, գործերը մի ժամանակից ի վեր լաւ չեն գնում... Բոնարդէների մանկութեան շորշորը դիպաւ... Օհ... մեր երիտասարդ պարոնները պէտք է զգոյշ լինեն... Այնպէս, ինչպէս նրանք են տանում իրանց գործը, նրանց գլուխն էլ կարող է նոյնը գալ, ինչ որ եկաւ Բոնարդէների գլխին... Բայց ներողութիւն։ Կարծեմ, տոմսարկղը փակելու են իսկոյն։ Ցտեսութիւն։

Ցրանցը հաղիւ էր լսում ծերուկի ասածը։ Թէկուզ եղբայրը մանկանայ, թէկուզ ամբողջ աշխարհը կործանուի, այժմ ոչ մի բան նշանակութիւն չունի նրա համար։ Նա սպասում է, սպասում է...

Բայց ահա տոմսարկղը փակուեց թափով, ինչպէս մի վերջին խոչընդոտ նրա յամառ յոյսի դէմ։ Կայարանը նորից դատարկուեց։ Ժիսորը այժմ լսում է երկաթուղու գծի վրայ, և յանկարծ հնչում ու կորչում է խաւարի մէջ մի ուժգին սուլոց, իբր հրաժեշտի հեգնական ողջոյն՝ ուղղուած սիրահարին։

Ժամի տասի գնացքը գնաց։

Նա փորձում է հանդիստ մնալ, սուրը դատել։ Անկասկած՝ Սիդոնին ուշացել է Անիէրի գնացքին, բայց, իմանալով, որ ինքը սպասում է նրան, նա անպատճառ կը դայ գիշերուայ որ ժամին էլ լինի։ Սպասենք ուրեմն։ Կայարանի դահլիճը հէնց դրա համար է շինուած։

Խեղճը նստում է նստարանի վրայ։ Փակեցին պատուհանները, որոնց ահագին ապակիների վրայ սուլերը փակչում է

փայլուն թղթի ցոլքերով։ Կիսանինջ գրավաճառուհին սկսում է գրքերը դարսել պահարանը։ Ցրանցը մեքենայօրէն նայում է զոյնզոյն հատորների շարքերին, այդ երկաթուղիական գրադարանի գրքերին, որոնց անունները նա անգիր է արել արդէն սպասողութեան չորս ժամուայ ընթացքում։

Այնտեղ կան գրքեր, որ նա կարդացել է Իսմայիլիայում վրանի տակ կամ այն շոգենաւում, որով նա վերադառնում էր Սուէցից, և այդ գռեհկաճաշակ ու դատարկ վէպերը դրա չնորհիւ բոլորն էլ մի ինչ որ ծովային կամ տարաշխարհիկ բոյր են պահպանել նրա համար։ Բայց շուտով փակուեց նաև գրախանութը, այնպէս որ նա չունի նոյն իսկ այդ միջոցը խաբելու իր յոգնածութիւնն ու տենդը։ Խաղալիքների դարակներն էլ արդէն ծածկուեցին տախտակէ կափարիչի տակ։ Ամարանոցում ապրող փարիզեցի երեխաների այդ բոլոր գործիքները, շուրիկները, ձեռնասայլակները, ցնցուղները, բահերը, փոցխերը,—անյայտանում են մի բոպէում։ Վաճառող կինը, հիւանդոտ ու տխրադէմ, փաթաթուում է իր հին վերակուի մէջ ու դուրս գնում, ոտնաջերուցիկը ձեռքին։

Այդ բոլոր մարդիկ վերջացրել են իրանց աշխատութեան օրը, ձգձգել են նրան մինչև հնարաւոր վերջին բոպէն՝ Փարիզին յատուկ արիութեամբ ու յամառութեամբ, Փարիզին, որ լապտերները հանգցնում է միայն լուսաբացին։

Մտածելով Փարիզի աշխատաւորների տքնութեամբ անցրած գիշերների մասին, Ցրանցը յիշում է մի վաղուց ծանօթ սենեակ, ուր լամպը հանգչում է այդ ժամին կոլիբրիներով ու փայլուն միջատներով ծանրաբեռնուած սեղանի վրայ։ բայց այդ պատկերը շուտով չքանում է նրա մտքում, որ ընկղմուած է սպասողութեան տենդից առաջացած խառնուշփոթ մտածմունքների քաոսի մէջ։

Յանկարծ նա զգում է, որ ծարաւից մեռնում է։ Կայարանին կից սրճարանը դեռ բաց է։ Նա գնում է այնտեղ։ Գիշերահերթ սպասաւորները պառկել, քնել են նստարանների վրայ։ Ցատակը թաց է բաժակների լուացուկներից։ Ահագին ժամանակ է անցնում, մինչև որ պահանջածը տալիս են, իսկ երբ արդէն պատրաստուում է խմել, յանկարծ մտածում է, թէ գուցէ Սիդոնին եկել է նրա բացակայութեան ժամանակ ու փնտռում է իրան դահլիճում, և մտածելով այդ՝ իսկոյն վեր է թռչում տեղից ու գժի նման դուրս վազում, թողնելով սեղանի վրայ լիքը բաժակը և փողը։

Սիդոնին չի գալու։

Նա զգում է այդ։

Նրա քայլերը միակերպ ու կանոնաւոր կերպով հնչում են կայարանի գաւթի ամբողջ երկարութեամբ, զրգռելով նրան, իբր ապացոյց նրա միայնութեան և անաջողութեան։

Ի՞նչ պէտք է պատահած լինի։ Ի՞նչ բան կարող էր նրան արգելք լինել։ Չը լինի հիւանդ է կամ գուցէ խիղճը սկսել է վաղօրոք տանջել անելիք յանցանքի համար։ Բայց, եթէ այդ պէս լիներ, նա իմաց կը տար, կ'ուղարկէր տիկին Դօրսօնին։ Կամ գուցէ Ռիսլերի ձեռքն էր ընկել նրա նամակը։ Այնքան խենթ, այնքան անխոհեմ է այդ կինը։

Եւ մինչ նա այդպէս մտատանջւում էր հազար ու մի ենթադրութիւններ անելով, ժամանակը անցնում էր։ Մաղասի ոտնաձայնների ստուերամած կատարները արդէն սպիտակում էին ու որոշւում։ Ի՞նչ պէտք էր անել։ Պէտք էր իսկոյն և եթ գնալ Անիէր, փորձել իմանալ, տեղեկանալ։ Նա կ'ուզէր հէնց այս րոպէին այնտեղ լինել։

Վճռելուն պէս նա արագ քայլով իջաւ կայարանի սանդուխներով, հանդիպելով ճանապարհին գրոցները չալակներին կապած զինուորների և չքաւոր ուղևորների, որոնք շտապում էին առաւօտեան գնացքին, վաղ զարթնող խնդճութեան գնացքին։

Լուսադէմին նա անցաւ ամբողջ Փարիզը, Փարիզը, ուր թաղական ոստիկանատների լապտերները հեռուից հեռու ձգում էին իրանց կարմրագոյն ցոլքը և ոստիկանները երկ-երկու չափչփում էին փողոցները, կանգ առնելով անկիւնները։

Ոստիկանասներից մէկի առաջ մարդիկ կային կանգնած, ցնցոտի հաւաքողներ, գիւղացի կանայք։ Անշուշտ մի դիշերային դրամա էր այդ, որի վերջաւորութիւնը տեղի էր ունենալու ոստիկանական պաշտօնեայի մօտ։ Ա՜խ, եթէ Ֆրանցը իմանար, թէ ինչ դրամա էր այդ. բայց նա չէր կարող գուշակել այդ և նայեց այն կողմը հեռուից ու անտարբեր կերպով։

Բոլոր այդ տգեղութիւնները, այդ յոգնատանջ դունատութեամբ սկսող արշալոյսը, այդ լապտերները, որոնք փայլփլում էին Սենայի ափին՝ իբրև դիշերը դագաղի կողքին վառուող մոմեր, այդ անքուն դիշերուայ ջարդուածութիւնը՝ պաշարել էին նրան խորին տխրութեամբ։

Երբ երկու-երեք ժամ քայլելուց յետոյ Անիէր հասաւ, նա այնպէս ղդաց, կարծես քնից նոր է զարթնել։

Արևը, որ այդ րոպէին ծագում էր իր ամբողջ փառահեղութեամբ, շողշողացնում էր դաշտավայրն ու ջրերի երեսը։ Կամուրջը, տները, գետափը, և ամեն ինչ առհասարակ փայլում էր վաղորդեան յստակութեամբ, որ այնպիսի տպաւորութիւն է

գործում, թէ նորածին օրը, լուսաճաճանչ ու ժպտուն, դուրս է գալիս գիշերուայ թանձր մշուշներից։ Հեռուից նա նշմարեց իր եղբօր տունը և տեսաւ, որ տնեցիք արդէն զարթնել են, որովհետև պատուհանածածկերը բաց էին և ծաղիկները դուրս էին դրուած լուսամուտների եղերքներին։ Բաւական ժամանակ նա թափառեց, չը համարձակելով ներս մտնել։

Ցանկարծ մէկը ձայն տուեց նրան դարափից։

—Վա, դուք էք, պարոն Ֆրանց... Ի՞նչքան վաղ էք եկել այսօր։

Սիդոնիի կառապանն էր այդ, որ ձիերին տանում էր լողացնելու։

—Հօ նոր բան չի՞ պատահել տանը... գողդողալով հարցրեց Ֆրանցը։

—Ոչինչ չի պատահել, պարոն Ֆրանց։

—Եղբայրս տա՞նն է։

—Չէ, պարոնը գործարանումն է դիշերել։

—Ոչ ոք հօ չի՞ հիւանդացել։

—Չէ, պարոն Ֆրանց, ոչ ոք, որքան ինձ յայտնի է։

Եւ ձիերը կրծքահան մտան գետը, փրփրացնելով ջուրը։

Այն ժամանակ Ֆրանցը սիրտ արեց խփել փոքրիկ դռան զանգը։

Պարտիզպանը փոցխում էր ծառուղիները։ Տունը արդէն աղմկւում էր, և, չը նայելով կանուխ ժամին, լսւում էր Սիդոնիի ձայնը, պարզ ու հնչուն, ինչպէս տան առջևի վարդենիներում երգող թռչունների գեղգեղանքը։

Նա խօսում էր մեծ աշխոյժով։

Ֆրանցը, սաստիկ յուզուած, աւելի մօտեցաւ ու սկսեց ականջ դնել։

—Չէ, կրեմ պէտք չէ... պարՖեն *) բաւական է... Միայն թէ պէտք է լաւ սառցրած լինի, և ժամի եօթին պատրաստ լինի... Հա, իսկ իբր նախակերակուր (entrée)... տեսնենք ինչ կարելի է ընտրել...

Նա ծանր ու բարակ խորհրդակցում էր իր սպասաւորուհու հետ վաղուան երեկոյի ճաշկերոյթի մասին։ Տեղի յանկարծական երևումը չը շփոթեցրեց նրան։

—Ահ, բարի լոյս, Ֆրանց, ասաց նա կատարեալ հանգստութեամբ... Իսկոյն և եթ ձեր տրամադրութեան տակ կը լինեմ։ Վաղը հիւրեր ունենք ճաշին, առնտրատան կլիէնտները կը լինեն, գործի ճաշկերոյթ է. կը ներէք, այնպէս չէ՞։

*) Կրեմ և պարՖէ քաղցրեղէններ են։

Երկարատուտ ու փոթփոթազարդ սպիտակ տնազգեստը հագին և փոքրիկ ժանեակագործ գլխանոցը գլխին, թարմ ու ժպտուն, նա շարունակեց կազմել իր ճաշացուցակը, շնչելով մարգագետիններից ու գետից բարձրացող զով օդը։ Նրա անդորը դեմքի վրայ չէր երևում ամենաչնչին հետք վշտի կամ անհանգստութեան։ Կոկ ճակատը, աքանչելի զարմացկոտ հայեացքը, որ այնքան ջահելութիւն էր տալիս նրան, և վարդագոյն ու կիսաբաց շրթունքները՝ տարօրինակ հակապատկեր էին կազմում սիրահարի կերպարանքի հետ, որ ծամածռուած էր ամբողջ գիշերուայ անձկութիւնից ու յոգնութիւնից։

Մի ամբողջ քառորդ ժամ նստած հիւրասենեակի անկիւնում, Ֆրանցը ստիպուած էր լսել, թէ ինչպէս հարսը իրար յետևից շարում էր, իրանց մշտական հերթով, բուրժուական ճաշի սովորական կերակուրները, սկսած փոքրիկ տաք կարկանդակներից, նորմանդական ձկից ու այն բոլոր նիւթերից, որոնցով պատրաստուում է նա, և վերջացնելով Մոնտռեոյլի գեղձով ու Ֆոնտէնբլոյի խաղողով։ Ոչ մի թերթ կերակուր անգամ հարը բաց չթողեց նրա սիրուն։

Վերջապէս, երբ նրանք մենակ մնացին, Ֆրանցը, հնարաւորութիւն ստանալով խօսելու, հարցրեց նրանից խուլ ձայնով՝

—Ուրեմն չէք ստացել իմ նամակը...

—Ինչպէս չէ, ստացել եմ։

Սիգօնին վեր կացաւ՝ հայելու առաջ շիտակելու մազերի խոպոպները, որոնք խառնուել էին սաւառուն ժապաւէնների հետ։

—Այո, այո,—շարունակեց նա, նայելով հայելու մէջ,—ստացայ ձեր նամակը, և պէտք է ասել հիացայ... Այսուհետև, եթէ սիրտներդ ուզի յիմար-յիմար բաներ ասել ձեր եղբօրը ինչպէս մի ժամանակ սպառնում էիք ինձ, ես ամենայն հեշտութեամբ կը համոզեմ նրան, որ այդ սուտ մատնութեան միակ պատճառը եղել է ոխը, այն, որ ես, ինչպէս վայել էր, մերժել եմ ձեր յանցաւոր սէրը։ Իմացած եղէք այդ, սիրելիս... և ցտեսութիւն։

Երջանիկ, ինչպէս մի դերասանուհի, մի սաստիկ տպաւորիչ հատուած արտասանելուց յետոյ, նա անցաւ տեղի առաջով ու դուրս եկաւ հիւրասենեակից ժպտուն, բերնի անկիւնը բարձրացրած, յաղթական ու անզայրոյթ։

Եւ Ֆրանցը չը սպանեց նրան։

V

Մի պատահար

Այդ չարաբաստիկ օրուայ նախընթաց օրը, մի քիչ անց այն րոպէից, երբ Ֆրանցը գաղտագողի կերպով հեռացաւ Բրաքի փողոցում վարձած սենեակից, հռչակաւոր Դըլօբէլը վերադարձաւ տուն, բոլորովին այլայլուած և այն յոգնած ու հիասթափ կերպարանքով, որ նա ընդունում էր միշտ ձախորդ հանգամանքներում։

—Տէր իմ Աստուած, ինչ է պատահել քեզ, խեղճ ամուսին... իսկոյն և եթ հարցրեց տիկին Դըլօբէլը, որի զգայնութիւնը չէր բթացել, չը նայելով, որ նա քսան տարի շարունակ տեսնում էր այդ չափազանցրած ու դրամատիկական դիմախաղը։

Նախ քան պատասխանելը՝ ex-դերասանը, որ ամենաչընչին խօսք անգամ արտասանելուց առաջ դէմքին տալիս էր այն կերպարանքներից մէկը, որ երբեմն սովորել էր բեմի համար, կախ դցեց բերանը ի նշան զղջանքի և արտահայտութեան, որպէս թէ մի րոպէ առաջ մի շատ դառը բան կուլ տուած լինէր։

—Այն է պատահել, ասաց նա, որ մեր սարսռն Ռիսլէրները կատարեալ ապերախտներ են, եսամոլներ և, յամենայն դէպս, սաստիկ անբարեկիրթ մարդիկ։ Գիտէք ինչ իմացայ ներքևում դռնապանուհուց, որ աչքի պոչով նայում էր ինձ, քմծիծաղ տալով... Ֆրանց Ռիսլէրը գնացել է։ Նա մի րոպէ առաջ հեռացել է տնից, իսկ այժմ դուցէ և Փարիզից, առանց հարկաւոր համարելու գալ տրմել ձեռքս, շնորհակալութիւն յայտնել ինձ այն ընդունելութեան համար, որ նա գտնում էր այստեղ... Ի՞նչպէս է դուր գալիս ձեզ այդ... Ես գիտեմ, որ ձեզ հետ էլ մնաս բարև արած չի լինի, այնպէս չէ։ Եւ սակայն, երեսովը չեմ ուզում տալ, բայց ինչպէս չասեմ, որ մի ամիս չը կայ՝ ինչ ամբողջ օրերով ցցուած էր լինում այստեղ։

Տիկին Դըլօբէլը մի բացականչութիւն արձակեց, որի մէջ լսւում էր անկեղծ վիշտ ու զարմանք։ Դէզիրէն, ընդհակառակը, ծպտուն անգամ չը հանեց, ոչ մի շարժում չարեց։ Կատարեալ սառցակտոր։ Նոյն իսկ արոյրէ թելը, որ նա ոլորում էր, կանգ չառաւ մի րոպէ նրա ճարտար մատների մէջ...

—Դէ արանից յետոյ դնայէք ու մարդկանց հետ բարեկամութիւն արէք, շարունակում էր հռչակաւոր Դըլօբէլը։ Մէկ հարցնող լինի, ինչ էի արել ես այդ մարդուն։

Ex-դերասանի մշտական տրտունջներից մէկն էլ այն էր,

թէ ամբողջ աշխարհը ատում, հալածում է իրան։ Այդ էլ մի մասն էր կազմում այն դերի, որ նա վերցրել էր իր վրայ կեանքում,—գեղարուեստի համար նահատակուողի դերի։

Տիկին Դելօրէլը քաղցրութեամբ, գրեթէ մայրական քնքշութեամբ—որովհետև միշտ մի տեսակ մայրութիւն կայ այն ներողամիտ սիրոյ մէջ, որ նեղշնչում են այդպիսի հասակաւոր երեխաները—ափփեց իր ամուսնուն, գգուեց նրան, մի քաղցրեղէն աւելացրեց ճաշին։ Իսկապէս խեղճ մարդը ճիշտ որ վըշտացած էր. Ֆրանցի գնալուց յետոյ նորից թափուր էր մնում մշտական ամֆիտրիօնի պաշտօնը, որ մի ժամանակ կատարում էր Ռիսլէր աւագը, և խեղճ դերասանը մտածում էր այն զուարճութիւնների մասին, որոնցից զրկուած էր լինելու այսուհետև։

Եւ ինչ. այդ եսական ու վայրիվերոյ վշտի կողքին կար մի անսահման կսկիծ, կսկիծ, որ ընդունակ է ապանել մարդուս, և կուկին։ Տես այդ թափանցիկ գունատութիւնը, այդ անարցունք աչքերը, որոնք փայլում են յառած, կարծես իրանց մտածմունքն ու հայեացքը կենտրոնացրած լինեն մի առարկայի վրայ, որ միայն նրանց է տեսանելի։ Բանալ տուր առջեդ այդ խուլի սիրտը, որ տանջւում է սաստիկ։ Հարց ու փորձ արա զաւակիդ։ Խօսեցրու նրան, աշխատիր մանաւանդ լացացնել նրան, որպէս զի նա թեթևանայ այն ծանրութիւնից, որ խեղդում է նրան, որպէս զի արցունքից մթագնած աչքերը չը նայեն այլ ևս դէպի դատարկութիւնը, սևեռուած այն զարհուրելի անյայտ բանի վրայ, որին փարում են նրանք յուսահատօրէն։

Աւաղ...

Կան կանայք, որոնց մէջ մայրական զգացմունքը մնում է ամուսնական զգացմունքը։ Սրա մէջ ամուսնական զգացմունքն էր մեռցրել մայրականը։ Դարձած Դելօրէլ աստուծու քրմուհին, ուշ ու միտքը տուած իր կուռքին, նա կարծում էր, թէ իր աղջիկն էլ ծնուել է միմիայն նոյն պաշտամունքին անձնատուր լինելու, նոյն սեղանի առաջ ծունկ չոքելու համար։ Նրանք երկուսն էլ միայն մի նպատակ պէտք է ունենային կեանքում, այն է՝ աշխատել մեծ մարդու փառքի համար, մխիթարել նրա չը ճանաչուած հանճարը։ Դրանից դուրս ոչինչ գոյութիւն չունէր։ Տիկին Դելօրէլը երբէք չէր նկատել, թէ ինչպէս էր յանկարծ կարմրատակում Դէզիրէն, հէնց որ Ֆրանցը մտնում էր արհեստանոցը, թէ ինչպէս, բոլոր սիրահարուած օրիորդների նման, խեղճ աղջիկը տեղի-անտեղի լօգքը դարձնում էր նրա վրայ, հազար ու մի հնարք գործ դնելով, որ աշխատութեան ժամերին նրա անունը շուտ-շուտ յիշուի իրանց զրոյցի ժամ-

նակ, և այդ՝ քանի-քանի տարիների ընթացքում, սկսած այն հեռաւոր ժամանակներից, երբ Ֆրանցը առաւօտները մութ-մութ գնում էր կենտրոնական դպրոցը, մինչ իրանք վառում էին լամպը իրանց աշխատաւոր օրը սկսելու համար։ Եղբէր նա չէր հարցնում աղջկանից այն երկարատև լռութիւնների պատճառը, որոնց մէջ խորասուզւում է դիւրահաւատ ու երջանիկ երիտասարդութիւնը, պինդ-պինդ փակուելով այնտեղ և անձնատուր լինելով երազանքների՝ ապագայի մասին. և եթէ երբեմն տուր լինելով երազանքների՝ ապագայի մասին. և եթէ երբեմն նա, ձանձրացած Դէզիրէի անխօսութիւնից, ասում էր՝ «Ի՞նչ է պատահել քեզ», բաւական էր, որ աղջիկը պատասխանէր՝ «Ոչինչ, մայրիկ», որպէս զի մօր միտքը, մի բոպէ այդպիսով մտածմունքներին։

Եւ այդպէս, այդ կինը, որ կարողանում էր կարդալ իր ամուսնու սրտի մէջ, նրա օլիմպիական ու սին ճակատի ամենամանր ծալքերի մէջ, երբէք աղջկայ վերաբերմամբ չէր ունեցել մանր ծալքերի մէջ, երբէք աղջկայ վերաբերմամբ չէր ունեցել այն գորովը, որ գուշակում է սիրելի էակի գաղտնիքները և ոչ սիրելի էակի գաղտնիքները և ոչ այն գորովը, որ գուշակում է սիրելի էակի գաղտնիքները և ոչ սիրելի էակի գաղտնիքները։ Բանալ տուր առջեդ այդ խուլի սիրտը, որ տանջւում է սաստիկ։ Հարց ու փորձ արա զաւակիդ։ Խօսեցրու նրան, աշխատիր մանաւանդ լացացնել նրան, որպէս զի նա թեթևանայ այն ծանրութիւնից, որ խեղդում է նրան, որպէս զի արցունքից մթագնած աչքերը չը նայեն այլ ևս դէպի դատարկութիւնը, սևեռուած այն զարհուրելի անյայտ բանի վրայ, որին փարում են նրանք յուսահատօրէն։

Աւաղ...

Կան կանայք, որոնց մէջ մայրական զգացմունքը մնում է ամուսնական զգացմունքը։ Սրա մէջ ամուսնական զգացմունքն էր մեռցրել մայրականը։ Դարձած Դելօրէլ աստուծու քրմուհին, ուշ ու միտքը տուած իր կուռքին, նա կարծում էր, թէ իր աղջիկն էլ ծնուել է միմիայն նոյն պաշտամունքին անձնատուր լինելու, նոյն սեղանի առաջ ծունկ չոքելու համար։ Նրանք երկուսն էլ միայն մի նպատակ պէտք է ունենային կեանքում, այն է՝ աշխատել մեծ մարդու փառքի համար, մխիթարել նրա չը ճանաչուած հանճարը։ Դրանից դուրս ոչինչ գոյութիւն չունէր։ Տիկին Դելօրէլը երբէք չէր նկատել, թէ ինչպէս էր յանկարծ կարմրատակում Դէզիրէն, հէնց որ Ֆրանցը մտնում էր արհեստանոցը, թէ ինչպէս, բոլոր սիրահարուած օրիորդների նման, խեղճ աղջիկը տեղի-անտեղի լօգքը դարձնում էր նրա վրայ, հազար ու մի հնարք գործ դնելով, որ աշխատութեան ժամերին նրա անունը շուտ-շուտ յիշուի իրանց զրոյցի ժամ-

աստիճաններին ու իրանց անգամները բանտի նեղ տարածու-
թեանը և յետոյ, եթէ մի բոպէով նրանց դուրս են բերում լոյս
տեղ ու նորից յետ տանում բանտը, զնդանը աւելի սխուր է
թւում նրանց և խաւարը՝ աւելի թանձր, այնպէս էլ այդ խեղճ
աղջկայ արևը աւելի սևացաւ, երբ այն պայծառ լոյսը, որ յան-
կարծ երևացել էր նրա կեանքում, չքացաւ, թողնելով նրան իր
նախկին կապանքներում։ Ո՞րքան արցունքներ էր կուլ տուել
նա լռիկ-մնջիկ այդ բոպէից յետոյ։ Ո՞րքան դարդեր էր պատ-
մել իր փոքրիկ թռչնիկներին։ Որովհետև այս անգամ էլ նրա
փրկողը աշխատանքն եղաւ, մոլեգին, անընդհատ աշխատանք, որ
իր կանոնաւորութեամբ, իր միակերպութեամբ, միենոյն հոգ-
սերի, միենոյն շարժումների կրկնութեամբ, իրը չափաւորիչ
ոյժ էր ծառայում նրա մտքի համար։

Եւ ինչպէս մեռած թռչնիկները կարծես կենդանութիւն
էին ստանում նրա մատների տակ, այնպէս էլ նրա մեռած յոյ-
սերն ու երազանքները, որոնք տոգորուած էին շատ աւելի
նուրբ, շատ աւելի թափանցուն թոյնով, քան այն, որ փոշիա-
նման ծփում էր նրա աշխատութեան սեղանի շուրջը, դեռ ևս
ժամանակ առժամանակ թափահարում էին թևերը անձկալից
ցիգով և յարութիւն առնելու բուռն ցանկութեամբ։ Ցրանցը
դեռ բոլորովին կորած չէր նրա համար։ Թէև Ցրանցը շատ ուշ-
ուշ էր գալիս նրան տեսնելու, բայց չէ՞ որ նա գիտէր, որ
Ցրանցը այնտեղ է, չէ՞ որ լսում էր, թէ ինչպէս է նա ներս
մտնում, դուրս գալիս, անհանգիստ քայլերով չափչփում իր
սենեակը, իսկ երբեմն նա նոյն իսկ՝ կիսաբաց դռնով՝ տեսնում
էր սիրելի սիլուէտը սանդուխներով վազէվազ իջնելիս։ Երջա-
նիկ կերպարանք չունէր Ցրանցը։ Ասենք ինչ երջանկութիւն
կարող էր սպասել նրան։ Նա սիրում էր իր եղբօր կնոջը։ Եւ
այն միտքը, թէ Ցրանցը երջանիկ չէ՝ գրեթէ մոռացնել էր
տալիս այդ բարի աղջկան իր սեփական վիշտը, և նա մտածում
էր միմիայն Ցրանցի վշտի մասին։

Նա շատ լաւ հասկանում էր, որ այլ ևս անկարելի է, որ
Ցրանցը վերադառնայ նրա մօտ՝ նորից սիրելու նրան։ Բայց
նա մտածում էր, որ գուցէ մի օր նա կը մանի իր մօտ, նուա-
զուն ու խոցոտուած սրտով, և նստելով ցածիկ աթոռի վրայ
ու գլուխը դնելով նրա ծնկներին, դառն հառաչանքով կը պատ-
մի իր դարդն ու կ'ասի՝ «Մխիթարիր ինձ...»

Այդ աղջամուղի յոյսովն էր ապրում նա երկար չարաթից ի
վեր։ Ո՞րքան քիչ բան էր հարկաւոր խեղճին։

Բայց չէ։ Այդ փոքրիկ բանն անգամ շատ էր համարուել
նրա համար։ Ցրանցը գնացել էր, գնացել՝ առանց մի հայեացք

ղցելու նրա վրայ, առանց մնաս բարև ասելու նրան։ Իրը սի-
բահար նրան դաւաճանելուց յետոյ՝ նա դաւաճանել էր այժմ
նրան նաև իրը բարեկամ։ Սոսկալի էր այդ...

Հօր առաջին խօսքերը լսելուն պէս նա զգաց, որ գահա-
վիժուեց մի խոր, սառուցեալ ու խաւարամած անդունդ, ուր
իջնում է արագութեամբ ու անզգայաբար, շատ լաւ իմանալով,
որ այնտեղից վերադարձ չը կայ դէպի լոյս աշխարհ։ Նա խեղդ-
ւում էր։ Նա ուզում էր դիմադրել, մաքառել, օգնութեան
կանչել։

Բայց ո՞ւմ։

Նա լաւ գիտէր, որ մայրը չի լսի նրա ձայնը։

Սիրոնիին... Օ՜հ, նա ճանաչում էր այժմ նրան։ Նա աւելի
օգուտ կ'ունենար, եթէ դիմէր այդ չողունափետուր ոսկեթռչ-
նիկներին, որոնց խորամանկ աչքերը նայում էին նրան ուրախ
ու անտարբեր հայեացքով։

Ամենասարսափելին այն էր, որ նա հասկացաւ իսկոյն, որ
այս անգամ իրան չէ կարող փրկել նոյն իսկ աշխատանքը, որ
կորցրել էր իր բարերար ազդեցութիւնը։ Թմրած կռները ոյժից
ընկել էին, յոգնած, չը կցուող ձեռները անջատուել էին իրա-
բից սաստիկ վհատութեան անգործութեամբ։

Էլ ո՞վ կամ ինչ կարող էր նեցուկ լինել նրան այդ սոսկա-
լի դժբախտութեան մէջ։

Աստուած։ Ա՞յն, որ երկինք են կոչում։

Նրա մտքովն անգամ չանցաւ այդ։ Փարիզում, մանաւանդ
բանուորական թաղերում, տները շատ են բարձր, փողոցները՝
շատ նեղ, օդը՝ շատ պղտոր, որպէս զի մարդիկ կարողանան
տեսնել երկինքը։ Նա կորչում է գործարանների ծխում և խո-
նաւ տանիքներից բարձրացող մշուշի մէջ։ Եւ բացի դրանից,
կեանքը այնքան ծանր է այդ մարդկանց մեծամասնութեան հա-
մար, որ եթէ նախախնամութեան գաղափարը խառնուէր նրանց
թշուառութիւններին, այդ պիտի լինէր նրան բռունցք ցոյց
տալու կամ անիծելու համար։ Ահա թէ ինչու այդքան շատ ինք-
նասպանութիւններ են պատահում Փարիզում։ Այդ ժողովուրդը,
որ աղօթել չը գիտէ, ամեն բոպէ պատրաստ է մեռնելու։ Իր
բոլոր տանջանքների խորքում նա տեսնում է մահը, ազատա-
բար ու ափոփիչ մահը։

Ահա թէ ուր էր նայում կաղիկը յառած աչքերով։

Պէտք էր մեռնել, այդ նա վճռել էր հէնց առաջին բոպէին։

Բայց ինչպէս։

Անշարժ նստած իր բազկաթոռում, մինչ յիմար կեանքը

չարունակում էր նրա շուրջը, մինչ մայրը պատրաստում էր ճաշը, իսկ մեծ մարդը մի երկար մենախօսութիւն էր արտասանում թէ մեռնելու որ միջոցն ընտրէր իր համար։ Գրեթէ հնարաւորութիւն չունենալով երբէք մենակ մնալ, նա չէր կարող մտածել ամբոխի մասին, որ վառում են կրակակալում, նախապէս դռներն ու պատուհանները պինդ փակելուց յետոյ։ Տանից երբէք դուրս չը գալով, նա չէր կարող մտածել նոյնպէս և թոյնի մասին, սպիտակ փուչեղէնի փոքրիկ ծրարի մասին, որ առնում են գեղաճառից ու խրում դրպանը ապատանի ու մատնոցի հետ։ Բացի դրանից՝ կար լուցկիների ծծումբը, հին սև փողի ժանգը, փայտի սալայատակին նայող բաց պատուհանը. նա ձեռք քաշեց այդ միջոցներից, մտածելով, որ այդպիսով սատիպելու է ծնողներին ներկայ լինել իր կամաւոր մահուան հոգեվարքի սարսափելի տեսարանին, և նրանց համար սոսկալի է լինելու տեսնել իր ճիպուտած դիակը, որ բարձրացնելու են խռնուած ամբոխի մէջից։

Մի միջոց էր մնում նրան—դեռը։

Այդ միջոցի լաւն այն է գոնէ, որ ջուրը երբեմն այնքան հեռու է տանում մարդուս, որ ոչ ոք չի կարողանում գտնել, և մահը մնում է չրջապատուած խորհրդաւորութեամբ...

Նա սարսռում էր գետի մասին մտածելիս։ Սակայն խոր ու խաւար ջրի պատկերը չէր, որ նրան սարսափեցնում էր։ Փարիզի աղջիկների հոգը չէ այդ։ Գոգնոցները գցում են գլուխներին, աչքերը ծածկելու համար, և թրը՛մի։ Բայց պէտք էր վայր իջնել սանդուխներով, մէն-մենակ գնալ փողոցներով, իսկ փողոցը երկիւղ էր ազդում նրան։

Արդ, մինչ խեղճ աղջիկը նախօրօք դերագոյն թռիչք էր գործում այդպէս դէպի մահն ու մոռացութիւնը, մինչ նա այդպէս հեռուից նայում էր դէպի սև անդունդը շաղուած աչքերով, ուր արդէն ցոլում էր ինքնասպանութեան խելագարութիւնը, հաչակաւոր Դրլօբէլը աշխուժանում էր փոքր առ փոքր և աւելի քիչ դրամատիկական կերպով էր խօսում. իսկ յետոյ, երբ ճաշին բերեցին նրա սիրած կաղամբը, նա սկսեց խանդաղատուել ուտելով, սկսեց յիշել իր հին յաղթանակները, ոսկէ պատկը, Ալանսօնի թատրոնի յանձնաժողովներին, և ճաշը վերջացնելուն պէս գնաց Օդէօն, ուր Ռօբերիկարի դեբիւտանտների համար ներկայացնում էին «Միղանթրօպը», կոկուած, սղմուած, թենոցները սիպ-սպիտակ, և դրպանումը մի բոլորովին նոր ու փայլուն

հարիւր սուանոց, որ կինը տուել էր նրան, որպէս զի քէֆ անի երիտասարդի նման։

—Շատ ուրախ եմ, ասում էր տիկին Դրլօբէլը ամանները հաւաքելիս։ Հայրիկը լաւ ճաշեց այս երեկոյ։ Այդ մի-քիչ սփոփեց խեղճ մարդուն։ Թատրոնում բոլորովին կը բացուի սիրտը։ Խեղճը շատ է տխրում, շատ կարիք ունի զուարճանալու։

... Այո, ամենասարսափելին այն էր, որ պէտք էր մէն-մենակ գնալ փողոցներով։ Պէտք էր սպասել, որ գաղը հանգցնեն, այնուհետև, մօր պառկելուց յետոյ, ամենայն զգուշութեամբ իջնել սանդուխներով, ներքևի դուռը բաց անել տալ և դուրս գալ Փարիզի փողոցները, ուր մարդիկ երբեմն այնքան անամօթաբար են նայում կանանց երեսին, և անցնել սրճարանների առաջով, որոնք շողշողում են փայլուն լուսաւորութիւնից։ Դէղիրէն, երեխայութիւնից սկսած, այդպէս վախենում էր փողոցից։ Փոքրիկ ժամանակը, երբ նրան ուղարկում էին որ և է տեղ, փողոցային լակոտները յետևից ընկած ծաղրում էին նրան, և խեղճը կը դժուարանար ասել, եթէ ինչն է աւելի դաժան նրա վերաբերմամբ, այն, որ այդ բլուզաւոր աներես լակոտները, իր անկանոն քայլուածքը ներկայացնելով, տնգլի էին տալիս յետևից, թէ այն, որ անցորդներից շատերը խղճում էին իրան և կարեկցութիւնից շուռ էին տալիս երեսները իրանից։ Բացի դրանից, նա վախենում էր կառքերից, ձիերից։ Գետը հեռու էր։ Նա շատ կը յոգնէր։ Եւ սակայն ոչ մի ուրիշ միջոց չէր մնում...

—Գնում եմ քնելու, աղջիկս, իսկ դու ինչպէս՝ կը քնես, թէ դեռ կ'աշխատես։

Առանց աչքը աշխատանքից կտրելու, աղջիկը պատասխանում է, որ ինքը դեռ բանելու է, ուզում է վերջացնել տասներկեակը։

—Ուրեմն բարի գիշեր, ասաց տիկին Դրլօբէլը, որի լոյսպակաս աչքերը այլ ևս չեն կարողանում երկար ժամանակ տանել լամպի լոյսը։ Հայրիկիդ ընթրիքը դրել եմ կրակի կողքին։ Պառկելուց առաջ ակը տուր։

Դէղիրէն սուտ չասաց։ Նա ուզում է վերջացնել տասներկեակը, որպէս զի հայրը միւս առաւօտը կարողանայ տանել խանութը։ Եւ եթէ մէկը տեսնէր, թէ ինչպէս էր նա, փոքրիկ գլուխը հանգիստ կախ գցած, աշխատում լամպի սպիտակագոյն լոյսով, երբէք չէր կարող երևակայել, թէ ինչ սև-սև բաներ էին անցնում նրա մտքով։

Վերջապէս ահա և տասներկեակի վերջին թռչնիկը, մի

հրաշալի թռչնիկ, որի կաս-կանաչ և սաֆիրագոյն թևերը կարծես թաթախուած լինեն ծովային ջրի մէջ։

Դէգիրէն հոգատարութեամբ և կօքէտաբար ցցում է նրան արոյրէ թելի վրայ, խրատած ու թռիչք գործող թռչունի դեղեցիկ դիրքով։

Օ՜հ, ինչպէս լաւ թռիչք է գործում այդ կապարագոյն թրոչնիկը։ Ի՞նչ մոլեգին թափով է սլանում դէպի անհուն տարածութիւնը։ Ի՞նչպէս լաւ զգացում է, որ այս անգամ երկար, շատ երկար ճանապարհորդութիւն է լինելու, յաւիտենական ու անդարձ ճանապարհորդութիւն...

Գործը վերջացնելուց յետոյ՝ սեղանը կարգի բերեց, մոտաքսէ թելերի վերջին կտորտանքները հոգատարութեամբ հաւաքեց ու գնդաձևները խրեց բարձիկի մէջ։

Հայրիկը, վերադառնալիս, կիսովչափ իջեցրած լամպի լոյսով կը գտնի իր ընթրիքը տաք մոխրի վրայ. և այս սոսկալի ու չարաբաստիկ երեկոն նոյնպէս անդորը կը թուայ նրան, որքան և ուրիշ երեկոները՝ նորհիւ բնակարանի սովորական կարգ ու սարքին և նրա մշտական սովորութիւնների ճիշտ պահպանութեան։ Կամացուկ բանում է Դէգիրէն պահարանը և, մի վրքրիկ շալ հանելով, փաթաթւում է մէջը ու դուրս գալիս սենեակից։

Ի՞նչպէս։ Ո՞չ մի հայեացք մօր վրայ, ոչ մի ողջոյն լռիկ հրաժեշտի, ոչ մի խանդաղատանք... Չէ, ոչինչ։ Մերձիմահ մարդկանց սոսկալի պարզամտութեամբ նա հասկացաւ յանկարծ, թէ ինչ հսամոլ սիրոյ են զոհուած եղել իր մանկութիւնը և իր ջահելութիւնը։ Նա շատ լաւ զգում է, որ իրանց մեծ մարդու մի հատիկ խօսքը բաւական կը լինի ափսոսելու այդ քնած կնոջը, որի դէմ գրեթէ զայրոյթ է զգում, որ նա չէ զարթնում, որ նոյն իսկ նրա թերթերուածները չեն ցնցուում, երբ ինքը գնում է տնից ընդ միշտ։

Երբ մարդ, նոյն իսկ կամաւոր կերպով, մեռնում է ջահել հասակում, նա անպատճառ զայրոյթ է զգում, և Դէգիրէն հեռանում է կեանքից, վրդովուած իր ճակատագրի դէմ։

Արդէն փողոցումն է նա։ Ո՞ւր է գնում։ Շուրջը ամենատեղ ամայի է արդէն։ Այդ թաղերը, որոնք այնքան աղմկայոյզ են լինում ցերեկը, շատ վաղ են խաղաղւում երեկոյեան։ Այդ տեղ մարդիկ շատ շատ են աշխատում, ուստի և շատ շուտ են քնում։ Մինչ՝ դեռ ես կենսալից բուլվարները ամբողջ քաղաքի վրայ հեռաւոր հրդեհի վարդագոյն ցոլքեր են սփռում, այստեղ բոլոր դարպասները կողպուած են, խանութների և պատուհանների բոլոր տախտակածածկերը՝ փակուած։ Երբեմն-երբեմն խա-

զաղութիւնը վրդովում է մի ուշացած մարդ, խփելով դարպասի մուրճը, կամ փողոցապահ ոստիկան, որ չի երևում, բայց որի ոտնաձայնը լսւում է, կամ մի հարբեցող, որի մենախօսութիւնը ընդհատւում է իր քայլերի սայթաքումներով, կամ թէ յանկարծ մօտակայ դետափից փչում է քամին, չխչխկացնում է լապտերի ապակին, շառաչեցնում է ճախարակի հին չուանը, կտրւում է փողոցի պտուտանքում և, սուլոց հանելով, մեռնում է մի խախուտ շենքի տակ։

Արագ-արագ քայլում է Դէգիրէն, պինդ փաթաթուած իր փոքրիկ շալի մէջ, գլուխը բարձրացրած, աչքերը ցամաքած։ Ճանապարհը չիմանալով, նա գնում է ուղիղ դէպի առաջ։

Մառէյի նեղ ու մութ փողոցները, ուր գազի լոյսը փայլփլում է հեռուից հեռու, անցնում են իրար միջով, պատոյտներ են տալիս, և այդ տենդոտ որոնման ժամանակ խեղճ աղջիկը առաջ գնալու փոխարէն շարունակ յետ է դառնում արդէն նայած տեղով։ Միշտ մի բան ցցւում է նրա ու դետի մէջ։ Եւ սակայն փչող քամին նրա երեսովն է խփում գետի խոնաւ զովութիւնը։ Կարծես իսկապէս ջուրը յետ-յետ է նահանջում, շրջապատւում է ոլորտներով, կարծես հատ ոլորիսները ու բարձր տները դիտմամբ բռնում են մահուան ճանապարհը։ Բայց կաղիկը շատ արի է և հին փողոցների խորդուբորդ տալայատակով նա քայլում է անընդհատ...

Տեսած կամ երբ և իցէ, թէ ինչպէս որսի վերջում, երեկոյեան, մի որեմ վիրաւոր կաքաւ փախչում է ակօսի միջով։ Նա տատիւում է, գրեթէ փորսող է տալիս, քաշ տալով իր աբիւնաթաթախ թևը մի որեմ ապաստարան, ուր կարող է հանգիստ շունչ փչել։ Բոլորովին նոյն տպաւորութիւնն է գործում այդ փոքրիկ սառուցը, որ պատերին քսքսուելով, գնում է մայթերով երերուն քայլերով։

Նոյն ժամին, գրեթէ նոյն թաղում մի ուրիշ մարդ էլ թափառում է փողոցներում, աչքը յառած մէկի ճանապարհին, որին նա սպասում է յուսահատ։ Ա՜խ, ինչ լաւ կը լինէր, եթէ նրանք իրար հանդիպէին, եթէ Դէգիրէն մօտենար այդ տենդոտ անցորդին ու ճանապարհ հարցնէր նրանից.

—Խնդրեմ, պարոն։ Ի՞նչպէս պէտք է գնալ դէպի դետը...

Անցորդը իսկոյն կը ճանաչէր նրան։

—Վա՜, դուք էք, օրիորդ Զիզի։ Ի՞նչ բան ունէք փողոցում այսպէս ուշ։

—Գնում եմ մեռնելու, Ֆրանց։ Դուք էք պատճառը, որ ես ձանձրացել եմ կեանքից։

Այն ժամանակ Ֆրանցը, սաստիկ զզացուած, կը բռնի

նրան, կը գրկի և այդպէս գրկած կը տանի կռնների վրայ, ասելով.

—Օ՜հ, ոչ, մի մեռիր։ Դու ինձ պէտք ես՝ ինձ միսիթարելու և այն բոլոր ցաւերը դարմանելու համար, որ պատճառել է ինձ այն կինը։

Բայց բանաստեղծի երազ է այս, այնպիսի հանդիպումներից մէկը, որ կեանքը չը դիտէ առաջացնել։ Սարսափելի անորոշ է դաժան կեանքը, և երբ այնքան ինչին բան է հարկաւոր մի գոյութիւն փրկելու համար, նա զլանում է այդ ինչին բանը։ Ահա թէ ինչու միշտ այնքան տխուր են լինում իրական վէպերը...

Փողոցներ, կրկին փողոցներ, յետոյ մի հրապարակ ու մի դծագրում խաւար ջրի մէջ։ Վերջապէս ահա և գետը։ Աշնանային այդ մեղմ ու խնաւ երեկոյի մշուշը ցոյց է տալիս նրան նրա համար անյայտ ամբողջ փարիզը մի տեսակ անորոշ ծաւալով, որ աւելի ևս մեծ է թւում նրան, որովհետև նա բոլորովին անծանօթ է տեղին։ Իսկ և իսկ մեռնելու տեղ է այս։

Նա իրան սաստիկ վրդովիկ, սաստիկ միայնակ ու կորած մոլորած է զգում այդ լուսավառ ու ամայի անհունութեան մէջ։ Նրան թւում է, թէ ինքը մեռել է արդէն։ Նա մօտենում է գետափին և յանկարծ նրան մի բոպէով ճանապարհին կանգնեցնում է ծաղիկների, սաղարթների և քանդած հողի բուրմունք։ Նրա ոտների տակ, ջրափի մայթի վրայ, վաղուայ վաճառանոցի համար արդէն շարուած են ահագին թուով յարդապատ մացառներ և ծաղկամաններ սպիտակ թղթից շինած կոնների մէջ։ Վաճառողուհիները, քնից ու դիշերուայ զովից թմրած, թիկն են տուել իրանց աթոռներին, շալերի մէջ փաթաթուած ու ոտները ջեռուցիկների վրայ դրած։ Ամէն գոյնի չինասաղիկներ, յափրուկներ և աչունավերջի վարդեր, սեղանի ու տարաշխարհիկ, լուսաւորուած լուսնի շողերով և շրջապատուած իրանց թերթ ստուերով, բուրմունք են սփռում օդի մէջ, սպասելով քնած փարիզի վաղուան քմահաճոյքներին։

Խեղճիկ Դէլիրէ, կարծես նրա ամբողջ ջահելութիւնը, բերկրութեան հաղուագէպ օրերը և յուսալաբ սէրը լցնում են նրա սիրտը այդ շարժուն պաբտէղի բոյրերի հետ։ Նա յուշիկ քայլերով անցնում է ծաղիկների միջով։ Սրբեմն-երբեմն քամին իրար է գիպցնում այդ մայառները՝ ինչպէս մի թաւուտի ճիւղերը և մայթերի եզրերին շարուած զամբիւղները, լի գեղանահան արած ստունկերով, թաց հողի հոտ են տարածում։

Նա յիշում է այն արտաքաղաքեան զբօսանքը, որ Ֆրանցը

սարքեց իրանց համար։ Բնութիւնն այն չունչը, որ նա ներս ծծեց այդ օրը առաջին անգամ, նորից զգում է նա այժմ, մեռնելու բոպէին։—«Ցիշիր», կարծես ասում է նրան այդ չունչը, և նա պատասխանում է. «Օ՜, ի հարկէ յիշում եմ»։

Նա չափազանց լաւ է յիշում։ Հասնելով այդ՝ կարծես ուժասպառութեան համար զարդարուած գետափի ծայրին, գաղտագաղտ փոքրիկ ստուերը կանգ է առնում դէպի գետը տանող սանդուղքի դլխին...

Գրեթէ նոյն բոպէին աղմուկ ու աղաղակ է բարձրանում գետափի ամբողջ երկարութեամբ։ «Շուտով մի նաւակ, ճանկաձողեր»։ Ամէն կողմից կիսուում են նաւակավարներ ու ոստիկաններ։ Մի նաւակ սկսում է առաջ խաղալ դէպի գետի մէջերը, մի լապտեր առջևին։

Ծաղկավաճառ կանայք զարթնում են, և երբ նրանցից մէկը, յօրանջելով, հարցնում է, թէ ինչ է պատահել, կամուրջի անկիւնում պզզած արճավաճառ կինը հանգիստ կերպով պատասխանում է.

—Մի կին իրան ջուրն է գցել։

Բայց չէ։ Գետը չուզեց ընդունել այդ մատաղ մարմինը։ Նա խղճաց այդչափ հեզ ու չնորհալի էակին։ Ահա ներքևում, գետի եղերքին, տատանուող լապտերների լոյսում կազմուում է մի սև խումբ, որ սկսում է քայլել։ Խեղդուողին փրկել են... Մի աւարտատոր գուրս է ճանկել նրան ալիքների մէջից։ Նաւակավարներով ու լուսատարներով շրջապատուած ոստիկանները բերում են նրան, ձեռների վրայ դրած, և խաւարի մէջից մէկը, բիրտ ու խռպոտ ձայնով հռհռալով, ասում է.

—Շատ չարչարեց ինձ այդ ջրասուզիկը։ Ձեռներիս մէջից սպլատալով դուրս էր պրծնում... Իրան որ թողնէի, մրցանակավարձիցս կը զրկէր ինձ անպատճառ...

Հեղհեղուած աղմուկը հանդարտուում է, հետաքրքիրները՝ ցրուում են, և մինչ սև խումբը հեռանում է դէպի մօտակայ ոստիկանատունը, ծաղկավաճառ կանայք նորից քուն են մտնում, և ամայի գետափում չինասաղիկները դողդողում են գիշերային հովից...

Օ՜հ, խեղճ աղջիկ, դու կարծում էիր, թէ հեշտ է հեռանալ կեանքից, անյայտանալ յանկարծ։ Դու չը դիտէիր, որ, փոխանակ իսկոյն դէպի քո որոնած չքութիւնը տանելու քեզ, գետը դուրս էր նետելու քեզ, զոհ դարձնելով անաջող ինքնասպանութիւնների խայտառակութեանն ու անարգանքին։ Ամենից առաջ՝ ոստիկանատունը՝ իր կեղտոտ նստարաններով, իր տախտակամածով, որի վրայի թերթ-

ջուած փոշին փոզոցի ցեխ է յիշեցնում։ Այդտեղ պէտք է Դէ-
զիրէն լուսացնէր գիշերը։ Նրան պառկեցրել էին մի բանակային
մահճակալի վրայ՝ վառարանի առջև, որ լիքը լցրել էին նրա
համար և որի վառառողջ ջերմութիւնը գոլորշի էր բարձրա-
ցնում նրա ջրաթաթախ ծանր հագուստներից։ Ո՞րտեղ էր նա։
Նա լաւ չէր կարողանում հասկանալ այդ։ Նրա շուրջը նոյնպի-
սի մահճակալների վրայ պառկոտած էին զանազան մարդիկ,
երկու հարբեցողներ՝ սռնալով ծեծում էին ներսի դուռը, և խեղճ
կաղիկը լսում ու տեսնում էր այդ բոլորը անորոշ կերպով և
չէր կարողանում հաշիւ տալ իրան։

Նրա կողքին, մի գղգղուած կին, մաղերը ուսին չաղ տուած,
պզզել էր վառարանի առաջ, որի կարմիր ցոլքը չէր կարողա-
նում սակայն գոյն տալ նրա վայրագ ու գունատ դէմքին։ Մի
խելագար էր այդ, որին բռնել էին գիշերը, մի խեղճ արարած,
որ մեքենայօրէն տարուբերում էր գլուխը, անդիտակից կերպով
ու գրեթէ շրթունքների շարժումներից անկախ ձայնով արտա-
սանելով անդադար. «Օ՜խ, ինչեր եմ քաշել... ինչեր եմ քաշել»...
Եւ այդ չարագոյժ արտունջը, խառնուելով քնած տղամարդկանց
խռոցին, սարսափելի տանջանք էր պատճառում Դէզիրէին։ Նա
փակում էր աչքերը, որպէս զի չը տեսնէր այդ խելացնոր դէմ-
քը, որ սարսափեցնում էր նրան, իբր մարմնացումն իր սեփա-
կան յուսահատութեան։ Երբեմն-երբեմն փոզոցի դուռը բայ-
ում էր, լսւում էր ոստիկանական պաշտօնեայի ձայնը, որ ինչ
որ անուններ էր տալիս, և երկու ոստիկաններ դուրս էին գա-
լիս, իսկ երկուսը ներս էին մտնում ու իսկոյն փռկւում մահ-
ճակալների վրայ, յոգնած, ինչպէս հերթապահ նաւաստիներ, ո-
րոնք գիշերը արթուն անցրել են նաւի վրայ։

Վերջապէս լոյսը բացուեց՝ իր սարսռացնող զովութեամբ,
որ այնքան ծանր է տկարների համար։ Ցանկարծակի սթափուե-
լով իր թմրութիւնից, Դէզիրէն վեր կացաւ, նստեց անկողնում,
դէն շպրտեց կապան, որի մէջ փաթաթել էին նրան և չը նա-
յելով յոգնութեանն ու տենդին, աշխատեց ոտքի կանգնել, ու-
զելով նորից տիրանալ իր անձին ու կամքին։ Մի բան էր միայն
մտածում նա,—փախչել իր շուրջը հեռացնող աչքե-
րից, հեռանալ այդ զարհուրելի տեղից, ուր քունը այնքան ծա-
նր է չնչում և այնքան ցաւատանջ դիրքեր է ընդունում։

—Ինչպէս եմ, պարոններ,—ասաց նա ամբողջ մարմնով
դողալով,—թողէք գնամ մօտս։

Ինչքան էլ ընտելացած լինէին ոստիկանները փարիզեան
դրամաներին, այնուամենայնիւ նրանք հասկանում էին, որ այն,

ինչ կատարւում էր այժմ նրանց առաջ, սովորականից աւելի
ալնիւ ու աւելի սրատայող մի բան է։ Սակայն նրանք դեռ չէին
կարող տանել նրան իր մօր մօտ։ Պէտք էր առաջ գնալ Թաղա-
կան ոստիկանի մօտ։ Այդ անհրաժեշտ էր։ Կարեկցելով Դէզի-
րէին՝ մի վակ կառք կանչեցին. բայց չէ որ նախ պէտք էր
դուրս գալ ոստիկանատնից, իսկ դռան մօտ մարդիկ էին հա-
ւաքուել նայելու, թէ ինչպէս է անցնելու կաղիկ աղջիկը իր
թրջուած ու քունքերին կպած մազերով և զինուորական կա-
պայով, որի մէջ սակայն նա դողդողում էր ամբողջ մարմնով։
Թաղական ոստիկանատանը նրան վեր բարձրացրին մի մութ
ու խոնաւ սանդուխով, որով գնում-գալիս էին զանազան թո-
կից փախած անձնաւորութիւններ։ Մի բացխփիկ դուռ, որ
իբր հասարակական հիմնարկութեան դուռ, ամեն բոպէ բաց ու
խուփ էր լինում, ցուրտ ու աղօտ լուսաւորուած սենեակներ,
նստարաններ, որոնց վրայ շարուած էին լուռ, շշմած ու քնած
անհատներ, թափառաշրջիկներ, գողեր, անտուակ կանայք. հին
կանաչ մահուդով ծածկուած մի սեղան, որի վրայ գրում էր
«Թաղական ոստիկանի որսկանը», վերակացուի գլխով ու հնա-
մաշ սիւրտուկով մի ահագին մարդ։ Իսկ և իսկ Թաղական ոս-
տիկանատուն։

Երբ Դէզիրէն ներս մտաւ, ստուերի մէջից վեր կացաւ մի
մարդ և եկաւ նրա առաջը ու ձեռքը մեկնեց նրան։ Մրցանակ
ստացած մարդն էր այդ, քսան հինգ ֆրանկի համար իր աղա-
պիչը դարձած այլանդակ արարածը։

—Հը՞, մեր բարեկամ,—ասաց նա նրան իր լպիրշ ծիծա-
ղով և խռպոտ ձայնով, որ մտածել էր տալիս ջրի վրայ անցրած
մառախլապատ գիշերների մասին,—ինչպէս է քէֆդ մեր կա-
պարալողից յետոյ։

Եւ սկսեց պատմել ներկայ եղողներին, թէ ինչպէս էր
դուրս ճանկել նրան, թէ առաջ այսպէս էր բռնել, յետոյ այս-
պէս, և թէ, ինքը որ չը լինէր, նա անպատճառ հիմա ջրի հետ
գնալիս կը լինէր դէպի Ռուան։

Խեղճ աղջիկը կարմրատակել էր տենդից ու ամօթից և
այնպէս յուզուած էր, որ նրան թւում էր, թէ ջրիցը աչքերը
շաղուած են մնացել ու ականջները դեռ ուժժում են։ Վերջա-
պէս, նրան ներս տարան մի աւելի փոքր սենեակ, ուր մի վեհ
ու չքաղաքդ մարդ, ինքը պարոն Թաղապետը, նստած՝ կաթոլ
սուրճ էր խմում և «Դատաստանական թերթը» ձեռքին կար-
դում։

—Ա՜խ, դուք էք... ասաց նա դաժան կերպով, աչքերը

ջուած փոշին փողոցի ցեխ է յիշեցնում։ Այդտեղ պէտք է Դէ-
զիրէն լուսացներ գիշերը։ Նրան պատկերել էին մի բանակային
մահճակալի վրայ՝ վառարանի առջև, որ լեռը լցրել էին նրա
համար և որի վառառողջ ջերմութիւնը գոլորշի էր բարձրա-
ցնում նրա ջրաթաթախ ծանր հագուստներից։ Ո՞րտեղ էր նա։
Նա լաւ չէր կարողանում հասկանալ այդ։ Նրա շուրջը նոյնպի-
սի մահճակալների վրայ պառկոտած էին զանազան մարդիկ,
լերկ պատերից տիրութիւն էր փչում, միւս սենեակում փակուած
երկու հարբեցողներ՝ ոռնալով ծեծում էին ներսի դուռը, և խեղճ
կաղիկը լսում ու տեսնում էր այդ բոլորը անորոշ կերպով և
չէր կարողանում հաշիւ տալ իրան։

Նրա կողքին, մի գղգղուած կին, մազերը ուսին շաղ տուած,
պպզել էր վառարանի առաջ, որի կարմիր ցոլքը չէր կարողա-
նում սակայն գոյն տալ նրա վայրագ ու գունատ դէմքին։ Մի
խելագար էր այդ, որին բռնել էին գիշերը, մի խեղճ աբարած,
որ մեքենայօրէն տարուբերում էր գլուխը, անգիտակից կերպով
ու գրեթէ շրթունքների շարժումներից անկախ ձայնով տրտա-
նալով անդադար. «Օ՜խ, ինչո՞ւ եմ քաշել... ինչո՞ւ եմ քաշել»...
Եւ այդ չարագոյժ տրտունջը, խառնուելով քնած տղամարդկանց
խռոցին, սարսափելի տանջանք էր պատճառում Դէզիրէին։ Նա
փակում էր աչքերը, որպէս զի չը տեսնէր այդ խելացնոր դէմ-
քը, որ սարսափեցնում էր նրան, իբր մարմնացումն իր սեփա-
կան յուսահատութեան։ Երբեմն-երբեմն վողոցի դուռը բաց-
ւում էր, լսւում էր ոստիկանական պաշտօնեայի ձայնը, որ ինչ
որ անուններ էր տալիս, և երկու ոստիկաններ դուրս էին գա-
լիս, իսկ երկուսը ներս էին մտնում ու իսկոյն փռուում մահ-
ճակալների վրայ, յոգնած, ինչպէս հերթապահ նաւաստիներ, ո-
րոնք գիշերը արթուն անցրել են նաւի վրայ։

Վերջապէս լոյսը բացուեց՝ իր սարսռացնող զովութեամբ,
որ այնքան ծանր է տկարների համար։ Ցանկարծակի սթափուե-
լով իր թմրութիւնից, Դէզիրէն վեր կացաւ, նստեց անկողնում,
դէն շպրտեց կապան, որի մէջ փաթաթել էին նրան և չը նա-
յելով յոգնութեանն ու տենդին, աշխատեց ոտքի կանգնել, ու-
զելով նորից տիրանալ իր անձին ու կամքին։ Մի բան էր միայն
մտածում նա,—փախչել իր շուրջը հեւոդհեւ բացուող աչքե-
րից, հեռանալ այդ զարհուրելի տեղից, ուր քունը այնքան ծա-
նր է ընկնում և այնքան ցաւատանջ դիրքեր է ընդունում։

—Խնդրում եմ, պարոններ,—ասաց նա սիրողջ մարմնով
դողալով,—թողէք գնամ մօրս մօտ։

Ինչքան էլ ընտելացած լինէին ոստիկանները փարիզեան
գրամաններին, այնուամենայնիւ նրանք հասկանում էին, որ այն,

ինչ կատարւում էր այժմ նրանց առաջ, սովորականից աւելի
ողնիւ ու աւելի սրտայոյզ մի բան է։ Սակայն նրանք դեռ չէին
կարող տանել նրան իր մօր մօտ։ Պէտք էր առաջ գնալ թաղա-
կան ոստիկանի մօտ։ Այդ անհրաժեշտ էր։ Կարեկցելով Դէզի-
րէին՝ մի փակ կառք կանչեցին. բայց չէ՞ որ նախ պէտք էր
դուրս գալ ոստիկանատնից, իսկ դռան մօտ մարդիկ էին հա-
ւաքուել նայելու, թէ ինչպէս է անցնելու կաղիկ աղջիկը իր
թրջուած ու քունքերին կպած մազերով և զինուորական կա-
պայով, որի մէջ սակայն նա դողդողում էր ամբողջ մարմնով։
Թաղական ոստիկանատունը նրան վեր բարձրացրին մի մութ
ու խոնաւ սանդուխով, որով գնում-գալիս էին զանազան թո-
կից փախած անձնաւորութիւններ։ Մի բացխփիկ դուռ, որ
իբր հասարակական հիմնարկութեան դուռ, ամեն րոպէ բաց ու
խուփ էր լինում, ցուրտ ու տաքօր լուսաւորուած սենեակներ,
նստարաններ, որոնց վրայ շարուած էին լուռ, շշմած ու քնած
անհատներ, թափառաշրջիկներ, գողեր, անտուն կանայք. հին
կանաչ մահուդով ծածկուած մի սեղան, որի վրայ գրուած էր
«Թաղական ոստիկանի որսկանը», վերակացուի գլխով ու հնա-
մաշ սիւրտուկով մի ահագին մարդ։ Իսկ և իսկ թաղական ոս-
տիկանատուն։

Երբ Դէզիրէն ներս մտաւ, ստուերի մէջից վեր կացաւ մի
մարդ և եկաւ նրա առաջը ու ձեռքը մեկնեց նրան։ Մրցանակ
ստացած մարդն էր այդ, քսան հինգ ֆրանկի համար իր աղա-
պիչը դարձած այլանդակ արարածը։

—Հը՞, մեր բարեկամ,—ասաց նա նրան իր լպիրշ ծիծա-
ղով և խռպոտ ձայնով, որ մտածել էր տալիս ջրի վրայ անցրած
մառախլապատ գիշերների մասին,—ինչպէս է քէֆդ մեր կա-
պարապետից յետոյ։

Եւ սկսեց պատմել ներկայ եղողներին, թէ ինչպէս էր
դուրս ճանկել նրան, թէ առաջ այսպէս էր բռնել, յետոյ այս-
պէս, և թէ, ինքը որ չը լինէր, նա անպատճառ հիմա ջրի հետ
գնալիս կը լինէր դէպի Ռուան։

Խեղճ աղջիկը կարմրատակել էր տենդից ու ամօթից և
այնպէս յուզուած էր, որ նրան թւում էր, թէ ջրիցը աչքերը
շաղուած են մնացել ու ականջները դեռ ոժժում են։ Վերջա-
պէս, նրան ներս տարան մի աւելի փոքր սենեակ, ուր մի վեհ
ու չքաղաքի մարդ, ինքը պարոն Թաղոպեռը, նստած՝ կաթոլ
ու շքեղ էր խմում և «Դատաստանական թերթը» ձեռքին կար-
դում։

—Ա՜խ, դուք էք... ասաց նա դաժան կերպով, աչքերը

լրագրից չը հեռացնելով և հայի պատառը սուրճի մէջ թաթախելով։

Եւ Դէզիրէին բերող ոստիկանը խոկոյն և եթ սկսեց կարդալ իր զեկուցումը։

«Կէս գիշերից մի քառորդ պակաս, Մէժիսբրի գեռատիում № 17-ի առաջը, մի ոմն Դիլօբէլ, քսան չորս տարեկան, ծաղկագործուհի, որ ապրում է Բռաք փողոցում, իր ծնողների մօտ, փորձեց անձնասպանութիւն գործել իրան դցելով Սենա գետը, որտեղից նրան ողջ-առողջ դուրս հանեց պարոն Պարշըմինէ, որ աւազափոր է և կենում է Բիւտ-Շօմոն փողոցում»։

Պ. Թաղապետը մի կողմից ուտում էր հացը, մի կողմից լսում՝ հանգիստ ու ձանձրացած կերպարանքով, իբր մի մարդ, որին ոչինչ այլ ևս չէ զարմացնում կեանքում։ Վերջը նա բարձրացրեց աչքերը և մի ոմն Դիլօբէլի վրայ խիստ ու դաժան հայեացք գցեց ու զորս դու պատուիրեցեր նախատեց նրան։ Սաստիկ վատ, սաստիկ բնպիտան բան էր նրա արածը։ Ինչպէս էր դրդել նրան այդպիսի վատ քայլ անելու։ Ինչու էր ուզում նա իր արեը սևացնել։ Հը՞, պատասխանեցէք տեսնենք, մի ոմն Դիլօբէլ։

Բայց մի ոմն Դիլօբէլը յամառ կերպով լռում էր։ Նրան թւում էր, թէ իր սէրը կը պղծուի, եթէ նա խոստովանի այս պիսի տեղում։ «Չը գիտեմ... չը գիտեմ...», դողդողալով ասում էր նա կիսաձայն։

Բարկացած ու համբերութիւնը հատած, պարոն Թաղապետը յայտնեց նրան, որ նրան խոկոյն կը տանեն ծնողների մօտ, բայց այն պայմանով, որ նա խոստանայ, թէ այլ ևս չի կրկնի արածը։

—Հը՞, խոստանում էք...

—Այո, այո, պարոն...

—Այլ ևս չէք կրկնի երբէք...

—Չէ, ի հարկէ, չեմ կրկնի... երբէք... երբէք...

Զը նայելով նրա այդ խօսքերին, պարոն Թաղապետը թափ էր տալիս գլուխը, որպէս թէ չէր հաւատում նրա խոստմանը։ Վերջապէս ահա նա փողոցումն է, գնում է տուն, գնում է իր ապաստարանը, բայց նրա նահատակութիւնը դեռ չէր վերջացել։

Կառքում՝ նրան ուղեկցող ոստիկանը չափազանց քաղաքավարի, չափազանց սիրալիր էր պահում իրան։ Դէզիրէն ձեռքը ցնում էր, թէ չէ հասկանում նրա միտքը, մի կողմ էր քաշւում, յետ էր քաշում ձեռքը։ Ինչ սարսափելի տանջանք... Բայց ամենասարսափելին այն բոպէն էր, երբ հասան Բռաք փողոցը

և Դէզիրէն տեսաւ տան իրարանցումն ու հարեանների բազմութիւնը, որի հետաքրքրութեան առարկան էր դառնալու ինքը։

Առաւօտուանից ի վեր ամբողջ թաղը գիտէր, որ նա անհետացել է։ Լուր էր պատում, թէ նա փախել է Ֆրանց Ռիսլերի հետ։ Վաղ առաւօտեան տեսել էին հռչակաւոր Դիլօբէլին Լերի հետ։ Վաղ առաւօտեան տեսել էին հռչակաւոր Դիլօբէլին տանից դուրս գալիս, սաստիկ այլայլուած, գլխարկը ծուռ դրած, շապկաթեւերը ճմռտուած, որ նշան էր արտասովոր մտահոգութեան, դռնապանուհին էլ, մթերքները վեր տանելիս, խեղճ դուռ-թեան մէջ սենեակի սեմը տեսել էր կիսախելագար դրութեան մէջ սենեակի նեակ վազելիս, աղջկանից մնացած մի խօսք, մի ամենաչնչին ինչ վազելիս, որի հիման վրայ կարելի լինէր գտնել մի ենթադրութիւն անել։

Դժբախտ մօր աչքերը, թէև չատ ուշ, յանկարծ բացուեցին, և նա յիշեց իր աղջկայ տարօրինակ վարմունքը վերջին օրերի ընթացքում, նրա լռութիւնը Ֆրանցի գնալու մասին։ «Մի լար, ամուսին... կը գտնեմ, կը բերեմ նրան...», ասաց պարոն Դիլօբէլը ու գուրս գնաց տանից, մասամբ տեղեկանալու, մասամբ նրա մի գուրս գնաց տանից, մասամբ տեղեկանալու, մասամբ սպասելու այդ սարսափելի դարդը չը տեսնելու համար, և կինը սպասել այդ սարսափելի դարդը չը տեսնելու համար, և կինը սպասելով նրան՝ միալար գնում-գալիս էր դաւթից լուսամուտը և լուսամուտից դաւթը։ Հէնց որ մի ամենաթեթև ոտնաձայն էր լսւում սանդուխի վրայ, նա բաբախուն սրտով բանում էր դուռը ու դուրս պրծնում սենեակից, իսկ յետոյ, երբ ներս էր մտնում յուսախաբ, աղեկտուր լաց էր լինում՝ տեսնելով ընակարանի դատարկութիւնը, սաստկացած չնորհիւ Դէզիրէի թափուր մնացած մեծ բազկաթոռի, որ կիսովին դարձած էր դէպի աշխատութեան սեղանը։

Յանկարծ մի կարք կանգ առաւ ներքևի դռան առաջ։ Նեկսում խուսակցութիւն ու ոտնաձայն լսուեց։

—Գտանք ձեր աղջան, տիկին Դիլօբէլ... Ահա...

Այո, Դէզիրէն էր դա, որ, գունատ ու նուաղուն, բարձրանում էր մի անծանօթ մարդու թեւն ընկած, առանց չալի, առանց գլխարկի, փաթաթուած մի ահագին գորշ վերարկուի մէջ։ Մօրը տեսնելով, նա ժպտաց՝ գրեթէ անմիտ կերպարանքով։

—Մի վախեցիր, ոչինչ չը կայ... փորձեց նա խօսել ու խոկոյն թուլացած նստեց աստիճանների վրայ։ Երբէք տիկին Դիլօբէլի մտքով չէր կարող անցնել, թէ ինքը այդքան ուժ ունի։ Մի ինչում դրկեց աղջկան, տարաւ նեքսն, պառկացրեց, ու սկսեց խօսել հետը, պաշպշել անվերջ։

—Վերջապէս տեսայ քեզ այստեղ։ Ո՞րտեղից ես գալիս, խեղճ աղջիկս։ Ճիշտ է, որ ասում են, թէ ուղեցել ես քեզ սպա-

նել... Սատանիկ դարդ ես ունեցել ուրեմն... Հապա ինչու էիր ծածկում ինձնից։

Տեսնելով մօրը այդ դրութեան մէջ, արտասուաթաթախ ու մի քանի ժամուայ ընթացքում պառաւած, Դէզիրէն սկսեց սատանիկ խղճահարուել։ Նա յիշեց, որ ինքը հեռացել էր տանից առանց նրա հետ մնաս բարև անելու և որ սրտի խորքումը մեղադրում էր նրան, թէ չի սիրում իրան։

Չէր սիրում։

—Ես դարդամահ կը լինէի, եթէ մահդ իմանայի,—ասում էր խեղճ կինը... Օ՜ֆ, երբ առաւօտեան վեր կացայ և տեսայ, որ տեղերդ չի բացուած ու ինքդ էլ արհեստանոցումը չես... պտոյտ եկայ ու կանգնած տեղս գետնովը դիպայ... Հիմա տաքացար մի քիչ... Լաւ ես հիմա... էլ չես աշխատի մնանել, այնպէս չէ...

Եւ, այդպէս խօսելով, ծալում էր վերմակի եզրները, տաքացնում էր ոտները, ողջունում էր կրծքին ու օրօրում։

Աչքերը խուփ՝ անկողնում պառկած, Դէզիրէն վերատեսնում էր իր ինքնասպանութեան փորձի բոլոր մանրամասնները, այն բոլոր զազրելի բաները, որոնք նրա գլխովը անցել էին մահի ճանկից ազատուելուց յետոյ։ Չը նայելով տենդի սաստկանալուն, չը նայելով, որ ծանր քունը յաղթում էր նրան, այնուամենայնիւ նրան յուզում, տանջում էր իր խելագար վազքը փարիզի միջով։ Հազար ու մի մութ-մութ փողոցներ էին բացւում նրա առաջ, որոնք բոլորն էլին գնում վերջանում էին Սենայի ափին։

Այդ սոսկալի գեղը, որ նա չէր կարողանում դանել դիշերը, այժմ հալածում էր նրան։

Խեղճ աղջիկը զզում էր իրան թաթախուած նրա ափերի ու ցեխի մէջ, և խեղդուելով այդ կոչմարից, այդ չար քնից, ու չիմանալով, թէ ինչպէս ազատուի իրան պաչարած այդ սիչողութիւններից, չնչում էր, զիմելով մօրը՝ «ծածկիր ինձ, մայրիկ... ծածկիր... ամաչում եմ»։

VI

Նա խոստացել է չը կրկնել այլ ևս։

Օ՜հ, ոչ, նա այլ ևս այդպիսի բան չի անիլ։ Պ. Թաղական ոստիկանը կարող է հանգիստ լինել։ Երկիւղ չը կայ, որ նա կրկնի իր սրածը։ Ամենից առաջ, ինչպէս պէտք է նա գնայ մինչև գետը, քանի որ այժմ այլ ևս չի կարողանում վեր կենալ

անկողնից։ Եթէ պ. Թաղական ոստիկանը նրան տեսնէր այժմ, այլ ևս կասկածով չէր վերաբերուիլ նրա խոստման։ Ճիշտ է, նա՝ մեռնելու կամքը, փափագը, որ այնքան օրհասական կերպով գրուած էր նրա դունատ կերպարանքի վրայ այն առաւօտ, դեռ ևս երևում է նրա ամբողջ էութեան մէջ, բայց այժմ նա աւելի մեղմ, աւելի հեզ արտայայտութիւն է ստացել։ «Մի ոմն Դելօրէլը» գիտի, որ մի քիչ, չատ քիչ անցած ինքը այլ ևս ոչինչ չի ունենալ բաղձալու։

Բժիշկները կարծում են, թէ թոքերի բորբոքումից է նա մեռնում. ի

տուր լինելու։ Պէտք է շարունակ աշխատել, պէտք է մտածել անյետաձգելի կարիքների, կեանքի գժուարութիւնների մասին նոյն իսկ այն ժամանակ, երբ մահը սաւառնում է մարդուս շուրջը։

Հարուստը կարող է խորհրդատուներ իր վիճակի մէջ, անձնատուր լինել նրան, ապրել նրանով, ոչինչ չանել բայի վիճակուց ու լալուց։

Զբաւորը ոչ հնարաւորութիւն ունի, ոչ իրաւունք՝ այդպէս անելու։ Իմ հայրենի գաւառում, մի գիւղում, ես ճանաչում էի մի պառաւ կնոջ, որի աղջիկը և ամուսինը մեռել էին մի տարուայ ընթացքում, իրար յետևից երկու սարսափելի աղէտ բերելով նրա գլխին, բայց նա զաւակներ ունէր մեծացնելու, ագարակ ունէր կառավարելու։ Լուսաբացից սկսած պէտք էր զբաղուել, ամեն բանի հասնել, զեկավարել դանդաղ տեսակ աշխատանքներ, որոնք ցրուած էին հանդում մի քանի մղոն հեռու իրարից։ Վշտահար այրին ասում էր ինձ. «Լի օրերը մի ազատ բոպէ չունեմ լալու համար, բայց կիրակիները, օհ, կիրակիները ես տեղը հանում եմ...» Եւ յիրաւի, կիրակի օրերը, մինչ երեխաները խաղում կամ զբօսնում էին դրսում, նա կէս օրից յետոյ պինդ կողպուում էր իր սենեակում և մինչև երեկոյ ամայի տան մէջ գոռգոռում, հեկեկում էր ու կանչում իր ամուսնուն ու աղջկան։

Տիկին Դելօբէլը նոյն իսկ կիրակի օրերը ազատութիւն չունէր։ Չէ որ այժմ նա մէն-մենակ պէտք է աշխատէր, չէ որ նրա մատները չունէին Դէգիրէյի նուրբ մատների հնաշխարհիկ ճարտարութիւնը, չէ որ գեղերը թանգ արժէին, և, թէկուզ սիրելի սովորութիւններից մէկից։ Ուստի որ ժամին էլ հիւանդը բանար աչքերը, և՛ առաւօտեան ադօտ ցոլքով, և՛ ութնուքեան լամպի լոյսով, նա տեսնում էր մօրը աշխատելիս, անվերջ աշխատելիս։

Երբ անկողնի առագաստները ծածկուած էին լինում, նա լսում էր սեղանի վրայ դրուող միրատի չոր ու մետալային հընչիւնը։

Մօր այդ յոգնատանջ աշխատանքը, այդ մշտական անքնութիւնը, որ անբաժան էր իր տենդից, մի նոր տանջանք էր խեղճ հիւանդի համար։ Երբեմն այդ ցաւը մոռացնել էր տալիս միւս բոլոր ցաւերը։

—Աշխատանքս տուր ինձ տեսնենք,—ասում էր նա վիրաբերելով նստել անկողնում։

Այդ՝ լուսաւոր բոլշեներ էին օրէցօր թանձրացող խաւա-

ուրի մէջ։ Տիկին Դելօբէլը, որին՝ հիւանդի այդ ցանկութիւնը վրի մէջ։ Տիկին Դելօբէլը, որին՝ հիւանդի այդ ցանկութիւնը վրակենդանանալու բաղձանք էր թուում, ամենայն հոգածութեամբ նատեցնում էր նրան ու մօտեցնում սեղանը։ Բայց սեղը չատ ծանր էր, աչքերը չատ թոյլ էին, և սալայատակի վրայով անցնող կառքերի ամեն մի դղրդոց, փողոցից բարձրացող բոլոր ղոյը բոլորովին մօտ է նրանից։ Չէ, անկասկած էր, որ նա այլ ես ոյժ չունէր ապրելու։ Ա՛խ, եթէ նա կարողանար մեռնել ու յետոյ վերածնուել... Բայց այդ անհնար էր, և նա հանգչում էր կամաց-կամաց, համակուելով գերագոյն անձնուրացութեամբ։ Մայրը չուտ-չուտ նայում էր աղջկան և տեսնելով, որ քանի գնում՝ աւելի ու աւելի է դունատուում, հարցնում էր։

—Ի՞նչպէս ես։

—Շատ լաւ... պատասխանում էր հիւանդը կակծալից ժպիտով, որ մի բոլէով փայլեցնում էր նրա ցաւատանջ դէմքը, ցոյց տալով նրա բոլոր տերունները, ինչպէս որ աղբատի բնակարանը ընկած արևը, փոխանակ ուրախ տեսք տալու նրան, ընդհակառակը, աւելի ևս որոշակի է ցոյց տալիս նրա մայլուութիւնն ու լերկութիւնը։ Այնուհետև երկուսն էլ լռում էին երկար ժամանակ. մայրը՝ լալու ահից, աղջիկը՝ բռնուած տենդից ու արդէն պարուրուած այն անտեսանելի քօղերով, որոնցով մահը մի տեսակ գթառատութեամբ պատում է մեռնողներին, որպէս զի կարողանայ ընկճել նրանց ոյժերի վերջին մնացորդները և որքան կարելի է հանգիստ տանել նրանց, առանց որ և է դիմադրութեան։

Հռչակաւոր Դելօբէլը երբէք տանը չէր նստում։ Նա ոչ մի փոփոխութիւն չէր մտցրել այն՝ անպաշտօն գերասանի կեանքի մէջ, որ վարում էր միշտ։ Եւ սակայն նա գիտէր, որ իր աղջիկը մեռնում է. բժիշկը նախազգուշացրել էր նրան։ Այդ նոյն իսկ սաստիկ յուզել էր նրան, որովհետև, իսկապէս ասած, նա սաստիկ սիրում էր իր զաւակին. բայց այդ օտարոտի բնատուրութեան մէջ ամենախոկական, ամենատնկեղծ զգացմունքները կեղծ ու անբնական կերպարանք էին ընդունում, այն բնական օրէնքով, որի համաձայն՝ թեք տախտակի վրայ դրուած բանները չեն կարող երբէք ուղիղ դիրք ունենալ։

Դելօբէլի համար ամենագլխաւորը այն էր, որ ամեն տեղ ցոյց տար իր վիշտը։ Բուլվարի մի ծայրից մինչև միւսը նա դժբախտ հօր գեր էր ներկայացնում։ Նրան հանդիպում էին թատրոնների մօտերքում և գերասանների սրճարաններում կարմրած աչքերով և դունատ դէմքով։ Նա շատ սիրում էր այնպէս անել, որ հարցնեն. «Հը՝, ծերուկս, ինչպէս է աղջիկդ»։

Եւ այն ժամանակ նա թափ էր տալիս գլուխը ջղային շարժումով, կնճռում էր դէմքը ու սղմում բերանը, իբր թէ արցունքն ու անէծքները զսպելով, և լուռ հայեացքով ու լի սառումով շանթահարում էր երկինքը, ինչպէս «երեխաների բժիշկը» խաղալիս։ Բայց այդ բոլորը չէր խանգարում նրան ամենասիրալիր ուշադրութեամբ ու կամակատարութեամբ վերաբերուել իր աղջկան։

Այդպէս, նա սովորութիւն էր դարձրել նրա հիւանդանալու օրից ի վեր ծաղիկներ բերել նրան իր զբօսանքներից յետոյ. և նա չէր բաւականանում սովորական ծաղիկներով, համեստ մանիշակներով, որ ծաղում են փողոցի բոլոր անկիւններում աղքատիկ քաղաքների համար։ Այդ աշնանային ախոռ օրերին նա վնասում էր վարդեր, մեխակներ, մանաւանդ սպիտակ եղրեւանիներ, այն ջերմոցային եղրեւանիներից, որոնց ցօնեն, կարծես թէ բնութիւնը չաստակու պատճառով դուրս է դրել միայն մի տեսակ գոյն։

—Օ՜հ, այդ չափազանց է... չափազանց... տեսէք, կը բարկանամ,—ամեն անգամ ասում էր հիւանդը, տեսնելով թէ ինչպէս է նա յաղթական կերպով ներս մտնում փունջը ձեռքին. բայց հայրը այնպիսի մեծ-աղայական կերպարանքով էր ասում՝ «թող տուր... թող տուր...», որ նա այլ ևս չէր կարողանում պնդել իր ասածի վրայ։

Եւ սակայն ահագին ծախս էր պահանջում այդ, իսկ խեղճ մայրը սարսափելի տանջւում էր, որ կարողանայ բոլորի համար հաց վաստակել։

Բայց տիկին Դելիբէլը ոչ միայն չէր տրտնջում այդ բանից, այլ ընդհակառակը, գտնում էր, որ այդ շատ հիանալի բան է իր մեծ մարդու կողմից։

Նա զմայլում էր այդ արհամարհանքից դէպի փողը, այդ զերազանց անհոգութիւնից, և աւելի քան երբէք հաւատում էր իր ամուսնու հանճարին և գերբնական ապագային։

Մի գիշեր Դեղիրէն քնից վեր թռաւ սաստիկ տարօրինակ վիճակի մէջ։ Պէտք է ասել, որ նախընթաց օրը բժիշկը, այցելութեան գալով, սաստիկ զարմացած էր մնացել՝ տեսնելով նրան յանկարծ կենդանացած ու աւելի հանգստացած և ջերմը բոլորովին իջած։ Առանց հասկանալու այդ անակնկալ վերակենդանութեան պատճառը, նա հեռացել էր, ասելով՝ «Սպասենք», յոյսը դնելով երիտասարդութեան արագ կազդուրումների, ներքին հիւթերի այդ հրաշալի ոյժի վրայ, որ յաճախ նոր կեանք է պատուաստում նոյն իսկ մահուան նշանների վրայ։ Եթէ նա

նայէր Դեղիրէյի բարձի տակը, այնտեղ կը գտնէր Գահիրէյի դրոշմով մի նամակ, որ միակ պատճառն էր այդ ուրախութիւնի փոփոխութեան,—մի նամակ, բաղկացած չորս էջից և Ֆրանցի ստորագրութեամբ, որ բացատրում էր ու խոստովանում իր սիրելի Զիզիին իր ամբողջ վարմունքը։

Հէնց այդպիսի նամակ էր երազում հիւանդը։ Եթէ նոյն իսկ ինքը թելադրած լինէր նամակը, այդքան լիովին արտայայտուած չէին լինի այն խօսքերը, որոնք պէտք է շարժէին նրա սիրտը, և այն բոլոր քնքոյշ ներողութիւնները, որոնք պէտք է սպեղանի լինէին նրա վէրքերին։ Ֆրանցը ղղջումն էր յայտնում, ներողութիւն էր խնդրում, և, առանց ոչինչ խոստանալու նրան, առանց մանաւանդ որ և է բան խնդրելու նրանից, պատմում էր իր հաւատարիմ մտերմին իր մաքառումները, խղճի խայթոցները, քաշած տանջանքները։ Նա զայրոյթով էր խօսում Սիգոնիի մասին, խնդրում էր Դեղիրէյին չը հաւատալ նրան, և ուխակալութեամբ, որ սրատես և ահռելի էր չնորհիւ հին կրքոտ սէրին, նա զգուշացնում էր նրան այդ փչացած ու վայր ի վերոյ բնաւորութիւնից, այդ անչեղ ձայնից, որ կարծես ստեղծուած էր ստելու համար և որի մէջ երբէք չէր լսուել սրտից բղխած մի հնչիւն, որովհետև նա գլխից էր դուրս գալիս, ինչպէս այդ փարիզեան տիկնիկի բոլոր մոլեգին ձգտումները։

Ո՞րքան ցաւալի բան էր, որ այդ նամակը մի քանի օր չուտ չէր ստացուել։ Այժմ այդ բոլոր քաղցր խօսքերը նոյնն էին Դեղիրէյի համար, ինչ որ հիանալի կերակուրները, երբ շատ ուշ են հասցնում սովամահ եղողին։ Նա հոտոտում է կերակուրները, փափաքում է ուտել, բայց այլ ևս ոյժ չունի ուտելու։ Ամբողջ օրը հիւանդը կարդում էր ու նորից կարդում նամակը։ Նա հանում էր նամակը ծրարից, յետոյ սիրալիր ծալում, և փակած աչքերով տեսնում էր ամբողջապէս, մինչև իսկ նամականիշի դոյնը։ Ֆրանցը մատնել էր նրա մասին։ Այդ բաւական էր նրան ներշնչելու քաղցր անդորրութիւն, որպէս նա վերջապէս քուն եղաւ՝ այնպիսի տպաւորութեամբ, որպէս թէ մի մտերիմ բաղուկ յենարան էր դարձել նրա թոյլ գլխին։

Յանկարծ նա զարթնեց, ինչպէս ասացինք մի քիչ առաջ, տարօրինակ վիճակի մէջ։ Մի տեսակ թուլութիւն, անձկութիւն, ինչ-որ անբացատրելի բան էր զգում նա իր ամբողջ էութեան մէջ։ Նրան թւում էր, թէ ինքը կապուած է կեանքի հետ միայն մի մաղմանի թելով, որը այնքան ձգուած է, որ քիչ է մնում կարուի, և որի ջղային երերումները նրա բոլոր զգայարանքներին տալիս էին գերբնական նրբութիւն ու սրութիւն։ Դեռ գիշեր էր։ Նրա պառկած սենեակը—նրան տուել էին իր ծնողների

սենեակը, որ աւելի օդաւէտ էր, աւելի ընդարձակ, քան իր փոքրիկ ննջասրահը—կիսով չափ սառուերի մէջ էր։ Գիշերային լամպը ցոլացնում էր առաստաղի վրայ իր լուսաւոր շրջանները, այդ իւրատեսակ մելամաղձիկ Մեծ-Արջի համաստեղութիւնը, որ զարդարում է հիւանդներին անքուն գիշերները, իսկ աշխատասենեակի սեղանի վրայ՝ ցածացրած և լուսամիտով սահմանափակուած լամպը լուսաւորում էր միմիայն ցիր ու ցան ձեռագրերը և բազկաթոռում նստած տիկին Դելօբէլի կերպարանները։

Դէպքերի գլխում, որ այժմ երան սովորականից թեթև էր թւում, յանկարծ մոքերի ու յիշողութիւնների մի սաստիկ խառնուրդ սկսուեց։ Իր կեանքի ամենահեռաւոր կէտերը կարծես մօտեցել էին նրան։ Մանկութեան ամենաչնչին դէպքերը, այնպիսի իրողութիւններ, որ այն ժամանակ չէր կարողացել հասկանալ, կարծես երազում լսուած խօսքեր՝ հանդէս էին եկել այժմ նրա մոքի առաջ։

Խեղճ աղջիկը մնացել էր ապշած ու սարսափած։ Նա չը գիտէր, որ մահուան պատճառած վերջնական չքացումից առաջ՝ մարդիկ յաճախ ունենում են տարօրինակ գերագրգռման այդպիսի մի բոպէ, որպէս թէ մարդուս ամբողջ էութիւնը յուսահատօրէն լարում է իր բոլոր ընդունակութիւնները և այժերը հատուկանալ։ Կարծես երազում լսուած խօսքեր՝ հանդէս էին եկել այժմ նրա մոքի առաջ։

Իր անկողնից նա տեսնում էր հօրն ու մօրը, մէկին՝ իր կողքին, միւսին՝ արհեստանոցում, որի դուռը բաց էին թողել։ Տիկին Դելօբէլը մեկնուել էր իր բաղկաթոռում՝ վերջապէս ուշադրութեան արժանացած երկարատև յոգնածութեան էքստազի։ Ժամանակը ու տառապանքը թողնում են պառաւած դէմքերի վրայ, տխրագին ու անջինջ երևում էին քնի մեղկութեան մէջ։ Ցերեկուայ ընթացքում՝ մարդուս կամքը և հոգսերը մի տեսակ դիմակ են դնում դէմքի իսկական արտայայտութեան վրայ։ Բայց գիշերը տալիս է դէմքերին նրանց իսկական տեսքը։ Այդ բոպէին՝ պարզ երևում էին այդ կորովի կնոջ խոր կնճիռները, կարմրած կոպերը, քունքերի մօտ դանդաղացած ու սպիտակած մազերը և կծկուած յոգնատանջ ձեռքերը։ Եւ Դէդիրէն տեսաւ այդ բոլորը։ Մոքան կ'ուզէր նա այժմ ունենալ վեր կենալու և համբուրելու մօր սիրուն ու անգործ ճակատը, որ ակօսուած էր կնճիռներով, բայց մնում էր յատակ։

Իրը կատարեալ հակապատկեր, կիսապայծառ դռան միջով երևում էր հաշակաւոր Դելօբէլը, որ նստած էր իր սիրած գիրքերից մէկը ընդունած։ Երկաթի չափով դարձած դէպի

սեղանը ծածկող սպիտակ սփռոցը, նա ընթերք էր անում և միևնոյն ժամանակ աչքի անցնում մի գրքոյկ, որ դէմ էր տուել լրի չլին։ Մեծ մարդը նոր էր վերադարձել,—երևի, հէնց նրա ոտնաձայնն էր զարթեցրել հիւանդին,—և, դեռ բոլորովին յուզուած մի գեղեցիկ ներկայացման շարժումից ու աղմուկից, մէն-մենակ ընթրում էր լրջօրէն ու հանդիսաւոր կերպով, սրբուած իր նոր սիւրտուկի մէջ, անձեռոցիկը կզակի տակից ամրացրած, մաղերը ունելիքով խուճուճ դրած։

Առաջին անգամ իր կեանքում Դէդիրէն նկատեց այդ զարմանալի ներհակութիւնը իր ուժասպառ մօր մէջ, որի անշնորհ սև շորերը կարծես էին ընկնում վրայից, աւելի ևս նիհար ու մաշուած ցոյց տալով նրան, և իր երջանիկ, մսում կորած, անգործ, հանդիստ ու անհոգ հօր մէջ։ Մի հայեացքով նա հասկացաւ այդ երկուսի կեանքի տարբերութիւնը։ Այն սովորութիւնների չրջանակը, որի առանձնայատուկ լոյսին, վերջ ի վերջոյ, ընտելանում են երեխաների աչքերը, այնպէս որ նրանք դադարում են այլ ևս շատ պարզ տեսնելուց, չքացել էր նրա համար։ Այժմ նա որոշ տարաձութիւնից էր դատում իր ծնողների մասին, կարծես թէ անդգալի կերպով հեռանալով նրանցից։ Վերջին ժամուայ այդ պարզատեսութիւնն էլ մի նոր տանջանք էր նրա համար։ Ի՞նչ էր լինելու նրանց վիճակը իր մահից յետոյ։ Կամ մայրը աշխատելու է ուժից վեր ու մեռնելու ուժասպառութիւնից, կամ թէ խեղճ կինը ստիպուած է լինելու հրաժարուել որ և է աշխատանքից և նրա եռական կողակիցը, որ միշտ զբաղուած է իր թատրոնական սնափառութեամբ, թողնելու է, որ նրանք երկուսով փոքր առ փոքր խրուեն ծայրայեղ աղքատութեան մէջ, այդ սև գուբի մէջ, որ՝ որքան մարդ աւելի է իջնում՝ այնքան աւելի լայնանում է ու խորանում։

Եւ սակայն նա չարասիրտ մարդ չէր, նա այդ ապացուցել էր նրանց՝ շատ անգամ։ Միայն թէ նա բոլորովին կուրացած էր և ոչ մի բան չէր կարողացել փարատել այդ կուրութիւնը... Իսկ եթէ ինքը փորձէր։ Եթէ նախ քան չունչը փչելը,—սիրտը վկայում էր, որ այդ շուտով կը լինի,—եթէ նախ քան չունչը փչելը ինքը պոկէր այն հաստ ակնոցները, որ այդ խեղճ մարդը կամաւ և զօրով պահում էր իր աչքերի վրայ։

Միմիայն իր ձեռքի նման թեթև, սիրագին ձեռք կարող էր փոքձել պոկել այդ կապը։

Ինքը միայն իրաւունք ունէր ասելու հօրը.

—Հայր վատակիր... Ձեռք քաշիր թատրոնից։

Եւ որովհետև պէտք էր շատպել, Դէդիրէ Դելօբէլը դինուեց իր ամբողջ քաջութեամբ և մեղմ ձայնով կանչեց.

—Հայրիկ... հայրիկ...

Աղջկայ ձայնը լսելուն պէս մեծ մարդը վազէվազ եկաւ նրա մօտ։ Այդ երեկոյ մի առաջնակ ներկայացում էր եղել Ամբիգիւ Թատրոնում և նա վերադարձել էր այնտեղից բորբոքուած, էլեքտրացած։ Ջահերը, ծափհարները, խօսակցութիւնները միջանցքներում, այն բոլոր զրգռիչ մանրամասնութիւնները, որոնցով անունդ էր առնում նրա մոլութիւնը, այդ օրը աւելի էին յափշտակել նրան, քան երբ և իցէ։

Նա մտաւ Դէզիրէյի սենեակը, ճաճանչափայլ ու վեհ կերպարանքով, լամպը ձեռքին ուղիղ բռնած և մի կամելիա խրած կոճակի մէջին։

—Բարի երեկոյ, Զիզի։ Քնած չես ուրեմն։

Եւ նրա խօսքերի ուրախ եղանակը տարօրինակ կերպով հնչեց այդ տխուր շրջապատի մէջ։

Դէզիրէն ձեռքով նշան արեց նրան, որ լռի, ցոյց տալով, որ մայրը քնած է։

—Վայր դրէք լամպը... խօսելիք ունեմ ձեզ հետ։

Նրա ձայնը, որ խղճում էր յուզմունքից, զարմացրեց հօրը, նոյնպէս և աչքերը, որոնք լայն բացուած էին և ինչ-որ սրամտութեան հայեացքով էին նայում, հայեացք, որ նա երբէք չէր տեսել աղջկայ աչքերում։

Մի քիչ շփոթուած այդ բանից, նա մօտեցաւ հիւանդին, կամելիան պատրաստ բռնած նրան տալու համար, բերանը կլոր կուչ ածած և նոր կօշիկների ճռճռոցով, որ նա շատ արիստոբռնազբօսիկ էր, և այդ առաջանում էր անշուշտ այն չափազանց մեծ հակապատկերից, որ կազմում էին փայլուն և աղմկալից Թատրոնական դահլիճը, որտեղից նա նոր եկել էր, և հիւանդի այդ փոքրիկ սենեակը, ուր խլացրած ձայները և ցածրած լամպերի լոյսը չքանում էին տենդոտ մթնոլորտի մէջ։

—Ի՞նչ է պատահել, հոգեակս... Վատ ես զգում քեզ։

Դէզիրէն իր փոքրիկ ու գունատ գլխի թեթև շարժումով պատասխանեց, որ յիրաւի վատ է զգում իրան և կ'ուզէր խօսել նրա հետ բոլորովին մօտիկից։ Երբ որ հայրը մօտեցաւ նրա գլխավերևին, նա դրեց իր կրակի պէս վառուող ձեռքը մեծ մարդու բազուկին և շշնջաց նրա ականջին... Նա շատ վատ էր զգում իրան, չափազանց վատ։ Նա շատ լաւ հասկանում էր, որ այլ ևս երկար չէ ապրելու։

—Այն ժամանակ, հայրիկ, դուք բոլորովին մենակ կը մնաք մայրիկի հետ... Ինչու՞ էք դողում այդպէս... Դուք գիտէք, որ այսպէս պէտք է լինի, որ նոյն իսկ չուտով է լինելու։

այսպէս... Միայն թէ ես ուզում եմ ձեզ ասել... իմ մահից յետոյ, վախենում եմ, որ մայրիկը չը կարողանայ մենակ պահել տունը... Տեսէք, ինչպէս դունատ ու յոգնած է նա։

Դերասանը նայեց իր «սուրբ կնոջ» վրայ և կարծես սաստիկ զարմացաւ, տեսնելով, որ յիրաւի դէմքը շատ անառողջ էր։ Յետոյ նա մխիթարեց ինքն իրան նկատելով եսականօրէն.

—Նա շատ էլ առողջ չի եղել երբէք...

Այդ նկատողութիւնը և այն եղանակը, որով նա արեց այդ նկատողութիւնը, զայրացրին Դէզիրէյին և նրան ամրապնդեցին իր վճռի մէջ։ Նա չարունակեց, առանց աչքառելու խնայել դերասանի մտապարանքներին.

—Ի՞նչ է լինելու ձեր երկուսիդ վիճակը իմ մահից յետոյ... Այո, ես դիտեմ, որ դուք մեծ յոյսեր էք տածում, բայց ահա պրքան տարի է նրանք չեն իրագործուում։ Այն, ինչ որ դուք այդքան երկար ժամանակ սպասում էք, կարող է էլի ուշանալ, թիւկ ինչ պէտք է անէք դուք մինչև այն ժամանակ... Լսէք, սիրելի հայրիկ, ես չէի ուզի ձեզ ցաւ պատճառել, բայց ինձ թուում է, որ ձեր հասակում և ձեր խելքով դուք հեշտութեամբ կարող էիք... Պ. Ռիսլէր աւագը, վստահ եմ, ամեն կերպ կարողանայ...

Նա խօսում էր դանդաղ կերպով, ճիգ գործ դնելով, բարձրանալ ուներ վնտռելով, երկար լռելով ամեն մի նախադասութիւնից յետոյ, յուսալով, որ իր կիսատ թողածը կը լրացնի հայրը մի շարժումով, մի բացականչութեամբ։ Բայց դերասանը չէր հասկանում նրա միտքը։ Նա ականջ էր դնում, նայում էր նրան կոկոն աչքերը լայն բացած, անորոշ կերպով զգալով, որ այդ անմեղ ու անողոք մանուկի խղճից ինչ որ մեղադրանք է բարձրանում իր դէմ. սակայն նա չը գիտէր, թէ ինչ մեղադրանք է այդ։

—Ինձ թուում է, որ դուք լաւ կ'անէիք,—անհամարձակ շարունակեց Դէզիրէն,—ինձ թուում է, որ դուք լաւ կ'անէիք, եթէ հրաժարուէիք...

—Հ՞ը... ինչ... ինչպէս...

Հիւանդը կանգ առաւ տեսնելով, թէ ինչ ապաւորութիւն գործեցին հօր վրայ իր խօսքերը։ Ծեր դերասանի շարժուն դէմքը յանկարծ կծկուեց սաստիկ յուսահատութիւնից, և կոկիծը պատեցին հօր վրայ իր խօսքերը։ Ծեր դերասանի շարժուն դէմքը յանկարծ կծկուեց սաստիկ յուսահատութիւնից, և կոկիծը պատեցին աչքերը, որ աչքերը լցուեցին արտասուքներով, իսկական արցունքներով, ինչպէս անում են բեմում խաղում ծածկել ձեռքի կոնակով, ինչպէս ուրեմն նրա թշուառականը սկսում էր հասկանալ... Այդպէս ուրեմն նրա փառքից երես էր թեքում մեկը այն երկու անձնաւորութիւնից

ներից, որոնք նրա տաղանդի միակ հաւատարիմ երկրպագուներն էին մնացել։ Իր աղջիկը այլ ևս չէր հաւատում նրա տաղանդին։ Բայց չէ, այդ անկարելի բան էր։ Նա, անշուշտ, լաւ չէր լսել, լաւ չէր հասկացել... Ինչից լաւ կը լինի որ նա հրաժարուի, թող ասի տեսնենք... Բայց Դէգիրէն սիրտ չարեց վերջացնել իր ասելիքը, տեսնելով հօր համր հայեացքը, որ խնդրում էր խնայել իրան։ Բայի այդ, խեղճիկի ոյժերը և շունչը սպառուում էին արդէն։

Նա չընչաց երկու, երեք անգամ.

—Եթէ հրաժարուէիք... հրաժարուէիք...

Յետոյ նրա փոքրիկ գլուխը վայր ընկաւ բարձի վրայ, և նա մնաց, առանց սիրտ անելու ասել հօրը, թէ ինչից լաւ կը լինէր որ նա հրաժարուէր...

III

—

Մի ոմն Դելօբէլը մնաց, պ. Թաղապետ։ Ես որ ասում էի, թէ նա այլ ևս չի կրկնի։ Այս անգամ մահը ազատեց նրան փողոցներով գնալու նեղութիւնից։ Ինքը եկաւ նրան տանելու։ Եւ ահա, թերահաւատ մարդ, սոճիի չորս տախտակներ, մեխերով պինդ ամրացրած, գրաւական են ձեր առաջ նրա խոստման համար։ Նա խոստացաւ չը կրկնել այլ ևս, և չի կրկնի։

Կաղիկը մնաց։ Այդ էր ամենանոր լուրը Ֆրան-Բուրժուա Թաղում, ուր իրարանցում էր ընկել այդ ախուր դէպքի շնորհիւ։ Ի հարկէ, Դէգիրէն չէր կարող շատ ժողովրդական լինել այնտեղ, քանի որ երբէք տանից դուրս չէր գալիս և շատ ուշ էր երևում տխրատես պատուհանում իր ճգնաւորական դուռնատութեամբ և անխոնջ աշխատաւորներին յատուկ կապտածիր աչքերով։ Բայց հռչակաւոր Դելօբէլի աղջկայ Թաղմանը անշուշտ շատ դերասաններ կը լինէին, իսկ Փարիզը պաշտում է դերասաններին։ Նա սիրում է տեսնել ցերեկը, արևով, փողոցների մէջ անցնելիս՝ իր երեկոյեան կուռքերին. ուզում է դիտել նրանց իսկական կերպարանքները, ազատ՝ բեմի դերընական պայմանների ազդեցութիւնից։ Եւ յերաւի, այդ առաւօտ, մինչ Բուաբ փողոցի փոքրիկ ու նեղ դռան վերին մասը պատում էին սպիտակ պատառներով, մուրճի ուժգին հարուածներով ամրացնելով մեխերը, հեռաբրբիր բաղմութիւնը լցուել էր մայթերի և սալայատակի վրայ։

Պէտք է արդարն ասել, դերասանները սիրում են միանց, կամ գոնէ արհեստակցութեան կապ, հաւասարութիւն կայ մէջները, որ նրանց համախմբում է ամեն անգամ, երբ պէտք է լինում մի ցոյց անել,—երեկոյթների, նուագահանդէսների, ընկերակցական ճաշերի, թաղումների ժամանակ։

Թէպէտ և հռչակաւոր Դելօբէլը այլ ևս տեղ չունէր թատրոնում, թէպէտ և նրա անունը աւելի քան տասնըհինգ տարուց ի վեր բոլորովին անհետացել էր թատրոնական քննադատութիւններից և յայտարարութիւններից, բայց բաւական էր, որ մի երկտող յայտարարութիւն տպուէր մի անշան թատրոնական թերթում, թէ՝ Մեցի եւ Ալանսօցի բատրոնների նախկին դերասան Դելօբէլը վճռական որոշ եւ այլն... Համախմբուելու են եւ այլն, որպէս զի Փարիզի բոլոր անկիւններից և հեռաւոր ծայրերից դերասանները խումբ-խումբ շտապէին այդ կոչին։

Ցայտնի ու անյայտ, հռչակաւոր ու անհռչակ, բոլորը այդտեղ էին, նրանք, որոնք խաղացել էին Դելօբէլի հետ գաւառներում, նրանք, որոնք հանդիպում էին նրան թատրոնական սրճարաններում, ուր նա մէկին էր այնտեղ միշտ տեսնուող այն դէմքերից, որ դժուար է կապել մի անուան հետ, բայց որոնք միշտ յիշւում են շնորհիւ այդ միջավայրի, որի մէջ միշտ ապրում են նրանց և որի մի մասն են նրանք կազմում։ Վերջապէս, անցողակի Փարիզում գտնուող գաւառական դերասաններ, որոնք եկել էին այնտեղ մի թատրոնական ճարելու, նպաստաւոր հրաւէր ստանալու համար։

Եւ ամենքը, թէ անյայտները, թէ հռչակաւորները, թէ Փարիզեցիները, թէ գաւառացիները, մի հոգս ունէին միայն,—մի որ և է լրագրում կարդալ իրանց անունը Թաղման տեղեկագրութեան մէջ։ Որովհետև այդ մնափառ արարածների համար բաղձալի են յայտնի դառնալու բոլոր ձևերը։ Նրանք այնքան վախենում են, թէ հասարակութիւնը սկսում է մոռանալ իրանց, որ այն միջոցին, երբ նրանք բեմ չեն դուրս գալիս, պահանջում են զգում խօսեցնել տալ իրանց մասին, յիշեցնել տալ իրանց դոյութիւնը ամեն տեսակ միջոցներով Փարիզի յեղյեղուկ և վաղանցուկ ժողովրդական կարծիքին։

Ժամի ինից ի վեր, Մառէի բոլոր մանր Թաղականները,—այդ՝ գաւառացիներին յիշեցնող բամբասաէր բազմութիւնը,—պատուհաններում, դռներում, փողոցում խռնուած սպասում էին դերասանների անցնելուն։ Արհեստանոցներում բանողները Դիտում էին իրանց լուսամուտների փոշոտ ապակիների միջով, մանր բուրժուաները իրանց խաչմերուկ գցած վարագոյրների բացուածքից, տանտիրուհիները՝ զամբիւղները կռներին, արհեստաւոր աշակերտները՝ ծրարները գլուխներին։

Վերջապէս նրանք եկան՝ որը ոտով, որը կառքով, ոմանք մենակ, ոմանք խմբով։ Նրանց հեշտ էր ճանաչել նրանց ածիլուած, կղակի ու թշերի կողմը կապտաժեռ՝ դէմքերից, նրանց անբնական, չափազանց փքոցուռոյց կամ չափազանց պարզ ձևերի։

ւերից, արհեստական շարժումներից, և մանաւանդ այն ծայրայեղ սանտիմենտալութիւնից, որ նրանց մէջ զարգանում է հնորհիւ այն չափազանցեցման, որ անհրաժեշտ է բեմական տպաւորութեան համար։ Ճիշտ որ շատ հետաքրքրական էր դիտել այն տարբեր ձևերը, որով այդ պարոնները արտայայտում էին իրանց յուզմունքները այդ տխուր դէպքի առիթով։ Իւրաքանչիւր դերասանի մուտքը մեռելատան խճաքարած ու մութ բակը կարծես բեմելը լինէր և տարբերւում էր նայելով դերասանի ամպլուային։ Առաջնակարգ ուժեղ դեր խաղացողները, չարագոյժ դէմքով, խոժոռած յօնքերով, բոլորն էլ, բակը մտնելիս, ձեռնոցի ծայրով սրբում էին աչքերի անկիւնից կախ ընկած արցունքը, որ այլ ևս անկարող էին պահել, յետոյ հառաչում էին, նայում էին երկնքին, և մնում էին կանգնած բեմի, այսինքն բակի մէջտեղում, գլխարկները դէմ տուած աղդրներին, թեթևակի խփելով գետնին ձախ ոտները, որ նպաստում էր նրանց զսպել իրանց վիշտը.—«Լռիր, լռիր, սիրտ իմ»։ Կոմիկները, ընդհակառակը, բեմելը կատարում էին բոլորովին հասարակ կերպով։ Նրանք մօտենում էին իրար խղճուկ ու բարեհոգի կերպարանքով, միմեանց «հալեոր» էին անուանում, բարեւելիս ուժգին կերպով թափահարում էին իրար ձեռք, մինչ այատակները թուլամորթ կերպով դողդողում էին, աչքերի անկիւնները ու շրթունքների ջհակները կախ էին ընկնում, որ փարսի տափակութիւն էր տալիս նրանց խանդաղատանքին։

Բոլորն էլ սեթևեթ և բոլորն էլ անկեղծ...

Բակը մտնելուն պէս այդ պարոնները բաժանուեցին երկու բանակի։ Հռչակաւոր, բախտաւոր դերասանները արհամարհանքով էին նայում անյայտ ու փնթի Ռօբրիկարներին, որոնց նախանձոտութիւնը պատասխանում էր այդ արհամարհանքին հաղար ու մի կծու նկատողութիւններով,—«Տեսել էք, ինչպէս է այս ինչը ծերացել, այժից ընկել... Այլ ևս չի կարող երկար ժամանակ պահել իր ամպլուան»։

Հռչակաւոր Դըլօբէլը ոտից գլուխ սևազգեստ ու սև ձեռնոցներով, գնում գալիս էր մի խմբից միւսը, կարմրատակած աչքերով, հուպ տուած ատամներով և լուռ սղմելով սրա նրա ձեռքը։ Տնաւորի սիրտը լէքն էր արցունքներով, բայց այդ չէր խանգարել նրան դէպքի առիթով խուճուճ դնել տալ մազերը և յետևից էլ բախտ բաց անել տալ á la Capoule։ Օտարոտի բնաւորութիւն։ Ոչ ոք չէր կարող, նրա հոգու խորքը թափանցելով, ասել, թէ որտեղ է այն կէտը, ուր վերջանում է իսկական վիշտը և սկսւում ցուցամոլութիւնը,—այն ատիճան նրանք խառնուած էին իրար հետ... Դերասանների խմբի մէջ էին նաև մեր

ծանօթներից մի քանիսը. պ. Շէբը, որ աւելի քան երբէք վեհ կերպարանք էր ընդունել և զբաղկոտ շտապողութեամբ պտոյտ էր գալիս համբաւաւոր դերասանների շուրջը, մինչ տիպոյտ էր գալիս համբաւաւոր դերասանների շուրջը, մինչ տիկին Շէբը մնացել էր վերևում վշտահար տիկին Դըլօբէլի մօտ։ Սիդոնին չէր կարողացել գալ, բայց այնտեղ էր Ռիսլէր աւագը, դրեթէ նոյնքան յուզուած, որքան պ. Դըլօբէլը, բարի Ռիսլէրը, վերջին ժամուայ բարեկամը, որ յանձն էր առել տխուր ծէսի ամբողջ ծախսը։ Այդ էր պատճառը, որ սգակառքերը հիանալի էին, պաստառները՝ արծաթածոլ և դիպաստրդը՝ ծածկուած սպիտակ մանիշակներով ու վարդերով։ Բռաք փողոցի այդ խղճուկ ու մութ դաւիթում՝ մոմերի լոյսով ցոլացող այդ համեստ սպիտակ փունջերը, այդ դողդողուն և օրհնուած ջրով սրսկած ծաղրիկները՝ շատ նմանում էին այդ խեղճիկի բախտին, որի ամուսնացուները՝ շատ նմանում էին այդ խեղճիկի բախտին, որի ամուսնացուները՝ նաչնչին ժպիտները միշտ ողողուած էին եղել արցունքներով։

Յուղարկաւորութիւնը շարժուեց, քայլ առ քայլ, դանդաղօրէն, Մառէյի ծուռ ու մուռ փողոցներով։

Ամենից առաջ գնում էր Դըլօբէլը, որ ցնցւում էր հեկեկանքներից, դրեթէ նոյնքան խանդաղատուելով ինքն իր վրայ, որքան իր մեռած աղջիրը։ Ղաւակը թաղող անբախտ հօր վրայ, որքան իր մեռած աղջկայ վրայ, և իր անկեղծ վշտի խորքում պահպանելով իր մշտական սնափառ ընաւորութիւնը, որ մնում էր այնտեղ, ինչպէս մի քար առուակի յատակում, անշարժ՝ յեղյեղուկ ալիքների տակ։ Ծէսի հանդիսաւորութիւնը, յուղարկաւորութեան սև շարքը, որ անցնելիս կանգնեցնում էր փողոցային երթևեկութիւնը, սնապաքոյ կառքերը, Ռիսլէրների փոքրիկ կառքը, որ Սիդոնին ուղարկել էր հանդէսին շուք տալու համար, այդ բոլորը չոյում էր նրա ինքնասիրութիւնը, զմայլեցնում էր նրան, չը նայելով նրա անկեղծ վշտին։ Վերջապէս, չը կարողանալով այլ ևս դիմանալ, նա կռացաւ դէպի Ռօբրիկարը, որ գնում էր նրա կողքով, և ասաց.

—Տեսա՞ր։

—Ի՞նչ։

Եւ մեռելի դժբախտ հայրը, աչքերը սրբելով, չկնչաց ոչ առանց հպարտութեան.

—Երկու սեփական կառք կայ...

Խեղճիկ Զիլի, որ այնքան բարի էր միշտ ու այնքան պարզասիրտ։ Նրան չէր սազում ամենեին այդ մարդկանց ցուցամոլ Վիշտը, այդ հանդիսաւոր լալկանների չքախումբը։

Բարեբախտաբար, վերևում, արհեստանոցի պատուհանի առաջ, փակուած վանդակափեղկերի յետևում, կանգնած էր տիկին Դըլօբէլի մեծ աղջիկը, որ ամենից առաջ, փակուած վանդակափեղկերի յետևում, կանգնած էր տի-

կին Դելիբէլը, որին չէին կարողացել խանգարել նայելու իր աղջկայ յուղարկաւորութեանը։

—Մնաս բարե՛... մնաս բարե՛... չչնչալով ասում էր խեղճ մայրը, գրեթէ ինքն իր հետ խօսելով և թափ տալով ձեռքը ծերունու կամ խենթի անդիտակից շարժումով։

Բայց որքան էլ մեղմ ձայնով ասէր նա այդ հրաժեշտի ողջոյնը, Դէլիբէ Դելիբէլը չէր կարող չը լսել։

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ

I

Փոքրիկ կապուտակ մարդու Ֆանտասիական առասպելը։

Ձեր գործն է, կարող եք չը հաւատալ, բայց ես հաստատ հաւատում եմ փոքրիկ կապուտակ մարդու գոյութեանը։ Ասէք՝ տեսած լինեմ նրան, չէ, չեմ տեսել երբէք, բայց իմ բարեկամներից մէկը, մի բանաստեղծ, որին ես վերաբերւում եմ ամենայն վստահութեամբ, ինձ շատ անգամ պատմել է, որ ինքը մի գիշեր դէմ առ դէմ հանդիպել է այդ տարօրինակ փոքրիկ գնուկին, և ահա թէ ինչ հանգամանքներում։

Իմ բարեկամը սխալուել էր ու իր գերձակին մուրհակ էր տուել և ինչպէս բոլոր վատ երևակայութեան տէր մարդիկ, Թուղթը ստորագրելուն պէս՝ իրան պարտքից ազատուած էր համարել ու բոլորովին մոռացել մուրհակի մասին։ Արդ, մի գիշեր մեր բանաստեղծը վեր է թռչում քնած տեղից մի տարօրինակ աղմուկ լսելով իր ծխնելոյզի մէջ։ Նա կարծում է սկզբում, թէ այդ մի սառած ճնճղուկ կը լինի, որ ուզում է տաքանալ հանդած կրակի գոլ շոգիում, կամ թէ հողմացոյցը կը լինի, որ ճռճռում է փոփոխական քամուց։ Բայց մի քիչ անց աղմուկը սաստկանում է և նա պարզ ջոկում է փողերի քսակի ճրընգ-ճրընգոց ու ինչ որ շղթայի չքիչքիկոց։ Միևնոյն ժամանակ նա լսում է, որ մի բարակ ու սուր ձայն, նման շոգեկառքի հեռաւոր սուլոցին, և պարզ, ինչպէս աքլորականչը, գոռում է երան կտուրի վերևից. «Պայմանաժամը... պայմանաժամը»։

—Օ՛խ, Տէր իմ Աստուած... մուրհակս,—ասում է ինքն իրան խեղճ բանաստեղծը, յիշելով յանկարծ, որ գերձակի պարտքի ժամանակը լրանում է մի շաբաթից յետոյ, և մինչև

առաւօտ մի կողքից միւսն է դառնում, քուն փնտռելով իր անկողնի բոլոր խորշերում և քնի տեղ գտնելով միմիայն այդ անիծած մուրհակի պատճառած մտատանջութիւնը։

Միւս օրը, երկրորդ օրը, հետևեալ բոլոր գիշերները նա զարթնում էր նոյն ժամին և նոյն ձևով. դարձեալ փողերի զրընգոցը, շղթայի չըխչըխկոցը և բարակ ու սուր ձայնը, որ աղաղակում էր, քմծիծաղ տալով. «Պայմանաժամը... պայմանաժամը»։ Ամենասարսափելին այն էր, որ քանի պայմանաժամի օրը մօտենում էր, ձայնը աւելի սուր ու ահեղ էր դառնում, լի սպառնալիքներով, թէ գոյքը կը գրեն և դատարանի կը դիմեն։

Խեղճ բանաստեղծ. բաւական չէին ցերեկուայ յոգնութիւնները, ամբողջ քաղաքը ոտնատակ տալը մի քիչ փող ճարելու համար. այժմ էլ պէտք է այդ անգութ ձայնը գար նրան քնից ու հանգստից զրկելու։ Բայց ո՞ւմը կարող էր լինել այդ ֆանտաստիկական ձայնը։ Ո՞ր չարանենգ էակը կարող էր այդպէս զուարճանալ նրան նահատակելով։ Նա ուզում էր պարզել այդ հարցը։ Եւ ահա, մի երեկոյ, փոխանակ պառկելու, նա հանդցնում է ճրագը, բանում է պատուհանը և նստած սպասում։

Կարիք չը կայ ձեզ ասելու, որ իրը քնատերդակ բանաստեղծ, իմ բարեկամը ապրում էր շատ բարձր սենեակում, կըտուրների բարձրութեամբ։ Մի քանի ժամ շարունակ նա ոչինչ չէր տեսնում բացի այդ իրար սղմուած, իրար կոթնած տանիքների դեղանկար տարածութիւնից, որ ամեն ուղղութեամբ կարտուած էր վիթխարի անդունդների նման փողոցներով և որին քմահաճ զանազանակերպութիւն էին տալիս լուսնի շողքից ցոլքին տուող ծխնելոյզներն ու կատարները։ Ներհած ու խաւարամած Փարիզի վերևում այդ տարածութիւնը կարծես մի երկրորդ քաղաք լինէր, մի օդային քաղաք, առկախ ու սաւառուն՝ խաւարի դատարկութեան և լուսնի չլացուցիչ շողքի արանքին։

Իմ բարեկամը երկար սպասում է։ Վերջապէս, առաւօտուայ դէմ, ժամի երկուսին կամ երեքին, երբ խաւարի մէջ ցըցուած բոլոր զանգակատները սկսեցին իրար հաղորդել ժամը, մի թեթև քայլ լսուաւ նրա մօտով սանդղքների կղմինդրների ու հերձաքարերի վրայով, և մի բարակ ու սուր ձայն սուլեց նրա ծխնելոյզի խողովակով «Պայմանաժամը, պայմանաժամը...» Այս ժամանակ մեր բանաստեղծը, մի քիչ կռանալով, տեսաւ անիծած սատանաճուտին, որ տանջում է մարդկանց և մի չարաթից

ի վեր չէր թողնում, որ նա քնի։ Նա չը կարողացաւ լինձ հաստատ բասել, թէ ինչ հասակ ունէր այդ սատանաճուտը,—լուսնի բաները ով է հասկանում, երբեմն այնպիսի ֆանտաստիկական չափսեր է տալիս առարկաներին ու նրանց ստուերներին, որ մարդ մնում է սպասած։ Նա այնքանն էր նկատել միայն, որ այդ տարօրինակ դեմքը հագնուած էր բանկի փոքրաւորների նման,—կապոյտ ֆրակ արծաթէ կոճակներով, ծալովի գլխարկ, երիզաւոր թեքեր,—և որ նա կոնատակին ունէր գրեթէ իր մեծութեամբ կաշուէ թղթակալ, որի բանալին, որ կախուած էր մի երկար շղթայից, սաստիկ զրնգում էր ամեն քայլափոխին, ինչպէս և փողի տոպրակը, որ նա թափահարում էր միւս ձեռքով։ Այդպէս է ահա երևացել իմ բարեկամի աչքին փոքրիկ կապուտակ հոգևորը, այն միջոցին, երբ արագ անցնելիս է եղել լուսնի շողքի միջով։ Բարեկամս ասում էր, որ նա շատ վառ ու գրաղկոտ տեսք ունէր և մի անդամից լոք էր տալիս փողոցի այս կողմից այն կողմը ու սլանում էր մի ծխնելոյզից միւսը սլլալով սանդղքների կատարների վրայով։

Շատ մարդ ունէր այցելելու այդ անիծած սատանաճուտը։ Այնքան վաճառականներ կան Փարիզում, այնքան զանազան մարդիկ, որոնք ամսավերջի վճարումներ ունեն, այնքան դըժբախտներ, որոնք պարտամուրհակ են տուել կամ իրանց ստորագրութիւնը դրել մի որ և է փոխանակագրի վրայ։ Այդ ամենքին կապուտակ մարդուկը անցողակի նախազգուշացնում էր իր չարագոյժ աղաղակով։ Նա ուղղում էր այդ աղաղակը գործարաններին, որոնք մութ ու համր էին այդ ժամին, ֆինանսիստների մեծ ապարանքներին, որոնք նիրհում էին իրանց չքեղ պարտեզների խաղաղութեան մէջ, և աղքատ թաղերի խորքերում իրար վրայ կուտակուած անհաւասար ու պէսպէս տանիքներով հինգ ու վեց յարկանի տներին։ «Պայմանաժամը... պայմանաժամը»։ Քաղաքի մի ծայրից միւսը անողորմ կերպով հնչում էր այդ բարակ ու զիլ ձայնը բիւրեղանման մթնոլորտի մէջ, որ առաջանում է բարձունքներում սաստիկ ցրտից ու լուսնի շողքից։ Եւ որտեղով անցնում էր անիծածը, ամեն տեղ փախցնում էր մարդկանց քունը, անհանգստութիւն էր գցում մարդկանց սիրտը, յոգնեցնում էր մտքերն ու աչքերը, անքնութեան ու սրտնեղութեան անորոշ սարսուռ էր ազդում Փարիզի տներին, ներքևի յարկից սկսած մինչև ամենավերին յարկը։

Ինչ ուզում էք մտածեցէք այդ առասպելի մասին, բայց յամենայն դէպս, ի հաստատութիւն իմ բարեկամի պատմածին, ես կարող եմ հաւաստիացնել ձեզ, որ մի գիշեր, յունուար ամսի

վերջերքին, Ֆրոմոն կրասեր և Ռիսլեր աւագ առևտրատան ծերունի գանձապահ Սիգիզմունդը քնից վեր թռաւ Մոնռուժում, իր փոքրիկ բնակարանում, նոյն քմծիծաղ ձայնից, նոյն շղթայի ջլխջլխկոցից և նոյն չարագոյժ աղաղակից.

«Պայմանաժամը»...

—Իրաւ որ,—մտածեց հալեսրը դէք նստելով անկողնում, —վաղը չէ միւս օր ամսի վերջն է... Եւ ես դեռ սիրտ ունեմ քնելու...

Արդարև, մեծ գումար էր հարկաւոր ամսավերջին. պէտք էր վճարել հարիւր հազար ֆրանկ երկու մուրհակով և այն էլ այնպիսի ժամանակ, երբ առաջին անգամ երևան տարուց ի վեր Ֆրոմոնների առևտրատան մնդուկը անպայման դատարկ էր։ Ի՞նչ պէտք է անէին։ Սիգիզմունդը մի քանի անգամ փորձել էր խօսել այդ բանի մասին Ֆրոմոն կրասերի հետ, բայց նա կարծես փախուստ էր տալիս գործերի ծանր պատասխանատուութիւնից, և գրասենեակով անցնում էր միշտ վազ-վազ, միշտ տենդոտ, առանց տեսնելու և լսելու, թէ ինչ է կատարւում իր շուրջը։ Գանձապահի անհանգիստ հարցերին, նա պատասխանում էր, բարակ բեղերը կրծելով.

—Լաւ, լաւ, սիրելի Պլանիւս... Մի անհանգստացէք... Ես կը կարգադրեմ...

Բայց այդ ասելիս նրա կերպարանքը պարզ ցոյց էր տալիս, որ նրա միտքը բոլորովին ուրիշ բանով է զբաղուած և հաւանաբար մղոն հեռու է այդ գործերից։ Գործարանում, ուր նրա սիրային կապը տիկին Ռիսլերի հետ այլ ևս գաղտնիք չէր ոչ ոքի համար, շշուկ էր տիրում, թէ Սիգոնին դաւաճանում է նրան և բոլորովին անբախտ մարդ է դարձնում, և, յիրաւի, սիրուհու խենթութիւնները նրան շատ աւելի էին զբաղեցնում, քան իրանց գանձապահի անհանգստութիւնը։ Ինչ վերաբերում է Ռիսլերին, նրան երբէք չէին տեսնում. նա ամբողջ ժամանակը փակուած էր լինում վերնատանը, ուր հսկում էր իր մեքենայի խորհրդաւոր և անվերջանալի պատրաստութեանը։

Տէրերի այդ անտարբերութիւնը գործարանի գործերի նկատմամբ, հսկողութեան այդ կատարեալ բացակայութիւնը՝ փոքր առ փոքր կաղմալուծութեան էին հասցրել ամեն ինչ։ Բանուորներն ու ծառայողները ինչ՝ ուզում էին՝ անում էին, ուշ էին գալիս աշխատելու, շուտ էին ձլկում, առանց ուշք դարձնելու հինաւուրց զանգակին, որ, այնքան տարիներ աշխատանքը զեկավարելուց յետոյ, այժմ կարծես արհաւիրքի ու խորտակման կոչ էր հնչեցնում։ Դեռ գործերը լաւ էին գնում, ո-

րովհետև մի անգամ կարգի գցած առևտրատունը ինքն ըստ ինքեան կարող է շարունակել մի քանի տարի իր ընթացքը առանց մղման ոյժի չնորհիւ, բայց ինչ քաջքայումն ու խառնաշփոթութիւն էր տիրում այդ առերևոյթ բարգաւաճութեան տակ։

Սիգիզմունդին այդ աւելի լաւ էր յայտնի, քան ում և իցէ, և ահա թէ ինչու էր նրան քնից վեր թռցրել կապուտակ մարդուկի աղաղակը։ Գանձապահը մոմը վառել էր, կարծես թէ աւելի հեշտ գլուխ հանելու համար իր ուղեղում խռնուող, իրար անցնող ու մրրկուող ցաւոտ մտքերից, և այդպէս անկողնում նստած խորհում էր... Ո՞րտեղից կարող էր գտնել այդ հարիւր հազար ֆրանկը։ Անկասկած իրանց առևտրատանը այդ գումարից աւելի պարտք կը լինէին ուրիշները. հին հաշիւներ էին մնում ընկած յամախորդների մօտ, Պրոշասօնների և ուրիշների ընթացիկ հաշուից էլ մի բան մնում էր. բայց ինչպէս կարող էր նա այնքան ստորանալ, որ գնար հաւաքելու այդ հին պարտքերը։ Բարձր առևտրի մէջ այդպիսի բաներ ընդունուած չէն. չարչի հօ չեն։ Եւ սակայն այդ աւելի լաւ էր, քան եթէ բողոքի տային նրանց մուրհակները... Օ՜հ, այն միտքը, թէ բանկի փոքրաւորը, վստահ ու ապահով կերպարանքով, կը մօտենայ նրա ցանցապատին ու հանգիստ կերպով կը դնի մուրհակները դարակի վրայ, իսկ ինքը, Պլանիւսը, Սիգիզմունդ Պլանիւսը, ստիպուած կը լինի ասելու.

—Ցետ վերցրէք ձեր մուրհակները... Փող չունեմ վճարելու...

Ո՛չ, ոչ։ Այդ անկարելի բան էր։ Բոլոր ուրիշ ստորացումները դերադասելի էին դրանից։

—Վճռուած պրծած է... Վաղը կ'երթամ ժողովարարութեան,—հառաչում էր խեղճ գանձապահը։

Եւ մինչդեռ նա այդպէս այրւում փոթորկւում էր առանց կարողանալու աչք փակել մինչև լոյս, կապուտակ մարդուկը, շարունակելով իր պտոյտը, գնաց թափահարելու իր փողի տոպրակը ու իր շղթան Բօմարշէ բուլվարի մի վերնատան վերևում, ուր Դեզիրէյի մնռնելուց յետոյ տեղափոխուել էին ապրելու հռչակաւոր Դըլօրէլն ու իր կինը։

«Պայմանաժամը. պայմանաժամը...»

Աւաղ, խեղճ կաղիկի զուշակութիւնը ճիշտ դուրս եկաւ։ Նրա մահից յետոյ տիկին Դըլօրէլը չը կարողացաւ երկար ժամանակ շարունակել մօդային թաչնիկների ու ճանճերի գործը։

Աչքերը փչացել էին արտասուքից և պառաւած դողդոջուն ձեռքերը չէին կարողանում այլ ևս ուղղահայեաց ցցել կօշիկներին, որոնք, չը նայելով նրա բոլոր ջանքերին, ողորմելի ու տխուր տեսք էին ունենում։ Պէտք էր թողնել այդ գործը։ Այն ժամանակ այդ կորովի կինը սկսեց կարուձևով պարապել։ Ժանեակներ, աղեղագործեր էր կարկատում և քիչ-քիչ իջնում էր հասարակ շանուոր կնոջ դրութեան։ Բայց նրա շարունակ նուաղող վաստակը հազիւ էր բաւականանում անտեսութեան ամենագլխաւոր անհրաժեշտութիւններին, և Դըլօբէլը, որին իր in partibus (անպաշտօն) դերասանի անիծեալ կոչումը ստիպում էր անվերջ ծախսեր անել, արդէն սկսել էր ընկնել պարտքերի մէջ։ Նա պարտական էր իր դերձակին, կօշկակարին, շապկակարին, բայց նրան ամենից շատ անհանգստացնողը այն երևելի նախաճաշներն էին, որ նա ապառիկ կերել էր բուլվարի ճաշարանում իր թատրոնապետութեան միջոցին։

Հաշիւը հասնում էր երկու հարիւր յիսուն ֆրանկի, որ պէտք էր վճարել յունուարի վերջին, և այս անգամ այլ ևս ամենևին յոյս չը կար, որ թոյլ տային պայմանաժամը նորից յետաձգել։ ուստի հասկանալի է, որ կապուտակ մարդուկի աղաղակը սարսուռ գցեց նրա ամբողջ մարմինը...

Մի օր է միայն մնում մինչև պայմանաժամը։ Միմիայն մի օր՝ երկու հարիւր յիսուն ֆրանկ գտնելու համար։ Եթէ նա չը գտնի այդ գումարը, նրանց տան մէջը ամբողջապէս կը ծախեն։ Կը ծախեն այդ՝ տուն դնելու օրից միենոյնը մնացած խղճուկ, գծուծ ու անյարմար կահ-կարասիները, որոնք քաղցր են, սակայն, չնորհիւ այն յիշողութիւնների, որոնք կապուած են նրանց հետ։ Կը ծախեն մօդային թռչնիկների ու ճանճերի երկարուկ սեղանը, որի վրայ նա ընթերել է քսան տարի շարունակ։ Կը ծախեն Զիզիի մեծ բազկաթոռը, որին չէին կարողանում առանց արցունքի նայել և որ կարծես իր մէջ պահել էր մի բան այն քաղցր էակից, նրա շարժումներից, դիրքից և նրա երաշանքի ու աշխատանքի երկար օրերի յոգնածութիւնից։ Տիկին Դըլօբէլը վշտամահ կը լինէր անշուշտ, եթէ այդպէս չքանային այդ քաղցր յիշողութիւնները...

Մտածելով այդ բանի մասին, թշուառ դերասանը, որին իր հասատակչի եսականութիւնը այնուամենայնիւ միշտ չէր կարողանում պաշտպանել խղճի խայթոցներից, շուտ էր գալիս անկելով և շարունակ աչքի առջևը տեսնելով Դէզիրէյի մանրիկ ու

գունատ կերպարանքը, այն պաղատական ու քնքոյշ հայեացքով, որ նա անձկօրէն դարձնում էր դէպի ինքը մահուան բոպէին, երբ մեղմիկ ձայնով խնդրում էր նրանից հրաժարուել... հրաժարուել... Ինչից էր ուզում որ իր հայրը հրաժարուի։ Նա մեռաւ առանց այդ ասելու, բայց Դըլօբէլը այնուամենայնիւ մի քիչ հասկացել էր նրա միտքը, և այն օրից սկսած այդ անսիրտ բնաւորութեան մէջ ներս էր թափանցել մի տեսակ վերդոմմունք ու կասկած, որ այժմ, այս գիշերային պահին, տանջում էր նրան, խառնուելով փողի հոգսի հետ...

«Պայմանաժամը... պայմանաժամը»...

Այս անգամ պ. Շէբի ծիծաղելիությունն էր լսում կապուտակ մարդուկի չարագոյժ աղաղակը։

Պէտք է ձեզ ասել, որ մի ժամանակից ի վեր պ. Շէբը ձեռնարկել էր խոշոր վաճառականական գործեր, սկսել էր պարապել շատ անորոշ, չափազանց անորոշ «ոսկեկայ» առևտրով, որ շատ փող էր կլանում նրանից։ Արդէն մի քանի անգամ Ռիսլէրն ու Սիդոնին ստիպուած էին եղել վճարել իրանց հօր պարտքերը այն խիստ պայմանով, որ այնուհետև նա հանգիստ կը մնայ, էլ գործեր չի սկսի, բայց այդ մշտական սուզումները անհրաժեշտ էին նրա գոյութեան համար։ Նա ամեն անգամ ջրի երեսն էր անում աւելի մեծ կորովով, աւելի ևս եռանդուն գործունէութեան պատրաստակամութեամբ։ Փող չունեցած ժամանակը իր ստորագրութիւնն էր տալիս պ. Շէբը. նա նոյն իսկ սարսափելի ի չարն էր գործ դնում իր ստորագրութիւնը, յոյս դնելով միշտ, թէ ձեռնարկութեան օգուտից կը տայ պարտքերը։ Այդ, հակառակի նման, օգուտ երբէք չէր երևում, մինչդեռ ստորագրած մուրհակները ամբողջ Փարիզում մի քանի ամիս պտոյտ գործելուց յետոյ, յուսահատեցնող ճշտապահութեամբ վերադառնում էին տուն բոլորովին սնացած շրջագայութեան ժամանակ վրան կիտուած հիերոգլիֆներից։

Յունուարի տալիքն էլ շատ խոշոր գումար էր, և լսելով կապուտակ մարդուկի ձայնը, նա յիշեց յանկարծ, որ ոչ մի սու չունէր վճարելու համար։ Այդ քեզ խայտառակութիւն։ Պէտք էր նորից ստորանալ Ռիսլէրի առաջ, մերժման վտանգին ենթարկուել, խոստովանել, որ խոստմնազանց է եղել... Այդ մտածմունքների ազդած ցաւը աւելի ևս սաստկանում էր չնորհիւ գիշերային խաղաղութեան, ուր աչքը անդրադ է և ուշքը ոտիթ չունի ցրուելու, և հորիզոնական դիրքից, որ, կատարեալ անշարժութիւն տալով մարմնին, անպաշտպան միտքը մատնում է իր երկիւղներին ու հոգ-

սերին։ Բոլէն մի անգամ պ. Շէբը վառում էր լամպը, լրագիր վերցնում ձեռքը և զուր ջանք գործ դնում կարդալու, ի մեծ տհաճութիւն տիկին Շէբի, որ անքում էր կամաց ձայնով և լոյսը չը տեսնելու համար, շուռ էր գալիս պատի կողմը։

Եւ այդ միջոցին դժոխային կապուտակ արարածը, հիացած իր չարանենգութիւնից, քմծիծաղ տալով գնում էր մի ուրիշ տեղ զնդզնդացնելու իր փողի տոպրակն ու շղթան։ Ահա նա Վիյէլզոդրիէտ փողոցում, մի մեծ գործարանի վերևում, ուր բոլոր պատուհանները մութն են, բացի մէկից, պարտէզի խորքում, առաջին յարկում...

Չը նայելով, որ շատ ուշ էր, Ժօրժ Ֆրօմօնը դեռ չէր պառկել քնելու։ Կրակի առաջը նստած, գլուխը երկու ձեռքով բռնած, այնպիսի կոյր ու համր կենտրոնացման մէջ, որ ազդում են անուղղելի դժբախտութիւնները, նա մտածում էր Սիդոնիի մասին, որ քնած էր այժմ վերևի յարկում։ Այդ կինը ուղղակի դժուացնում էր նրան։ Նա հաստատ համոզուած էր, որ Սիդոնին դաւաճանում է իրան՝ Կաղաբօնի կոչուող տուլուզացի ատենօրի հետ, որ մուտք էր գործել նրանց մօտ շնորհիւ տիկին Դօբսօնի։ Որքան ժամանակ է՝ նա աղաչում է Սիդոնիին չընդունել այլևս այդ մարդուն, բայց Սիդոնին ականջ չէ դնում նրան, և հէնց այսօր, մի մեծ պարահանդէսի առիթով, որ տալու էր շուտով, նա կտրական կերպով յայտնեց Ժօրժին, որ ինչ էլ լինի հրաւիրելու է իր ատենօրին։

—Ուրեմն ձեր սիրեկանն է նա,—գոռաց Ժօրժը բարկացած ու աչքը նրա աչքերին յառած։

Սիդոնին չէ չասաց. նա նոյն իսկ երեսը շուռ չը տուեց, միայն թէ սաստիկ սառնութեամբ և իր զզուելի թեթև ժպիտով յայտարարեց նրան, որ ինքը ոչ ոքի իրաւունք չի տուել դատելու իր արածները կամ արդեօք հանդիսանալու նրանց և որ ինքը ուզում է ազատ լինել ու նրան էլ, ինչպէս Ռիսլերին, թոյլ չի տալ բռնակալ դառնալ իր գլխին։ Նրանք այդպէս մի ամբողջ ժամ անց էին կացրել փակ ու պատուհանների վարագոյրները իջեցրած կառքում, իրար հետ վիճելով, միմեանց վիրաւորանքներ հասցնելով, գրեթէ ծեծկուելով։

Ո՞վ կարող էր հաւատալ, որ նա այդ կնոջ համար զոհել էր ամեն ինչ, իր կարողութիւնը, պատիւը, մինչև իսկ աքանչելի կլերին, որ այժմ իր երեխայի հետ քնած էր կողքի սենեակում, այդ երջանկութիւնը, որ պատրաստ նրա ձեռքի մէջն էր և որ նա արհամարհել էր այդ անզգամի համար... Եւ այժմ այդ կինը յայտնում էր նրան, որ ինքը չի սիրում նրան և որ

սիրահարուած է մի ուրիշի վրայ։ Իսկ ինքը վատաբար դեռ սիրում էր նրան։ Ինչով էր նա կախարդել նրան։

Լի զայրոյթով, որ եռում էր նրա ամբողջ էութեան մէջ, Ժօրժ Ֆրօմօնը վեր թռաւ տեղից ու սկսեց տենդային կերպով քայլել սենեակում, և նրա քայլերը հնչում էին համր տան լռութեան մէջ իբրև մի մարմնացած անքնութիւն... Իսկ այն ատենը մէջ իբրև մի մարմնացած անքնութիւն՝ իր անխղճակիցը քնած էր վերևում։ Նա քնած էր հանգիստ՝ իր անխղճակիցը քնաւորութեան արտօնութեամբ։ Ո՞վ գիտի, գուցէ և մտածում էր իր կաղաբօնի մասին։

Երբ այդ բանը անցնում էր Ժօրժի մտքով, նրա մէջ խոլ ցանկութիւն էր ծագում բարձրանալ վերև, զարթեցնել Ռիսլերին, ամեն ինչ ասել նրան և կորուստի մատնել իրան ու Սիդոնիին։ Ի՞նչ տխմար մարդ էր այդ խաբուած ամուսինը։ Ինչու չէր կարդին հսկում կնոջը։ Այդպիսի սիրուն, մանաւանդ այդպիսի արատաւոր կին ունենալիս պէտք է անպատճառ աչքը վրան պահել։

Եւ հէնց այդ ժամանակ, երբ նա մտատանջւում էր այդ դաժան ու ապարդիւն հոգսերով, յանկարծ կապուտակ մարդուկի չարագոյժ աղաղակը հնչեց քամու աղմուկի մէջ։

«Պայմանաժամը... պայմանաժամը...»

Թշուառ մարդ։ Սիրուհու դէմ զայրացած, նա բոլորովին մոռացել էր արել այդ։ Եւ սակայն նա վաղուց գիտէր, որ մոտենում է յունուարի այդ սարսափելի ամսաւերջը։ Քանի-քանի անգամ, երկու ժամադրութիւնների արանքում, այն միջոցներին, երբ նրա միտքը, մի բոլոր ազատուելով Սիդոնիից, սկսում էր զբաղուել գործերով և կեանքի իրականութեամբ, քանի-քանի անգամ նա ասել էր ինքն իրան. «Այդ օրը մեր կործանման օրն է լինելու»։ Բայց ինչպէս միշտ, երբ մարդիկ ապրում են՝ հարբածի նման անճնատուր եղած զառանցանքների, այնպէս էլ այս դէպքում նրա թուլամորթութիւնը նրան մտածել էր տալիս, թէ շատ ուշ էր եղածը ուղղելու համար, և նա իսկոյն և եթ գլխից հանում էր այդ հոգսերը և աւելի ևս սաստիկ էր անճնատուր լինում իր անառակ մտքերին, որպէս զի մոռացութիւն գտնէր նրանց մէջ։

Բայց այդ բոլորին այլ ևս հնար չը կար մոռացութիւն գտնելու։ Նա պարզ ու որոշ տեսնում էր իր կործանումը, և Սիգիզմունդ Պլանիւսի չոր ու լուրջ կերպարանքը ցցւում էր նրա առաջ իր՝ կարծես բրիչով քանդակուած գծերով, որոնց դաժանութիւնը չէր մեղմանում ոչ մի արտայայտութեամբ, և իր գերմանաչվէյցարացու ճղրիկ աչքերով, որոնք մի ժա-

մանակից ի վեր հալածում էին նրան իրանց անողոք հայեացքով...

Բայց նա չունի այդ պահանջուած հարիւր հազար ֆրանկը, և չը գիտի՝ որտեղից կարող է գտնել։ Վերջին վեց ամիսները, իր սիրուհու աւերիչ քմահաճոյքների համար փող ձեռք բերելու յոյսով, սաստիկ շատ էր խաղացել և ահագին գումարներ տարուել։ Այդ բաւական չէր, աւելացաւ բանկիրներից մէկի մանակացումը և իրանց ողորմելի հաշուեկշիռը... Միմիայն գործարանն էր մնում նրան, այն էլ ինչ սարսափելի վիճակի մէջ։

Ո՞ւր գնար այժմ, ինչ անէր։

Այն, ինչ որ մի քանի ժամ առաջ նրան թւում էր մի քաոս, մի մրրիկ, ուր ոչինչ չէր կարելի այլ ևս որոշակի տեսնել և որի խառնաշփոթութիւնը այնուամենայնիւ մի փոքրիկ յոյս էր նրա համար, նրան երևում էր այժմ սոսկալի պարզութեամբ։ Դրամարկղը դատարկ, դռները՝ փակ, մուրհակները բոլորի ենթարկուած, առևտրական տունը աւերուած։ Ահա թէ ինչ էր տեսնում նա, որ կողմից էլ որ նայէր գործին։ Եւ որովհետև այդ բոլորի վրայ աւելանում էր և Սիդոնիի դատաճանութիւնը, թշուառականը, գլուխը կորցրած ու չիմանալով ձեռքը ինչին գցի այդ ահռելի նաւաբեկութեան ժամանակ, յանկարծ մի ցաւագին աղաղակ, մի հառաչանք արձակեց, կարծես թէ նախախնամութեան դիմելով։

—Ժորժ, Ժորժ, ես եմ... Ի՞նչ է պատահել քեզ։

Նրա առաջ կանգնած էր կինը, կինը, որ այժմ ամեն գիշեր սպասում էր նրան, կարօտագին աչք էր պահում ճանապարհին, մինչև որ վերադառնար ժողովարանից, որովհետև խեղճը դեռ ևս կարծում էր, թէ այնտեղ է նա անց կացնում երեկոները։ Տեսնելով, որ ամուսինը փոխուում է, մռայլանում է օրէցօր, Կլէրը միտք էր անում, թէ երևի նա փողի նեղութիւն ունի, թէ անշուշտ մեծ գումար է տարուել թղթախաղում։ Նրան ասել էին, որ մարդը շատ է խաղում, և չը նայելով այն անտարբերութեանը, որով Ժորժը վերաբերուում էր նրան, նա անհանգստանում էր նրա պատճառով, ուզում էր, որ նա յայտնի նրան իր գաղտնիքը, առիթ տայ նրան մեծահոգութիւն ու քնչչութիւն ցոյց տալու։ Այս գիշեր նա լսում էր, որ ամուսինը շատ ուշ ժամանակ քայլում է իր սենեակում։ Եւ որովհետև աղջիկն էլ միւս կողմից սաստիկ հազում էր և ամեն բոպէ խնամք էր պահանջում, նա բաժանել էր իր հոգսերը երեխայի և հօր տանջանքների մէջ, և մնացել էր նստած, ականջը սրած

բոլոր շշուկներին և անճատուր եղած գորովալից ու վշտալից անքնութեան, որպիսի վիճակի մէջ կանայք հաւաքում են իրանց ամբողջ կորովը իրանց բաղմապատիկ պարտականութիւնների ծանր բեռը կրելու համար։ Վերջապէս, երեխան քուն եղաւ և մայրը, լսելով ամուսնու հեկեկանքը, վազ տուեց նրա սենեակը։

Օ՜հ, երբ նա տեսաւ կնոջը իր առաջ, այնքան քնքոյշ, այնքան յուզուած և այնքան գեղեցիկ, ինչ սարսափելի խղճի խայթոցներ, թէև ուշ, զարթնեցին նրա մէջ։ Այո՛, նա ինքն էր, նրա մտերիմ կողակիցը։ Ի՞նչպէս էր կարողացել ինքը լքանել նրան։ Երկար, շատ երկար ժամանակ նա լուռ ու մունջ լաց եղաւ կնոջ ուսին յենած։ Եւ շատ լաւ էր, որ նա չէր կարողանում խօսել, ապա թէ ոչ նա ամեն ինչ, ամեն ինչ կ'ասէր։ Թշուառականը պահանջ էր զգում սիրտը բանալու, անդիմադրելի բաղձանք՝ ինքն իրան մեղադրելու, ներողութիւն խնդրելու, նուաղեցնելու խայթոցների ծանրութիւնը, որ խորտակում էր նրա սիրտը։

Կլէրը աղատեց նրան խօսելու նեղութիւնից։

—Անպատճառ թուղթ ես խաղացել, տարուել ես, չէ՞... և երևի շատ։

Նա գլխով դրական նշան արեց, իսկ յետոյ երբ կարող եղաւ խօսել, նա խոստովանեց, որ ինքը հարիւր հազար ֆրանկի պէտք ունի վաղը չէ միւս օրը և չը գիտէ որտեղից ճարել այդ գումարը։

Կլէրը ոչ մի յանդիմանութիւն չարեց նրան։ Նա այն անհատներից էր, որոնք դժբախտութեան առաջ մտածում են միայն օգնելու մասին առանց ում և իցէ դատապարտելու։ Իր սրտի խորքում նա նոյն իսկ օրհնում էր այդ աղէտը, որ մարդուն մօտեցնում էր նրան և մի կապ էր դառնում իրանց դոյութիւնների մէջ, որոնք այն ատիճան անջատուած էին երկար ժամանակից ի վեր։ Նա մտածեց մի բոպէ և կայացնելով իր մէջ մի վճիռ, որ շատ ծանր էր նրա համար, նա ասաց.

—Դեռ ճար կարելի է անել։ Ես վաղը կ'երթամ Սավինի Գարդինուա պապից խնդրելու այդ փողը։

Ժորժը երբէք չէր համարձակուել խօսել նրա հետ այդ բանի մասին։ Նրա մտքովն անգամ չէր կարող անցնել այդ։ Կլէրը այնքան հպարտ էր, իսկ ծեր Գարդինուան այնքան րիրտ։ Շատ մեծ զոհ էր այդ, որ Կլէրը յանձն էր առնում նրա համար, սիրոյ վայելուն ապացոյց նրա կողմից։ Ժորժին յանկարծ տիրեց սրտի այնպիսի ջերմութիւն, այնպիսի ցնծութիւն, որ ամ-

ռաջ է գալիս վտանգը անցնելուց յետոյ։ Կլէրը թուում էր նրան, իբր մի գերբնական էակ, որ բարութեան և հանգստացման շնորհք ունէր, ինչպէս միւսը, այն վերևինը, խենթացնելու և քայքայելու շնորհք ունէր։ Նա ուրախութեամբ ծունկ կը չոքէր այդ գեղեցիկ դէմքի առաջ, որ շրջապատուած էր գիշերուայ համար հիանալի հիւսուած սև ծամերի շրջանով, իբր փայլուն կապտաւուն լուսապսակով, և որի դէմքի փոքր ինչ խիստ կանոնաւորութիւնը փարատուում էր քնքշութեան հրաշալի արտայայտութիւնից։

—Ո՞րքան բարի ես... Կլէր։

Առանց ոչինչ պատասխանելու, Կլէրը տարաւ նրան դէպի իրանց երեխայի օրօրոցը։

—Համբուրիր փոքրիկին... ասաց նա մեղմօրէն։

Նրանք կանգնած էին օրօրոցի մօտ իրար կողքի, փաթաթուած վարագոյրի շղարշի մէջ, գլուխները խոնարհած այդ խաղաղուած, բայց դեռ ցաւից փոքր ինչ հեւացող փոքրիկ շնչի վրայ, և Ժօրժը վախեցաւ զարթեցնի =ղկան ու մոլեգին համբուրեց կնոջը։

Դեռ երբէք կապուտակ մարդուկի երևումը այդպիսի աղդեցութիւն չէր գործել որ և է ընտանիքում։ Սովորաբար որ տեղով անցնում է այդ զարհուրելի սատանաճուտը, նա բաժանում է իրարից ձեռքերը և սրտերը, հեռացնում է մտքերը ամենասիրելի էակներից և զարթեցնում նրանց մէջ հազար ու մի հոգսեր ու ահեր, հնչեցնելով կտուրների վրայ իր շղթան և իր չարագոյժ աղաղակը։

«Պայմանաժամը... պայմանաժամը...»

II

Մերկացումներ։

—Օ՜հ, պարոն Սիդիզմունդը... Հը՞, ինչպէս էք, քեռի Սիդիզմունդ։ Ի՞նչպէս են ձեր գործերը... Լաւ են։

Ծերունի գանձապահը բարեհոգի կերպարանքով ժպտում էր, սղմելով գործարանատիրոջ և նրա կնոջ ու եղբօր ձեռքը, և խօսելով հանդերձ հետաքրքրութեամբ դիտում էր իր շուրջը։ Սէնտ-Անտուանումն էր այդ, Պրօշասօնների որմաթղթի գործարանում, որի մրցութիւնը արդէն վտանգաւոր էր դառնում Ֆրօմօնների առևտրատան այդ նախկին գործակատարները չատ փոքր չափերով էին սկսել գործը և հետզհետէ կարողացել էին իրանց համար դիրք ստեղծել վաճառականոցում։

Ժօրժի հօրեղբայրը երկար ժամանակ օգնել էր նրանց իր վարկով, իր փողով. դրա շնորհիւ բարեկամական յարաբերութիւններ էին հաստատուել այդ երկու առևտրատների մէջ և մի հաշիւ էր մնացել,—տասը, տասնհինգ հազար ֆրանկի,—որ վերջնականապէս չէին մաքրել Ֆրօմօնները, իմանալով, որ փողը ապահով տեղ է։

Գործարանը արդարև հիմնաւոր տեսք ունէր։ Ծխնելոյզները հպարտ-հպարտ թափ էին տալիս իրանց շոգիէ բաշերը։ Աշխատութեան խուլ աղմուկից երևում էր, որ արհեստանոցները լիքն են ու եռուն։ Շինութիւնները լաւ էին սարքուած, ապակիները ջինջ էին, առհասարակ ամէն ինչ աչքոյժ, ղուարթ ու կարգապահ տեսք ունէր, և դանձարանի ցանցապատի յետևում եղբայրներից մէկի կինը, պարզ հագնուած, հարթ սանրած մազերով, երիտասարդ դէմքի հեղինակաւոր արտայայտութեամբ, նստած ուշի ուշով հաշուում էր թուանշանների մի երկար շարք։

Սրտի խորքումը դառնութեամբ էր մտածում ծերունի Սիդիզմունդը այն տարբերութեան մասին, որ կար, մի կողմից, նրանց և Ֆրօմօնների՝ երբեմն այնքան փարթամ, իսկ այժմ միմիայն իր նախկին հռչակով գոյութիւն չարունակող առևտրատան և, միւս կողմից, իր առջևը եղած հիմնարկութեան յարաճուն բարգաւաճման մէջ։ Նրա խուզարկու հայեացքը անտղում էր այդ հիմնարկութեան ամենամանր խորշերը, փնտռելով մի պակասութիւն, քննադատելու մի կէտ, և որովհետև ոչինչ չէր կարողանում գտնել, սիրտը ճմլուում էր և ժպիտը կեղծութեան ու չիմաստունում դանել, սիրտը ճմլուում էր և ժպիտը կեղծութեան ու չիմաստունի արտայայտութիւն էր ստանում։

Նրան ամենից շատ դժուարացնողը այն էր, թէ ինչ ձեով ուղէր իր պատրօնների հասնելիք փողը, որ Պրօշասօնները չը նկատէին նրանց դրամարկղի նեղ դրութիւնը։ Խեղճ ալեորը աշխատում էր աղատ ու անհոգ կերպարանք ընդունել, բայց մարդու մեղքը գալիս էր վրան նայելիս... Իրանց գործերը լաւ էին գնում... շատ լաւ... Պատահմամբ անցնելիս էր եղել այդ կողմերով և մտել էր նրանց մօտ... Դրանից էլ բնական ինչ կարող է լինել։ Մարդ կարօտում է հինաւուրց բարեկամներին։

Բայց այդ յառաջաբանները, այդ հետզհետէ աւելի ու աւելի մանուածապատ խօսքերը չէին մօտեցնում նրան ուզած հարցին, այլ, ընդհակառակը, հեռացնում էին հարցից, իսկ յետոյ, երբ նրան թուաց, թէ զարմանքի արտայայտութիւն է երևում իր ունկնդիրների աչքում, նա բոլորովին չչկլուեց, սկսեց կմկմալ, գլուխը կորցրեց և, իբրև փրկութեան վերջին միջոց,

գլխարկը վերցրեց ու այնպէս ցոյց տուեց, թէ գնում է։ Երբ հասաւ դռանը, յանկարծ մտաբերեց.

—Հա, լաւ միտքս ընկաւ, քանի որ եկել եմ...

Եւ նա աչքով արեց, կարծելով, թէ շատ խորամանկ արտայայտութիւն է տալիս դէմքին, մինչդեռ իսկապէս խղճալի կերպարանք ստացաւ։

—Քանի որ եկել եմ, լաւ չէր լինի, որ մի քիչ մաքրէինք մեր հին հաշիւները։

Երկու եղբայրները և հաշուեսեղանի յետևը նստած ջահել կինը մի վայրկեան իրար երեսի նայեցին, չը հասկանալով նրա ասածը.

—Հաշիւները։ Ի՞նչ հաշիւներ։

Ցեռոյ երեքն էլ միաժամանակ սկսեցին ծիծաղել ի բոլոր սրտէ, կարծես թէ ծերունի գանձապետը սաստիկ թունդ կատակ արած լինէր։ Ինչեր ասես չի ասի այդ քեռի Պլանիւսը... Եւ խեղճ Պլանիւսը ինքն էլ ծիծաղում էր հետները։ Ծիծաղում էր, առանց ծիծաղը գալու, այլ միայն նրանց պէս արած լինելու համար։

Վերջապէս բացատրուեց հարցը։ Ինքը Ֆրօմոն կրտսերը, վեց ամիս առաջ, եկել էր վերցրել նրանց մօտ մնացած փողը։

Սիդիզմունդը զգաց, որ ծնկները ծալւում են։ Սակայն նա քաջութիւն ունեցաւ ասելու.

—Ախ, ճիշտ որ. բոլորովին մոռանալ էի արել... Չէ, մոռացկոտ եմ դարձել... Երևում է, որ շատ եմ ծերացել, որդիքս...

Եւ ալևորը դուրս գնաց սրբելով աչքերը, ուր դեռ փայլում էին արցունքներ մի փոքր առաջ արձակած քրքիջից։ Իսկ նրա յետևից Պրոշասօնները թափ էին տալիս գլուխները, նայելով իրար երեսի։ Նրանք հասկացել էին։

Ստացած հարուածը այնպէս էր շշմացրել գանձապետին, որ դուրս գալուն պէս սոխպուած եղաւ նստել մի նստարանի վրայ։ Ահա թէ ինչու ժօրժը այլ ևս փող չէր վերցնում դրամարկղից։ Նա ինքն էր հաւաքում իրանց հասանելիք փողերը։ Ուրիշ տեղերում էլ նոյնը պէտք է լինէր, ինչ որ Պրոշասօնների մօտ։ Ուրեմն բոլորովին անօգուտ էր ենթարկուել նոր ստուգումների։ Այո, ճիշտ է, բայց պայմանաժամը, պայմանաժամը... Այդ միտքը այժ տուեց նրան։ Նա սրբեց իր քրտնաթոր ճակատը և շարունակեց ճանապարհը, վճռելով մի անգամ էլ բախտը փորձել, մանելով նոյն արուարձանում գտնուող իրանց պարտապաններից մէկի մօտ։ Սակայն այս անգամ որոշ նախազգուշութիւններ ձեռք առաւ և ներս չը մտած, չէմքիցը գոռաց գանձապետին.

—Բարև, քեռի այս ինչ... Մի բան ունեմ ձեզնից հարցնելու...

Եւ, ջղաձգաբար սղմած ձեռքով դուռը կիսաբաց պահելով, շարունակեց.

—Ե՞րբ ենք մաքրել մեր վերջին հաշիւը։ Մոռացել եմ մատեանը գցել։

Օ՜, վաղուց, շատ վաղուց էին մաքրել հաշիւը։ Ֆրօմոն կրտսերի ստացականը սեպտեմբերին էր գրուած։ Հինգ ամիս էր անցել։

Դուռը ձեռաց փակուեց։

Այդ էլ երկու։ Անշուշտ միևնոյն բանն էր լինելու ամենուրեք։

«Ա՜խ, պարոն Շօրշ, պարոն Շօրշ...» շշնջում էր խեղճ Սիդիզմունդը, և մինչ նա այդպէս շարունակում էր իր չրջապտուութիւնը, տիկին Ֆրօմոն կրտսերի կառքը անցաւ ուղղակի նրա կողքով, դիմելով դէպի Օռլէանեան կայարանը. բայց Կլերը չը տեսաւ ծերունի Պլանիւսին, ինչպէս մի քիչ առաջ տանից դուրս գալիս չէր տեսել պ. Շերին իր նրկար սիւրտուկով, ոչ էլ հաչակառոր Դելօբէլին իր ծալովի ցիլինդրով, պայմանաժամի այդ երկու այլ զոհերին, որոնք, զանազան կողմերից գալով, միաժամանակ ծանցին Վիյեյլզօդոիէտ փողոցը։ Նպատակակէտ ունենալով գործարանը և Ռիսլէրի քսակը։ Խեղճ կինը այնքան զբաղեցին նայելու։

Մտածեցէք։ Ի՞նչ սարսափելի դրութիւն էր։ Գնալ հարիւր հազար ֆրանկ խնդրելու Գարդինուայից, մի մարդուց, որ պարծենում էր, թէ երբէք իր կեանքումը ոչ պարտք է վերցրել, ոչ պարտք տուել, որ տեղի անտեղի պատմում էր, թէ մի անգամ միայն սոխպուած լինելով հօրից քառասուն ֆրանկ խնդրել մի կրկնավարտիք առնելու համար, նա վերադարձրել էր նրան այդ քառասուն ֆրանկը փոքրիկ դումարներով։ Ամենքի, նոյն իսկ իր գերդաստանի վերաբերմամբ ծերունի Գարդինուան հետևում էր այն կծծիութեան աւանդութիւններին, որ հողը, դաժան և յաճախ իր մշակողների նկատմամբ ապերախտ հողը կարծես պատուաստում է բոլոր գիւղացիներին։ Ծերունու համար վճռած բան էր, որ քանի ինքը կենդանի է, իր վիթխարի կարողութիւնից մի չիւղ անգամ չի անցնելու իր գերդաստանի ձեռքը։

—Երբ որ մեռնեմ, այն ժամանակը կարող են տիրանալ իմ գոյքին,—ասում էր նա յաճախ։

Այդ սկզբունքի հիման վրայ, նա մարդու էր տուել իր

աղջկան, Կլէրի մօրը, բոլորովին անօժիտ, թէև յետոյ չէր կարողանում նեղել իր փեսային, որ նա հարստացել էր առանց իր օգնութեան։ Որովհետև այդ՝ որքան չահասէր, նոյնքան և անսփոփ բնաւորութեան առանձնայատկութիւններից մէկն էլ այն փափագն էր, որ ամենքը կարօտութիւն ունենան իրանից, խոնարհուեն իր փողի առաջ։ Երբ Ֆրոմօնները հրճւում էին նրա առաջ այն բանից, որ իրանց գործերը սկսում են լաւ գնալ նրա՝ բոլով ծակած սատանայ աչքերը ծիծաղում էին հեգնօրէն և նա այնպիսի եղանակով էր ասում՝ «ամէն բանի վերջն է գովելի», որ մարդ սարսուռ էր զգում։ Երբեմն էլ, երեկոները Սավինիյում, այն ժամանակ, երբ պուրակը, ծառուղիները, դղեակի տանիքի կապտագոյն հերձաքարերը, գոմանոցների կարմրագոյն աղիւսները, լճակները և աւազանները շողշողում էին հրաչալի վերջալոյսի ճաճանչներից, այդ օտարոտի նորելուկը, աչքը չորս կողմը ման ածելուց յետոյ, բարձրաձայն ասում էր իր որդիների ներկայութեամբ.

—Երբ մահս միտս է գալիս, միայն այն է ինձ մխիթարում, որ ոչ ոք մեր ընտանիքից այնքան հարուստ չի լինի, որպէս զի կարողանայ պահել այս դղեակը, որ տարեկան յիսուն հազար ֆրանկ ծախք է պահանջում։

Եւ սակայն այն ծերունական դորովի շնորհիւ, որ նոյն իսկ ամենաչոր ու ցամաք պապերն էլ գտնում են իրանց սրտի խորքում, Գարդինուան ուրախութեամբ կը փայփայէր իր թոռին։ Բայց Կլէրը, գեռ երեխայ ժամանակից, մի անյաղթելի հակակրութիւն էր զգում դէպի այդ նախկին գեղջուկի անսրբութիւնը և պարծենկոտ եսամոլութիւնը։ Իսկ երբ տարբեր դաստիարակութեամբ անջատուած մարդկանց չի կապում սէրը, հակակրութիւնը սաստկանում է հազար ու մի ձևով։ Երբ Կլէրը ամուսնանալու էր Ժորժի հետ, ծերուկը ասել էր տիկին Ֆրոմօնին.

—Եթէ աղջիկդ ուզի, արքայավայել ընծայ կը ստանայ ինձանից. բայց ոչինչ չեմ տայ առանց իր խնդրելու։

Եւ Կլէրը ոչինչ չէր սացել, որովհետև չէր կամեցել խնդրել։

Ո՛րքան ծանր էր այժմ գնալ՝ ապաչելով հարիւր հազար ֆրանկ ուղել այն մարդուց, որի առատաձեռնութիւնը այդպէս արհամարհել էր նա երեք տարի առաջ, գնալ ստորանալ, լսել անվերջ քարոզներ, տխմար ծաղրանքներ, համեմուած գռեհիկ կատակներով և գեղջկային դարձուածքներով, կարճ, բայց տարամբանական մտքերի հնարած այդ ընդհանրապէս ճիշտ ասացուածքներով, որոնք իրանց ռամիկ ոճով վիրաւորում են՝ իբր ստորադաս մարդու նախատինք։

Խեղճ Կլէր։ Ցանձին նրա ստորանալու էին իր ամուսինը և իր հայրը։ Պէտք էր խոստովանել ամուսնու անյաջողութիւնը և իր հայրը։ Պէտք էր խոստովանել ամուսնու անյաջողութիւնը և այն առեւտրատան կործանումը, որ հիմնել էր հայրը և որով հարստացաւ։ Այն ամենքան հպարտ էր նա իր կենդանութեան ժամանակ։ Այն ամենքան հպարտ էր նա իր կենդանութեան ժամանակ։ Այն միտքը, որ նա կարիք էր ունենալու պաշտպանելու այն, ինչ ամենից շատ էր սիրում աշխարհում, կազմում էր նրա ոյժը և միևնոյն ժամանակ նրա թուլութիւնը...

Ժամի տասն և մէկն էր, երբ նա հասաւ Սավինի։ Նա ոչ ոքի խմաց չէր տուել իր գալու մասին, ուստի և դղեակի կառքի խմաց չէր տուել իր գալու մասին, ուստի և դղեակի կառքը չէին ուղարկել կայարանը, այնպէս որ նա ստիպուած էր ոտքով գնալ դղեակը։

Սաստիկ ցուրտ էր և ճանապարհը կոշտացած էր ու չոր։ Քաղաքի ամատարձակ փիշում էր խոպան դաշտերում և տերևաթափ ծառերի ու մացառների միջով անարգել անցնում դէպի գետը։ Ցածր երկնքի տակ ձգուած էր դղեակի պարիսպների և ցանկապատների երկար գիծը, որով նա զատում էր չրջակայ դաշտերից։ Տանիքի հերձաքարերը մթնդել էին իրանց արտացոլատերից։ Տանիքի հերձաքարերը մթնդել էին իրանց արտացոլատերից։ Ցրած երկնքի նման, և այդ ամբողջ հոյակապ ամարանոցը, ուր ձմեռուայ դաժան չնչից ամէն ինչ համրացել էր և ոչ մի տերև չէր երևում ծառերի վրայ ու ոչ մի աղաւնի՝ կատուների վրայ, այնպիսի տեսք ունէր, կարծես ոչ մի կենդանի բան չը կար մէջը բացի աւազանների խոնաւ ծփանքից և բարձրաբուն կաղամախների մրմունջից, որոնք ճկուում էին դէպի իրար, ճօճելով իրանց կատարներում խուճուճ ընկած կաչաղակաբոյները։

Հեռուից տխուր ու մռայլ կերպարանքով էր երևում Կլէրին իր ջահէլութեան տունը։ Կլէրին թուում էր, թէ նա նայում է իր վրայ այն սառը, արիստոկրատ կերպարանքով, որով նա սովորաբար նայում էր մեծ ճանապարհի անցորդներին, որոնք կանգ էին առնում նրա վանդակապատի սրածայր ճաղերի առաջ։

Անչունչ իրերի դաժան կերպարանք։

Բայց չէ, ոչ այնքան դաժան, որովհետև Սավինին իր՝ փակուած տան տեսքով կարծես ասելիս լինէր նրան՝ «Ցեսա գնա... Ներս մի մտիր»... Եւ եթէ Կլէրը լսած լինէր նրան, կը հրաժարուէր իր ծրագրից և խոյսն ի՛ն կը վերադառնար Փարիզ ու կը պահպանէր իր սրտի անդորրութիւնը։ Բայց խեղճիկը չը հասկացաւ տան ասածը և արդէն նիւֆաունդլենդեան ահագին շունը, որ ճանաչել էր նրան ու չոր տերևների միջով ցատքռտելով վազել դէպի նա, չնչում էր հեռուն փակ դարպասի միջով։

—Բարև, Ֆրանսուազ... ո՞ւրտեղ է պապիկը,—հարցրեց Կլէրը։

բը պարտիզպանուհուց, որ եկաւ բանալու դարպասը՝ խոնարհ, շողոքորթ ու գողդոջուն, ինչպէս դղեակի բոլոր ծառաները, երբ իրանց վրայ էին զգում տիրոջ աչքը։

Պապիկը իր գրասենեակումն էր, գլխաւոր շէնքից անկախ մի տաղաւարում, ուր նա ամբողջ օրեր էր անց կացնում քրքրելով իր թղթերի կապոցները, մատեանները և ահագին կանաչարմատ հաշուեդրքերը մի տեսակ դիւանամոլութեամբ, որ յառաջ էր եկել նրա սկզբնական տգիտութիւնից և այն ֆանտաստիկական տպաւորութիւնից, որ նրա վրայ մի ժամանակ գործել էր իրանց գիւղի նոտարի գրասենեակը։

Այդ բոլորին նա փակուել էր այնտեղ իր պահապանի հետ, որ մի տեսակ գիւղական լրտես էր, վարձկան մատնիչ, որ հաղորդում էր նրան կալուածում ու շրջակայքում տեղի ունեցած բոլոր դէպքերը, բոլոր խօսք ու զրոյցները։

Կալուածատէրի սիրելին էր դա։ Նրա անունը Ֆուշինա էր և նրա ճապաղ, խորամանկ ու արիւնռուչտ դուխը բոլորովին համապատասխանում էր այդ անուան *)։

Երբ թոռը ներս մտաւ՝ գունատ ու դողդոջուն իր մուշտակի մէջ, ծերուկը իսկոյն հասկացաւ, որ ինչ որ լուրջ ու արտասովոր բան է տեղի ունեցել, և նշան արեց Ֆուշինային, որ անհետացաւ, սլկուեց կիսաբաց դռնով, կարծես թէ պատուհանի պատի մէջ։

—Հը՞, ինչ է պատահել... ինչու՞ ես այդպէս այլակերպուել։ —հարցրեց պապը՝ նստած իր ահագին գրասեղանի յետևին։

Կլէրը յիրաւի սաստիկ շփոթուած, այլայլուած, այլակերպուած էր։ Սրագ քայլուածքը, դուրսը, այն ճիգը, որ նա գործ էր դրել այդտեղ գալու համար, մի արտասովոր արտայայտութիւն էին տուել նրա դէմքին, որ այնքան ծանր ու անդորր էր լինում սովորաբար։ Չը նայելով որ պապը ամենեին ցանկութիւն ցոյց չը տուեց հետը համբուրուելու, նա գնաց համբուրուեց ու նստաւեց կրակի առաջ, ուր չոր մամուռով պատած ցախը և պուրակի ծառուղիներում հաւաքած խոզակները՝ վառուում էին կենսալից փայլով և հիւթալից ճարճատիւնով։ Կլէրը, առանց ժամանակ կորցնելու նոյն իսկ քողի վրայի եղեամը թափ տալու, անմիջապէս սկսեց խօսել, հաւատարիմ իր վճռին՝ մոռնալուն պէս յայտնել իր այցելութեան շարժառիթը, նախ քան ազդուելը այն երկիւղի և պատկառանքի մթնոլորտից, որ շրջապատում էր պապին, դարձնելով նրան մի տեսակ ահեղ ամուսուածութիւն։

*) Fouine=Թոխոր (մի տեսակ կուզ)։

Լաւ սիրտ էր հաւաքուր չը շփոթուելու, խօսքը չընդհատելու համար այդ սրաթափանց հայեացքի առաջ, որ հէնց առաջին խօսքիցը չարախինդ փայլ ստանալով՝ սեռուել էր նրա վրայ, և այդ վայրագ բերանի առաջ, որի անշարժ անկիւնները կարծես հուպ էին եկել դիտաւորեալ լռութիւնից, յամառութիւնից և ամենաթեթև զգայնութեան բացատրութիւնից։ Կլէրը մի շնչով ասաց բոլորը, լի պատկառանքով, բայց առանց ստոր ցնցման և ծածկելով յուզումը ու հաստատութիւն տալով ձայնին իր խօսքերի մէջ պարունակուող ճշմարտութեամբը։ Մարդ որ նրանց տեսնէր այդպէս դէմ առ դէմ, մէկին՝ սառը, հանդիստ, բաղկաթոռում երկար մեկնուած ու ձեռները մոխրագոյն բամբակոտ կոնի գրպանները խրած, իսկ միւսին՝ ուշագիր իր արտասանած խօսքերի վերաբերմամբ, կարծես թէ այդ խօսքերից ամենաչնչին խօսքի վերաբերմամբ, կարծես թէ ամեն մէկը կարող էր դատապարտել իրան կամ արդարացնել, —երբէք չէր ասիլ թէ պապ ու թոռ են դրանք, այլ կը կարծէր սնոպատճառ, թէ մեղադրեալ է այդ՝ դատական քննիչի առաջ։

Ծերունին հոգով սրտով հրճուում ու հպարտանում էր իր յաղթանակով։ Վերջապէս յաղթուեցին այդ դառող ֆրօմենները։ Ուրեմն դեռ կարողութիւն ունէին ծեր Գարգինուայից։ Մնալ վառուելիքը, նրա այդ դերիչխող յատկութիւնը, ակամայ արտայայտուում էր նրա ամբողջ արտաքինի մէջ։ Երբ Կլէրը խօսքը վերջացրեց, պապը բերանը բաց արեց ու, բնականօրէն, սկսեց «ես հաւատացած էի, որ այդպէս կը լինի... ես ասում էի... ես դիտէի, որ վերջը յայտնի կը լինի...» խօսքերով, և, շարունակելով նոյն գոռհիկ ու վիրաւորական եղանակով, վերջացրեց ասելով, որ «ի նկատի ունենալով իր սկզբունքները, որոնք շատ լաւ յայտնի են իր ընտանիքին», նա չի կարող պարտք տալ ոչ մի սուս։

Այն ժամանակ Կլէրը խօսեց իր մանուկի մասին, իր ամուսնու անուան մասին, որ միևնոյն ժամանակ և իր հօր անունն էր և որ խայտառակուելու էր չնորհիւ մանկութեան։ Ծերունին մնաց նոյնքան սառն, նոյնքան անողոք, որքան և առաջ, և օգտուեց նրա ստորացումից նրան ասելի ևս ստորացնելու համար, որովհետև նա պատկանում էր իսկական գեղջուկների տիպին, որոնք գետին տապալուած թշնամուց չեն հեռանում առանց իրանց ոտնամանների մեխերի հետքը թողնելու նրա երեսին *)։

—Ես քեզ միայն այնքանը կարող եմ ասել, թոռնիկս, որ Սալվինին բաց է ձեր առաջ... Թող մարդ դայ այստեղ։ Ինձ էլ

Ս. Թ.

*) Արևմտեան Եւրոպայում գիւղացիների ոտնամանների կրունկներին մեծ մեխեր են խփուած լինում։

հէնց մի քարտուղար է հարկաւոր։ Ժօրժը քարտուղարութիւն կ'անի և կը ստանայ հազար երկու հարիւր ֆրանկ տարեկան ռոճիկ ու բոլորիդ ապրուստը... Առաջարկիր նրան այս պայմանները իմ կողմից ու վեր կացէք եկէք...

Կլէրը ոտքի կանգնեց զայրացած։ Նա եկել էր իրրև թոռ, իսկ այստեղ նրան ընդունում էին իրրև մուրացկանի։ Փառք Աստուծու, դեռ այդտեղ չէին հասել։

—Կարծում ես,—ասաց պ. Գարդինուան աչքը վայրագ կերպով թարթելով։

Կլէրը, դողդոջուն, դնաց դէպի դուռը առանց պատասխանելու նրան։ Ծերունին նշան արեց, որ կանգնի։

—Զգոյշ կաց. դու չը գիտես, թէ ինչից ես հրաժարւում... Լսում ես, քո օգտի համար էի առաջարկում, որ համոզես մարդուդ գալ այստեղ... Դու չը գիտես, թէ ինչ կեանք է վարում նա այնտեղ... Չը գիտես, ի հարկէ, ապա թէ ոչ չէիր գալ ինձնից փող խնդրելու, որպէս զի իմ փողն էլ գնայ այնտեղ, ուր քոնն է գնացել... Օ՜հ, ինձ շատ լաւ յայտնի են քո հոգեւորի գործերը։ Ես իմ ոստիկանութիւնն ունեմ Փարիզում և նոյն իսկ Անիէրում, ինչպէս Սավիլիում... Ես գիտեմ, թէ այդ սուտ ճգնաւորը որտեղ է անց կացնում գիշեր-ցերեկ, և չեմ ուզում, որ իմ փողերը գնան այնտեղարենք, ուր նա է գնում։ Այդ տեղերը բաւականաչափ մաքուր չեն աղնիւ միջոցներով ձեռք բերած փողերի համար։

Կլէրը զարմացած ու դառնացած չռեց աչքերը, զգալով, որ այդ բոպէին ինչ-որ սարսափելի դրամա էր մտնում իր կեանքի մէջ մատնութեան ցած դռնով։ Ծերունին շարունակեց քմծիծաղ տալով.

—Օ՜օ, շատ փչարարն է այդ Սիգոնին։

—Սիգոնին։

—Ինչ արած, բերնից արդէն դուրս թռաւ անունը... Ասենք, միևնոյնն է, մի օրից մի օր դու անպատճառ իմանալու էիր։ Նոյն իսկ զարմանալի է, որ այսքան ժամանակ... Բայց դուք, կինարմատներդ, սարսափելի մեծամիտ եք... Մաքներովդ շատ գժուար է անց կենում, թէ կարող են ձեզ դաւաճանել... Էհ, այո, Սիգոնին է խժռել մարդուդ փողերը և անչուշտ իր սուտնու համաձայնութեամբ։

Ու անխնայ կերպով պատմեց Կլէրին, թէ որտեղից էր Սիգոնին փող ձեռք բերել Անիէրի ամարանոցի, ձիերի, կառքերի համար և թէ ինչպէս էր կահաւորուած նրանց փոքրիկ ու սիրուն բնակը Գաբրիէլ փողոցում։ Նա ամէն ինչ բացատրում էր տեղն ու տեղին, մանրամասնօրէն։ Պարզ երևում էր, որ, մի

նոր առիթ դանելով իր լրտեսամոլութիւնը գործ դնելու, նա մեծ հաճոյքով օգտուել էր այդ առիթից. թերևս, բայի դրանից, այդ դէպքում անորոշ կերպով դեր էր խաղացել նաև մի խուլ զայրոյթ Սիգոնիի դէմ, մի քէն, որ բղխում էր երբէք չը խոստովանած ծերունական սէրից։

Կլէրը լսում էր առանց բան ասելու, թերահաւատութեան սիրուն ժպիտը երեսին։ Այդ ժպիտը գրգռում էր ծերունուն, խթանում էր նրա չարակամութիւնը... Ա՜խ, դու ինձ չես հաւատում... Ա՜խ, դու ապացոյցներ ես ուզում... Եւ նա տալիս էր ապացոյցներ, կուտակում էր նրանց իրար վրայ, կտրում էր նրա սիրտը դանակով։ Եթէ չի հաւատում, թող գնայ Լա-Պէ փողոցի գոհարավաճառ Դարշի մօտ։ Երկու շաբաթ առաջ ժօրժը այնտեղ մի ադամանդէ վզնոց էր առել երեսուն հազար ֆրանկով։ Սիգոնիի կաղանդչէքն էր այդ։ Երեսուն հազար ֆրանկի ադամանդ՝ անանկանալու բոպէին։

Եթէ ամբողջ օրը խօսէր ծերունին, Կլէրը չէր ընդհատի նրա խօսքը։ Խեղճը զգում էր, որ եթէ ամենաչնչին ձիգ անդամ գործ դնէր, արտասուքը դուրս կը գեղար լցուած աչքերից, իսկ նա, այդ քաղցրիկ, այդ արիասիրտ էակը, ուզում էր ժըպտալ ընդհակառակը, ժպտալ մինչև վերջը։ Միմիայն ժամանակ առ ժամանակ նա նայում էր դէպի ճանապարհի կողմը։ Նա շտապում էր դուրս գալ, փախչել այդ չարասիրտ ձայնի հնչեցնից, որ հալածում էր նրան անդթաբար։

Վերջապէս ծերունին լռեց, ինչ որ ունէր ասելու ասաց։

Կլէրը զլուխ տուեց ու գնաց դէպի դուռը։

—Գնում ես... Ինչու՞ ես այդպէս շտապում... ասաց պապը դուրս գալով նրա յետեւից։

Իսկապէս նա մի քիչ ամաչում էր իր վայրագութիւնից։

—Չեմ ուզում նախաճաշել ինձ հետ։

Կլէրը գլխով չէ ասաց. խեղճը ոյժ չունէր խօսելու։

—Գոնէ սպասիր, որ լծեն... տանեն, կայարան հասցնեն։

Չէ, չէ ու չէ։

Եւ Կլէրը շարունակում էր քայլել, ծերունին էլ նրա յետեւից։

Ճակատը բարձր ու հպարտ՝ Կլէրը անցաւ այդպէս բակով, որ լի էր նրա մանկութեան յիշատակներով, տառնց դէթ մի անդամ յետ նայելու։ Եւ սակայն որքան քաղցր ծիծաղների արձագանքներ, որքան արևի շողքեր էին մնացել իր ջահէլութեան օրերից այդ բակի ամենամանր աւազահատիկների մէջ։ Նրա սիրած ծառը, նստարանը իրանց մշտական տեղումն էին։ Նա ոչ մի հայեացք չը գցեց նրանց վրայ, ոչ էլ թոչնաբոյծ Սիգոնիի դէմ, մի քէն, որ բղխում էր երբէք չը խոստովանած ծերունական սէրից։

նոցի փասիանների, ոչ նոյն իսկ գոմիտոռ Կիսսի վրայ, որ գլուխը քաշ հետեւում էր նրան, սպասելով փաղաքշանքի, որին չարժանացաւ սակայն։ Կլէրը ներս էր մտել այդտեղ իբր այդ տան զաւակ, իսկ դուրս էր գալիս իբր մի խորթ մարդ՝ սարսափելի մտատանջութեամբ, որ միմիայն սատկանալ կարող էր երջանիկ ու անդորր անցեալի ամենաչնչին յիշողութիւնից անդամ։

—Մնաք բարի, պապի։

—Գնաս բարի։

Եւ դարպասը շրխկաց նրա յետեւից։ Մենակ մնալով Կլէրը սկսեց արագ-արագ քայլել, գրեթէ վազել։ Նա չէր քայլում, այլ գլուխ էր փախցնում։ Ցանկարծ, կալուածի պարսպի ծայրին հասնելով, նա նկատեց այն փոքրիկ՝ քաղցրանիկներով ու այծտերևներով շրջապատուած՝ կանաչ դուռը, ուր գտնւում էր դղեակի պօստարկղը։ Բնազդօրէն նա կանգ առաւ, յիշողութեան այն յանկարծական սթափումներից մէկի ազդեցութեան տակ, որոնք տեղի են ունենում մեր մէջ վճռական բողէներին և վերին աստիճանի պարզ կերպով վերարտադրում են մեր աչքի առջև մեր կեանքի ամենաանչնչան անցքերը, որոնք որ և է առնչութիւն ունեն ներկայ ազէտի կամ ուրախութեան հետ։ Ի՞նչ բան զարթեցրեց այդ յիշողութիւնը նրա մտքում։ Թերևս արեը, որ, յանկարծ ամպերի միջից դուրս գալով, իր շեղ ու վարդագոյն շողքերով լուսաւորեց լայնատարած դաշտը այդ ձմերային կէսօրավերջին այնպէս, ինչպէս օգոստոսին՝ վերջալույսի ժամին։ Թերևս նրան շրջապատող լռութիւնը, որ խանգարում էին միայն բնութեան ներդաշնակ շչուկները, որոնք գրեթէ միակերպ են լինում տարուայ բոլոր եղանակներին։

Այսպէս թէ այնպէս նա տեսաւ ինքն իրան այնպէս, ինչպէս որ էր այդ նոյն տեղում երեք տարի առաջ, այն օրը, երբ նա պօստարկղը մի նամակ գցեց, որով Սիգօնիին հրաւիրում էր գալ մի ամիս անց կացնել իր հետ ամարանոցում։ Սիրաը վկայում էր, որ իր դժբախտութիւնը այդ բոպէին էր սկսուել։ «Ախ, եթէ իմանայի... եթէ իմանայի»... Եւ նրան այնպէս էր թւում, թէ դեռ ևս զգում է մատների ծայրին՝ արկղը ընկնելու պատրաստ ոդորկ ծրարը։

Ու մոածելով, թէ ինչ միամիտ, յուսալից ու երջանիկ մանուկ էր ինքը այդ միջոցին, նա, չը նայելով իր սովորական հեղութեանը, զայրոյթով վառուեց կեանքի անարդարութեան դէմ։ «Ինչու, ինչու։ Ի՞նչ եմ արել ես», հարցնում էր նա ինքն իրան։

Ցեռոյ, յանկարծակի վճռեց. «Ոչ. ճիշտ չէ այդ։ Անկարելի

է այդ... Սուտ են ասում...» Եւ շարունակելով ճանապարհը դէպի կայարանը, թշուառ կինը աշխատում էր համոզել ինքն զինքը։ Բայց այդ չէր յաջողւում նրան։

Ընդհանրապէս ճշմարտութիւնը սքողուած արեի նման է, որ աւելի է յոգնեցնում մարդուս աչքերը, քան ամենավառ չոգքը։ Խեղճ կինը իր ուղեցածից աւելի պարզ էր տեսնում այն կիսախաւարի մէջ, որով դեռ շրջապատուած էր նրա դժբախտութիւնը։ Այժմ նա հասկանում էր, կարողանում էր բացատրել իր ամուսնու կենցաղավարութեան տարօրինակութիւնները, որոշ բան, նրա բացակայութիւնները, մտատանջութիւնները, օրերին ունեցած չփոթուած կերպարանքը և այն հանդամանքը, որ երբեմն տուն գալիս նա ամենայն մանրամասնութեամբ պատմում էր, թէ որտեղարենք է եղել այդ օրը, շարելով իրար յետեւից զանազան անուններ, իբր ապացոյցներ, որ նրանից պահանջող չը կար։ Այդ բոլոր նկատումներից ակնյայտնի երևում էր ամուսնու մեղքը։ Սակայն Կլէրը դեռ չէր ուզում հաւատալ այդ բանին և սպասում էր Փարիզ հասնի՝ բոլոր կասկածանքներին վերջ տալու համար։

Ոչ ոք չը կար կայարանում, որ մի փոքրիկ մեկուսի և տխուր կայարան էր, ուր ոչ մի ճանապարհորդի չի կարելի հանդիպել ձմեռը։ Կլէրը նստած այնտեղ սպասում էր գնացքին, մտքամոլոր նայելով կայարանապետի մեղամազգի պարտէզին և երկաթուղու գծի պատնէշին փաթաթուած պատուտակների մնացորդներին։ Ցանկարծ մի թաց ու տաք շունչ զգաց իր ձեռնոցի վրայ։ Նրա բարեկամ Կիսսն էր այդ, որ յետեւից եկել էր և այժմ յիշեցնում էր իրանց կատարած երբեմնեան ախորժ զբօսանքները, երբ ինքը թրվռում էր, զուսպ կերպով ցասքը-տում, արտայայտելով իր խոնարհ հրճուանքը, և ի վերջոյ իր փառահեղ սպիտակ մորթիով երկարուձիգ փռկում իր տիրուհու ոտքերի մօտ, սպասողական գահլիճի սառը յատակի վրայ։ Տեսնելով այդ խոնարհ փաղաքշանքները, երկչոտ ու անձնուէր համակրութեան այդ արտայայտութիւնները, Կլէրը այլևս չը կարողացաւ պահել լացն ու սկսեց հեկեկալ։ Բայց յանկարծ նա ամօթ զգաց իր թուլութիւնից։ Վեր կացաւ, տուն ուղարկեց շանը, տուն ուղարկեց նրան անողոք կերպով, ձայն տալով, ձեռքով նշան անելով, հեռուից ցոյց տալով դղեակը այնպիսի կերպարանքով, որ Կիսսը երբէք չէր տեսել նրա երեսին։ Ցեռոյ նա չասպով արեց աչքերն ու թաց ձեռքը, որովհետև Փարիզի գնացքը դալիս էր և նա գիտէր, որ մի բոպէից յետոյ իրան պէտք է լինելու իր ամբողջ քաջութիւնը։

Վագոնից դուրս գալուն պէս Կլէրի առաջին գործն այն եղաւ, որ գնաց Լա-Պէ փողոցի այն դեղարվեստի մօտ, որ— պապի ասելով—Ժորժին ադամանդէ վզնոց էր ծախել։ Եթէ այդ ճիշտ էր, մնացած բոլորն էլ ճիշտ կը լինէր։ Խեղճը այնքան վախենում էր ճշմարտութիւնը իմանալուց, որ այդ չքեղ խանութին հանդիպելով նա կանգ առաւ նրա առաջը, չը համարձակելով ներս մտնել։ Մի բան արած լինելու համար՝ նա այնպէս կերպարանք ընդունեց, իբր թէ ուշի ուշով դիտում է տուփերի թաւիշների վրայ դրուած դեղարվեստները, և յիրաւի ով որ տեսնէր նրան, այդպէս զողարիկ իր համեստ զգեստում, խոնարհուած մանրաշող ու գրաւիչ ակունքների վրայ, աւելի շուտ կը կարծէր, թէ մի երջանիկ կին է այդ, որ եկել է որ և է պաճուճանք ընտրելու, քան կ'ենթադրէր, թէ մի ցաւատանջ ու խռովուած հոգի է այդ, որ եկել է այդտեղ վնասելու իր կեանքի գաղտնիքը։

Ժամի երեքն էր կէսօրից յետոյ։ Ջմեռը, ցերեկուայ այդ պահին, Լա-Պէ փողոցը միանգամայն չլայուցիչ տեսք է ունենում։ Կարճ առաւօտուայ և վաղահաս երեկոյեան անջրպետում կեանքը շտապ-շտապ ընթացք է սառնում այդ փարթամ թաղերում։ Կառքերը երթևեկում են արագ-արագ, անիւները դղրդում են անընդհատ և մայթերի վրայ տեղի է ունենում կօքէտ ու վառաղ անց ու դարձ, մետաքսէ զգեստների, մուշտակների խըշ-խըշոց։ Ջմեռը Փարիզի համար տարուայ ամենալաւ եղանակն է։ Գեղեցիկ, երջանիկ, փարթամ տեսնելու համար այդ սատանայական Փարիզը, պէտք է գնալ նրա կեանքը ձիւնով բեղուն, ցածիկ երկնքի տակ։ Բնութիւնը, այսպէս ասած, բացակայ է նկարից։ Ոչ քամի կայ, ոչ արև։ Լոյս միմիայն այնքան կայ, որ ամենաաղօտ գոյները, ամենաչնչին ցոլքերը հիանալի տեսք կարողանան ստանալ, սկսած յուշարձանների գորշ երանգներից և վերջացրած կանայի զգեստները զարդարող սև յուլունքներով։ Թատրոնների, նուագահանդէսների յայտարարութիւնները շողշողում են՝ կարծես լուսաւորուած բամպայի ճաճանչներից։ Խանութները չեն դատարկւում ոչ մի բոպէ։ Թւում է, թէ այդ բոլոր մարդիկ պատրաստութիւններ են տեսնում ինչ-որ յարատև ծոմի համար։ Եթէ մի վիշտ խառնւում է յանկարծ այդ ժիսորին, այդ իրարանցման, այդ հակապատկերի չնորհիւ աւելի սոսկալի է թւում նա։ Հինգ բոպէ Կլէրը մահից վատթար տանջանքներ կրեց։ Այնտեղ, Սավինիի ճանապարհին, ամայի դաշտերի անհուն տարածութեան մէջ, նրա յուսահատութիւնը չաղ էր անցնում զով օդում և կարծես աւելի քիչ տեղ էր բռնում։ Այստեղ նա խեղդում էր նրան։ Նրա կողքին հնչող ձայները, երթևեկողների քայլերն ու անդիտակցական շփումը, այդ ամենը սաստկացնում էր նրա տանջանքը։

Վերջապէս նա ներս մտաւ...

—Այո, այո, տիկին... Պարոն Ֆրոմենը... Ադամանդներից ու ալմաստներից շինուած մի վզնոց։ Ձեզ համար կարող ենք բոլորովին նմանը շինել քսան հինգ հազար ֆրանկով։

Մարդու տուածից հինգ հազար ֆրանկ պակաս էր այդ։

—Շնորհակալութիւն, պարոն,—ասաց Կլէրը։—Կը մտածեմ։

Աչքը յանկարծ ընկաւ դիմացի հայելուն և նա տարօրինակ զգաց, տեսնելով իր կապտածիր աչքերը և մեռելակերպ դէմքը։ Շտապով դուրս եկաւ, ձգուելով, որպէս զի վայր չընկնէր։

Այժմ մի հոգս միայն ունէր նա—փախչել փողոցից, ժխորից, մենակ մնալ, մէն-մենակ, որպէս զի կարողանար ընկղմուել, խորասուզուել այն կսկիծալից, սև մտքերի անդունդը, որոնք յորձանք էին տալիս նրա հոգու խորքում։ Օ՜հ, տմարդ, լերբ տմուսին... Իսկ ինքը դեռ անցած դիշեր մխիթարում էր նրան, պրկում էր նրան։

Յանկարծ, ինքն էլ չը դիտէր թէ ինչպէս, նա հասաւ դորժարանի բակը։ Ի՞նչ ճանապարհով էր եկել։ Ոտքով էր եկել, թէ կառքով։ Ոչինչ չէր յիշում։ Նա անդիտակից վիճակի, կարծես երազի մէջ էր եղել մինչ այդ բոպէն։ Իսկ երբ մօտեցաւ իրանց բնակարանի պատշգամբին, ուշքը գլուխն եկաւ և նա նորից զգաց կսկիծալից և բիրտ իրականութիւնը։ Ռիսլէրը այնտեղ կանգնած վերև էր ուղարկում արկղներով ծաղիկներ այն չքեղ ինջոյքի համար, որ կինը տալու էր այդ երեկոյ։ Իր սովորական հանդիստ տրամադրութեամբ նա ղեկավարում էր բանուորների աշխատանքը, բռնում էր բարձր ճիւղերը, որ նրանք կարող էին կոտրել։ «Այդպէս մի տարէք... Կողքանան անց կացրէք... Զգոյշ, դորդին չը դիպցնէք»...

Զուարճութեան և խրախճանքի մթնոլորտը, որ այնքան զզուանք էր ազդում նրան մի քիչ առաջ փողոցում, հալածում էր նրան նոյն իսկ իր տանը։ Ճակատագրի հեգնութիւնը չափազանց էր արդէն։ Նա վրդովուեց վերջապէս, և մինչդեռ Ռիսլէրը բարեւում էր նրան՝ սիրալիր ու պատկառալից կերպով ինչպէս միշտ, նա, վերին աստիճանի զզուանք արտայայտելով դէմքի վրայ, ուղղակի անցաւ առանց նրան բան ասելու, առանց տեսնելու այն զարմանքը, որից նրա աչքերը մնացել էին չբռնուած։

Կլէրը արդէն վճռել էր իր անելիքը։

Զայրոյթը, աղնիւ ու արդար զայրոյթն էր այսուհետև առաջնորդ լինելու նրա գործողութիւններին։

Ներս մտնելուն պէս, վառ-վառ համբուրելով երեխայի թարմ այտիկները, նա վաղից մօր սենեակը։

—Շուտ արէք, մայրիկ, հագնուեցէք... Գնում ենք... Գնում...

Պառաւը դանդաղ կերպով վեր կացաւ բազկաթոռից, ուր նստած ուշի ուշով սրբում էր իր ժամացոյցի շղթան, անվերջ նախազգուշութիւններով մտցնելով քորոցը ամեն մի օղակի մէջ։ Կլէրը հաղիւ զսպեց անհամբերութիւնը.

—Դէ, շուտ արէք, շուտ... Հաւաքեցէք ձեր իրեղէնները։

Զայնը դողում էր, և մաքրասիրութիւնը հետզհետէ խելագարութեան հասցրած պառաւի սենեակը, որ պլպլում էր իրտակութիւնից, սոսկալի թուաց նրան։ Կեանքի այն սև բոպէներից մէկն էր նրա համար, որոնց միջոցին մի չքացած իլլիւզիա չքացնում է բոլոր միւս իլլիւզիաները և հիասթափուած աչքի առջև բանում է մարդկային դժբախտութիւնը մինչև ամենահեռաւոր խորքերը։ Այդ առաջին անգամն էր, որ նա պարզ զգում էր իր միայնութիւնը՝ կիսախելագար մօր, անհաւատարիմ ամուսնու և բոլորովին փոքրիկ երեխայի շրջանում, բայց այդ գիտակցութիւնը աւելի ևս հառաջաւուն էր դարձնում նրա վիճակը։

Մի բոպէում ամբողջ տունը սկսեց զբաղուել այդ յանկարծական ու անակնկալ ճանապարհորդութեան պատրաստութիւններով։ Կլէրը չտապեցնում էր ապշած ծառաներին, հագցնում էր մօրը և երեխային, որ ժպտում էր այդ իրարանցմանմէջ։ Կլէրը ուզում էր ճանապարհ ընկնել նախ քան ժօրժի գալը, որպէս զի նա դար ու օրօրոցը դատարկ գտնէր և տունը ամայի։ Ո՞ւր էր գնալու։ Ինքն էլ չը գիտէր։ Թերևս Օռլէանում ապրող մօրաքրոջ մօտ, թերևս Սավինի, ուր որ էլ լինի։ Ամենագլխաւորը այն էր, որ գնար, փախչէր այդ դաւաճանութեան ու ստութեան միջավայրից։

Ահա նա իր սենեակումն է և բաները գլխին կիտած՝ դարսում է պայուսակները։ Տիսուր զբաղմունք։ Ամեն մի իր, որին ձեռք էր տալիս, պարթեցնում էր նրա մէջ մտքերի, յիշողութիւնների մի ամբողջ աշխարհ։ Չը որ շատ բան է մնում մեզնից մեր գործածած իրերի մէջ։ Խեղճ կնոջ լացը գալիս էր երբեմն մի անուշահոտութեան բուրմունքից, մի կտոր ժանեակից։ Ցանկարծ, ծանր ոտնաձայն լսուեց հիւրասենեակից, որի դուռը կիսաբաց էր մնացել, ու յետոյ մէկը կամաց հաղայ, կարծես խմաց տալու համար, որ մարդ կայ այնտեղ։ Կլէրը կարծեց, թէ Ռիսլէրն է այդ, որովհետև միայն նա իրաւունք ունէր մտնել նրա մօտ այդպէս արձակ-համարձակ։ Կլէրի համար այնքան զզուելի էր տեսնել այդ կեղծաւոր կերպարանքը, այդ չինծու ժպիտը, որ վազ տուեց դուռը փակելու։

—Ոչ ոքի չեմ ընդունում։

Բայց դուռը պինդ պահել էին, և բացուածքի միջով երևաց Սիկիզմունդի քառակուսի գլուխը։

—Ես եմ, տիկին,—ասաց նա կամացուկ։—Եկել եմ փոքը տանելու։

—Ի՞նչ փոքր,—հարցրեց Կլէրը, որ չէր յիշում այլ ևս, թէ ինչու էր ինքը գնայել Սավինի։

—Ը՞սս... Վաղուայ վճարելիքներիս համար։ Պ. Ժօրժը դուրս գալիս ասաց, որ դուք չուտով կը յանձնէք ինձ պէտք եղած գումարը։

—Ա՜խ, այո... այո... Հարիւր հազար ֆրանկ... Այդքան փոքր չը կայ մօտս։

—Ուրեմն,—ասաց դանձապահը տարօրինակ ձայնով, կարծես թէ ինքն իր հետ խօսելով,—ուրեմն կոտր ենք ընկել։

Ու կամաց-կամաց շուռ եկաւ ու գնաց։

Կոտր ընկնել...

Կլէրը նստեց, զարհուրած, ապշած։

Մի քանի ժամից ի վեր սեփական երջանկութեան կործանումը նրան մոռանալ էր տուել առհասարական տան կործանումը, բայց այժմ նրա ուշքը գլուխն եկաւ։

Այդպէս ուրեմն՝ նրա ամուսինը անանկ էր։

Մի քիչ անցած, տուն վերադառնալով, նա իմանալու էր, որ իր գլխին եկած աղէտը և միևնոյն ժամանակ իմանալու էր, որ կինն ու երեխան հեռացել են տանից, թողնելով նրան միայնակ այդ սև օրին։

Մէն-մենակ, նրան, այդ մեղկ, այդ տկար էակին, որ միայն լալ, դանդատուել ու ճակատագրին բռունցք ցոյց տալ գիտէր, ինչպէս մի մանուկ։ Ի՞նչ էր լինելու թշուառի վիճակը։

Կլէրը խղճում էր նրան, չը նայելով նրա յանցաւորութեանը։

Բայի այդ, նա մտածեց, թէ մի գուցէ իր հեռանալը այն տպաւորութիւնը գործի, թէ ինքը փախել է մնանկութիւնից, աղքատութիւնից։

Ժօրժը կարող էր ասել.

«Եթէ հարուստ լինեի, նա ինձ կը ներէր»։

Կարող էր Կլէրը թոյլ տալ, որ այդպիսի կասկած մնար նրա սրտում։

Կլէրի հոգու նման մի վեհանձն ու հպարտ հոգու համար այդքանը բաւական էր վճիռը փոխելու համար։ Մի ակնթարթում նրա ամբողջ զզուանքը, ամբողջ վրդովմունքը անցաւ և կարծես մի պայծառ լոյս յանկարծ լուսաւորեց նրա առաջ նրա պարտականութիւնը։ Երբ որ եկան, ասացին, որ երեխան հագցրած է ու պայուսակներն էլ պատրաստ, նա արդէն կայացրել էր իր նոր վճիռը։

—Աւելորդ է,—պատասխանեց նա մեղմօրէն,—չենք գնում։

III

Պայմանաժա՞մը

Կէս գիշերից անցել էր. ժամի մէկն էր խփում Սէն-Ժէրվէյի մեծ ժամացոյցը։ Այնքան ցուրտ էր, որ օդի մէջ ցիր ու ցան մանրամաղ ձիւնը սառում էր ճանապարհին և թափուելով գետին՝ կիսաւում էր սալայատակի վրայ ապիտակ ու խշրտան խաւով։

Ռիսլէրը, վերարկուի մէջ փաթաթուած, արագ-արագ վերադառնում էր գարեջրատնից ամայի Մառէյով։ Շատ դոհ տրամադրութեան մէջ էր նա։ Իր երկու մշտական փոխառուների՝ Շէրի և Դելօրէլի հետ նա այդ երեկոյ գարեջրատունը տօնել էր իր առաջին գուրսելքը, այն երկարատև ճգնութեան վերջաւորութիւնը, որի ընթացքում նա հսկում էր իր տպագրիչ մեքենայի պատրաստումը՝ դիւտ անոդի սովորական խարխափումներով, հրճուանքներով և անյաջողութիւններով։ Երկար, շատ երկար էր տևել այդ։ Վերջին վայրկեանին մի պակասութիւն էր ուչքի ընկել։ Արգելիչը լաւ չէր բանում, այնպէս որ նա ստիպուած եղաւ վերսկսել ծրագիրները, նախահաշիւները։ Վերջապէս, այդ օրը փորձել էին նոր մեքենան։ Ամեն ինչ հիանալի յաջողել էր։ Ռիսլէրը ցնծում էր։ Նրան թւում էր, թէ ինքը վերջապէս կարողացաւ վճարել իր պարտքը, յատկացնելով ֆրօնների առևտրատանը այն օգուտը, որ ստացուելու էր իր նոր գիւտից, որ պակասեցնելու էր բանուորների աշխատանքի օրերը և կրկնակի շահաբեր ու հռչակաւոր դարձնելու գործատերջրատնից տուն վերադառնալիս, և նրա քայլերը հնչում էին

խրոխտաբար, արձագանք տալով նրա մտքերի գոհ ու հաստատուն ընթացքին։

Ի՞նչ ծրագիրներ, ի՞նչ յոյսեր։

Այժմ նա կարող էր Անիէրի չալէյի տեղ, որ արդէն խըղճուկ էր թւում Սիդոնիին, առնել մի գեղեցիկ կալուած Փարիզից տասը, տասնուհինգ մղոն հեռաւորութեան վրայ, աւելի մեծ թոշակ տալ պ. Շէրին, աւելի յաճախ փող տալ Դելօրէլին, որի խեղճ կինը ուժասպառ էր լինում աշխատանքից. վերջապէս կարող էր Փարիզ բերել տալ Ֆրանցին։ Այդ նրա ամենասրտագին փափագն էր։ Նա շարունակ մտածում էր այդ թշուառ պատանու մասին, որ ստիպուած էր եղել պանդխտել մի անողջ երկիր և ենթարկուել այնտեղ մի բռնակալ վարչութեան, որ, արձակուրդ տալով իր ծառայողներին, գրեթէ անմիջապէս յետ էր կանչում նրանց առանց որևէ բացատրութեան։ Խեղճ մարդը չէր կարողանում ամենևին մոռանալ Ֆրանցի յանկարծական ու անհասկանալի վերադարձը դէպի իր պաշտօնատեղին՝ Փարիզում այնքան կարճ միջոց մնալուց յետոյ, որ ինքը չէր կարողացել մի կարգին առնել կարօտը, որ աւելի ևս սաստկացել էր այդ տեսակցութեան չնորհիւ վերակենդանացած եղբայրական մտերմութեան և կենակցութեան յիշողութիւնների ազդեցութեան տակ։ Ուստի և մտադիր էր, տպագրիչը գործի դցելուց յետոյ, մի անկիւն դտնել գործարանում, ուր Ֆրանցը կարողանար օգտակար լինել և կարգին ապագայ ստեղծել իր համար։ Ինչպէս միշտ, այժմ էլ Ռիսլէրը միմիայն ուրիշների երջանկութեան մասին էր մտածում։ Նրա միակ եսական հաճոյքը այն էր, որ ժպտերես տեսնէր ամենքին իր շուրջը։

Այդպէս շտապ-շտապ նա հասաւ Վիլլիլոդրիէտ փողոցի անկիւնին։ Իրանց տան առջևը երևում էր կառքերի մի երկար շարք, և նրանց լապտերների ցոլքը փողոցում ու ձիւնից պատբարուող կառապանների ստուերները այն խորշերում ու անկիւններում, որոնք այդ հին ապարանքների պատերում մնացել են չնայելով ուղղագիծ մայթերի կառուցման, կենդանութիւն էին տալիս այդ ամայի ու լռիկ թաղին։

«Ախ, ճիշտ որ,—մտածեց Ռիսլէրը,—այսօր մենք երեկոյթ ունենք»։ Նա յիշեց, որ Սիդոնին այդ օրը երաժշտական ուրբաթի երեկոյթ էր կազմել, որին ներկայ լինելուց, սակայն, աղաչել էր նրան, «լաւ իմանալով, որ նա սաստիկ զբաղուած է»։ Այդ պարահանդէսի արձագանքները աւելի ևս սաստկացրին նրա հրճուանքն ու հպարտութիւնը, խառնուելով նրա վարդագոյն ծրագիրներին և հարստանալու վեհանձն երազանքներին։

Մի տեսակ հանդիսաւորութեամբ հրեց նա ծանր դարպասը, որ կիսաբաց էր թողնուած եկող-գնացող հիւրերի համար, և պարտէզի խորքում տեսաւ ապարանքի ամբողջ երկրորդ յարկը, որ լուսաւորուած էր փառահեղ կերպով։

Վարպետների սաւառուն շղարշի յետևին գնում-գալիս էին մարդկանց ստուերներ. նուագախումբը, որի դաշնութիւնը գուշակւում էր խուլ հնչիւնների յաջորդաբար դրոհ տուող ու յետ ընկրկող ձայնից, կարծես հետևում էր այդ ստուերների շարժումներին։ Պարում էին։ Մի բոպէ Ռիսլէրը յառեց իր հայեացքը այդ պարերեկոյթի ֆանտաստիկական տեսարանի վրայ և դահլիճին կից սենեակում ճանաչեց Սիդոնիի դիմաստուերը։

Պերճազգեստ և ուղղաձիգ կանգնած էր նա այնտեղ՝ հայելու մէջ իրան նայող սիրուն կնոջ դիրքով։ Նրա յետևին մի աւելի փոքրիկ ստուեր, անշուշտ տիկին Դօրսօնը, ուղղում էր հագուստը, վզին կապած ժապաւէնանգոյցը, որի երկար ու սաւառուն ծայրերը հանում էին մինչև շրջազգեստի տուրը։ Այդ բոլորը շատ անորոշ կերպով էր երևում, բայց Սիդոնիի կանացի գողտրիկութիւնը աչքի էր ընկնում նոյն իսկ այդ հազիւ նշմարուող գծերում, և Ռիսլէրը երկար ժամանակ կանգնած հիացմունքով դիտում էր նրան։

Առաջին յարկը զարմանալի հակապատկեր էր կազմում երկրորդին։ Ոչ մի տեղ լոյս չը կար, բացի կարմրամանիշակագոյն պաստառներով պատած ննջարանից, ուր վառւում էր մի փոքրիկ լամպ։ Ռիսլէրը նկատեց այդ բանը, և որովհետև Ֆրոմմնների երեխան մի քանի օր առաջ հիւանդացել էր, նա անհանգստացաւ, յիշեց այն յուզմունքը, որի մէջ գտնւում էր տիկին Ժօրժը, երբ կէսօրից յետոյ անցաւ իր կողքով, ուստի յետ դարձաւ դէպի դարպասը Աշիլ քեռուց տեղեկութիւններ հարցնելու համար։

Աշիլ քեռու սենեակը լիքն էր մարդկանցով։ Կառապանները վառարանի մօտ հաւաքուած տաքանում էին, զրոյց էին անում ու ծիծաղում իրանց չիբուխների ծխի մէջ։ Ռիսլէրի ներս մտնելուն պէս՝ յանկարծ տիրեց խորին լռութիւն և դէմքերը ստացան հեռաբրքիր, ծաղրական ու խուզարկու արտայայտութիւն։ Երևի նրա մասին էին խօսում։

—Ֆրոմմնների երեխան դեռ ևս հիւանդ է... հարցրեց նա։

—Ոչ։ Երեխան չէ հիւանդ, այլ պարոնը։

—Պարոն Ժօրժը հիւանդ է։

—Այո, երեկոյեան տուն գալուց յետոյ վատ զգաց իրան։

Իսկոյն գնացի բժշկի յետևից... Բժիշկն ասաց, որ ոչինչ չը կայ, միայն թէ հանգստութիւն է հարկաւոր պարոնին։

Ե. մինչ Ռիսլէրը փակում էր դուռը, քեռի Աշիլը կիսաձայն աւելացրեց ստորադաս մարդկանց յատուկ կէս երկչոտ, կէս յանդուգն անտերեսութեամբ, որ կամենում է, որ մարդուս ականջին հասնեն ասածները, բայց այնպէս, որ հազիւ հազ լսելի լինեն.

—Ի հարկէ, առաջին յարկումը այնպէս քէֆ չեն քաշում, ինչպէս վերևումը։

Ահա թէ ինչ էր պատահել.

Ֆրոմմն կրտսերը, երեկոյեան տուն գալով և տեսնելով, թէ ինչպէս տխուր ու այլայլուած է կնոջ դէմքը, իսկոյն հասկացաւ, որ դժբախտութիւն է պատահել։ Միայն թէ երկու տարի առաջ նա այնքան ընտելացել էր իր դաւաճանութեան ընթացքի վերա նա այնքան ընտելացել էր իր դաւաճանութեան ընթացքի վերա նա այնքան մտածեցաւ, թէ կինը անպատիժ մնալուն, որ ոչ մի բոպէ մտքովը չանցաւ, թէ կինը կարող է իմացած լինել իր արածները։ Կլէրն էլ, չը կամենալով աւելի ևս ծանրացնել նրա դրութիւնը, մեծահոգաբար խօսեց նրա հետ միմիայն Սավինի գնալու մասին։

—Պապը ոչինչ չը տուեց,—ասաց նա Ժօրժին։

Թշուառականը սարսափելի գունաթափուեց։

«Ես կորայ... կորայ»... զառանցողի նման կրկնեց նա երկու երեք անգամ, և անքուն անցրած գիշերները, այն սարսափելի վերջին տեսակցութիւնը, որ ունեցել էր Սիդոնիի հետ, թոյլ չը տալու համար նրան կազմել այդ պարահանդէսը սնանկութեան նախընթաց երեկոն, և վերջապէս Գարդինուայի մերժումը, այդ բոլոր յուզմունքները, որոնք, իրար հետ կապուած ու իրար յաջորդելով, տակնուվրայ էին արել նրան, արտայայտուեցին ջղային հիւանդութեամբ։ Կլէրը խղճահարուեց նրա վրայ, պատկացրեց նրան ու նստեց անկողնի կողքին։ Նա փորձում էր խօսել հիւանդի հետ, սիրտ տալ նրան, բայց նրա ձայնի մէջ չը կար այլ ևս այն զորովի շեշտը, որ հանգստացնում է և համոզում։ Ինչ որ անտարբերութիւն, ինչ որ տարօրինակ անուշադրութիւն էր նկատւում նրա շարժումների մէջ, այն ձևի մէջ, որով նա բարձրացնում էր բարձը հիւանդի գլխատակին, որով նա հանգստացուցիչ դեղ էր պատրաստում նրա համար։

—Ա՜խ, աղքատութեան դուռը հասցրեցի՞ քեզ,—ժամանակ առ ժամանակ ասում էր նրան Ժօրժը։ Կարծես ուզելով թօթափել նրա վրայից այդ սառնութիւնը, որ նեղում էր իրան։ Կլէրը նրա խօսքերին պատասխանում էր մի դեղեցիկ արհամարհոտ շարժումով... Երանի թէ միայն այդ արած լինէր նա իրան։

Սակայն, ի վերջոյ, հիւանդի ջղերը հանգստացան, տաքութիւնը իջաւ ու քունը տարաւ։

Կլէրը մնաց մօտը՝ խնամելու համար։

«Իմ պարտականութիւնս է այդ», ասում էր նա ինքն իրան։

Իր պարտականութիւնը։

Ահա թէ ուր էր հասել նա այժմ այն մարդու վերաբերմամբ, որին մի ժամանակ այնքան կուրօրէն սիրում էր և որի հետ միասին յոյս ունէր վարել երկարատև ու երջանիկ կեանք։

Այդ միջոցին պարահանդէսը սկսում էր տաքանալ վերևում։ Առաստաղը դողում էր չափածոյ շարժումով, որովհետև պարողների յարմարութեան համար տիկին Ռիսլէրը բոլոր գորգերը վերցնել էր տուել իր դահլիճներից։ Երբեմն երբեմն էլ լսւում էր ձայների կցկտուր աղմուկ, յետոյ բազմապատիկ ու կրկնուող ծափահարութիւն, որից երևում էր, որ սենեակները լիքն են հիւրերի բազմութեամբ։

Կլէրը մտածում էր։ Նա իրան չէր տանջում ապարդիւն ափսոսանքներով և լաց ու կոծով։ Նա գիտէր, որ կեանքը անողոք է և որ ոչ մի դատողութեամբ չի կարելի կանգնեցնել նրա անխուսափելի ընթացքի տխուր տրամաբանութիւնը։ Նա չէր աշխատում բացատրել, թէ ինչպէս էր կարողացել այդ մարդը այնքան երկար ժամանակ խաբել իրան, ինչպէս էր կարողացել նա մի քմահաճոյքի համար ոտի տակ տալ իր ընտանիքի պատիւը և երջանկութիւնը։ Այդ արդէն եղած գործած բան էր, և իր մտածմունքները չէին կարող չեղած դարձնել այդ փաստը, ուղղել անուղղելին։ Նրան զբաղեցնողը ապագան էր։ Մի նոր կեանք էր պատկերանում նրա առջև, մռայլ, դաժան և լի զրկանքներով ու չարքաշ աշխատանքով, և, տարօրինակ բան, տնանկութիւնը, փոխանակ սարսափեցնելու նրան, ընդհակառակը վերադարձրեց նրան նրա ամբողջ կորովը։ Այն մտածմունքը, թէ պէտք էր այսուհետև խնայողաբար ապրել և դրա համար՝ փոխել իրանց բնակութեան տեղը, թէ Ժորժը, թերևս և ինքը՝ ստիպուած էին լինելու սաստիկ աշխատել, մի տարակ եռանդ էր ներշնչում նրա յուսահատ անդորրութեանը։ Երբեմն երեխաների—իր մօր, իր աղջկայ և իր ամուսնու—հոգին՝ բի ծանր բեռն էր ունենալու նա իր վրայ։ Այդ պատասխանատուութեան գիտակցութիւնը թոյլ չէր տալիս նրան շատ խանդաղատուել իր դժբախտութեան վրայ, իր սիրոյ խորտակման վրայ, և որքան նա աւելի էր մոռանում ինքն իրան, մտածելով այն թոյլ էակների մասին, որոնց ինքը հովանաւորելու էր, այնքան լաւ էր հասկանում «զոհողութիւն» խօսքի արժէքը, այդ խօսքի՝

որ այնքան անորոշ է անտարբեր բերաններում և այնքան լուրջ, երբ կեանքի զեկավար կանոն է դառնում։

Ահա թէ ինչի մասին էր մտածում խեղճ կինը այդ տխուր պանութեան գիշերը, այդ սպառազէն և արտասուակոծ հսկման ժամանակ, երբ նա պատրաստւում էր ահեղ կռուի համար։ Ահա թէ ինչ բանի վրայ էր յոյս սիրում ներքևի յարկում Ռիսլերի նկատած աղօտ լամպը, իրրև մի աստղ, որ վայր էր ընկել պարահանդէսի չողչողուն ջահերից։

Քեռի Աշիլի պատասխանիցը հանգստացած, Ռիսլէրն ուզում էր բարձրանալ իր սենեակը, խուսափելով պարահանդէսից և հիւրերից, որոնցով նա շատ քիչ էր հետաքրքրւում։

Այդպիսի դէպքերում նա բարձրանում էր վերև յետևի սանդուխով, որ հաղորդակցութիւն ունէր գանձապահի դրասենեակի հետ։ Այդպիսով նա մտաւ ապակեապատ արհեստանոցները, որոնք՝ ձիւնի անդրադարձած լուսնաշողից՝ լուսաւորուած էին ինչպէս օրը ցերեկով։ Այդտեղ զգացւում էր դեռ ևս ցերեկուայ աշխատանքի մթնոլորտ, խեղդող տաքութիւն, լի տակի ու ջնարակի եփուն հոտերով։ Ցամքացուցիչների վրայ փքուած թղթերը երկար խշշացնող շերտեր էին կազմում։ Ամեն կողմ թափթփուած էին զանազան գործիքներ և պատրիցը կախ էին տուած վերնաշապիկներ, պատրաստ վազուան համար։ Միշտ ահագին հաճոյք էր զգում Ռիսլէրը այդ տեղով անցնելիս։

Ցանկարծ, այդ դատարկ սենեակների երկար շարքի ծայրում նա լոյս նկատեց Պլանիսի դրասենեակում։ Ծերունի գանձապահը աշխատում էր դեռ ևս գիշերուայ ժամի մէկին. այդ շատ սարսափելի բան էր։

Առաջին բոպէին Ռիսլէրը ուզեց յետ դառնալ։ Ցիրաւի, Սիգիզմունդի ու իր մէջ պատահած անհասկանալի խռովութիւնից յետոյ, այն օրից ի վեր, երբ Սիգիզմունդը իր ներկայութեամբ միշտ լուռ ու մունջ և սառն էր լինում, նա խուսափում էր ծերունի գանձապահի հետ հանդիպելուց։ Բարեկամութեան վիրաւորուած զգայմունքը թոյլ չէր տալիս նրան բացատրութիւն պահանջել. ինքնասիրութիւնը արգելք էր լինում հարցնելու Պլանիսից, թէ ինչու է նա նեղացել իրանից։ Սակայն այդ երեկոյ այնպիսի սրտաբաց տրամադրութեան մէջ էր Ռիսլէրը, և, բացի դրանից, այդ այնպիսի յարմար առիթ էր միայնակ ու երես առ երես խօսելու իր հին բարեկամի հետ, որ նա չուզեց այս անգամ խուսափել հանդիպումից ու արձակ համարձակ ներս մտաւ դրասենեակը։

Գանձապահը այնտեղ անշարժ նստած էր, շրջապատուած

թղթերի կոյտերով և հաստ ու յաճախ թերթուած հաշուեգրքերով, որոնցից մի քանիսը թափուել էին գետին։ Նա լսեց իր պատրօնի ներս մտնելու աղմուկը, բայց նոյն իսկ աչքերը վեր չը բարձրացրեց։ Նա ճանաչել էր Ռիսլէրի ոտնաձայնը։ Ռիսլէրը սկզբում մի բոպէ տատանման մէջ մնաց, մի քիչ շփոթուած, բայց յետոյ գնաց ուղղակի դէպի դրամարկղի ցանցապատը, շարժուելով այն գաղտնի զսպանակներից մէկի մղումով, որոնք գոյութիւն ունեն մեր մէջ և, ինչ էլ լինի, դուրս են բերում մեզ մեր ճակատագրական ճոնապարհի վրայ։

—Սիգիզմունդ... ասաց նա լուրջ ձայնով։

Ծերունին բարձրացրեց գլուխը, և Ռիսլէրը տեսաւ նրա ծամածռուած երեսը, որի վրայով հոսում էին երկու խոշոր կաթիլներ, թերևս առաջին արցունքները, որ այդ թուանշանմարդը թափում էր իր կեանքում։

—Լաց ես լինում, ծերուկս... Ի՞նչ է պատահել քեզ։

Եւ բարեսիրտ Ռիսլէրը, խանդաղատուած, մեկնեց ձեռքը իր բարեկամին, որ, սակայն, թափով յետ քաշեց իր ձեռքը։ Այնքան բնագդական, այնքան ուժգին էր այդ յետ քաշելու շարժումը, որ Ռիսլէրի խանդաղատանքը փոխարկուեց զայրոյթի։

Նա շիտակուեց խիստ կերպարանքով։

—Ես ձեռք եմ մեկնում քեզ, Սիգիզմունդ Պլանիւս,—ասաց նա։

—Իսկ ես չեմ ուզում քեզ ձեռք տալ... պատասխանեց Պլանիւսը, տեղիցը վեր կենալով։

Այնուհետև սարսափելի լռութիւն տիրեց, որի միջոցին լսւում էր վերևից երաժշտութեան խուլ ձայնը և պարահանդէսի աղմուկը, այդ ծանր ու յիմար աղմուկը, որ յառաջացնում է պարերի բաղխումից ցնցուող տախտակամածը։

—Ինչո՞ւ չես ուզում ինձ ձեռք տալ,—հաստատակերպով հարցրեց Ռիսլէրը, մինչդեռ ցանցապատը, որին կռթնել էր նա, դողում էր մետալային սարսուռով։

Սիգիզմունդը կանգնած էր նրա դիմացը, երկու ձեռքով կռթնած հաշուեսեղանին, կարծես թէ նրա համար, որ աւելի տեղին ու ազդու դուրս գար այն, ինչ որ պատասխանելու էր։

—Ինչո՞ւ... Որովհետև դուք մնանկութեան էք հասցրել առևտրատունը, որովհետև այս բոպէին այնտեղ, ուր դուք կանգնած էք, կը դան բանկից հարիւր հազար ֆրանկ ստանալու, մինչդեռ ես, ձեր շնորհիւ, ոչ մի սու չունեմ դրամարկղի մէջ... Ահա ձեր պատասխանը։

Ռիսլէրը մնացել էր ապշած։

—Ես մնանկութեան եմ հասցրել առևտրատունը, ես... ես...

—Աւելի վատ քան այդ, պարոն... Դուք մնանկութեան էք հասցրել այս առևտրատունը ձեր կնոջ միջոցով, իսկ ձեր բանը այնպէս էք սարքել, որ օգտուէք մեր մնանկութիւնից և ձեր խայտառակութիւնից... Օ՜, ես շատ լաւ եմ հասկանում ձեր խաղերը։ Այն փողերը, որ ձեր կինը դուրս է քաշել խեղճ Ֆրոմենից, Անիէրի տունը, ադամանդները և մնացած բոլոր բանները, ի հարկէ, նրա անունով կը լինեն և աղատ կը մնան որ և է վտանգից, այնպէս որ դուք այժմ անշուշտ կարող էք դուրս գալ գործի մէջից։

—Օ՜խ... Օ՜խ... կմկմում էր Ռիսլէրը հանգած կամ, աւելի ճիշտ, խեղդուած ձայնով, որ սնդղոր էր արտայայտելու այն բոլոր մտքերը, որ նա կ՚ուզէր արտայայտել, և այդպէս կմկմալով նա ձգում էր ցանցապատը դէպի ինքը այնքան ուժգին կերպով, որ մի կատր պոկեց նրանից։ Ի վերջոյ, նա օրօրուեց, տապալուեց գետին և մնաց անշարժ ու պապանձուած, պահպանելով սակայն՝ մէջը մնացած կենդանութեան նշոյլի մէջ հաստատ կամք չը մեռնելու նախ քան ինքն իրան արդարացնելը։ Երևի շատ զսրեղ էր այդ կամքը, որովհետև մինչդեռ քունքերը տրբփտրբփում էին արիւնից, որ խփել էր գլուխը ու կապտացրել երեսը, մինչդեռ ականջները զրնգզրնգում էին և աչքերը կարծես ուղղուել էին արդէն դէպի ահռելի անյայտութիւնը, խեղճը անըմբռնելի ձայնով, փոթորկալից ծովում բեռանները ջրով լեցը խօսող նաւաբեկուածների ձայնով՝ ասում էր ինքն իրան. «պէտք է ապրել... պէտք է ապրել...»

Երբ ուշքը գլուխն եկաւ, նա արդէն նստած էր այն բազմոցի վրայ, ուր վճարման օրերը նստոտած էին լինում բանուորները, վերարկուն գետին ընկած, փողոցաը արձակուած, շապկի կուրծքը բացուած, ճեղքուած Սիգիզմունդի գրչահատով։ Իր բախտիցը՝ ցանցապատը կոտրելիս նա կարել էր ձեռները. արիւնը շուշալէն թափուել էր և այդ բանն էր միայն աղատել նրան կաթուածահարութիւնից։ Աչքերը բանալով, նա տեսաւ իր կողքին ծերունի Սիգիզմունդին և տիկին Ժորժին, որին գնացել կանչել էր վախուորած գանձապահը։ Հէնց որ Ռիսլէրը կարողացաւ լեզուն պտոյտ տալ բերանումը, խակոյն և եթ դիմց կլէրին շնչասպառ.

—Ճիշտ է այդ, տիկին Շորշ, ճիշտ է՝ ինչ որ նոր ասացին ինձ։

Կլէրը չը համարձակեց խարել նրան և երեսը շուռ տուեց։

—Ուրեմն,—չարունակեց Թշուառ մարդը,—ուրեմն առնտրատունը կոմոր է ընկել, և Ես եմ...

—Չէ, Ռիսլէր, չէ, բարեկամս... Ոչ, դուք չէք...

—Կինս է, այնպէս չէ... Օ՜խ, սոսկալի բան... Ահա թէ ինչպէս եմ վերադարձրել ձեզ ձեր երախտիքը... Բայց դուք, տիկին Շօրշ, դուք հօ չէիք կարող ինձ մեղսակից համարել այդ սատրութեան մէջ...

—Չէ, բարեկամս, չէ, հանդարտացէք, խնդրեմ... Ես գիտեմ, որ դուք ամենաազնիւ մարդն էք աշխարհում։

Նա մի բոպէ նայեց Կլէրին դողդոջուն շրթունքներով և կցուած ձեռքերով, որովհետև ինչ որ մանկական բան կար այդ միամիտ բնաւորութեան բոլոր արտայայտութիւնների մէջ։

—Օ՜հ, տիկին Շօրշ... մրմնջաց նա... Երբ որ մտածում եմ, որ ես եմ եղել ձեր մահուան պատճառը...

Իր գլխին եկած սարսափելի դժբախտութեան մէջ, որից գլխաւոր հարուած ստացողը նրա սիրտն էր՝ լի սիրով դէպի Սիդոնին, նա ուզում էր տեսնել միմիայն Ֆրոմոնների առնտրատան հասած դրամական աղէտը, որի պատճառը իր կոյր վերաբերմունքն էր եղել դէպի իր կինը։ Ցանկարծ նա շփոթուեց թափով.

—Գնանք,—ասաց նա,—դղածուելու ժամանակ չէ... Պէտք է մաքրել մեր հաշիւները...

Տիկին Ֆրոմոնը վախեցաւ։

—Ռիսլէր, Ռիսլէր... ուր էք գնում։

Խեղճ կինը կարծում էր, թէ նա գնում է Ժորժի մօտ։

Ռիսլէրը հասկացաւ նրա կասկածը և պատասխանեց արհամարհոտ ու դառոդ ժպիտով.

—Ապահով եղէք, տիկին. պ. Ժորժը կարող է իր համար հանգիստ քնել... Այժմ ես աւելի անյետաձգելի բան ունեմ անելու, քան ամուսնական պատուիս վրիժառութիւնը։ Սպասեցէք ինձ այստեղ... իսկոյն կը վերադառնամ։

Նա վազեց դէպի վերև փոքրիկ սանդուխով, և Կլէրը, վստահ նրա խօսքի վրայ, մնաց մենակ Պլանիւսի հետ, անց կացնելով այն դերապոյն և անորոշ բոպէներից մէկը, որոնք այնքան երկար են թւում իրանց ընթացքում արուած անթիւ մեծադրութիւնների շնորհիւ։

Մի քանի վայրկեան անցած՝ նեղ ու մութ սանդուխը լցուեց չոսպ քայլերի ոռնաձայնով և կանացի հագուստի խշխշոցով։

Առաջինը ներս մտաւ Սիդոնին պարահանդիսային զգեստով, չքեղազարդ ու այնքան գունատ, որ նրա փայլատ կաշու վրայ չողացող բազմաթիւ գոհարները աւելի կենդանի էին թւում, քան նա, և կարծես շաղ տուած լինէին մի որ և արձանի սառը մարմարիոնի երեսին։ Պարելու հնքը և յուզմունքի ու արագ քայլուածքի դողը դեռ ևս ցնցում էին նրա ամբողջ մարմինը, և նրա թեթև ժապաւէնները, զգեստազարդերը, ծղկինները և աշխարհիկ փարթամ պաճուճանքը սքել էին նրա չուրջը տրագիկաբար։ Նրա յետևից ներս մտաւ Ռիսլէրը ծանրաբեռնուած տուփերով, արկղիկներով ու արժէթղթերով, կնոջ սենեակը հասնելուն պէս նա յարձակուել էր նրա զարդասեղանի վրայ ու վերցրել ինչ որ արժէքաւոր բան կար մէջը, գոհարեղէն, արժէթղթեր, Անիէրի տան վաճառման թուղթը, և յետոյ սենեակի չէմքիցը բարձրաձայն կանչել նրան պարահանդէսից.

—Տիկին Ռիսլէր...

Սիդոնին ձեռաց վազել էր նրա մօտ, և այդ բոլորը այնքան արագ էր կատարուել ու երեկոյթի այնքան տաք մթնոլորտին, որ ոչ ոք հիւրերից ոչինչ չէր նկատել։ Տեսնելով ամուսնուն կանգնած իր սեղանի առաջ, արկղիկները բաց, ջարդուած ու գորգի վրայ թափթփուած՝ մէջքները եղած հազար ու մի մանր մունր բաներով, նա իսկոյն հասկացաւ, որ ինչ-որ սարսափելի բան է տեղի ունենում։

—Շուտ արէք, եկէք,—ասաց Ռիսլէրը,—ամեն ինչ յայտնի է ինձ։

Սիդոնին ուզեց, ըստ սովորութեան, անմեղ ու հպարտ կերպարանք ընդունել, բայց Ռիսլէրը այնպէս ուժգին բռնեց նրա կռնիցը, որ նա մոռացաւ Ֆրանցի խօսքը. «Գուցէ նրան մեռցնի այդ բանը, բայց մեռնելուց առաջ նա ձեզ կը սպանի անշուշտ...» Եւ որովհետև նա սաստիկ վախենում էր մահից, ուստի թոյլ տուեց քաշ տալ իրան առանց դիմադրութեան և նոյն իսկ չը համարձակուեց ոտել։

—Ո՞ւր ենք գնում,—հարցրեց նա կամաց ձայնով։

Ռիսլէրը պատասխան չը տուեց։ Սիդոնին, որ երբէք չէր մոռանում հոգս տանել իր վրայ, հազիւ ժամանակ ունեցաւ իր մերկ ուսերի վրայ գցելու մի թեթև շղարշէ վզակալ, որովհետև Ռիսլէրը իսկոյն քաշ տուեց, աւելի ճիշտ ասած, հրեց նրան դէպի սանդուխը, որով իջաւ նրա հետ միասին, քայլ առ քայլ հետևելով նրան, վախենալով, որ սրսը փախչի ձեռքիցը։

—Ահա, ասաց նա ներս մտնելով գանձապահի սենեակը.. Գողացել էինք, այժմ յետ ենք դարձնում... Վերցրու, Պլանիւս, լաւ փող դուրս կը գայ սրանից...

Ու գանձապահի սեղանի վրայ դարսեց այդ ամբողջ գող-

տրիկ կողոպուտը, որով լիքն էին բոնները, այդ կանացի սեթևեթանքները, կոքետութեան մանրոյթները և դրոշմաւոր թղթերը, իսկ յետոյ, դառնալով դէպի կինը, հրամայեց.

—Իսկ այժմ, ցնծացէք ձեր գոհարները... Շուտ, շուտ...

Սիգօնին չէր շտապում, ափսոսելով էր բանում ապարանջաններն ու գինդերը և մանաւանդ ադամանդէ վզնոցի հոյակապ ճարմանդը, որի վրայ նրա անուան սկզբնատառը—մի շողշողուն S—կարծես քնած օձ լինէր, ոսկէ շրջանակում բանտարկուած։ Անհամբեր Ռիսլէրը, տեսնելով, որ բանը շատ է երկարում, սկսեց կոպտաբար ջարդել նուրբ հանգոյցները, և ճոխութիւնը ճչում էր նրա մատների տակ, ինչպէս պատժի ենթարկուող յանցաւոր։

—Հիմա իմ հերթն է, ասաց նա այնուհետև... Ես էլ պէտք է ունեցած չունեցածս տամ... Ահա քսակս... Է՞լ ինչ ունեմ... Ել ինչ ունեմ...

Եւ նա փնտռում, տնտղում էր իր վրայ տենդօրէն։

—Ախ, հա, ժամացոյցս... Շղթայի հետ հազար ֆրանկ կ'արժենայ... Այս էլ մատանիներս, այս էլ նշանամատնիքս... Ինչ կայ չը կայ գցէք դրամարկղը։ Հարիւր հազար ֆրանկ վըճարելիք ունենք այս առաւօտ... Լոյսը բացուելուն պէս պէտք է գործի կպչել, ծախել ամեն բան, ոչինչ չը թողնել։ Ես դիտեմ մէկին, որ ուզում է Անիէրի տունը գնել։ Զեռաց կարելի է ծախել։

Միայն նա էր խօսողը, գործողը։ Սիգիզմունդը և տիկին Ժորժը լուռումունջ նայում էին նրան։ Ինչ վերաբերում է Սիգօնին, նա կարծես թմրած, անզգայ լինէր։ Սառը օդը, որ պարտէզից ներս էր թափանցում Ռիսլէրի ուշաթափութեան ժամանակից կիսաբաց մնացած դռնովը, սառուցանում էր նրան, և նա, աչքերը սեւեռուն և մռայլալոր, մեքենայաբար աւելի ու աւելի պինդ էր փաթաթւում իր շղարշէ վզակալի մէջ։ Դժուար է ասել, լսում էր նա արդեօք իր պարերեկոյթի ջութակների ձայնը, որ լուռթեան բոլէներին, իբր մի անողորմ հեգնութիւն, լսւում էր տախտակամածը դղրդոցնող պարերի ծանր աղմուկի հետ...

Մի երկաթէ ձեռք յանկարծ սղմեց նրան ու դուրս հանեց այդ թմրութիւնից։ Ռիսլէրը, բռնելով նրա կունից ու քաշ տալով իր առնարակցի կնոջ առաջ, հրամայեց.

—Զոքիր։

Տիկին Ֆրօմոնը յետ-յետ էր գնում, դիմադրում էր։

—Չէ, չէ, պ. Ռիսլէր, պէտք չէ այդպիսի բան։

—Ոչ, այդ անհրաժեշտ է, ասաց անողոք Ռիսլէրը... Պէտք

է ուղղել արածը, պէտք է քաւել... Զոքիր, ասում եմ, թշուառական...

Եւ մի անդիմադրելի շարժումով նա շպրտեց Սիգօնին կլէրի ոտքերը ու, առանց կուռը բաց թողնելու, շարունակեց։

—Կրկնեցէք իմ յետևից բառ առ բառ այն, ինչ որ ասեմ։

«Տիկին...»

Սիգօնին, երկիւղիցը կիսամեռ, կրկնեց թոյլ ձայնով։

«Տիկին...»

—Ամբողջ կեանքիս ընթացքում՝ խոնարհ ու հնազանդ մնալով...

—Ամբողջ կեանքիս ընթացքում՝ խոն... Չէ, չէ, չեմ կարող... բացականչեց Սիգօնին և վայրի զաղանի թափով ոտքի կանգնելով ու աղատուելով Ռիսլէրի ձեռքից, դուրս պրծաւ կիսաբաց դռնովը, որ այդ սոսկալի տեսարանի սկզբից ի վեր հրապուրում էր նրան դէպի գիշերային խաւարը ու փախուստի ազատութիւնը, և վազ տալով փախաւ առանց ուշք դարձնելու ձիւնին և սաստիկ քամուն, որ խփում էր նրա մերկ ուսերին։

—Կանգնեցրէք նրան, կանգնեցրէք... Ռիսլէր, Պլանիւս, խնդրում եմ... Ի սէր Աստուծոյ, մի թողէք, որ այդպէս գնայ...

Պլանիւսը մի քայլ արեց դէպի դուռը։ Ռիսլէրը կանգնեցրեց նրան.

—Ես պահանջում եմ, որ դու չը շարժուես տեղիցդ։ Իսկ դուք, տիկին, խնդրեմ ներէք։ Մենք դրանից շատ աւելի կարևոր գործեր ունենք կարգադրելու։ Այլ ես այստեղ հարց չը կայ տիկին Ռիսլէրի մասին... Մենք պէտք է աշխատենք այժմ փրկել Ֆրօմոնների առևտրատան պատիւը, միակ բանը, որ վտանգի է ենթարկուած, միակ բանը, որ հետաքրքրում է ինձ այս բոլոր չիներով։

Սիգիզմունդը պարզեց ձեռքը դէպի նա։

—Դու պատուական մարդ ես, Ռիսլէր։ Ներիր քո մասին տարած կասկածներիս համար։

Ռիսլէրը չը լսած ձևացաւ։

—Պէտք է հարիւր հազար ֆրանկ վճարենք, այնպէս չէ... Ի՞նչքան փող կայ դրամարկղումդ...

Եւ նա լրջօրէն նստելով ցանցապատի յետևը, սկսեց թերթել հաշուեգրքերն ու հասոյթաթղթերը և բանալ զուգահեռ զէնի տուփերն ու գնահատել Պլանիւսի հետ,—որի հայրը գոհրամաճառ էր եղել,—նրանց մէջի ադամանդները, որ նա մի ժամանակ հիացմունքով դիտում էր իր կնոջ վրայ առանց իմանալու, թէ ինչ անգին փող արժեն նրանք։

Կէրը այդ միջոցին, ամբողջ մարմնով դողալով, պատուհանի միջով նայում էր ձիւնից սպիտակած պարտէզին, ուր Սիդոնիի քայլերի հետքը արդէն ջնջւում էր ձիւնի նոր թափուող փաթիլների տակ, կարծես ապացուցանելու համար, որ այդ փախուստը անդառնալի էր։

Իսկ վերևում պարում էին դեռ ևս։ Հիւրերը կարծում էին, թէ տանտիրուհին ընթրիքի պատրաստութեամբ է զբաղուած, մինչ նա այդպէս գլխաբաց փախչում էր, զսպելով կատաղութեան աղաղակներն ու հեկեկանքները։

Ո՞ւր էր գնում նա։

Նա սենեակից դժի նման դուրս պրծաւ ու վազելով անցաւ գործարանի պարտէզը, բակերը և մութ կամարները, որոնց տակ յորձանք էր տալիս ողբաձայն ու ցրտաշունչ քամին։ Աշիլ քեռին չը ճանաչեց նրան, որովհետև շատ սիլուէտներ էր տեսել նա այդ գիշեր այդպէս սպիտակ շորերի մէջ կոլոլուած անցնելիս։

Առաջին բոպէին Սիդոնին մտածեց գնալ տէնօր Կազաբոնիի մօտ, որին վերջ ի վերջոյ չէր համարձակել հրաւիրել պարահանդէսին, բայց նա ապրում էր Մօնմարթր թաղում, իսկ այդ շատ հեռու էր Նրա պէս թեթև հագնուածի համար, և բացի այդ արդեօք տանը կը լինէր նա։ Իր ծնողները անշուշտ լաւ կ'ընդունէին նրան, բայց նա արդէն առաջուց լսում էր տիկին Շէբի ախ ու վախերը և հօր անվերջ ճառերը։ Այն ժամանակ նրա միտքն ընկաւ իր ծեր Դելլօբէլը։ Իր վառքի խաւարած բոպէին նա յիշեց այն մարդուն, որ նրա առաջին զեկավարն էր եղել աշխարհիկ կեանքում, որ նրա երևակայութեան միջոցին պարի և վայելչութեան դասեր էր տալիս նրան, ծիծաղում էր նրա գողտրիկ շարժուածքները տեսնելով և սովորեցնում էր նրան սիրուն համարել ինքն իրան, երբ դեռ ոչ ոք չէր ասել նրան այդ։ Սիդոնիի սիրտը վկայում էր, որ այդ դասալիք մարդը իր կողմը կը լինի, ուստի և նստեց դարպասի մօտ կանգնած կառքերից մէկի մէջ ու հրամայեց տանել իրան Բօմարշէ բուլվարը, Դելլօբէլների ընակարանը։

Մի ժամանակից ի վեր տիկին Դելլօբէլը յարդէ գլխարկներ էր շինում արտահանութեան համար,—մի սրտամաշ արհեստ, որ հազիւ հազ երկու ֆրանկ ու կէս եկամուտ էր տալիս նրան տասներկու ժամուայ աշխատանքի համար։

Իսկ Դելլօբէլը շարունակում էր հաստատել, մինչ իր «սուրբ կինը» նեհարանում էր աւելի ու աւելի։ Հէնց այժմ էլ նա պատրաստութիւն էր տեսնում ուտելու կրակարանի մոխրի մէջ տաք պահուած անուշաբոյր պանրապուրը, երբ յանկարծ ուժգին

ծեծեցին նրանց դուռը։ Դերասանը, որ հէնց նոր թատրոնում տեսել էր ինչ-որ մի մռայլ, արիւնաշաղախ դրամա, որի պատկերազարդ յայտարարութիւնն անգամ լի էր արիւնով, ցնցուեց՝ լսելով դռան բախումը այդպէս տարաժամ։

—Ո՞վ էք,—հարցրեց նա փոքր ինչ այլայլուած։

—Ես եմ... Սիդոնին... Շուտ արէք, բացէք դուռը։

Նա ներս մտաւ, ամբողջ մարմնով սրսռթալով, և, դէն գցելով վզակալը, մօտեցաւ վառարանին, ուր կրակը հանգչելու վրայ էր։ Նա սկսեց անմիջապէս խօսել, դուրս գցելով սրտի ամբողջ դայրոյթը, որ մի ժամից ի վեր խեղդում էր նրան։ Եւ երբ նա այդպէս պատմում էր գործարանում պատահածը, աշխատելով խլացնել ձայնը կողքներին քնած տիկին Դելլօբէլին չը զարթեցնելու համար, նրա չքեղ արդուզարդը հինգեբէլին չը զարթեցնելու համար, նրա չքեղ արդուզարդը հինգեբորդ յարկի այդ աղքատիկ ու լերկ սենեակում և նրա ճմռռուած պաճուճանքի սպիտակ փայլը այդ իրար վրայ դարսուած կոպիտ յարդէ գլխարկների ու գետնին ցիր ու ցան ցօղուած նակտորների մէջ՝ յիրաւի այնպիսի տպաւորութիւն էր գործում, ինչպէս մի դրամա, ինչպէս այն սարսափելի կենսական ցնցումներից մէկը, երբ դասակարգերը, զգացմունքները և կրքերը ոտնակոխ են լինում ու խառնուում իրար հետ։

—Օ՜, ես այլ ես ոչք չեմ գնի մեր տունը... Պրծած բան է... Այսուհետև ես ազատ եմ, ազատ։

—Բայց ո՞վ կարող էր մատնել քեզ ամուսնուդ, հարցրեց դերասանը։

—Ֆրանցը։ Ես հաստատ հաւատացած եմ, որ Ֆրանցն է արել այդ։ Ուրիշ ոչ ոքի չէր հաւատալ նա... Հէնց երէկ երեկոյ մի նամակ էր ստացել Եգիպտոսից... Օ՜խ, ինչպէս նա ատում է ինձ։ Բացրեց ինձ այն կինոջ մօտ... Զոքեցրեց նրա առաջ... Բայց ես կը հանեմ վրէժս։ Բարեբախտաբար, դուրս գալուց առաջ վերցրի հետս այն բանը, որ ինձ հնարաւորութիւն է տալու հանել վրէժս։

Եւ նրա հինաւուրց ժպիտը գալարուեց նրա գունատի չրթունքների անկիւնում։

Ծերունի դերասանը լսում էր այդ բոլորը ամենամեծ հետաքրքրութեամբ։ Զը նայելով իր կարեկցութեանը դէպի խեղճ Ուիսլերը, և նոյն իսկ դէպի Սիդոնին, որ, թատրոնական ոճով ասած, «գեղեցիկ մեղաւորուհի» էր թւում նրան, նա չը կարողացաւ չը վերաբերուել գործին զուտ բեմական տեսակէտից և ի վերջոյ բացականչեց, յափշտակուած իր թատրոնամոլութեամբ.

—Սակայն ինչ հիանալի դրութիւն է հինգերորդ գործողութեան համար...

Սիդոնին չը լսեց նրա ասածը։ Անձնատուր եղած ինչ-որ չար մտքերի, որոնք ժպիտ էին բերում նրա երեսին՝ դեռ ես չիրագործուած, նա մօտեցնում էր կրակին իր ոտները, որոնց թավանցիկ գուլպաները և նուրբ հողաթափները թրջուել էին ձիւնից։

—Հապա ինչ ես անելու այժմ,—հարցրեց Դելօբէլը մի բոպէ լուռ մնալուց յետոյ։

—Կը մնամ այստեղ մինչև առաւօտ... Մի քիչ կը հանգըստանամ... Իսկ յետոյ կը տեսնենք։

—Բայց անկողին չեմ կարող առաջարկել քեզ, խեղճ աղջիկս։ Կինս քնած է...

—Իմ մասին անհանգիստ մի եղէք, սիրելի Դելօբէլ... Ես բազկաթոռի մէջ էլ կարող եմ քնել։ Ես պահանջկոտ չեմ։

Դերասանը խոր հոգոց քաշեց։

—Հա, կարելի է բազկաթոռում քնել... Խեղճ Զիզիին բազկաթոռն էր այդ։ Ո՞րքան գիշերներ ոչնչել է նա դրա մէջ գործի թունդ ժամանակը... Լաւ որ մտածենք, բախտաւորը էլի նրանք են, որոնք շուտ են մեռնում։

Նա միշտ պատրաստ ունէր մի այդպիսի սփոփիչ ու եսական սկզբունք։ Խօսքը նոր էր վերջացրել, երբ սարսափով նկատեց, որ ապուրը բոլորովին սառելու վրայ էր։ Սիդոնին նկատեց նրա շարժումը։

—Կարծեմ, դուք ընթրիք էիք անում... Ինչու չէք շարունակում։

—Ճիշտ որ, ինչ արած... այդ մեր արհեստի, մեր տաժանելի կեանքի անբաժան մասն է կազմում... Ինչպէս տեսնում ես, աղջիկս, ես դեռ դիմանում եմ։ Չեմ հրաժարուել թատրոնից։ Երբէք չեմ հրաժարուի...

Այն, ինչ մնացել էր Դէզիրէյի հոգուց այդ խղճուկ շրջապատի մէջ, ուր նա ապրել էր քսան տարի, պէտք է անշուշտ սարսուռ զգար այդ սարսափելի խօսքերը լսելիս։ Նա չէր հրաժարուի երբէք...

Դելօբէլը շարունակեց.

—Ինչ ուզում են ասեն, դերասանութիւնից լաւ արհեստ չը կայ աշխարհում։ Մարդ բոլորովին ազատ է ու կախում չունի ոչ ոքից։ Ամեն ինչ միմիայն փառքի և հասարակութեան համար... Օ, ես գիտեմ, թէ ինչ կ'անէի քո տեղը։ Դու այդ բուրժուաների հետ ապրելու համար չէիր ստեղծուած, ես իմ

Աստուածը... Քեզ անհրաժեշտ էր արտիստական կեանք, յաջողութեան տենդ, անակնկալներ, յուզմունքներ։

Այդ ասելով նա նստեց, կապեց անձեռոցիկը կզակի տակը ու լցրեց իր համար մի ահագին ափսէ ապուրից։

—...Էլ չեմ ասում այն, որ սիրուհութեանդ յաջողութիւնները ամենևին չէին խանգարիլ դերասանական յաջողութիւններիդ... Մի բան ասեմ. վատ չէր լինի, եթէ դէկլամացիայի մի քանի դասեր առնէիր... Քո ձայնով, քո խելքով ու ընդունակութիւններով հրաշալի ապագայ կարող էիր ունենալ։

Եւ յանկարծ, կարծես ուզելով մասնակից անել նրան դերասանական արուեստի բերկրանքներին, աւելացրեց.

—Բոլորովին մոռացել էի, որ դու անշուշտ ընթրիք արած չես լինի... Իսկ երբ մարդ յուզմունքներ է կրում, փորը վեց վեց է անում։ Դստիր ուրեմն սեղանի մօտ ու վերցրու այս ամենը։ Հաւատացած եմ, որ վաղուց պանրապուր կերած չես լինի։

Նա տակնուվրայ արեց ամբողջ պահարանը Սիդոնիի համար անձեռոցիկ ու դդալ գտնելու համար, իսկ Սիդոնին նըստեց նրա դիմացը և սկսեց օգնել նրան, մի քիչ ծիծաղելով հիւրասիրութեան դժուարութիւնների վրայ։ Արդէն գունատութիւնը մի փոքր անցել էր։ Նոյն իսկ մի տեսակ գեղեցիկ փայլ կար նրա աչքերում, չնորհիւ մի փոքր առաջուայ արցունքների և այժմեան ուրախութեան։

Կատարեալ դերասանուհի։

Կեանքի ամբողջ երջանկութիւնը, պատիւը, ընտանիքը, հարստութիւնը կորցրել էր ընդ միշտ։ Արտաքսուել էր տանից, զրկուած ամեն բանից ու խայտառակուած։ Մի քիչ առաջ ենթարկուել էր ամեն տեսակ թշուառութիւնների։ Եւ սակայն այդ բոլորը չը խանգարեց նրան ընթրել հրաշալի ախորժակով և ուրախ-զուարթ պատասխանել Դելօբէլի կատակներին իր կոչման և ապագայ յաջողութիւնների մասին։ Նա զգում էր իրան թեթև, երջանիկ և պատրաստ մտնելու բօհեմական աշխարհը, իր համար ստեղծուած աշխարհը։ Ի՞նչ էր պատահելու այսուհետև նրան։ Ի՞նչ յաջողութիւններ ու ձախորդութիւններ էր տեսնելու նա իր նոր, անսպասելի ու քմահաճ կեանքում։ Այդ մտքերն էին զբաղեցնում նրան Դէզիրէյի մեծ բազկաթոռում քուն մտնելու ժամանակ, բայց նա մտածում էր նաև իր վրիժառութեան մասին, իր բաղցր վրիժառութեան մասին, որի զէնքը, անվրէպ ու դաժան զէնքը՝ նա պատրաստ ունէր ձեռքի տակ։

IV

Ֆրոմօնների առեւտրական նոր գործակալարը։

Մթւս առաւօտ շատ ուշ զարթնեց Ֆրոմօն կրտսերը։ Ամբողջ գիշերը, մինչ ներքեւում տեղի էր ունենում սարսափելի դրաման, իսկ վերեւում որոտում էր խրախճանքը, նա քնել էր խոր քնով, այն ջարդուած քնով, որով քնում են մահուան դատապարտուածները պատժի նախընթաց օրը և յաղթուած զօրապետները պարտութեան գիշերը, որից մարդ չի ուզում զարթնել ամենևին և որի ժամանակ մարդ նախապէս ծանօթանում է մահուան հետ չնորհիւ որ և է զգայութեան բացակայութեան։

Վարագոյրների միջով ներս թափանցող արևը, որին աւելի ևս պայծառութիւն էր տալիս՝ ամբողջ պարտէզը և շրջակայ տանիքները հատ խաւով պատող ձիւնի ցոլքը, սթափեցրեց նրան։ Նա ցնցուեց իր ամբողջ էութեամբ և, նոյն իսկ դեռ ուշքը բոլորովին գլուխը չեկած, զգաց այն անորոշ տխրութիւնը, որ մնում է մարդուս հոգու մէջ մոռացուած գժբախտութիւններից յետոյ։ Գործարանի բոլոր ծանօթ աղմուկները հնչում էին լիակատար թափով, խառնուելով մեքենաների խուլ հեքին։ Աշխարհը դեռ չէր կործանուել։

[illegible]

—Այսօր է պայմանաժամը... ասաց նա ինքն իրան։ ակամայ [illegible] ուզեցով նորից խորասուզուել իր խոր քնի մէջ։

Հնչեց գործարանի զանգը։ յետոյ ուրիշ զանգեր մօտակայքում, այնուհետև եկեղեցու զանգերը։

—Կէսօր է... Արդէն... Ի՞նչպէս քնով եմ անցել...

Նա զգաց մի փոքր իղձի խայթոցն մեծ սփոփանք, մտածելով, որ պայմանաժամի դրաման անցել է առանց իրան։ Ի՞նչպէս են վերջացրել ներքևում։ Ինչու՞ իրան իմաց չեն տուել։

Նա վեր կացաւ, դուրս նայեց վարագոյրի արանքով ու տեսաւ, որ Ռիսլէրն ու Սիգիզմունդը, որոնք այնքան ժամանակից ի վեր խաւով էին, պարտէզում կանգնած խօսում են իրար հետ։ «Տեսնես, ինչ է պատահել», մտածեց նա և ուզում էր դուրս գալ ու իջնել ներքև, բայց սենեակի դռանը պատահեց Կլէրին, որ կանգնեցրեց նրան.

—Դու չը պէտք է այժմ դուրս գաս,—ասաց Կլէրը։

—Ինչու՞։

—Կաց այստեղ... Ես քեզ կը բացատրեմ։

—Բայց ինչ է պատահել... Բանկից մարդ ուղարկել էին։

—Այո, ուղարկել էին... պարտքը վճարուած է արդէն։

—Վճարուած։

—Ռիսլէրը փող գտաւ, տուեց... Առաւօտուանից Պլանիուսի հետ միասին ոտնատակ է տալիս ամբողջ քաղաքը... Ինչպէս երևում է, հիանալի գոհարներ է ունեցել կինը... Հէնց միայն ադամանդէ վզնոցը ծախել է քսան հազար ֆրանկով... Նա ծախել է նաև Անիէրում ունեցած իրանց ամբողջ տունն ու տեղը։ բայց որովհետև ժամանակ էր հարկաւոր վաճառման թղթերը հաստատելու համար, Պլանիուսն ու իր քոյրը պարտք տուեցին այդքան դուսմար։

Նա երևսը չուռ էր տուել այդ ասելիս։ Ժօրժն էլ գլուխը քաշ էր դցել նրա հայեացքին չը հանդիպելու համար։

—Ռիսլէրը աղնիւ մարդ է,—շարունակեց Կլէրը,—և երբ իմացաւ, թէ ունիից էր իր կինը ընծայ ստացել այդ թանկագին բաները...

—Ի՞նչպէս,—ասաց Ժօրժը սարսափահար,—նրան յայտնի է...

—Ամեն ինչ... պատասխանեց Կլէրը, ցածացնելով ձայնը։ Թշուառականը դուռնթափուեց, սկսեց լեղուն ծամել։

—Ուրեմն... դու էլ։

—[illegible] Ռիսլէրից էլ ասաց գիտէի ամեն ինչ։ Ցիտ [illegible] բաներ էր լսել այնտեղ և որ [illegible] սարսափելի բաներ էր լսել։ [illegible] թէ այդ ճանապարհը դուրս չի գալիս [illegible] հարդութիւնը արած չը լինէր։

—Կլէր։

Ժօրժը սաստիկ խանդաղատուեց և մի քայլ արեց կնոջը մօտենալու համար, բայց այնքան սառը, այնքան ախուր ու վճռական էր Կլէրի դէմքը, այնպիսի յուսահատութիւն, այնպիսի անողոք անտարբերութիւն էր երևում նրա ամբողջ կերպարանքում, որ նա չը համարձակուեց կատարել իր ցանկութիւնը, չը ասեց նրան իր կրծքին, այլ ասաց միայն հանգիստ։

—Ներիր ինձ... Ներիր...

—Երևի զարմանում ես ինձ այսպէս հանգիստ տեսնելով,—ասաց կորովի կինը,—բայց երէկ այնքան լաց եղայ, որ աչքումս էլ արցունք չը մնայ։ Եթէ դու կարծում էիր, թէ մեր մանկութիւնն էի լալիս երէկ, դու սխալւում էիր։ Քանի որ մարդ մեղ նման ջահել է և դեռ ոյժ ունի մէջը, ամօթ է այդպէս թուլամորթ լինել։ Աղքատութեան դէմ մենք զէնք ունենք

մեր ձեռքին և կարող ենք կռուել նրա հետ ճակատ առ ճակատ... Չէ՝ ես ողբում էի մեր չքացած երջանկութիւնը, ես ողբում էի քեզ, քո խելագարութիւնը, որ զրկեց քեզ քո միակ, քո ճշմարիտ բարեկամից...

Կլէրը գեղեցիկ էր այդ խօսքերն արտասանելիս, այնպէս գեղեցիկ, ինչպէս չէր եղել երբէք Սիդոնին, և այնպէս պայծառակերպուած, որ կարծես լոյսը շատ բարձրից էր իջնում նրա վրայ, ինչպէս խոր ու անամպ երկնքի շողք, մինչդեռ Սիդոնիի անկանոն, բայց սիրուն դիմագծերը կարծես թէ իրանց փայլը, իրանց քմահաճ ու աներես հրապոյրը ստանալիս լինէին մի որ և է փոքրիկ թատրոնի բեմպայի արուեստական ցոլքերից։ Կլէրի դէմքը, որ առհասարակ փոքր ինչ սառն էր ու անշարժ, այժմ կենդանութիւն էր ստացել բուռն զգացմունքի ազդած անհանգստութիւնների, կասկածների ու տանջանքների շնորհիւ, և ինչպէս ոսկէ ձոյլերը իրանց արժէքը ստանում են միայն այն ժամանակ, երբ փողերանոցում դնում են նրանց վրայ զաութեան ասաիճանացոյցը, այնպէս էլ այդ կանացի գեղեցիկ դէմքը, որ վչտի դրոշմ էր կրում, երէկուանից ինչ որ անջնջելի արտայայտութիւն էր պահպանել, որ լրացնում էր նրա գեղեցկութիւնը։

Ժօրժը նայում էր նրան հիացած։ Կլէրը թւում էր նրան աւելի կենդանի, աւելի կանացի, քան առաջ, և պաշտելի, շնորհիւ այն բոլոր արգելքների, որոնք այժմ անջատում էին նրանց իրարից։ Եղբայրութեան, յուսահատութեան և ամօթի զգացմունքի հետ միաժամանակ նրա սրտում ծագեց այդ նոր սէրը, և նա ուզեց չոքել կնոջ առաջ։

—Չէ, չէ, վեր կաց,—ասաց նրան Կլէրը.—եթէ իմանայիր, թէ ինչ ես յիշեցնում ինձ դրանով, եթէ իմանայիր, թէ ինչ ստախօս և ատելութեամբ լի կերպարանք եմ տեսել այս գիշեր ոտքերս ընկած։

—Օ՜հ, չէ, ես չեմ խաբում... պատասխանեց Ժօրժը, սարսռալով... Կլէր, աղաչում եմ, պաղատում եմ յանուն մեր երեխայի...

Այդ բոպէին դուռը ծեծեցին։

—Դէ վեր կաց։ Չես տեսնում, որ կեանքը մեզ կանչում է... ասաց Կլէրը նրան ցած ձայնով և դառն ժպիտով. յետոյ նա հարցրեց, թէ ինչ են ուզում։

Ասացին, որ պ. Ռիսլէրը խնդրում է, որ պարոն Ժօրժը գնայ ներքև, գրասենեակը։

—Լաւ,—պատասխանեց Կլէրը,—ասացէք՝ այս բոպէիս։

Ժօրժը ոտը փոխեց, որ սենեակից դուրս գայ, բայց Կլէրը կանգնեցրեց նրան։

—Չէ, թող ես գնամ։ Դեռ նա չը պէտք է քեզ տեսնի։

—Բայց չէ՞ որ...

—Ես քեզ ասում եմ, որ չը պէտք է գնաս։ Դու չը գիտես, թէ ինչպէս վրդովուած ու զայրացած է այդ թշուառ մարդը, որին դուք խաբում էիք այնքան ժամանակ։ Եթէ տեսնէիր, թէ ինչպէս էր նա այս գիշեր կոտրտում իր կնոջ ձեռները...

Նա այդ ասում էր Ժօրժին, նայելով ուղիղ աչքերի մէջը, մի այնպիսի հետաքրքրութեամբ, որ դաժան էր նոյն իսկ իր վերաբերմամբ. բայց Ժօրժը չայլայլուեց և բաւականացաւ ասելով.

—Իմ կեանքը պատկանում է նրան։

—Քո կեանքը ինձ էլ է պատկանում. իսկ ես չեմ ուզում, որ դու ներքև գնաս։ Առանց այն էլ շատ խայտառակութիւն տեղի ունեցաւ հօրս տանը։ Գիտես, որ ամբողջ գործարանին յայտնի է ամեն ինչ։ Մեզ հետևում են, մեզ լրտեսում են։ Վերակացուները իրանց ամբողջ հեղինակութիւնը գործ դնելով միայն կարողացան աշխատեցնել այսօր բանուորներին, ստիպել, որ նրանք իրանց գործի հետ լինեն ու քաշ գցեն իրանց հետաքրքիր հայացքները։

—Բայց կարող են կարծել, թէ ես թագնուում եմ։

—Հէնց մի քիչ էլ թող կարծեն։ Այդպէս էք բոլոր տղամարդիկդ։ Դուք կարող էք կանգ չառնել ամենազզուելի յանցանքների առաջ, կարող էք խաբել ձեր կնոջը, ձեր մտերմին, բայց այն միտքը, թէ կարող են ձեզ մեղադրել, թէ վախենում էք, հանգստութիւն չի տալիս ձեզ... Բացի այդ, լաւ լսիր, Սիդոնին գնացել է, նա գնացել է ընդ միշտ. եթէ դու այժմ դուրս գաս այստեղից, ես պէտք է կարծեմ, թէ գնում ես նրան գտնելու։

—Շատ լաւ, կը մնամ,—ասաց Ժօրժը... ինչ որ ուզես կ'անեմ։

Կլէրը գնաց Պլանիւսի գրասենեակը։

Ով որ տեսնէր Ռիսլէրին այդպէս ձեռները յետեին դրած ու սովորականի պէս հանգիստ գնալ-գալիս, երբէք չէր կարողանայ կասկածել, թէ ինչ էր անց կացել նրա գլխովը երէկուանից իվեր։ Ինչ վերաբերում է Սիդիդմունդին, նա ուրախութիւնից ցնծում էր, այդ ամբողջ պատմութեան մէջ տեսնելով միայն այն, որ իրանց պարտքը պայմանաժամին վճարուած էր և առատան պատիւը մնացել էր անվնաս։

Երբոր տիկին Ֆրոմոնը ներս մտաւ, Ռիսլէրը տխուր—տխուր ժպտաց ու թափ տուեց գլուխը։

—Ես գիտէի, որ դուք կը գաք նրա փոխարէն, բայց ձեզ հետ չէ իմ գործը։ Անպայման հարկաւոր է, որ ես նրան տեսնեմ ու հետը խօսեմ։ Այս առաւօտուայ վճարելիքը տուեցինք։ ամենադժուար բոպէն անցաւ. բայց դեռ շատ բան ունենք միասին վճռելու։

—Ռիսլէր, սիրելի բարեկամս, խնդրում եմ, մի քիչ էլ սպասեցէք։

—Ինչու՞ սպասեմ, տիկին Շօրշ։ Ոչ մի բոպէ չը պէտք է կորցնենք... Հա՛, գիտեմ, վախենում էք, որ յանկարծ չը կարողանամ զսպել բարկութիւնս... Հանգիստ եղէք... Հանդստացրէք նրան... Ես արդէն ասացի ձեզ, որ նախ քան իմ պատիւը՝ ինձ զբաղեցնում է Ֆրոմոնների առևտրատան պատիւը, որ ես գետնովն եմ տուել իմ սիրալմունքի շնորհիւ։ Ամենից առաջ ես պէտք է ուղղեմ այն չարիքը, որ ես արել եմ կամ որ ես թոյլ եմ տուել անել։

—Ինձ լաւ յայտնի է, սիրելի Ռիսլէր, որ ձեր վերաբերմունքը դէպի մեզ վեր է ամեն գովասանքից։

—Օխ, տիկին... եթէ տեսնէիք, թէ ինչեր է անում... սուրբ մարդ է սա, սուրբ... ասաց խեղճ Սիգիզմունդը, որ, չը համարձակելով խօսել իր բարեկամի հետ, ուզում էր գոնէ ցոյց տալ նրան իր խղճահարութիւնը։

Կլէրը շարունակեց.

—Բայց չէք վախենում... Մարդկային ոյժերը անսահման չեն... Գուցէ այն մարդու ներկայութեամբ, որ այնքան չարիք է պատճառել ձեզ...

Ռիսլէրը բռնեց նրա ձեռքերից ու լուրջ հիացմունքով նայեց նրա աչքերի մէջ.

—Աքանչելի հոգի, դուք միմիայն ինձ պատճառած չարիքի մասին էք խօսում... Բայց չը գիտէք, որ ես ատում եմ նրան նոյնչափ և այն պատճառով, որ նա գաւաճանել է ձեզ... Սակայն այս բոպէիս այդ բոլորը գոյութիւն չունի ինձ համար։ Այստեղ ձեր առաջ կանգնած է միմիայն մի վաճառական, որ ուզում է խորհրդակցել իր ընկերակցի հետ առևտրատան շահերի մասին։ Թող ուրեմն նա անհերկիւղ գայ այստեղ, իսկ եթէ դուք վախենում էք, որ ես չը կարողանամ ինձ զսպել, մնացէք մեզ հետ։ Բաւական է նայեմ իմ նախկին տիրոջ աղջկայ վրայ, որպէս զի յիշեմ իմ խոստումը և իմ պարտականութիւնը։

—Ես հաւատում եմ ձեր խօսքին, սիրելի բարեկամ,— ասաց Կլէրը ու գնաց ամուսնուն կանչելու։

Տեսակցութեան առաջին բոպէն սարսափելի էր։ Ժորժը սպրտնած էր, այլայլուած ու ամօթահար։ Նա հազար անգամ կը կերազաւոր կանգնել Ռիսլէրի ատրճանակի առաջ քան բայց տարաձութեան վրայ և սպասել կրակելուն, քան երեսել նրա աչքին իբր անպատիժ մնացած յանցաւոր և սարսափելի զսպել զգայմունքները ու բուրժուական հանդստութեամբ խօսել առևտրական գործերի մասին։

Ռիսլէրը չէր նայում նրա երեսին և խօսում էր, շարունակելով մեն դալ մեծ-մեծ քայլերով։

—...Մեր առևտրատունը սարսափելի ճգնաժամի մէջ է... Այսօր մենք ազատուեցինք սնանկութիւնից, բայց դեռ շատ վճարելիքներ ունենք... Այդ նզովեալ գիւտը երկար ժամանակ ինձ չէր թողնում ուրիշ բանով զբաղուել։ Բարեբախտաբար այժմ ես ազատ եմ և կարող եմ զբաղուել գործերով։ Բայց պէտք է, որ դուք էլ զբաղուէք։ Բանուորներն ու ծառայողներն էլ մի քիչ հետևել են մեր օրինակին։ Այնպիսի անկարգութիւն է տիրում գործարանում, որ չունը տիրոջը չի ճանաչում։ Մի տարիից ի վեր այս առաւօտ առաջին անգամն է, որ ճիշտ ժամանակին են սկսել բանել։ Ցոյս ունեմ, որ դուք ամեն ինչ կարգի կը բերէք։ Ինչ վերաբերում է ինձ, ես կը զբաղուեմ իմ նկարներով։ Մեր տիպարները հնացել են։ Նոր մեքենաների համար նոր տիպարներ են հարկաւոր։ Ես շատ բան եմ սպասում մեր տպագրիչներից, փորձերը իմ յուսացածիցը աւելի աջողող դուրս եկան։ Նրանց շնորհիւ մենք անչուշտ կը կարողանանք վերականգնել մեր առևտուրը։ Առաջ չէի ասում ձեզ այդ, որովհետև ուզում էի յանկարծ զարմացնել ձեզ. բայց այժմ այլ ես իրար զարմացնելու ոչինչ չունենք, չէ՞, Ժորժ։

Այնքան դառն հեգնութիւն կար նրա ձայնի մէջ, որ Կլէրը դողդողաց, վախենալով բռնկումից, բայց նա շարունակեց շատ հասարակ կերպով։

—Այո, կարծում եմ, որ կարելի է հաստատ ասել, որ վեց ամիս անցած հիանալի հետևանքներ կարող է տալ Ռիսլէրեան տպագրիչը։ Սակայն այդ վեց ամսուայ ընթացքում շատ ծանր կը լինի մեր դրութիւնը։ Պէտք է զսպենք մեզ, պակասեցնենք ծախսերս և, որքան կարելի է, խնայողութիւն անենք։ Հինգ գծագրիչ ունէինք, այսուհետև երկուսն էլ մեզ բաւական է։ Մնացածների գործը ես կ'անեմ, գիշերները աշխատելով։ Բացի այդ, այս ամսից սկսած ես հրաժարւում եմ իմ առևտրականից շահաբաժնից։ Ես կը սահմանամ այսուհետև գլխաւոր վարպետի ռոճիկ, ինչպէս առաջ էի սահմանում, և աւել ոչինչ

Ֆրոմոն կրտսերը ուզեց մի բան ասել, բայց կինը ձեռքով արեց, որ լռի, և Ռիսլերը աւագը շարունակեց.

—Ես այլ ևս ձեր առևտրակիցը չեմ, Ժորժ։ Ես նորից ստանձնում եմ իմ նախկին պաշտօնը, որից երբէք չը պէտք է հրաժարուէի... Այսօրուանից մեր ընկերակցական պայմանը ոչնչացած պէտք է համարել։ Ես այդպէս եմ կամենում, հասկանում էք, այդպէս։ Ես կը շարունակեմ մնալ ձեր գործակատարը, մինչև որ ձեր առևտրատունը ազատուի տագնապից և ես կարողանամ... Բայց թէ ինչ կ'անեմ ես այն ժամանակ, այդ ոչ ոքի չի վերաբերում բացի ինձնից... Ահա այս էր իմ ասելիքը ձեզ, Ժորժ։ Պէտք է, որ դուք առանդուն կերպով ղբաղուէք գործարանով, պէտք է, որ ձեզ միշտ տեսնեն, զգան իրանց տիրող ներկայութիւնը, և յոյս ունեմ, որ մեր գլխին եկած թշուառութիւնների մէջ կը գտնուեն այնպիսիները, որ կարելի է ուղղել։

Այդ խօսքերին յաջորդող լռութեան միջոցին անիւների դղրդոց լսուեց պարտէզից և կահակիր երկու ահագին կառքեր եկան կանգնեցին պատշգամբի առաջ։

—Ներողութիւն,—ասաց Ռիսլերը,—ես պէտք է մի բոպէով հեռանամ ձեզնից։ Աճուրդարանից կառքեր են ուղարկել կահ-կարասիքս տանելու համար։

—Ի՞նչպէս, կահ-կարասիքն էլ ծախում էք... հարցրեց տիկին Ֆրոմոնը։

—Անշուշտ... մինչև վերջին չիւղը... Առևտրատան կահ-կարասիքն է այդ և ես վերադարձնում եմ առևտրատանը։

—Բայց այդ անկարելի բան է,—ասաց Ժորժը... Ես չեմ կարող տանել այդ։

Ռիսլերը շուռ եկաւ դէպի նա, լի ցասումով.

—Ի՞նչ էք ասում։ Ի՞նչ բան չէք կարող տանել։

Կլերը ազաչական կերպով ձեռքով արեց, որ զսպի բարկութիւնը.

—Հա... մոռացել էի... չընջայ Ռիսլերը ու չտապեց դուրս գալ, որովհետև վախենում էր, որ չի դիմանալ այլ ևս և դուրս կը թափի վերջապէս սրտի ամբողջ մաղձը։

Երկրորդ յարկը դատարկ էր։ Ռիսլերը առաւօտուանից ճանապարհ էր դրել բոլոր ծառայողներին, որոնք, իրանց ամսականները առանալով, գնացել էին առանց կարգի բերելու սենեակները երէկուայ ինջոյքից յետոյ, այնպէս որ բնակարանը այն առանձին տեսքն ուներ, որ ունենում են այն տեղերը, ուր մի քիչ առաջ աղէտ է տեղի ունեցել և որոնք մնում են առկախ արդէն կատարուած և նոր կատարուելիք դէպքերի մէջ։

Բայց մնացած դռները, անկիւններում կիտած գորգերը, մատուցարանների վրայ չարած բաժակները, ընթրիքի պատրաստութիւնները, սեղանը, որ գցած էր, բայց որին դեռ ոչ ոք ձեռք չէր տուել, կահ-կարասիների վրայ պարերից նստած փոշին, պարահանդէսի բուրմունքները, բաղկացած փունջի, թառամած ծաղիկների ու երեսափոշիի խառն հոտերից,—այդ բոլոր մանրամասնութիւնները ազդեցին Ռիսլերի վրայ հէնց մտնելու բոպէից։

Տակն ու վրայ եղած դահլիճում դաշնամուրը մնացել էր բաց, Օրֆեյը դժոխքում օպերէտտի բաքանալիան նօտակալի վրայ, և այդ անկարգութիւնը պարուրող պայծառագոյն պատառները ու գեանատապակ, կարծես սարսափահար, աթոռները՝ այնպիսի տպաւորութիւն էին գործում, ինչպէս մի խորտակուող նաւի դահլիճ այն սոսկալի աղէտալից գիշերներից մէկի ժամանակ, երբ նաւորդները խրախճանքի միջոցին յանկարծ իմանում են, որ նաւի կողքը ճեղքուել է ընդհարումից և ամեն կողմից ջուր է լցւում մէջը։

Սկսեցին կահ-կարասիքը դուրս կրել։

Ռիսլերը նայում էր կահակիրներին մոքամոլոր դէմքով, կարծես թէ ուրիշի բնակարան էին դատարկում։ Այդ չքեղ կահ-կարասիքը, որ մի ժամանակ այնքան ուրախացնում և հպարտացնում էր նրան, այժմ անտանելի զզուանք էր պատճառում նրան։ Սակայն կնոջ սենեակը մտնելիս նա մի քիչ յուզուեց։

Մի մեծ սենեակ էր այդ, պատած կապոյտ սնդուսով, որ ծածկուած էր ոսկեգոյն ժանեակներով, կատարեալ մի բոյն կօտ կնոջ։ Ամեն կողմ թափթփուած էին պատառուած ու ճմռուած շղարշէ զգեստազարդեր, հանգոյցներ ու արուեստական ծաղիկներ։ Պատահայելիի մոմերը, մինչև վերջը վառուելով, տրաքացրել էին իրանց ապակիէ օղակները, իսկ անկողինը, որ, իր ժանեակներով ու կապոյտ վերմակածածկերով և իր բացած ու վեր քաշած առագաստներով, մնացել էր անձեռնամուխ այդ խառնաշփոթութեան մէջ, այնպիսի տպաւորութիւն էր գործում, ինչպէս մի մեռած կնոջ մահիճ, մի հանդիսային անկողին, ուր այլ ևս ոչ ոք չի քնելու երբէք։

Ներս մտնելու բոպէին սարսափելի զայրոյթ զգաց Ռիսլերը և ցանկութիւն՝ յարձակուել այդ բանների վրայ, ինչ կայ չը կայ պատռել, կտրել, ջարդ ու փշուր անել։ Որովհետև չը կայ ոչ մի բան, որ այնքան նման լինի մի կնոջ, որքան նրա սենեակը։ Նոյն իսկ նրա բացակայութեան ժամանակ նրա կերպարանքը ժպտում է դեռ ևս նրա հայելիների մէջ։ Այն բոլոր իրերի մէջ, որոնց նա ձեռք է տուել, մնում է միշտ մի փոքր

բան նրանից, նրա սիրած անուշահոտութիւնից։ Նրա նատուածքը դրոշմուում է բազմոցի բարձերի վրայ և թուում է, թէ գորգերի նաշխերի մէջ երևում են նրա քայլերի հետքերը արդասեղանի ու հայելիի արանքին։ Այս սենեակում Սիգօնիին ամենից շատ յիշեցնողը նրա դարակակալն էր, լի երևելիական մանրոյթներով, ինչին ու անուշան չինեղէններով, խոշորացուցային հովհարներով, տիկնիկների անօթներով, ոսկեզօծ մաշիկներով և յախճապակէ փոքրիկ հովիւներով ու հովուուհիներով, որոնք դէմ առ դէմ կանգնած փայլուն ու սառը հայեացքներ են փոխանակում իրար հետ։ Սիգօնիի հոգին էլ այդպիսի մի դարակակալ էր, և նրա՝ միշտ տափակ, միշտ մանր-մունր, սնափառ ու դատարկ մտքերը շատ նման էին այդ չնչինութիւններին։ Եւ, յիրաւի, եթէ այդ գիշեր Ռիսլէրը, նրա կռնիցը բռնած ժամանակ, կատաղած բոպէին ջարդէր նրա փոքրիկ ու դիւրաբեկ գլուխը, մէջիցը, ուղեղի փոխարէն, անպատճառ դուրս կը թափուէին հաղար ու մի դարակազարդ մանր-յիշներ։

Խեղճ մարդը տխուր-տրտում մտածում էր այդ բաների մասին կահակիրների ոտնաձայնի և մուրճերի աղմուկի մէջ, երբ յանկարծ յետևի կողմից լսեց կակտան ու վստահ քայլերի ձայն և մի վայրկեան անցած տեսաւ իր առջևը պ. Շէբլին, փոքրիկ, կարմրատակած, չնչակտուր ու բորբոքուած պ. Շէբլին։ Աչքերը, ինչպէս միշտ, շատ բարձրից վերաբերուեց իր փեսային։

—Այս ինչ բաներ են, այս ինչեր եմ լսում։ Վա՛յ, տունները փոխում էք, ինչ է...

—Չեմ տեղափոխուում, պ. Շէբ... այլ ծախում եմ։

Փոքրիկ մարդուկը վեր թռաւ կանգնած տեղումը, ինչպէս տաք ջրի մէջ դցած ձուկ։

—Ծախում էք։ Ի՞նչ էք ծախում։

—Ինչ կայ չը կայ,—ասաց Ռիսլէրը խուլ ձայնով, առանց նոյն իսկ նրա երեսին նայելու։

—Լսիր, սիրելի փեսայ, մարդ պէտք է խելքով բան բռնի։ Ի հարկէ, չեմ ուզում ասել, թէ Սիգօնիի վարմունքը... Թէպէտ, իսկն ասած, ես ոչինչ չը գիտեմ։ Ես երբէք չեմ ուզեցել խառնուել այդ բաների մէջ... Ես միայն ձեր պատիւն եմ ձեզ յիշեցնում։ Կեղտոտ փոխնորդը տանը կը լուանան, այ մարդ։ Ով է տեսել, որ մարդ իրան ամբողջ աշխարհի առաջ խաղք ու խայտառակ անի, ինչպէս դուք էք անում այս առաւօտից ի վեր։ Մէկ նայեցէք, թէ ինչպէս են բոլորը արհեստանոցների լուսամուտներին կպած ու դարպասի տակ կիսուած ձեզ մտիկ տալիս... Բոլոր թաղականների բերնի ծամոնն էք դարձել, սիրելիս։

—Աւելի լաւ։ Խայտառակութիւնը հրապարակական կերպով է կատարուել, պատուի վերականգնումն էլ պէտք է հրապարակական կերպով կատարուի։

Ռիսլէրի այդ առերեսոյթ հանգստութիւնը, այն անտարբերութիւնը, որով նա վերաբերուում էր իր աներջ բոլոր ասածներին, յուսահատեցրին պ. Շէբլին։ Նա յանկարծ փոխեց խօսակցութեան եղանակը ու սկսեց խօսել նրա հետ այնպիսի լուրջ ու առարկութիւն չը վերցնող ձեւով, ինչպէս խօսում են երեխաների ու խելագարների հետ։

—Էհ, որ այդպէս է, ես ձեզ ասում եմ, որ դուք իրաւունք չունէք ոչ մի բան վերցնելու այստեղից։ Ես բացարձակ կերպով արգելում եմ ձեզ այդ և կը դիմադրեմ ձեզ իմ առնական ամբողջ ոյժով, իմ հայրական ամբողջ իշխանութեամբ։ Ինչ է, կարծում էք, թէ ես կը թողնեմ, որ աղջիկս ամեն բանից զրկուի ու ստիպուած լինի չոր գետնին քնել... Չէ, ներողութիւն կ'անէք... Ինչքան գժութիւն արեցիք՝ բաւական է։ Այլ ես ոչ մի չիւղ դուրս չեն տանի այս բնակարանից։

Եւ պ. Շէբը, փակելով դուռը, կանգնեց շեմքի առջևը հերոսական դիրքով։ Ախր, սատանան տանի, չէ՞ որ նրա չանն էլ վտանգի էր ենթարկուում։ Չէ՞ որ եթէ, ինչպէս նա ասում էր, նրա աղջիկը ստիպուած լինէր չոր գետնին քնել, նա ինքն էլ դժուար թէ կարողանար ազմուամազէ անկողին ունենալ։ Նա հրաշալի էր այդ՝ զայրացած հօր դիրքում, բայց երկար չը մնաց այդպէս։ Երկու ձեռքեր, կարծես երկու երկաթէ մամուլներ, բռնեցին նրա կռներից և տարան կանգնեցրին նրան սենեակի մէջտեղը, ազատ թողնելով դուռը կահակիրների համար։

—Շէբ, սիրելիս, լաւ լսեցէք ինձ,—ասում էր Ռիսլէրը՝ կռացած դէպի նա... Այ, այստեղ է հասել... Առաւօտից ի վեր սարսափելի ճիգ եմ թափում ինձ զսպելու համար, բայց ամենևին մի պատճառ բաւական է ինձ համբերութիւնից հանելու համար, և վայ նրան, ում դլխին կը թափեմ բարկութիւնս։ Աչքերս այնպէս կարմրել են, որ կարող եմ մարդասպանութիւն անել... Այնպէս որ լաւ կ'անէք, եթէ իսկոյն թողնէք դնաք...

Այնպիսի չնչտ կար նրա խօսքերի մէջ, այդ ասելիս այնքան պերճախօս կերպով էր նա ցնցում իր աներջը, որ պ. Շէբը իսկոյն և եթ համոզուեց։ Նա նոյն իսկ սկսեց կմկմալով նեղութիւն խնդրել։ Ի հարկէ, Ռիսլէրը իրաւունք ունէր այդպէս վարուելու։ Բոլոր աղնիւ մարդիկ նրա կողմը կը լինեն...

եւ այդպէս կմկմալով նա յետ-յետ էր գնում դէպի դուռը։ Շէմքին հասնելով, նա վախվխելով հարցրեց, թէ արդեօք տիկին Շէրը այսուհետև էլ ստանալու է իր փոքրիկ թոչակը փեսայից։

—Այո,—պատասխանեց Ռիսլէրը,—բայց թոչակից աւելի չը ծախսէք, որովհետև այժմ իմ գրութիւնս փոխուել է։ Ես այլ ևս առևտրատան մէջ մաս չունեմ։

Պ. Շէրը զարմանքից չռեց աչքերը և ստացաւ այն ապուշ կերպարանքը, որ չատերին կարծել էր տալիս, թէ նրա գլխին եկած պատահարը,—յիշում էք, իսկ և իսկ այնպիսի պատահար, որ Օռլէանի դուքսի գլխին էլ էր եկել,—հնարովի բան չէր։ Բայց նա չը համարձակուեց որ և է նկատողութիւն անել փեսային։ Կարծես մի կախարդ փոխել էր նրա փեսայի բնաւորութիւնը։ Ով կ'ասի, թէ իրանց Ռիսլէրն է սա, այս վագրակատուն, որ ծպտուն հանելիս ժանիքները կրճատացնում էր և ուրիշ խօսք չունէր՝ բացի մարդասպանութիւնից։

Նա սուս ու փուս հեռացաւ, քիթը նորից բարձրացրեց միմիայն սանդուխի ներքևում և անցաւ բակովը՝ քայլելով յաղթական կերպարանքով։

Երբոր ամբողջ բնակարանը դատարկեցին, Ռիսլէրը վերջին անդամ չրջեց բոլոր սենեակները և յետոյ վերցրեց բանալիքը, տարաւ ներքև Պլանիւսի սենեակը ու տուեց տիկին Ժօրժին։

—Այժմ կարող էք վարձով տալ այդ բնակարանը,—ասաց նա,—այդ էլ եկամուտի մի նոր աղբիւր կը լինի գործարանի համար։

—Իսկ գուք, սիրելի բարեկամ։

—Էհ, ինձ քիչ բան է պէտք։ Մի երկաթէ մահճակալ վերնատանը չատ բաւական է ինձ նման մի գործակատարի համար։ Որովհետև, կրկնում եմ, այսուհետև ես ոչ այլ ինչ եմ, թէ ոչ մի հասարակ գործակատար... կարող եմ ասել՝ մի լաւ, մի կորովի ու հաւատարիմ գործակատար, որից, հաւատացած եղէք, գուք առիթ չէք ունենալ երբէք գանգատուելու։

Ժօրժը, որ հաշիւներ էր անում Պլանիւսի հետ, այնքան յուզուեց լսելով խեղճ Ռիսլէրի այդ խօսքերը, որ վեր թռաւ տեղիցը ու դուրս գնաց սենեակից։ Հեկեկանքները խեղդում էին նրան։ Կլէրը նոյնպէս սաստիկ յուզուեց և մօտենալով Ֆրոմոնների առևտրատան նոր պաշտօնեային.

—Ռիսլէր,—ասաց նրան,—շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ իմ հօր անունից։

—Ես էլ չարունակ նրա մասին եմ մտածում, տիկին,—պատասխանեց Ռիսլէրը ամենապարզ կերպով։

Այդ բոպէին Աշիլ քեռին ներս մտաւ ու բերեց նոր ստացուած նամակները։

Ռիսլէրը վերցրեց նամակների այդ կոյտը և սկսեց հանդիստ կերպով մէկ-մէկ բաց անել, կարդալ ու յետոյ տալ Սիգիսմունդին։

—Ահա մի յանձնարարութիւն Լիոնի համար... Ինչու պատասխան չեն ուղարկել Սէնտ-Էտիէն։

Նա ամէն ջանք թափում էր խորաթաղուելու այդ գործերի մանրամասնութիւնների մէջ և այդ անում էր մտքի զարմանալի պայծառատեսութեամբ, որ յառաջանում էր նրա հոգու յարատև ձգտումից դէպի անդորրութիւնն ու մոռացութիւնը։

Յանկարծ, այդ լայն ծրարների մէջ, որոնց վրայի գրոշմները կրում էին զանազան առևտրական անուններ և որոնց թղթից ու ծալուածքից գրասենեակի ու չատ առաքման հոտ էր փչում, նա նկատեց մի աւելի փոքր ծրար, որ հոգատարութեամբ էր կնքուած և այնպէս գողունի կերպով էր սպրտել միւսների արանքին, որ նա սկզբում չէր նշմարել։ Նա իսկոյն ճանաչեց այդ նուրբ, երկարուկ ու հաստատուն գիրը։ «Պարոն Ռիսլէրին։—Անձնական»։ Սիգօնիի գիրն էր այդ։ Տեսնելով այդ գիրը, Ռիսլէրը նոյնը զգաց, ինչ որ մի քիչ առաջ զգացել էր վերևում, նրա սենեակում։

Խարուած ամուսնու ամբողջ սէրը, ամբողջ ցասումը բորբուքեցին նրա սրտում այնպիսի ուժգնութեամբ, որ մարդասպան է դարձնում մարդու։ Ինչ էր գրում նա իրան, էլ ինչ ասելիք էր հնարել։ Նա ուզում էր արդէն բանալ նամակը, այլ բաց չարեց։ Նա հասկացաւ, որ եթէ կարդար այդ նամակը, այլ ևս սրտումը կորով չէր մնալ, ուստի կռանալով դէպի դանձարանը.

—Սիգիզմունդ, ծերուկս,—ասաց նրան ցած ձայնով,—կարող եմ խնդրել, որ մի ծառայութիւն մատուցանես ինձ։

—Ի՞նչ ասելու բան է... յափշտակութեամբ պատասխանեց ծերուկը, որ անչափ բախտաւոր էր լսելով, որ իր բարեկամը խօսում է հետը իր հինաւուրց քաղցր ձայնով։

—Ա՛ռ այս նամակը, որ գրուած է իմ անունով և որ ես չեմ ուզում այժմ կարդալ։ Հաւատացած եմ, որ դա կ'արգելի ինձ մտածել ու ապրել։ Պահիր մօտդ, այս էլ հետը...

Նա հանեց գրպանիցը հոգատարութեամբ կապկպած մի փոքրիկ ծրար ու տուեց նրան ցանցապատի միջով։

—Այս է այն բոլորը, ինչ որ ինձ մնացել է անցեալից ու այն կնոջից... Ես վճռել եմ այլ ևս չը տեսնել ոչ նրան, ոչ էլ որևէ բան, որ յիշեցնում է նրան, մինչև որ այստեղի գործերս

չը վերջացնեմ ինչպէս պէտք է... Այս բանի համար ինձ պէտք է ամբողջ ուշ ու միտք, հասկանում ես... Դու պէտք է վճարես Շէքերին իրանց թոշակը... Եթէ ինքն էլ որեէ բան ուզի, ինչ որ պէտք է կ'անես... Բայց ինձ ոչինչ չասես նրա մասին... Իսկ այս աւանդը կը պահես, մինչև որ ուզեմ քեզանից։

Սիգիզմունդը նամակն ու ծրարը ուրիշ թանկագին թղթերի հետ կողպեց իր դրասեղանի դաղտնի արկղիկում։ Իսկ Ռիսլերը խկոյն և եթ սկսեց կարդալ նամակները, բայց շարունակ նրա աչքի առաջ ձգւում էին անգլիական ձեւի նուրբ ու երկարուկ տառերը, գրուած մի փոքրիկ ձեռքով, որ ինքը այնքան յաճախ ու այնքան ջերմագին սեղմում էր երբեմն իր սրտին։

V

Կաֆէ-շանտանում։

Շատ հաղուագիւտ և բարեխիղճ ծառայող էր Ֆրոմմենների առևտրատան նոր գործակատարը։

Ամեն օր ամենից առաջ նրա մօտ էր վառւում և ամենից ուշ նրա մօտ էր մարում լամպը ամբողջ գործարանում։ Վերնատունը, տանիքի տակին, նրա համար սարքել էին մի փոքրիկ սենեակ, իսկ և իսկ նման այն սենեակին, որի մէջ ապրում էին առաջ նա ու Ֆրանցը, մի կատարեալ վանական խուց, կահաւորուած մի երկաթէ մահճակալով և մի սպիտակ փայտէ սեղանով, որ գրուած էր նրա եղբօր պատկերի տակին։ Այդտեղ նա վարում էր իր նախկին գործունեայ, կանոնաւոր ու խուժ կեանքը։

Նա շարունակ աշխատանքի հետ էր և ճաշը բերել էր տալիս իր հինաւուրց փոքրիկ ճաշարանից։ Բայց, աւաղ, ընդ միշտ անցած երիտասարդութիւնը ու չքացած յոյսերը ոչ մի քաղցրութիւն չէին թողնում այդ հինաւուրց յիշատակների մէջ։ Բարեբախտաբար, նա դեռ ունէր երկու սիրտանք, Ֆրանցը և տիկին Շօրշը, երկու միակ էակները, որոնց մասին նա կարող էր մտածել առանց տխրութեան։ Տիկին Շօրշը պահապան հրեշտակի նման խնամում ու մխիթարում էր նրան, Ֆրանցն էլ շուտ շուտ նամակ էր գրում, առանց սակայն երբէք յիշելու Սիգօնիի անունը։ Ռիսլերը կարծում էր, թէ մէկն ու մէկը իմաց է տուել նրան պատահած դժբախտութիւնների մասին, և ինքն էլ իր կողմից իր նամակներում ոչ մի ակնարկ չէր անում այդ հարցի մասին։ «Ա՜խ, երբ պէտք է կարողանում նրան բերել տալ այստեղ։ Նրա միակ իղձը, նրա փառասիրութեան միակ առարկայ էր՝ բարգաւաճութեան հասցնել գործարանը և բերել տալ իր եղբօրը։

Մինչ այդ, օրերը անցնում էին իրար յետնից, միշտ միակերպ նրա համար, առտրի եռուն աղմուկի և նրա վշտահար ու կսկծալից միայնակութեան մէջ։ Ամեն առաւօտ նա իջնում էր ներքև, շրջում էր բոլոր արհեստանոցները, սէր նրա ազդած խորին պատկառանքը, նրա խիստ ու լռակեաց դէմքը վերականգնել էին՝ առ ժամանակ խանգարուած կարգը։ Սկզբում շատ էին ասէկոսէներով զբաղւում, հազար ու մի տեսակ բացատրելով Սիգօնիի անհետացումը։ Ոմանք ասում էին, թէ նա փախել է իր սիրականի հետ, միւսները՝ թէ Ռիսլերը դուրս է արել նրան տանից։ Բոլորին շշկլայնողը այն էր, որ առտրականները իրար վերաբերւում էին այնպէս սովորական կերպով, ինչպէս առաջ։ Սակայն երբեմն-երբեմն, երբ նրանք միայնակ խօսում էին իրար հետ գրասենեակում, Ռիսլերը յանկարծ ցնցւում էր նստած տեղում, կարծես թէ երևակայութեան մէջ տեսնելով նրանց անցեալ շնութեան պատկերը։ Նա մտածում էր այդ բոպէներին, թէ այդ աչքերը, որ տեսնում է այժմ, այդ բերանը, այդ ամբողջ դէմքը անթիւ անգամ ստել են իր առաջ իրանց հազար ու մի արտայայտութիւններով։

Այն ժամանակ նրա մէջ ցանկութիւն էր ծագում յարձակուել այդ թշուառականի վրայ, բռնել կոկորդիցը ու խեղդել անխնայ կերպով, բայց խկոյն և եթ նա յիշում էր տիկին Շօրշին և ձեռները թուլանում էին։ Մթթէ ինքը այնքան քաջութիւն, այնքան ինքնազսպումն չը պէտք է ունենայ, որքան այդ կինը։ Ո՛չ կլէրի, ո՛չ Ֆրոմմենի, ո՛չ ոքի մտքով չէր անցնում, թէ ինչեր է կատարւում այդ մարդու ներսումը։ Հազիւ հազ էին կարողանում նրանք նշմարել նրա վարմունքի մէջ մի տեսակ խստութիւն ու անողոքութիւն, որոնք արտասովոր բան էին նրա համար։ Այժմ բանուորները, որոնք չէին համակւում ուրախութեամբ, և նրանցից այնպիսիները, որոնք պատկառանքով դէպի նրա մի գիշերում սպիտակած մազերը և փոս ընկած ու ծերացած դէմքը, զգում էին զգում նրա աչքերի տաքութիւնակ, սրոզպատէ դէնքի կապտաժեռ փայլը յիշեցնող հայեացքից։ Բանուորների հետ միշտ բարութեամբ, միշտ քաղցրութեամբ վարուող այդ մարդը այժմ անողոք էր դարձել նոյն իսկ ամենաչնչին զանցառութիւնների նկատմամբ։ Կարծես նա վրէժ էր հանում անցեալում տեղի ունեցած ինչ որ կոյր ու յանցաւոր ներողամտութեան համար, որի նկատմամբ ինքն իրան մեղաւոր էր համարում։

Ցիրաւի, հիանալի ծառայող էր Ֆրօմօնների առևտրատան այդ նոր գործակատարը։

Նրա շնորհիւ գործարանի զանգը, չը նայելով իր ծերացած ու ճաքած ձայնի դողդոջին, շատ չուտով ձեռք բերեց իր նախկին հեղինակութիւնը, և նա, որ ղեկավարում էր այդ ամբողջ գործարանը, ամենից խստապահանջն էր դէպի ինքը։ Սակաւապէտ, ինչպէս մի արհեստաւորի աշակերտ, նա իր ոռճիկի երեք քառորդը թողնում էր Պլանիւսի մօտ Շէրերի թոչակը տալու համար, բայց երբէք բան չէր հարցնում նրանց մասին։ Ամսավերջի օրը փոքրիկ մարդուկը ճշտօրէն գալիս էր սատանալու իր փոքրիկ հասոյթը, ձգուած ու վքռուած՝ Սիպիզմունդի նկատմամբ, ինչպէս վայել է մի հասոյթատէրի՝ իրան հանգիստ ստանալիս։ Տիկին Շէրը մի քանի անգամ փորձեց տեսնուել փեսայի հետ, որին նա խղճում էր ու սիրում, բայց հէնց որ նրա քիչմիրի շալը երևում էր դարպասի տակին, Սիդօնիի ամուսինը փախչում էր տանից։

Բանը նրանումն է, որ Ռիսլէրի արիութիւնը աւելի առեղծոյթ էր, քան իրական։ Նա չէր կարողանում երբէք մտքիցը հանել իր կնոջը։ Ի՞նչ դրութեան մէջ էր նա։ Ի՞նչ էր անում։ Ռիսլէրը գրեթէ քէն էր զգում դէպի Պլանիւսը՝ նրա մասին իր հետ չը խօսելու համար։ Նրան հանգիստ չէր տալիս մանաւանդ այն նամակը, որ նա քաջութիւն ունեցաւ չը բանալու։ Շարունակ այդ նամակի մասին էր մտածում։ Ախ, եթէ համարձակուէր, վաղուց պահանջած կը լինէր Սիպիզմունդից։

Մի օր փորձութիւնը շատ սաստիկ էր։ Նա մնացել էր մենակ գրասենեակում։ Շերուենի զանձապահը դնացել էր նախաճաշելու, թողնելով բանալին գրասեղանի արկղիկի վրայ, որ չը տեսնուած բան էր նրա կողմից։ Ռիսլէրը չը կարողացաւ իրան զսպել։ Արկղիկը բաց արեց, տնտղեց, թղթերը քրքրեց։ Նամակը չը կար։ Սիպիզմունդը անչուշտ աւելի խոր տեղ էր պահել նամակը, գուցէ նախատեսելով այն, ինչ որ այժմ տեղի էր ունենում։ Սրտի խորքումը Ռիսլէրը գժգոհ չէր այդ անյաջողութիւնից, որովհետև նա լաւ զգում էր, որ եթէ գտնէր այդ նամակը, այլ ևս կը չբանար այն գործունեայ համակերպութիւնը, որ առանց այն էլ այնքան ծանր էր նրա համար։

Լի օրերը դեռ ոչինչ, տանելի էր։ Խորասուզուած առևտրատան հաղար ու մի հոգսերի մէջ, Ռիսլէրը այնքան յոգնում էր, որ գիշերը հանելուն պէս վայր էր ընկնում անկողնի վրայ ինչպէս մի անզգայ զանգուած։ Բայց կիրակին շատ երկար էր թւում նրան և տաժանելի։ Ամայի բակերի և արհեստանոցների լռութիւնը աւելի ընդարձակ ասպարէզ էր բաց անում նրա

մտածմունքի համար։ Նա փորձում էր աշխատել, բայց զգում էր ուրիշների աշխատանքի խրախոյսի պակասութիւնը։ Միայն նա էր զբաղուած լինում այդ հանգիստ վայելող ահագին գործարանի մէջ, որի շնչառութիւնն անգամ դադարում էր այդ օրը։ Գլած նիզերը, փակած պատուհանածածկերը և ամայի բակերում իր չան հետ խաղս ընկած Աչիլ քեռու հնչուն ձայնը,—ամենն ինչ յիշեցնում էր նրան իր միայնակութիւնը։ Ամբողջ շրջակայ թաղն էլ այդպիսի տպաւորութիւն էր գործում նրա վրայ։ Դասարկութիւնից աւելի լայն թուացող փողոցներում, որոնցով անց ու դարձ էին անում հաղուագէպ հանգիստ զբօսնողներ, մեկամաղձօրէն տարածուում էր իրիկնաժամի զանգերի ձայնը, և երբեմն-երբեմն փարիզեան ժիտրի մի արձագանք, անիւների դղրդոց, ուշացած մի երգեհոն, մի կարկանդակավաճառ կնոջ ճռիկ թափանցում էին այդ լռութեան միջով՝ կարծես նրան աւելի սաստկացնելու համար։

Ռիսլէրը ծաղիկների ու սաղարթի զուգակցութիւններ էր որոնում, և մինչ նա տանում բերում էր թղթի վրայ ձեռքի մատիտը, նրա միտքը, որ բաւարար գործադրութիւն չէր գտնում այդ բանում, զլուխն առնում, փախչում էր, թռչում էր դէպի անցեալ երջանկութիւնը, դէպի անմոռանալի աղէտները, նահատակուում էր, և յետոյ, վերադառնալով, հարցնում էր խեղճ քնաշրջիկից, որ դեռ նստած էր լինում սեղանի մօտ. «Ի՞նչ ես չինել իմ բացակայութեան ժամանակ»։ Աւաղ, նա ոչինչ չինած չէր լինում։

Օ՛խ, անվերջ, տխուր, տաժանելի կիրակիներ։ Այն էլ է նկատի ունեցէք, որ այդ բոլորի հետ նրա հոգու մէջ խառնուում էր նաև ժողովրդական նախապաշարմունքը տօն օրերի վերաբերմամբ, այդ քսան չորս ժամուայ քաղցր հանգստի վերաբերմամբ, որի ընթացքում մարդս կազդուրում է ոյժերը և վերականգնում կորովը։ Եթէ նա դուրս գար գործարանից, չէր կարողանայ զսպել հեկեկանքները, երբ տեսնէր մի բանուոր, որ զբօսնում է իր կնոջ ու երեխայի հետ, բայց նրա վարած վարձակի վակ կեանքն էլ ուրիշ տեսակ տանջանքներ էր պատճառում նրան,—մենակեացներին յատուկ յուսահատութիւն, այնպիսի սարսափելի վրդովմունք, որ բորբոքուում է նրանց մէջ, երբ այն ասուածը, որին նուիրուել են նրանք, չի պատասխանում նրանց զոհերին։ Ուրդ, Ռիսլէրի ասուածը աշխատանքն էր, և քանի որ նա այլ ևս անդորրութիւն ու հանգստութիւն չէր գտնում նրա մէջ, նա այլ ևս չէր հաւատում նրան և անիծում էր նրան։

Ցաւախ, այդ ներքին մաքառման միջոցին, սենեակի դուռը

կամաց բացում էր և ներս էր մտնում Կլէր Ֆրոմոնը։ Խեղճ Ռիսլէրի միայնակութիւնը այդ կիրակնօրեայ կէսօրավերջերին նրա գութը շարժում էր, և նա գալիս էր նրա մօտ իր փոքրիկ աղջկայ հետ, փորձով իմանալով, թէ որքան համակիչ է երեխաների քաղցր զգուանքը։ Փոքրիկը, որ արդէն ոտ էր ելել և կարողանում էր մենակ մտնել, մօր գրկից սլանում էր ու վազ տալիս իր բարեկամի մօտ։ Ռիսլէրը լսում էր այդ կակտան քայլերի ձայնը, զգում էր իր յետեւն այդ թեթեւ շնչառութիւնը և այդ իսկոյն և եթ առոյգացնող ու անդորրացնող ազդեցութիւն էր գործում նրա վրայ։ Այնքան սրտագին կերպով էր փաթաթւում երեխան նրա վզովը իր թխլիկ կռներով և ծիծաղում իր միամիտ ու անառիթ ծիծաղով ու համբուրում իր սիրունիկ բերնով, որ դեռ չէր ստել երբէք։ Կլէր Ֆրոմոնը, դառն մօտ կանգնած, ժպտում էր նայելով նրանց։

—Ռիսլէր, սիրելի բարեկամ,—ասում էր նա,—ինչու չէք իջնում մի քիչ զբօսնելու պարտէզում... Կարելի է միթէ այդքան աշխատել։ Ձէ որ կը հիւանդանաք այդպիսով։

—Ձէ, չէ, տիկին... ընդհակառակը, աշխատանքն է ինձ փրկողը... Ձի թողնում, որ մտքիս հետ ընկնեմ...

Այնուհետեւ, երկար լռութիւնից յետոյ, Կլէրը նորից սկսում էր.

—Այդպէս չի կարելի, սիրելի Ռիսլէր, պէտք է աշխատէք մոռանալ։

Ռիսլէրը պատասխանում էր գլուխը։

—Մոռանալ... Մթթէ կարելի բան է այդ։ Կան բաներ, որոնք մարդու ուժից վեր են։ Կարելի է ներել, բայց մոռանալ՝ երբէք։

Գրեթէ միշտ վերջանում էր նրանով, որ երեխան քաշ էր տալիս նրան պարտէզը։ Կամայ-ակամայ նա պէտք է զնդակ կամ աւազակոյտ խաղար փոքրիկի հետ, բայց խաղընկերի անշնորհութիւնն ու կիսատիրտ վերաբերմունքը դէպի խաղը շատ շուտ տաղտնում էին փոքրիկի աշխոյժը։ Այն ժամանակ նա դադարում էր խաղալուց և հանգիստ էր կենում ու բաւականանում էր իր բարեկամի ձեռքը բռնած ծանրաբարոյ կերպով մտնելով տօտասների ծառուղիում։ Ռիսլէրը շուտով մոռանում էր, թէ երեխան իր կողքին է, բայց առանց նրա գիտակցելուն՝ այդ փոքրիկ ձեռքի տաքութիւնը, որ նա բռնած ունէր իր ափի մէջ, մագնիսական կերպով ամրացնում էր նրա խոցոտուած սիրտը։

Կարելի է ներել, բայց մոռանալ՝ երբէք...

Խեղճ Կլէրն էլ այդ գիտէր, որովհետեւ նա էլ ոչինչ չէր

մոռացել, չը նայելով սրտի ամբողջ կորովին և այն գաղափարին, որ նա ունէր իր պարտականութեան մասին։ Նրա համար էլ, ինչպէս Ռիսլէրի համար, այն միջավայրը, ուր ապրում էր, մի մշտական յուշարար էր կրած տանջանքների։ Շրջապատող իրերը անգթաբար բանում էին նրա սրտի խոցը, որ պատրաստ էր փակուելու։ Սանդուխը, պարտէզը, բակը, Սիդոնիի ու Ժորժի անողոք կերպարանք էին ունենում։ Նոյն իսկ այն ջանքերը, այն նախազգուշութիւնները, որ ամուսինը ձեռք էր առնում, որպէս զի դառն յիշողութիւններ չը զարթնէին նրա մէջ, այն չափազանցրած հոգատարութիւնը, որ նա ցոյց էր տալիս՝ երեկոները այլ ևս տանից դուրս չը գալով և մանրամասնօրէն պատմելով, թէ ուր է գնացել ցերեկը,—այդ բոլորը աւելի ևս առիթ էր տալիս նրան յիշելու ամուսնու դաւաճանութիւնը։ Երբեմն քիչ էր մնում խնդրէր, որ խնայի իրան, ասէր՝ «Այդքան ջանք մի թափիր»... Հաւատը խախտուել էր նրա մէջ, և սարսափելի տանջանքը մի քահանայի, որ կասկածով է վերաբերուում իր առաքելութեան և սակայն ուզում է հաւատարիմ մնալ իր ուխտին, ակամայ արտայայտուում էր նրա դառն ժպիտի, նրա սառն ու անտարտունջ հեզութեան մէջ։

Ժորժը սառուցեալ տանջուում էր։ Այժմ նա սիրում էր իր կնոջը։ Կլէրի բնաւորութեան վեհութիւնը յաղթել էր նրան։ Հիացմունք կար այդ սիրոյ մէջ, և ինչու չասել,—վիշտը Կլէրի զեղեցկութեանը աւելացնում էր մի հրապոյր, որ փոխարինում էր կոքետութիւնը, մի բան, որ Կլէրի բնաւորութեան դէմ էր և որի պակասութիւնը միշտ զգալի էր ամուսնու համար։ Ժորժը այն առանձնատեսակ տիպի տղամարդիկներից էր, որոնք սիրում են նուաճումներ անել։ Քմահաճ ու սառը Սիդոնին հասատասխանում էր նրա սրտի այդ խեղաթիւր ձգտումին։ Ամենաքնքոյշ հրաժեշտի հետեւել օրը Սիդոնին հանդիպում էր նրան անտարբեր ու մոռացկոտ կերպով, և այդ մշտական կարիքը՝ նորից գրաւելու նրա սիրտը՝ Ժորժի համար փոխարինում էր իսկական սէրը։ Անդորը սէրը ձանձրացնում էր նրան, ինչպէս ծովասէր նաւորդին՝ անփոթորիկ նաւազնացութիւնը։ Այս անգամ նա իր կնոջ հետ քիչ էր մնում նաւարեկուեր, և դեռ մինչև այժմ էլ վտանգը բոլորովին չէր անցել։ Նա գիտէր, որ Կլէրը բոլորովին սառել էր իրանից ու ամբողջապէս անձնատուր եղել Երեխային, որ այժմ միակ կապն էր նրանց մէջ։ Այդ սառնութիւնը աւելի գեղեցիկ, աւելի բաղձալի էր թուացնում նրան, և Ժորժը նրա սիրտը նորից չահելու համար գործ էր դնում իր ամբողջ հրապուրչական արհեստ

տը։ Նա զգում էր, որ շատ դժուար կը լինի այդ և որ ինքը գործ ունի մի բացառիկ հոգու հետ։ Սակայն նա չէր յուսահատում։ Երբեմն-երբեմն նրա ճիգերը դիտող այդ մեղմ և բարեհոյթին բոլորովին անզգած հայեացքի խորքում երևում էր մի անորոշ ցոլք, որ յոյսեր էր ներշնչում նրան։

Ինչ վերաբերում է Սիգոնիին, նա այլ ևս չէր մտածում նրա մասին։ Եւ թող ընթերցողը չը զարմանայ այդ արագ բարոյական պառակտման վրայ։ Այդ երկու վայրիվերոյ էակները ոչինչ չունէին, որ կարողանար խոր կերպով կապել նրանց իրար հետ։ Ժորժը անընդունակ էր կրել երկարատև տպաւորութիւններ, եթէ այդ տպաւորութիւնները չը նորոգուէին շարունակ. Սիգոնին էլ իր կողմից անկարող էր ազդել որ և է յարատև կամ զօրեղ զգայմունք։ Նրանց սիրահարութիւնը կոկոտի ու ֆատի սիրահարութիւն էր, բաղկացած սնափառ ձգտումներից ու խռովոտ ինքնասիրութիւնից, անկարող ներշնչելու ոչ անձնուիրութիւն, ոչ հաւատարմութիւն, և ընդունակ զրգռել միմիայն դէպի արագիկական արկածներ, մենամարտութիւններ ու ինքնասպանութեան փորձեր, որոնցից գրեթէ միշտ վերադառնում են և վերադառնում բուժուած։ Ո՞վ գիտի, եթէ նա նորից տեսնէր Սիգոնիին, թերևս դարձեալ սիրահարուէր վրան, բայց փախուստի հողմը այնքան արագ և այնքան հեռու էր տարել Սիգոնիին, որ վերադարձը անհնար էր։ Ցամենայն դէպս, Ժորժի համար մեծ սփոփանք էր, որ կարող էր այժմ ապրել առանց ստելու, և նրա վարած նոր կեանքը, որ լի էր աշխատանքով ու զրկանքներով և ունէր յաջողութեան հեռաւոր նպատակակէտ, անախորժ չէր նրա սրտին։ Եւ լաւ էր, որ այդպէս էր, որովհետև երկու առևտրակիցների կորուն ու հատատուն կամքը հաղիւ հաղ կարող էին բաւական լինել գործարանի գրութիւնը վերականգնելու համար։

Ֆրոմոնների խեղճ առևտրատունը խարխուլ նաւի էր նման, որի մէջ ամեն կողմից ջուր էր ներս լցւում։ Պլանիւս քեռին դեռ շատ սև դիշերներ անց կացրեց, տանջուելով վճարման պայմանաժամի կոչմարից և կապոյտ մարդուկի տեսիլքից։ Բայց խնայողութիւններ անելով միշտ յաջողեցնում էին վճարել ժամանակին։

Շատ չանցած չորս հատ Ռիսլէրեան տպագրիչներ, վերջնապէս սարքի գցուելով, սկսեցին բանել գործարանում։ Որմաթղթերի վաճառանոցում սկսեցին յաղուել այդ բանից։ Լիոնը, Ռիքսրէյմը, արդիւնաբերութեան այդ խոշոր կենտրոնները շատ էին անհանգստանում այդ զարմանալի «պտուտն և տասնեկու անկիւնաթ» մեքենայի պատճառով։ Մի գեղեցիկ օր էլ

Ֆրոչասօնները եկան ու երեք հարիւր հազար ֆրանկ առաջարկեցին հէնց միմիայն արտօնութեան իրաւունքին մասնակից լինելու համար։

—Ի՞նչպէս պէտք է անել... հարցրեց Ֆրոմոն կրտսերը Ռիսլէր աւագից։

Ռիսլէրը ուսերը վեր քաշեց անտարբեր կերպով։

—Ինչպէս ուզում էք վճռեցէք... Այդ ինձ չի վերաբերում։ Ես միմիայն ձեր գործակատարն եմ։

Պաղարիւն ու անդայրոյթ կերպով ասուած այդ խօսքերը սառը ջուր ածեցին Ֆրոմոնի թեթեւամիտ հրճուանքի վրայ և յիշեցրին նրան իրանց դրութեան լրջութիւնը, որ նա միշտ քիչ էր մնում մոռանար։

Սակայն, հէնց որ մնակ մնաց իր սիրելի տիկին Շորժի հետ, Ռիսլէրը խորհուրդ տուեց չընդունել Ֆրոչասօնների առաջարկութիւնը։

—Սպասեցէք... մի շտապէք։ Ցետոյ աւելի թանգ կարող էք ծախել։

Նա միմիայն նրանց մասին էր խօսում այդ գործում, որ. այնքան փառաւոր կերպով վերաբերում էր իրան։ Պարզ էր, որ նա ինքն իրան զատում էր նրանց ապագայից։

Մինչ այդ՝ պատուէրներ էր, որ գալիս էին, կուտակում իրար վրայ։ Թղթի յատկութիւնը և պատրաստութեան հեշտութեան շնորհիւ էժանացած գները անհնար էին դարձնում որ և է մրցութիւն։ Անկասկածելի էր այլ ևս, որ շատ չանցած՝ վերխարի հարստութեան տէր էին դառնալու Ֆրոմոնները։ Գործարանը նորից ստացել էր իր նախկին ծաղկեալ տեսքը և տառաջուան պէս աղմկալից փեթակ էր յիշեցնում։ Աշխատանքը եռում էր բոլոր շէնքերում, որոնք լիքն էին հարիւրաւոր բանուորներով։ Պլանիւս քեռին այլ ևս չէր կարողանում քիթը հեռացնել գրասենեակից. պարտէզից երևում էր, թէ ինչպէս նա, կռացած իր հաստավոր հասոյթագրքերի վրայ, դեղեցիկ թուանշանների շարքերով գրի էր անցնում տպագրիչի եկամուտները։

Ռիսլէրը նոյնպէս աշխատանքից աչք չէր բաց անում։ Վերսկսուած բարգաւաճութիւնների մէջ, և ապարանքի վերցրեց նրա ճշնակեաց սովորութիւնները։ Ջին յարկի ամենարարձր լուսամուտին էր նա լսում իր մեքենաների եռանդուն աղմուկը։ Գործերը յաջող էին գնում, բայց նա նոյնչափ մռայլ էր և նոյնպէս լռակեաց, ինչպէս և առաջ։ Սակայն մի օր գործարանում տեղեկութիւն ստացուեց, որ տպագրիչը, որի մի օրինակը ուղարկել էին Մանչեստրի մեծ ցուցահանդէսը, այնտեղ արժանացել էր ոսկէ մէդալի, որով վերջ

նապէս նուիրագործուել էր նրա յաջողութիւնը։ Տիկին Ժորժը պարտէզը կանչեց Ռիսլէրին նախաճաշի պահին և ինքը անձամբ աւետեց նրան այդ ուրախ լուրը։

Այդ լսելով Ռիսլէրը ժպտաց հպարտ կերպով և նրա ծերացած ու մռայլ դէմքը բացուեց։ Հնարիչի յագուրդ ստացած փառասիրութիւնը ու ձեռք բերած պարծանքը և մանաւանդ այն միտքը, որ ինքը այդպէս հիանալի կերպով ուղղել էր այն չարիքը, որ իր կինը հասցրել էր առնտրատանը, մի րոպէ խոկական երջանկութիւն պատճառեցին նրան։ Նա սղմեց Կլէրի ձեռքերը, և մրմնջաց, ինչպէս մրմնջում էր երբեմն երջանիկ օրերին.

—Շատ գոհ եմ... Շատ գոհ...

Բայց սրքան տարբերութիւն արտասանութեան եղանակի մէջ։ Նրա ձայնի մէջ չը կար յափշտակութիւն, չը կար յոյս, այլ միմիայն պարտականութիւնը կատարած լինելուց յառաջացած գոհութեան զգացմունք, աւել ոչինչ։

Զանգը խփեցին, որպէս զի բանուորները վերսկսեն աշխատանքը, և Ռիսլէրը հանգիստ կերպով գնաց վերև ուրիշ օրերի նման աշխատելու համար։

Բայց մի րոպէ անցած նա նորից իջաւ ներքև։ Այնուամենայնիւ այդ լուրը նրան աւելի էր յուզել, քան նա ուզում էր ցոյց տալ։ Նա դէս ու դէն էր գնում պարտէզում, պտոյտպտոյտ էր գալիս գանձարանի շուրջը, տխուր-տխուր ժպտալով Պլանիւսին պատուհանի ապակիների միջով։

—Ի՞նչ է պատահել դրան,—հարցնում էր ինքն իրան ծերուկը... Ի՞նչ է ուզում ինձանից։

Վերջապէս, երեկոյեան, այն միջոցին, երբ գանձապահը փակելու էր դրասենեակը, Ռիսլէրը վճռեց ներս մտնել ու խօսել հետը։

—Պլանիւս, սիրելիս, ես ուզում էի...

Նա կմկմաց մի քիչ։

—Ուզում էի խնդրել, որ տաս... այն նամակը, յիշում ես, այն փոքրիկ նամակն ու ծրարը։

Սիգիզմունդը ապշած նայեց նրա երեսին։ Նա այնքան միամիտ էր, որ երեւակայում էր, թէ Ռիսլէրը բոլորովին մոռացել է Սիդոնիին ու այլ ես չի մտածում նրա մասին։

—Ի՞նչպէս... ուզում ես...

—Լսիր, սիրելիս, ես այնքան բան արեցի, որ արժանի եմ դրան։ Ես իրաւունք ունեմ մի քիչ էլ իմ մասին մտածել այժմ. բաւական է ինչքան մտածեցի միմիայն ուրիշների մասին։

—Ճիշտ ես ասում,—ասաց Պլանիւսը։—Որ այդպէս է, ահա

ինչ կ'անենք։ Նամակն ու ծրարը մեր տանն են, Մոնռուժում։ Եթէ կ'ուզես, գնանք Պալէ-Ռոյալ ճաշելու, միտդ է, ինչպէս առաջուան ժամանակները։ Հիւրասիրողը ես եմ լինելու... Պէտք է ոսկէ մեդալդ սրակենք ընտիր, թանկագին գինիով... Ցետոյ միասին կ'երթանք մեր տունը ու դու կը վերցնես քո բաները, իսկ եթէ շատ ուշ լինի յետ դառնալու համար, քոյրս, օրիորդ Պլանիւսը անկողին կը պատրաստի քեզ համար ու դու կը քնես մեզ մօտ... Այնտեղ շատ լաւ է... քաղաքից դուրս է... Վաղը առաւօտ, ժամի հօթին, մենք միասին կը վերադառնանք գործարան առաջին հանրակառքով... Դէ, թէ բարեկամ ես, խաթրս մի կոտրիր. թէ չէ կարծելու եմ, թէ դեռ ոչ ես պատում սրտումդ քո ծերունի Սիգիզմունդի դէմ...

Ռիսլէրը համաձայնեց։ Նրա ուղածը մեդալը տօնելը չէր, այլ ժամ առաջ բանալ այն փոքրիկ նամակը, որը կարդալու իրաւունք էր ձեռք բերել վերջապէս։

Պէտք էր հաղնուել։ Ահագին գործ էր այդ, որովհետև վեց ամսից ի վեր նա միշտ աշխատանքի բաճկոնով էր լինում։ Մի ամբողջ դէպք էր այդ գործարանում։ Իսկոյն և նր իմաց տուին տիկին Ժրոմոնին։

—Տիկին, տիկին... Գ. Ռիսլէրը տանից դուրս է գալիս։

Կլէրը դուրս նայեց պատուհանովը, և Ռիսլէրի յաղթանդամ մարմինը, ճկուած վշտից և կոթնած Սիգիզմունդի թևին, խորին ու տարօրինակ յուզմունք պատճառեց նրան, որ նա այնուհետև չէր կարողանում մոռանալ երբէք։

Փողոցում մարդիկ համակիր կերպով ողջունում էին Ռիսլէրին, և լոկ այդ քաղցր ողջոյնները բաւական էին նրա սիրտը ջերմացնելու համար։ Ա՜խ քան կարիք ունէր խեղճը բարեացակամութեան։ Բայց կառքերի դղրդոցը մի քիչ շմեցնում էր նրան։

—Գլուխս պտոյտ է գալիս... ասում էր նա Պլանիւսին։

—Լաւ կոթնիր իմ վրայ, ծերուկս... մի վախեցիր։

Եւ Պլանիւսը շիտակում էր, թեանցուկ տանելով իր բարեկամին այնպիսի միամիտ ու մանուկանդ հպարտութեամբ, ինչպէս հարաւային Ֆրանսիայի մի գեղջուկ տանում է իրանց գիւղի հովանաւոր սուրբի պատկերը։

Վերջապէս նրանք հասան Պալէ-Ռոյալ։

Պարտէզը լի էր բազմութեամբ։ Եկել էին երաժշտութիւն լսելու, և աթոռների դղրդոցի ու փոշու մէջ ամէնքը տեղ էին վնտռում իրանց համար։ Ռիսլէրն ու Պլանիւսը չտապեցին մըտնել ճաշարանը այդ աղմուկից խուսափելու համար։ Նրանք տեղաւորուեցին առաջին յարկի մեծ դահլիճներից մէկում, որտեղ

ղից երևում են սաղարթախիտ ծառերը, զբոսնողները և ծաղկոցի երկու մարգերի արանքում ցայտող շատրուանի ցցունքը։ Սիգիզմունդի համար ճոխութեան իդէալ էր ճաշարանի այդ դահլիճը, ուր ոսկեզօծանը էր նշմարւում ամեն տեղ, հայելիների շուրջը, ջահի մէջ և մինչև իսկ ուռուցիկ որմաթղթի վրայ։ Սպիտակ անձեռոցիկը, փոքրիկ հացերը և հաստատագին ճաշի ցուցակը հրճուանքով լցնում էին նրա սիրտը։

—Լաւ է, չէ՞... ասում էր նա Ռիսլէրին։

Եւ ամեն անգամ երբ բերում էին այդ երկու ու կէս ֆրանկ արժող ճաշի կերակուրները, նա գովասանական բացականչութիւններ էր արձակում և բռնի լցնում իր բարեկամի ամանը։

—Կեր սրանից... լաւ բան է։

Ռիսլէրը, չը նայելով իր ցանկութեանը՝ պատուել իր բարեկամի հիւրասիրութիւնը, մտահոգ էր թւում և շարունակ դուրս էր նայում պատուհանից։

—Ցիշում ես, Սիգիզմունդ... հարցրեց նա մի քիչ անցած։

Ծերունի դանձապահը, որ բոլորովին անձնատուր էր եղել այն ժամանակուայ յիշատակներին, երբ Ռիսլէրն ու ինքը նոր էին մտել գործարան, պատասխանեց.

—Ի հարկէ, յիշում եմ։ Ես ու դու առաջին անգամ այստեղ ճաշել ենք 46 թուի փետրուարին, այն տարին, երբ փոքրագրութեան տախտակները հաստատեցին գործարանում։

Ռիսլէրը գլուխը թափ տուեց.

—Չէ... իմ ասածս երեք տարուայ բան է... Դիմացի դահլիճումը չէր, որ ճաշեցինք այն նշանաւոր երեկոն։

Եւ նա ցոյց տուեց Պանիւսին Վէֆուրի հիւրանոցի ահագին պատուհանները, որոնք վերջալոյսի շողքերից փողփողում էին հարսանեկան հացկերոյթի ջահերի նման։

—Հա, ճիշտ որ,—մտմտաց Սիգիզմունդը փոքր ինչ շփոթուելով։ Ի՞նչ չարաբաստիկ միտք էր՝ բերել Ռիսլէրին այսպիսի մի տեղ, որ այդքան ծանր յիշողութիւններ էր զարթեցնում նրա մէջ։

Ռիսլէրը, չուզելով տխրեցնել իրանց ճաշը, յանկարծ բարձրացրեց բաժակը։

—Դէ, քո կենացդ, իմ հինաւուրց ընկեր։

Նա աշխատում էր խօսակցութեան առարկան փոխել, բայց մի բոպէ անցած՝ հէնց ինքը սկսեց նոյն բանի մասին խօսել ու ցած ձայնով, կարծես թէ ամաչելով, հարցրեց Սիգիզմունդից.

—Նրան չե՞ս տեսել իսկի։

—Կնոջդ... Չէ, աւելին չեմ տեսել։

—Այլ ես նամակ չի՞ գրել։

—Չէ... ոչ մի նամակ։

—Բայց և այնպէս դու անպատճառ տեղեկութիւն կ'ունենաս նրա մասին։ Ի՞նչ էր անում այս վեց ամիսը։ Հօր ու մօր մօտ է ապրում։

—Չէ։

Ռիսլէրը գունատուեց։

Նա յոյս ունէր, թէ Սիգօնին վերադարձած կը լինէր մօր մօտ, թէ նա էլ իր պէս անձնատուր եղած կը լինէր աշխատանքի՝ անցեալը մոռանալու և քաւելու համար։ Նա մտածում էր յանձին, թէ այն ժամանակ, երբ ինքը իրաւունք կ'ունենայ խօսել նրա մասին, կը կարդայի իր ապագայ կեանքը նայելով այն տեղեկութիւններին, որ կը հաղորդեն իրան նրա մասին, և հեռաւոր ապագայում, որ երազի նման անորոշ է թւում մեզ, նա երբեմն-երբեմն երևակայում էր իրան ու Շէրերին քաշուած մի անյայտ երկիր, ուր ոչինչ չէր կարողանայ յիշեցնել նրան իրանց անցեալ խայտառակութիւնը։ Որոշ ծրագիր չէր այդ, բայց մի յոյս էր այդ, որ նա տածում էր իր հոգու խորքում, դրդուած բոլոր մարդկանց յատուկ պահանջից՝ անվերջ ձգտելու դէպի երջանկութիւնը։

—Ո՞րտեղ է նա, Փարիզումն է,—հարցրեց նա մի փոքր մտածելուց յետոյ։

—Չէ... Երեք ամիս կը լինի, որ հեռացել է Փարիզից։ Չը գիտեն թէ ուր է գնացել։

Սիգիզմունդը չաւելացրեց, որ նա գնացել էր իր կաղաքանի հետ, որի անունն էր կրում նա այժմ, որ նրանք միասին շրջում էին գաւառական քաղաքները, որ նրա վշտահար մայրը երբէք չէր տեսնում նրան ու միմիայն Դելօբէլի միջոցով էր տեղեկութիւններ ստանում նրա մասին։ Սիգիզմունդը լաւ համարեց այդ բաները չասել և յայտնելով, որ նա գնացել է Փարիզից, լռեց։

Ռիսլէրն էլ նմանապէս չէր համարձակում այլ ևս որ և է բան հարցնել։

Մինչ նրանք այդպէս դէմ առ դէմ նստած նեղւում էին իրանց երկարատև լռութիւնից, պարտէզի ծառերի տակ թնդաց զինուորական երաժշտութիւնը։ Նուագում էին իտալական օպերիներում հրապարակական բացօթեայ գրօսավայրերի համար գրուած ինչ-որ նոր նոտաներ, օդը բարձրանալով, խառնուում են ծիծեռնակների «պըստ... պըստ»-ների և շատրուանի

մարգարտաձև ցայտի հնչիւնների հետ։ Որոտաձայն պղնձէ փողերը աւելի ևս զգալի են դարձնում բարեխառն մեղմութիւնը ամարային երեկոների, որոնք այնքան խոնջացած, այնքան երկար են լինում Փարիզում. թւում է, թէ մարդ ոչինչ չէ լսում բացի այդ փողերի ձայնից։ Կառքերի հեռաւոր դղրդոցը, խաղացող երեխաների աղաղակները և զբօսնողների ոտնաձայնը իրանց հետ վերև են տանում այդ ցայտուն ու զովացուցիչ հնչական ալիքները, որոնք նոյնքան օգտակար են փարիզցիների համար, որքան նրանց զբօսատեղերի ամենօրեայ ջրշնքումը։ Բոլոր չրջապատող յոդնած ծաղիկները, փոչուց սպիտակած ծառերը, չոքից դանդաղած ու փայլատուած դէմքերը, մեծ քաղաքի բոլոր վշտերն ու թչուառութիւնները, մտահոգ ճկուած պարտէզի նստարանների վրայ, ափսիչ ու կազդուրիչ տպաւորութիւն են ստանում այդ երաժշտութիւնից։ Այդ ակկորդները թափանցում են օդի միջով, շարժում ու փոփոխում են նրա չերտերը և ներդաշնակութիւն սփռում նրա մէջ։

Խեղճ Ռիսլէրը մի տեսակ հանգստութիւն զգաց իր բոլոր ջղերի մէջ։

—Մարդուս վրայ լաւ է ազդում երաժշտութիւնը... ասաց նա փայլուն աչքերով, և յետոյ, ձայնը ցածացնելով, աւելացրեց։

—Սիրտս լէքն է, սիրելիս... Եթէ իմանայիր...

Նրանք մնացին լուռ, կոթնած պատուհանին, մինչ մատուցանում էին նրանց սուրճը։

Ցետոյ երաժշտութիւնը դադարեց և պարտէզը դատարկուեց։ Անկիւններում ուշացած արևը բարձրացաւ դէպի կտուրը, լուսաւորեց իր վերջին շողերով ամենաբարձր ապակիները ու ծիծեռնակներին, որոնք, տանիքի ջրորդանի վրայից, ուր թառել էին իրար հետ եկած, վերջին ճռուողիւնով ողջունեցին մարող վերջալոյսը։

—Ի՞նչ կ'ասես։ Ո՞ւր գնանք այժմ,—հարցրեց Պլանիւսը ճաշարանից դուրս գալիս։

—Ուր ուզում ես...

Մօտերքում, Մոնպառնասի փողոցում գտնուող մի տան առաջին յարկում մի կաֆէ-շանտան կար, ուր հետզհետէ մտնում էին բազմաթիւ մարդիկ։

—Լաւ չի լինի, եթէ մենք էլ գնանք այդտեղ,—հարցրեց Պլանիւսը, որ ինչ էլ լինի, ուզում էր ցրուել իր բարեկամի տխրութիւնը,—հիանալի գարեջուր ունեն։

Ռիսլէրը չը դիմադրեց. վեց ամսից ի վեր նա գարեջուր չէր առել բերանը...

Մի հին ճաշարան էր այդ, նուագարանների փոխարկուած։

Երկք ընդարձակ սենեակներ, որոնց միջնորմները քանդել էին, հետևում էին իրար, պահպանուելով ու իրարից զատուելով ոսկեզօծ սիւներով և մի մաւրիտանական վառ կարմիր ու մեղմ կապոյտ դէկորացիայով, որի վրայ իբրև զարդեր նկարուած էին գլխի փաթեթներ և փոքրիկ մահիկներ։

Զը նայելով կանուխ ժամին, դահլիճը ծայրէ ի ծայր լէքն էր, և նոյն իսկ դեռ ներս չը մտած՝ մարդ քիչ էր մնում խեղդուէր, տեսնելով սեղանների շուրջը կուտակուած բազմութիւնը և խորքում, սիւների շարքի յետևին, կիսով չափ ծածկուած բեմի վրայ՝ գազի չլացուցիչ փայլի և ջերմացած օդի մէջ շարեշար նստոտած սպիտակազգեստ կանանց։

Ռիսլէրն ու Սիգիզմունդը մեծ դժուարութեամբ կարողացան մի կերպ տեղաւորուել, այն էլ մի սիւնի յետևին, որտեղից նրանք կարող էին տեսնել միմիայն բեմի կէսը, ուր այդ ժամանակ կանգնած էր մի փառահեղ պարոն ֆրակով ու դեղին ձեռնոցներով, գանգուրուած, օծուած ու կոկուած, որ երգում էր զիլ ձայնով.

Սիրուն առիւծներ ոսկեգոյն բաշով,
Ծարաւի՝ արեան իմ ոչխարների,
Կանգ առէք այդտեղ, ոչ մի քայլ այլ ևս...
Արթուն եմ ևս, պահապանը նրանց...

Հանդիսատեսները—չրջակայքի մանր խանութպանները իրանց տիկիններով ու օրիորդներով—յափշտակուած էին թւում, մանաւանդ կանայք։ Իսկ և իսկ այդ խանութպանուհիների ու գործակատարուհիների երևակայած իդէալն էր այդ անապատային փառահեղ հովիւը, որ պարահանդիսային զգեստով պահպանում էր իր հօտը ու այդպէս էշխանաբար խօսում առիւծների հետ։ Ուստի, չը նայելով իրանց բուրժուական ձևերին, իրանց համեստ հագուստներին ու իրանց խանութպանական տափակ ժպիտին, այդ բոլոր տիկինները, մեկնելով իրանց փոքրիկ կուռցները դէպի զգայականութեան խայծը, սիրահալ աչքերը ծոր էին տալիս դէպի երգչի կողմը։ Ծիծաղելի էր տեսնել, թէ ինչպէս դէպի բեմը ուղղուած այդ հայեացքը կերպարանափոխուում էր յանկարծ, արհամարհոտ ու վայրագ արտայայտութիւն ստանում, ընկնելով խեղճ ամուսնու վրայ, որ իր համար հանգիստ գարեջուր էր խմում, կնոջ դիմացը նստած։

«Չէ մի դու էլ կարող էիր այդպէս սատել առիւծներին, այս էլ ֆրակով ու դեղին ձեռնոցներով»...

Եւ ամուսնու աչքերը կարծես պատասխանում էին.

—Ամեն մարդ հօ չի կարող այդպէս ածգահայ լինել։

Բաւական անտարբեր վերաբերուելով այդ տեսակ հերոսութեան՝ Ռիսլէրն ու Սիդիզմունդը վայելում էին իրանց դարձեալ, առանց շատ ուշադրութիւն դարձնելու երաժշտութեանը, երբ ուսմանը վերջանալուց յետոյ սկսուած ծափահարութիւնների, աղաղակների ու ժխորի մէջ Պլանիւսը բացականչեց։

—Վա՛յ, ինչ եմ տեսնում... հէնց իմանաս... չէ, չեմ սխալւում, հաստատ նա է... Դելլոբէլը։

Ցիրաւի Դելլոբէլն էր այդ, որին Սիգիզմունդը նոր միայն նկատեց բեմի մօտ, առաջին կարգում։ Նրա ալեխառն գլուխը երևում էր երկք քառորդով։ Նա անհոգաբար կոթնել էր մի սիւնի, գլխարկը ձեռքին, և այնպէս կոկուած, զուգուած ինչպէս զուգւում էր առաջնեկ ներկայացումներին գնալիս,—սպիտակեղէնը՝ շլացուցիչ, մազերը մանր գանգուր դրուած և ֆրակի մէջքը զարդարած կամէլիայով։ Նա երբեմն-երբեմն նայում էր բազմութեանը սաստիկ բարձրից, բայց աւելի յաճախ նա շուռ էր գալիս դէպի բեմը, դէմքի սիրալիր արտայայտութիւններով, խրախուսիչ ժպիտներով ու անձայն ծափահարութիւններով դիմելով մէկին, որին Պլանիւսը չէր կարող տեսնել իր տեղից։

Հռչակաւոր Դելլոբէլի ներկայութիւնը այդպիսի մի նուագասրճարանում տարօրինակ չը պէտք է թուէր, քանի որ նա միշտ դրսեն էր լինում երեկոները. բայց և այնպէս ծերունի գանձապահը մի քիչ այլայլուեց, մանաւանդ երբ հանդիսատեսների նոյն կարգում նկատեց մի կապոյտ կանացի գլխարկ ու պողպատագոյն աչքեր։ Տիկին Դօբսօնն էր այդ, երգեցողութեան սանտիմէնտալ վարժուհին։ Զիբուխների ծխի և բազմութեան խառնաշփոթութեան մէջ այդ երկու, իրար մօտակայ, կերպարանքները այնպիսի տպաւորութիւն գործեցին Սիգիզմունդի վրայ, ինչպէս վատ երազում զուգադիպաբար տեսած երկու տեսիլքներ։ Նա վախ զգաց իր բարեկամի համար, առանց պարզ գիտակցելու թէ ինչու, և իսկոյն ևեթ վճռեց նրան դուրս տանել այդտեղից.

—Գնանք, Ռիսլէր... Մարդ շոքից խեղդւում է այստեղ։

Այն րոպէին, երբ նրանք վեր էին կենում,—որովհետև Ռիսլէրի համար միևնոյնն էր մնալ այնտեղ թէ գնալ,—նուագախումբը, որ բաղկացած էր մի դաշնամուրից ու մի քանի ջութակներից, սկսեց մի օտարոտի ռիտուռնէլ։ Ամենքը հետաքրքրութեամբ շարժուեցին տեղներումը։ Սկսեցին աղաղակել. «Սուս... սուս... Նստեցէք»։

Նրանք ստիպուած էին նստել տեղները։ Բացի այդ, Ռիսլէրը արդէն սկսել էր յուզուել։

—Ծանօթս է գալիս այդ եղանակը։ Ո՞րտեղ պէտք է լսած լինեմ։

Որոտալին ծափահարութիւնները և Պլանիւսի բացականչութիւնը ստիպեցին նրան բարձրացնել աչքերը։

—Արի գնանք... արի գնանք... ասում էր գանձապահը, աշխատելով դուրս տանել նրան։

Բայց արդէն շատ ուշ էր։

Ռիսլէրն արդէն տեսել էր, թէ ինչպէս իր կինը մօտեցաւ բեմի եզրին ու գլուխ տուեց հասարակութեանը պարզ ժպիտներով։

Սիդոնին սպիտակ զգեստով էր, ինչպէս վերջին պարահանդէսի գիշերը, բայց այժմ աւելի քիչ ճոխութիւն կար նրա արդուզարդի մէջ և սաստիկ անվայել ազատ-արձակութիւն ամբողջ հագուստում։

Զգեստը հաղիւ հազ կախ էր ընկնում ուսերից. մազերը փուչ-փուչ էին ածած ու չիկագոյն մշուշի պէս բաց թողած աչքերի վրայ, իսկ վզի շուրջը զիզի-պիզի փայլով շարէշար պատած էր մարգարտէ մանեակը, որի հատիկները շատ խոշոր էին իսկական լինելու համար։ Դելլոբէլը ճիշտ էր ասում. բոհէմական կեանք էր հարկաւոր նրան։ Նրա գեղեցկութեան վրայ աւելացել էր այդ կեանքում մի նոր հրապոյր, մի տեսակ անվրդովելի թութեան արտայայտութիւն, որ բնորոշութիւն էր տալիս նրան, դարձնելով նրան կատարեալ տիպ դուրս ընկած կնոջ, որ մատնուած ամեն տեսակ պատահարի, ստիպուած առ աստիճան դահավիժւում է վարիզեան դժոխքի ամենախորին վիհերը, որտեղից ոչ մի ոյժ չի կարող դուրս բերել նրան լոյս աշխարհ։

Եւ որքան լաւ էր զգում նա իրան իր դերասանական արհեստում։ Ինչ սէգ կերպով էր նա առաջ գալիս այդ բեմի վրայով։ Ախ, եթէ նա տեսնէր այն յուսահատ ու զարհուրելի հայեացքը, որ սեւեռուել էր նրա վրայ սիւներից մէկի յետևից, նրա ժպիտը անուշտ չէր ունենայ այդ անամօթ անդորրութիւնը, նրա ձայնը չէր կարողանայ գանել այդ անուշ ու սիրահալ եղանակները գեղգեղելու համար այն միակ ուսմանը, որ տիկին Դօբսօնին յանձնել էր սովորեցնել նրան.

Pauv' pitit mamz'elle Zizi,
C'est l'amou, l'amou qui tourne
La tête à li.

Ռիսլէրը վեր էր կացել տեղից, չը նայելով Պլանիւսի ճիգերին։

—Նստէք... նստէք... գոռում էին յետևից։

Խեղճը ոչինչ չէր լսում։

Նա նայում էր իր կնոջը։

C'est l'amou, l'amou qui tourne
La tête à li.

կրկնում էր Սիդոնին կոտրտուելով։

Մի բոպէ Ռիսլէրը հարցնում էր ինքն իրան, արդեօք չը թռչի բեմի վրայ ու բոլորին սպանի. կարմիր փայլակներ էին շողշողում աչքերի մէջ և կարծես թէ կուրացել էր կատաղութիւնից։

Յետոյ յանկարծ նրան տիրեց ամօթի ու զզուանքի զգացմունք, և նա դուրս պրծաւ դահլիճից, գետին գլորելով աթոռ ու սեղաններ և սարսափ ու զայրոյթ ազդելով հանդիսատես բուրժուաներին, որոնք անէծքներ էին թափում նրա յետևից։

VI

Սիդոնիի վրէժխնդրութիւնը։

Քանի տարուց աւելի էր, որ Սիգիզմունդ Պլանիւսը բնակում էր Մոնռուժում, բայց երբէք նա այդքան ուշ վերադարձած չը կար տուն, առանց քրոջը նախազգուշացնելու։ Ուստի օրիորդ Պլանիւսը սարսափելի մտատանջութեան մէջ էր։ Քոյր ու եղբայր մի սիրտ, մի հոգի էին կազմում, և օրիորդ Պլանիւսը վերջին ամիսների ընթացքում մտանակից էր եղել դանձապահի բոլոր անհանգստութիւններին, բոլոր վրդովմունքներին, այնպէս որ ամենաչնչին պատճառ բաւական էր, որ սկսէր դողալ ու յուզուել։ Հէնց որ Սիգիզմունդը մի քիչ ուշանում էր, նա մտածում էր.

—Տէր Աստուած... Մի բան պատահած չը լինի գործարանում։

Ահա թէ ինչու այդ երեկոյ, երբ հաւերը թառեցին ու քնեցին, օրիորդ Պլանիւսը հաւաքեց ճաշը, առանց ձեռք տալու նրան, և նստեց փոքրիկ ու ցածիկ դահլիճում ու սկսեց խռովայոյզ սրտով սպասել եղբօրը։

Վերջապէս, ժամի տասնմէկի մօտերքը, զանգը խփեցին։ Զանգահարութիւնը շատ երկչոտ էր ու տխուր և ամենևին չէր նմանում Սիգիզմունդի ուժգին զանգահարութեանը։

—Դուռը էք, պարոն Պլանիւս,—հարցրեց պառաւ օրիորդը վերնագաւթի վրայից։

Նա էր, բայց մենակ չէր։ Նրա յետևից գալիս էր մի

բարձրահասակ, բոլորովին ճկուած ծերունի, որ ներս մտնելիս բարի երեկոյ ասաց դանդաղ ձայնով։ Այդ ժամանակ միայն օրիորդ Պլանիւսը ճանաչեց Ռիսլէր աւագին, որին չէր տեսել նոր տարի օրուայ այցելութիւններից ի վեր, այսինքն գործարանում տեղի ունեցած դէպքերից յետոյ։ Նա քիչ էր մնում յաւակցութեան բացականչութիւն արձակէր, բայց եղբօր ու Ռիսլէրի լուրջ լռակեցութիւնից հասկացաւ, որ պէտք էր լռել։

—Քոյր իմ, օրիորդ Պլանիւս, անկողնիս սպիտակեղէնը փոխէք։ Մեր բարեկամ Ռիսլէրը մեզ պատիւ է անում քնելու այս գիշեր մեզ մօտ։

Պառաւ օրիորդը իսկոյն գնաց ու սկսեց պատրաստել սենեակը գրեթէ քնքոյշ հոգատարութեամբ, որովհետև, ինչպէս յայտնի է, «իմ եղբայր պ. Պլանիւսից» զատ Ռիսլէրը միակ տղամարդն էր, որ բացառութիւն էր կազմում բոլոր տղամարդկանց առաջ օրիորդ Պլանիւսի համար։

Կաֆէ-չանտանից դուրս գալիս Սիդոնիի ամուսինը սկըզբում սարսափելի գրգռուած դրութեան մէջ էր։ Նա քայլում էր Պլանիւսի կուռը բռնած և ցնցում էր ամբողջ մարմնով։ Այժմ այլ ևս նա ցանկութիւն չունէր գնալու Մոնռուժ՝ ծրարն ու նամակը վերցնելու։

—Թող ինձ... գնա,—ասում էր նա Սիգիզմունդին,—ուզում եմ մենակ մնալ։

Բայց Սիգիզմունդը վախենում էր նրան մենակ թողնել այդպիսի յուսահատութեան մէջ։ Աննկատելի կերպով նա քիչ-քիչ հեռացնում էր Ռիսլէրին գործարանից, և սրտի թելադրութեամբ ծերունի դանձապահը ամբողջ ճանապարհին խօսում էր իր բարեկամի հետ միմիայն Ֆրանցի մասին, որին այնքան սիրում էր նա։

«Այ, նրա սէրը՝ ճշմարիտ, հաստատուն սէր է... Նրա սրրտի տէր մարդիկ դաւաճանել չը գիտեն...»

Այդպէս խօսելով՝ նրանք հեռացան փարիզի աղմկալի կենտրոնից։ Այժմ նրանք գետափումն էին, անցնում էին կենդանաբանական պարտէզի մօտով և մտնում Սէն-Մարսօ արուարձանի խորքերը։ Ռիսլէրը չէր դիմադրում և թողնում էր, որ Պլանիւսը քաշ տայ իրան։ Ծերունի դանձապահի խօսքերը սպեղանի էին նրա խոցուած սրտի համար։

Այդպիսով նրանք հասան Բիէվրի *) տիպ կաշեգործարաններին, որոնց ծակոտկէն ցամաքանոցները ցանցաձև գծագրուում

*) Սէնայի վտակներից մէկը, որ թափում է Սէնայի մէջ Փարիզում։

էին երկնքի կապուտակի վրայ, և յետոյ Մոնսուռիի գժգոյն հարթութիւններին, այդ ընդարձակ հողաբաժիններին, որոնք խանձուած ու փորփորուած են այն հրեղէն ջնջից, որ Փարիզը տարածում է իր ամենօրեայ աշխատանքի շուրջը, ինչպէս մի վիթխարի վիշապ, որի՝ ծխով ու շոգիով լի արտաշնչութիւնը չքացնում է բուսականութիւնը ամէն տեղ, ուր որ հասնում է։

Մոնսուռիից մինչև Մոնռուժի ամրութիւնները մի քայլ է միայն։ Այդտեղ հասնելուց յետոյ Պլանիւսի համար այլ ևս դժուար չէր քաշ տալ Ռիսլէրին իր մօտ։ Նա իրաւամբ մտածում էր, որ իրանց ընտանեկան խաղաղ յարկը և քոյր-եղբայրական անդորր ու անձնուէր բարեկամութեան տեսարանը այդ թշուառ մարդու սրտին կը ներշնչեն մի տեսակ նախաճաշակումն այն երջանկութեան, որ նա վայելելու է իր եղբօր, Ֆրանցի հետ։ Եւ, յիրաւի, ներս մտնելուն պէս՝ այդ փոքրիկ տունը սկսեց արդէն գործել իր բարերար ազդեցութիւնը։

—Այո, այո, ճիշտ ես ասում, սիրելի բարեկամ,—ասում էր Ռիսլէրը մեծ-մեծ քայլերով ման գալով ցածիկ դահլիճում, —ես չը պէտք է այլ ևս մտածեմ այդ կնոջ մասին։ Այսուհետև նա ինձ համար մեռած է։ Աշխարհումս ոչ ոք չունեմ այլ ևս բացի իմ քաղցրիկ Ֆրանցից... Չը գիտեմ՝ բերել տամ նրան թէ ինքս գնամ մօտը. այսպէս թէ այնպէս, վճռուած բան է, որ ես ու նա միասին կ'ապրենք այսուհետև... Իմ սրտի փափագն է եղել միշտ մի տղայ ունենալ։ Ֆրանցը իմ տղան կը լինի։ Ուրիշ տղայ ես չեմ ուզում այլ ևս։ Ի՞նչպէս կարող էի ես գոնէ մի րոպէ մտածել ինքնասպանութեան մասին... Ի՞նչ յիմարութիւն։ Դրանով միայն մեր պատուական աղջիկպարոնին կ'ուրախացնէի... Չէ, չէ՝, ընդհակառակը, ես ուզում եմ ապրել իմ սիրելի Ֆրանցի հետ և ապրել միմիայն նրա համար։

—Կեցցէս,—ասաց Սիգիզմունդը,—այ այդպէս պէտք է լինի տղամարդը։

Այդ րոպէին օրիորդ Պլանիւսը եկաւ յայտնեց, որ սենեակը պատրաստ է։

Ռիսլէրը ներողութիւն խնդրեց այն անհանգստութեան համար, որ ինքը պատճառում էր նրանց։

—Դուք այնքան լաւ, այնքան երջանիկ էք ապրում այստեղ... Մեղք է իմ կողմից, որ տխրութիւնս բերեցի ձեր տունը։

—Էհ, բարեկամ, դու էլ շատ լաւ կարող ես մեզ նման երջանիկ լինել,—ասաց Սիգիզմունդը ուրախութիւնից փայլող երեսով—Ես քոյր ունեմ, դու էլ եղբայր ունես։ Էլ ինչ է պէտք մեզ։

Ռիսլէրի երեսին ժպիտի նման մի բան երևաց։ Նա արդէն

երևակայում էր իրան ու Ֆրանցին այդպիսի մի խաղաղ ու քուակէրական տնակում ապրելիս։

Ճիշտ որ խելացի բան էր մտածել քեռի Պլանիւսը։

—Էհ, քնելու ժամանակ է,—ասաց նա յաղթական կերպարանքով... Արի տանեմ սենեակդ ցոյց տամ քեզ։

Սիգիզմունդ Պլանիւսի սենեակը առաջին յարկումն էր։ Մի մեծ սենեակ էր այդ, պարզ, բայց մաքուր կերպով կահաւորուած. պատուհաններից և անկողնի շուրջը կախուած էին բամբակաթել վարագոյրներ և աթոռների տակին յատակի փայլուն աղիւսների վրայ փռուած էին փոքրիկ քառակուսի գորգեր։ Նոյն իսկ պառաւ տիկին Ֆրօմնը ոչինչ չէր կարող ասել այդ սենեակում տիրող կարգ ու կանոնի և մաքրութեան դէմ։ Դրակների վրայ շարուած էին մի քանի գրքեր. «Ձեռնարկ կարթուլ ձկնորսութիւն աղողների համար», «Օրինակելի գիւղական տնտեսուհի», «Բարեմի հաչուեցոյցը»։ Բնակարանի ամբողջ մտաւոր բաժինն էր այդ։

Քեռի Պլանիւսը նայում էր իր շուրջը հպարտութեամբ։ Զրով բաժակը դրած էր իր տեղում ընկուզենու սեղանի վրայ, ածիլելու սաթն էլ՝ արդասեղանի վրայ։

—Տեսնում ես, Ռիսլէր... Ամէն բան, ինչ որ պէտք է, կայ... Իսկ եթէ մի բանի պակասութիւն զգաս, բանալիները պահարանների վրայ են... կը բանաս ու կը վերցնես... Նայիր, ինչ հիանալի տեսարան է այստեղից... Այժմ մի քիչ մութ է, բայց վաղը առաւօտ որ զարթնես, կը տեսնես, թէ ինչքան հիանալի է։

Նա բաց արեց պատուհանը։ Սկսում էին թափուել անձրևի խոշոր կաթիլներ, և գիշերային խաւարը պատառող կայծակները ցոյց էին տալիս երկաթուղու հողաթմբի երկար ու խաղաղ գիծը, որ ձգւում էր դէպի հեռուն, և նրա եզերքին շարուած հեռագրական սիւները ու տեղ-տեղ երևցող զօրանոցների մռայլ գոները։ Ժամանակ առ ժամանակ շրջապատի ճանապարհի վրայ լսւում էր պահակախմբի ոտնաձայն և հրացանի կամ թրի շաչիւն, յիշեցնելով, որ զինուորական շրջանումն էին։ Այդ էր Պլանիւսի այնքան գոված հորիզոնը, որից աւելի մեծ լամաղձիկ հորիզոն դժուար էր գտնել։

—Դէ այժմ, բարի գիշեր... Պառկիր ու հանգիստ քնիր...

Բայց այն րոպէին, երբ ծեր գանձապահը ուզում էր դուրս գալ, Ռիսլէրը յետ կանչեց նրան.

—Սիգիզմունդ։

—Հը՞, ինչ կայ,—հարցրեց Սիգիզմունդը կանգ առնելով։

Ռիսլէրը մի քիչ կարմրեց, շրթունքները շարժեց այս-

պէս, ինչպէս մարդ շարժում է, երբ սկսելու է խօսել, բայց, սաստիկ ճիգ գործ դնելով իր վրայ, ասաց միայն.

—Զէ, չէ... ոչինչ... Բարի գիշեր, սիրելիս։

Սեղանատանը քոյր ու եղբայր դեռ երկար խօսում էին։ Պլանիւսը պատմում էր երեկոյեան պատահած սոսկալի դէպքը, Սիգօնիին տեսնելը, և կարող էր երեսակայել, թէ որքան բացականչութիւններ արձակուեցին՝ «Ախ, ձեր նարմանները» ու «Ախ, ձեր աղամարդիկ»։ Վերջապէս, փոքրիկ պարտէզի դուռը կողպելուց յետոյ, օրիորդ Պլանիւսը բարձրացաւ վերև իր սենեակը, իսկ Սիգիզմունդը մի կերպ տեղաւորուեց կողքի փոքրիկ առանձնասենեակումը։

Կէս գիշերուան դէմ գանձապահին քնից վեր թռցրեց քոյրը, որ սաստիկ վախուորած ձայն էր տալիս նրան շշունջով.

—Եղբայր, պարոն Պլանիւս։

—Հը՞։

—Լսեցիք։

—Զէ... ի՞նչ է պատահել։

—Ախ, սոսկալի էր... Սարսափելի հառաչի նման մի բան լսուեց, սաստիկ ուժգին, սաստիկ տխուր... Ներքևի սենեակիցն գալիս ձայնը։

Սկսեցին ականջ դնել։ Դրսևում տեղատարափ անձրև էր գալիս և անձրևակաթիլների դիպչելուց տերևները հանում էին այն աղմուկը, որի շնորհիւ քաղաքից դուրս մարդ այնպիսի կատարեալ միայնակութեան և դատարկ տարածութեան տպաւորութիւն է ստանում։

—Քամին է այդ... ասաց Պլանիւսը։

—Ես համոզուած եմ, որ այդ քամուցը չէ... Սուս... ականջ դրէք...

Մրրկայոյզ աղմուկի մէջ մի հեծութիւն էր լսւում, կարծես մի հեկեկանք, բաղկացած մի դառնագին շեշտով կրկնուող անունից.

—Ֆրանց... Ֆրանց...

Սարսափելի էր այդ և աղեկտուր։

Երբ Քրիստոս խաչուած ժամանակ արձակեց դէպի երկնքի դատարկ տարածութիւնը իր յուսահատ ճիչը՝ «Էլի, Էլի, լամա սաբաքսանի», նրա ձայնը լսողները անչուշտ նոյնպիսի նախապաշարուած սարսափ զգացին, ինչպէս այն սարսափը, որ այդ բոպէին տիրեց յանկարծ օրիորդ Պլանիւսին։

—Ես վախենում եմ,—մրմնջաց նա,—լաւ կը լինի, գնաք տեսնէք։

—Զէ, չէ, լաւ է մնակ թողնենք։ Եղբօր մասին է մտածում... Խեղճ մարդ։ Միմիայն Էղբօր յիշատակը կարող է նրան մի քիչ սփոփել։

Եւ ծերունի գանձապահը նորից քնեց։

Միւս առաւօտ նա, ըստ իր սովորութեան, զարթնեց, երբ հնչեցնում էին վաղորդեան զօրակոչը ամրութիւններում, որովհետև այդ զօրանոցներով չրջապատուած տնակը կարգաւորում էր իր ամբողջ կեանքը զինուորական ժամահարութիւնների համեմատ։ Քոյրը, արդէն վեր էր կացել, կուտ էր տալիս հաւերին։ Տեսնելով, որ Սիգիզմունդն էլ վեր է կացել, նա մօտեցաւ նրան մի քիչ այլայլուած։

—Տարօրինակ բան է,—ասաց նա,—Ռիսլէրի սենեակից ամենևին ձայն-ձոյն չի գալիս... Եւ սակայն պատուհանը բոլորովին բաց է։

Սիգիզմունդը սաստիկ զարմացաւ ու գնաց ծեծեց սենեակի դուռը։

—Ռիսլէր... Ռիսլէր։

Նա ձայն էր տալիս մի քիչ անհանգիստ սրտով։

—Ռիսլէր, սենեակումն ես... դեռ քնած ես։

Ո՛չ մի պատասխան։ Նա բաց արեց դուռը։

Սենեակը դատարկ էր։ Զգացուում էր, որ դրսի խոնաւութիւնը ամբողջ զիշերը ներս էր թափանցել բաց պատուհանովը։ Առաջին հայեացքը գցելով անկողնի վրայ, Պլանիւսը մտածեց. «Չի պառկել քնելու»... Ցիրաւի, վերմակին ձեռք չէր տուած, և դեռ ծխացող լամպը, որ մոռացմամբ չէին հանգցրել, ու քնատութեան տենդի միջոցին ամբողջապէս դատարկուած ջրի չիչը և առհասարակ սենեակի բոլոր ամենաչնչին մանրամասնութիւնները ներկայացնում էին խռովայոյզ անքնութեան հետքեր, բայց դանձապահին ամենից չատ սարսափեցրեց այն, որ բոլորովին բաց էր պահարանի այն աչքը, ուր ինքը խնամքով պահել էր այն նամակն ու ծրարը, որ իր բարեկամը պահ էր տուել իրան։

Նամակը չը կար այնտեղ։ Իսկ սեղանի վրայ բաց ծրարի մէջից երևում էր մի լուսանկար,—Սիգօնիի պատկերը տասն հինգ տարեկան հասակում։ Իր կրծկալաւոր զգեստով, ճակատի վրայ բաժանուած կամակոր մազերով և դեռ անչնորհք փոքրիկ աղջկայ բռնազբօսիկ դիրքով երևումեան օրիորդ Շեբը, օրիորդ Լը Միրի աշակերտուհին, ամենևին չէր նմանում այժմեան Սիգօնիին։ Եւ հէնց այդ էր պատճառը, որ Ռիսլէրը պահել էր այդ լուսանկարը, իբրև մի յիշատակ՝ ոչ իր կնոջից, այլ «փոքրիկ Շեբից»։

Կարծես երկինքը փուլ եկաւ Սիգիզմունդի գլխին։

—Իմ մեղքս է,—ասում էր նա ինքն իրան։—Բանալինե-

ը չը պէտք է թողնէի այստեղ... Բայց ում մտքովը կ'անցներ, թէ նա դեռ չի մոռացել... Նա երդւում էր, որ այդ կինը այլ ևս դոյութիւն չունի իր համար։

Այդ միջոցին օրիորդ Պլանիւսը ներս մտաւ այլայլուած կերպարանքով։

—Պ. Ռիսլէրը գնացել է... բացականչեց նա։

—Գնացել է։ Բայց չէ՞ որ պարտէզի դուռը կողպած էր։

—Պատի վրայովն է անցել... Հետքերն երևում են։

Նրանք նայեցին միմեանց սարսափահար։

Պլանիւսը մտածեց. «Անչուշտ նամակի պատճառովն է»...

Անկասկած կնոջ նամակից մի արտակարգ բան էր իմացել Ռիսլէրը և, չուզելով տանտէրերին զարթեցնել, գաղտագողի փախել էր առանց աղմուկ հանելու։ Ինչո՞ւ։ Ի՞նչ նպատակով։

—Այ կը տեսնէք, քոյրիկ,—ասում էր խեղճ Պլանիւսը, շտապ-շտապ վերջացնելով հագնուելը,—անպատճառ այդ անզգամը էլի մի խաղ է խաղացել նրա գլխին։

Պառաւ օրիորդը աշխատում էր համոզել, որ նա սխալւում է, բայց եղբայրը չարունակ կրկնում էր.

—Chai bas gonfianze!...

Ու երբ հագնուեց պրծաւ, իսկոյն դուրս վազեց տանից։

Գիշերուայ տարափից թրջուած գետնի վրայ Ռիսլէրի ոտների հետքերը երևում էին մինչև պարտէզի դուռը։ Նա պէտք է լոյսը բացուելուց առաջ գնացած լինէր, որովհետև բանջարների մարդերի և ծաղիկների թմբերի վրայ երևում էին լայն-լայն ու անկանոն քայլերի խոր հետքեր։ Պատի նեքսնի կողմից նկատւում էին սպիտակ քերծուածքներ և մի փոքրիկ փլուածք կատարում։ Բոյր ու եղբայր դուրս եկան շրջապատի ճանապարհը։ Այդտեղ քայլերի տեղերը անկարելի էր լաւ որոշել։ Սակայն երևում էր, որ նա գնացել էր Օռլէանի ճանապարհի ուղղութեամբ։

—Կարելի է զուր ենք մեզ ու մեզ տանջում,—ասաց օրիորդ Պլանիւսը,—գուցէ նա վերադարձել է գործարան։

Սիգիզմունդը գլուխը պտտեց։ Օ՜հ, եթէ նա ասէր մտքովը անցածը։

—Լաւ, դուք վերադարձէք տուն, քոյրիկ... Ես կ'երթամ, կը տեսնեմ...

Եւ ծերունի «chai bas gonfianze»-ը հրայանի գնդակի պէս սլացաւ դէպի առաջ, սպիտակ բաշը ուելի վեր ցցուած, քան սովորաբար։

Այդ պահին շրջապատի ճանապարհի վրայ սաստիկ երթևեկութիւն կար. անդադար գնում-գալիս էին զինուորներ, բանարաւաճառներ, փոփոխուող պահապանններ, օֆիցէրների ձիերը ման ածող սպասաւորներ, զօրանոցների պանդոկատէրերը հրանց սայլակներով, մի խօսքով սկսուել էր այն աղմուկն ու դուրբը։ Պլանիւսը լայն-լայն քայլերով առաջ էր գնում այդ իրարանցումը, որ տեղի է ունենում առաւօտները ամրոցների դարանցման մէջ, երբ յանկարծ կանգ առաւ։ Ձախ կողմում, հողաթմբի ստորոտում, մի փոքրիկ քառակուսի չէնքի առաջ, ուր հում գաճի վրայ կարդացւում է սև տառերով

ՓԱՐԻԶ ՔԱՂԱՔ

Քարհանքների մուտքը,

նա նկատեց խռնուած բազմութիւն և զինուորների ու մաքսատան ծառայողների համազգեստներ՝ խառնուած թափառաշրջիկների ճմռուած ու հողոտ վերնաշապիկների հետ։ Ծերունին ընազդաբար մօտեցաւ այդ խմբին։ Մի երկաթածող կլոր գռնակի տակ մաքսատան ծառայողներից մէկը քարէ աստիճանի վրայ նստած խօսում էր ձեռները լայն-լայն շարժելով, կարծես թէ մի բան ձեռքով ցոյց տալով.

—Այս նստած տեղումս էր,—ասում էր նա... Նստած էր կախուել ու ինչքան ուժումը կար ձգել էր պարանը... այսպէս... Ինչպէս երևում է, հաստատ վճռած է եղել մեռնել, որովհետև գրպանիցը մի ածելի հանեցին, որով անչուշտ պէտք է մորթէր իրան, եթէ պարանը յանկարծ կտրուէր։

Բազմութեան մէջից մէկը բացականչեց՝ «Խեղճ մարդ»... Իսկ յետոյ մի ուրիշը, յուզմունքից խեղդուող ու դողդողուն ձայնով, հարցրեց վախվխելով.

—Հաստատ է, որ արդէն մեռել է։

Բոլորը սկսեցին ծիծաղել, նայելով Պլանիւսին։

—Հաւի խելք ունի այս մարդը, տօ,—բացականչեց մաքսատան ծառայողը... Չը լսեցիք, որ ասացի, թէ բոլորովին կապտել էր այս առաւօտ, երբ պարանից հանեցինք ու տարանք այն զօրանոցը։

Հեռու չէր այդ զօրանոցը, բայց Պլանիւսը հաղիւ-հաղ կարողացաւ ոտները քաշ տալով հասնել այնտեղ։ Շատ էլ ինքն իրան ասում էր խեղճը, թէ ինքնասպանութիւնները հաղուադէպ բան չեն Փարիզում, մանաւանդ ամրութիւնների այդ երկար գծի վրայ, ուր օր չի անցնում, որ մի դիակ չը գտնեն, ինչպէս մի վտանգաւոր ծովի ափում, բայց ոչինչ չէր կարողա-

նում փարատել այն սարսափելի նախազգայումը, որ առաւօտից ի վեր ճնշում էր նրա սիրտը։

—Ախ, կախուածին էք ուզում տեսնել,—ասաց նրան զօրանոցի դռան մօտ կանգնած զինուորականը... ահա այստեղ է։

Դիակը դրել էին մի սրահի մէջ մի իշոտնուկ սեղանի վրայ։ Հեծելազօր զինուորի մի վերարկու, որ գցուած էր վրան, ծածկում էր նրան ամբողջապէս, կազմելով այն սովորական ծալքերը, որ միշտ ունենում են պատանքները չորացած ու ձգուած դիակի շուրջը։ Մի խումբ օֆիցէրներ և քաթանէ անդրավարտիք հագած մի քանի զինուորներ նայում էին հեռուից ու ցած ձայնով խօսում, ինչպէս եկեղեցում, իսկ մի զինուորական բժիշկ բարձր պատուհաններից մէկի վրայ կռացած, գրում էր մահը հաստատող պաշտօնական թուղթը։ Սիգիզմունդը դիմեց նրան.

—Կարելի է թոյլ տաք տեսնեմ,—խնդրեց նա մեղմօրէն։

—Տեսէք։

Նա մօտեցաւ սեղանին, տատամսեց մի բոպէ, յետոյ, սրբտանդուելով, բաց արեց մի ուռած դէմք ու մի ահագին մարմին, որ անշարժ պառկած էր իր անձրևից թրջուած շորերի մէջ...

—Ա՜խ, վերջ ի վերջոյ քեզ սպանեց նա, սիրելի ընկեր... մրմնջաց Պլանիւսը ու ծունկ չոքեց հեկեկալով։

Օֆիցէրները հետաքրքրուած առաջ էին եկել և նայում էին մեռելին, որ մնացել էր բաց։

—Տեսէք, բժիշկ,—ասաց նրանցից մէկը,—ձեռքի մէկը փակած է, կարծէք թէ մի բան սղմած լինի մէջը։

—Ցիրաւի,—պատասխանեց բժիշկը մօտենալով դիակին... Այդ պատահում է երբեմն հոգեվարքի ջղաձգութեան միջոցին։ Ցիշում էք, Սոլֆերինոյում։ Զօրապետ Բորդին այսպէս պահած ունէր ձեռքում իր աղջկաթոռան medaillon։ Հազիւ-հազ կարողացանք դուրս հանել ձեռքի մէջից։

Եւ այդպէս խօսելով նա փորձում էր բանալ խեղճ մեռելի կծկուած ձեռքը։

—Վա՜յ,—ասաց նա,—այս նամակն էր այսպէս պինդ սղմել ձեռքումը։

Եւ նա ուզում էր արդէն կարդալ նամակը, բայց օֆիցէրներից մէկը առաւ ձեռքիցը ու տուեց Սիգիզմունդին, որ մնացել էր ծնկաչոք։

—Կարդացէք, պարոն։ Գուցէ հանգուցեալի վերջին կամքն է յայտնուած այդտեղ։

Սիգիզմունդ Պլանիւսը ոտքի կանգնեց։ Սրահը մութն էր

և նա, օրօրուելով, մօտեցաւ պատուհանին ու կարդաց արտասուակալած աչքերով.

«...Այո, սիրում եմ քեզ, սիրում... Աւելի քան երբ և իցէ և ընդ միշտ... Ինչ միտք ունի մաքառելը և դիմադրելը... Մեր ոճիրը մեզնից զօրեղ է . . . . . .

. . . . . .

Այդ այն նամակն էր, որ Ֆրանցը գրել էր իր հարսին մի տարի առաջ և որ Սիգոնին ուղարկել էր իր ամուսնուն տանից արտաքսուելու միւս օրը, ուղելով դրանով վրէժ հանել թէ ամուսնուց և թէ տեղից միաժամանակ։

Ռիսլէրը կարող էր դեռ ապրել կնոջ դաւաճանութիւնից յետոյ, բայց եղբօր դաւաճանութիւնը սպանել էր նրան։

Երբ Սիգիզմունդը հասկացաւ նամակի միտքը, շշմեց բոլորովին... Նամակը ձեռքին անշարժ կանգնած, նա մեքենայօրէն նայում էր դէպի դուրս բաց պատուհանը։

Ժամի վեցը խփեց։

Այնտեղ, Փարիզի վերևում, որ չէր երևում, բայց որի ժըխորը լսւում էր, ծանր, տաք ու դանդաղաշարժ մշուշ էր բարձրանում, սև ու կարմիր եղերքներով, ինչպէս վառոդի ծուխ՝ կռուի դաշտի վրայ... Ցիչ-ցիչ սկսեցին մշուշից դուրս գալ ու շողշողալ վաղորդեան ցոլքով եկեղեցիների զանգակատները, ոսկեզօծ գմբէթները, տների սպիտակ ճակատները։ Ցետոյ, իրար խառնուած տանիքների վերևում ցցուած գործարանային հարաւոր ծխնելոյզները սկսեցին միաժամանակ եռանդուն կերպով արտաշնչել իրանց ընդհատ չոգին քամու ուղղութեամբ, ինչպէս ճանապարհ ընկնող չոգենաւեր... կեանքը վերսկսւում էր... Դէպի առաջ, մեքենայ։ Վա՜յ նրանց, որոնք կը մնան ճանապարհին...

Այդ միջոցին սարսափելի զայրոյթ բարձրացաւ ծերունի Պլանիւսի սրտում.

—Ա՜խ, անզգամ... անզգամ... աղաղակեց նա, թափահարելով բռունցքը, և ոչ ոք չիմացաւ, թէ ում էր ուղղում նա այդ խօսքը՝ կինարմատի թէ քաղաքին։

ՎԵՐՋ

ԳԻՆՆ Է 1 ռուբլի—

Տպվում է Թիֆլիսում «Մուրճ» ամսագրի խմբագրատանը—Тифлисъ. Редакція „Мурчъ“, *և «Գուտենբերգ» գրավաճառանոցում*—Тифлисъ, Книжный магазинъ Гуттенбергъ“.

«Ազգային գրադարան»
NL0310172

5891